Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1290

22
U-76



2010

2010.

265.398

22
Ա-76

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵՐՈՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԱՀԽԱՐՀԱԲԱՐ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ԱՐՒԱՆԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ԵՐԲՈՐԴ ՏՊ

ՀԱՆԴԵՐՁ ՎԿԱՑՈՒԹԵԱՄԲ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱԳՐԱՏԱՆ Ա· Պ· ՉԸՐՉԻԼԻ

1856—ՌՃԾ

33399-Ա.Հ.

ՕՍՈՅՆ ԶՍՅՍ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՏՑԵՍ ՅԱՐ ԵՒ ՆՄԱՆ՝ ԸՍՏ ԲՆԱԲԱՆԻ՝ ՆՈՅՆ ԻՍԿ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՐ Ի ՀԱՅԿԱԿԱՆ Ա՛ԵՄԱՐԱՆԻ ՏԵԱՐՑ ԼԱԶԱՐԵԱՆՑ ՏՊԵԱԼ Ի Մ՛ՈՍԿՈՎ ՅԱՄԻ 1834 ԵՐԻՒՔ ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՄԲՔՍ ՅՍՈՔԻՒՔ ։

''Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐԺԱՆԸՆԾԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՊՍՊԵՏԻ'' ։

''ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՈՒՍՒՄԱՔՆԱԿ ՀԱՅՈՑ ԱՌԱՔԵԼԱՇԱՒԻՂ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ԱՐՔԱՂԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՊՍՊԵՏԻ'' ։

''ՀՐԱՄԱՅԵՑԱՔ ՏՊԱԳՐԵԼ , ԴԱՏԱՔՆՆԻՉ ՊՐՈՑ Մ՛ԻՔԱՅԷԼ ՆՈՒՐԱԳՅՆ Վ՛ԱՐԴԱՊԵՏ ՍԱԼԱՆԹԵԱՆՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԵՑԻ Մ՛ԻԱԲԱՆ ԵՒ ՆՈՒԻՐԱԿ ԱՐՔՈՅ ՆՋԴԻԱԾՆԻ , Ի 16 Մ՛ԱՐՏԻ 1833 Ի Մ՛ՈՍԿՈՎ'' ։

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳՐԱԿԱՆ ՊԱՏՄ. ԵՎ ԲԱՆԱՍՏ. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՀԳ. ՀՍՍՀ-ССР
Հ. ՄՇԵՑԻ ԱՆՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆ

2001

(5876
38)

17134-58

ՑԱՆԿ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

	Երես
Ավետարան ըստ Մատթէոսի	1
Ավետարան ըստ Մարկոսի	65
Ավետարան ըստ Ղուկասու	103
Ավետարան ըստ Յովհաննու	170
Վորձք Առաքելոց	225
Թուղթ Պօղոսի Ա. Հռովմայեցիան	294
,, ,, Ա. Կորնթացիան Առաջին	326
,, ,, Ա. Կորնթացիան Երկրորդ	356
,, ,, Ա. Գաղատացիան	377
,, ,, Ա. Եփեսացիան	388
,, ,, Ա. Փիլիպեցիան	400
,, ,, Ա. Կողոսացիան	408
,, ,, Ա. Թեսաղոնիկեցիան Առաջին	416
,, ,, Ա. Թեսաղոնիկեցիան Երկրորդ	423
,, ,, Ա. Տիմոթէոս Առաջին	427
,, ,, Ա. Տիմոթէոս Երկրորդ	436
,, ,, Ա. Տիտոս	443
,, ,, Ա. Փիլիմոն	447
,, ,, Ա. Եբրայեցիան	448
,, Կաթուղիկեայց Յակոբոս	471
,, ,, Պետրոսի Առաջին	479
,, ,, Պետրոսի Երկրորդ	489
,, ,, Յովհաննու Առաջին	494
,, ,, Յովհաննու Երկրորդ	503
,, ,, Յովհաննու Երրորդ	504
,, ,, Յուդայի Առաքելոյ	505
Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ	508

ԸՒՆՏՐՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Վրիստոսի ազգահամարն Աբրահամից մինչև Յովսէփն : 18 Նորա Մարիամ Հոգուց յղացաւ, և Յովսէփի նշանած կոյս Մարիամից ծնանելը : 20 Հրեշտակն Յովսէփի ուշեցած սեալ միտքն կը շինակէ՝ և Յիսուս անունի մեկնութիւն կը տայ :

1 ՅԻՍՈՒՍԻ Վրիստոսի Դաւթի[1] որդոյ՝ Աբրահամի[2] որդոյ ծննդեան[3] գիրքն :

2 Աբրահամ[4] ծնաւ Իսահակին . Իսահակն[5] ծնաւ Յակոբին . Յակոբն[6] ծնաւ Յուդային և նորա եղբարներին :

3 Յուդան[7] ծնաւ փարէսին և Զարային Թամարիցն . փարէսն[8] ծնաւ Եզրոնին . Եզրոնն ծնաւ Արամին :

4 Արամն ծնաւ Ամինադաբին . Ամինադաբն ծնաւ Նաասոնին . Նաասոնն ծնաւ Սաղմոնին :

5 Սաղմոնն ծնաւ Բոյոսին՝ Հռեքբայիցն . Բոյոսն ծնաւ Ովբէթին՝ Հռութիցն . Ովբէթն ծնաւ Յեսսէին . Յեսսէն[9] ծնաւ Դաւիթ թագաւորին :

6 Դաւիթ[10] թագաւորն ծնաւ Սաղոմոնին Ուրիայի կնկանիցն :

7 Սաղոմոն[11] ծնաւ Րոբոամին . Րոբոամն ծնաւ Աբիային . Աբիան ծնաւ Ասափին :

8 Ասափն ծնաւ Յովսափաթին . Յովսափաթն ծնաւ Յորամին . Յորամն ծնաւ Ոզիային :

9 Ոզիան ծնաւ Յովաթամին . Յովաթամն ծնաւ Աքազին . Աքազն ծնաւ Եզեկիային :

10 Եզեկիան[12] ծնաւ Մանասէին . Մանասէն ծնաւ Ամոնին . Ամոնն ծնաւ Յոսիային :

(1) Սամ . ճԼբ . 11 : Նոռայ . ժա . 1 : Նբէմ . իգ . 5 : Պապր . իբ . 42 : Յովհ . է . 42 : Գործ . բ . 30 : ժգ . 23 : Հռոմ . ա . 3 : (2) Ծննդ . ժբ . 3 : իբ . 18 : Գաղ . գ . 16 : (3) Ղուկ . գ . 23 : (4) Ծննդ . իա . 2 , 3 : (5) Ծննդ . իե . 26 : (6) Ծննդ . իթ . 35 : (7) Ծննդ . լբ . 27 : (8) Հռութ . գ . 18 , Լայլ : ա Պտոյ . բ . 5 . 9 , Լայլ : (9) ա Թագ . ժգ . 1 : ժէ . 12 : (10) բ Թագ . ժբ . 24 : (11) ա Պտոյ . գ . 10 , Լայլ : (12) գ Թագ . ի . 21 : ա Պտոյ . գ . 13 :

11 Յօսիան[13] ծնաւ Յեքոնիային՝ և
նորա եղբարներին , Խաբիլացոց[14] գե-
րութեան ժամանակուն :
12 Խաբիլացոց գերութենէն ետև՝
Յեքոնիան[15] ծնաւ Սաղաթիէլին ·
Սաղաթիէլն ծնաւ Զօրաբաբէլին[16] :
13 Զօրաբաբէլն ծնաւ Աբիուդին ·
Աբիուդն ծնաւ Եղիակիմին · Ե-
ղիակիմն ծնաւ Ազորին :
14 Ազորն ծնաւ Սադոկին · Սա-
դոկն ծնաւ Աքինին · Աքինն ծնաւ
Եղիուդին :
15 Եղիուդն ծնաւ Եղիազարին ·
Եղիազարն ծնաւ Մատթանին ·
Մատթանն ծնաւ Յակոբին :
16 Յակոբն ծնաւ Յօսէփին՝ Մա-
րիամայ մարդոյն · որ նորան ննջանած
էր Մարիամ կոյսն · որ նորանից
ծնուաւ Յիսուս՝ որ Քրիստոս կոչվե-
ցաւ :
17 Ուստի՝ ամէն պորտերն Աբրա-
համից մինչև Դաւիթն՝ տասնուչորս
պորտ (են)՝ և Դաւիթից մինչև Խա-
բիլացոց գերութիւնն տասնուչորս
պորտ · և Խաբիլացոց գերութենից
մինչև Քրիստոս՝ տասնուչորս պորտ :
18 Եւ Յիսուսի[17] Քրիստոսի ծը-
նունդն էսպէս էր · նորա մայր Մա-
րիամն նշանած էր Յօսէփին , և դեռ
որ իրար մօտ չէին եկած՝ ինքն Սուրբ
Հոգուցն յղացած գտաւ[18] :
19 Եւ նորա մարդ Յօսէփն՝ որով-
հետև արդար (մարդ) էր · և չէր ու-
զում որ նորան խայտառակ[19] անէ ,
միտք արաւ որ ձայն չը հանած՝ բաց
թողէ նորան :
20 Եւ դեռ որ նա էս մտածմունքի
մէջն էր՝ ահա Տէրի հրեշտակն երա-
զում երևեցաւ նորան և ասաց ·
Դաւթի որդի Յօսէփ՝ մի՛ վախենար՝
քո Մարիամ կինն քեզ մօտ առ-
նել · պատճառնոր[20] նորանում ծըն-
վածն՝ Սուրբ Հոգուցն է :
21 Նա[21] Որդի կը ծնի և նորա ա-
նունն ‖ Յիսուս կը դնես · նրահամար
որ նա[22] իրան ժողովուրդն կազատէ
իրանց մեղքերից :
22 Ասյց էս ամէն բաներս էսպէս էլ
աւ՝ որ կատարվի Տէրից ասված բանն՝
Եսայի մարգարէի ձեռովն (թէ) :
23 Ահա[23] կոյսն կը յղանայ և որդի
կը ծնի · և նորա անունն Էմմանուէլ
կը կանչեն · որ նշանակուն՝ Աստ-
ուած մեզ հետ :
24 Եւ Յօսէփ որ քնից զարթնա-
ցաւ՝ էնպէս արաւ ինչպէս որ Տէրի
հրեշտակն հրամայեց իրան · և առաւ
իրան կինն իրան մօտ :
25 Եւ չէր գիտում նորան , մինչև
որ նա իրան առաջինեկ[24] որդին ծնաւ ·
և նորա անունն կոչեց Յիսուս :

ԳԼՈՒԽ Ա

1 Մարգեր արևելքից՝ աստղի առաջնորդութիւնովն Քրիստոսի կը գան : 11 Նորանք Քրիստոսի երկրպագութիւն կանեն , և իրանց ընծայներն կը տան նորան : 14 Յօսէփ վեր կառնէ Յիսուսին և նորան մորն և Եգիպտոս կը փախչի : 16 Հերովդէսի երեխաներ կոտորելն : 20 Իրան մտնեն : 23 Քրիստոսի Եգիպտոսից դառնալն և Գալիլեայի նազարէթ քաղաքումն բնակվելն :

1 Եւ երբոր Յիսուս՝ ծնվաւ Բե-
թղէհէմումն , Հերովդէս թագա-
ւորի օրերումն , ահա մոգեր արևել-

(13) ա Պետ · գ · 15 , 16 : (14) գ Ղեւտ · իդ · 14—16 : իե · 11 : բ Պետ · լգ · 10 ·
20 : Երեմ · իէ · 20 : լԹ · 9 : Ծր · 11 · 15 · 28 , 29 , 30 : Դան · ա · 2 : (15) ա Պետ ·
գ · 17 · 19 : (16) Ագը · գ · 2 : ե · 2 : Նեեմ · ժը · 1 : Ընդ · ա · 1 : Հինգերորդ ամ
նաև քան գասարակ թուականն Քրիստոսի : (17) Լուկ · ա · 27 : (18) Լուկ · ա · 35§
(19) բ Օրէն · իդ · 1 : (20) Լուկ · ա · 35 : (21) Լուկ · ա · 31 : ‖ Բառիս փութիւ · նէր :
(22) Գործ · դ · 12 : ե · 31 : Ժգ · 23 · 38 : (23) Եսայ · է · 14 : (24) Ելք · ժ գ · 2 : Լուկ ·
բ · 7 · 21 : Հոգերորդ ամ նաև քան գասարակ թուականն Քրիստոսի : (1) Լուկ · բ · 4 · 6 , 7

քիցն[2] եկին Երուսաղէմ :

2 Եւ ասացին . Որտե՞ղ է որ ծնեալ Հրեաներուն (Ցեղապետէն) թագաւորն . որ մենք նորա՛ աստղն տեսինք արեւելքումն , և եկինք որ երկրպագութիւն տանք նորան :

3 Եւ երբոր Հերովդէս թագաւորն լսեաց՝ շիոտեցաւ , և ամէն Երուսաղէմ էլ նորա հետ :

4 Եւ ամէն քահանայապետներն[5] և ժողովրդի[6] կարգացողներն ժողովեց և նորանցից հարցուց[7] , թէ Քրիստոսն որտեղ պիտի ծնվի :

5 Եւ նորանք ասացին նորան . Թէ Հրէաստանի (Ցեղապետութեն) Բեթղէհէմումն . ինչուր՝ էսպէս գրված է մարգարէի ձեռովն (թէ) .

6 Դո՛ւ Բեթղէհէմ . Յուդայի երկիր՝ իսկի փոքր չես Յուդայի իշխանների մէջն . քեզանից ինձ իշխան պիտի դուրս գայ , որ[9] իմ Իսրայէլ ժողովուրդս կառավարէ :

7 Յն ժամանակն Հերովդէս թագուն մոգերին իրան մօտ կանչեց , և նորանցից էն երևեցած աստղի ժամանակին հաստատ տեղեկացաւ :

8 Եւ նորանց դէպի Բեթղէհէմն ուղարկեց և ասաց . Գնացէք շնտակ իմացէք՝ էն երեխայի համար , և երբոր կը գտնէք , ինձ էլ իմաց արէք . որ ես էլ գամ նորան երկրպագութիւն անեմ :

9 Եւ նորանք երբոր (էս) լսեցին թագաւորից՝ գնացին . և ահա էն աստղն որ արևելքումն տեսել էին , ճանապարհն ցոյց տուաւ նորանց՝ մինչև որ եկաւ կանգնեց էն տեղին վերայ , որ տեղ որ երեխան էր :

10 Երբոր էն աստղն տեսին , շատ մեծ ուրախութենով ուրախացան :

11 Եւ երբոր տունն մտին , տեսին երեխային իրան մայր Մարիամ հետ , և երեսներին վերայ ընկնելով երկրպագութիւն արին նորան . և իրանց գանձերն (խազնանէրն) բաց արին և ընծայ[10] տուին նորան . ոսկի և կնդրուկ և զմուռս :

12 Եւ երազումն[11] հրաման առին՝ որ մինել յետ չը դառնան Հերովդէսի մօտ , (եւ) ուրիշ ճանապարհով գնացին իրանց աշխարհքն :

13 Եւ երբոր նորանք էն տեղից գնացին . ահա Տէրի հրեշտակն երազումն երևեցաւ Յոսէփին՝ և ասաց . Վո՛ւր կաց վեր կալ երեխայիդ և իրան մօրն և փախիր Եգիպտոս . և էն տեղ մնա՝ մինչև որ ասեմ՝ քեզ , պատճառն որ՝ Հերովդէսն ուզումէ էդ երեխայիդ կորցնել :

14 Եւ նա վերկացաւ վեր առաւ երեխային և իրան մօրն գիշերումն և գնաց Եգիպտոս . և էն տեղ էր մինչև Հերովդէսի մեռնիլն :

15 Որ կատարվի Տէրից ասվածն (էն) մարգարէի ձեռովն՝ որ ասումէ . Եգիպտոսից[12] կը կանչեմ իմ որդին :

16 Յն ժամանակն երբոր Հերովդէս տեսաւ՝ թէ էն մոգերից խաբվեցաւ , շատ բարկացաւ . և ուղարկեց ամէն երեխայքն որ Բեթղէհէմումն և նորա շորս կողմումն էին՝ երկու տարեկաններից (սկսած) և նորանցից ցածերն կոտորեց , էն ժամանակին նայելով որ մոգերից իմացաւ :

17 Յն ժամանակն կատարվեցաւ Երեմիա մարգարէի ձեռով ասվածն՝ որ ասումէ :

18 Լալը ձայն[13] լսվեցաւ Հառամայի մէջն . սուգ և լաց և շատ վայ տալով գոռալ . Հռաքէլ իրան որդոց վերայ լաց էր լինում՝ և չէր կամենում որ մխիթարվի . ինչուր՝ նորանք չը կային :

19 Եւ երբոր Հերովդէս մեռաւ , ահա Տէրի հրեշտակն Եգիպտոսի մէջ

(2) Հնդ . ժ . 30 : իմ . 6 : գ Թագ . գ . 30 : (3) Դատ . բ . 11 : (4) Թագ . իգ . 17 : Լատ . կ . 3 : (5) բ Մնաց . լբ . 14 : (6) բ Մնաց . լբ . 13 : (7) Մաղ . բ . 7 : (8) Մատ . ե . 2 : Հովհ . է . 42 : (9) Հայտ . բ . 27 : (10) Սաղ . հբ . 10 : Լատ . կ . 6 : (11) Մատթ . ա . 20 : (12) Ելք . ժա . 1 : (13) Երեմ . լա . 15 :

երազումն երևեցաւ Յովսէփին ։
20 Եւ ասաց • Ա՛ր կաց վե՛ր կալ երեխայիդ և իրան մօրն և գնա՛ Իսրայելացոց երկիրն . պատճառնո՛ր՝ մեռան նորանք՝ որ երեխայիդ կեանքն ուզումէին առնել ։
21 Եւ նա վերկացաւ , երեխային և իրան մօրն վե՛ր առաւ և եկաւ Իսրայելացոց երկիրն ։
22 Եւ երբոր լսեց՝ թէ Ա՛րքեղայոս Հրէաստանին (Ջհուդապոսդանին) վերայ թագաւորութիւն է անում իրան հայր Հերովդէսի տեղն , վախեցաւ գնալ էն տեղ . և երազումն հրաման առնելով գնաց[14] Գալիլեացի կողմերն ։
23 Եւ եկաւ բնակվեցաւ էն քաղաքումն՝ որ Նազարէթ[15] էր ասվում . որ կատարվի մարգարէների խօսքն[16]՝ թէ Նազովրեցի կը կոչվի ։

ԳԼ • Ի

1 Յօհաննէսի քարոզելն . 5 իրան պաշտօնն . ապրիլն և մկրտելն ։ 7 փարիսեցիներին կը յանդիմանէ ։ 13 Քրիստոսն Յորդանանոյ միջումն կը մկրտէ ։

1 Էն օրերումն Յօհաննէս[1] մկրտիչն եկաւ , որ Հրէաստանի անապատումն[2] (Ջհուդապոսդանի Լօռէ) քարոզ տայ ։
2 Եւ ասումէր • Ապաշխարեցէ՛ք՝ որ երկնքի[3] թագաւորութիւնն մօտացել է ։
3 Ինչուոր սա է՝ որ Նորա համար ասվելէ Եսայի մարգարէի ձեռովն , որ ասումէ • Կանչողի[4] ձայն անապատումն՝ թէ պատրաստ[5] արէք Տէրի ճանապարհն , և շիտակ արէք Նորա գնալոյ ճանապարհն ։
4 Եւ Յօհաննէս[6] ինքն հագուստ ունէր ուղտու[7] բրդից և կաշվէ գօտիկ իրան մէջքումն , և Նորա կերակուրն մարախ[8] էր և վայրի[9] մեղր ։
5 Էն[10] ժամանակն ամէն Երուսաղէմացիքն և ամէն Հրէաստան (Ջհուդապոսդան) և Յորդանանի ամէն կողմերն Նորա մօտ էին դուրս գնումէ :
6 Եւ Նորանից մկրտվումէին Յորդանանի մէջն և իրանց[11] մեղքերն խոստովանումէին ։
7 Եւ (ինքն) որ տեսաւ թէ սադուկեցիներից և փարիսեցիներից շատերն եկել էին որ իրանից մկրտվին , ասաց Նորանց Իժի[12] (օձի) զաւակներ՝ ձեզ ո՛վ սովորցրուց փախչիլ էն բարկութենից , որ գալէ[13] :
8 Ա՛յսուհետև ապաշխարութեան արժանի պտուղ արէք ։
9 Եւ չկարծէք ասել ձեր միջումն՝ թէ Ունէք[14] Աբրահամ ունինք հայր . ասումեմ ձեզ , թէ Աստուած կարող է էս քարերիցս որդիք դուրս հանել Աբրահամու համար ։
10 Ինչուոր՝ հիմիկ կացինն ծառերի արմատին (Հօչին) մօտ դրած է . ամէն ծառ[15] որ բարի պտուղ չիբերում , կը կտրվի և կրակի մէջն կը քցվի ։

(14) Պաւր • գ • 13 : Գործ • բ • 39 ։ (15) Յովհ • ա • 45 ։ (16) Դատ • ժգ • 5 ։ ա Թագ • ա • 11 ։ (1) Պաւր • ա • 4 • 15 ։ Գործ • գ • 2 , 3 ։ Յովհ • ա • 28 ։ (2) Հեր • ժգ • 10 ։ (3) Դան • բ • 44 ։ Պաւր • գ • 17 • ժ • 7 ։ (4) Լաւց • խ • 3 ։ Պաւր • ա • 3 ։ Գործ • գ • 4 ։ Յովհ • ա • 23 ։ (5) Գործ • ա • 76 ։ (6) Պաւր • ա • 6 ։ (7) ա Թագ • ա • 8 ։ Զաք • ժգ • 4 ։ (8) Ելթ • ժա • 22 ։ (9) ա Թագ • ժգ • 25 , 26 ։ (10) Պաւր • ա • 5 ։ Գործ • գ • 7 ։ (11) Գործ • ժԲ • 4 • 18 ։ (12) Պաւր • ժբ • 34 ։ խգ • 33 ։ Գործ • գ • 7 , 8 , 9 ։ (13) Հռովմ • ե • 9 ։ ա Թես • ա • 10 ։ (14) Յովհ • ը • 33 • 39 ։ Գործ • ժգ • 26 ։ Հռովմ • գ • 1 • 12 • 16 ։ (15) Պաւր • է • 19 ։ Գործ • ժգ • 7 • 6 ։ Յովհ • ժե • 6 ։

11 Եսո[16] ըզով եմ զ՚ինքըտեամ ձեզ՝ ապաշխարութեան համար • բայց նա՝ որ ինձանից ետև կը գայ , ինձանից զօրաւոր է • և ես արժանի չեմ նո֊ րա կօշիկները վեր առնել • նա[17] ձեզ Սուրբ Հոգով և կրակով կը մկրտէ :
12 Ու՛ր հօսկլինն[18] իրան ձեռին է , և իրան կալն կը սրբէ և ցորենն կը հաւաքէ իրան ամբարն , դարմանն[19] անանցելի կրակով կայրէ :
13 Յն ժամանակն[20] Յիսուս Կա֊ լիլեայիցն[21] եկաւ Յորդանան Յօ֊ հաննէսի մօտն՝ որ նորանից մկրտվի :
14 Եւ Յօհաննէսն արգելից նորան և ասաց • Ինձ պէտքէ որ ես քեզանից մկրտվիմ՝ և դուն ինձ մօտ ես գալիս :
15 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորան • Թոյլ տուր հիմիկ , ին֊ չուր՝ էսպէս կը վայելէ մեզ՝ որ ա֊ մէն արդարութիւնն կատարենք • և յետոյ թոյլ տուաւ նորան :
16 Եւ երբոր մկրտվեցաւ[22] Յի֊ սուս , շուտով ջրիցն դուրս եկաւ • և ահա (հրէա) երկինքն բացվաւ նորա համար • և Աստուծոյ Հոգին[23] ան֊ սաս որ վեր էր գալիս աղաւնու պէս և գալիս էր նորա վերայ :
17 Եւ ահա երկնքիցն ձայն[24] եկաւ՝ որ ասումէր • Կա՛ է իմ սիրելի Որ֊ դին[25] որ դորան հաւան կացայ :

ԻԱ • Գ

1 Խրիստոսի ծոմ պահելն , և փորձվելն : 11 Հրեշտակներն նորան սպասաւորու թիւն են անում : 13 Կեթթայ Ափառնայում կը բնակվի : 17 Քարոզելոյ կը սկսէ : 18 Պետրոս և Ընդրէաս , 21 Յակոբոս և Յօհաննէսն կը կանչէ : 23 Նա ամէն հիւանդներն կը բժշկէ :

1 Յն ժամանակն Յիսուս՝ Հոգո֊ վըն[2] տարվաւ անապատն՝ (չէօլն) որ Սատանայիցն փորձվի :
2 Եւ քառասուն ցերեկ և քառա֊ սուն գիշեր ծոմ պահելուցն ետև՝ սովից :
3 Եւ փորձիչն եկաւ , նորան ա֊ սաց • Թէ որ դուն Աստուծոյ Որդին ես , ասա՝ որ էս քարերս Հաց լինին :
4 Նա պատասխան տուաւ և ա֊ սաց • Կը րուած է՝ որ Մ՚էրձէ մէնակ Հացով կապրի մարդ , այլ ամէն խօսքովն՝ որ Աստուծոյ բերանիցն դուրս է գալիս[3] :
5 Յն ժամանակն Սատանան նո֊ րան առաւ տարաւ սուրբ քաղաքն[4] , և տաճարի աշտարակին (քօ֊րջէն) վերայ կանգնացրուց :
6 Եւ նորան ասաց • Թէ որ Աս֊ տուծոյ Որդին ես՝ էս տեղից քեզ վեր քցիր • ինչուր գրված է՝ Թէ Իրան հրեշտակներին հրամայելէ քեզ համար[5] և ձեռներին վերայ կառնեն քեզ՝ որ իսկի մին ժամանակ քո ոտըդ քարի չի դիպցնես :
7 Ու՛ինէչ Յիսուս նորան ասաց • Կը րուած է Թէ Ա՚ր փորձեր քո Տէր Աստուածդդ[6] :

(16) Մատ • ա • 8 : Ղուկ • գ • 16 : Յովհ • ա • 15 • 26 • 33 : Գործ • ա • 5 : Ժա • 16 : Ժբ • 4 : (17) Նաայ • գ • 4 : Խզ • 3 : Մալ • գ • 2 : Գործ • բ • 3 , 4 : ա՚Կորնթ • Ժբ • 13 : (18) Մալ • գ • 3 : (19) Մալ • գ • 1 : Մատթ • Ժգ • 30 : (20) Մատ • ա • 9 : Ղուկ • գ • 21 : (21) Մատթ • բ • 22 : (22) Մատ • ա • 10 : (23) Նաայ • Ժա • 2 : Ղուկ • գ • 22 : Յովհ • ա • 32 , 33 : (24) Յովհ • Ժբ • 28 : (25) Սալմ • բ • 7 : Նաայ • խզ • 1 : Մատթ • Ժբ • 18 : Ժէ • 5 : Մատ • ա • 11 : Ղուկ • թ • 35 : Նէթթ • ա • 6 : Կողզ • ա • 13 : բ Պետ • ա • 17 : (1) Մատ • ա • 12 , Համբ : Ղուկ • գ • 1 , Համբ : (2) գ Թագ • Ժբ • 12 : Նէհէ • գ • 14 : բ • 3 : Ժա • 1 • 24 : խ • 2 : խ • 5 : Գործ • բ • 39 : (3) բ Օրին • ը • 3 : (4) Ծնեմ • Ժա • 1 • 18 : Նաայ • խզ • 2 : Ծբ • 1 : Մատթ • իէ • 53 : Հայտ • Ժա • 2 : (5) Սալմ • զա • 11 , 12 : (6) բ Օրին • ձ • 16 :

8 Մատանան մինչ առաւ Նորան (և) տարաւ մին շատ բարձր սարի վերայ՝ և ցոյց տուաւ Նորան աշխարհքի ամեն թագաւորութիւնները և Նորանց փառքը :

9 Եւ Նորան ասաց · Այս ամենը քեզ կը տամ՝ թէ որ երեսիդ վերայ ընկնելով ինձ երկրպագութիւն առնես :

10 Յն ժամանակն Յիսուս Նորան ասաց · Վեր գնա ինձանից Սատանայ· քանզի գրված է՝ թէ Տէր Աստուծոյդ պէտք է երկրպագութիւն անես և միայն Նորան պաշտես[7] :

11 Յետոյ Սատանան թողնց Նորան · և ահա հրեշտակներն մօտ եկին և ծառայութիւն էին անում Նորան[8] :

12 Եւ երբոր Յիսուս լսեց՝ թէ Յովհաննէսն մատնվեցաւ[9], ինքն հեռացաւ գնաց Գալիլեա :

13 Եւ Նազարէթըն թողնց · եկաւ բնակվեցաւ Կափառնայումի մէջն ծովի եզերն (գլուխն) մօտ · Զաբուղոնի և Նեփթաղիմի երկրումն :

14 Որ կատարվի էն խօսքն՝ որ Եսայի մարգարէի ձեռովն ասված է՝ (թէ)

15 Զաբուղոնի երկիրն և Նեփթաղիմի երկիրն՝ ծովու ճանապարհն՝ Յորդանանի էն կողմն, Հեթանոսաց Գալիլեան[10] :

16 Ժողովուրդն որ խաւարի մէջն նստած էր, մեծ լոյս տեսաւ · և լոյս ծագեց նորանց որ մահի երկրումն և շուաքումն նստած էին[11] :

17 Նրանից եւս Յիսուս սկսեց քարոզել[12] և ասել · Ապաշխարեցէք[13] որ երկնքի թագաւորութիւնն մօտացել է :

18 Երբոր Յիսուս Գալիլեացոց ծովի եզերումն (գլուխն) մաներ գալիս[14] տեսաւ երկու եղբարք՝ Սիմոնին որ Պետրոս[15] էր կոչված, և նորա Անդրէաս եղբօրն · որ ուռկանն (լծակն) ձգել էին ծովն · ինչուր՝ ձուկըն բռնող էին :

19 Եւ Նորանց ասաց · Իմ ետևէս եկէք, և ձեզ մարդկանց հօրսորդ կանեմ[16] :

20 Նորանք էլ շուտով իրանց գործիքներըն թողնն և նորա ետևէն գնացին[17] :

21 Եւ հետզհետէ որ առաջ գնաց՝ երկու ուրիշ եղբարք տեսաւ[18], Յակօբոս Զեբեդեանըն՝ և Նորա Յոհաննէս եղբօրըն՝ որ նաւի մէջն իրանց հայր Զեբեդէոսի հետ իրանց ուռկաններըն (լծակներըն) շինում էին, և Նորանց կանչեց :

22 Նորանք էլ շուտով նաւըն և իրանց հօրըն թողնն · և նորա ետևէն գնացին :

23 Եւ Յիսուս մաներ գալիս Գալիլեայի ամեն կողմերումն · Նորանց ծողովարաններն մէջն սովորցնումէր[19] և աւետարանելով Արքայութեան աւետարանն[20] քարոզումէր, և ամեն ժողովրդի մէջ եղած հիւանդութիւններըն և ցաւերըն բժշկումէր[21] :

24 Եւ Նորա համբաւն դուրս եկաւ Ասորոց ամեն երկրումն · և ամեն հիւանդներն որ կերպ կերպ ցաւերով և չարչարանքներով տանջված էին, նորա մօտ բերին · և դիւահարներն և լուսնոտներըն և անդամալոյծներըն · և Նորանց բժշկեց :

25 Եւ նորա ետևէն շատ ժողովուրդներ[22] էին գնում Գալիլեայիցն

(7) ը Օրէն · ձ · 13 : ժ · 20 : Հեռ · իզ · 14 : ա Թագ · է · 3 : (8) Ղեր · ա · 14 : (9) Մարկ · ա · 14 : Ղուկ · գ · 20 : գ · 14 31 : Հովհ · գ · 43 : (10) Ղսայ · թ · 1, 2 : (11) Ղսայ · ըզ · 7 : Ղուկ · բ · 32 : (12) Մարկ · ա · 14, 15 : (13) Մատթ · գ · 2 : ժ · 7 : (14) Մարկ · ա · 16, 17, 18 : Ղուկ · ե · 2 : (15) Հովհ · ա · 42 : (16) Ղուկ · ե · 10, 11 : (17) Մարկ · ժ · 28 : Ղուկ · ժը · 28 : (18) Մարկ · ա · 19, 20 : Ղուկ · ե · 10 : (19) Մատթ · թ · 35 : Մարկ · ա · 21 · 39 : Ղուկ · դ · 15 · 44 : (20) Մատթ · իգ · 14 : Մարկ · ա · 14 : (21) Մարկ · ա · 34 : (22) Մարկ · գ · 7 :

և Վռկապօլիսիցն՝ և Երուսաղէմիցն և Հորդանանի էն կողմիցն և նո-
և Էրէաստանիցն (Ջհնոպռասպանիցն), րանց բժշկեց :

ԻԱ · Ե

1 Խրխատոս սարին վերայ իրան քարոզն կը սկսէ : 3 Հոգւով կը տայ թէ որո՞նք են երանելի
լինողներն : 13 Երկրի աղն : 14 Աշխարհի լոյսն , սարին վերայ եղած քաղաքն : 15 Ճրագն :
17 Թէ նա եկաւ որ օրէնքն կատարէ : 21 Մարդասպանութիւնն , 27 Նոր ընութիւն ա-
նելը քանի տեսակ է : 33 Խոկի երդում չուտել : 38 Խրատ կը տայ անիրաւութեան դէմ
համբերութիւն անել : 44 Թշնամիներն էլ սիրել : 48 Նոր կատարեալ լինելոյ աշխատիլ :

1 Ու երբոր ժողովուրդներին տե-
սաւ վեր ելաւ սարն[1] . և երբոր էն-
տեղ նստեց , նորա աշակերտներն
եկին նորա մօտ :
2 Եւ իրան բերանն բացաւաւ ,
նորանց սովորցնում էր՝ և ասում :
3 Երանի՛ հոգով աղքատներին[2]՝
որ նորանցն է երկնքի արքայու թիւ-
նըն :
4 Երանի՛ սգաւորներին[3]՝ որ նո-
րանք պիտի մխիթարվին :
5 Երանի՛ հեզահոգիներին[4]՝ որ
նորանք պիտի ժառանգին երկիրըն[5] :
6 Երանի՛ նորանց՝ որ սոված և
ծարաւ են արդարութեան համար՝
որ նորանք պիտի կըշտանան[6] :
7 Երանի՛ ողորմածներին՝ որ նո-
րանք պիտի ողորմութիւն գտնեն[7] :
8 Երանի՛ նորանց՝ որ սրտով
սուրբ են[8] , որ նորանք պիտի Աս-
տուածոյն տեսնեն[9] :
9 Երանի՛ խաղաղութիւն անօղ-
ներին՝ որ նորանք պիտի Աստուծոյ
որդիք կոչվին :
10 Երանի՛ նորանց՝ որ արդարու-
թեան համար հալածված են[10]՝ որ
նորանց է երկնքի արքայութիւնն :
11 Երանի՛ է ձեզ՝ երբոր նախա-
տինք կը տան[11] և կը հալածեն
ձեզ , և իմ պատճառովն՝ ամէն չար
բան[12] սուտ ուղղ կասեն ձեր վե-
րայ :
12 Ցնծացէ՛ք[13] և ուրախ եղէ՛ք՝
որ ձեր վարձքն շատ են երկնքու-
մըն . ինչուորՙ էսպէս էլ հալածե-
ցին մարգարէներին[14] որ ձեզանից ա-
ռաջ կային :
13 Դուք երկրի աղն էք . թէ որ
աղն անհամանայ[15] , ինչով պիտի
աղանվի . նորանից ետև խոկի մին
բանի համար գործածելոյ չէ , միայն
թէ դուրս քցվի և մարդկանց ոտի
տակն կոխան լինի :
14 Դուք աշխարհքի լոյսն էք[16] էն
քաղաքն որ սարի վերայ կայ չի կա-
րող թաքուն մնալ :
15 Եւ ճրագըն չեն վառիլ և տաշ-
տի տակ դնիլ[17] , այլ ճրագակալի
վերայ՝ և լոյս կը տայ ամէնին՝ որ
տան մէջն են :

(1) Մատ · դ · 13 · 20 : (2) Դատ · զ · 20 : Սաղմ · ծա · 17 : Եսայ · ԺԷ · 19 : ԽԹ · 23 : Եսայ · ծէ · 15 : կզ · 2 : (3) Եսայ · կա · 2 , 3 : Դատ · է · 21 : Հայհ · ԺԷ · 20 : բ Կորնթ · ա · 7 : Յայտ · խա · 4 : (4) Սաղմ · լե · 11 : (5) Ընսիմ · գ · 13 : (6) Եսայ · ծէ · 1 : կէ · 13 : (7) Սաղմ · խա · 1 : Մատթ · զ · 14 : Մատթ · ժա · 25 : բ Տիմ · ա · 16 : Եբր · զ · 10 : Յայտ · բ · 1 : (8) Սաղմ · ԺԷ · 2 : Ղկ · 4 : Եբր · ԺԲ · 14 : (9) ա Կորնթ · ԺԳ · 12 : ա Հայհ · գ · 2 , 3 : (10) բ Կորնթ · դ · 17 : բ Տիմ · բ · 12 : ա Պետ · գ · 14 : (11) Դատ · զ · 22 : (12) ա Պետ · գ · 14 : (13) Դատ · զ · 23 : Գործ · է · 41 : Ընսիմ · է · 3 : Յայտ · ա · 2 : ա Պետ · դ · 13 : (14) Գնէմ · թ · 26 : բ Մնաց · ՀԶ · 16 : Մատթ · ԽԳ · 34 · 37 : Գործ · է · 52 : ա Թես · բ · 15 : (15) Մատթ · թ · 50 : Դատ · ԺԳ · 34 , 35 : (16) Ընսիմ · դ · 18 : Փիլ · բ · 15 : (17) Մատթ · դ · 21 : Դատ · բ · 16 : ԺԱ · 33 :

16 Ինչպէս եւ ձեր լոյսն պէտք է լուսաւորէ մարդկանց առաջին, որ ձեր բարի գործքն տեսանեն[18], և փառաւորեն ձեր Հայրըն[19] որ երկընքումն է :

17 Ազ՛ կարծէք[20] թէ ես եկել եմ՝ որ օրէնքըն կամ մարգարէներն քանդեմ . չեմ եկել քանդելոյ , բայց կատարելոյ համար :

18 Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ՝ Որ մինչև երկինքն և երկիրս անց կենան[21] , օրէնքիցն և մարգարէներիցն մին կէտ՝ որ պզտիկ նշանագիր է , չի անցկենալ մինչև ամէնն կատարվի :

19 Որ ով որ էս փոքր պատուիրանքներիցս մինըն քանդէ[22] , և մարդկանց էնպէս սովորցնէ՝ նա փոքր կը կոչվի երկնքի արքայութենումն . բայց նա՝ որ կանէ և կը սովորցնէ , մեծ կը կոչվի երկնքի արքայութենումն :

20 Որովհետև ասումեմ ձեզ՝ Թէ որ ձեր արդարութիւնն չաւելանայ աւելի քան կարգացողներինն և փարիսեցիներինն[23] , չէք մտնիլ երկընքի արքայութիւնն :

21 Լսեցէք՝ որ առաջին մարդկանցն ասվեցաւ , Թէ Մի՛ սպաներ[24] ինչուր որ՝ ով որ կը սպանէ , պարտական կը լինի դատաստանին :

22 Բայց ես ասումեմ ձեզ՝ Թէ ով որ զուր տեղն կը բարկանայ[25] իրան եղբօր վերայ , պարտական կը լինի դատաստանին . և ով որ իրան եղբօրն կասէ՝ Հիմար[26] , պարտական կը լինի մեծ դատաստանին . և ով որ իրան եղբօրն կասէ՝ Որոս , պարտական կը լինի գեհենի կրակին :

23 (Որովհետև) Թէ որ սեղանի վերայ քո պատարագդ մատուցանես[27] և հնտեղ միտդ բերես՝ Թէ քո եղբայրդ քեզանից մին խռովութիւն ունի ,

24 Վերո պատարագդ[28] սեղանի առաջին թող . և գնա առաջ հաշտվիր քո եղբօր հետ . և յետոյ եկ քո պատարագդ արա :

25 Վերո հակառակ ոսոխի հետ շուտով քո բանդդ շնտակ արա[29] քանի որ նորա հետ ճանապարհումն ես[30] . որ չը լինի Թէ ոսոխդ քեզ դատաւորին մատնէ , և դատաւորն դահճին (ճեղլոպին) . և բանտն (զնդանն) ընկնիս :

26 Ա՛շմարիտըն ասումեմ քեզ . Դուրս չես գալ էն տեղիցն , մինչև վերջին դանկըն էլ չը վճարես :

27 Լսեցէք՝ որ ասվեցաւ՝ Թէ Շնութիւն չանես[31] :

28 Բայց ես ասումեմ ձեզ . Թէ ամէն ով որ մին կնկան վերայ մտիկ տայ[32] նորան ցանկանալոյ համար , նա իսկոյն շնացաւ նորա հետ իրան սրտի մէջն :

29 Թէ որ քո աջ աչքդ գայթակղացնումէ քեզ[33] , հանիր նորա և քեզանից դէն քցիր[34] . ինչուր՝ լաւ է քեզ համար , Թէ քո անդամներիցդ մինն կորչի . և քո ամէն մարմինդ չընկնի գեհենն :

30 Եւ Թէ որ քո աջ ձեռքդ գայթակղացնումէ քեզ , կտրիր նորան և քեզանից դէն քցիր . ինչուր՝ լաւ է քեզ համար՝ Թէ քո անդամներիցդ մինն կորչի . և քո ամէն մարմինդ չընկնի գեհենն :

(18) ա Պետ . բ . 12 : (19) Հովհ . ժէ . 8 : ա Կորնթ . ժդ . 25 : (20) Հռովմ . գ . 31 : ժ . 4 : Գաղ . գ 24 : (21) Լուկ . ժզ . 17 : (22) Հով . բ . 10 : (23) Հռովմ . թ . 31 : ժ . 3 : (24 Եբէր . ի . 13 : բ Օրին . ե . 17 : (25) ա Հովհ . գ . 15 : (26) Հով . բ . 20 : բ Թագ . զ . 20 : (27) Մատթ . ը . 4 : Ղև . 19 : (28) Մատթ . ժը . 19 : ա Տիմ . բ . 8 : ա Պետ . գ . 7 : (29) Ըստ . ի՛ . 8 : Լուկ . ժբ . 58 , 59 : (30) Մաղ . լբ . 6 : Նաում . ծե . 6 : (31) Եբէր . ի . 14 : բ Օրին . ե . 18 : (32) Յոբ . լա . 1 : Ըստ . զ . 25 : Ղևտ . լգ . 2 : բ Թագ . ժ . 2 (33) Մատթ . ժը . 8 , 9 : Մարկ . թ . 44—47 : (34) Հռովմ . ը . 13 : ա Կորնթ . թ . 27 : Կող . գ . 5 :

31 Նա էլ ասվեցաւ՝ Թէ Ո՛վ որ ի-
րան կինըն Թո՛ղ անէ[35], դուրս ա-
նելոյ թուղթ տայ նորան։
32 Բայց ես ասումեմ ձեզ. Թէ
Ո՛վ որ իրան կինըն դուրս անէ ա-
ռանց պոռնկութեան պատճառի,
նորա շնութեան պատճառն ինքն
կը լինի[36]. և ով որ էն դուրս ա-
րածն առնէ, շնութիւն կը գործէ։
33 Ո՛րինէլ լսեցէք՝ որ ասվեցաւ ա-
ռաջին մարդկանցն[37], Թէ Սուտ եր-
դում չի ուտես[38], բայց Տէրին արած
երդմունքդ վճարի՛ր[39]։
34 Բայց ես ասումեմ ձեզ. Խսկի
երդում մի՛ ուտէք[40]. ոչ երկնքովն՝
որ Աստուծոյ աթոռն է[41].
35 Եւ ոչ երկրովս՝ որ նորա ոտն
դնելոյ տեղն է. և ոչ Երուսաղէ-
մովն՝ որ մեծ թագաւորի քաղա-
քըն է[42]։
36 Եւ ոչ քո գլխովդ երդում ու-
տես՝ որ կարող չես մին մազ սպի-
տակ անել կամ թուխ։
37 Բայց ձեր խօսքն Թո՛ղ լինի,
Հան՝ Հա՛. և չէն՝ չէ[43]. և նըմանից
աւելին չարիցն է։
38 Լսեցէք՝ որ ասվեցաւ՝ Թէ Աչ-
քին աչքին տեղ, և ատամն՝ ատա-
մին տեղ[44]։
39 Բայց ես ասումեմ ձեզ. Չա-
րին հակառակ մի՛ կենաք[45]. բայց
Թէ որ մինն ապտակ (ախլէ) կը տայ
քո աջ երեսիդ, մէկելըն էլ նորան
դէմ արա՛[46]։
40 Եւ ով որ կուզէ քեզ հետ
կռիւ անել և քո շապկըդ առնել,
քո կապան էլ Թո՛ղ նորա մօտ։
41 Եւ ով որ զուր տեղն քեզ
բռնած մին մղոն (միլա՛ճ) ճանապարհ
կը քշէ[47], նորա հետ երկուսն էլ
գնա՛։
42 Ո՛վ որ քեզանից բան ուզէ՝
տո՛ւր. և ով կամենայ քեզանից փոխ
առնել, երեսդ չհետ մի՛ դարձներ նո-
րանից[48]։
43 Ո՛րինէլ լսեցէք՝ որ ասվեցաւ՝
Թէ Քո ընկերիդ սիրի՛ր[49] և քո թըշ-
նամիդ ատի՛ր[50]։
44 Բայց ես ասումեմ ձեզ. Սի-
րեցէք ձեր թշնամիներըն[51]. օրհ-
նեցէք ձեզ անիծողներին. բարի ա-
րէք ձեզ ատողներին. և աղօթք ա-
րէք նորանց վերայ, որ ձեզ կը չար-
չարեն և կը հալածեն[52]։
45 Որ որդիք լինիք ձեր Հօրն,
որ երկինքումն է. որ նա իրան արե-
գակն ծագումէ չար և բարի մարդ-
կանց վերայ[53], և անձրև է ածում
արդարներին և մեղաւորներին վե-
րայ։
46 Բայց Թէ որ մէնակ նորանց սի-
րէք որ ձեզ սիրումեն[54], էլ ի՞նչ
վարձք կը լինի ձեզ. չէ՞ որ մաքսա-
ւորներն (կ՚ոյտուչէնէրն) էլ էնպէս
են անում։
47 Եւ Թէ որ մէնակ ձեր բարե-
կամներին բարև տաք. ի՞նչ աւելի
բան կանէք. չէ՞ որ մաքսաւորներն

(35) բ Օրին. իդ. 1։ Լևիտ. գ. 1։ Ելք. ժթ. 3, Լևիտ։ Ելք. ժ. 2, Լևիտ։
(36) Ելք. ժթ. 9։ Դատ. ժշ. 18։ Հռով. է. 3։ ա Կորնթ. է. 10, 11։ (37)
Ելք. իգ. 16։ (38) Լևիտ. ի. 7. 16։ Դատ. ժթ. 12։ բ Օրին. ի. 11։ Ղևտ. չ. 2։
(39) բ Օրին. իգ. 23։ (40) Ելք. իգ. 16. 18. 22։ Յով. ե. 12։ (41) Եսայ. կշ.
1։ (42) Սաղ. խը. 2։ ՀԱ. 3։ (43) Կող. գ. 6։ Յով. ե. 12։ (44) Լևիտ. իա. 24։
Դատ. իգ. 20։ իբ Օրին. ժթ. 21։ (45) Ելք. ի. 22։ իգ. 29։ Դատ. չ. 29։ Հռով.
ժբ. 17. 19։ ա Կորնթ. չ. 7։ ա Թես. ե. 15։ ա Պետ. գ. 9։ (46) Եսայ. ծ. 6։
Ողբ. գ. 30։ (47) Ելք. իե. 32։ Ելք. ժբ. 21։ (48) բ Օրին. ժե. 8. 10։ Դատ.
չ. 30. 35։ (49) Դատ. ժթ. 18։ (50) բ Օրին. իգ. 6։ Սաղ. խա. 10։ (51) Դատ.
չ. 27. 35։ Հռով. ժբ. 14. 20։ (52) Դատ. իգ. 34։ Գործ. է. 60։ ա Կորնթ.
գ. 12, 13։ ա Պետ. բ. 23։ գ. 9։ (53) Յոբ. իե. 3։ (54) Դատ. չ. 32։

(Խոհրդանիշներ) և մեղաւորներն էլ հնձած են անոնք :
48 Ուրեմն դուք կատարեա՛ք[55] էլէք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն կատարեալ է[56] :

ԳԼ · Օ

1 Սաղմոս դեռ կը տայ իրեն քարոզն և առումէ ողորմութեան , 5 Ընթերք , 14 Ուր եղբայրներն ներելոյ , 16 Ւր ձոյն վերայ : 19 Ուր գանձերն որ տեղ դնելոյ վերայ : 24 Ընառելոյ և մաճնային ծառայելոյ վերայ : 25 Կը յորդորէ որ աշխարհային բաներէն վերայ հոգս չանենք : 33 Ւսայ առաջ Ընտուելոյ թագաւորութիւնն խնդրենք :

1 Օգնչ կացէք ձեր ողորմութեան՝ որ մարդկանց առաջին չի անէք , իբր նորանց ցոյց տալոյ համար . որ չըլլնի , թէ վարձք չառնէք ձեր Հօրիցն՝ որ երկնքումն է :
2 Ւսայց երբոր ողորմութիւն առնես[1] . փող չի տաս փչել քո առաջդ . ինչպէս որ կեղծաւորներն առնումեն ժողովարաններուն մէջն և փողոցներուն՝ որ մարդկանցմէ փառաւորվին . ճշմարիտ առումեմ ձեզ . որ նորանց վարձքն ունեակ են է :
3 Ւսայց երբոր դուն ողորմութիւն անես , թող չիմանայ քո ձախ ձեռդ՝ թէ ինչ է գործում քո աջդ :
4 Որ հսպես քո ողորմութիւնն ծածուկ լինի , և քո Հայրն՝ որ ծածուկըն տեսնումէ , յայտնի կը հատուցանէ քեզ[2] :
5 Եւ երբոր աղօթք անես , մի՛ լինիր կեղծաւորներին պէս . ինչուան՝ նորանք սիրումեն ժողովարաններուն մէջն և փողոցներուն դլխումն աղօթք անել , որ մարդկանց երևին : Ճշմարիտ առումեմ ձեզ , որ նորանց վարձքն ունեակ են է :
6 Ւսայց դուն ինչ ժամանակ որ աղօթք անես , մտիր քո խուցդ՝ և քո դրռներդդ փակիր[3] և ծածուկ աղօթք արա դէպի քո Հայրդ . և քո Հայրդ որ ծածուկըն տեսնող է՝ յայտնի կը հատուցանէ քեզ :
7 Եւ էն ժամանակն որ աղօթք անէք , շատախօս մի՛ լինիք[4] . ինչպէս Հեթանոսներն . որ նորանք կարծումեն՝ թէ իրանց շատ խօսելոյն համար կը լսվին[5] :
8 Ուրեմն նորանց նման մի՛ լինիք . ինչուար՝ ձեր Հայրն գիտումէ՝ թէ ի՛նչ պետք է ձեզ , քանի որ մինք բան դեռ չէք խնդրել նորանից :
9 Ուրեմն դուք էսպէս աղօթք արէք . Ո՛վ Հայր որ երկնքումն ես՝ քո անունդ սուրբ լինի[6] :
10 Քո արքայութիւնդ գայ , քո կամքդ լինի՝ ինչպէս երկնքումն[8] , էնպէս էլ երկրիս վերայ :
11 Ո՛ր ամէն օրուան հացըն[9] էս օր տուր մեզ :
12 Եւ մեր պարտքերն թող մեզ[10] . ինչպէս որ մենք էլ թողումենք մեր պարտականներին :
13 Եւ մեզ փորձանքի մէջ մի՛ քըշեր[11] . բայց մեզ ջարիեցն ազատիր[12] .

(55) Ղուկ . ժէ . 1 : Ղևտ . ժա . 44 : ժէ . 2 : Ղևտ . գ . 36 : Կող . ա . 28 : դ . 12 : Հետ . ա . 4 : ա Պետ . ա . 15 , 16 : (56) Ղևտ . ժ . 1 : (1) Ածողմ . ժբ . 8 : (2) Ղևտ . ժդ . 14 : (3) դ Թագ . դ . 33 : (4) Ժող . ժ . 2 : (5) դ Թագ . ժբ . 26 . 29 (6) Ղևտ . ժա . 8 , Ասյն : (7) Ածոր . իդ . 39 . 42 : Պսղմ . իա . 14 : (8) Ածվ . ձբ . 20 , 21 : (9) Հեզբ . իգ . 12 . Ածոմ . ղ . 8 : (10) Ածոր . ժբ . 21 , Ասյն : (11) Ածոր . իգ . 41 : Ղևտ . իբ . 50 . 46 : ա Կորն . ժ . 13 : բ Պետ . բ . 9 : Յայտ . գ . 10 : (12) Յովհ . ժէ . 15 :

ինչուր՝ քո է թագաւորութիւնն[13] և զօրութիւնն և փառքն՝ յաւիտեանս. ամէն :

14 Պատճառնոր՝ եթէ դուք մարդկանց իրանց մեղքն թողէք[14]՝ ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ թողու- թիւն կը տայ :

15 Այլապ թէ որ դուք մարդկանց չէք թողել իրանց մեղքն[15]՝ ձեր Հայրն էլ ձեր մեղքն ձեզ չի թո- ղել :

16 Եւ են ժամանակն որ պաս կը պահէք[16]՝ չըլինի որ կեղծաւորնե- րին պէս տրտում երևիք , որ իրանց երեսըն տխրացնումեն , որ մարդ- կանց երևին թէ պաս են պահում . ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ Լու- բանց վարձքն ունակ են է :

17 Այլ դուռ ինչ ժամանակ որ պաս պահես , քո գլուխը իւղով օ- ծիր[17] և քո երեսդ լուա՛ :

18 Որ մարդկանց առաջին չերևիս պաս պահոդի նման , այլ Ծածուկ քո Հօրդ առաջին . և քո Հայրն՝ որ Ծածուկն տեսնումէ , յայտնի կը Հատուցանէ քեզ :

19 Ձեզ համար գանձ[18] (Խազնայ) մի՛ Հաւաքէք երկրիս վերայ . որ տեղ որ ցեցն և ժանկն ապականու- մեն . և որ տեղ որ գողերն գետնի տակըն փորումեն և գողանում :

20 Այլ երկնքումն ձեզ համար գանձ (Խազնայ) ժողովեցէք[19] որ էն տեղ ոչ ցեց և ոչ ժանկ չեն ա- պականում , և գողերն գետնի տա- կըն չեն փորում և գողանում :

21 Պատճառնոր՝ ինչ տեղ որ ձեր գանձերն են , Հնտեղ էլ ձեր սիրտն կը լինի :

22 Աչքի ճրագն՝ աչքն է[20] . թէ որ քու աչքդ պարզ է , քո ամէն մարմինդ լուսաւոր կը լինի :

23 Այլ թէ որ քո աչքդ չար է , քո ամէն մարմինդ խաւար կը լինի Ուրեմն՝ թէ որ էն լոյսն որ քե- զանումդ է խաւար է , ապա խաւարն որչափ կը լինի :

24 Ոչ ով կարօղ է երկու տիրոջ ծառայել թէ չէ[21] . կամ մէկին կատէ և մէկելին կը սիրէ , կամ մէկին կը պատվէ և մէկելին ոչինչի տեղ կը Համարէ : Ձեզ կարօղ Աս- տուծոյ ծառայել և մամոնային[22] :

25 Այսհամար ասումեմ ձեզ . Հոգս մի՛ անէք[23] ձեր Հոգւոյն Հա- մար . թէ ինչ պիտի ուտէք , կամ ինչ պիտի խմէք . և ոչ ձեր մարմ- նոյն Համար՝ թէ ինչ պիտի հագ- նիք : Ձեզ որ Հոգին աւելի է կերակ- րիցն՝ և մարմինն շորերիցն :

26 Նայեցէք երկնքի թռչուն- ներին[24] որ ոչ վարումեն , և ոչ հընձումեն , և ոչ ամբարներումն ժո- ղովումեն , և ձեր երկնաւոր Հայրն կերակրումէ նորանց . չէ՞ որ դուք նորանցից աւելի էք :

27 Հիմիկ՝ ձեզանից ով է կարօղ իրան Հոգս անելովին իրան Տասա- կին վերայ մին գալ էլ աւելացնել :

28 Եւ շորերի Համար ինչու էք Հոգս անում . մտիկ արէք վայրի շուշան ծաղկին՝ թէ ինչպէս մեծա-

(13) ա Մատ . իթ . 11 : (14) Մարկ . ժա . 25 , 26 : Լուկաս . գ . 32 : Կող . գ . 13 : (15) Մատ . ժը . 35 : Հայկ . բ . 13 : (16) Նայց . ծը . 5 : (17) Հռովմ . գ . 3 : Գան . ժ . 3 : (18) Ըստ . խգ . 4 : ա Տիմ . գ . 17 : Լուսաւ . ժգ . 5 : Հայկ . ե . 1 , Նայլն : (19) Մատ . ժթ . 21 : Գլուխ . ժը . 33 , 34 : ժը . 22 : ա Տիմ . գ . 19 : ա Պետ . ա . 4 : (20) Գլուխ . ժա . 34 . 36 : (21) Գլուխ . ժգ . 13 : (22) Կող . ա . 10 : ա Տիմ . գ . 17 : Հայկ . գ . 4 : ա Հովհ . բ . 15 : (23) Մատ . ծե . 22 : Գլուխ . ժբ . 22 , 23 : Փիլ . գ . 6 : ա Պետ . ե . 7 : (24) Հովբ . լբ . 41 : Մատ . ձխէ . 9 : Գլուխ . ժբ . 24 , Նայլն :

նումէ · ոչ ջանքէ անում՝ և ոչ մա-
նումէ ։
29 Ըստումեմ ձեզ՝ թէ Աղօմօննն
էլ իրան ամէն փառքի մէջն նորանց
մըրնին նման չը հագաւ ։
30 Ասայց թէ որ վայրի խոտն՝ որ
էսօր կայ և էգուց կրակն կը քցվի՝
Ըստուած էնպէս է հագցնում՝ ա-
պա ո՛րքան աւելի ձեզ՝ Թերհա-
ւատներ ։
31 Որահամար էլ հոգս մի՛ անէք՝
և մի՛ ասէք · Թէ Ո՛նչ ուտենք , կամ
Ո՛նչ խմենք , կամ՝ Ո՛նչ հագնենք
32 Ո՛նչուոր՝ էդ ամէն բաներըդ
հեթանոսներն են ուզում · պատ-
ճառն որ՝ ձեր երկնաւոր Հայրն գի-
տումէ՝ Թէ էդ ամէնդ պէտք է ձեզ ։
33 (Պատւ) առաջ Ըստուծոյ ար-
քայութիւնըն և նորա արդարու-
թիւնըն խնդրեցէք · և էդ ամէն բա-
ներդ կաւելանայ ձեզ[25] ։
34 Ուրեմն՝ էգուցվան համար հոգս
մի՛ անէք , ո՛նչուոր՝ էգուցվան օրն
իրան համար հոգս կանէ · օրի հա-
մար բաւական է իրան նեղութիւնն ։

Կ Ե Ղ · Է ։

1 Դրիսաոս սարի վերայ իրան քարոզն վերջ անելուց ժամանակն՝ ծուռ դատողներին կը-
յանդիմանէ ։ 6 Սուրբ բաներըն շներին տալն կարդիէ ։ 7 կը յորդորէ որ աղօթք անեն ։
13 Նեղ դռնովն ներս մտնեն ։ 15 Ուտ մարգարէներից զգայր լինին ։ 21 Խօսքն ճշմար-
տասէրներ լըինին , բայց կատաղողներ ։ 24 Քարի վերայ շինված տունների նմանին , 26 և
ո՛չ թէ աւազի վերայ ։

1 Մի՛ դատէք՝ որ (դուք էլ) չը
դատվիք[1] ։
2 Պատճառնոր՝ ինչ դատաստա-
նով որ ուրիշին դատէք , (նորանով)
պիտի դատվիք · և ինչ չափով որ
չափէք[2] , (նորանով) կը չափվի ձեզ ։
3 Ո՞նչու քո նեղբօր աչքի մէջի
ծեղըն տեսնումես , և քո աչքիդ մէ-
ջի գերանըն չես տեսնում[3] ։
4 Կամ ի՞նչպես ես ասում նե-
բօրդ՝ Թո՛ղ քո աչքիդի ծեղըն հա-
նեմ , և ահա քո աչքիդ մէջին գե-
րան կայ ։
5 Կեղծաւոր՝ առաջ քո աչքիդի
գերանըն հանի՛ր , և յետոյ մտի՛կ
արա՝ որ քո նեղբօր աչքիցն ծեղըն
հանես ։
6 Սուրբ բանըն մի՛ տաք շներ-
բին[4] · և ձեր մարգարիտներըն խո-
զերի առաջն մի՛ քցէք · որ նորանց
ոտով կոխ չը տան՝ և յետ դառնան
ձեզ պատառեն ։
7 Խնդրեցէք և կը տրվի ձեզ[5] ·
մտնեք և կը գտնէք · (դուռըն)
Թակեցէք և կը բացվի ձեզ ։
8 Ո՛նչուոր՝ ամէն ո՛վ որ կը խընդ-
րէ[6] կառնէ , և ո՛վ որ մտնի կը գայ
կը գտնէ , և ո՛վ որ կը Թակէ կը-
բացվի Նորան ։
9 Ո՞վ է ձեզանից էն մարդն՝ որ
նորանից իրան որդին հաց ուզէ մի-
Թէ քա՞ր կը տայ Նորան ։
10 Եւ կամ ձուկըն ուզէ՝ միԹէ օձ
կը տայ Նորան ։

(25) գ Հով · գ · 13 : Սամ · լե · 25 : Սաղ · ժ · 30 : Ղուկ · ժբ · 31 : ա Տի՛մ · գ · 8 :
(1) Ղուկ · զ · 37 : Հռովմ · բ · 1 : ժգ · 3 , 4 · 10 · 13 : ա Կորնթ · գ · 3 · 5 : Յով :
գ · 11 , 12 : (2) Սաղ · գ · 24 : Ղուկ · զ · 38 : (3) Ղուկ · զ · 41 , 42 : (4) Ըսաղ ·
Թ · 7 , 8 : իգ · 9 : Ղուկ · ժգ · 45 , 46 : (5) Սաղ · իա · 22 : Սաղ · ժա · 24 :
Ղուկ · ժա · 9 , 10 : ժբ · 1 : Հովհ · ժգ · 13 : ժե · 7 : ժզ · 23 , 24 : Յով : ա · 5 , 6 ·
ա Հովհ · գ · 22 : ե · 14 , 15 : (6) Ըսաղ · ը · 17 : Երեմ · ԼԹ · 12 , 13 : (7)
Ղուկ · ժա · 11 , 12 , 13 ։

11 Ուրեմն թէ որ դուք որ չար
էք[8], գիտումէք լաւ պարգեւներ տալ
ձեր որդոցն · ապա ո՛րքան աւելի
ձեր Հայրն որ երկնքումն է, բա-
րի բաներ կը տայ նորանց որ ու-
զումեն իրանից :

12 Ա՛մեն ինչ որ կամենումէք[9] թէ
մարդիքն ձեզ անեն, ենպէս էլ
դուք արէք նորանց · ինչուոր՝ հենց
էս է օրէնքն և մարգարէքն[10] :

13 Մտեղ դռնոյն ներս մտէք[11] ·
ինչուոր՝ լայն է դուռն՝ և համար-
ձակ ճանապարհն՝ որ դէպի կորուս-
տըն է տանում · և շատ են նորանք
որ նորանով են մտնում :

14 Ո՛րքանի՞ նեղ է դուռն՝ և նեղ
է ճանապարհն, որ դէպի կեանքն է
տանում · և քի՛չ են նորանք՝ որ
գտնումեն նորան :

15 Զգո՛յշ կացէք (էն) սուտ մար-
գարէներից[12] որ ոչխարի շորճ-
րով ձեզ մօտ են գալիս[13], և ի-
րանց միջումն յափշտակող գայլեր
են[14] :

16 Իրանց պտղիցն նորանց ճանա-
չեցէք[15] · կը լինի՞ որ փշերիցն խա-
ղող քաղեն[16] · կամ տատասկիցն
թուզ :

17 Այսպէս ամեն բարի ծառ[17] բա-
րի պտուղ է բերում · և չար ծառն
չար պտուղ է բերում :

18 Չի՛ կարող բարի ծառն՝ չար
պտուղ բերել, և ո՛չ էլ չար ծառն
բարի պտուղ բերել :

19 Ա՛մեն ծառ[18] որ բարի պտուղ
չի բերում, կտրվումէ և կրակի մէջ
է քցվում :

20 Ուրեմն իրանց պտղիցն ճանա-
չեցէք նորանց :

21 Ո՛չ թէ ամեն ո՛վ որ ինձ ա-
սումէ՝ Տէր Տէր[19]՝ երկնքի արքայու-
թիւնն կը մտնէ · բայց նա՛ որ իմ
Հօրս կամքըն կատարումէ՝ որ եր-
կնքումն է :

22 Շա՛տ մարդիք էն օրն կասեն
ինձ · Տէր Տէր · չէ՞որ մենք քո ա-
նունովդ մարգարէութիւն արինք[20],
և քո անունովդ դեւեր հանեցինք, և
քո անունովդ շատ հրաշքներ ա-
րինք :

23 Եւ էն ժամանակն կասեմ նո-
րանց[21]՝ թէ Ես ի՛սկի մին ժամանակ ձեզ
չեմ ճանաչել · ինձանից դէն գնա-
ցէք ամենքդ[22]՝ որ անօրէնութիւն
էիք գործում :

24 Ա՛մեն ով որ էս իմ խօսքերըս
լսումէ[23] և նորանց կատարումէ,
նա էն իմաստուն մարդոյն նման կը-
լինի, որ իրան տունըն քարի վե-
րայ շինեց :

25 Անձրևներն եկին՝ և գետե-
րըն վարարեցին՝ քամիներ փչեցին
և էն տունըն թակեցին, և չը կոր-
ծանվեցաւ · ինչուոր՝ քարի վերայ
հաստատված էր :

26 Եւ ամեն ով որ էս իմ խօս-
քերըս լսումէ՝ և նորանց չի՛ կա-
տարում, նա էն անխելք մարդոյն
նման կը լինի՝ որ իրան տունըն ա-
ւազի վերայ շինեց :

(8) Ղուկ. Ջ. 5։ Ը. 21։ (9) Ա՛ռաք. Ջ. 31։ (10) Ա՛ռաք. ԺԳ. 18։ Մատ. Իբ. 40։ Հռոմ. ԺԳ. 8, 9, 10։ Գաղ. Ե. 14։ ա Տի՛մ. ա. 5։ (11) Ա՛ռաք. ԺԳ. 24։ (12) Բ Օրի՛ն. ԺԳ. 3։ Երե՛մ. իգ. 16։ Մատ. իդ. 4, 5. 11. 24։ Մա՛ռ. ԺԳ. 22։ Հռոմ. ԺԶ. 17, 18։ Եփես. Ե. 6։ Կող. Բ. 8։ Բ Պետ. Բ. 1, 2, 3։ ա Հովհ. գ, 1։ (13) Մա՛տ. գ. 5։ Բ Տի՛մ. գ. 5։ (14) Դուբ. ի. 29. 30։ (15) Վայր. 20։ Մատ. ԺԲ. 33։ (16) Ա՛ռաք. Ջ. 43. 44։ (17) Երե՛մ. ԺԱ. 19։ Մատ. ԺԲ. 33։ (18) Մատ. գ. 10։ Ա՛ռաք. գ. 9։ Հովհ. ԺԵ. 2. 6։ (19) Ովհ. Ը. 2։ Մատ. իե. 11, 12։ Ա՛ռաք. Ջ. 46։ ԺԶ. 25։ Դուբ. ԺԹ. 13։ Հռոմ. Բ. 13։ Հա՛կ. ա. 22։ (20) Հնա՛ւ. իգ. 4։ Հովհ. ԺԱ. 51։ ա Կորնթ. ԺԲ. 2։ (21) Մատ. իե. 12։ Ա՛ռաք. ԺԶ. 25. 27։ Բ Տի՛մ. Բ. 19։ (22) Ամո՛ս. Ե. 5. Ջ. 8։ Մատ. իե. 41։ (23) Ա՛ռաք. Ջ. 47։ Նոյնպէս։

27 Ընձրևներն եկին՝ և գետեր-
ըն վերկացան՝ քամիներ փչեցին՝
և տունըն թակեցին և վեր ըն-
կաւ , և նորա կործանվին շատ
սաստիկ էր :
28 Եւ եղաւ երբոր Յիսուս էս ա-
մէն բաներըս կատարեց , ժողովուր-
դներն զարմանում էին նորա վար-
դապետութեանն վերայ[24] :
29 Ինչուորՙ իշխանութիւն ուն-
ղի պէս էր սովորցնում[25] . և ոչ
թէ իրանց կարգացօղներին պէս :

Կ Ի · Ը

2 Քրիստոսի բորոտ սրբելն , 5 Հարիւրապետի տղան , 14 Պետրոսի զքանչն , 16 Իւ շատ
ուրիշ դիւահարներ և հիւանդներ բժշկելն : 19 Ոչոյց կը տայ թէ իրան եւուէն ինչպես կա-
բենում էն երթալ : 23 Նաւով փոթորկին խաղաղեցնում : 28 Երկու դիւահարների ունեցած
դևերն կը հանէ , 31 Իւ կը թողէ որ երթան խոզերին միջումն մտնեն :

1 Բայց երբոր էն սարիցն վեր
եկաւ , շատ ժողովուրդներ նորա ե-
տևէն գնացին :
2 Եւ ահա մին բորոտ մարդ
մօտ եկաւ[1] երկրպագութիւն արաւ
նորան և ասաց . Տէրՙ թէ որ կա-
մենաս , կարօղ ես ինձ սրբել :
3 Յիսուս իրան ձեռըն մեկնեց
և նորան հասցրուց և ասաց . Կա-
մենում՝ սրբվիր . և շուտով բո-
րոտութիւնն սրբվեցաւ նորանից :
4 Եւ Յիսուս ասաց նորան . Օգոյշ կաց՝ իսկի մին մարդոյ բան
չասես[2] . միայն թէ գնա քո անձըդ
ցոյց տուր քահանային . և Մովսէ-
սից հրամայած պատարագըն[3] արա՛ ,
որ վկայութիւն լինի նորանց :
5 Եւ երբոր մտաւ Կափառնա-
յում[4] , մին հարիւրապետ եկաւ
նորա մօտ աղաչում էր նորան ,
6 Եւ ասում էր . Տէրՙ իմ տղան
անդամալոյծ վերընկած է տան մէ-
ջըն՝ և սաստիկ տանջվում :
7 Յիսուս նորան ասաց . Ես կը-
գամ և նորան կը բժշկեմ :
8 Հարիւրապետն պատասխան
տուաւ և ասաց . Տէրՙ արժանի չեմ[5]
որ իմ տան ծածկի տակն մտնես ,
բայց մենակ խօսքով ասա[6] և իմ
տղան կը բժշկվի :
9 Ինչուորՙ ես էլ մին իշխանու-
թեան տակ լինօղ մարդ եմ . իմ ձե-
ռիս տակն զինուորներ ունիմ և ա-
սումեմ սորան թէ Կնա՛ և գնում է .
և մեկուլին թէ Եկՙ և գալիս է . և
իմ ծառային թէ Էս բանըս արա՛
և անում է :
10 Երբոր Յիսուս լսեց , զարմա-
ցաւ և ասաց նորանց որ իրան ե-
տևէն գնում էին . Ճշմարիտըն ասու-
մեմ ձեզ , որ Իսրայէլի մէջն էլ իս-
կի մին ժամանակ էսպէս հաւատք
չը գտի :
11 Բայց ասումեմ ձեզ , որ շատ
մարդիք արևելքից և արևմուտքն
կը գան[7] , և Աբրահամի և Իսա-
հակի և Յակոբի հետ երկնքի արք-
քայութեանն կը նստին :
12 Եւ արքայութեան որդիքն[8]
դուրս կելլին դրսի խաւարն[9] , որ

(24) Մատ . ժգ . 54 : Մարկ . ա . 22 . զ . 2 : Լուկ . գ . 32 : (25) Հովհ . է . 46 : (1) Մարկ . ա . 40 , Լայնէ : Լուկ . ե . 12 : (2) Մատ . թ . 30 : Մարկ . ե . 43 : (3) Լեւ . ժգ . 3 , ՚ . 10 : Լուկ . ե . 14 : (4) Լուկ . է . 1 , Լայնէ : (5) Լուկ . ժե . 19 . 21 : (6) Ասմ . ձէ . 20 : (7) Ծննդ . ժբ . 3 : Ղուկ . բ . 2 , 3 : ժա . 10 : Մատ . ա . 11 : Լուկ . ժգ . 29 : Գործ . ժ . 45 : ժա . 18 : ժգ . 26 : Հռոմ . ժե . 9 , Հայէ՛ . Եփես . գ . 6 : (8) Մատ . քա . 43 : (9) ժգ . 42 . 50 : իբ . 13 : իգ . 51 : իե . 30 : Լուկ . ժգ . 28 : բ Պետ . բ . 17 : Յուդ . 13 .

էն տեղ լաց և ատամների կրճտելն կը լինի :

13 Եւ Յիսուս ասաց Հարիւրապետին . Գնա՛ և ինչպէս որ հաւատացիր՝ թող էնպէս լինի քեզ . և նորա տղան էն օրուանից առողջացաւ :

14 Եւ երբոր Յիսուս եկաւ Պետրոսի տունը[10] , տեսաւ որ նորա զոքանչն[11] տենտի մէջն վերընկած էր :

15 Նորա ձեռքից բռնեց , և տենտն թողեց նորան . վերկացաւ և ծառայութիւն էր անում նորանց :

16 Երբոր իրիկուն էլաւ[12] շատ դիւահարներ բերին նորան մօտ՝ և (մենակ) խօսքով հանեց դևերն , և ամէն հիւանդներըն բժշկեց :

17 Որ կատարվի Եսայի մարգարէի ձեռով ասված բանն . Թէ Նա մեր հիւանդութիւնները վերացրուց՝ և մեր ցաւերը վերկալաւ[13] :

18 Յիսուս երբոր շատ ժողովուրդներ տեսաւ իրան չորս կողմից , հրաման տուաւ էն կողմն գնալ :

19 Եւ մին կարդացող մօտ եկաւ և նորան ասաց . Վարդապետ՝ ես էլ քո ետևէդ կը գամ՝ որ տեղ որ գնաս[14] :

20 Եւ Յիսուս նորան ասաց . Ընդունանների կենալոց փոսեր ունին , և երկնքի թռչուններն բուն . բայց Որդին մարդոյ մին տեղ չունի՝ որ իրան գլուխն դնէ :

21 Եւ նորա աշակերտներից մինն ասաց նորան[15] . Տէր՝ ինձ հրաման տուր[16] որ գնամ առաջ իմ հայրըն թաղեմ :

22 Յիսուս նորան ասաց . Եա՛մ ետևս ինկ , և թող մեռելներին որ իրանց մեռելներըն թաղեն :

23 Եւ երբոր մտաւ նաւն , նորա աշակերտներն նորա ետևէն գնացին :

24 Եւ ահա մեծ ալէկոծութիւն էլաւ ծովի մէջն , մինչև որ նաւն էլ ծածկվումէր ալիքներից . և ինքն քնած էր[17] :

25 Եւ աշակերտներն մօտ եկին՝ նորան զարթնացրին և ասացին . Տէր՝ մեզ փրկիր՝ որ կորչումենք :

26 Եւ նորանց ասաց . Ինչո՞ւ վախկոտ էք պակասահաւատներ : Յետոյ ժամանակն վերկացաւ՝ քամիներին և ծովին սաստեց[18] , և մեծ խաղաղութիւն էլաւ :

27 Եւ մարդիքն զարմացան և ասումէին . Ես ի՞նչպէսի մարդ է՝ որ քամիներն և ծովն էլ հնազանդվումեն սորան :

28 Եւ երբոր էն կողմն անցին Կերգեսացոց երկիրն[19] , երկու դիւահար մարդ պատահեցին նորան , գերեզմաններից դուրս եկած՝ որ հէնքան շատ չար էին , մինչև որ հընար չէր , թէ մին մարդ էն ճանապարհովն անցկենայ :

29 Եւ ահա աղաղակեցին և ասացին . Յիսուս Որդի Աստուծոյ քեզ ի՞նչ բան կայ մեզ հետ , որ եկել ես անժամանակ մեզ տանջել :

30 Եւ նորանցից հեռու մին խոզի երամակ (պատ.) կար որ արածումէր :

31 Եւ դևերն աղաչումէին նորան և ասում , Թէ որ մեզ ես տեղեցս հանես , հրաման տուր մեզ՝ որ գնանք էն խոզերի երամակն (պատ.) :

32 Եւ նորանց ասաց՝ Գնացէք . և նորանք դուրս եկին գնացին խոզերի երամակն . և խոզերի ամէն երամակն էն լարձը տեղիցն վազեց ծո-

(10) Մարկ . ա . 20 . 30 , 31 : Ղուկ . դ . 38 , 39 : (11) ա Կորնթ . թ . 5 : (12) Մարկ . ա . 32 , Լայտ : Ղուկ . դ . 40 , 41 : (13) Եսայ . ծդ . 4 : ա Պետ . բ . 24 : (14) Ղուկ . թ . 57 , 58 : (15) Ղուկ . 59 , 60 : (16) ա Թագ . ԺԹ . 20 : (17) Մարկ . դ . 37 , Լայտ : Ղուկ . ը . 23 , Լայտ : (18) Սաղմ . կե . 7 : Նահ . 9 : Ես . 29 : (19) Մարկ . ե . 1 Լայտ : Ղուկ . ը . 26 , Լայտ :

վի մէջն , և ջրերի միջումն մեռան :
33 Եւ խոզաբածներն փախան , և գնացին քաղաքն և պատմեցին ամէնքն , և դիւահարներուն բաներըն էլ :
34 Եւ ահա ամէն քաղաքն դուրս եկաւ Յիսուսի առաջն . երբոր նոքան տեսին՝ աղաչեցին որ գնայ իրանց երկրին[20] :

ԿԱ · Թ

2 Բժիշկոսի անդամալոյծ բժշկելն , 9 Մատթէոսը մաքսաւորութենէն կանչելն , 10 Մաքսաւորներուն և մեղաւորներուն հետ ուտելն : 14 Իրան աշակերտներին պատ չի պահելն պաղտպահելուն : 20 Ցնուածոս կինն կը բժշկէ : 23 Հայրոսի աղջկին մեռելներէն կը յարուցանէ : 27 Երկու կոյր մարդկանց աչքերըն կը բանայ : 32 Համր դիւահար մին մարդ կը բժշկէ : 36 Ու ժողովուրդին կը խղճայ , որ ոչխարներէն պէս հովիւ չունին :

1 Եւ նաւն մտաւ անցկացաւ էն կողմն , և եկաւ իրան քաղաքն[1] :
2 Եւ ահա մին անդամալոյծ[2] (մարդ) բերին նորա մօտ , որ մահճի (ՊՀՈՂԷՆ) մէջն դրած էր . և Յիսուս նորանց հաւատքն[3] տեսնելով՝ անդամալուծին ասաց . Որդի մեղքերն թողված լինին քեզ :
3 Եւ ահա կարգացողներից մին քանիսն իրանց մտքումն ասացին . Թէ Հայհոյումէ դա :
4 Յիսուս նորանց մտածմունքն իմացաւ[4] և ասաց նորանց . Ո՞նչու էք չար բան մտածում դուք ձեր սրտերումն :
5 Որն է հեշտ , ասել՝ Թէ Ուռ մեղքերդ թողված լինին քեզ , Թէ ասել՝ Վեր կաց և մանկ :
6 Ասյց որ դուք իմանաք՝ Թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վրայ մեղաց թողութիւն տալոյ . են ժամանակն անդամալուծին ասաց . Վեր կաց քո մահճիդ (ՊՀՈՂԷՆԸՆ) վերտառ և գնայ քո տունդ :
7 Եւ նա վերկացաւ և գնաց իրան տունն :
8 Երբոր ժողովուրդներն տեսին , զարմացան և Աստուծոյ փառք էին տալիս , որ էնպիսի իշխանութիւն է տուել մարդկանց :
9 Եւ Յիսուս երբոր էն տեղից առաջ գնաց , տեսաւ մին Մատթէոս անուն մարդ , որ նստած մաքսաւորութիւն (ՀՈՒՐՔՈՒՐՔԻՆ) էր անում[5] . և նորան ասաց . Իմ ետևէս եկ . և նա վերկացաւ գնաց նորա ետևէն :
10 Եւ էլաւ երբոր նորա տան մէջն սեղանի վրայ նստած էր , և ահա ուրիշ էլ շատ մաքսաւորներ (ՀՈՒՐՔՈՒՐՆԵՐ) և մեղաւորներ եկել էին . և Յիսուսի և նորա աշակերտների հետ նստած էին[6] :
11 Երբոր փարիսեցիքն տեսին , նորա աշակերտներին ասացին . Ո՞նչու ձեր վարդապետն մաքսաւորներն[7] և մեղաւորներն[8] հետ (հաց) է ուտում :
12 Ասյց Յիսուս երբոր լսեց , նորանց ասաց . Կարօղներին բժիշկ պէտք չէ , այլ հիւանդներին :
13 Գնացէք սովորեցէք՝ Թէ ի՞նչ է (որ կասվի՝) Ողորմութիւն եմ կամենում՝ և ոչ մատաղ . ինչուար՝ ես չեմ եկել որ արդարներին կանչեմ , այլ մեղաւորներին[10] :

(20) բ Օրէն. ե · 25 : ա Թագ. ժե · 18 : Ղեւի · ե · 8 : Կորնթ · ժզ · 39 : (1) Մատթ · գ · 13 : (2) Մարկ · բ · 3 : Ղեւի · ե · 18 : (3) Մատթ · ը · 10 : (4) Սալմ , ճլթ · 2 : Մատթ · ժբ · 25 : Մարկ · ժբ · 15 : Ղեւի · ե · 22 : գ · 8 : թ · 47 : ժա · 17 : (5) Մարկ · բ · 14 : Ղեւի · ե · 27 : (6) Մարկ · բ · 15 , Լուկ : Ղեւի · ե · 29 , Լուկ : (7) Մատթ · ժա · 19 : Ղեւի · ե · 30 · ժե · 2 : (8) Գալ · բ · 15 : (9) Հեսե · գ · 6 : Մարկ · գ · 6 , 7 , 8 : Մատթ · ժբ · 7 : (10) ա Տիմ · ա · 15 :

14 Իսն ժամանակն Յօհաննէսի աշակերտներն նորա մօտ եկին և ասացին . Ո՞վնէ մենք և փարիսեցիքըն շատ պաս ենք պահում[11] , և քո աշակերտներդ չեն պահում :

15 Յիսուս նորանց ասաց . Միթէ կարելի՞ է որ հարսանիքի տղայքն[12] սուգ անեն քանի որ փեսան նորանց հետ է . բայց օրեր կը գան՝ որ փեսան նորանցից վերկառնվի , և նոքա նոյնից ետև կը պահեն[13] :

16 Մէ ով չը մաշված կարկատանի կտոր հին շորի վերայ չէ քցիլ . ինչուոր՝ նա էն հին շորի ուժըն էլ կառնէ դուրս կը գնայ՝ և նորա պատառվածքն էլ աւելի չար կը լինի :

17 Եւ նոր գինին հին թըկերի մէջ չեն ածիլ . ապա թէ ոչ՝ տրկերն կը պատռվին՝ և գինին կը թափվի , և տրկերն էլ կը կորչին . բայց նոր գինին նոր տրկերի մէջ կածեն , և երկուքն էլ կը պահվին :

18 Վերջանի որ նա էս խօսում էր նորանց հետ , ահա մին իշխան[14] եկաւ նորան երկրպագութիւն արաւ՝ և ասաց . Իմ աղջիկս հենց հիմիկ մեռնելոյ վերայ է . միայն թէ եկ և քո ձեռըդ նորա վերայ դիր՝ և կապրի :

19 Յիսուս վերկացաւ և աշակերտներովն գնաց նորա ետևէն :

20 Եւ ահա մին կին[15] , որ տասներկու տարի միշտ արիւն թափելով ցաւագար էր , մօտ եկաւ՝ և ետևիցն նորա շորի ծայրին դիպաւ :

21 Ինչուոր՝ իրան մտքումն ասում էր՝ թէ Միէնակ նորա շորին դիպչիմ , կը փրկվիմ :

22 Նայց երբոր Յիսուս յետ դարձաւ և նորան տեսաւ , ասաց . Յիր կաց ով դուստր՝ քո հաւատդ քեզ ապրեցրուց[16] . և հենց էն ժամն (սահմանն) կինն ազատվեցաւ :

23 Երբոր Յիսուս եկաւ իշխանի տունն[17] , տեսաւ փողփղօղներըն[18] և շատ ամբոխն (խռնվն) , նորանց ասաց . Հեռու գնացէք[19] :

24 Ինչուոր՝ էդ աղջկդ մեռած չէ , բայց քնած է :

25 Եւ ծաղր էին անում նորան . և երբոր ամբոխն (խռնվն) դուրս էլաւ , ներս մտաւ՝ նորա ձեռիցն բռնեց . և աղջիկն վերկացաւ :

26 Եւ էս համբաւս դուրս եկաւ էն ամէն երկիրն :

27 Եւ ինչ ժամանակ որ Յիսուս էն տեղիցն անց էր կենում , երկու կոյր աղաղակումէին նորա ետևէն՝ և ասում . Որդի Դաւթի[20] մեզ ողորմեա :

28 Եւ երբոր տունն մտաւ , կուրերն նորա մօտ եկին . և Յիսուս նորանց ասաց . Հաւատումէք թէ կարող եմ էդ անել ձեզ . և նորան ասացին . Այ Տէր :

29 Իսն ժամանակն նորանց աչքերին մօտեցաւ՝ և ասաց . Ձեր հաւատալոյն պէս թող լինի ձեզ :

30 Եւ նորանց աչքերն բացվան . և Յիսուս նորանց սաստեց՝ և ասաց . Օգոյշ կացէք[21] որ մին մարդ չիմանայ :

31 Եւ նորանք որ դուրս գնացին , էն ամէն երկրումն նորա անունըն յայտնի արին[22] :

32 Եւ երբոր նորանք դուրս էին գնում , ահա մին համր[23] (լռիկ) դի-

(11) Մարկ . բ . 18 , Լուկ . ե . 33 , Լուկ . ժբ . 12 : (12) Յովհ . գ . 29 : (13) Դուբ . ժգ . 2 , 3 ; ժգ . 23 ։ ա Կորնթ . է . 5 : (14) Մարկ . ե . 22 . Լուկ . Ղ . ը . 41 , Լուկ . : (15) Մարկ . ե . 25 : Ղ . ը . 43 . (16) Ղ . է . 50 : ը . 48 : ժէ . 19 : ժը . 42 : (17) Մարկ . ե . 38 : Ղ . ը . 51 : (18) ը Մնաց . լե . 25 : (19) Դուբ . ի . 10 : (20) Մատթ . ժէ . 22 : ի . 30 , 31 : Մարկ . ժ . 47 , 48 : Ղ . ժը . 38 , 39 : (21) Մատթ . ը . 4 : ժը . 16 : ժէ . 9 : Ղ . ե . 14 : (22) Մարկ . է . 36 : (23) Մատթ . ժը . 32 : Ղ . [illegible]

(5946 / 17134 - 58 38)

աւհար մարդ բերին Նորա մօտ :

33 Եւ երբոր գնաց դուրս եկաւ, Համր (լռիլ) (մարդն) խօսեց • և ժողովուրդներն զարմացան և ասացին . Իսկի մին ժամանակ Իսրայէլի մէջն էսպիսի բան չի երևեցաւ :

34 Իսայց փարիսեցիքն ասում էին . Թէ Վեա գլուխի իշխանովը[24] է հանում դևերն :

35 Եւ Յիսուս ամէն քաղաքներն և գիւղերն մանէր գալիս[25] • Նորանց ժողովարանների մէջն սովորցնում էր • և արքայութեան աւետարանն քարոզում էր • և ժողովրդի միջի ամէն ցաւերն և ամէն հիւանդութիւնները բժշկում էր[26] :

36 Եւ ժողովուրդներն որ տեսաւ՝ խղճմն եկաւ Նորանց վերայ[27] • որ աշխատած և ցրված էին , ինչպես ոչխարներ որ հովիւ (չոպան) չունին[28] :

37 Իյն ժամանակն իրան աշակերտներին ասաց • Հունձքն շատ են՝ և մշակներն քիչ[29] :

38 Աղերսեցէք հնձի Տիրոջն[30] որ մշակներ ուղարկէ իրան հունձն :

ԿԼ • ԻՒ

1 Քրիստոս իրան տասներկու աշակերտներին իշխանութիւն կը տայ որ նորանք հրաշք անեն և նորանք կուղարկէ : 5 Նորանց պատուէր կը տայ , և կը սովորցնէ : 16 Հալածանքներին համար նորանց սիրտ կը տայ : 40 Իր իրանք ընդունողներին վարձք խոսք կը տայ :

1 Իյս իրան տասներկու աշակերտներին իրան մօտ կանչեց[1] , և նորանց իշխանութիւն տուաւ ամէն պիղծ դևերին վերայ , որ նորանց հանեն • և ամէն ցաւերն և ամէն հիւանդութիւնները բժշկեն :

2 Եւ էն տասներկու առաքեալց անուններն էս էին . առաջինն Սիմոն՝ Պետրոս[2] կոչվածն , և նորա եղբայր Անդրէասն :

3 Յակոբոս Ողեթեանն՝ և նորա եղբայր Յոհաննէս . Փիլիպպոս և Նաթանայէլ . Թովմաս և Մատթէոս մաքսաւորն (ՀՒՐՈՒՆԸՆ) . Յակոբոս Ալբեանն , և Ղեբէոսն որ Թադէոս կոչվեցաւ :

4 Սիմոն Կանանացին[3] և Յուդա Իսկարիօտացին[4] նա , որ մատնեց նորան :

5 Իս տասներկուսին Յիսուս ուղարկեց , նորանց պատուէր տուաւ և ասաց • Հեթանոսների ճանապարհն[5] չը գնաք • և Սամարացոց քաղաքն[6] չը մտնէք :

6 Իայց աւելի գնացէք Իսրայէլի տան[7] կորած ոչխարներին մօտ[8] :

7 Եւ երբոր կը գնաք[9] , քարոզեցէք և ասացէք • Երկնքի արքայութիւնն մօտացել է[10] :

8 Հիւանդներն բժշկեցէք • բոլոտներն սրբեցէք • դևերն հանեցէք • ձրի (ՀՈՓԱԹ) առեալէք[11] ձրի (ՀՈՓԱԹ) տուէք :

9 Ա՛ր չի առնէք ո՛չ ոսկի՝ և

(24) Մատ • ժբ • 24 : Մարկ • գ • 22 : Լուկ • ժա • 15 : (25) Մարկ • զ • 6 : Լուկ • ժգ • 22 : (26) Մատ • գ • 23 : (27) Մարկ • զ • 34 : (28) Թագ • իէ • 17 : գ Թագ • իը • 17 : Նեհէ • Բ • 5 : Զաք • ժ • 2 : (29) Լուկ • ժ • 2 : Հովհ • գ • 35 : (30) ր Թագ • գ • 1 : (1) Մարկ • գ • 13 , 14 : զ • 7 : Լուկ • զ • 13 : թ • 1 : (2) Հովհ • ա • 42 : ( ) Լուկ • զ • 15 : Գործ • ա • 13 : (3) Հովհ • ժգ • 26 : (5) Մատ • գ • 15 : (6) ր Թագ • ժէ • 24 : Հովհ • գ • 9 • 20 : (7) Մատ • ժէ • 24 : Գործ • ժգ • 46 : (8) Լուսա • ծգ • 6 : Երեմ • ծ • 6 • 17 : Նեհէ • Բ • 5 • 16 : ա Պետ • ե • 25 : (9) Լուկ • թ • 2 : (10) Մատ • գ • 2 : գ • 17 : Լուկ • ժ • 9 : (11) Գործ • Ը • 18 • 20 :

ոչ արծաթ[12], և ոչ պղնձէ փող ձեր գօտիկներումն[13]։

10 Ոչ ճանապարհի պարկ, և ոչ երկու շոր՝ ոչ կօշիկ՝ ոչ գաւազան. իւրաքանչիւր՝ մշակն իւրան կերակրին արժանի է[14]։

11 Որ քաղաք՝ կամ (որ) գիւղ որ մտնէք[15], հարցրէք՝ թէ նորանումն ով է արժանի, և էնտեղ կացէք՝ մինչև որ էն տեղից դուրս գնաք։

12 Եւ երբոր տունըն կը մտնէք, ողջոյն տուէք նորան և ասացէք. Ողջոյն էս տանս։

13 Եթէ որ էն տունն արժանի է[16], ձեր ողջոյնն նորա վերայ կը գայ. բայց թէ որ արժանի չէ՝ ձեր ողջոյնն չետ կը դառնայ դէպի ձեզ[17]։

14 Եւ ով որ ձեզ չի ընդունի[18], և ձեր խօսքին ականջ չի դնէ, երբոր էն տանիցն կամ էն քաղաքիցն դուրս կը գնաք, ձեր ոտներիցն փոշին թափ տուէք[19]։

15 Ա՛շտարիտըն ասումեմ ձեզ, որ Սօդոմացոց և Գոմօրացոց երկրին համար աւելի հեշտ կը լինի[20] դատաստանի օրումն քան էն քաղաքին։

16 Ի՛նչ ես ուղարկումեմ ձեզ ինչպես ոչխարներ գայլերի մէջ[21]. սրա՛չամար խորագէտ էլէք[22] ինչպես օձերն, և միամի՛տ[23] ինչպես աղաւնիքն։

17 Ա՛գուշ կացէք մարդկանցից. ինչուր ձեզ դատաստան կը քաշեն[24] և իրանց ժողովարաններումն մէջն[25] կը տանջեն ձեզ։

18 Եւ դատաւորների և թագաւորների առաջն[26] կը տանեն ձեզ իմ պատճառով՝ որ (ինձ համար) նորանց և հեթանոսներին վկայութիւն լինի։

19 Ասյց երբոր կը մատնեն ձեզ, հոգա մի՛ անէք՝ թէ ի՞նչպես կամ ի՞նչ պիտի խօսիք[27]. ինչուր՝ էնց էն ժամումն (ահաղնո՛ւմն) կը տըրվի ձեզ ինչ որ պիտի խօսիք[28]։

20 Պատճառնոր չէ՛ թէ դուք էք որ կը խօսիք[29], բայց ձեր Հո՛ր գին է որ ձեզանումն կը խօսի։

21 Եղբայրն եղբօրն մահու կը մատնէ[30], և հայրն որդոյն. և որդիքն վեր կը կենան իրանց հարանց վերայ՝ և նորանց կը սպանեն։

22 Եւ ամէնին ատելի կը լինիք[31] իմ անունիս համար. բայց ով որ կը համբերէ[32] մինչև վերջն՝ նա կապրի։

23 Եւ երբոր էս քաղաքումս հալածեն ձեզ, փախէք ուրիշն[33]. և թէ որ նորանից էլ հալածեն ձեզ, փախէք էն մէկէլն։ Ա՛շտարիտըն ասումեմ ձեզ, Ուր չէք վերջացընիլ Իսրայէլի քաղաքներն. մինչև Որդին մարդոյ կը գայ[34]։

24 Աշակերտն վարպետիցն աւելի չէ[35], և ոչ ծառան իրան տիրոջիցն։

25 Հասական է՝ թէ աշակերտն իրան վարպետի նման լինի. և ծառան իրան տիրոջ նման։ Եթէ որ տա-

(12) ա Ռնուէ · թ · 7 · Մարկ · զ · 8 · Ղուկ · թ · 3 · ՚ · ե · իբ · 35 · (13) Մարկ · զ · 8 · (14) Ղուկ · ժ · 7 · ա Կորն · թ · 7 · Եսայ · ա Տիմ · ե · 18 (15) Ղուկ · ժ · 8 · (16) Ղուկ · ժ · 5 · (17) Մատ · ւծ · 13 · (18) Մարկ · զ · 11 · Ղուկ · թ · 5 · ժ · 10, 11 · (19) Նեեմ · ե · 13 · Գործ · ժգ · 51 · ԺԸ · 6 · (20) Մատթ · ժա · 22 · 24 · (21) Ղուկ · ժ · 3 · (22) Հռոմ · ժգ · 19 · Հեբր · ե · 15 · (23) ա Կորնթ · ժգ · 20 · Փիլ · բ · 15 · (24) Մատթ · իգ · 9 · Մարկ · ժգ · 9 · Ղուկ · ԻԸ · 11 · իա · 12 · (25) Գործ · ե · 40 · (26) Գործ · ԻԸ · 1 · իգ · 10 · իե · 7 · 23 · բ Տիմ · դ · 16 · (27) Մարկ · ժգ · 11, 12 · 13 · Ղուկ · ԻԸ · 11 · իա · 14, 15 · (28) Հբ · գ · 12 · Հբեմ · ա · 7 · (29) բ Ռնուէ · իգ · 2 · Գործ · գ · 8 · զ · 10 · բ Տիմ · գ · 17 · (30) Մատթ · է · 6 · 35, 36 · Ղուկ · իա · 16 · (31) Ղուկ · իա · 17 · (32) Գործ · ԻԸ · 13 · Մատթ · իգ · 13 · Մարկ · ժգ · 13 · (33) Մատթ · բ · 13 · գ · 12 · ԻԸ · 15 · Գործ · ը · 1 · Թ · 25 · ԺԳ · 6 · (34) Մատթ · ԻԶ · 28 · (35) Ղուկ · զ · 40 · Հովհ · ԺԳ · 16 · ԺԵ · 20 ·

նուէրին Ի՛ւղղեբուղ կոչեցին[36], ապա ո՛րքան աւելի նորա ընտանիքն։

26 Արհամար էլ մի՛ վախենաք նորանցից · ինչուա՛ր՝ իւկի ծածուկ բան չը կայ՝ որ յայտնի չըլինի[37] · և թագուն բան՝ որ չիմացվի։

27 Ինչ որ խաւարումն ասում եմ ձեզ, լուսի մէջն ասացէ՛ք · և ինչ որ ականջում լսումէք՝ կըտըրներին վերայ քարոզեցէ՛ք։

28 Ա՛յ վախենաք նրանցից՝ որ մարմինըն սպանումն և հոգին չեն կարող սպանել[38] · բայց աւելի վախեցէ՛ք նորանից՝ որ կարող է հոգին և մարմինըն կորցնել գեհենի մէջն։

29 Ձէ՞ որ երկու ծիտ մին դանկի են ծախվում · և նորանցից մինն չի ընկնիլ գետինն առանց ձեր Հօրն։

30 Ինչց ձեր գլխի ամէն մազերն էլ համարված է[39]։

31 Ուրեմն մի՛ վախենաք · ինչուա՛ր՝ դուք աւելի լաւ էք քան շատ ծըտեր։

32 Ամէն ով որ ինձ մարդկանց առաջին կը դաւանէ[40] · ես էլ նորան կը դաւանեմ իմ Հօրս առաջին որ երկնքումն է[41]։

33 Եւ ով որ ինձ կուրանայ[42] մարդկանց առաջին՝ ես էլ նորան կուրանամ իմ Հօրս առաջին՝ որ երկընքումն է։

34 Ձը՛ կարծէք թէ եկել եմ երկրիս վերայ խաղաղութիւն քըցել[43] · չեմ եկել խաղաղութիւն քըցել, բայց սուր։

35 Պատճառն որ՝ եկի որ մարդըն իրան Հօրիցն, և աղջիկըն իրան մօրիցն, և հարսըն իրան սկեսուրիցն բաժանեմ[44]։

36 Եւ մարդոյ թշնամիներն իրան ընտանիքն կը լինին[45]։

37 Ա՛վ որ Հօրն կամ մօրըն ինձանից աւելի կը սիրէ[46], նա ինձ արժանի չէ · և ո՛վ որ իրան որդին կամ աղջիկն ինձանից աւելի կը սիրէ, նա ինձ արժանի չէ։

38 Եւ ո՛վ որ իրան խաչըն չառնէ և իմ ետևէս գայ[47], նա ինձ արժանի չէ։

39 Ա՛վ որ իրան անձըն կը գըտնէ[48], կը կորցնէ նորան, և ո՛վ որ իրան անձըն ինձ համար կորցրուց, կը գտնէ նորան։

40 Ա՛վ որ ձեզ կընդունի[49], ինձ կընդունի · և ո՛վ որ ինձ կընդունի, իմ ուղարկողին կընդունի։

41 Ա՛վ որ մարգարէ կընդունի մարգարէի անունովը[50], նա մարգարէի վարձք կառնէ · և ո՛վ որ արդարը կընդունի արդարի անունովը՝ արդարի վարձք կառնէ։

42 Եւ ո՛վ որ էս փոքրներիցս մէնին[51] մէնակ մին աման ցուրտ ջուր խմացնէ աշակերտի անունովը, ճշմարիտ ասում եմ ձեզ, չ՛կորցնիլ իրան վարձքն։

(36) Միք · ժբ · 24 · Մատ · գ · 22 · Ղուկ · ժա · 15 · Յովհ · ը · 48 · 52 · (37) Մատ · դ · 22 · Ղուկ · ը · 17 · ժբ · 2, 3 · (38) Նոյ · ը · 12, 13 · Ղուկ · ժբ · 4 · ա Պետ · գ · 14 · (39) ա Մակ · ժգ · 45 · բ Մակ · ժգ · 11 · Ղուկ · խա · 18 · Ծոթթ · իե · 34 · (40) Ղուկ · ժբ · 8 · Հռովմ · ժ · 9, 10 · (41) Յայտ · գ · 5 · (42) Մատ · ը · 38 · Ղուկ · թ · 26 · բ Տիմ · բ · 12 · (43) Ղուկ · ժբ · 49 · 51, 52, 53 · (44) Միք · է · 6 · (45) Սաղ · խա · 9 · Ծն · 13 · Միք · է · 6 · Յովհ · ժգ · 18 · (46) Ղուկ · ժդ · 26 · (47) Մատ · ժզ · 24 · Մատ · ը · 34 · Ղուկ · թ · 23 · ժդ · 27 · (48) Մատ · ժզ · 25 · Ղուկ · ժե · 33 · Յովհ · ժբ · 25 · (49) Մատ · ժբ · 5 · Ղուկ · թ · 48 · ժ · 16 · Յովհ · ժբ · 44 · ՚ժգ · 20 · Գաղ · գ · 14 · (50) գ Մակ · ժե · 10 · ժբ · 4 · գ Մակ · գ · 8 · (51) Մատ · ը · 5, 6 · իե · 40 · Մատ · թ · 41 · Եբր · Ձ · 10 ։

ԳԼ · ԺԸ

2 Յովհաննէս իրան աշակերտներն Քրիստոսի կուղարկէ : 7 Քրիստոսի Յովհաննէսի համար արած վկայութիւնն : 18 Քրիստոսի և Յովհաննէսի համար ժողովուրդին ունեցած կարծիքն : 20 Քրիստոս նախատինք կը տայ Քորազին Բեթսայիդա և Կափառնայում քաղաքներին որ նորանք ապերախտութիւն արին և չապաշխարեցին : 25 Նաև կը գովէ իրան Հօր իմաստութիւնն որ աւետարանն տղայոց յայտնեց : 28 Նաև ամեն մեղքի ծանրութիւն իմացողներն իրան կը կանչէ :

1 Նէ էլաւ երբոր Յիսուս իրան տասներկու աշակերտների պատուիրանքները վերջացրուց , էն տեղիցն գնաց որ նորանց քաղաքներումն քարոզ տայ և սովորցընէ :

2 Բայց Յովհաննէս երբոր բանտումն (պէնթանոն) Քրիստոսի գործքերըն լսեց[2] , իրան աշակերտների ձեռովն ուղարկեց ,

3 Նէ նորան ասաց . Դու ես էն որ պէտք է գաս[3] , թէ ուրիշի սպասենք :

4 Յիսուս պատասխան տուաւ և նորանց ասաց . Վնացէք Յովհաննէսին պատմեցէք , ինչ որ լսեցիք և տեսիք :

5 Կուրերն տեսնումեն , կաղերն գնումեն , բորոտներն սրբվումեն . խուլերն (խաւէրն) լսումեն , մեռելներըն յարութիւն են առնում[4] , և աղքատներին աւետարան է քարոզվում[5] :

6 Նէ երանելի է նա , որ ինձ վրայ չէ գայթակղվի[6] :

7 Բայց երբոր նորանք գնացին[1] , Յիսուս սկսեց ժողովուրդներին ասել Յովհաննէսին համար . (դուք) դուրս գնացիք ի՞նչ տեսնելոյ անապատումն (չօլսա) , մին եղէգը[8] (ղամըշը)՝ որ քամուցն շարժվումէ :

8 Այլ ի՞նչ տեսնելոյ դուրս գնացիք . մին մարդ փափուկ շորերով զարդարված . ահա նորանք որ փափուկ հագած են՝ թագաւորաց տներումն են :

9 Ուրեմն (դուք) ի՞նչ տեսնելոյ դուրս գնացիք . մին մարգարէ՞ . իրաւի ասումեմ ձեզ , որ մարգարէից էլ շատ աւելի է[9] :

10 Ինչուոր՝ նա էն է՝ որ նորա համար գրված է . (թէ) Ահա ես իմ հրեշտակս կուղարկեմ քո երեսիդ առաջին , որ քո առաջիդ քո ճանապարհըն պատրաստէ[10] :

11 Ճշմարիտ ասումեմ ձեզ . Որ կանանց ծնվածների մէջն աւելի մեծ առաջ եկած չէ՝ քան Յովհաննէս մկրտիչն . բայց երկնքի արքայութեան միջն փոքրն նորանից մեծ է :

12 Բայց Յովհաննէս մկրտչի օրերից[11] մինչև հիմի երկնքի արքայութիւնն ուժով առնվումէ՝ և ուժովներն յափշտակումեն նորան :

13 Ինչուոր՝ ամեն օրէնքն և մարգարէքն մինչև Յովհաննէսն մարգարէացան[12] :

14 Նէ թէ կամենաք ընդունել , նա է Եղիան[13] , որ պէտք է գայ :

(1) Մատթ . ժդ . 3 : (2) Ղուկ . է . 18 , 19 , Նայէ : (3) Հովհ . խթ . 10 : Մատթ . իգ . 17 : Դան . թ . 24 : Հովհ . ա . 14 : (4) Նոյն . իթ . 18 : լե . ֆ , 5 , 6 : Խբ . 7 : Հովհ . բ . 23 : գ . 2 : ե . 36 : ժ . 25 . 38 : ժդ . 11 : (5) Մատ . իբ . 26 : Նոյն . կա . 1 : Ղուկ . դ . 18 : Հով . բ . 5 : (6) Նոյն . ը . 14 , 15 : Մատթ . ժգ . 57 : իգ . 10 : իզ . 31 : Ասում . Թ . 32 , 33 : ա Կորնթ . ա . 23 : բ . 14 : Գաղ . ե . 11 : ա Պետ . բ . 8 : (7) Ղուկ . է . 24 : (8) Նէհեմ . գ . 14 : (9) Մատթ . ժգ . 5 : իա . 26 : Ղուկ . ա . 76 , է . 26 : (10) Մատ . գ . 1 : Մարկ . ա . 2 : Ղուկ . ա . 76 : է . 27 : (11) Ղուկ . ժգ . 16 : (12) Մատ . գ . 6 : (13) Մատ . գ . 5 : Մատթ . ժէ . 12 : Ղուկ . ա . 17 :

15 Ո՛վ որ լսելոց ականջ ունի՝ թող լսէ[14] :

16 Ա՞ստ նմանեցնեմ էս ազգիս[15] . էն տղայոցն նման է՝ որ փողոցին նըստին և իրանց ընկերներին կանչեն ,

17 Եւ ասեն . Փող փչեցինք ձեզ համար՝ և պար չեկիք . սուգ արինք ձեզ համար՝ և լաց չէլաք :

18 Յովհաննէսն եկաւ , ոչ ուտում և ոչ խմում . և ասումեն՝ Դև կայ նորանում :

19 Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ և խմումէ , և ասումեն . Ահա ուտող և խմող մարդ . մաքսաւորների (Հարկահաւաքների) և մեղաւորների[16] բարեկամ . և իմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներիցն[17] :

20 Յն ժամանակն սկսեց նախատինք տալ էն քաղաքներին[18] ուր որ նորա շատ հրաշքներն էլան՝ և չապաշխարեցին :

21 Ա՛ւ քեզ Քորազին . վա՛յ քեզ Բեթսայիդա . ինչուոր՝ եթէ Տիւրոսի և Սիդոնի մէջն էլած էին էն հրաշքներն որ ձեր մէջն էլան , շատ կանուխ քրձով[19] (Խաչ ղրով) և մոխրով ապաշխարել էին :

22 Նայց ասումէմ ձեզ . Վատաստանի օրումն աւելի հեշտ կըլինի Տիւրոսի և Սիդոնի երկրին համար՝ քան ձեզ[20] :

23 Եւ դու Կափառնայում . մինչև երկինքն չի բարձրանաս[21] , բայց մինչև դժոխքն կըջածանաս . ինչուոր՝ եթէ Սոդոմի մէջն էլած էին էն հրաշքներն՝ որ քեզանումն էլան , ուղորդ որ՝ մինչև էս օր դեռ մընումէին :

24 Նայց ասումեմ ձեզ՝ Որ դատաստանի օրումն Սոդոմացոց երկրին համար աւելի հեշտ կըլինի[22] , քան քեզ :

25 Յն ժամանակն Յիսուս պատասխան տուաւ և ասաց . Գոհանումեմ քեզանից[23] . ո՛վ Հայր երկընքի և երկրի Տէր . որ իմաստուններից և գիտուններից էս բանըս ծածկեցիր[24] և տղայոցն յայտնեցիր[25] :

26 Նրաւի է ո՛վ Հայր . ինչուոր՝ Քոպէս հաճոյ էլաւ քո առաջիդ :

27 Ամէն բան ինձ տրվաւ իմ Հօրից[26] . և ոչ ով չի ճանաչումէ Որդին՝ բայց միայն Հայրն . և ոչ ով չի ճանաչումէ Հօրն[27] բայց միայն Որդին . և ումի որ Որդին կամենայ յայտնել :

28 Եկէք մօտ ինձ՝ ամէն վաստակածներ և բեռնաւորներ . և ես հանգիստ կը տամ ձեզ :

29 Իմ լուծըս ձեզ վերայ առէք , և ինձանից սովորեցէք[28] . ինչուոր՝ ես հեզասիրտ եմ և սրտովս խոնարհ[29] . և ձեր անձին համար հանգստութիւն կը գտնէք[30] :

30 Ինչուոր՝ իմ լուծըս քաղցր է , և իմ բեռս թեթև[31] :

(14) Մատթ . ժգ . 9 : Ղուկ . ը . 8 : Յայտ . բ . 7 . 11 . 17 . 29 : գ . 6 . 13 . 22 : (15) Ղուկ . է . 31 : (16) Մատթ . թ . 10 : (17) Դուկ . է . 35 : (18) Ղուկ . ժ . 13 : Նայլ . (19) Յովէլ . գ . 7 , 8 : (20) Մատթ . ժ . 15 : Նայր . 24 : (21) Նսայ . ժգ . 13 : Ուղեթ . բ . 1 : (22) Մատթ . ժ . 15 : (23) Ղուկ . ժ . 21 : (24) Մատ . ը . 2 : ա Կորնթ . ա . 19 . 27 : բ . 8 . բ Կորնթ . գ . 14 : (25) Մատթ . ժգ . 17 : (26) Մատթ . իը . 18 : Ղուկ . ժ . 22 : Յովէլ . գ . 35 : ժդ . 3 : ժէ . 2 : ա Կորնթ . ժե . 27 : (27) Յովէլ . ա . 18 : Ղ . 46 : ժ . 15 : (28) Յովէլ . ժգ . 15 : փիլիպ . բ . 5 : ա Պետ . բ . 21 : ա Յովէլ . բ . 6 : (29) Ածէ . թ . 9 : փիլիպ . բ . 7 , 8 : (30) Երեմ . Ղ . 16 : (31) ա Յովէլ . է . 3 :

ԳԼ· ՀՒ

1 Վերիստոս չաբաթ չպահելոյ համար փարիսեցոց ունենցած կռըւթիւնն կը յանդիմանէ ; 3 Մուրը Իրքիցն օրինակ բերելով, 8 Իրաւունքով, 13 Եւ մին հրաշքով· 22 Այր և մուննջ դիւահարն կը բժշկէ : 31 Մուրը Հոգւոյն դէմ հայհոյանքն խիկ չըթողվիլ : 36 Ըմին դատարկ բանի համար պատասխան պիտի տան : 38 Ընհաւատներին կը յանդիմանէ որ նորանք նշան էին ուզում : 49 Եւ ցոյց կը տայ թէ իրան եղբայր քոյր և մայր ծ՚ղէ :

1 Ըն ժամանակն Յիսուս շաբաթի օրումն դնաց նորանց արտերի միջն[1], և նորա աշակերտներն սկսվեցին, և սկսեցին հասկ պոկել և ուտել :

2 Երբոր փարիսեցիքն տեսին՝ նորան ասացին. Ըհա քո աշակերտներդ բան են անում, որ արժան չէ շաբաթի օրումն անել :

3 Ա՚յս էլ ասաց նորանց. Ոտք չէք կարդացել էն՝ որ Դաւիթն արա էն ժամանակն որ ինքն սովից[2]· և նորանք էլ որ նորա հետն էին :

4 Թէ ինչպես Ըստուծոյ տունն մտաւ և առաջաւորութեան (Ըսպասծոյ սեղանի վերայ դրած) հացըն կերաւ[3]· որ օրէնք չէր նորան ուտել, և ո՚չ էլ նորանց որ նորա հետն էին· բայց միայն քահանայից[4] :

5 Կամ թէ չէք կարդացել օրէնքումն[5], որ քահանայքն շաբաթի օրերումն տաճարի միջն շաբաթն պղծումեն, և մեղք չէ նորանց :

6 Ըսայց ասումեմ ձեզ՝ Որ տաճարիցն էլ մեծն է էս տեղ[6] :

7 Ըսայց թէ որ գիտէիք ինչ է էն բանն՝ թէ Ողորմութիւն եմ ուզում և ո՚չ թէ մատաղ[7], դուք չէիք դատապարտիլ էն անմեղներին :

8 Ինչուր՝ շաբաթու տէրն՝ Որդին մարդոյ է :

9 Եւ Յիսուս էն տեղից դնաց[8] նկաւ նորանց ժողովարանի միջ :

10 Եւ էն տեղ մին մարդ կար՝ որ նորա ձեռն չորացած էր. Նորան հարցրին և ասացին՝ Թէ Հաւաբաթ օրումն պէ՚տք է բժշկութիւն անել[9]· որ նորա վերայ չարախօսեն :

11 Եւ նա ասաց նորանց. Որ է ձեզանից էն մարդն, որ մին ոչխար ունենայ և էն ընկնի փուի մէջ շաբաթ օրումն[10], միթէ չի՞ բռնիլ նորան և վերկացնիլ :

12 Ըպա որքան աւելն է մարդ քան թէ ոչխար. ՆրաՀամար պէտք է շաբաթի օրումն բարիք գործել :

13 Ըյն ժամանակն ասաց էն մարդոյն. Ձեռդ մեկնիր, նա էլ մեկնեց. և ողջ էլաւ էն մէկելին պես :

14 Ըսայց փարիսեցիքն գնաց գըՆացին[11]. և նորա համար խորհուրդ արին՝ թէ ինչպես կորցնեն նորան :

15 Եւ Յիսուս երբոր իմացաւ, էն տեղից հեռացաւ[12]. և շատ ժողովուրդներ նորա ետևէն գնացին[13]. և ամէնքն բժշկեց :

16 Եւ նորանց սաստեց[14] որ իրանից մին մարդոյ բան չըՅայտնեն :

17 Որ կատարվի Եսայի մարգարէի ձեռով ասվածն :

18 Ըհա իմ մանուկն՝ որ ես ընտրեցի[15]. և իմ սիրելին՝ որ իմ անձս

(1) ր Օրէն · իգ · 25 : Մարկ · ր · 23 : Լուկ · զ · 1 : (2) ա Թագ · իա · 6 : (3) Լեւէտ · իե · 30 : Ելկ · իգ · 5 · (4) Լեւէտ · իթ · 32 , 33 : Ելկ · ր · 31 : իգ · 9 : (5) Թուոմ · իը · 9 : Հովհ · է · 22 : (6) ր Պատ · զ · 18 : Մատ · գ · 1 : (7) Ովս · զ · 6 : Մատ · զ · 6 , 7 , 8 : Մարկ · թ · 13 : (8) Մարկ · գ · 1 : Լուկ · զ · 6 : (9) Լուկ · ժգ · 14 : ժգ · 3 : Հովհ · թ · 16 : (10) Լեւէտ · իգ · 4 , 5 : ր Օրէն · իը · 4 : (11) Մատ · իե · 1 : Մարկ · գ · 6 : Լուկ · գ · 11 · Հովհ · ե · 18 : ժ · 39 : ժա · 53 : (12) Մարկ · ժ · 23 : Մարկ · գ · 7 : (13) Մարկ · ժԹ · 2 : (14) Մարկ · թ · 30 : (15) Եսայ · խա · 1 :

հաւանել է նորա[16] · իմ Հոգիս նո-
րա վերայ կը դնեմ , և Հեթանոս-
ներին իրաւունքըն կը պատմէ ։
19 (Ա)ա չէ հակառակիլ · և չէ
աղաղակիլ , և փողոցներու մէջն՝ ոչ
ոք նորա ձայնըն չէ լսել ։
20 Ջարդված եղէգըն (ղամիշըն)
չէ փշրիլ , և վերջի կայծն հասած
պատրիքըն չէ անցնիլ · մինչև դա-
տաստանըն գլուխ հանէ յաղթու-
թենով ։
21 Եւ նորա անուներին Հեթանոս-
ներն յոյս կը դնեն ։
22 Ես ժամանակն մին կոյր և
համր (լռիկ) դիւահար բերին նորա
մօտ[17], և նորան բժշկեց · հնպես որ
համրն և կոյրն խօսեց և տեսաւ ։
23 Ամէն ժողովուրդներն զարմա-
ցան և ասումէին · Ըրևնի՞ թէ սա
է Դաւիթին որդին ։
24 Բայց փարիսեցիքն երբոր լսե-
ցին[18] ասացին · Թէ Ա՛ս դևերըն
ուրիշ բանով չէ հանում · բայց մի-
այն Բէեղզէբուղ դևերի իշխանի
ձեռնով ։
25 Երբոր Յիսուս նորանց միտքըն
իմացաւ[19] , ասաց նորանց · Ամէն
թագաւորութիւն որ իրան մէջն
բաժանված է՝ կը կործանվի · և ա-
մէն քաղաք կամ տուն որ իրան
մէջն բաժանված է՝ չէ մնալ ։
26 Եւ թէ որ Սատանան Սատա-
նային հանէ , իրան միջումն բաժան-
վեցաւ · էլ ի՞նչպես նորա թա-
գաւորութիւնն կը կենայ ։
27 Եւ եթէ ես Բէեղզէբուղաւն
իմ հանում դևերըն , ապա ձեր
որդիքն ի՞նչով կը հանեն · Նրանց-
մար նորանք կըլինին ձեզ դատաւոր ։
28 Բայց թէ որ ես Աստուծոյ Հո-
գովն իմ հանում դևերըն , ուրե-
մըն Աստուծոյ արքայութիւնն ձեզ
վերայ հասել է[20] ։
29 Կամ ի՞նչպէս մին մարդ կա-
րող է զօրաւոր մարդոյ տունըն մըտ-
նել[21] և նորա բաներըն յափշտա-
կել · թէոր առաջ էն զօրաւոր մար-
դըն չը կապէ , և յետոյ նորա տու-
նըն յափշտակէ ։
30 Ա՛վ որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ
հակառակ է · և ով որ ինձ հետ չէ
ժողովում՝ (նա) ցրվումէ ։
31 Վրահամար ասումեմ ձեզ · Ա-
մեն մեղք և հայհոյանք կը թող-
վին մարդկանց[22] , բայց Հոգովն դեմ
հայհոյանքն չէ թողվիլ[23] ։
32 Եւ ով որ Որդոյն մարդոյ
դեմ[24] բան ասէ՝ կը թողվի նորան[25] ·
բայց ով որ Սուրբ Հոգովն դեմ ա-
սէ , նորան չէ թողվիլ · ոչ էս աշ-
խարհքումըս՝ և ոչ էն ։
33 Կամ ծառն բարի արէք՝ և
նորա պտուղըն էլ բարի[26] · կամ
ծառն չար արէք՝ և նորա պտու-
ղըն էլ չար · ինչուր՝ ծառն իրան
պտղովն կը ճանաչվի ։
34 (Իժ) օձի զաւակներ՝ դուք
ի՞նչպէս կարող էք բարի բաներ
խօսիլ՝ որ չար էք · ինչուր՝ սրտի
աւելցածիցըն կը խօսի բերանն[27] ։
35 Ճարի մարդն՝ իրան սրտի բարի
գանձիցն (խազնայիցն) բարիք կը հա-
նէ , և չար մարդն իրան սրտի չար
գանձիցն չար կը հանէ ։
36 Ա՛յն թէ ասումեմ ձեզ · Ամէ
ամէն դատարկ բանի համար որ մար-
դիկ կը խօսին՝ պատասխան պիտի տան
դատաստանի օրումն ։

(16) Սաղ · գ · 17 · ԺԷ · 5 · (17) Սաղ · թ · 32 · Մաթ · գ · 11 · Ղուկ · ժա · 14 · (18) Մաթ · թ · 34 · Մարկ · գ · 22 · Ղուկ · ժա · 15 · (19) Մաթ · թ · 4 · Յովհ · բ · 25 · Հայտ · բ · 23 · (20) Դան · բ · 44 · է · 14 · Ղուկ · ա · 33 · ժա · 20 · ԺԷ · 20 , 21 · (21) Եսայ · խԹ · 24 · Ղուկ · ժա · 21 , 22 , 23 · (22) Մարկ · գ · 28 · Ղուկ · ԺԲ · 10 · Եբր · ը · 4 , Լայն · ժ · 26 · 29 · ա Յովհ · ե · 16 · (23) Դուրթ · է · 51 · (24) Մաթ · ժա · 19 · ԺԳ · 55 · Յովհ · է · 12 · 52 · (25) ա Տիմ · ա · 13 · (26) Մաթ · է · 17 · ԻԳ · 33 · (27) Ղուկ · ը · 45 ·

37 Ինչուո՞ր՝ քո խօսքերիցդ կարդարանաս, և քո խօսքերիցդ կը դատապարտուիս։

38 Էն ժամանակն մին քանիսն կարդացողներից և փարիսեցիներից պատասխան տուին և ասացին. Վարդապետ՝ ուզումենք որ քեզանից մին նշան տեսնենք[28]։

39 Նա պատասխան տուաւ և նոցանց ասաց. Չար և շնացող ազգն նշան է ուզում[29]. և նշան չի տրվիլ նորան, բայց միայն Յովնան մարգարէի նշանն։

40 Պատճառո՞ր՝ ինչպէս Յովնան երեք օր և երեք գիշեր կէտ ձրկան փորումն էլաւ[30], էնպէս էլ Որդին մարդոյ երեք օր և երեք գիշեր երկրի սրտումն կը լինի։

41 Նինուէացւոց մարդիքն դատաստանումն վեր կը կենան էս ազգիս հետ[31], և սորան կը դատապարտեն[32]. ինչուո՞ր՝ նորանք Յովնանու քարոզութենովն ապաշխարեցին[33]. և հիմիկ ահա Յովնանիցն աւելի մեծն է էս տեղ։

42 Հարաւային երկրի թագուհին դատաստանումն վեր կը կենայ էս ազգիս հետ[34], և սորան կը դատապարտէ. ինչուո՞ր՝ նա երկրի ծայրիցըն եկաւ՝ որ Սաղոմոնի իմաստութիւնըն լսէ. և ահա Սաղոմոնիցն աւելի մեծն է էս տեղ։

43 Հայց ինչ ժամանակ որ պիղծ ղևն դուրս է գալիս մարդուց[35], անջուր տեղերումն մտն է գալիս[36]. հանգիստ է ինդրում՝ և չի գտնում։

44 Էն ժամանակն ասումէ. Կետ դառնամ իմ տունս՝ որ էն տեղից դուրս եկի. և գալիս է նորան պըտնումէ՝ պարապ, սրբված և պատրաստված։

45 Էն ժամանակն դնումէ իրանից էլ աւելի չար՝ եօթն դև է առնում իրան հետ, և մտնումէ բնակվումէ էն տեղ. և էն մարդոյ յետինն աւելի չար է լինում քան թէ առաջինըն[37]. էսպէս էլ կը լինի էս չար ազգիս։

46 Մինդքանի որ նա ժողովուրդներին հետ խօսումէր, ահա նորա մայրն[38] և նորա եղբարքն[39] դուրսըն կանգնել էին՝ և ուզումէին որ նորա հետ խօսին։

47 Եւ մին մարդ նորան ասաց. Ահա քո մայրդ և քո եղբարքդ դուրսըն կանգնած են, և ուզումեն որ քեզ հետ խօսին։

48 Նա պատասխան տուաւ նորան՝ որ ասաց իրան, և ասաց. Ովվ է իմ մայրս կամ ովվ են իմ եղբարքս։

49 Եւ իրան ձեռըն դէպ ի աշակերտներին մեկնեց՝ և ասաց. Ահա իմ մայրս և իմ եղբարքս։

50 Ինչուո՞ր՝ ովվ որ իմ Հօրս կամքըն կատարէ[40] որ երկնքումն է, նա է իմ եղբայրս քոյրս և մայրս։

(28) Մատթ. ժգ. 1 : Մարկ. ը. 11 : Ղուկ. ժա. 16. 29 : Յովհ. բ. 18 : ա Կորնթ. ա. 22 : (29) Լուսաւ. ծէ. 3 : Մատթ. ժգ. 4 : Մարկ. ը. 38 : Յովհ. գ. 48 : (30) Յովն. ա. 17 : (31) Ղուկ. ժա. 32. (32) Լուսաւ. գ. 11 : Եսդի. ժգ. 51, 52 : Հռոմ. բ. 27 : (33) Յովն. գ. 5 : (34) գ Թագ. ժ. 1 : բ Մնաց. թ. 1 : Ղուկ. ժա. 31 : (35) Ղուկ. ժա. 24 : (36) Յովբ. ա. 7 : ա Պետր. ե. 8 : (37) Լբեր. ղ. 4 : ժ. 26 : բ Պետր. բ. 20, 21, 22 : (38) Մարկ. գ. 31 : Ղուկ. ը. 19, 20, 21 : (39) Մատթ. ժգ. 55 : Մարկ. ղ. 3 : Յովհ. բ. 12 : է. 3. 5 : Գործ. ա. 14 : ա Կորնթ. թ. 5 : Գաղ. ա. 19 : (40) Յովհ. ժե. 14 : Գաղ. ե. 6 : ղ. 15 : Կող. գ. 11 : Լբեր. բ. 11 :

ԳԼ· ԺԳ·

3 Սկըմ ցանօղի և սերմի առակն ։ 18 Նորանից մեկնութիւնն ։ 24 Որոմի , 31 Մանանեխի հատի , 33 Խմորի , 44 Պահված գանձի , 45 Մարգարիտի , 47 Ձկոյղի քցած ուռկանի առակները ։ 53 Քրիստոսի իրան քաղաքացիներից անարգվելը ։

1 Ընդ օրումն Յիսուս տանից դուրս էլաւ՝ և ծովի եզերին[1] (ղբրաղէն) մօտ նստից ։

2 Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ ժողովվեցան[2] , մինչև որ նա նաւն մտաւ և նստից[3] . և ամէն ժողովուրդն ծովի եզրումն (ղբրաղէն) կանգնել էր ։

3 Եւ նորանց հետ շատ բան էր խօսում առակներով , և ասում էր ։

4 Ընդ մին սերմ ցանօղ մարդ դուրս գնաց որ սերմերն ցանէ[4] . և իրան սերմելոյ ժամանակն մին քանիսըն ճանապարհի վերայ ընկաւ՝ և երկնքի թռչունն եկաւ և նորան կերաւ ։

5 Եւ մէկէլն քարքարուտ տեղ ընկաւ՝ որ տեղ որ շատ հող չըկար , և շուտով բուսաւ հողի պակասութեան պատճառովն ։

6 Երբոր արեգակն ծագեց , տապացաւ . և որովհետև արմատ (ռեօ) չունէր՝ չորացաւ ։

7 Եւ մէկէլն ընկաւ փշերի մէջըն , և փշերն դուրս եկին և խեղդեցին նորան ։

8 Եւ մէկէլն բարի երկրի վերայ ընկաւ , և պտուղ էր տալիս . կար որ հարիւր[5] , և կար որ վաթսուն , և կար որ երեսուն ։

9 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[6] ։

10 Եւ աշակերտներն մօտ եկին՝ և Նորան ասացին . Ընդէ՞ր նորանց հետ առակներով ես խօսում ։

11 Նա պատասխան տուաւ՝ և նորանց ասաց . Ձեզ համար որ՝ ձեզ տրված է երկնքի արքայութեան խորհուրդներն[7] գիտել , բայց նորանց չէ տրված ։

12 Պատճառնոր՝ ով որ ունի[8] նորան կը տրվի և կաւելանայ . և ով որ չունի՝ նորանից էն էլ որ ունի , վերկառնըվի ։

13 Ձեզ համար առակներով եմ խօսում նորանց հետ , որ տեսնում են և չեն տեսնում . և լսումն և չեն լսում , և մտքներն չեն առնում ։

14 Եւ Եսայեայ մարգարէութիւնն կատարվումէ նորանց վերայ՝ որ ասում է . Լսելով կը լսէք[9] , և չէք իմանալ . և տեսնելով կը տեսնէք , և չէք տեսնիլ ։

15 Ընդ որ՝ էս ժողովրդիս սիրտն թանձրացաւ , և իրանց ականջներովն ծանր լսեցին[10] , և իրանց աչքերն խփեցին՝ որ իսկի մին ժամանակ աչքերով չը տեսնեն՝ և ականջներով չը լսեն , և սրտով չիմանան , և չետ դառնան և ես նորանց բժշկեմ ։

16 Ձայց երանի է[11] ձեր աչքերին՝ որ տեսնումեն , և ձեր ականջներին՝ որ լսումեն ։

17 Ճշմարիտն ասումեմ ձեզ . Որ շատ մարգարէներ և արդարներ ցանկացան տեսնել[12] էն՝ որ դուք

(1) Մարկ · դ · 1 ։ (2) Ղուկ · ը · 4 ։ (3) Ղուկ · ի · 3 ։ (4) Ղուկ · ը · 5 ։ (5) Ծննդ · իզ · 12 ։ (6) Մատթ · ժա · 15 ։ Մարկ · դ · 9 ։ (7) Մատթ · ժա · 25 ։ ժղ · 17 ։ Մարկ · դ · 11 ։ ա Կորնթ · բ · 10 ։ ա Յովհ · բ · 27 ։ (8) Մատթ · իե · 29 ։ Մարկ · դ · 25 ։ Ղուկ · ը · 18 ։ ժթ · 26 ։ (9) Եսայ · զ · 9 ։ Եզեկ · ժբ · 2 ։ Մարկ · դ · 12 ։ Ղուկ · ը · 10 ։ Յովհ · ժբ · 40 ։ Գործ · իը · 26 , 27 ։ Հռովմ · ժա · 8 ։ բ Կորնթ · գ · 14 , 15 ։ (10) Եբր · ե · 11 ։ (11) Մատթ · ժղ · 17 ։ Ղուկ · ժ · 23 , 24 ։ Յովհ · ի · 29 ։ (12) Եբր · ժա · 13 ։ ա Պետր · ա · 10 , 11 ։

տեսնուսմէք , և չը տեսին · և լսել էն՝ որ դուք լսուսմէք՝ և չը լսեցին ։
18 Եւ հիմիկ լսեցէք դուք սերմ ցանօղի առակըն[13] ։
19 Իւն ամէնիցն՝ որ արքայութեան բանըն[14] լսուսմ և միտք չի առնու , գալիս է չարն՝ և նորա սրտի մէջ սերմածըն յափըշտակուսմ · սա էն է՝ որ ճանապարհին վերայ սերմըվեցաւ ։
20 Եւ էն որ քարքարուտ տեղն սերմրվեցաւ՝ նա է , որ երբոր բանըն լսուսմ՝ շուտով ուրախութեանով ընդունուսմ[15] նորան ։
21 Իայց որովհետև արմատ (ֆօտ) չունի իրան մէջ , քիչ ժամանակ է ձեուսմ · երբոր նեղուսթիւն և հալածանք են լինուսմ էն բանին համար , շուտով գայթակղըվուսմ[16] ։
22 Իայց (էն) որ փըշերի[17] մէջն սերմրվեցաւ՝ նա է[18] , որ երբոր բանըն լսուսմ , աշխարհքիս հոգերն և մեծութեան խաբեբայութիւնն էն բանըն խեղդուսմեն՝ և անպտուղ է լինուսմ ։
23 Իայց (էն) որ բարի երկրուսմն սերմվեցաւ՝ նա է , որ երբոր բանըն լսուսմ՝ (նորան) էլ միտքն է առնուսմ և պտուղ է տալիս · կայ որ հարիւր , և կայ որ վաթսուն , և կայ որ երեսուն ։
24 Ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ և ասաց · Երկինքի արքայութիւնն նմանվեցաւ մին մարդոյ՝ որ իրան արտուսմն բարի սերմըն ցանեց ։
25 Եւ որ ժամանակ մարդիքն քուն էլան , նորա թշնամին եկաւ և ցորենին մէջ որոմ (չոլեան խոփեր) ցանեց և գնաց ։
26 Եւ երբոր խոտն բուսաւ՝ և պտուղ տուաւ՝ ապա որոմն էլ երևեցաւ ։
27 Տան տիրոջ ծառաներն եկին նորան ասացին · Տէր՝ չէ՞ որ դուք արտուսմն բարի սերմըն սերմեցիր , ապա ի՞նչ տեղից է էն որոմն ։
28 Ւյա էլ ասաց նորանց · Թշնամի մարդ է արել էն ։ Ծառաներըն ասացին նորան · Կամենուսես որ գնանք էն քաղենք դուրս հանենք ։
29 Ւյա էլ նորանց ասաց · Չէ , չըլինի թէ երբոր որոմն քաղէք , ցորենըն էլ նորա հետ դուրս հանէք ։
30 Թող տուէք որ երկուսն միասին մեծանան մինչև հունձքն · և հնձի ժամանակին հնձօղներին կասեմ՝ թէ Նախ որոմն քաղեցէք և նորան խուրձ խուրձ կապեցէք որ այրվի , և ցորենըն իմ ամբարներիս մէջ ժողովեցէք[19] ։
31 Ի՛ն ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ՝ և ասաց · Երկնքի արքայութիւնն նման է մանանեխի (խոփոպէչ) հատի[20] · որ նորան մին մարդ առաւ՝ և իրան արտի մէջն սերմեց ։
32 Որ ամէն սերմունքիցն փոքր է · և երբոր կաճի , ամէն բանջարի վերայ մեծանուսմ , և ծառ է լինուսմ՝ մինչև որ երկնքի թռչուններն գան և նորա ճղներին վերայ հանգիստ առնեն ։
33 Ուրիշ առակ էլ խոսեց նորանց հետ և ասաց · Երկնքի արքայութիւնն նման է խմորի[21] որ նորան մին կին առաւ՝ և երեք չափ ալևրի մէջ պահեց , մինչև որ ամէնն էլ խմորվեցաւ ։
34 Իյս ամէն բաներըս Իյիսուս առակներով[22] խոսեց ժողովուրդներին հետ · և առանց առակի բան չէր խոսում նորանց հետ ։
35 Որ մարգարէի ասածն կատարվեցաւ ։

(13) Մարկ · դ · 11 ։ Ղուկ · ը · 11 ։ (14) Մատթ · դ · 23 ։ (15) Նոյ · ծը · 2 ։ Նեհէ · ը · 31 , 32 ։ (16) Մատթ · ժա · 6 ։ բ Տիմ · ա · 15 ։ (17) Նբհմ · դ · 3 ։ (18) Մատթ · ժբ · 23 ։ Մարկ · ժ · 23 ։ Ղուկ · ժը · 24 ։ ա Տիմ · զ · 9 ։ բ Տիմ · դ · 10 ։ (19) Մատթ · դ · 12 ։ (20) Նոյ · բ · 23 ։ Միհ · դ · 1 ։ Մարկ · դ · 31 ։ Ղուկ · ժդ · 18 , 19 ։ (21) Ղուկ · ժդ · 21 ։ (22) Մարկ · դ · 33 , 34 ։

վի՛ թէ Ա՛նակներով կը բանամ իմ բերանը[23]՝ և դուրս կը բղխեմ աշխարհքի սկզբիցն ծածկված բաները[24]։

36 Ա՛ն ժամանակն Յիսուս ժողովուրդներին [ժողով՝] եկաւ տուն. աշակերտներն նորա մօտ եկին և ասացին. Ա՛ն արտի որոմունքի (չոփհան խոսէքը) առակն մեկնի՛ր մեզ։

37 Ա՛նա պատասխան տուաւ և նոքանց ասաց. Ա՛ն բարի սերմերն ցանողն՝ Որդին մարդոյ է։

38 Եւ արտն[25] էս աշխարհքս է. բարի սերմն նորանք են՝ որ արքայութեան որդիք են. և որոմն՝ չարի որդիքն են[26]։

39 Եւ թշնամին որ էն սերմեց, Սատանան է. և հունձքն աշխարհքի վերջն է[27]. և հնձողներն՝ հրեշտակներն են։

40 Ա՛նչպէս որ որոմն հաւաքվուի և կրակի մէջ է այրվում, էնպես էլ աշխարհքիս վերջում կը լինի։

41 Որդին մարդոյ իրան հրեշտակներն կուղարկէ՝ և նորա արքայութենէն ամէն գայթակղութիւնները[28] կը ժողովեն՝ և նորանց էլ՝ որ անօրէնութիւն են գործում՝։

42 Եւ նորանց կրքեն կրակի փուռն[29] մէջն, որ էնտեղ լաց և ատամների կըրճտելն կը լինի[30]։

43 Ա՛ն ժամանակն արդարներն[31] արեգական պէս կը ծագին երկնքի արքայութեան մէջն. Ո՛վ որ լսելոյ ականջ ունի՝ լսէ՛[32]։

44 Ա՛ինէլ երկնքի արքայութիւնն նման է մին արտի մէջ պահված գանձի (խոշտոյէ), որ նորան մին մարդ գտաւ պահից. և ուրախութենէն կը գնայ ամէն ինչ որ ունի ծախում[33] և էն արտն գնում[34]։

45 Ա՛ինէլ երկնքի արքայութիւնն նման է մին վաճառական մարդոյ. որ գեղեցիկ մարգարիտների ման կը գայ։

46 Եւ երբոր մին պատուական մարգարիտ[35] գտաւ, գնաց ամէն ինչ որ ունէր ծախից՝ և էն մարգարիտն գնից։

47 Ա՛ինէլ երկնքի արքայութիւնն նման է մին ծովի քցած ուռկանի (ըոռէ), որ ամէն կեսակ (ձկներ) ժողովից[36]։

48 Եւ երբոր լցվաւ՝ նորան ցամաքն հանեցին, նստեցին և լաւերն ժողովեցին ամանների մէջ, և անպէտքներն դուրս քցեցին։

49 Այսպէս էլ կը լինի աշխարհքիս վերջումն. հրեշտակներն[37] դուրս կը գան՝ և չարերն կը զոկեն արդարների միջիցն,

50 Եւ նորանց կը քցեն կրակի փուռն[38] մէջն, որ էնտեղ լաց և ատամների կըրճտելն կը լինի։

51 Յիսուս ասաց նորանց. Հասկացաք էս ամէն բաները. ասացին նորան. Հա՛, Տէր։

52 Ա՛նա էլ նորանց ասաց. Վրահամար ամէն կարդացօղն որ երկնքի արքայութեան բաներին տեղեկացած է, նման է տանտէր մարդոյ՝ որ իրան գանձիցն (խոշտոյիցն) նորըն և հինըն հանում[39]։

53 Եւ էլաւ երբոր Յիսուս էս առակներըս կատարից, էն տեղից գնաց։

(28) Ա՛ղ · հը · 2 · (24) Հ՛ովէ՛ · ժգ · 25, 26· ա Կորնթ · բ · 7· Եփես · գ · 9· Կող · ա · 26· (25) Ա՛ռք · իդ · 14· իբ · 19· Ա՛ռք · ժգ · 15 · 20· Ղո՛ւկ · իդ · 47· Հ՛ովէ՛ · ժ · 18· Կող · ա · 6· (26) Հ՛ովհ · գ · 13· Հայր · ը · 44· Ա՛ռք · ժգ · 10· (27) Հովհ · գ · 13· Հայր · ժգ · 15· (28) Ա՛ռք · ժը · 7· բ Պետր · բ · 1, 2· (29) Ա՛ռք · գ · 12· Հայր · ժթ · 20· ի · 10· (30) Ա՛ռք · ը · 12· Վեր · 50· (31) Դան · ժը · 3· ա Կորնթ · ժե · 42, 43· (32) Վէր · 9· (33) Փիլպ · գ · 7, 8· (34) Լ՛ուկ · ծե · 1· Հայր · գ · 18· (35) Ը՛ռք · բ · 4· գ · 14, 15· ը · 10, 19· (36) Ա՛ռք · իբ · 10· (37) Ա՛ռք · իե · 32· (38) Վէր · 42· (39) Երէ · 4 · 13·

54 Եւ եկաւ իրան գաւառն[40] և նորանց ժողովարաններումն սովորց-նումէր նորանց , մինչև որ զարմա-նումէին նորա՛ք և ասումէին • Ո՞ր-ան որ տեղից է ես իմաստութիւնս և զօրութիւններս :

55 Չէ՞ որ սա հիւսան[41] (փէօլէր) որդին է • չէ՞ որ սորա մայրն՝ Մա-րիամ կը կոչվի • և սորա եղբարքն[42] Յակօբոս՝ և Յօսէ[43]ս և Սիմոն , և Յուդաս :

56 Եւ չէ՞ որ սորա ամէն քրվերքն մեզ մօտ են • ապա ո՞ր տեղից է սրան էս ամէն բաներս :

57 Եւ գայթակղվումէին[44] նորա վերայ • Յիսուս էլ նորանց ասաց • (մին) Մարգարէ անարգված չէ լի-նի՛ բայց իրան երկրի և իրան տան մէջն[45] :

58 Եւ էն տեղ շատ հրաշքներ չարաւ[46] նորանց անհաւատութեան պատճառաւն :

ԳԼ · ԺԴ

1 Երիսոսոի համար Հերովդէսի կարծիքն : 3 Յօհաննէս մկրտչի գլուխ կտրելոյ պատ-ճառն : 13 Յիսուս մին անապատ տեղ կը գնայ : 15 Նա հոն հինգ հացով և երեք ձուկ-ով հինգ հազար մարդկանց կը յագեցնէ : 25 Ծովին վերայ գնալով աշակերտներին մօտ կը գնայ : 34 Գեննեսարէթ կը գնայ և հիւանդներն իրան շորի ծայրին դիպչելով կը փրկվին :

1 Յն ժամանակն Հերովդէս չոր-րորդապետն[1] Յիսուսի համբաւն լսից :

2 Եւ իրան ծառաներին ասաց • Նա Յօհաննէս մկրտիչն է , նա մեռելների միջից յարութիւն ա-ռաւ • և նրանմով հրաշքներ են լինում նորանով :

3 Պատճառն՝ Հերովդէս բռնց Յօհաննէսին[2] նորան կապից և բանտի մէջ դրաւ՝ Հերովդիայի համար • որ իրան եղբայր Փիլիպ-պոսի կինն էր :

4 Ինչուր՝ Յօհաննէս նորան ա-սումէր , թէ Չրժան չէ քեզ[3] որ դորան (կին) ունենաս :

5 Եւ ուզումէր որ նորան սպա-նէ , բայց ժողովրդից վախում-էր , ինչուր՝ նորան մարգարէի տեղ էին համարում[4] :

6 Եւ երբոր Հերովդէսի ծնընդ-օրն էլաւ , Հերովդիայի աղջիկն սե-ղանի նստածների միջն պարեկաւ և Հերովդէսին լաւ թուեցաւ :

7 Նրա համար էլ երդումով խոստացաւ նորան՝ թէ ինչ որ ու-զէ տայ նորան :

8 Նա էնպէս որ առաջ ի-րան մօրից խրատ էր առել ասաց • Ես սկուտեղի (պինկ) վերայ Յօ-հաննէս մկրտչի գլուխն տուր ինձ :

9 Եւ թագաւորն տրտմեցաւ՝ բայց իրան երդումին և իրան հետ նստած մարդկանց համար՝ հրաման տուաւ , որ տան նորան :

10 Եւ ուղարկեց բանտի (պէնթա-նէ) միջումն Յօհաննէսի գլուխն կտրից :

11 Եւ նորա գլուխն սկուտեղի (պինկ) վերայ բերին և աղջկանն տուին՝ և նա տարաւ իրան մօր մօտն :

12 Եւ նորա աշակերտներն եկին

(40) Մարկ · բ · 23 : Մարկ · գ · 1 : Լուկ · դ · 16 · 23 : (41) Նոյ · խթ · 7 : Մարկ · գ · 3 : Լուկ · գ · 23 : Հովհ · գ · 42 : (42) Մարկ · ժբ · 46 : (43) Մարկ · ժե · 40 : (44) Մարկ · ժա · 6 : Մարկ · գ · 3 , 4 : (45) Լուկ · դ · 24 : Հովհ · գ · 44 : (46) Մարկ · գ · 5 , 6 : (1) Մարկ · գ · 14 : Լուկ · թ · 7 : (2) Մարկ · գ · 17 : Լուկ · դ · 19 , 20 : (3) Ղեւտ · ժբ · 16 : ի · 21 : (4) Մարկ · իա · 26 : Լուկ · ի · 6 :

Նորա մարմինըն վերկալան և թա-
ղեցին . և եկին Յիսուսին պատ-
մեցին ։
13 Եւ Յիսուս երբոր լսեց[5] էն
տեղից նաւով գնաց առանձին մին
անապատ տեղ ։ Ժողովուրդներն
երբոր լսեցին , էն տեղի քաղաքնե-
րիցն ոտով գնացին նորա ետևէն ։
14 Եւ երբոր դուրս եկաւ՝ և էն
շատ ժողովուրդըն տեսաւ , խղճաց[6]
նորանց վերայ , և նորանց հի-
ւանդներըն բժշկեց ։
15 Եւ երբոր իրիկվան դէմ ե-
լաւ[7] աշակերտներն նորա մօտ ե-
կին և ասացին . Տեղս անապատ է՝
և օրս էլ անցել է . էդ ժողո-
վուրդներըդ թող արա՝ որ գընան
շուրս կողմի գիւղերն՝ իրանց համար
կերակուր գնեն ։
16 Եւ Յիսուս ասաց . Պէտք չէ
գոռանց որ գնան . դուք տուէք
գոռանց ուտել ։
17 Եւ նորանք ասացին նորան .
Մ՚էնք էստեղ բան չունինք , բայց
միայն հինգ հատ հաց՝ և երկու
ձուկն ։
18 Եւ նորանց ասաց . ՙնորանց
էստեղ բերէք ։
19 Եւ հրաման տուաւ որ ժողո-
վուրդըն խոտի վերայ նստացնեն .
և էն հինգ հացըն և երկու ձուկըն
առաւ դէպի երկինքն նայեց՝ օրհ-
նեց և կըտրեց[8] , և էն հացերըն
աշակերտներին տուաւ՝ և աշա-
կերտներն էլ ժողովուրդներին ։
20 Մ՚էնքն կերին և կըշտացան ,
և աւելցած կտորներից տասներկու
քոթոց լէքն վերկալան ։
21 Եւ նորանք որ կերին՝ հինգ
հազարի չափ մարդիք էին կանանց
ցից և երեխաներից զրկ (՚՚-ման) ։
22 Եւ շուտով աշակերտներին
ստիպեց որ նաւն մտնեն՝ և ի-
րանից առաջ անցկենան էն կողմն .
մինչև որ ինքն էն ժողովուրդներըն
արձակէ ։
23 Եւ երբոր ժողովուրդներըն
արձակեց[9] , վերելաւ սարն , որ մե-
նակ աղօթք անէ . և երբոր իրի-
կուն էլաւ[10] , մենակ էնտեղ էր ։
24 Եւ նաւն շատ ասպարէզով
(Մանկըլով) հեռացել էր ցամաքի-
ցըն՝ և ալէկոծուելեան մէջն էր .
ինչուր՝ քամին ներհակ էր ։
25 Եւ գիշերի չորս բաժընի ժա-
մանակումն՝ Յիսուս ծովին վերայ
գնալով՝ նորանց մօտ եկաւ ։
26 Ա՚շակերտներն երբոր տեսին
նորան՝ որ ծովին վերայ գնումէր[11] ,
շփոթվեցան և ասացին՝ թէ Ա՚ջքի
երևոյթ բան է , և վախելուցն
աղաղակեցին ։
27 Եւ Յիսուս շուտով խօսեց նո-
րանց հետ՝ և ասաց . Սրտապինտ
կացէք՝ ես եմ մի՛ վախենաք ։
28 Պետրոսն պատասխան տուաւ
նորան և ասաց . Տէր՝ թէ որ դու
ես , հրաման տուր ինձ . որ ջը-
րիս վերայով քեզ մօտ գամ ։
29 ՙնա էլ ասաց . Ե՚կ . և Պետ-
րոս նաւից վերեկաւ ջրի վերայո-
վըն գնաց՝ և եկաւ Յիսուսի մօտն ։
30 Եւ էն սաստիկ քամին տեսնե-
լով՝ վախեցաւ . և երբոր սկսեց
թաղվիլ , աղաղակեց և ասաց . Տէր՝
ինձ փրկիր ։
31 Եւ շուտով Յիսուս իրան ձե-
ռըն մեկնեց՝ նորան բռնեց և ասաց .
Ո՚վիրաՀաւատ՝ ինչու երկմտեցիր ։
32 Եւ երբոր նաւն մտին , քա-
մին հանդարտեց ։
33 Եւ նորանք որ նաւի մէջն է-
ին՝ մօտ եկին նորան երկրպագու-
թիւն տուին՝ և ասացին . Իրաւի՛

(5) Մարկ . ժ . 23 ։ ժբ . 15 ։ Մաթէ . ղ . 32 ։ Ղուկ . թ . 10 ։ Յովհ . ղ . 1 , 2 ։ (6) Մարկ . թ . 36 ։ Մաթէ . ղ . 34 ։ (7) Մաթէ . ղ . 35 ։ Ղուկ . թ . 12 ։ Յովհ . ղ . 5 ։ (8) Մարկ . ժե . 36 ։ (9) Մաթէ . ղ . 46 ։ (10) Յովհ . ղ . 16 ։ (11) Յովբ . թ . 8 ։

որ դու Աստուծոյ Որդին ես[12] :
34 Եւ անցկացան ցամաքն[13], և եկին Գաննեսարէթ :
35 Եւ երբոր հնտեղի մարդիքն ճանաչեցին Նորան, ուղարկեցին հն ամէն գաւառն՝ և ամէն հիւանդնե-
րըն Նորա մօտ բերին :
36 Եւ Նորան աղաչեցին՝ որ հնից մէնակ նորա շորի ծայրին (ձե-
ղբին) դիպչին. և Նորանք որ մին անգամ դիպան[14], փրկվեցան :

ԳԼ· ԺԱ

3 Վրխատոս դպիրներին և փարիսեցիներին յանդիմանում է իրանց աւանդութեան պատճա-
ռաւ Աստուծոյ պատուիրանքովին անց կենալոյ համար : 11 Նը տովորցնէ թէ հն բանն որ
բերան մտնումէ՝ ոչ պղծումէ մարդոյն : 22 Իանանացի կնան աղջկին, 30 Եւ ուրիշ
շատ բաղմութիւններն կը բժշկէ : 32 Նէ հօթն հացով և մի քանի ձկիներով չորս հա-
զար մարդիք կըշտացնումէ կանանցից և երեխաներից զուկ :

1 Նէն ժամանակին Յիսուսի մօտ
եկին Երուսաղէմից եկած[1] փարի-
սեցիքն և կարդացօղներն, և ասա-
ցին :
2 Նէնչու՞ քո աշակերտներդ[2] ծե-
րերի աւանդութենովին անց են[3] կե-
նում. պատճառներդ՝ ձեռներըն չեն
լուանում երբոր հաց են ուտում :
3 Նէյա էլ պատասխան տուաւ և
Նորանց ասաց. Նէպա դուք ինչու՞
Աստուծոյ պատուիրանքովին անց էք
կենում ձեր աւանդութեան պատ-
ճառաւն :
4 Նէնչուր՝ Աստուած ասաց. թէ
Պո հօրդդ և մօրդդ պատուիր[4] :
5 Եւ նա որ իրան հօրըն կամ
մօրըն կը բամբասէ, մահով պիտի
մեռնի[5] :
6 Եւ դուք ասումէք՝ թէ Ո՛վ որ
իրան հօրըն կամ մօրըն ասէ՝ Նէ
պատարագ է էն[6], որ ինձանից պիտի
շահվիս, և չի պատուէ իրան հօրըն
և իրան մօրըն. և (էսպէս) ձեր ա-
ւանդութեան համար՝ Աստուծոյ
խօսքըն ոչնչի տեղ էք դնում :
7 Կեղծաւորներ՝ լաւ մարգարէա-
ցաւ[7] ձեզ վերայ Եսային՝ և ա-
սումէ :
8 Նէս ժողովուրդս պռօշներովին է
պատուում ինձ[8]. և իրանց սիրտն
ինձանիձ հեռացած զոկված է :
9 Զուր տեղն են պաշտում ինձ՝
մարդկանցից պատուիրած վարդա-
պետութիւններըն են սովորցնում[9] :
10 Եւ ժողովուրդներըն իրան մօտ
կանչեց, և Նորանց ասաց. Նէսե-
ցէք և մտքներդ առէք[10] :
11 Ո՛չ թէ ինչ որ մտնումէ բե-
րանն[11] պղծումէ մարդոյն, այլ
ինչ որ բերանիցն դուրս է գալիս,
էն է որ մարդոյն պղծումէ :
12 Նէն ժամանակն Նորա աշա-
կերտներն եկին՝ Նորան ասացին.
Գիտումէս՝ որ փարիսեցիքն երբոր

(12) Մատ. բ. 7 : Մարկ. ա. 1 : Մատթ. ժգ. 16 : Իգ. 63 : Գ՚ոհ. գ. 41 : Հռովմ.
ա. 49 : գ. 69 : ժա. 27 : Գատթ. ը. 37 : Ա՚ոռմ. ա. 4 : (13) Մարկ. գ. 53 :
(14) Մատթ. թ. 20 : Մարկ. գ. 10 : Գ՚ոհ. գ. 19 : Գատթ. ժթ. 12 : (1) Մարկ.
է. 1 : (2) Մարկ. է. 5 : (3) Ղուկ. բ. 8 : (4) Ելք. ի. 12 : Գ՚ևթ. ժբ. 3 : բ Օ-
րէն. ե. 16 : Ա՚ոռմ. իդ. 22 : Եփես. գ. 2 : (5) Ելք. իա. 17 : Գ՚ևթ. ի. 9 :
բ Օրէն. իե. 16 : Ա՚ոռմ. ի. 20 : Լ. 17 : (6) Մարկ. է. 11, 12 : (7) Մարկ. է.
6 : (8) Եսայ. իթ. 13 : Եզեկ. իգ. 31 : (9) Եսայ. իթ. 13 : Ղուկ. բ. 18—22 :
Տիտ. ա. 14 : (10) Մարկ. է. 14 : (11) Գատթ. ժ. 15 : Ա՚ոռմ. ժգ. 14. 17. 20 :
ա Տիմ. գ. 4 : Տիտ. ա. 15 :

են բանըն լսեցին գայթակղըվեցան ։
13 Ա՛յս պատասխան տուաւ Նորանց և ասաց · Ամէն տունկ[12] որ իմ երկնաւոր Հայրս չըտընկեց · թող պոկվի ։
14 Թո՛ղ տուէք Նորանց՝ կոյր են կուրերի առաջնորդ[13] · կոյրն երբոր կուրին առաջնորդէ , կը մոլորվի՝ և երկուքն էլ փոսի մէջ կընկնին ։
15 Պետրոս Նորան պատասխան տուաւ՝ և ասաց · Այս առակըս մեզ մեկնի՛ր[14] ։
16 Յիսուս ասաց · Դուք էլ դեռ անխելք էք[15] ։
17 Եւ չէք իմանում , թէ ամէն բան որ բերանն է մտնում , փորն է գնում[16] և դուրս է գալիս ։
18 Բայց են որ բերանիցն դուրս է գալիս[17] , յատուկ սրտիցն է գալիս՝ և են է մարդոյն պղծում ։
19 Ինչուո՛ր՝ սրտիցն են դուրս գալիս չար խորհուրդներ[18] սպանութիւններ , շնութիւններ , պոռնկութիւններ , գողութիւններ , սուտ վկայութիւններ , հայհոյութիւններ ։
20 Այս ամէնն է՛ որ մարդոյն պըղծում է · բայց անլուայ ձեռքով ուտելն՝ մարդոյն չի՛ պղծում ։
21 Եւ Յիսուս էնտեղից դուրս եկաւ գնաց Տիւրոսի և Սիդոնի կողմերն[19] ։
22 Եւ ահա մի՛ Քանանացի կին Նորանց երկրիցն դուրս եկաւ՝ աղաղակում և ասում · Տէր՝ որդի Դաւիթի՛ ինձ ողորմեա · իմ աղջիկս սաստիկ դիւահարվում է ։
23 Եւ Նա պատասխան չը՛ տուաւ Նորան · և Նորա աշակերտներն եկին Նորան աղաչում էին՝ և ասում · Արձակի՛ր Նորան · ինչուո՛ր՝ մեր ետևէն աղաղակում է ։
24 Ա՛յս պատասխան տուաւ և ասաց · Ես ուրիշ տեղ չեմ ուղարկվել[20] եթէ ոչ Իսրայելի տան կորած ոչխարներին մօտ ։
25 Ա՛յս էլ մօտեցաւ Նորան երկրպագութիւն էր անում և ասում էր · Տէր՝ ինձ օգնի՛ր ։
26 Պատասխան տուաւ Նորան՝ և ասաց · Լաւ չէ՛ երեխաների հացըն առնել՝ և շներին ձգել[21] ։
27 Ա՛յս էլ ասաց · ուղղորդ է Տէր՝ ինչուո՛ր՝ շներն էլ իրանց տիրոջ սեղանիցն ընկած փըշրանքներիցն են կերակրվում ։
28 Յն ժամանակն Յիսուս պատասխան տուաւ Նորան՝ և ասաց · Ա՛վ կին դու՝ մեծ է քու հաւատդ · ինչպէս որ ուզումես՝ Էնպէս լինի քեզ · և Նորա աղջիկն բժշկվեցաւ Հէնց էն ժամումն (սահմանին) ։
29 Եւ Յիսուս էն տեղից գնաց[22] Գալիլեացոց ծովի եզրն[23] (ափը) եկաւ · և վերկաւ սարն , և էն տեղ նստեց ։
30 Եւ շատ ժողովուրդներ Նորա մօտ եկին[24] , որ իրանց հետ ունէին կաղեր՝ կուրեր՝ համրեր (լեզուիլէ)՝ միակողմանիներ , և ուրիշ շատեր էլ · և Նորանց ձգեցին Նորա ոտներն , և Նորանց բժշկեց ։
31 Մինչև որ զարմանում էին ժողովուրդներն որ տեսնում էին , որ համրերն խօսում էին , կաղերն գընում էին , միակողմանիներն բժշկվում էին , կուրերն տեսնում էին , և փառաւորում էին Իսրայելի Աստուածն ։
32 Եւ Յիսուս աշակերտներն իրան մօտ կանչեց և ասաց[25] · Խնդճա

(12) Հաւ · ժե · 2 ։ ա Կորնթ · գ · 12 , Լայն ։ (13) Նաոմ · թ · 16 ։ Մաղ · բ · 8 ։ Մատթ · իգ · 16 ։ Ղուկ · զ · 39 ։ (14) Մարկ · է · 17 ։ (15) Մատթ · ժզ · 9 ։ Մարկ · է · 18 ։ (16) ա Կորնթ · զ · 13 ։ (17) Հաւ · գ · 6 ։ (18) Ծննդ · զ · 5 ։ ը · 21 ։ Ելատ · զ · 14 ։ Երեմ · ժե · 9 ։ Մարկ · է · 21 ։ (19) Մարկ · է · 24 ։ (20) Մատթ · ժ · 5 , 6 ։ Դատ · գ · 25 , 26 ։ ժգ · 46 ։ Հռոմ · ժե · 8 ։ (21) Մատթ · է · 6 , Փիլիպ · գ · 2 ։ (22) Մարկ · է · 31 ։ (23) Մատթ · գ · 18 ։ (24) Նաոմ · լե · 5 , 6 ։ Մատթ · ժա · 5 ։ Ղուկ · է · 22 ։ (25) Մարկ · ը · 1 ։

գալիս է Էս ժողովրդիս վերայ · ինչուո՝ երկք օր է՝ որ իմ մօտ են, և բան չունին որ ուտեն · և չեմ ուզում նորանց սոված ճանապարհ քցել · որ չըլինի թէ սոված ուժեն նիցն թուլանան ճանապարհումն :

33 Աշակերտներն նորան ասացին[26] · Պա մեզ էստեղ անապատումն (էօրման) որ տեղից հնչափ հաց կըլինի՝ որ էգքան ժողովուրդը կշատացնենք :

34 Եւ Յիսուս նորանց ասաց · Քանի՞ հատ հաց ունիք · և նորանք ասացին՝ Եօթըն, և քիչ ձկիներ :

35 Եւ հրաման տուաւ ժողովըրդին՝ որ գետնի վերայ նստին :

36 Եւ էն եօթն հացըն՝ և ձկիներըն[27] առաւ, գոհացաւ[28] և կըտրեց և աշակերտներին տուաւ՝ և նորանք էլ ժողովուրդին :

37 Ուճէնքն կերին և կըշտացան · և աւելցած կտորներիցն եօթն քթոց լիքն վերկալան :

38 Եւ նորանք որ կերին՝ չորս հազարի չափ մարդիք էին · կանանցից և երեխաներիցն չկ (Ա–ման) :

39 Երբոր էն ժողովուրդներըն արձակեց[29] · մտաւ նաւն և եկաւ Մագդաղէի կողմերն :

ԻԶ · Ի·Զ

1 փարիսեցիքն և սադուկեցիքն նշան խնդրուէն : 6 Յիսուս իրան աշակերտներն փարիսեցոց և սադուկեցոց խմորից զգուշացնուէ : 13 Քաղղուզրդի կարծիքը Քրիստոսի վերայ : 16 Պետրոսի դաւանութիւնն · 21 Յիսուս իրան մանր առաջուց ցույց կը տայ, 23 Պետրոսն յանդիմանուէ սորա դէմ հակառակելուն համար : 24 Եւ իրան եւէն երթալ ուզողներին խրատ տալիս որ իրանց խաչը վեր առնեն :

1 Եւ փարիսեցիքն և սադուկեցիքն նորա մօտ եկին[1] · և փորձելով նորանից խնդրուէին՝ որ երկնքիցն մին նշան ցույց տայ իրանց :

2 Նա պատասխան տուաւ՝ և ասաց նորանց · Ա՛ր ժամանակ իրիկուն է լինում՝ ասումէք թէ Պարզ կըլինի · ինչուո՝ երկինքն կարմըրացել է :

3 Եւ առաւօտն (ասումէք) Այս օր մըրիկ (փոթորկի ժամ) (կըլինի ·) ինչու որ երկինքն սրտմտութեամբ կարմրացել է : Պա երկնքի երեսըն կարող էք քննել՝ բայց էս ժամանակիս նշանըն չէք կարող հասկանալ :

4 Ազար և շնացող ազգն նշան է խնդրում[2] · և նշան չի տրվիլ նորան, բայց միայն Յովնան մարգարէի նշանն · և նորանց թողեց և գնաց :

5 Աշակերտներն էլ գնացին էն կողմն[3], և մոռացան հաց վերառնել :

6 Յիսուս նորանց ասաց · Տեսէք և զգոյշ կացէք սադուկեցոց և փարիսեցոց խմորից[4] :

7 Նորանք իրանց միջումն միտք էին անում՝ և ասումէին · Թէ Հաց չենք վերկալել :

8 Յիսուս իմացաւ և ասաց · Ով թերահաւատներ՝ ինչու էք ձեր մըտքումն հոգս անում՝ թէ հաց չունինք :

9 Դեռ չէք իմանում[5] և մըտքներդ չէք բերում էն հինգ հացըն հինգ հազար մարդկանցն, և քանի քթոց վերառիք :

10 Եւ ոչ էլ էն եօթըն հացըն չորս հազար մարդկանցն[6] · և քանի քթոց վերառիք :

11 Ուրեմն ի՞նչպէս չէք իմանում՝

(26) գ Ա–ման · գ · 43 : (27) Մաթ · ժգ · 19 : (28) ա Ա–ման · թ · 13 : Ղ–ի · իբ · 19 : (29) Մաթ · ը · 10 : (1) Մաթ · ժբ · 38 : Մաթ · ը · 11 : Ղ–ի · ժա · 16 · ժբ · 54—56 : ա Կորնթ · ա · 22 : (2) Մաթ · ժբ · 39 : (3) Մաթ · ը · 14 : (4) Ղ–ի · ժբ · 1 : (5) Մաթ · ժգ · 17 : Յովհ · ղ · 9 : (6) Մաթ · ժե · 34 :

որ Հոգի Համար չասացի ձեզ՝ զգոյշ կացէք՝ փարիսեցւոց և սադուկեցւոց խմորիցն ։

12 Յն ժամանակն հասկացան որ չասաց՝ թէ խմորիցն զգոյշ կենան , այլ փարիսեցւոց և սադուկեցւոց ու րեկնքիցն ։

13 Եւ Յիսուս դուրս գնաց փի- լիպպեայ Կեսարիայի կողմերն , և աշակերտներին հարցնումէր և ա- սումէր . թէ Մարդիկն ինձ համար ո՞վ են ասում՝ որ Որդին մարդոյ լինի[7] ։

14 Եւ նորանք ասացին . Մինն (ասում) թէ Յովհաննէս մկրտիչն է[8] . ուրիշներն էլ՝ թէ Եղիան . և կէսն էլ՝ թէ Երեմիան , կամ մար- գարէներից մինն ։

15 Յիսուս նորանց ասաց . Բայց դուք ո՞վ էք ասում ինձ համար որ լինիմ ։

16 Սիմոն Պետրոսն պատասխան տուաւ նորան և ասաց . Դու ես Քրիստոսն՝ կենդանի Աստուծոյ Որ- դին[9] ։

17 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորա . Երանի՛ քեզ Յովհանի որդի Սիմոն , ինչուա՞ր՝ մարմին և արիւն[10] քեզ չի՛ յայտնեց , բայց իմ Հայրս[11] որ երկնքումն է ։

18 Եւ ես ասումեմ՛ քեզ . որ Դու ես վէմ[12] , և էդ վէմիդ[13] վերայ իմ Եկեղեցիս կըշինեմ՛ , և դժոխքի դրունք- ներն չեն յաղթիլ դորան[14] ։

19 Եւ երկնքի արքայութեան բա- նալիքը[15] քեզ կըտամ՛ , և էն որ երկրի վերայ կրկապես , երկնքումն էլ կապված կըլինի . և էն որ երկրի վերայ կրձակես , երկնքումն էլ արձակված կըլինի ։

20 Յն ժամանակն աշակերտներին սաստեց՝ որ իսկի մին մարդոյ չա- սեն[16] . թէ նա Քրիստոսն է ։

21 Ցառանից եւս Յիսուս սկսեց աշակերտներին յայտնել[17] , թէ պէտք է նորան՝ որ Երուսաղէմ գնայ և քահանայապետներից և կարդա- գողներից և ժողովրդի ծերերից շատ չարչարանքով չարչարվի՝ սպան- վի և երեք օրումն յարութիւն առ- նէ ։

22 Եւ Պետրոս նորան մին կողմն տարաւ . և սկսեց նորա հետ հա- կառակիլ և ասել՝ Քա՛ւ լիցի քեզ Տէր՝ էդ բանը չը՛լինի քեզ ։

23 Եւ նա դարձաւ դէպի Պետ- րոսն՝ և ասաց . Չետ գնա՛ ինձա- նից Սատանայ[18] ինձ գայթակղու- թիւն[19] ես . ինչուա՞ր՝ դու Աստու- ծոյ բաներն միտք չես առնում , բայց մարդկանց բաներըն ։

24 Յն ժամանակն Յիսուս իրան աշակերտներին ասաց . Եթէ որ մին մարդ կամենումէ իմ ետևէս գալ , նա թող իրան անձըն ուրանայ՝ և իրան խաչըն առնէ , և իմ ետևէս գայ[20] ։

25 Պատճառնո՞ր՝ ո՞վ որ իրան ան- ձըն կուզէ ապրեցնել , կրկորցնէ նո- րան . և ո՞վ որ իրան անձըն կրկոր- ցընէ ինձ համար , կըգտնէ նորան[21] ։

26 Ո՞նչ օգուտ է մարդոյ՝ որ ա-

(7) Ա՛ռել · ը · 27 ։ Ղ՚ուկ · թ · 18 ։ (8) Մատ · ժգ · 2 ։ Ղ՚ուկ · թ · 7 , 8 , 9 ։ (9) Մատ · ժգ · 33 ։ Մարկ · ը · 29 ։ Ղ՚ուկ · թ · 20 ։ Յովհ · զ · 69 ։ ժա · 27 ։ Գործ · ը · 37 ։ թ · 20 ։ ա Յովհ · գ · 15 ։ ե · 5 ։ Եբր · ա · 2 · 5 ։ (10) Ա՛ռել · ը · 8 ։ (11) ա Կորնթ · ը · 10 ։ Գաղ · ա · 16 ։ (12) Յովհ · ա · 42 ։ (13) Ա՛ռել · ը · 20 ։ Յայտ · իա ։ 14 ։ (14) Յովհ · լը · 17 ։ Մատ · թ · 13 ։ Ա՛ռ · 18 ։ Ա՛սայ · լը · 10 ։ (15) Մատ · ժը · 18 ։ Յովհ · ի · 23 ։ (16) Մատ · ժե · 9 · Մարկ · ը · 30 ։ Ղ՚ուկ · թ · 21 ։ (17) Մատ · ի · 17 ։ Մարկ · ը · 31 ։ թ · 31 ։ ժ · 33 ։ Ղ՚ուկ · թ · 22 ։ ժը · 31 ։ Ես · 6 , 7 ։ (18) ը Թագ · ժը · 22 ։ (19) Հռովմ · ը · 7 ։ (20) Մատ · ժ · 38 ։ Մարկ · ը · 34 ։ Ղ՚ուկ · թ · 23 ։ ժգ · 27 ։ Գործ · ժգ · 22 ։ ա Թես · գ · 3 ։ ը Տի՛մ · գ · 12 ։ (21) Ղ՚ուկ · ժէ · 33 ։ Յովհ · ժը · 25 ։

մէն աշխարհքիս ստանայ՝ և իրան անձին վնաս տայ · կամ թէ ինչ դին կրնայ մարդ՝ իրան անձըն փրկելոյ համար[22] :

27 Ինչուոր՝ գալու է Որդին մարդոյ իրան Հօր փառքովն[23] իրան հրեշտակներուն[24] հետ · և էն ժամանակն ամէն մէկուն[25] հատուցումըն կրնայ իրան գործքերի չափովն :

28 Ամէն ճշմարիտ ասումէմ ձեզ, որ կայնողներէն մին քանիսն կան, որ մահ չեն տեսնիլ[26] մինչև որ Որդին մարդոյ տեսնեն իրան թագաւորութենովն եկած :

ԺԶ · ԺԱ

1 Փրիստոսի կերպարանքն փոխելն : 14 Լուսնոտ բժշկելն : 22 Իրան չարչարանքներն առաջուց կըսպատմէ : 23 Նէ հարկ կըտայ :

1 Նէ վեց օրից ետև Յիսուս Պետրոսին և Յակոբին և նորա եղբայր Յոհաննէսին իրան հետ առաւ, և նորանց առանձին մին բարձր սար հանեց[1] :

2 Եւ նորանց առաջին՝ նորա կերպարանքն փոխվեցաւ՝ և նորա երեսն արեգական պէս լուսաւորվեցաւ, և նորա շորերն լուսոյ պէս սպիտակ եղան :

3 Եւ ահա Մովսէսն և Եղիան նորանց երևեցան՝ որ նորա հետ խոսումէին :

4 Պետրոսն պատասխան տուաւ՝ և ասաց Յիսուսին · Տէր՝ լաւ է որ մենք էստեղ կենանք · թէ որ կամենաս, երեք տաղաւար (շատրը) կընշենենք՝ մինըն քեզ համար՝ մինըն Մովսէսին, և մինըն Եղիային :

5 Եւ դեռ քանի որ նա խոսումէր[2] ահա մին լուսաւոր ամպ շուաք արաւ նորանց վերայ · էն ամպիցն ձայն եկաւ՝ և ասաց · Ա՛ս է իմ սիրելի[3] Որդին՝ որ դորան հաւանեցայ[4] · դորան ականջ դրէք[5] :

6 Երբոր աշակերտներն լսեցին[6], իրանց երեսներին վերայ վեր ընկան · և շատ վախեցան :

7 Եւ Յիսուս մատեցաւ՝ նորանց բռնեց[7] և ասաց · Ա՛լ կացէք՝ և մի՛ վախենաք :

8 Իրանց աչքերն բարձրացրին և ո՛չ ոք չի տեսին, բայց միայն Յիսուսին :

9 Եւ երբոր էն սարիցն վերէնին գալիս, Յիսուս նորանց պատուէր տուաւ[8] և ասաց · Ի՛նդ տեսիլքըդ իսկի մին մարդոյ չասէք, մինչև որ Որդին մարդոյ մեռելների միջիցն յարութիւն առնէ :

10 Աշակերտներն նորան հարցրին և ասացին · Ինչպէս է՝ որ կարդագրողներն ասումեն[9] թէ առաջ Եղիան պէտք է գայ :

11 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորանց · Եղիան կըգայ՝ և ամէն բան կըհաստատէ[10] :

12 Բայց ասումէմ ձեզ՝ որ Եղիա

(22) Ամմ · խթ · 7, 8 : (23) Մատ · իզ · 64 : Մարկ · ը · 38 : Ղուկ · թ · 26 : (24) Դան · է · 10 : Զաք · ժգ · 5 : Մատ · իե · 31 : Յուդ · 14 : (25) Յովբ · ըգ · 11 : Սամ · կբ · 12 : Ես. · իդ · 12 : Երեմ · ժէ · 10 : ը · 19 : Հռովմ · բ · 6 : ա Կորնթ · գ · 8 : բ Կորնթ · ե · 10 : ա Պետր · ա · 17 : Յայտ · բ · 23 : իբ · 12 : (26) Մատ · թ · 1 : Ղուկ · թ · 27 : (1) Մարկ · թ · 2 : Ղուկ · թ · 28 : (2) բ Պետր · ա · 17 : (3) Մատ · գ · 17 : Մարկ · ա · 11 : Ղուկ · գ · 22 : (4) Եսայ · խբ · 1 : (5) բ Օրին · ժը · 15, 19 : Գործ · գ · 22, 23 : (6) բ Պետր · ա · 18 : (7) Դան · ը · 18 : թ · 21 : ժ · 10, 18 : (8) Մատ · ժգ · 20 : Մարկ · ը · 30 : թ · 9 : (9) Մալ · գ · 5 : Մատ · ժա · 14 : Մարկ · թ · 11 : (10) Մալ · գ · 6 : Ղուկ · ա · 16, 17 : Գործ · գ · 21 :

ան հենց հիմիկ եկած է[11] և նորան չըճանաչեցին · այլ ինչ որ ուզեցին՝ նորան արին[12] · Հնպէս էլ Որդին մարդոյ նորանցից պիտի չարչարվի[13] :

13 Յն ժամանակն աշակերտներն հասկացան[14] թէ Յովհաննէս մկրտչին համար ասաց նորանց :

14 Եւ երբոր ժողովըրդի մէջն եկին[15] , մին մարդ մօտեցաւ՝ ծունր էր դնում և ասում էր · Տէր իմ որդոյս ողորմեա · որ լուսնոտումէ՝ և սաստիկ հիւանդանումէ · շատ անգամ կրակն է ընկնում · և մին քանի անգամ էլ ջուրն :

15 Եւ նորան քո աշակերտների մօտն բերի՝ և չըկարացին բժշկել :

16 Յիսուս պատասխան տուաւ և ասաց · Ով անհաւատ և ծուռ ազգ · մինչև երբ ձեզ հետ պիտի լինիմ՝ մինչև երբ ձեզ պիտի համբերեմ · նորան ինձ մօտ բեր :

17 Եւ Յիսուս նորան սաստեց · և դևն նորանից դուրս եկաւ , և տղան հենց էն ժամումն (սահմանում) բժշկվեցաւ :

18 Յն ժամանակն աշակերտներն առանձին մօտ եկին · և Յիսուսին ասացին · Մ՚ենք ինչու՞ չըկարացինք հանել նորան :

19 Նա էլ նորանց ասաց · Ձեր թերահաւատութեան համար : Ա՚րդ՚ ճշմարիտն ասումեմ ձեզ՝ եթէ որ մանանեխի (խարդալի) հատի չափ հաւատ ունենաք[16] , և էս սարիս ասէք՝ Այստեղից էնտեղ փոխվիր կը փոխվի · և իսկի մին բան անկարլի չէ լինիլ ձեզ համար :

20 Մ՚իայն թէ՝ էս ցեղը ուրիշ բանով դուրս չի գալ եթէ ոչ աղօթքով և պասով :

21 Եւ գնաքանի որ նորանք Գալիլեայի մէջն ման էին գալիս[17] , Յիսուս նորանց ասաց · Որդին մարդոյ մարդկանց ձեռքն պէտք է մատնվի :

22 Եւ նորան կրսպանեն՝ և երեք օրումն յարութիւն կ՚առնէ · և նորանք շատ տրտմեցան :

23 Երբոր նորանք եկին Կափառնայում[18] , երկդրամեան հարկ ուզողներն[19] եկին Պետրոսի մօտն և ասացին · Ձեր վարդապետն երկդրամեանըն չի՞ տալիս , և նա ասաց՝ Լա՛ :

24 Եւ երբոր տունն մտաւ , Յիսուս նորանից առաջ սկսեց և ասաց · Սիմո՛ն՝ ինչպէս է երևում քեզ · ազգերի թագաւորներն ուրից են առնում գլխահարկն կամ տուրքըն , իրանց որդիքներից , թէ օտարներից :

25 Եւ երբոր ասաց՝ թէ Օտարներից · Յիսուս նորան ասաց · Ը՚պա ուրեմն՝ ազատ են որդիքներն :

26 Նայց որ նորանց չը գայթակղացնենք՝ գնա ծովն և ձանկըն քըցիր , և առաջին ձուկըն որ դուրս կրգայ՝ առ , նորա բերանըն բաց՝ և մին սատեր (փողի նման է) կրգտնես՝ և էն առ և նորանց տուր իմ տեղս և քո տեղդ :

(11) Մարկ · ժա · 14 : Մարկ · թ · 12 , 13 : (12) Մարկ · ժգ · 3 · 10 : (13) Մարկ · ժգ · 21 : (14) Մարկ · ժա · 14 : (15) Մարկ · թ · 14 : Ղուկ · թ · 37 : (16) Մարկ · իա · 21 : Մարկ · ժա · 23 : Ղուկ · ժէ · 6 : ա Կորնթ · ժբ · 9 : ժգ · 2 : (17) Մարկ · ժգ · 21 · ի · 17 : Մարկ · ը · 31 · թ · 30 , 31 · ժ · 33 : Ղուկ · թ · 22 · 44 : ժբ · 31 : իդ · 6 , 7 : (18) Մարկ · թ · 33 : (19) Ելք · լ · 13 · լբ · 26 :

ԳԼ· ԺԼ

1 Ի՛րխատուս խրատուամբ իրան աշակերտներին որ խոնարհ և միամիտ լինին · 7 Վայելքակղու-թիւն տալից փախչին և փոքրներին գայթակղութիւն չըտան · 15 Աըսովորցնէ թէ մեզ դէմ մեզք անողներին հետ ինչպես վարվում ենք : 21 Նէ քանի անգամ պէտք է թողու-թիւն տալ մեր եղբայրներին , 23 Իրան ծառաներից հաշիւ ուզող մին թագաւորի առակովն էս մեկնում , 32 Որ իրան եղբօր չըգթացող ծառան կըպատժէ :

1 Ընդ օրումն աշակերտանն Յի-սուսի մօտն եկին՝ և ասացին . Ո՞ն-զանից ո՛վ մեծ կըլինի երկնքի ար-քայութեան մէջն՝ :

2 Եւ Յիսուս մին՝ երեխայ կան-չեց իրան մօտ՝ և նորան կանգնա-ցրուց նորանց միջումն :

3 Եւ ասաց . Ա՛շխարիսրն ասու-մեմ ձեզ . Թէ որ չըդառնաք և չը-լինիք երեխաների նման[2] , չէք մտնիլ երկնքի արքայութիւնն :

4 Ուրեմն ո՛վ որ իրան անձըն էս երեխայիս նման կըխոնարհացնէ[3] , նա է մեծ երկնքի արքայութեան մէջն :

5 Եւ ո՛վ որ մին էսպէսի երեխայ իմ անունովս կընդունի[4] , նա ինձ կընդունի :

6 Եւ ո՛վ որ կըգայթակղացնէ էս փոքրներիցս մինըն[5] որ ինձ հաւա-տացեալ են , լաւ էր նորան՝ որ մին իշու ջաղացի քար նորա վըզիցն կախ-վի և ծովի խոր տեղն խեղդըվի :

7 Վա՛յ աշխարհքիս՝ գայթակ-ղութիւններին համար . պէտք է որ գայթակղութիւնները գան[6] , բայց վա՛յ էն մարդոյն՝[7] որ նորա ձեռովն կըգայ գայթակղութիւնն :

8 Թէ որ քո ձեռդ կամ ոտդ քեզ գայթակղացնէ , կտրիր նորան՝ և քեզանից դէն քցիր՝ լաւ է քեզ՝ որ մինձեռնանի կամ կաղ մտնես կեան-քըն , քանէ երկու ձեռք և երկու ոտք ունենաս՝ և յաւիտենական կրակին մէջ ընկնիս[8] :

9 Եւ թէ որ քո աչքդ քեզ գայ-թակղացնէ , հանիր նորան՝ և քե-զանից քցիր . լաւ է քեզ՝ որ մին աչ-քանի մտնես կեանքն , քանէ երկու աչք ունենաս՝ և գեհենի կրակն ընկնիս :

10 Ո՛չ գոյշ կացէք՝ որ էս փոքրնե-րիցս մինըն չանարգէք . ասումեմ ձեզ՝ որ նորանց հրեշտակներն[9] երկնքումն միշտ իմ Հօրս երեսըն[10] տեսնումեն՝ որ երկնքումն է :

11 Պատճառնո՛ր՝ Որդին մարդոյ եկաւ՝ որ ապրեցնէ կորածըն[11] :

12 Ինչպէս է երեւում ձեզ՝ թէ որ մին մարդ հարիւր ոչխար ունե-նայ[12] և նորանցից մինըն մոլորվի , նա չի թողիլ իննսուն և իննն ոչխարըն սարերումն , և գնալ էն մոլորվածին մանգալ :

13 Եւ երբոր կըգտնէ նորան . ճշմարիտըն ասումեմ ձեզ , որ նո-րա վերայ աւելի ուրախ կըլինի , քան էն իննսուն և իննին վերայ , որ չեն մոլորված :

14 Ընդպէս էլ իմ Հայրս՝ որ եր-կնքումն է , չի կամենում , որ էս փոքրներիցս մինն կորչի :

(1) Մարկ · թ · 33 : Ղուկ · թ · 46 : իբ · 24 : (2) Սաղմ · ճա · 2 : Մատթ · ժթ · 14 : Մարկ · ժ · 14 : Ղուկ · ժը · 16 : ա Կորնթ · ժգ · 20 : ա Պետր · բ · 2 : (3) Մատթ · ի · 27 : իգ · 11 : (4) Մատթ · ժ · 42 : Ղուկ · թ · 48 : (5) Մարկ · թ · 42 : Ղուկ · ժէ · 1 , 2 : (6) Ղուկ · ժէ · 1 : ա Կորնթ · ժա · 19 : (7) Մատթ · իզ · 24 : (8) Մատթ · ե · 29 , 30 : Մարկ · թ · 42 . 45 : (9) Սաղմ · ՀԴ · 7 : ժգ · 7 : Եբր · ա · 14 : (10) Նոր · ա · 14 : Ղուկ · ա · 19 : (11) Ղուկ · թ · 56 : ժթ · 10 : Հովհ · գ · 17 : ժը · 47 : (12) Ղուկ · ժե · 4 :

15 Թէ որ քո եղբայրդ քեզ դէմ մեղք անէ[13] · գնա՝ նորան յանդիմանէ՛ երբոր դու և նա մէնակ լինէք · Թէ որ լսէ քեզ՝ քո եղբայրդ շահեցիր[14] :

16 Իսայց Թէ որ չի՛ լսէ քեզ , մին կամ երկու ուրիշըն էլ քեզ հետ առ · ինչուր՝ երկու կամ երեք վըկայի բերանով ամէն բան կըհաստատուի[15] :

17 Իսայց Թէ որ նորանց էլ չի՛ լսէ , եկեղեցոյն ասա՛ ապա Թէ որ եկեղեցոյն էլ չի՛ լսէ , Թող լինի քեզ համար ինչպէս հեթանոս կամ մաքսաւոր[16] (կ՚ուզուի) :

18 Ա՛միարիտն ասումեմ ձեզ , Թէ ինչ որ երկրիս վերայ կըկապէք , երկնքումն էլ կապված կըլինի[17] · և ինչ որ երկրիս վերայ կարձակէք , երկնքումն էլ արձակված կըլինի :

19 Իս էլ ասումեմ ձեզ՝ Թէ որ ձեզանից երկու հոգի երկրի վերայ միաբան լինին[18] ամէն բանի համար , ինչ որ խնդրեն՝ կըլինի[19] նորանց իմ Հօրից՝ որ երկնքումն է :

20 Ինչուր՝ որ տեղ երկու կամ երեք հոգի իմ անունովս ժողովված լինին՝ հնտեղ ես նորանց մէջն եմ :

21 Ին ժամանակն Պետրոս նորա մօտ եկաւ և ասաց · Տէր Թէ որ իմ եղբայրս ինձ դէմ մեղք անէ , քանի՞ անգամ պէտք է Թողութիւն տամ նորան · մինչև եօԹն անգամ[20] :

22 Յիսուս նորան ասաց · Չեմ ասումմ քեզ՝ Թէ մինչև եօԹն անգամ , բայց մինչև եօԹանասուն անգամ եօԹն[21] :

23 Արահամար երկնքի արքայութիւնն նմանվեցաւ մին Թագաւոր մարդոյ · որ ուզումէր իրան ծառաներից համար (հէսապ) առնել :

24 Եւ երբոր սկսեց առնել , նորա մօտ մին տասն հազար քանքարի պարտական բերին :

25 Երբոր չունէր վճարել , նորա տէրն հրամայն տուաւ՝ որ նորան և նորա կինըն և նորա որդիքըն և ամէն ինչ որ ունէր ծախեն[22] և պարտքն վճարէ :

26 Եւ ծառան երեսին վերայ ընկնելով երկրպագութիւն էր անումմ նորան և ասումմ · Երկայնամի՛տ կաց ինձ համար · և ամէնըն կըհատուցանեմ քեզ :

27 Տէրն խղճաց էն ծառայի վերայ՝ նորան արձակեց , և փոխըն էլ բաշխեց նորան :

28 Եւ երբոր էն ծառան դուրս եկաւ՝ իրան ընկեր ծառաներից մինըն գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան պարտական էր , և նորան բռնեց՝ խեղդումէր և ասումմ · Վճարիր ինչ որ պարտական ես :

29 Ապա էն ընկեր ծառան՝ նորա ոտներն ընկաւ , նորան աղաչումէր և ասումէր , Երկայնամի՛տ կաց ինձ համար՝ և կըհատցընեմ քեզ :

30 Եւ նա չէր կամենում · այլ գընաց՝ նորան բոնի (պանդ) մինչև որ պարտքըն վճարէ :

31 Երբոր նորա ընկեր ծառաներըն տեսին ինչ որ էլաւ , շատ տրտմեցան՝ և եկին ամէն ինչ որ էլաւ , իրանց տիրոջն յայտնեցին :

32 Ին ժամանակն իրան տէրն կանչեց նորան և ասաց · Ա՛վ չար ծառայ՝ ես ամէն պարտքըդ բաշխեցի քեզ · որովհետև դու աղաչեցիր ինձ :

33 Պարտական պէտք չէր քեզ էլ՝ որ

(13) ՂՆ · ԺԹ · 17 : Ղ·Ռ · Ժէ · 3 : (14) Յ·Ռ · Ե · 20 : ա Պետր · գ · 1 : (15) Բ Օրին · Ժէ · 6 : ԺԹ · 15 : Յ·Վ · Ը · 17 : Բ Կորնթ · Ժգ · 1 : Նէեր · Ժ · 28 : (16) Ն·Ռ·Վ · Ժգ · 17 : ա Կորնթ · Ե · 9 : Բ Թես · գ · 6 · 14 : Բ Յ·Վ · 10 : (17) Մ·Ռ · Ժգ · 19 : Յ·Վ · Ի · 23 : ա Կորնթ · Ե · 4 , 5 : (18) Մ·Ռ · Ե · 24 : (19) ա Յ·Վ · գ · 22 : Ե · 14 : (20) Ղ·Ռ · Ժէ · 4 : (21) Մ·Ռ · Զ · 14 : Մ·Ռ · Ժա · 25 : Կող · գ · 13 : (22) Դ Թագ · գ · 1 : Նեեմ · Ե · 8 :

քո ընկեր ծառային ողորմիր՝ ինչ-պէս որ ես քեզ ողորմեցայ :

34 Եւ նորա տէրն բարկացաւ՝ և նորան մատնեց դահիճների (ճԷԼ լաթնԷրէ) ձեռքն , մինչև որ ամէն պարտքն վճարէ :

35 Նոյպէս էլ իմ Հայրս որ երկնքումն է , ձեզ կանէ[23] , թէ որ դուք ամէն մէկդ իրան եղբօրն՝ ձեր բոլոր սրտիցն չըթողէք նորանց յանցանքն :

ԳԼ · ԺԹ

2 Ներքնատոսի հետանդներ բժշկելն , 3 Կաց թողլոյ համար փարիսեցոց պատասխան կըտայ : 10 Ցոյց կըտայ թէ կարգվելն երբ հարկաւոր է · 13 Երեխաներն ընդունուելէ : 16 Կըսովրեցնէ պատանին թէ յաւիտենական կեանքն ինչպէս կարող է ժառանգել , 20 Նէ թէ ինչպէս կարող է կատարեալ լինել : 23 Իրան աշակերտներին ասելէ թէ որչափ դըժուար է հարուստի Աստուծոյ արքայութիւնն մտնել : 27 Նէ վարձք խոսք կըտայ նորանց որ իրան եւևէն կըզնան ամէն բան թողելով :

1 Եւ էլաւ՝ երբոր Յիսուս էս խոսքերըս վերջացուց[1] , Գալիլեացիցն գնաց՝ և Ներեստանի (ջըՀոպատանէ) կողմերն եկաւ , Յորդանանի էն կողմն :

2 Եւ շատ ժողովուրդներ նորա ետևէն գնացին[2] և նորանց էնտեղ բժշկեց :

3 Եւ փարիսեցիքն նորա մօտ և կին՝ նորան փորձելուին և ասելուին . Թէ Ըրժան է մին մարդոյ՝ որ իրան կինն քաց թողէ ամէն պնաասի (սուտէ) համար որ լինի :

4 Նորանց պատասխան տուաւ և ասաց . Գուք չէք կարդացել՝ թէ նա որ սկըզբիցն ստեղծից[3] նորանց արու (ուպ) և էգ արաւ , և ասաց :

5 Վրահամար մարդն իրան Հայրն և մայրն կըթողէ և իրան կնկան էտևն կըգնայ[4] և երկուքն մին մարմին կըլինին[5] :

6 Ուրեմն երկու չեն , այլ մին մարմին են . ապա էն որ Աստուած միաւորեց , թող մարդն չըզոկէ :

7 Նորան ասացին . Ապա ինչու Մովսէսն պատուիրեց մեզ՝ որ դուրս անելոյ թուղթ տանք և քաց թողնենք[6] :

8 Նորանց ասաց . Մովսէս ձեր քարասրտութեան համար պատուէր տուաւ ձեզ՝ որ ձեր կանայքն քաց թողէք , բայց սկըզբիցն էնպէս չէր լաւ :

9 Մխայն թէ ասումեմ ձեզ՝ Որ մէն ով որ իրան կինն քաց կըթողէ[7] , և ոչ թէ պոռնկութեան պատճառաւն , և (մին) ուրիշըն կառնէ՝ նա շնութիւն է գործում . և նա էլ՝ որ էն քաց թողածըն կառնէ , շնութիւն է գործում :

10 Իրան աշակերտներն նորան ասացին . Թէ որ մարդոյ և կնկան մէջն էդպիսի ինչ դժուարութիւն կայ[8] , լաւ է չի կարգվիլն :

11 Եւ նա ասաց նորանց . Ամէնքըն կարող չեն էդ բանիդ[9] , բայց նորանք՝ որ նորանց տրվված է :

12 Ինչուար՝ կան ներքինիք (խոպընէրք)՝ որ իրանց մոր փորիցն էնպէս են ծնվել . և կան ներքինիք՝

(23) Ըոմ՝ · իա · 13 : Մաթ · զ · 12 : Մարկ · ժա · 26 : Յով · բ · 13 : (1) Մարկ · ժ · 1 : Յովէլ · ժ · 20 : (2) Մաթ · ժբ · 15 : (3) Ծննդ · ա · 27 : ե · 2 : Մղ · բ · 15 : (4) Ծննդ · բ · 24 : Մարկ · ժ · 5—9 : Եփես · ե · 31 : (5) ա Կորնթ · զ · 16 : է · 2 : (6) բ Օրէն · իդ · 1 : Մաթ · ե · 31 : (7) Մաթ · ե · 32 : Մարկ · ժ · 11 : Ղուկ · ժզ · 18 : ա Կորնթ · է · 10 , 11 : (8) Ըոմ՝ · իա · 19 : (9) ա Կորնթ · է · 2 · 7 · 9 · 17 :

որ մարդկանցից են էլած ներքինիք · և կան ներքինիք[10] որ իրանց անձըն ներքինի են արել երկնքի արքայութեան համար · ով որ կարող է տանիլ թող տանի :

13 Յն ժամանակն երեխաներ բերին[11] նորա մօտ որ ձեռըն դնէ նոքանց վերայ և աղօթք անէ · և նորա աշակերտներն սաստուկին նորանց :

14 Յիսուս ասաց · Թոյլ տուէք էդ երեխաներիդ՝ և դորանց մի՛ արգելէք որ ինձ մօտ գան · ինչուո՛ր էդպէսներին[12] է երկնքի արքայութիւնն :

15 Եւ նորանց վերայ ձեռք դրբաւ՝ և էնտեղիցն գնաց :

16 Եւ ահա մինն նորա մօտ եկաւ[13] և ասաց · Վարի վարդապետ՝ ես ի՞նչ բարի (բան) գործեմ՝ որ յաւիտենական կեանքըն ընդունիմ[14] :

17 Նա էլ նորան ասաց · Ինչու ես ինձ բարոյ համար հարցնում · մին է բարի · թէ որ կամենուաս յաւիտենական կեանքն մտնել, պահտուիրանքներըն պահի՛ր :

18 Նորան ասաց՝ Որըն · Յիսուս նորան ասաց · (էն որ ասուաձ) Մի՛ սպանանիր, մի՛ շնար, մի՛ գողանար, մի՛ սուտ վկայիր[15],

19 Պատուիր քո հօրըն և քո մօրըն[16], և քո ընկերըդ՝ քո անձիդ պէս սիրի՛ր[17] :

20 Յն տղան նորան ասաց · Էդ ամէնըդ իմ երեխայութենիցն պահեցի · ապա ի՞նչ բանով եմ պակաս :

21 Յիսուս նորան ասաց · Թէ որ կամենուաս կատարեալ լինիլ, գնա՛ քո ապրանքն ծախի՛ր[18] և աղքատներին տո՛ւր, և գանձ (խազինայ) կունենաս երկնքումն՝ և իմ ետևէս եկ :

22 Երբոր տղան էս բանս լսեց, տրտմեցաւ և գնաց · պատճառնոր՝ շատ ապրանք ունէր :

23 Յիսուս աշակերտներին ասաց · Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ որ հարուստ մարդն շատ դժուար կըմտնէ երկնքի արքայութիւնն[19] :

24 Մինէլ ասումեմ ձեզ · Աւելի հեշտ է՝ որ ուղտն ասեղի ծակովն անցկենայ՝ քան թէ հարուստն երկընքի արքայութիւնն մտնէ :

25 Աշակերտներն երբոր լսեցին, շատ զարմացան և ասացին · Ապա ո՞վ կարէ ապրիլ :

26 Յիսուս նորանց մտիկ տուաւ և ասաց · Էդ բանդ մարդկանց կողմանէ անկարելի է, բայց Աստուծոյ կողմանէ՝ ամէն բան կարելի է[20] :

27 Յն ժամանակն Պետրոս պատասխան տուաւ[21] և ասաց նորան · Էհա մենք ամէն բան թողինք և քո ետևէդ եկինք[22] · ապա ի՞նչ պիտի լինի մեզ :

28 Յիսուս նորանց ասաց · Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ դուք որ իմ ետևէս եկիք, իմ ոգկել գալոց ժամանակումն՝ երբոր Որդին մարդոյ իրան փառաց աթոռի վերայ կընստի, դուք էլ տասներկու աթոռի վերայ կընստիք[23] և Իսրայէլի տասներկու ցեղին կդատէք :

29 Եւ ամէն ով որ թողից տուներ՝

(10) ա Կորնթ · է · 32 · 34 : թ · 5 · 15 : (11) Մարկ · ժ · 13 : Ղուկ · ժը · 15 : (12) Մատթ · ժը · 3 : (13) Մարկ · ժ · 17 : Ղուկ · ժը · 18 : (14) Ղուկ · ժ · 25 : (15) Ելք · ի · 13 : բ Օրին · ե · 17 : (16) Մատթ · ժե · 4 : (17) Ղեւտ · ժթ · 18 : Մատթ · իբ · 39 : Հռովմ · ժգ · 9 : Գաղ · ե · 14 : Յակ · բ · 8 : (18) Մատթ · զ · 20 : Ղուկ · ժը · 33 : ժգ · 9 : Կորնթ · բ · 45 : գ · 34, 35 : ա Տիմ · գ · 18, 19 : (19) Մատթ · ժգ · 22 : Մարկ · ժ · 24 : ա Կորնթ · ա · 26 : ա Տիմ · գ · 9, 10 : (20) Ղեւտ · ժը · 14 : Յովբ · խը · 2 : Երեմ · լբ · 17 : Ովսէ · ը · 6 : Մարկ · ժ · 27 : Ղուկ · ա · 37 : ժը · 27 : (21) Մարկ · ժ · 28 : Ղուկ · ժը · 28 : (22) բ Օրին · իգ · 9 : Մատթ · դ · 20 : Ղուկ · է · 11 : (23) Մատթ · ի · 21 : Ղուկ · իբ · 28, 29, 30 : ա Կորնթ · զ · 2, 3 : Հայտ · բ · 26 :

կամ եղբարքը՝ կամ քրվերքը՝ կամ հայրը կամ մայրը կամ կինը կամ որդիքը կամ արտերը իմ անունիս համար[24], հարիւրապատիկ կառնէ՝ և յաւիտենական կեանքըն կըժառանգէ :

30 Շատ առաջինները յետինք կըլլինին՝ և յետիններն առաջինք[25] :

ԳԼ · Ի

1 Ուրիստոս այգոյ միջումն աշխատած մշակներին օրինակով ցույց կըտայ թէ Աստուած մընին էլ պարտական չէ՝ որ ամէն մընին իրան աշխատութեան չափովը տայ : 17 Իրան չարչարանքներն առաջուց ասումէ : 20 Չեբեդեայի որդոց մօր տըված պատասխանով իրան աշակերտներին կըսովրցնէ որ խոնարհ լինին : 30 Եւ երկու կույր մարդկանց աչքերն կըբանայ :

1 Պատճառաւոր՝ երկինքի արքայութիւնն նման է մին տանուտէր մարդոյ՝ որ առաւօտանց դուրս ելաւ՝ իրան այգոյ (պողէ) համար մշակներ բռնել :

2 Եւ էն մշակներին՝ օրն մին դահեկան խօսեց, և նորանց ուղարկեց իրան այգին :

3 Եւ երեք ժամի (սահաթէ) ժամանակն դուրս ելաւ՝ ուրիշներ էլ տեսաւ որ փողոցների մէջն պարապ կանգնել էին :

4 Նորանց էլ ասաց . Դուք էլ գնացէք իմ այգիս՝ և ինչ որ արժան է՝ կըտամ ձեզ :

5 Նորանք էլ գնացին . և մինէլ վեց ժամին և ինն ժամին դուրս ելաւ՝ և էնպէս արաւ :

6 Եւ տասնումին ժամին էլ դուրս ելաւ՝ ուրիշներ գտաւ որ պարապ կանգնել էին . նորանց ասաց . Ի՞նչ էք էստեղ բոլոր ցերեկս պարապ կանգնել :

7 Նորան ասացին . Որովհետև որ՝ ոչ ով մեզ բանի չի բռնեց . նորանց ասաց . Դուք էլ գնացէք իմ այգիս, և ինչ որ արժան է՝ կառնէք :

8 Եւ երբոր իրիկուն էլաւ, այգոյ տէրն իրան տան վերակացուին ասաց . Ա՛ղչակներըն կանչիր և նորանց վարձքըն տուր՝ յետիններիցն սկսած մինչև առաջիններն :

9 Երբոր նորանք եկին՝ որ տասնումին ժամինն էին, ամէն մէկն մին դահեկան առին :

10 Առաջիններն էլ եկին՝ և կարծումին թէ աւելի կառնեն և նորանք էլ ամէն մէկն մին դահեկան առին :

11 Երբոր առին, տան տիրոջին տրանջումին և ասում .

12 Թէ Այդ յետիններդ մին ժամ աշխատեցին, և դորանց մեզ հետ հաւասար արիր, որ օրի ծանրութիւնըն և տաքութիւնըն քաշեցինք :

13 Նա նորանցից մընին պատասխան տուաւ և ասաց . Ա՛վ ընկեր՝ չեմ զրկում քեզ . չէ՞ որ դու ինձ հետ մին դահեկան ես խօսացել :

14 Ուռնըն առ և դնա . ես ուզումեմ որ էս յետիններիս տամ ինչպէս քեզ :

15 Ա՝իթէ ես իշխանութիւն չունիմ իմ ապրանքիս վերայ[1] որ ինչ որ ուզեմ անեմ . կամ թէ քո աչքդ չարն է[2] որ ես առատաձեռն եմ :

16 Նոյպէս յետիններն առաջինք կըլլինին[3], և առաջիններն յետինք . ինչուռը շատ են կանչըվածք[4], բայց քիչ են ընտրըվածք :

17 Երբոր Յիսուս գնումէր Երուսաղէմ[5], տասներկուսըն առանձին

(24) Մարկ · ժ · 29 , 30 : Լուկ · ժը · 29 , 30 : (25) Մատթ · ի · 16 : իա · 31 , 32 : Մարկ · ժ · 31 : Լուկ · ժդ · 30 : (1) Ընդամէն · թ · 21 : (2) Բ Օրէն · ժե · 9 : Ե-ղիա · իգ · 6 : Մատթ · զ · 23 : (3) Մատթ · ժթ · 30 : (4) Մատթ · իե · 14 : (5) Մարկ · ժ · 32 : Լուկ · ժը · 31 : Յովէ · ժբ · 12 :

իրան հետ առաւ՝ և ճանապարհումն ասաց Նորանց ։

18 Ա՛յժմ վեր ենք ելնում Երուսաղէմ՝ և Որդին մարդոյ կըմատնվի[6] քահանայապետների և կարգաղօղների ձեռքըն, և մահով կը դատապարտեն Նորան ։

19 Եւ Նորան կըմատնեն հեթանոսների ձեռքն՝ որ Նորան խայտառակեն և ծեծեն և խաչ հանեն, և երեք օրումն յարութիւն կառնէ ։

20 Յն ժամանակն[8] Յակոբեթիայի որդոց մայրն իրան որդոցն հետ Նորա մօտն եկաւ[9] երկրպագութիւն էր անում, և Նորանից մին բան էր խնդրում ։

21 Նա էլ ասաց Նորան · Ի՞նչ ես խնդրում · Նորան ասաց · Յամր որ ես իմ երկու որդիքս մինն քո աջ կողմդ՝ և մինն ձախ կողմդ նըստին քո արքայութիւնումդ[10] ։

22 Յիսուս պատասխան տուաւ և ասաց · Չէք գիտում՝ թէ ի՞նչ էք խնդրում · կարո՞ղ էք դուք էն բաժակըն[11] (կամքն) խմել՝ որ ես պիտի խմեմ · կամ էն մկրտութիւնովն[12] մըկըրտվել՝ որ ես պիտի մկրտվիմ · Նորանք ասացին · Կարօղ ենք ։

23 Յիսուս Նորանց ասաց · Իմ բաժակըս[13] կըխըմէք, և էն մկրըտութիւնովն որ ես պիտի մկրտվիմ՝ կըմկրտվիք · բայց՝ իմ աջ և ձախ կողմն նստացնելն՝ իմն չէ՝ որ տամ · բայց միայն Նորանց որ իմ Հօրիցս տրվված է[14] ։

24 Եւ էն տասներն երբոր լսեցին[15], բարկացան էն երկու եղբարց վերայ ։

25 Յիսուս Նորանց կանչեց իրան մօտն՝ և ասաց · Գիտէք՝ որ ազգերի իշխաններն Նորանց վերայ տիրապետութիւն են անում, և մեծամեծներն Նորանց վերայ իշխանութիւն են անում ։

26 Այնպէս չըպիտի լինի ձեր մէջումդ[16] · բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինել, թող ձեզ պաշտօնեայ լինի[17] ։

27 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել[18], թող ձեզ ծառայ լինի ։

28 Ինչպէս[19] որ՝ Որդին մարդոյ չեկաւ որ իրան ծառայեն[20], բայց որ ինքն ծառայէ[21] · և շատերի տեղակ[22] իրան անձըն փրկութեանն գին տայ[23] ։

29 Եւ երբոր Երիքովիցն դուրս եկին[24], շատ ժողովուրդներ գնացին Նորա ետևէն ։

30 Եւ ահա երկու կոյր ճանապարհին վերայ նստած էին[25] · երբոր լսեցին՝ թէ Յիսուսն անց է կենում՝ աղաղակեցին և ասացին · Յիսուս որդի Դաւթի՝ մեզ ողորմեա ։

31 Եւ ամբոխն (խալխն) սաստեց Նորանց՝ որ ձայն չըհանեն · և Նորանք էլ աւելի աղաղակումէին և ասում · Տէր՝ որդի Դաւթի · մեզ ողորմեա ։

32 Յիսուս կանգնեց՝ կանչեց Նորանց և ասաց · Ի՞նչ էք ուզում որ անեմ ձեզ ։

(6) Մատթ · ժզ · 21 ։ (7) Մատթ · իե · 2 ։ Մարկ · ժե · 1 · 16 ։ Ղուկ · իգ · 1 ։ Հովհ · ժը · 28, Ա այլն ։ Գործ · գ · 13 ։ (8) Մարկ · ժ · 35 ։ (9) Մատթ · գ · 21 ։ (10) Մատթ · ժթ · 28 ։ (11) Մատթ · իզ · 39 · 42 ։ Մարկ · ժգ · 36 ։ Ղուկ · իբ · 42 ։ Հովհ · ժը · 11 ։ (12) Ղուկ · ժբ · 50 ։ (13) Գործ · ժբ · 2 ։ Հռովմ · ը · 17 ։ բ Կորնթ · ա · 7 ։ Յայտ · ա · 9 ։ (14) Մատթ · իե · 34 ։ (15) Մարկ · ժ · 41 ։ Ղուկ · իբ · 24, 25 ։ (16) ա Պետր · ե · 3 ։ (17) Մատթ · իգ · 11 ։ Մարկ · թ · 35 · ժ · 43 ։ (18) Մատթ · ժը · 4 ։ (19) Հովհ · ժգ · 4 ։ (20) Փիլիպ · բ · 7 ։ (21) Ղուկ · իբ · 27 ։ Հովհ · ժգ · 14 ։ (22) Մատթ · իզ · 28 ։ Հռովմ · ե · 15 · 19 ։ Եբր · թ · 28 ։ (23) Ասայ · ծգ · 10, 11 ։ Գործ · թ · 24 · 26 ։ Հովհ · ժա · 51, 52 ։ ա Տիմ · բ · 6 ։ Տիտ · բ · 14 ։ ա Պետր · ա · 19 ։ (24) Մարկ · ժ · 46 ։ Ղուկ · ժը · 35 ։ (25) Մատթ · թ · 27 ։

33 Նորան ասացին · Տէր՝ որ մեր աչքերն բացվին :
34 Եւ Յիսուս խղճաց · նորանց աչքերին մտեցաւ՝ և շուտով տեսին · և նորա եւէն գնացին :

ԳԼ · ԻԸ

1 Երբոստոսի էլով Երուսաղէմ գնալն , 12 Նախաօղներն և գնօղներն տաճարից դուրս կըհանէ · 19 Թզղի ծառն կանիծէ · 23 Իշխանաներին և ծերերին կըպատասխանէ , 28 Եւ երկու որդոց առակն · 35 Եւ մշակներն առակով որ ամէն իրան ուղարկած մարդիքն սպաննցին , նորանց կը յանդիմանէ :

1 Երբոր Երուսաղէմին մօտեցան[1] և Բեթփագէ եկին Ձիթենեաց սարին[2] մօտ , էն ժամանակն Յիսուս իրան աշակերտներից երկուսըն ուղարկեց :
2 Եւ նորանց ասաց · Գնացէք էդ գիւղն՝ որ ձեր առաջին է , և հենեղ մին կապած էշ կըգտնէք՝ և քուռակըն էլ նորա հետ , նորան արձակեցէք բերէք ինձ մօտ :
3 Եւ թէ որ մին մարդ բան ասէ ձեզ · ասացէք թէ Տէրանք Տէրին պէտք են · և շուտով կուղարկէ նորանց :
4 Այդ էս ամէն բաներս էլաւ՝ որ մարգարէի խօսքն կատարվի որ ասում է :
5 Սիօնի աղջկանն[3] ասացէք · ա՛խ՝ քո թագաւորդ քեզ մօտ է գալիս · հեզահոգի՝ և էշըն և իշի քուռակըն հեծած :
6 Աշակերտներըն գնացին և արին[4] ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց :
7 Եւ էշըն և քուռակըն բերին՝ և իրանց շորերն նորանց վերայ քըցեցին[5] , և նորանց վերայ նստեց :
8 Եւ շատ ժողովուրդներ իրանց հագուստըն ճանապարհի վերայ փըռեցին · և ուրիշներն ծառերից ճղեր էին կտրում և ճանապարհի վերայ փռում էին[6] :
9 Եւ ժողովուրդներն որ առաջին և եւէն գնում էին , աղաղակում էին և ասում , Օրհնութիւն Որդոյն Դաւթի[7] · օրհնեալ է նա[8] որ գալիս է Աստուծոյ անունովն · օրհնութիւն ի բարձունս :
10 Եւ երբոր նա Երուսաղէմ մտաւ[9] , բոլոր քաղաքն դղրդաց և ասաց՝ Սա ո՞վ է :
11 Եւ ժողովուրդներն ասացին · Սա Յիսուս մարգարէն[10] է՝ որ Նազարէթի Գալիլեայի է :
12 Եւ Յիսուս մտաւ տաճարն[11] և ամէնին որ տաճարի մէջն ծախում էին և առնում էին , դուրս հանեց · և ըստակ փոխողների[12] (սեղանները) տախտակներըն՝ և աղաւնի ծախողների աթոռներըն կործանեց :
13 Եւ ասաց նորանց · Գրված է թէ Իմ տունս աղօթքի տուն[13] պէտք է կոչվի · և դուք աւազակների բուն էք արել դորան[14] :
14 Եւ տաճարի մէջումն կուրներ և կաղներ եկին նորա մօտ՝ և նորանց բժշկեց :

(1) Մատ · ժա · 1 · Գործ · ժթ · 29 : (2) Ձէտ · ժգ · 4 : (3) Եսայ · կբ · 11 : Ձէտ · թ · 9 : Յովէլ · ժբ · 15 : (4) Մատ · ժա · 4 : (5) գ Թագ · թ · 13 : (6) Գործ · իգ · 40 : Յովէլ · ժբ · 13 : (7) Սամ · ձ՛ժբ · 25 : (8) Սամ · ձ՛ժբ · 26 : Մատ · իգ · 39 : (9) Մատ · ժա · 15 : Գործ · ժթ · 45 : Յովէլ · բ · 13 · 15 : (10) Մատ · բ · 23 : Գործ · է · 16 : Յովէլ · գ · 14 : է · 40 : թ · 17 : (11) Մատ · ժա · 11 : Գործ · ժթ · 45 : Յովէլ · բ · 15 : (12) ը Օրէն · ժգ · 25 : (13) Եսայ · ծգ · 7 : (14) Երէմ · է · 11 : Մատ · ժա · 17 : Գործ · ժթ · 46 :

15 Երբոր քահանայապետներն և կարգացողներն էն հրաշքներըն տեսին որ արաւ, և երեխաներըն որ տաճարի միջումն աղաղակումէին և ասում · Ովսաննա, օրհնութիւն Որդոյ Դաւթի, բարկացան :

16 Եւ նորան ասացին · Լսումես թէ դորանք ի՞նչ են ասում : Յիսուս նորանց ասաց · Ա՛ · դուք էն չէք կարդացել՝ թէ տղաների և կաթնկերների բերանից օրհնութիւն հաստատեցիր[15] :

17 Եւ նորանց թողեց՝ քաղաքիցըն դուրս գնաց դէպի Բեթանիա՝ և (գիշերն) հենուղ մնաց[16] :

18 Եւ առաւօտանց[17] երբոր մինէլ յետ դարձաւ քաղաքն, սովեց :

19 Եւ ճանապարհին վերայ մին թզղի ծառ[18] տեսաւ՝ նորա մօտ եկաւ և նորա վերայ բան չգտաւ, բայց միայն տերև · և նորան ասաց · Սրանից ետև յաւիտեան քեզանից էլ պտուղ չլինի · և շուտով էն թզղի ծառն չորացաւ :

20 Աշակերտներն երբոր տեսին՝ զարմացան[19] և ասացին թէ Ի՞նչպէս շուտով թզղի ծառն չորացաւ :

21 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորանց · Ա՛մէն ձեզ · թէ որ հաւատք[20] ունենաք և չէ երկմտէք[21], ոչ թէ միայն թզղի ծառին էդ կանէք, այլ թէ որ էդ սարիդ էլ ասէք՝ Վեր կաց և ծովն ընկիր[22], կըլինի :

22 Եւ ամէն ինչ որ աղօթքի մէջ հաւատքով խնդրէք[23], կառնէք :

23 Եւ երբոր եկաւ տաճարն[24] դեռքանի որ էնտեղ սովորցնումէր, քահանայապետներն և ժողովրդի ծերերն նորա մօտ եկին և ասացին[25] · Դու ի՞նչ իշխանութիւնով ես անում էդ · և ո՞վ տուաւ քեզ էդ իշխանութիւնըդ :

24 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորանց · Ես էլ ձեզանից մին բան կըհարցնեմ · թէ որ էն ինձ ասէք, ես էլ ձեզ կասեմ՝ թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում էս :

25 Յովհաննէսի մկրտութիւնըն որ տեղից էր, երկնքիցն էր, թէ մարդկանցիցն · և նորանք իրանց մէջ միտք էին անում և ասումէին,

26 Թէ որ ասենք՝ Երկնքիցն էր, կասէ մեզ թէ Ուպա ինչու՞ չըհաւատացիք նորան · և թէ որ ասենք՝ Մարդկանցիցն, ժողովրդիցն վախնումենք · ինչուր՝ ամէնքն Յովհաննէսին մարգարէի տեղ էին ընդունում[26] :

27 Պատասխան տուին Յիսուսին և ասացին · Չենք գիտում · Նա էլ նորանց ասաց · Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ի՞նչ իշխանութիւնով եմ անում էս :

28 Ա՞իայն թէ ի՞նչպէս է երեւում ձեզ · մին մարդ երկու որդի ունէր · և նկաւ առաջինն ասաց · Որդի՛ գնա՛ էս օր այգումն (պտղատ) բան արա :

29 Եւ նա պատասխան տուաւ և ասաց · Կըգնամ տէր · և չըգնաց :

30 Էն մէկելի մօտն էլ գնաց և էնպէս ասաց · Նա պատասխան տըւաւ և ասաց · Չեմ կամենում · բայց յետոյ զղջացաւ՝ և գնաց այգին :

31 Ո՞րիկ էս երկուսից հոն արաւ իրան հօր կամքըն · ասացին՝ Յետինն : Յիսուս նորանց ասաց · Ա՛մէն ձեզ · որ մաքսաւորներն (կին-բռնչնեքն) և պոռ-

(15) Սաղ · ը · 2 : (16) Մարկ · ժա · 11 : (17) Մարկ · ժա · 12 : Յովհ · ժա · 18 : (18) Մարկ · ժա · 13 : (19) Մարկ · ժա · 20 : (20) Մարկ · ժէ · 19 : Ղուկ · ժէ · 6 : (21) Յակ · ա · 6 : (22) ա Կորնթ · ժգ · 2 : (23) Մարկ · է · 7 : Մարկ · ժա · 24 : Ղուկ · ժա · 9 : Յակ · է · 16 : ա Յովհ · գ · 22 : է · 14 : (24) Մարկ · ժա · 27 : Ղուկ · ի · 1 : (25) Նէ · ը · 14 : Դորթ · գ · 7 : է · 27 : (26) Մարկ · ժգ · 5 : Մարկ · ղ · 20 : Ղուկ · ի · 6 :

Նիկնեւրն[27] ձեզանից առաջ կըմըտնեն երկնքի արքայութիւնն :

32 Ինչուր՝ Յովհաննէսն արդարութեան ճանապարհովը[28] եկաւ՝ և չըհաւատացիք Նորան . և մաքսաւորներն[29] և պոռնիկներն հաւատացին Նորան . և դուք տեսիք և չըզղջացաք՝ որ յետոյ հաւատաք Նորան :

33 Ուրիշ առակ էլ լսեցէք . Մ՚ին տանուտէր մարդ կար՝ որ այգի (պաղ) տնկեց և Նորան պարսպով պատեց[30] . և Նորա մէջն ՚ձան փորեց և աշտարակ (պուրջ) շինեց . և տուաւ Նորան մշակներին , և գնաց հեռու աշխարհ[31] :

34 Երբոր պտղի ժամանակն մօտեցաւ , իրան ծառաներըն ուղարկեց մշակներին մօտ՝ որ Նորա պըտուղներըն առնեն[32] :

35 Եւ մշակներն Նորա ծառաներըն բռնեցին՝ մինըն տանջեցին , մէկէլըն սպանեցին , մէկէլըն էլ քարկոծեցին[33] :

36 Մ՚ինէլ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններիցն շատ՝ և Նոքանց էլ էնպէս արին :

37 Յետոյ իրան որդին Նորանց մօտ ուղարկեց և ասաց . Կըլինի որ էս իմ որդուցս ամաչեն :

38 Էայց մշակներն երբոր որդին տեսին , իրանց մէջումն ասացին . Էս է ժառանգն[34] . եկէք սորան սպանենք[35] , և սորա ժառանգութեանն տիրապետենք :

39 Եւ բռնեցին Նորան[36] . այգուցըն (պաղէն) դուրս հանեցին և սպանեցին :

40 Էպա երբոր էն այգոյ տէրն գայ , ի՞նչ կանէ էն մշակներին :

41 Նորան ասացին[37] . Էն չարերըն չար պատժով կըկորցընէ[38] , և այգին կըտայ ուրիշ մշակների[39]՝ որ Նորա պտուղներըն տան իրան ժամանակումն :

42 Յիսուս Նորանց ասաց . Խսկի մի ժամանակ դուք չէք կարդացել գըրումն[40]՝ Թէ Էն քարն , որ շինողներն անարգեցին , նա էլաւ անկիւնի գլուխ . էս բանս Տէրիցն էլաւ՝ և մեր աչքերի առաջին զարմանալի է :

43 Արա՚համար ասում եմ ձեզ . որ Աստուծոյ արքայութիւնն ձեզանից վեր կառնվի[41] , և էն ազգին կըտրվի , որ Նորա պտուղներըն կըբերէ :

44 Եւ ով որ էս քարիս[42] վերայ ընկնի՝ կըփշրըվի . և ում վերայ որ Նա ընկնի , կըջարդէ Նորան[43] :

45 Երբոր քահանայապետներն և կարդացօղներն և փարիսեցիքն Նորա առակներն լսեցին , հասկացան՝ որ իրանց համար ասաց :

(27) Ղուկ . է . 29 . 30 : (28) Մատթ . գ . 1 , Ղուկ : (29) Ղուկ . գ . 12 , 13 : (30) Սաղ . ո . 9 : Երէմ . ը . 11 : Նաւղ . ե . 1 : Երէմ . բ . 21 : Մատթ . ժբ . 1 : Ղուկ . ի . 9 : (31) Մատթ . իե . 14 , 15 : (32) Երէմ . ը . 11 , 12 : (33) բ Նաւղ . իգ . 21 : ԼՁ . 16 : Նէեմ . թ . 26 : Մատթ . ե . 12 : իգ . 34 . 37 : Գործ . է . 52 : ա Օրէն . բ . 15 : Երէմ . ժա . 36 , 37 : (34) Սաղ . բ . 8 : Երէմ . ա . 2 : (35) Սաղ . բ . 2 : Մատթ . իշ . 3 : իէ . 1 : Յովհ . ժա . 53 : Գործ . գ . 27 : (36) Մատթ . իշ . 50 , Ղուկ : Մատթ . ժգ . 46 , Ղուկ : Ղուկ . իբ . 54 , Ղուկ : Յովհ . ժբ . 12 , Ե այլն : Գործ . բ . 23 : (37) Ղուկ . ի . 16 : (38) Ղուկ . իա . 24 : Երէմ . բ . 2 : (39) Գործ . ժգ . 46 : ժե . 7 : ժբ . 6 : իբ . 28 : Հռոմ . թ , ժ , ժա : (40) Սաղ . ճժբ . 22 : Նաւղ . իբ . 16 : Մատթ . ժբ . 10 : Ղուկ . ի . 17 : Գործ . գ . 11 : Երէմ . բ . 20 : ա Պետր . բ . 6 , 7 : (41) Մատթ . ը . 12 : (42) Նաւղ . ը . 14 , 15 : Օսէ . ժբ . 3 : Ղուկ . ի . 18 : Հռոմ . թ . 33 : ա Պետր . բ . 8 : (43) Նաւղ . կ . 12 : Գան . բ . 44 :

46 Եւ խնդրուածին որ բռնեն նո-
րա , բայց ժողովուրդներիցն վախե-
ցան · ինչուր՝ նորան մարգարէի
տեղ էին ընդունում[44] :

ԻԱ· ԻՆ

1 Թագաւորի որդոյն հարսանիքի առակն է : 9 Հրեաներուն կոչվիլը : 12 Հարսանիքի շոր չունեցողի պատիժն է : 15 Կայսերի հարկ տալն պէտք է : 23 Յրիստոս սադուկեցիքն յա-
րուքեան համար կըպատասխանէ : 35 Օրինադէտին ցոյց կըտայ թէ որն է առաջին և մեծ պատուիրանքն : 41 Եւ Աստիայի համար փարիսեցիներն չիոթուքեան մէջ կըբռնէ :

1 Ա՛ինէլ Յիսուս պատասխան
տուաւ՝ և նորանց ասաց առակներով[1] :
2 Երկնքի արքայութիւնն նմանե-
ցաւ թագաւոր մարդոյ , որ իրան
որդոյն հարսանիք արաւ :
3 Եւ իրան ծառաներըն ուղար-
կեց՝ որ հրաւիրած մարդիքըն կան-
չեն հարսանիքն · և նորանք չկա-
մեցան գալ :
4 Ա՛ինէլ ուրիշ ծառաներ ու-
ղարկեց և ասաց · Ըսացէք հրաւի-
րածներին · ահա իմ սեղանըս պատ-
րաստեցի · իմ արջառներս և մսա-
ցուներս մորթուած են[2] , և ամէն բա-
ներս պատրաստ է , եկէք հարսանիքն :
5 Եւ նորանք հոգս չարին՝ և գը-
նացին , միւն իրան արտն , և մէկէլն
իրան առուտուրի եւսէն :
6 Եւ ուրիշներն նորա ծառանե-
րըն բռնեցին՝ թուքուժուր տուին և
սպանեցին :
7 Ի՛սայ թագաւորն երբոր էս լը-
սեց , բարկացաւ՝ և իրան զօրքըն
ուղարկեց[3] և էն սպանօղներըն սա-
տակեց , և նորանց քաղաքըն այրեց :
8 Ի՛ն ժամանակն իրան ծառանե-
րին ասաց · Հարսանիքս պատրաստ
է՝ և հրաւիրածներն արժանի չէին[4] :
9 Ուրեմն գնացէք դէպի ճանա-
պարհներուն անցքն (կենդանեն)՝ և ում
որ գտնէք , կանչեցէք հարսանիքս :
10 Եւ ծառաներն դուրս գնացին՝
ճանապարհներին վերայ ում որ
գտին՝ չարըն և բարին՝ ամէն ժո-
ղովեցին[5] և հարսանիքն հարսանը-
քառներով լցաւ :
11 Եւ թագաւորն մտաւ՝ որ սե-
ղան նստողներին մտիկ անէ , և էն-
տեղ միւն մարդ տեսաւ՝ որ հար-
սանիքի շոր չէր հագած[6] :
12 Եւ նորան ասաց · Ի՛նկէր ինչ-
պէս մտիր դու էստեղ՝ որ հարսանիքի
շոր չունէիր · և նա պապանձվեցաւ :
13 Ի՛ն ժամանակն թագաւորն ա-
սաց ծառաներին , Ոտրա ոտներըն
և ձեռներըն կապեցէք · և դորան
դրսի խաւարն հանեցէք[7] · էնտեղ որ
լաց՝ և ատամների կրճտուին կըլինի :
14 Ինչուր՝ շատ են կանչըված և
քիչ են ընտրըված[8] :
15 Ի՛ն ժամանակն փարիսեցիքն
գնացին՝ նորա համար խորհուրդ ա-
րին[9] · թէ ինպէս խօսքերով որո-
գայթ (ծուխ) քցեն նորան :
16 Եւ իրանց աշակերտներն Հե-
րոդէսեաններուն հետ նորա մօտ ու-
ղարկեցին և ասացին · Վ՛արդա-
պետ՝ գիտուածիդ որ ճշմարիտ ես և
Ըստուծոյ ճանապարհն ճշմարտու-
թեւնով սովորցնուես , և իսկի մին
մարդուց հոգս չունիս , և մարդոյ
երեսպաշտութիւն չես անում :

(14) վէր · 11 · Ի՛սէ · է · 16 · Հայվ · է · 40 · (1) Ի՛սէ · ժգ · 16 · Հայտ · ժբ · 7 · 9 · (2) Ընտ · թ · 2 · (3) Դան · թ · 26 · Ի՛սէ · ժբ · 27 · (4) Մատ · ժ · 10 · 13 · Ոտրդ · ժգ · 46 · (5) Մատ · ժգ · 38 · 47 · (6) բ Կորնթ · է · 3 · Եփես · գ · 24 · Կող · գ · 10 · 12 · Հայտ · գ · 4 · ժգ · 15 · ժթ · 8 · (7) Մատ · ը · 12 · (8) Մատ · ի · 16 · (9) Մարկ · ժբ · 13 · Ի՛սէ · ի · 20 ·

17 Ուրեմն ասա մեզ . ի՞նչպէս է երևում՝ քեզ . կայսերին հարկ տալ պէտք է , թէ չէ :
18 Յիսուս նորանց չարութիւնըն իմացաւ և ասաց . Ինչո՞ւ էք փորձում ինձ կեղծաւորներ :
19 Արկի տակըն ցոյց տուէք ինձ . և նորանք մին դահեկան հանեցին տուին նորան :
20 Եւ նորանց ասաց . Այս պատկերս կամ գիրս ումն է :
21 Ասացին՝ կայսերին . էն ժամանակն ասաց նորանց . Տուացէ՛ք՝ կայսերինըն կայսերին տուէ՛ք[10] , և Աստուածունըն Աստուածոյն :
22 Երբոր լսեցին , զարմացան . և նորան թողին և գնացին :
23 Էն օրն սադուկեցիքն նորա մօտ[11] նկին՝ որ ասումին՝ թէ Յարութիւն չկայ[12] . և նորան հարցրին
24 Եւ ասացին . Վարդապետ՝ Մովսէն ասաց[13] , թէ որ մին մարդ առանց զաւակի մեռնի , նորա կինըն թող իրան եղբայրն առնէ , և իրան եղբօր համար զաւակ վերկացրնէ :
25 Եղ մօտ եօթն եղբարք կային . նորանց առաջինն կին առաւ և մեռաւ , և որովհետև զաւակ չունէր՝ իրան կինըն թողից իրան եղբօրն :
26 Նպէս էլ երկրորդ (եղբայրն) և երրորդն՝ մինչև եօթներորդն :
27 Ամենից ետև կինն էլ մեռաւ :
28 Պա յարութեան ժամանակումն էն եօթնիցն նա ո՞րին պիտի լինի կին . ինչու որ՝ ամենքն նորան իրանց կին առին :
29 Յիսուս նորանց պատասխան տուաւ և ասաց . Մոլորվածնէ՛ , դուք ո՛չ գիրքըն էք գիտում[14] և ո՛չ Աստուծոյ զօրութիւնն :
30 Ինչուոր՝ յարութեան ժամանակումն ո՛չ կին կառնեն . և ո՛չ մարդոյ կրգնան . բայց երկնքումն հրեշտակներին նման են[15] :
31 Մեռելների յարութիւն առնելոյն համար դուք չէք կարդացել էն Աստուածանից ձեղ ասվածըն :
32 Ես եմ Աբրահամի Աստուածն , Իսահակայ Աստուածն , և Յակոբի Աստուածն[16] . և Աստուած մեռելների Աստուած չէ , այլ կենդանիների :
33 Երբոր ժողովուրդնէն լսեցին , զարմանումին նորա վարդապետութեան վերայ[17] :
34 Իայց փարիսեցիքն երբոր լսեցին[18] , թէ սադուկեցիներին պատնձացրուց , մինտեղ հաւաքվեցան :
35 Եւ նորանցից մինն փորձելով հարցրուց նորան[19] , և ասաց :
36 Վարդապետ՝ օրէնքումն ո՞ր պատուիրանք է մեծ :
37 Եւ Յիսուս նորան ասաց . Սիրիր քո Տէր Աստուածդ քո ամէն սրտովդ՝ քո ամէն անձովդ՝ և քո ամէն մտքովդ[20] :
38 Այս է մեծ և առաջին պատուիրանքն :
39 Եւ երկրորդն սրան նման . Պո ընկերդ քո անձիդ պէս սիրիր[21] :
40 Այս երկու պատուիրանքիցս ամէն օրէնքն և մարգարէքն կախված են[22] :
41 Եւ երբոր փարիսեցիքն հաւաքված էին[23] , Յիսուս նորանցից հարցրուց՝ և ասաց :

(10) Մարկ . ժե . 25 : Ղուկ . ժգ . 7 : (11) Մարկ . ժբ . 18 : Ղուկ . ի . 27 : (12) Գործ . իգ . 8 : (13) բ Օրին . իե . 5 : (14) Հովհ . ի . 9 : (15) ա Հովհ . գ . 2 : (16) Ելք . գ . 6 . 16 : Մարկ . ժբ . 26 : Ղուկ . ի . 37 : Գործ . է . 32 : Ելբր . ժա . 16 : (17) Մարկ . է . 28 : (18) Մարկ . ժբ . 28 : (19) Ղուկ . ժ . 25 : (20) բ Օրին . ղ . 5 . ժ . 12 . Լ . 6 : Ղուկ . ժ . 27 : (21) Ղևտ . ժթ . 18 : Մարկ . ժթ . 19 : Մարկ . ժբ . 31 : Ղուկ . ժ . 27 : Ղևտ . ժգ . 9 : Գաղ . ե . 14 : Հով . բ . 8 : (22) Մարկ . է . 12 : ա Տիմ . ա . 5 : (23) Մարկ . ժբ . 35 : Ղուկ . ի . 41 :

42 Զեզ ի՞նչպէս է երեւում Քրիս-
տոսի համար՝ հա՛մ որդին է • Նորան
ասացին • Դաւթի ։
43 Յիսուս էլ Նորանց ասաց • Ա՛յդ
ի՞նչպէս Դաւիթ Հոգով Նորան
Տէր է կոչում՝ և ասում ։
44 Տէրն իմ Տէրին ասաց[24] • Թէ
Իմ աջ կողմն նստիր , մինչև քո
թշնամիներըն քո ոտացդ գոհելիք
դնեմ ։
45 Ա՛յդ՝ թէ որ Դաւիթ Նորան
Տէր է կոչում , ի՞նչպէս Նորա որդին
կըլինի ։
46 Եւ ո՛չ ով կարօղ չէր մին բան
պատասխան տալ Նորան[25] • և էն
օրիցն ետև՝ էլ մինն չէր համար-
ձակվում[26] որ Նորանից իսկի մին
բան հարցնէ ։

ԳԼ · ԻԳ

1 Քրիստոս խրատումէ ժողովուրդն որ կարդացողների և փարիսեցիների ասածներն անեն , բայց Նորանց գործքերին պէս չանեն ։ 5 Իրան աշակերտներին պէտք է որ Նորանց փառա-
սիրութենից զգուշ լինին ։ 13 Ա՛ւէթ վայ կըկարդայ Նորանց կեղծաւորութեան և կուրու-
թեան վերայ ։ 34 Եւ Նրուսաղէմի կործանվելոյն վերայ մարգարէութի՛ւն է անում ։

1 Յէն ժամանակն Յիսուս ժողո-
վուրդներին և իրան աշակերտնե-
րին հետ խօսեց , և ասաց ։
2 Մ՛օսէսի աթոռին վերայ կար-
դացօղներն և փարիսեցիքն նստե-
ցին[1] ։
3 Ա՛մէն ինչ որ կասեն ձեզ՝ ա-
րէ՛ք և պահեցէ՛ք • բայց Նորանց
գործքերին պէս մի՛ անէ՛ք • ինչու-
որ՝ ասումեն և չեն անում[2] ։
4 Ծա՛նր և դժուար տաննելի
բեռներ[3] են կապում և մարդկանց
ուսերի վերայ են դնում , և իրանց
մատովն չեն ուզում շարժել Նորանց ։
5 Եւ իրանց ամէն գործքերըն[4]
մարդկանց ցոյց տալոյ համար են ա-
նում • իրանց գրապանակներըն[5] (օ-
րէնք յիշելոյ գէրերըն) լայնացնումեն •
և իրանց շորերի ծայրըն երկայնաց-
նումեն ։
6 Սեղան նստելոյ ժամանակն սի-
րումեն վերևի տեղերըն[6] , ժողով-
բանների միջումն առաջին աթոռնե-
րըն , և փողոցների միջումն բարև
առնելըն ։
7 Եւ մարդկանցից Ռաբբի Ռաբ-
բի կոչվելըն ։
8 Ա՛յց դուք մըրնին Վարդապետ
չը՛կանչէք[7] • պատճառն որ ձեր Ու-
վորցնօղն մին է • և դուք ամէն-
քըդ եղբարք էք ։
9 Եւ երկրիս վերայ մըրնին ձեզ
Հայր չը՛կանչէք • ինչուո՛ր ձեր Հայ-
րըն մին է՝ որ երկնքումն է[8] ։
10 Եւ դուք սովորցնօղ չը՛կանչը-
վիք • ինչուո՛ր ձեր Սովորցնօղն
Քրիստոսն է ։
11 Եւ նա՝ որ ձեր միջումն մեծ
է , ձեզ ծառայ պիտի լինի[9] ։
12 Ո՛վ որ իրան անձըն կըբարձ-

(24) Սաղ · ճժ · 1 ։ Գործ · բ · 34 ։ ա Կորնթ · ժե · 25 ։ Եբր · ա · 13 ։ ժ · 12 , 13 ։ (25) Հով · ժդ · 6 ։ (26) Մարկ · ժբ · 34 ։ Հով · ի · 40 ։ (1) Նեհ · բ · 4 · 8 ։ Սաղ · բ · 7 ։ Մարկ · ժբ · 38 ։ Հով · ի · 45 ։ (2) Հռոմ · բ · 19 , Եսայի ։ (3) Հով · ժա · 46 ։ Գործ · ժե · 10 ։ Գաղ · գ · 13 ։ (4) Մատթ · գ · 1 , 2 · 5 · 16 ։ (5) Թուոց · ժե · 38 ։ բ Օրին · գ · 8 ։ Իսա · գ · 12 ։ Ընտ · գ · 3 ։ (6) Մարկ · ժբ · 38 , 39 ։ Հով · ժա · 43 ։ ի · 46 ։ գ Յովհ · 9 ։ (7) Յով · գ · 1 ։ բ Կորնթ · ա · 24 ։ ա Պետր · ե · 3 ։ (8) Մաղ · ա · 6 ։ (9) Մատթ · ի · 26 , 27 ։

բացընէ՝ կրխոնարհվի[10] · և նա որ իրան անձըն կրխոնարհացնէ՝ կրբարձրանայ :

13 Վա՛յ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ[11] · որ երկնքի արքայութիւնն մարդկանց առաջին փակումէք · դուք չէք մըտնում՝ և նորանց որ մտնումեն՝ թոյլ չէք տալիս որ մտնեն :

14 Վա՛յ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ · որ որբևէրիների տներըն ուտումէք[12] և պատճառներով երկար աղօթք էք անում նրահամար աւելի դատաստան կառնէք :

15 Վա՛յ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ · որ ծով և ցամաք շուռ էք գալիս՝ որ մին մարդ հաւատք բերէք · և երբոր կըլինի , նորան երկու տակ ձեզանից աւելի գեհենի որդի էք անում :

16 Վա՛յ ձեզ կոյր առաջնորդներ[13] որ ասումէք՝ թէ՝ Լա՛ որ տաճարը[14] երդում ուտէ , բան չէ · բայց նա որ ոսկովն երդում ուտէ որ տաճարի մէջն է , պարտական է (անելոյ) :

17 Լնո՛ւիաններ և կուրներ · որն է մեծ , ոսկի՞ն թէ տաճարն՝ որ ոսկուն սրբումէ[15] :

18 Եւ նա որ սեղանովն երդում ուտէ՝ բան չէ · բայց նա որ նորա վերայ լինօղ պատարագովն երդում ուտէ , պարտական է :

19 Չիմարներ և կուրներ · որն է մեծ , պատարագն թէ սեղանն[16], որ պատարագին սրբումէ :

20 Ուրեմն ո՛վ որ սեղանովն երդում կերաւ , նա նորանով՝ և էն ամէն բաներովն երդում կերաւ՝ որ նորա վերայ են :

21 Եւ նա որ տաճարովն երդում կերաւ՝ նորանով և նորա միջումն բնակօղովն երդում կերաւ[17] :

22 Եւ նա որ երկնքովն երդում կերաւ , Աստուծոյ աթոռովն երդում կերաւ[18] , և նորանով էլ՝ որ նորա վերայ նստումէ :

23 Վա՛յ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ · որ անանուխին և սամիթին և չամանին տասանորդ էք տալիս[19] , և թողումէք օրէնքի ծանր ծանր բաներըն[20] դատաստանն , ողորմութիւնըն և հաւատքն · էս պէտք էր անել՝ և էն չըթողել :

24 Կո՛յր առաջնորդներ · որ մժեղներըն քամումէք , և ուղտերըն կուլ էք տալիս :

25 Վա՛յ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ · որ բաժակըն (կոնքըն) և սկաւառակըն (սահանըն) դրսևանց սրբումէք[21] և ներսևանց յափշտակութենով և անկարգութենով լիքն էք :

26 Կո՛յր փարիսեցի՝ առաջ բաժակի և սկաւառակի մէջըն սրբիր , որ նորանց դուրսն էլ սուրբ լինի :

27 Վա՛յ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ · որ նման էք ծեփած գերեզմաններին[22] որ դրսևանց գեղեցիկ են երևում՝ և ներսևանց մեռելների ոսկերքով և ամէն պղծութենով լիքն են :

28 Նոյպէս էլ դուք դրսևանց արդար էք երևում մարդկանց՝ և ներ-

(10) Հովբ · իբ · 29 : Ընտ · ժե · 33 : իթ · 23 : Դ՚տ · ժգ · 11 : ժը · 14 : Յակ · դ · 6 : ա Պետր · ե · 5 : (11) Դ՚տ · ժա · 52 : (12) Մրկ · ժը · 40 : Դ՚տ · ի · 47 : բ Տիմ · գ · 6 : Տիտ · ա · 11 : (13) Մատ · ժե · 14 : Ա՚ստ · 24 : (14) Մատ · ե · 33 , 34 : (15) Ղուկ · Լ · 29 : (16) Ղուկ · իթ · 37 : (17) գ Թագ · ը · 13 : բ Մնաց · գ · 2 : Սամ · իզ · 8 : Ջը · 14 : (18) Մատ · ե · 34 : Սամ · ժա · 4 : Գործ · է · 49 : (19) Դ՚տ · ժա · 42 : (20) ա Թագ · ժե · 22 : Ովսե · գ · 6 : Միք · գ · 8 : Մատ · իբ · 13 : ժը · 7 : (21) Մրկ · է · 4 : Դ՚տ · ժա · 39 : (22) Դ՚տ · ժա · 44 : Գործ · իգ · 3 :

ամենից կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ լիքն էք :

29 Վա՛յ ձեզ կարդացօղներ եւ փարիսեցիներ կեղծաւորներ[23] . որ մարգարէների տապանները շինուածք՝ եւ արդարների գերեզմանները զարդարուածք :

30 Եւ ասուածք , Թէ որ մեր հարանց օրերուն լինէինք , մենք մասնակից չէինք լինիլ մարգարէների արիւնին :

31 Ուրեմն դուք ձեզմանից վկայուածք , Թէ նորանց որդիքն էք՝ որ մարգարէներին կոտորուածին[24] :

32 Եւ դուք ձեր հարանց չափերը լցցրէք[25] :

33 Օ՛ձեր՝ (իժ) օձերի զաւակներ[26]՝ ինչպէս կըփախչիք գեհենի դատաստանից :

34 Վասն որոյ՝ ահա ես ձեզ մօտ մարգարէներ և իմաստուններ և կարդացօղներ կուղարկեմ[27] . և դուք նորանցից կըսպանէք[28] և խաչ կըհանէք՝ և նորանցից ձեր ժողովարանների միջումն կըտանջէք՝ և քաղաքից քաղաք կըհալածէք[29] :

35 Որ էսպէս ձեզ վերայ գայ ամէն արդար արիւնը[30] որ երկրի վերայ թափվել է . արդար Աբելի[31] արիւնից մինչև Խարաքիայի որդի Զաքարիայի արիւնն[32] , որ Նորան տաճարի և սեղանի մէջ սպանեցիք :

36 Ճշմարիտ ասուածմամ ձեզ . որ Յն ամէնն կըգայ էս ազգիս վերայ :

37 Երուսաղէմ՝ Երուսաղէմ՝ որ մարգարէները կոտորուածիր[33] , և քեզ մօտ ուղարկուածներըն քարկոծուածիր[34] . քանի՛ անգամ կամեցայ քո երեխաներըն ժողովել[35] . ինչպէս որ հաւն իրան ձագերըն թեւերի տակն է ժողովում[36] , և դուք չըկամեցաք :

38 Ահա ձեր տունն աւերված կըթողվի ձեզ :

39 Վասն ասուածմամ ձեզ . Թէ ՚ի միկուց եւս էլ չէք տեսնիլ ինձ՝ մինչև որ ասէք . Օրհնեալ է Տէրն անունով եկածն[37] :

ԳԼ · ԻԳ

1 Վերիսոս տաճարին կործանիլին առաջուց է ասում . 3 Թէ Նորանից առաջ ինչ և որպես մեծ նեղութիւններ կըլինին . 29 Եւ Թէ իրան դատաստանի գալըն նշաններն ինչ են , 36 Եւ էն օր և էն ժամ յայտնի չէ . 42 Պէտք է որ բարի ծառաների պէս արթուն կենանք , ամէն ժամումն մեր Տէրոջ գալըն սպասելով :

1 Ա՛ն Յիսուս տաճարիցն դուրս եկաւ գնումէր[1] և աշակերտներն մօտ եկին՝ որ տաճարի շինուածքն ցոյց տան Նորան :

2 Եւ նա պատասխան տուաւ՝ և ասաց Նորանց . Տեսնումք էդ ամէնն չե՞ . Ճշմարիտ ասումեմ ձեզ . որ Յդ տեղ քար քարի վերայ չի՛ մնալ որ չըքանդվի[2] :

3 Եւ երբոր Ձիթենեաց սարի վերայ նըստած էր , աշակերտներն առանձին Նորա մօտ[3] եկին՝ և ասացին .

(23) Ղ՚ուկ . ժա . 47 : (24) Գործ . է . 51 , 52 : ա Թես . բ . 15 : (25) Ծննդ . ժե . 16 : ա Թես . բ . 16 : (26) Մատթ . գ . 7 : ժբ . 34 : (27) Մատթ . իա . 34 , 35 : Ղ՚ուկ . ժա . 49 : (28) Գործ . է . 40 : ը . 58 , 59 : իբ . 19 : (29) Մատթ . ժ . 17 : բ Կորնթ . ժա . 24 , 25 : (30) Հայտ . ժը . 24 : (31) Ծննդ . գ . 8 : ա Յովհ . գ . 12 : (32) բ Պետ . իդ . 20 , 21 : (33) Ղ՚ուկ . ժգ . 34 : (34) բ Պետ . իդ . 21 : (35) բ Օրէն . ը . 11 , 12 : (36) Սաղմ . ժէ . 8 : ղա . 4 : (37) Սաղմ . ճժը . 26 : Մատթ . իա . 9 : (1) Մատթ . ժգ . 1 : Ղ՚ուկ . իա . 5 : (2) Դ Թագ . թ . 7 : Երեմ . իզ . 18 : Միք . գ . 12 : Ղ՚ուկ . ժթ . 44 : (3) Մատթ . ժգ . 3 :

Ըսա մեզ՝ • էդ բանդ երբ կըլլինի • կամ թէ գալըդ և աշխարհքիս վերջին նշանն ի՞նչ է :

4 Յիսուս պատասխան տուաւ՝ և ներանց ասաց • Ողջ կացէք որ չըլինի թէ մինն խաբէ ձեզ՝ :

5 Ինչուոր՝ շատ մարդիք կըգան իմ անունովս և կասեն՝ թէ ես Քրիստոսն եմ[6] • և շատերըն կըմոլորացընեն[7] :

6 Կռիւներ և կռիւներու համբաւ լսելու էք • զգոյշ կացէք , մի՛ շփոթվիք • ինչու որ՝ էն ամէն բաներն պէտք է լինին • միայն թէ դեռ վերջն չէ :

7 Ազգ ազգի վերայ վերկըկենայ[8] , և թագաւորութիւն թագաւորութեան վերայ • և սովեր կըլինին • և սաստիկ մահեր՝ և տեղ տեղ երկրի շարժմունքներ :

8 Էայց դեռ էն ամէնն՝ նեղութեանց սկիզբն է :

9 Էն ժամանակն ձեզ նեղութեանց մէջ կըբռնեն[9] • և ձեզ կըսպանեն , և իմ անունիս համար ամէն ազգերին ատելի կըլինիք :

10 Եւ էն ժամանակն շատեր կըգայթակղվին[10] • և իրար կըմատնեն և իրար կատեն :

11 Եւ շատ սուտ մարգարէք դուրս կըգան[11] և շատերըն կըմոլորացընեն[12] :

12 Եւ անօրէնութեան շատանալը պատճառաւն՝ շատերի սէրն կըցամաքի :

13 Էայց ով որ մինչև վերջն կըհամբերէ[13] , նա կապրի :

14 Եւ էս արքայութեան աւետարանս[14] ամէն աշխարհքումն կըքարոզվի[15] որ ամէն հեթանոսներին վըկայութիւն լինի՝ և յետոյ վերջն կըգայ :

15 Ուրեմն՝ երբոր աւերածի պղծութիւնն[16] տեսնէք , որ Դանիէլ մարգարէի ձեռքովն ասված է[17] Որ սրբութեան տեղումն կըկանգնի • ով որ կարդայ թող միտք առնէ[18] :

16 Էն ժամանակն նորանք՝ որ Հրէաստանումն (Ջհուդաստանումն) են , թող սարերն փախչին :

17 Եւ ով որ կըտրի վերայ կայ՝ թող վեր չըգայ , որ իրան տանիքըն մին բան վեր առնէ :

18 Եւ ով որ յանդումն է՝ թող յետ չէ դառնայ որ իրան շորերըն վերառնէ :

19 Էայց էն օրերումն վայ կըլինի յղացածներին և ծիծ տուօղներին[19] :

20 Աղօթք արէք՝ որ էն ձեր փախչելն ձմեռան ժամանակումն և շաբաթ օրումն չըլինի :

21 Պատճառնոր՝ էն ժամանակն մեծ նեղութիւն կըլինի[20] • ինչպէս որ աշխարհքիս ստեղծագործութեան ըսկիզբեցն մինչև հիմիկ չէլաւ՝ և էլ չի լինիլ :

22 Եւ թէ որ էն օրերն չըկարճանային , իսկի մին մարմին չէր ապրիլ •

(1) ա Թես • ե • 1 : (5) Լուս • ե • 6 : Կող • բ • 8 • 18 : բ Թես • բ • 3 : ա Հովհ • դ • 1 : (6) Երեմ • ժգ • 14 : իգ • 21 • 25 : Վայր • 24 : Հովհ • ե • 43 : (7) Վայր • 11 : (8) բ Մնաց • ժե • 6 : Նաում • ժԹ • 2 : Ընդ • բ • 22 : Օսէ • ժգ • 13 : (9) Մատթ • ժ • 17 : Մարկ • ժգ • 9 : Ղուկ • իա • 12 : Հովհ • ժե • 20 : ժգ • 2 : Պետր • դ • 2 , 3 : ե • 59 • ժբ • 1 : ա Պետր • գ • 16 : Հայտ • բ • 10 • 13 : (10) Մատթ • ժա • 6 • ժգ • 57 : բ Տիմ • ա • 15 • գ • 10 • 16 : (11) Մատթ • ե • 15 : Պետր • ի • 29 : բ Պետր • բ • 1 : (12) ա Տիմ • գ • 1 : Վէր • 5 : Վայր • 24 : (13) Մատթ • ժ • 22 : Մարկ • ժգ • 13 : Նբր • գ • 6 • 14 : Հայտ • բ • 10 : (14) Մատթ • գ • 23 : Թ • 35 : (15) Մարկ • ժգ • 15 : Հռովմ • ժ • 18 : Կող • ա • 6 • 23 : (16) Մարկ • ժգ • 14 : Ղուկ • իա • 20 : (17) Դան • Թ • 27 : ժբ • 11 : (18) Դան • Թ • 23 • 25 : (19) Ղուկ • իգ • 29 : (20) Դան • Թ • 26 : ժբ • 1 : Հովհ • բ • 2 :

բայց ընտրվածներին համար էն օրերին կրկարճանան[21] :

23 Ի՛ն ժամանակն թէ որ միւնն ասէ ձեզ[22]՝ Ա՛յս էստեղ է Քրիստոսն կամ էնտեղ , մի՛ հաւատաք :

24 Ինչուոր՝ սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ դուրս կըգան[23]՝ և շատ մեծ նըշաններ և հրաշքներ ցոյց կըտան , մինչև որ , եթէ կա֊րելի լինէր[24] , ընտրվածներին էլ կըմոլորացնէին :

25 Ա՛յս առաջ ասացի ձեզ :

26 Ա՛պա թէ որ ասեն ձեզ . Ա՛յս անապատումն (չօլումն) է՝ դուրս չը՛գաք . և թէ Ա՛յս տան ներսն է՝ չը՛հաւատաք :

27 Պատճառնոր՝ ինչպէս կայծակն՝ որ արևելքից դուրս կըգայ մինչև արևմուտքն կերևի , էնպես էլ Որդոյ մարդոյ գալն կըլինի[25] :

28 Ինչուոր՝ որ տեղ մեռած մարմին կը լինի[26] , էն տեղ կըհաւաքվին արծիւներն :

29 Շուտով էն նեղութեան օրերից[27] հետո՝ արեգակն կըխաւարվի[28] . և լուսինն իրան լոյսն չի տալ . և աստեղներն երկնքից վեր կընկնին , և երկնքի զօրութիւնները կըշարժվին :

30 Եւ յետոյ Որդոյ մարդոյ նշանն[29] երկնքումն կերևի և էն ժամանակն երկրի ամեն ազգերն լաց կըլինին[30] . և Որդին մարդոյ կըտես֊նեն երկնքի ամպերին վերայ եկած զօրութենով և շատ փառքով[31] :

31 Եւ իրան հրեշտակներն մեծ փողով կուղարկէ[32] . և իրան ընտրվածներին կըժողովեն չորս կողմից՝ երկնքի մին ծայրից մինչև մէկէլ ծայրն :

32 Ի՛ն թզղի ծառից սովորե֊ցէք[33] առակը՝ որ երբոր նորա ճը֊ղերն կրկակղին , և տերևն կըբուս֊նէ , գիտուէք որ ամառն մօտ է :

33 Ինպես էլ դուք՝ որ ժամանակ էս ամեն բաները կըտեսնէք , իմա֊ցէք որ (էս) դռանն մօտ է[34] :

34 Ճշմարիտ ասումմ ձեզ՝ թէ Ի՛ս պորտս չէ՛ անցկենալ[35] , մինչև էս ամենս լինի :

35 Երկինքն և երկիրս անց կը֊կենան՝ և իմ խօսքերս չեն անց կենալ[36] :

36 Մ՛իայն թէ էն օրին և ժամին (սահաթին) համար՝ ո՛չ ով չի գի֊տում[37]՝ ո՛չ երկնքի հրեշտակներն՝ և ո՛չ Որդին՝ բայց միայն Հա՛յրն[38] :

37 Ինպէս էլ են Նոյի օրերը՝ էնպես էլ կըլինի Որդոյ մարդոյ գալն :

38 Ինչուոր՝ ինչպես որ էն օրերում էին՝ որ ջրհեղեղիցին առաջ կա֊սին[39] , որ ուտումէին և խմումէին , կին էին առնում՝ և մարդոյ էին գնում , մինչև էն օրն , որ Նոյ մտաւ տապանն :

(21) Նոյ • կե • 8 , 9 : Օ՛ս • ժգ • 2 , 3 : (22) Մարկ • ժգ • 21 : Ղ՛ուկ • ժէ • 23 : իա • 8 : (23) ը Օրն • ժգ • 1 : վէր • 5 • 11 : ը Թես֊ • ը • 9 , 10 , 11 : Յայտ • ժգ • 13 : (24) Յովէ • գ • 37 : ժ • 28 , 29 : Հե՛սկ • ը • 28 , 29 , 30 : ը Տի՛տ • ը • 19 : (25) Ղ՛ուկ • ժէ • 24 : (26) Յովբ • լթ • 30 : Ղ՛ուկ • ժէ • 37 : (27) Դան • է • 11 , 12 : (28) Նոյ • ժգ • 10 : Նովէ • լը • 7 : Յովէ • ը • 10 , 31 : գ • 15 : Հա֊ռվ • և • 20 : ը • 9 : Մարկ • ժգ • 24 : Ղ՛ուկ • իա • 25 : Գործ • ը • 20 : Յայտ • գ • 12 : (29) Դան • է • 13 : (30) Օ՛ս • ժը • 12 : (31) Մարկ • ժգ • 27 : Մարկ • ժգ • 26 : Հայտ • ա • 7 : (32) Մարկ • ժգ • 41 : ա Կորնթ • ժե • 52 : ա Թես֊ • գ • 16 : (33) Ղ՛ուկ • իա • 29 : (34) Յով • է • 9 : (35) Մարկ • ժգ • 28 : իգ • 36 : Մարկ • ժգ • 30 : Ղ՛ուկ • իա • 32 : (36) Սաղ • ճբ • 26 : Նոյ • ծա • 6 : Երեմ • լե • 35 , 36 : Մարկ • է • 18 : Մարկ • ժգ • 31 : Ղ՛ուկ • իա • 33 : Երբ • ա • 11 : (37) Մարկ • ժգ • 32 : Գործ • ա • 7 : ա Թես֊ • է • 2 : ը Պետր • գ • 10 : (38) Օ՛ս • ժգ • 7 : (39) Ծննդ • գ • 3 , 4 , 5 : է • 5 : Ղ՛ուկ • ժէ • 26 : ա Պետր • գ • 20 :

39 Եւ ջգիտացին՝ մինչև որ ջըր-
հեղէն եկաւ , և ամենքն վերա-
ուաւ · Էնպէս էլ կըլինի Որդոյ
մարդոյ գալն :
40 Յն ժամանակն Թէ որ երկու
հոգի արտումն լինին՝ մինն կառնըվի՝
և մէկէն կըթողվի[40] :
41 Եւ Թէ որ երկու հոգի մին ջա-
ղացում աղան՝ մինն կառնըվի՝ և
մէկէն կըթողվի :
42 Ընթռնեն կացէք[41] ինչու որ՝
չէք գիտում Թէ ձեր Տէրն ո՞ր ժա-
մումն (սահմանում) կըգայ :
43 Յն իմացէք՝ Թէ որ տան տէրն
գիտենար՝ Թէ գողն գիշերի որ պա-
հումն կըգայ[42] , արԹուն կըկենար
և Թող չէր տալ՝ որ իրան տան տակն
փոս փորէ :
44 Սրահամար դուք էլ պատրաստ
կացէք[43] · ինչուոր՝ էն ժամն (սահ-
մանն)՝ որ դուք չէք սպասիլ , Որդին
մարդոյ կըգայ :
45 Ընպա ով կըլինի էն հաւատա-
րիմ և խմաստուն ծառան[44] որ Նորան
իրան Տէրն՝ իրան ծառաներին վերայ
դրաւ , որ Նորանց կերակուր տայ
իրանց ժամանակումն :
46 Երանի է էն ծառային[45] որ
տէրն երբոր կըգայ , Նորան էնպէս
արած գտնէ :
47 Ա՛շմարիտն ասումեմ ձեզ · Որ
Նորան իրան ամէն ապրանքին վերայ
կըդնէ[46] :
48 Ընպա Թէ որ չար ծառան իրան
սրտումն ասէ , Թէ Յմ տէրս գալըն
ուշանումէ :
49 Եւ սկսէ իրան ընկեր ծառա-
ներըն ծեծել՝ և Հարբեցօղներին
հետ ուտէ և խմէ :
50 Կըգայ էն ծառայի տէրն էն
օրն՝ որ նա չի սպասիլ , և էն ժամն՝
(սահմանն) որ նա չի գիտիլ :
51 Եւ Նորան միջիցն կըկտրէ և
Նորա բաժինըն կնդծաւորներին հետ
կըդնէ · որ էնտեղ լաց և ատամնե-
րի կըրճըտելն կըլինի[47] :

ԿԸ · ԻՆ

1 Տան կուսանաց , 14 Եւ քանքարի առակն : 31 Վէրջի դատաստանի համար ասված խօսքերըն :

1 Յն ժամանակն երկինքի արքա-
յութիւնն կընմանվի տասն կուսա-
նաց · որ իրանց լապտերներըն (ֆա-
նաւներըն) վերկալան՝ և դուրս ե-
կին փեսայի և Հարսի առաջն[1] :
2 Նրանցից հինգն յիմար է-
ին և հինգն իմաստուն[2] :
3 Ձիմարներն լապտերներըն վեր-
առին՝ և ձէթ վեր չառին իրանց
հետ :
4 Նայց իմաստուններն իրանց
լապտերներին հետ ամաններով ձէթ
վերառին :
5 Եւ փեսան որ ուշացաւ՝ ամեն-
քըն թմրեցին և քուն էլան[3] :
6 Կէս գիշերումն ձայն էլաւ՝ Թէ
Ընդ փեսան գալիս է՝ դուրս ելէք
նորա առաջն[4] :
7 Յն ժամանակն ամեն կուսանքն
վերկացան և իրանց լապտերներըն
(ֆանաւներըն) պատրաստեցին[5] :
8 Ձիմարներն ասացին իմաստուն-

(10) Ղ–ի · ԺԸ · 34 , Ե–յն : (11) Մ–որ · ԻԸ · 13 : Մ–ի · Ժգ · 33 , Ե–յն : Ղ–ի · ԻԱ · 36 : (12) Ղ–ի · ԺԸ · 39 : ա Թես . Ե · 2 : բ Պետ . գ · 10 : Հ–ոբ · գ · 3 : Ժգ · 15 : (13) Մ–որ · ԻԸ · 13 : ա Թես . Ե · 6 : (14) Ղ–ի · ԺԸ · 42 : Գործ · Ի · 28 : ա Կորնթ . դ · 2 : Նբր · գ · 5 : (15) Հ–ոբ · Ժգ · 15 : (16) Մ–որ · ԻԸ · 21 · 23 : Ղ–ի · ԻԸ · 29 : (17) Մ–որ · Ը · 12 : ԻԵ · 30 : Ե · 29 , 30 : Հ–ոբ · ԺԸ · 7 : ԻԱ · 2 · 9 : (2) Մ–որ · Ժգ · 47 : ԻԸ · 10 : (3) ա Թես . Ե · 6 : (4) Մ–որ · ԻԹ · 31 : ա Թես . դ · 16 : (5) Ղ–ի · ԺԸ · 35 :

ներին • Ձեր իւղիցն մեզ էլ տուէք • ինչու որ մեր լապտերներն հանգչումեն :

9 Իմաստուններն պատասխան տուին՝ և ասացին • Լինի թէ մեզ և ձեզ հերիք չըլինի • բայց գնացէք ծախողների մօտն և ձեզ համար գնեցէք :

10 Երբոր նորանք գնացին որ գնեն, փեսան եկաւ՝ և պատրաստ կացածներն նորա հետ հարսանիքն մտին՝ և դուռն փակվեցաւ[6] :

11 Յետոյ էն մնկէլ կուսանքն էլ եկին՝ և ասացին • Տէր՝ Տէր՝ բաց մեզ[7] :

12 Նա պատասխան տուաւ և ասաց • Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ Թէ Չեմ ճանաչումեմ ձեզ[8] :

13 Արթուն կացէք[9] • ինչուոր՝ չէք գիտումի ոչ օրն և ոչ ժամուն (ասա Հարկաւ) :

14 Ինչպէս մին մարդ որ հեռու աշխարհք գնալու էլաւ[10] իրան ծառաներըն կանչեց • և իրան ապրանքն նորանց տուաւ :

15 Ումնին հինգ քանքար տուաւ՝ մնկէլնին երկու, և մնկէլնին մին • ամեն մնկին իրան կարողութեան չափովն[11] և գնաց :

16 Նա՝ որ հինգն առաւ, շուտով գնաց՝ էն բանացրուց և ուրիշ հինգ էլ շահվեցաւ :

17 Ընպէս էլ նա՝ որ երկուսն առաւ, ուրիշ երկուս էլ շահվեցաւ :

18 Եւ նա՝ որ մինն առաւ, գնաց, գետինըն փորեց և իրան տիրոջ արծաթըն թաղցրուց :

19 Շատ ժամանակիցետև էն ծառաներնի տէրն եկաւ՝ և նորանցից համար առաւ :

20 Եւ նա՝ որ հինգ քանքար առաւ՝ առաջ եկաւ ուրիշ հինգ քանքար էլ բերաւ՝ և ասաց • Տէր՝ դու ինձ հինգ քանքար տուիր • և ահա ուրիշ հինգ քանքար էլ նորանց վերայ շահվեցայ :

21 Իրան տէրն նորան ասաց • Լաւ, բարի և հաւատարիմ՝ որովհետև էդ քիչ բանումդ հաւատարիմ ես, քեզ շատ բաների վերայ կըդնեմ[12] • մտիր քո տիրոջ ուրախութիւնն[13] :

22 Նա էլ որ երկու քանքար էր առել, առաջ եկաւ և ասաց • Տէր՝ դու ինձ երկու քանքար տուիր • ահա երկու ուրիշ քանքար էլ որ նորանց վերայ շահվեցայ :

23 Իրան տէրն նորան ասաց • Լաւ, բարի և հաւատարիմ[14] • որովհետև էդ քիչ բանումդ հաւատարիմ ես, քեզ շատ բաների վերայ կըդնեմ, մտիր քո տիրոջ ուրախութիւնն :

24 Նա էլ որ մին քանքար էր առել, առաջ եկաւ և ասաց • Տէր՝ գիտումէի որ դու մին քարասիրտ մարդ ես, որ ընձումես էն՝ որ չըսերմիցիր • և էն տեղից հաւաքումես որ չըփռեցիր :

25 Վախեցայ գնացի և քո քանքարդ գետնի մէջ թաքցրի • ապա ահա քունն քեզ :

26 Տէրն պատասխան տուաւ՝ և ասաց նորան • Չար և ծոյլ ծառայ՝ գիտումէիր՝ որ էն տեղից եմ հընձում, որ չըսերմեցի • և էնտեղից եմ հաւաքում՝ որ չըփռեցի :

27 Պէտք էր քեզ՝ որ իմ արծաթըն տար փոխողներին (առաքինեներին) տայիր՝ և ես կըգայի և շահով կառնէի իմըն :

(6) Լուկ • ժգ • 25 : (7) Մատթ • է • 21, 22, 23 : (8) Ովս • ե • 5 : Ընդհակ • ա • 13 : Յովհ • թ • 31 : (9) Մատթ • իդ • 42 • 44 : Մարկ • ժգ • 33 • 35 : Լուկ • իա • 36 : ա Կորնթ • ժգ • 13 : ա Թես • ե • 6 : ա Պետր • ե • 8 : Յայտ • ժգ • 15 : (10) Մատթ • իա • 33 : Լուկ • ժթ • 12 : (11) Հռովմ • ժբ • 6 : ա Կորնթ • ժբ • 7 • 11 • 29 : Եփես • դ • 11 : (12) Մատթ • իդ • 47 : Վարդ • 34 • 36 : Լուկ • ժբ • 44 : իբ • 29, 30 : (13) բ Տիմ • բ • 12 : Եբր • ժբ • 2 : ա Պետր • ա • 8 : (14) Վեր • 21 :

28 Ապա առէք դորանից քանքարըն, և տուէք նորան որ տասն քանքարըն ունի :

29 Ինչուորՙ ամէն ոՙվ որ ունի՝ նորան կըտրվվի և կաւելանայ[15] • և նա որ չունի, նորանից էն էլ որ ունի՝ վեր կառնըվի :

30 Եւ էդ անպիտան ծառայիդ հա-նեցէք դրսի խաւարն[16]՝ որ էնտեղ լաց և ատամների կրճտելն կըլինի :

31 Եւ որ ժամանակ Որդին մարդոյ իրան փառքովն կըգայ[17]՝ և ամէն հրեշտակներն նորա հետ, էն ժամանակն իրան փառաց աթոռին վերայ կընստի :

32 Եւ ամէն ազգերն կըժողովվին նորա առաջին[18] • և նորանց կըջոկէ իրարից[19]՝ ինչպես մին հովիւ (չոպան) որ ոչխարներըն այծերից կըջոկէ :

33 Եւ ոչխարներըն իրան աջ կողմըն կըկանգնացնէՙ և այծերըն ձախ կողմն :

34 Իՙն ժամանակն Թագաւորն կասէ նորանց՝ որ աջ կողմն են, Եկէք՝ իմ Հօրս օրհնըվածներՙ ժառանգեցէք էն արքայութիւնըն[20], որ աշխարհքի սկզբըցից պատրաստված է ձեզ համար[21] :

35 Ինչուորՙ ես սովեցի՝ և տուիք ինձ ուտել[22] • ծարաւեցի՝ և խմացրիք ինձ • օտար էի՝ և ինձ ձեզ մօտ առիք[23] :

36 Մերկ էի՝ և ինձ հագցրիք[24] • հիւանդ էի՝ և ինձ ակն տուիք • բանտի (պընդոնի) մէջ էի՝ և ինձ մօտ եկիք[25] :

37 Իՙն ժամանակն արդարներն պատասխան կըտան նորան և կասեն • Տէրՙ (մենք) Երբ տեսինք քեզ սոված՝ և կերակուր տուինք • կամ ծարաւՙ և խմացրինք :

38 Երբ տեսինք քեզ օտարՙ և մեզ մօտ առինք, կամ մերկՙ և հագցրինք :

39 Երբ տեսինք քեզ հիւանդՙ կամ բանտի մէջՙ և եկինք քեզ մօտ :

40 Թագաւորն էլ պատասխան կըտայՙ և նորանց կասՙ • Ճշմարիտըն ասումեմ ձեզՙ որովհետև էս իմ փոքր եղբայրներիցս մընին արիք[26], ինձ արիք :

41 Իՙն ժամանակն նորանց էլ կասՙ որ ձախ կողմն են • Ինձանից դէն գնացէք անիծածներ[27]՝ յաւիտենական կրակի մէջն[28], որ պատրաստված է Սատանայի և նորա հրեշտակների համար[29] :

42 Ինչուորՙ ես սովեցի՝ և չըտուիք ինձ ուտել • ծարաւեցի՝ և ինձ չըխմացրիք :

43 Օտար էի՝ և ինձ ձեզ մօտ չառիք • մերկ էի՝ և ինձ չըհագցրիք • հիւանդՙ և բանտի (պընդոնի) մէջ էի՝ և ինձ ակն չըտուիք :

44 Իՙն ժամանակն նորանք էլ պատասխան կըտան և կասեն • Տէրՙ (մենք) քեզ երբ տեսինք սոված կամ ծարաւ կամ օտար կամ մերկՙ կամ հիւանդ կամ բանտի մէջՙ և քեզ ծառայութիւն չարինք :

(15) Մատ • ԺԹ • 12 : Մարկ • գ • 25 : Լուկ • ը • 18 : ԺԹ • 26 : Յովհ • ԺԱ • 2 : (16) Մատ • ը • 12 : ԽԱ • 51 : (17) Ծատ • ԺԹ • 5 : Մատ • ԺԶ • 27 • ԺԹ • 28 : Մարկ • ը • 38 : Ղուկ • ա • 11 : ա Թես • դ • 16 : բ Թես • ա • 7 : Յուդ • 14 : (18) Ծատ • ա • 7 : (18) Հռովմ • ԺԹ • 10 : բ Կորնթ • ե • 10 : Ծատ • ի • 12 : (19) Նախ • ի • 38 : ԼԶ • 17 • 20 : Մատ • ԺԹ • 49 : (20) Հռովմ • ը • 17 : ա Պետր • ա • Ե • 9 : գ • 9 : Յատ • իա • 7 : (21) Մատ • ի • 23 • Մարկ • ԺԱ • 40 : ա Կորնթ • բ • 9 : Նէր • ԺԸ • 16 • (22) Նաում • ծը • 7 : Նախ • ԺԸ • 7 : Յով • ա • 27 • (23) Նէր • ԺԳ • 2 : գ Յովհ • 5 : (24) Յով • բ • 15, 16 : (25) Բ Տիմ • ա • 16 : (26) Ըհռով • ԺԳ • 31 : ԺԹ • 17 : Մատ • ԺԱ • 42 : Մարկ • թ • 41 : Նէր • ՂԱ • 10 : (27) Սամ • գ • 8 : Մատ • է • 23 : Լուկ • ԺԳ • 27 : (28) Մատ • ԺԳ • 40 • 42 : (29) Բ Պետր • բ • Ե : Յուդ • 6 :

45 Յն ժամանակն պատասխան կը-
տայ նորանց՝ և կասէ · Ո՛չմարիտըն
ասումեմ ձեզ՝ Որովհետև էս փոքըր-
ներիցս մընին չարիք՝ ինձ էլ չա-
րիք[30] :

46 Նորանք կըգնան յաբիտենա-
կան տանջանքն , և արդարներն յա-
բիտենական կեանքն[31] :

ԳԼ · ԻՉ

*3 Իչեաններն Քրիստոսի վերայ խորհուրդ կանեն որ նորան բռնեն և սպանեն : 6 Մին կին Քրիստոսի գլուխն եղով կօծէ : 14 Հուդան Քրիստոսն կըծախէ : 17 Քրիստոս զա-
տիկն կուտէ · 26 Հաղորդութեան խորհուրդն կըհաստատէ : 36 Պարտէզի միջումն կա-
ղօթէ · 47 Նէ մին համբոյրով կը մատնըվի , 57 Կայֆայիային կը տարվի · 69 Պետ-
բոս նորան կուրանայ :*

1 Նէ էլաւ՝ երբոր Յիսուս էս
ամէն խօսքերըս վերջացրուց , իրան
աշակերտներին ասաց :

2 Գիտեմ՝ որ երկու օրիցն ե-
տև զատիկ կըլինի[1] · և Որդին մար-
դոյ կըմատնըվի որ խաչվի :

3 Յն ժամանակն քահանայա-
պետներն և կարդացողներն և ժո-
ղովրդի ծերերն ծողովվեցան[2] քա-
հանայապետի սրաձն՝ որ նորա ա-
նունն Կայիափա էր :

4 Եւ խորհուրդ արին՝ որ ՚նար-
քով Յիսուսին բռնեն և սպանեն :

5 Բայց ասումէին՝ Թէ չիս տօ-
նումն (չանէնք) որ ժողովրդի մէջն
խռովութիւն չըլինի :

6 Երբոր Յիսուս եկաւ Բեթա-
նիա[3] Սիմօն բորոտի տունն[4] ,

7 Նորա մօտ մին կին եկաւ՝ որ
մին շիշով (շը-շայ) թանկագին իւղ
ունէր և (ենտեղ) սեղան նստողնե-
րի միջումն նորա գլխին վերայ թա-
փեց :

8 Երբոր աշակերտներն տեսին[5] ,
բարկացան և ասացին . Ինչո՞ւ էդ
իւղը (ղուբ տեղն) կորաւ :

9 Ինչուո՛ր կարելի էր շատ թանկ
ծախել դրան և աղքատներին տալ :

10 Յիսուս իմացաւ և նորանց ա-
սաց · Ի՞նչու էք էդ կընկանդ նե-
ղութիւն տալիս · դա մին բարի բան
գործեց ինձ վերայ :

11 Ըմէն ժամանակ աղքատներն
ձեզ հետ ունիք[6] բայց ինձ միշտ ձեզ
հետ չունիք[7] :

12 Նորա էդ իւղըդ իմ մարմնոյս
վերայ թափելն՝ իմ թաղիլըս նշա-
նակեց :

13 Բայց ճշմարիտըն ասումեմ ձեզ՝
որ Ըմէն աշխարհի մէջ որ տեղ որ
էս աւետարանս կըքարոզվի , դորա
յիշատակին համար էն էլ կըխօս-
վի՝ որ դա արաւ :

14 Յն ժամանակն տասներկուսիցն
մինն[8] որ Յուդա Իսկարիոտացի էր
անունովն՝ գնաց քահանայապետ-
ների մօտ[9] և ասաց :

15 Ո՞նչ էք կամենում տալ ինձ[10] ·
և ես կըմատնեմ նորան ձեր ձեռքն ·
և նորանք երեսուն արծաթի (փող)
խոստացան նորան :

16 Եւ նրանից հետև յարմար ժա-

(30) Ըմէ · ժղ · 31 : ժէ · 5 : Ջօտ · բ · 8 : Գործ · թ · 5 : (31) Դան · ժբ · 2 : Հովհ · և · 29 : Ձ-ոմ · բ · 7 , Լայն : (1) Մարկ · ժղ · 1 : Ղ-ուկ · իբ · 1 : Հովհ · ժգ · 1 : (2) Մաղ · բ · 2 : Հովհ · ժա · 47 : Գործ · դ · 25 , Լայն : (3) Մարկ · իա · 17 : (4) Մարկ · ժգ · 3 : Հովհ · ժա · 1 , 2 : ժբ · 2 : (5) Հովհ · ժբ · 3 : (6) բ Օբէն · ժէ · 11 : Հովհ · ժբ · 8 : (7) Մարկ · ժբ · 20 : իբ · 20 : Հովհ · ժգ · 33 : ժղ · 19 : ժգ · 5 · 28 : ժէ · 11 : (8) Մարկ · ժգ · 10 : Ղ-ուկ · իբ · 3 : Հովհ · ժգ · 2 · 30 : (9) Մարկ · ժ · 4 : (10) Ջօտ · ժա · 12 : Մարկ · իէ · 3 :

մանակ էր ուզում՝ որ Նորան մատնէ Նորանց ձեռքն :

17 Եւ բաղարջակերաց առաջին օրումն[11] աշակերտներն Յիսուսի մօտ եկին և ասացին . Որ տեղ ես կամիս՝ որ քեզ համար զատիկ ուտելոյ տեղ պատրաստենք :

18 Նա էլ Նորանց ասաց . Երթ-նայք քաղաքն՝ ես անուն մարդոյ մօտ , և Նորան ասացէք . Վարդապետն ասում՝ Իմ ժամանակը մօտացել է՝ զատիկը իմ աշակերտներիս հետ քեզ մօտ կանեմ :

19 Եւ աշակերտներն արին ինչպէս որ Յիսուս հրամայեց Նորանց . և զատիկն պատրաստեցին :

20 Եւ երբոր իրիկուն էլաւ[12] տասներկու աշակերտներին հետ սեղան էր նստել :

21 Եւ երբոր Նորանք դեռ ուտում էին . ասաց՝ Ճշմարիտն ասում եմ ձեզ՝ որ ձեզանից մինն կմատնէ ինձ :

22 Եւ շատ տրտմեցան . և Նորանց ամէն մէկն սկսեցին Նորան ասել . Տէր՝ ընդ թէ ես եմ :

23 Նա պատասխան տուաւ և ասաց . Նա որ ինձ հետ իրան ձեռն սկաւառակի (սահանի) մէջն կմըտցընէ[13] , նա կմատնէ ինձ :

24 Մարդոյ Որդին կերգնայ՝ ինչպէս որ Նորա համար գրված է[14] . բայց վայ էն մարդոյն՝ որ Նորա ձեռնէն Մարդոյ Որդին կմատնուի[15] . լաւ էր Նորան՝ թէ էն մարդն ծընված չըլինէր :

25 Յուդան որ Նորան մատնելու էր՝ պատասխան տուաւ և ասաց . Ո՞վ է եմ ես Տէր՝ Նորան ասաց՝ Դու ասացիր :

26 Եւ դեռ որ Նորանք ուտում էին[16] , Յիսուս հաց առաւ՝ օրհնեց և կտրեց[17] , և աշակերտներին տուաւ՝ և ասաց . Ընդէք կերէք՝ ես է իմ մարմինս[18] :

27 Եւ բաժակն (ըմպան) առաւ՝ գոհացաւ՝ Նորանց տուաւ , և ասաց . Դրանից ամէնքդ խմեցէք[19] :

28 Ինչուղ՝ էդ է իմ արիւնս[20] Նոր ուխտի և պայմանի[21] որ շատերի վերայ թափվում[22] , մեղաց թողութեան համար :

29 Այն թէ ասում եմ ձեզ՝ թէ Արանից ետև որ էն (վազէ) բերքիցն[23] էլ չեմ խմի՝ մինչև էն օրն՝ որ դորան ձեզ հետ նոր խմեմ իմ Հօրս արքայութեան մէջն[24] :

30 Եւ օրհնեցին՝ և դուրս էլան Ձիթենեաց սարն[25] :

31 Յն ժամանակն Յիսուս Նորանց ասաց . Դուք ամէնքդ էս գիշերս[26] կըգայթակղվիք ինձանից[27] . ինչու որ գրված է թէ Հովիւըն (հօտաղն) կըզարկեմ՝ և ցօխ (ախտ) ոչխարներն կըցրվին[28] :

32 Եւ իմ յարութիւն առնելուցն ետև ձեզանից առաջ կըգնամ Գալիլեա[29] :

33 Պետրոս պատասխան տուաւ և ասաց Նորան . Թէև ամէնքն էլ գայթակղվին քեզանից , բայց ես չեմ գայթակղվիլ :

34 Յիսուս Նորան ասաց . Ճշմա-

(11) Նէ · ԺԸ · 6 · 18 : Մարկ · ԺԴ · 12 : Ղուկ · ԻԲ · 7 : (12) Մարկ · ԺԴ · 17—21 : Ղուկ · ԻԲ · 14 : (13) Մատ · ԻԱ · 9 : Ղուկ · ԻԲ · 21 : Յովհ · ԺԳ · 18 · 21 : (14) Մատ · ԻԲ : Նաղ · ԾԳ : Դան · Թ · 26 : Մարկ · Թ · 12 : Ղուկ · ԻԴ · 25 , 26 · 49 : Ղուկ · Ա՛ · 2 , 3 : ԻԶ · 22 , 23 : ա Պետր · Ա՛ · 3 : (15) Յովհ · Ա՛ · 12 : (16) Մարկ · ԺԴ · 22 : Ղուկ · ԻԲ · 19 : (17) ա Կորնթ · Ա՛ · 23 , 24 , 25 : (18) ա Կորնթ · Ա՛ · 16 : (19) Մարկ · ԺԴ · 23 : (20) Նէ · ԻԴ · 8 : Ղուկ · Ա՛ · 11 : (21) Երեմ. ԼԱ · 31 : (22) Մատթ · Ի · 28 : Հռոմ · Ե · 15 : Եբր · Թ · 22 : (23) Մարկ · ԺԴ · 25 : Ղուկ · ԻԲ · 18 : (24) Կորնթ · Ա՛ · 11 : (25) Մարկ · ԺԴ · 26 : (26) Մարկ · ԺԴ · 27 : Յովհ · ԺԶ · 32 : (27) Մատթ · Ա՛ · 6 : (28) Հեսա · ԺԳ · 7 : (29) Մատթ · ԻԸ · 7 · 10 · 16 : Մարկ · ԺԴ · 28 : ԺԶ · 7 :

բիան ասումեմ քեզ . Թէ էս գիշերս՝ դեռ հաւն չը խօսած՝ երեք անգամ կուրանաս ինձ[30] :

35 Պետրոս նորան ասաց . Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ՝ չեմ ուրանայ քեզ . Էնպէս էլ ամէն աշակերտներն էին ասում :

36 Յն ժամանակն Յիսուս նորանց հետ մին գիւղ եկաւ[31] որ Նորա անունն Գեթսեմանի էր՝ և նորանց ասաց . Նդ տեղ նստեցէք . մինչև որ գնամ՝ աղօթք անեմ :

37 Եւ Պետրոսն և Յակոբեթեայի երկու որդիքն[32] իրան հետ առաւ , սկսեց տրտմիլ և հոգս քաշել :

38 Յն ժամանակն նորանց ասաց . Յոմ հոգիս մեռնելոց չափ տրտմած է[33] . էստեղ կացէք և ինձ հետ արթուն մնացէք :

39 Եւ մին քիչ առաջ գնաց՝ իրան երեսին վերայ ընկաւ՝ աղօթք արաւ[34] և ասաց . Յոմ Հայր[35] թէ որ կարելի է թող էս բաժակս[36] (Խաչս) ինձանից անց կենայ . բայց չէ թէ ինչպես ես եմ կամենում՝ այլ ինչպես դու[37] :

40 Եկաւ աշակերտների մօտ , և նորանց քընի մէջ գտաւ՝ և ասաց Պետրոսին . Նդպէս՝ մին ժամ (սաք հալ) էլ չըկարացիք ինձ հետ արթուն կենալ :

41 Ընթուն կացէք՝ և աղօթք արէք՝ որ փորձանքի մէջ չընկնիք[38] . Հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար :

42 Գինել երկրորդ անգամ Յիսուս գնաց և աղօթք արաւ՝ և ասաց . Յոմ Հայր՝ թէ կարելի է , որ էս բաժակս (Խաչս) ինձանից անց կենայ . ապա թէ ոչ՝ կըլամեմ սորան . Թող քո կամքդ լինի :

43 Եւ գինել եկաւ նորանց քընի մէջ գտաւ . ինչուր՝ նորանց աչքերն ծանրացել էին :

44 Նորանց թողնց և գնաց՝ և երրորդ անգամ աղօթք արաւ՝ և միևնոյն էն խօսքն ասաց :

45 Յն ժամանակն աշակերտներին մօտ եկաւ՝ և նորանց ասաց . Նյսուհետև քունն էլէք՝ և հանգիստ առէք . ինչուր՝ ահա հասել է ժամանակն՝ և Որդին մարդոյ մատնըվում մեղաւորաց ձեռքըն :

46 Գեր կացէք գնանք էս տեղից . ինչուր՝ ահա հասաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ :

47 Եւ դեռ քանի որ նա էն խօսումեր , ահա Յուդա՝ էն տասներկուսիցն մինն՝ եկաւ՝ և նորա հետ մեծ ամբոխ (խալխ) սրերով և բէրներով՝ քահանայապետներից և ժողովրդի ծերերից[39] :

48 Եւ նա՝ որ նորան մատնելու էր , նորանց նշան տուաւ և ասաց . Որին որ ես կըհամբուրեմ՝ նա է . նորան բռնեցէք :

49 Եւ շուտով Յիսուսի մօտ եկաւ՝ և ասաց . Ողջ կաց Գաբրաել պետ՝ և նորան համբուրեց[40] :

50 Եւ Յիսուս նորան ասաց . Ընկեր[41] (դու) ինչի համար եկիր . և էն ժամանակն մօտ եկին Յիսուսին ձեռք ձգեցին՝ և նորան բռնեցին :

51 Եւ ահա նորանցից մինն՝ որ Յիսուսի հետ էին , ձեռըն մեկնեց և իրան սուրըն հանեց՝ և քահանայապետի ծառային զարկեց , և նորա ականջըն կտրեց[42] :

(30) Մարկ . ժդ . 30 : Ղուկ . խբ . 34 : Յովհ . ժգ . 38 : (31) Մարկ . ժդ . 32—35 : Ղուկ . խբ . 39 : Յովհ . ժը . 1 : (32) Մատթ . դ . 21 : (33) Յովհ . ժբ . 27 : (34) Մարկ . ժդ . 36 : Ղուկ . խբ . 42 : Եբր . ե . 7 : (35) Յովհ . ժբ . 27 : (36) Մատթ . ե . 22 : (37) Յովհ . ե . 30 : զ . 38 : Փիլիպ . բ . 8 : (38) Մարկ . ժգ . 33 : ժդ . 38 : Ղուկ . խբ . 40 . 46 : Եփես . գ . 18 : (39) Մարկ . ժդ . 43 : Ղուկ . խբ . 47 : Յովհ . ժը . 3 : Գործ . ա . 16 : (40) բ Թագ . ի . 9 : (41) Սամ . խա . 9 : 56 . 13 : (42) Յովհ . ժը . 10 :

52 Յն ժամանակն Յիսուս Նորան ասաց · Ո՛ւր սուրբդ իրան տեղն դիր · պատճառնոր՝ Նորանք որ սուր կառնեն , սրով պիտի ընկնին[42] :

53 Կամ թէ կարծեմես որ չեմ կարող իմ Հօրըս աղաչել և Հիմիկ տասներկու գունդ (պէօլե՛ւ) հրեշտակներիցն աւելի կըՀասցնէ ինձ Էստեղ[44] :

54 Ինչպէս կըկատարվին գըրքերըն՝ թէ Էսպէս պէտք է լինել[45] :

55 Յն ժամանակն Յիսուս Էն ամբոխին (խալխին) ասաց · Ինչպէս մին աւազակի վերայ սրերով և բՀըրներով դուրս եկիք ինձ բռնել · միշտ ձեզ Յօտ տաճարումն նստումէի՝ և սովորցնումէի՝ և չբըռնեցիք ինձ :

56 Ինչ էս ամէնս էլաւ՝ որ մարգարէների գրքերն կատարվին[46] . Էն ժամանակն ամէն աշակերտներն Նորան թողուն և փախան[47] :

57 Ինչ Նորանք Յիսուսին բըռնեցին և տարան Կայիափա քահանայապետին մօտն[48] , որ տեղ որ կարգացողներն և ծերերն ժողովված էին :

58 Եւ Պետրոս Հեռուանց գնումէր Նորա ետևէն մինչև քահանայապետի սրահն , և ներս մտաւ ծառաներին Հետ նստեց՝ որ վերջըն տեսնէ :

59 Ինչ քահանայապետներն և բոլոր տիւանն Յիսուսի Համար սուտ վկայութիւն էին ուզում՝ որ Նորա սպանեն :

60 Եւ Էն շատ սուտ վկաներիցն որ Էն տեղ էին եկել[49] , բան չէին գտնում · յետոյ երկու սուտ վկաներ առաջ եկին[50] :

61 Ինչ ասումէին՝ թէ Այ ասումէր՝ ես կարող եմ Յստուծոյ տաճարըն քանդել՝ և երեք օրումն շինել[51] :

62 Եւ քահանայապետն վերկացաւ Նորան ասաց · Պատասխան չես տալիս՝ ինչ որ դորանք քեզանից գանգատումեն[52] :

63 Եւ Յիսուս լուռ էր կենում[53] · քահանայապետն պատասխան տըւաւ , և Նորան ասաց · Կենդանի Յստուծոյն եմ երդում տալիս[54] քեզ՝ որ ասես մեզ՝ թէ Դո՛ւ ես որդի Յստուծոյ Քրիստոսն :

64 Նորան ասաց · Դու ասացիր · բայց ասումեմ ձեզ՝ որ Հիմիկուց և տև կըտեսնէք Որդին մարդոյ[55] (Յստուծոյ) զօրութեան ալ կողմն նըստած՝ և երկնքի ամպերին վերայ եկած[56] :

65 Յն ժամանակն քահանայապետըն իրան շորերըն պատառեց[57] և ասաց · Ֆայհոյեց · էլ ի՞նչ պէտք մեզ վկայ · ահա Հիմիկ դորա հայհոյանքն լսեցիք :

66 Ի՞նչ Հաճոյ է ձեզ · Նորանք պատասխան տուին՝ և ասացին · (Դա) մահապարտ է[58] :

67 Յն ժամանակն թքեցին Նորա երեսին[59] · և բըռնցքով Հարեցին · և մին քանիսն էլ ապտակ[60] (չէլէք) տուին Նորան , և ասացին :

(43) Նահանգ · Թ · 6 : Հոյակ · ժգ · 10 : (44) գ Թագաւ · զ · 17 : Դատ · է · 10 : (45) Լուսաւ · ծգ · 7 , Լայն : վէր · 24 : Ղուկ · իդ · 25 · 44 · 46 : (46) Ողբ · գ · 20 : վէր · 54 : (47) Հովհ · ժը · 15 : (48) Մարկ · ժգ · 53 : Ղուկ · իբ · 54 : Հովհ · ժը · 12 , 13 · 24 : (49) Մատթ · իե · 12 · լե · 11 : Մարկ · ժգ · 55 : Գործ · զ · 13 : (50) բ Օրէն · ժը · 15 : (51) Մատթ · իե · 40 : Հովհ · բ · 19 : (52) Մարկ · ժգ · 60 : (53) Լուսաւ · ծգ · 7 : Մատթ · իե · 12 · 14 : (54) Ղևտ · ե · 1 : ա Թագաւ · ժգ · 24 · 26 : (55) Դան · է · 13 : Մատթ · ժզ · 27 : իդ · 30 : իե · 31 : Ղուկ · իա · 27 : Հովհ · ա · 51 : Ֆոսէի · ժգ · 10 : ա Թես · գ · 16 : Հայոց · ա · 7 : (56) Սաղ · ճժ · 1 : Գործ · է · 55 : (57) գ Թագաւ · ժը · 37 · ժթ · 1 : (58) Ղևտ · իդ · 16 : Հովհ · ժը · 7 : (59) Լուսաւ · ծ · 6 : ծգ · 3 : Մատթ · իե · 30 : (60) Ղուկ · իբ · 63 : Հովհ · ժթ · 3 :

68 Ասա՛ Մարգարէացի՛ր մեզ՝ նա՛ ով է որ քեզ զարկից[61]։
69 Եւ Պետրոս դուրսն նստած էր սրահումը[62]. մին աղախին (աղջա՜կ) նորա մօտ եկաւ, և ասաց. Դու էլ էն Յիսուս Գալիլեացոյ հետն էիր։
70 Նա ամէնի առաջին ուրացաւ՝ և ասաց. Չեմ գիտում թէ դու ինչ ես խօսում։
71 Եւ երբոր նա դռնիցն դուրս գնաց, մին ուրիշ կին նորան տեսաւ՝ և նորանց որ էն տեղ կային ասաց. Սա էլ Յիսուս Նազորեցոյ հետն էր։
72 Եւ մինէլ երդումով ուրացաւ՝ թէ ես էն մարդըն չեմ ճանաչում։
73 Եւ մին քիչ յետոյ՝ նորանք որ էնտեղ կանգնած էին, եկին Պետրոսին ասացին. Իրաւի որ դու էլ նորանցից ես. ինչուո՛ր՝ քո խօսքդ էլ յայտնումէ քեզ[63]։
74 Ին ժամանակն սկսեց անիծել և երդվել[64] թէ ես էն մարդըն չեմ ճանաչում, և շուտով հաւն կանչեց։
75 Եւ Պետրոս յիշեց Յիսուսի էն խօսքըն՝ որ ասաց. Թէ հաւն դեռ չըկանչած՝ երեք անգամ կուրանաս ինձ[65]. և դուրս գնաց դառն արտասունքով լաց եղաւ։

ԻԶ · ԻՆ

1 Երիսոսի կապած Պիղատոսի մատնըվիլն։ 3 Հուդան իրան ձեռնոնվ է խեղդում. 19 Պիղատոս իրան կընոյ խրատվելով, 24 Ձեռներըն կըլուայ. 26 Եւ Խարաբբային կարձակէ։ 29 Երիսոսի փշերով պսակվիլն, 34 խոչվիլն, 40 նախատվիլն, 50 Սպնիլ, և թաղվիլն. 66 Իրան գերեզման կըկնքվի և պահապաններ կըդրվի։

1 Երբոր առաւօտ եղաւ, ամէն քահանայապետներն և ժողովրդի ծերերն Յիսուսի համար խորհուրդ արին՝ որ սպանեն նորան[1]։
2 Նորան կապեցին, և առին գնացին, և Պոնտացի Պիղատոս դատաւորի ձեռքն տուին[2]։
3 Ին ժամանակն Հուդան՝ որ նորան մատնեց՝ տեսաւ որ դատապարտվեցաւ, զղջացաւ՝ և էն արծաթներն յետ դարձրուց քահանայապետներին և ժողովրդի ծերերին[3]։
4 Եւ ասաց. Մեղայ՝ ինչուոր արդար արիւն մատնեցի. Նորանք էլ ասացին՝ Մենք հոգս չունինք. դու գիտես։
5 Եւ արծաթըն քցեց տաճարի մէջն՝ և յետ եկաւ, և գնաց խեղդվեցաւ[4]։
6 Նայց քահանայապետներն էն արծաթըն առին՝ և ասացին. Չրժան չէ որ էդ գանձանակի մէջն ընդունենք, ինչուո՛ր արիւնի գին է։
7 Խորհուրդ արին՝ և նորանով բրուտի արտատեղն գնեցին՝ որ օտարականների գերեզմանատեղ լինի։
8 Ս՛րահամար՝ էն արտատեղն Արիւնի արտ կոչվեցաւ մինչև էս օր[5]։
9 Ին ժամանակն կատարվեցաւ էն՝ որ Երեմիա մարգարէի ձեռովն

(61) Մատ. ժգ. 65։ Ղուկ. իբ. 64։ (62) Մատ. ժգ. 66։ Ղուկ. իբ. 55։ Յովհ. ժը. 16, 17. 25։ (63) Ղուկ. իբ. 59։ (64) Մատ. ժգ. 71։ (65) վէր. 34։ Մատ. ժգ. 30։ Ղուկ. իբ. 61, 62։ Յովհ. ժգ. 38։ (1) Մատ. բ. 2։ Մատ. ժե. 1։ Ղուկ. իբ. 66։ (2) Մատ. ի. 19։ Ղուկ. իգ. 1։ Յովհ. ժը. 28։ Կորնթ. գ. 13։ (3) Մատ. իզ. 14, 15։ (4) Բ Թագ. ժե. 23։ Կորնթ. ա. 18։ (5) Կորնթ. ա. 19։

ասվեցաւ · Եւ էն երեսուն արծաթի փողըն առին՝ էն ծախվածի գինըն՝ որ Նորան Իսրայէլի որդիքնէրից առել էին[6] :

10 Եւ Նորան բրուտի արտին տալին՝ ինչպէս որ Հրամայեց ինձ Տէրն :

11 Եւ Յիսուս կանգնեց դատաւորի առաջին · դատաւորն հարցրուց Նորան՝ և ասաց[7] · Դո՞ւ ես Հրէից (Ջհու-պնէրի) թագաւորն · և Յիսուս ասաց · Դու ես ասում :

12 Եւ երբոր քահանայապետներն և ծերերն Նորանից չարախօսուածին էին անում , նա իսկի պատասխան չըտուաւ[8] :

13 Էն ժամանակն Պիղատոս ասաց Նորան · Ձեզ լսում թէ դորանք ո՞րչափի քեզ վկայում են վկայում[9] :

14 Եւ Նորան իսկի մին բան էլ պատասխան չըտուաւ · մինչև որ դատաւորն էլ շատ զարմացաւ :

15 Էտց սովորութիւն էր դատաւորին՝ որ տոնի ժամանակումն մին բանտարկեալ[11] արձակէ ժողովրդին համար · որին որ ուզում էին :

16 Էն ժամանակն մին անուանի բանտարկեալ ունէին · որ Նորա անունն Յեսու Խարաբբա էր :

17 Երբոր հաւաքվեցան , Պիղատոս Նորանց ասաց · Էս երկուսից ո՞րն էք ուզում՝ որ ձեզ համար արձակեմ · Յեսու Խարաբբային , թէ Յիսուսին , որ Քրիստոս է կոչված :

18 Պատճառնոր՝ գիտումէր՝ որ նախանձով էին մատնել Նորան :

19 Եւ դեռքանի որ դատաստան էր Նստած , Նորա կինն ուղարկեց Նորա մօտ՝ և ասաց · Էդ արդար մարդոյ հետ դու բան չունիս · ինչուր՝ շատ բաներ երազումն էս օր իմ գլխովս անցկացան Նորա համար :

20 Էտց քահանայապետներն և ծերերն՝ ժողովուրդներին հաւատացորին՝ որ Խարաբբային ուզեն՝ և Յիսուսին կորցնեն[12] :

21 Պատասխան տուաւ դատաւորն և ասաց Նորանց՝ Էս երկուսից ո՞րը էք ուզում՝ որ արձակեմ ձեզ համար · և Նորանք ասացին՝ Խարաբբային :

22 Պիղատոս ասաց Նորանց · Ը՞պա ի՞նչ անեմ Քրիստոս կոչված Յիսուսին :

23 Ամէնքն ալ ասացին · Պէտք է խաչվի · և Նա ասաց · Ո՞նչ չար բան է արել · և Նորանք էլ աւելի աղաղակումէին և ասում՝ Պէտք է խաչվի :

24 Եւ Պիղատոս երբոր տեսաւ՝ թէ իսկի օգուտ չէ անում , բայց աւելի խռովութիւն է լինում , ջուր առաւ՝ ժողովրդի առաջին ձեռնները լուաց[13] և ասաց · Ես էդ արդարիդ արիւնից անպարտ եմ , դուք գիտէք :

25 Ամէն ժողովուրդն պատասխան տուաւ և ասաց · Նորա արիւնն մեզ վերայ և մեր որդոց վերայ[14] :

26 Էն ժամանակն Խարաբբային արձակեց Նորանց համար , և Յիսուսին ծեծեց[15] , և ձեռները տուաւ՝ որ խաչվի :

27 Էն ժամանակն դատաւորի զինուորներն Յիսուսին տարան պալատն[16] , և ամէն զինուորների գունդը (պէօլյուքը) հաւաքեցին Նորա

(6) Զաք . ժա . 12 , 13 : (7) Մարկ . ժե . 2 : Ղուկ . իգ . 3 : Յովհ . ժը . 33 : (8) Յովհ . ժը . 37 : ա Տիմ . գ . 13 : (9) Մատթ . իզ . 63 : Յովհ . ժթ . 9 : (10) Մատթ . իշ . 62 : Յովհ . ժթ . 10 : (11) Մարկ . ժե . 6 : Ղուկ . իգ . 17 : Յովհ . ժը . 39 : (12) Մարկ . ժե . 11 : Ղուկ . իգ . 18 : Յովհ . ժը . 40 : Գործ . գ . 14 : (13) բ Օրէն . իա . 6 : (14) բ Օրէն . ժթ . 10 : Յեռ . բ . 19 : բ Թագ . ա . 16 : գ Թագ . բ . 32 : Գործ . ե . 28 : (15) Լուսաւ . ծգ . 5 : Մարկ . ժե . 15 : Ղուկ . իգ . 16 . 24 , 25 : Յովհ . ժթ . 1 . 16 : (16) Մարկ . ժե . 16 : Յովհ . ժթ . 2 :

28 Նորան մերկացրին՝ և նորա վերայ մին կարմիր քղամիդ[17] (ֆէրաճէ) քացեցին :

29 Եւ փշերից մին թագ[18] բոլորացրին՝ նորա գլուխն դրին , և նորա աջ ձեռին մին եղէգ (ղամչի) . նորա առաջին ծունր դնելով ծաղր էին անում և ասում . Ո՛ղջ կաց Հրէից (Ջհուդանէրէ) թագաւոր :

30 Եւ նորան թքելով՝ էն եղէգըն առնում էին և նորա գլուխըն թակում էին[19] :

31 Եւ երբոր ծաղր արին նորան , էն կարմիր քղամիդն (ֆէրաճէն) նորանից հանեցին՝ և նորան տարան որ խաչ հանեն[20] :

32 Եւ երբոր դուրս էլան[21] , մին Կիւրենացի մարդ գտին՝ Սիմոն անուն[22] . նորան ուժով բռնեցին քաշեցին՝ որ նորա խաչըն վերառնէ :

33 Երբոր Գողգոթա[23] ասված տեղըն եկին , որ գլխատեղ տեղ է ,

34 Նորան լեղով հետ խառնած գինի տուին[24] խմել՝ և երբոր համըն առաւ , չէր կամենում որ խմէ :

35 Եւ երբոր նորան խաչ հանեցին , նորա շորերըն վիճակով բաժանեցին[25] . որ կատարվի էն խօսքն՝ որ մարգարէին ասված էր՝ Թէ իմ շորերս իրանց միջումն բաժանեցին՝ և իմ կապայիս վերայ վիճակ էին քցում[26] :

36 Եւ նստած պահում էին նորան[27] :

37 Եւ նորա վինան (սուչըն) գրըեցին՝ և իրան գլխին վերայ դրին՝ Թէ Այս է Յիսուս Հրէից (Ջհուդանէրէ) Թագաւորն[28] :

38 Էն ժամանակն նորա հետ երկու աւազակներ[29] էլ խաչ հանեցին՝ մինըն նորա աջ կողմն և մէկէլըն նորա ձախ կողմն :

39 Եւ նորանք որ էնտեղից անցկէին կենում , հայհոյում էին նորան[30] . իրանց գլուխներըն շարժում էին ,

40 Եւ ասում էին՝ Վայ որ տաճարըն քանդում էիր՝ և երեք օրում շինում էիր[31] . ապրեցրու քեզ՝ Թէ որ Աստուծոյ Որդին ես , վէր կէկ խաչից[32] :

41 Էնպէս էլ քահանայապետներըն ծաղր էին անում կարգացողներին և ծերերին հետ՝ և ասում էին :

42 Ուրիշներըն ապրեցրուց . ինքն իրան չի կարում ապրեցնել . Թէ որ Իսրայէլի թագաւորն է , հիմիկ թող վէր գայ խաչից , և հաւատանք դորան :

43 Թէ որ Աստուծոյն յուսացաւ[33] , հիմիկ թող փրկէ դորան , Թէ որ ուզում դորան . ինչուր՝ ասաց . Թէ Աստուծոյ Որդի եմ :

44 Էնպէս էլ աւազակներն որ նորա հետ խաչված էին՝ նորա նախատում էին[34] :

45 Եւ օրի վեց ժամիցն (սահաղընդն) մինչև իննն ժամն ամէն երկրի վերայ խաւար էլաւ[35] :

46 Եւ իննն ժամին (սահաղընդն) դէմ , Յիսուս մեծ ձայնով կանչեց և ասաց[36] . Էլի Էլի լամա սաբաքթանի . որ կասվի . Իմ Աստուած՝ իմ

(17) Ղուխ . իգ . 11 : (18) Մաղ . կթ . 19 : Նռայ . ծգ . 3 : (19) Նռայ . ծ . 6 : Մարկ . իվ . 67 : (20) Նռայ . ծգ . 7 : (21) Թագ . ժե . 35 : դ Թագ . իա . 13 : Պռտգ . է . 58 : Նէեր . ժգ . 12 : (22) Մարկ . ժե . 21 : Ղուխ . իգ . 26 : (23) Մարկ . ժե . 22 : Ղուխ . իգ . 33 : Յովհ . ժթ . 17 : (24) Մաղ . կթ . 21 : Վայր . 48 : (25) Մարկ . ժե . 24 : Ղուխ . իգ . 34 : Յովհ . ժթ . 24 : (26) Մաղ . իը . 18 : (27) Վայր . 54 : (28) Մարկ . ժե . 26 : Ղուխ . իգ . 38 : Յովհ . ժթ . 19 : (29) Նռայ . ծգ . 12 : Մարկ . ժե . 27 : Ղուխ . իգ . 32 , 33 : Յովհ . ժթ . 18 : (30) Մաղ . իը . 7 : ճթ . 25 : Մարկ . ժե . 29 : Ղուխ . իգ . 35 : (31) Մարկ . իվ . 61 : Յովհ . բ . 10 : (32) Մարկ . իվ . 63 : (33) Մաղ . իը . 8 : (34) Մարկ . ժե . 32 : Ղուխ . իգ . 39 : (35) Ամվ . ը . 9 : Մարկ . ժե . 33 : Ղուխ . իգ . 44 : (36) Նէեր . է . 7 :

Աստուած՝ ինչո՞ւ թողեր ինձ[37] :
47 Ա՛յն քանի մարդիք Նորանցից՝ որ հնտեղ կանգնած էին՝ երբոր լսեցին, ասումէին՝ Ա՛ա Եղիային է կանչում :
48 Եւ շուտով Նորանցից մինն վազեց՝ սպունգ (սֆնդէր) քացախով լիքն առաւ՝ եղէգի (ղամըշ) վերայ անցրուց՝ և Նորան տուաւ, որ խըմէ[38] :
49 Եւ կէսն ասումէին . Թո՛ղ տեսնենք . եթէ Եղիան կըգայ Դորան փրկել :
50 Եւ Յիսուս մինէլ մեծ ձայնով կանչեց՝ և արձակեց Հոգին[39] :
51 Եւ ահա տաճարի վարագուրն երկու (կտոր) ձղվեցաւ վերէնից մինչև ցածն[40], և երկիրն շարժվեցաւ . և քարեր պատռտվեցան :
52 Եւ գերեզմաններ բաց էլան . և շատ մարմիններ սուրբ ննջեցելոց յարութիւն առին :
53 Եւ գերեզմաններից դուրս ե՛լ կին Նորա յարութենից ետև՝ սուրբ քաղաքն մտին՝ և շատերին երևեցան :
54 Հայց հարիւրապետն և Նորանք՝ որ Նորա հետ Յիսուսին պահումէին[41], երբոր էն շարժմունքըն և էն էլածներըն տեսին, շատ վախեցան և ասացին . Ա՛շմարիտ որ սա Աստուծոյ Որդի էր :
55 Էն տեղ շատ կանայք կային՝ որ հեռուանց կանգնել էին՝ և մոիկ էին տալիս . որ Գալիլեայից Յիսուսի ետևէն եկին որ ծառայութիւն անեն Նորան[42] :
56 Որանց միջումն էր Մարիամ Մագդաղենացին՝ և Մարիամ Յակոբի և Յոսէի մայրն[43] և Զեբեդիայի որդոց մայրն :
57 Եւ երբոր իրիկուն էլաւ Արիմաթեայից մին հարուստ մարդ եկաւ՝ որ Նորա անունն Յոսէփ էր[44], որ ինքն էլ աշակերտ էլած էր Յիսուսին :
58 Սա գնաց Պիղատոսի մօտ՝ և Յիսուսի մարմինն խնդրեց . Էն ժամանակն Պիղատոս հրամայեց՝ որ մարմինըն տան :
59 Եւ Յոսէփն մարմինըն առաւ՝ յիստակ կտաւներով պատանեց,
60 Եւ (մին) նոր գերեզմանի մէջ դրաւ՝ որ քարի մէջն փորել էր[45] . և գերեզմանի դուռն առաջին մին մեծ քար գցեց (Նորան) փակելոյ համար . և գնաց :
61 Էն տեղ էր Մարիամ Մագդաղենացին և մէկէլ Մարիամն, որ դերեզմանին դէմ նստած էին :
62 Եւ նորա հագուցվան օրումն՝ որ ուրբաթին ետև է, քահանայապետներն և փարիսեցիներն հաւաքվեցան Պիղատոսի մօտ :
63 Եւ ասացին . Տէր մաքներս բերինք, որ էն մոլորացնօղն դեռ քանի որ կենդանի էր, ասումէր . Թէ Երեք օրիցն ետև յարութիւն կառնեմ[46] :
64 Ուրեմն հրաման տուր . որ մինչև երեք օր գերեզմանըն զգուշութենով պահեն . որ չըլինի թէ աշակերտներն գիշերն գան Նորան գողանան՝ և ժողովըրդին ասեն՝ թէ Մեռելների միջից յարութիւն առաւ, և յետին մոլորութիւնն չար լինի քանթէ առաջինն :
65 Պիղատոս ասաց Նորանց . Պա-

(37) Սաղ . խբ . 1 : (38) Սաղ . կթ . 21 : Մարկ . ժե . 36 : Ղուկ . իգ . 36 : Յովհ . ժթ . 29 : (39) Մարկ . ժե . 37 : Ղուկ . իգ . 45 : (40) Ելք . իզ . 31 : բ Մնաց . գ . 14 : Մարկ . ժե . 38 : Ղուկ . իգ . 45 : (41) Վէր . 36 : Մարկ . ժե . 39 : Ղուկ . իգ . 47 : (42) Ղուկ . ը . 2 , 3 : (43) Մարկ . ժե . 40 : (44) Մարկ . ժե . 43 : Ղուկ . իգ . 50 : Յովհ . ժթ . 38 : (45) Եսայ . ծգ . 9 : (46) Մատթ . ժղ . 21 . ժե . 23 . ի . 19 . իշ . 61 : Մարկ . ը . 31 . ժ . 34 : Ղուկ . ժ . 22 . ժը . 33 . իգ . 6 , 7 : Յովհ . բ . 19 :

Հապան զինուորներ ունիք . գնացէք զգոյշ պահեցէք ինչպէս որ գիտուիք ։

66 Նորանք էլ գնացին գերեզմանին պահպանութիւն արին , և պատին զինուորներուն հետ քարըն կնքեցին[47] (Ղուկ. ԻԳ. 56) ։

ԿԱ· ԻՐ

1 Հրեշտակն Յիսուսի յարութեան համար կանանցն աւետիս կըտայ ։ 9 Յիսուս Նոյեանց կըպատահէ ։ 11 Քահանայապետներն զինուորներին փող կըտան , որ ասեն թէ՝ Նոյեան գերեզմանից գողացան ։ 16 Յիսուսի իրան աշակերտներին երևնալն , 19 և Նոյեանք հինգ հանեն աշակերտելոյ և Նոյեանք մկրտելոյ ուղարկելն ։

1 Եւ շաբաթ իրիկունն՝ որ մէկ շաբթի էր լուսանում[1] , Մարիամ Մագդաղենացին եկաւ՝ և մէկել Մարիամն[2] էլ , որ գերեզմանըն տեսնեն ։

2 Եւ մեծ շարժումն էլաւ՝ ինչուր՝ Տէրի հրեշտակն երկնքիցն վէր եկաւ՝ գնաց գռնիցն էն քարըն հետու թօղարաւ՝ և նորա վերայ նստեց[3] ։

3 Եւ նորա կերպարանքն փայլակի պէս էր՝ և նորա հագուստն ձիւնի պէս սպիտակ[4] ։

4 Եւ նորա ահիցն պահապաններըն շփոթվեցան , և մեռելի նման էլան ։

5 Հրեշտակն պատասխան տուաւ՝ և էն կանանցն ասաց · Դուք մի՛ վախենաք · գիտումեմ՝ որ Յիսուս խաչվածըն էք ուզում ։

6 Նստեղ չէ · պատճառն որ՝ յարութիւն առաւ՝ ինչպէս որ ասաց[5] · եկէք տեսէք էն տեղըն որ նա կար ։

7 Եւ շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք՝ թէ Նա յարութիւն առաւ · և աչ նա ձեզանից առաջ Գալիլեա կըգնայ[6] · էն տեղ նորան կը տեսնէք · աչ ասացի ձեզ ։

8 Եւ շուտով գերեզմանիցն դուրս եկին՝ վախով և շատ ուրախութեանով վազուգին՝ որ աշակերտներին պատմեն ։

9 Եւ աչ Յիսուս պատահեց[7] նորանց՝ և ասց · Ողջ կացէք · և նորանք մօտ եկին՝ նորա ոտներըն բռնեցին՝ և նորան երկրպագութիւն արին ։

10 Յն ժամանակն Յիսուս նորանց ասց · Մի՛ վախենաք · գնացէք իմ եղբայրներիս ասացէք՝ որ գնան Գալիլեա , և էնտեղ կըտեսնեն ինձ[8] ։

11 Երբոր նորանք գնացին · աչ (պահապան) զինուորներիցն մին քաղաքն եկին՝ և ամէն ինչ որ էլաւ՝ պատմեցին քահանայապետներին ։

12 Եւ նորանք ծերերին հետ հաւաքված խորհուրդ արին՝ և էն (պահապան) զինուորներին շատ փող տուին ։

13 Եւ ասացին · Ասացէք՝ թէ նորա աշակերտներն գիշերն գետ որ մենք քնած էինք՝ եկին գողացան նորան ։

14 Եւ թէ որ էդ բանդ դատաւորի ականջն հասնի , մենք նորան կըհաւանացնենք՝ և ձեզ անհոգ կանենք ։

15 Եւ նորանք փողըն առին՝ և

(47) Դան · ը · 17 ։ (1) Մատ · ԻԸ · 1 ։ Ղուկ · ԻԴ · 1 ։ Յովհ · Բ · 1 ։ (2) Մատ · ԻԷ · 56 ։ (3) Մատ · ԻԸ · 5 ։ Ղուկ · ԻԴ · 4 ։ Յովհ · Բ · 12 ։ (4) Դան · Ժ · 6 ։ (5) Մատ · ԻԸ · 40 ։ ԻԶ · 21 ։ ԻԷ · 23 ։ Բ · 19 ։ (6) Մատ · ԻՀ · 32 ։ Մատ · ԻԶ · 7 ։ (7) Մատ · ԻԸ · 9 ։ Յովհ · Բ · 14 ։ (8) Յովհ · Բ · 17 ։ Հռով · Ը · 29 ։ Եբր · Բ · 11 ։

հնպէս արին ինչպէս որ սովորեցին. և էս ձայնս Հրէաների (Ջհուդիների) մէջն դուրս եկաւ մինչև էսօր։

16 Իսայ տասնումին աշակերտներըն գնացին Գալիլեա՝ էն սարն՝ որ Յիսուս նորանց հետ խոսք էր կապել[9]։

17 Երբոր նորան տեսին, երկրպագութիւն արին նորան, և մին քանիսն երկմտեցան։

18 Եւ Յիսուս մօտ եկաւ, նորանց հետ խոսեց՝ և ասաց. Ամէն իշխանութիւն[10] ինձ տրվվաւ երկնքումն և երկրումս. ինչպէս որ Հայրն ինձ ուղարկեց, հնպէս էլ ես ձեզ ուղարկումեմ։

19 Ուրեմն գնացէք[11] ամէն հեթանոսներըն աշակերտ շինեցէք[12]՝ նորանց մկրտեցէք Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ անունովն։

20 Նորանց սովորցրէք՝ որ ամէն ինչ որ ձեզ պատուիրեցի[13]՝ պահեն. և ահա ես ձեզ հետ եմ ամէն օր, մինչև աշխարհքի վերջն։

ՈՒՆՏԸՐԸՆ ՂՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ ԸՈՒՆԴԱՀՆ

1 Յօհաննէս մկրտիչի պատմութիւն։ 9 Յիսուսի մկրտվիլն, 12 փորձվիլն, 14 Քարոզելն։ 16 Պետրոն Անդրէասն Յակոբոսն և Յօհաննէսն կանչելուն։ 23 Վատ ունեցող մարդն, 29 Պետրոսի զրքանչն, 32 Նա շատ հիւանդներն կըբժշկէ, 41 Նա բորոտն կըսըբէ։

1 Յիսուսի Քրիստոսի Ա-
տուծոյ Որդոյ աւետարանի սկիզբն[1]։

2 Ինչպէս որ մարգարէներումն գրված է (թէ) Ահա ես իմ հրեշտակըս կուղարկեմ քո առաջիդ՝ որ քո ճանապարհըդ քո առաջիդ պատրաստէ[2]։

3 Կանչողի ձայն անապատումն՝ (թէ) պատրաստ արէք Տէրի ճանապարհըն՝ և շիտակ արէք նորա գնալոց ճանապարհն[3]։

4 Եւ էլաւ՝ որ Յօհաննէս անապատումն (չօլումն) մկրտուէր, և ապաշխարութեան մկրտութիւն էր քարոզում՝ մեղաց թողութեան համար[4]։

5 Եւ Հրէաստանի (Ջհուդաստանի) ամէն աշխարհքն և ամէն Երուսաղէմացիքն գնումէին նորա մօտ՝ և նորանից մկրտվումէին Յորդանան գետումն՝ իրանց մեղքերըն խոստովանելով[5]։

6 Եւ Յօհաննէս ուղտու բուրդ էր հագած[6], և կաշվէ գօտիկ իրան մէջքումն՝ և նորա կերակուրն մարեխ (էր) և վայրի մեղր[7]։

(9) Մատ. իզ. 32 : վէր. 7 : (10) Դան. է. 13, 14 : Մատ. ժա. 27 : ժգ. 28 : Ղուկ. ա. 32 : ժ. 22 : Յովհ. գ. 35 : ե. 22 : ժգ. 3 : ժէ. 2 : Գործ. բ. 36 : Հռոմ. ժգ. 9 : ա Կորնթ. ժե. 27 : Եփես. ա. 20, 21 : Փիլիպ. բ. 9, 10 : Եբր. ա. 2 : բ. 8 : ա Պետր. գ. 22 : Յայտ. ժէ. 14 : (11) Մատ. ժգ. 15 : (12) Հռոմ. ծբ. 10 : Ղուկ. իգ. 47 : Գործ. բ. 38, 39 : Հռոմ. ժ. 18, Կող. ա. 23 : (13) Գործ. բ. 42 : (1) Մատ. ժգ. 33 : Ղուկ. ա. 35 : Յովհ. ա. 34 : (2) Մաղ. գ. 1 : Մատ. ժա. 10 : Ղուկ. է. 27 : (3) Հռոմ. խ. 3 : Մատ. գ. 3 : Ղուկ. գ. 4 : Յովհ. ա. 15, 23 : (4) Մատ. գ. 1 : Ղուկ. գ. 3 : Յովհ. գ. 23 : (5) Մատ. գ. 5 : (6) Մատ. գ. 4 : (7) Ղեւ. ժա. 22 :

7 Վարուղեմը և ասում · Ինձ ձանից զօրաւորն իմ եւս է գալլիս՝ որ նորան ես չեմ արժանի խոնարհվիլ և նորա կօշկների կապըն արձակել[8] :

8 Ես ջրով[9] մկրտեցի ձեզ՝ և նա Սուրբ Հոգով կմկրտե ձեզ[10] :

9 Եւ էլաւ որ էն օրերումն Յիսուս Նազարէթից Գալիլեացոց եկաւ, և Յօհաննէսից Յորդանանումն մկրտվեցաւ[11] :

10 Եւ շուտով որ ջրից դուրս եկաւ՝ տեսաւ երկինքն ճղված՝ և Աստուծոյ Հոգին աղաւնու պէս՝ որ վէր էր գալիս նորա վերայ[12] :

11 Ձայն էլաւ երկնքից և ասաց՝ Դու ես իմ սիրելի Որդին, քեզ հաւան կացայ[13] :

12 Եւ շուտով Հոգին նորան անապատն (չօլն) հանեց[14] :

13 Եւ նա հետեղ էր քառասուն օր Սատանայից փորձված · և գազանների հետ էր՝ և հրեշտակներ ծառայումէին նորան[15] :

14 Եւ երբոր Յօհաննէս մատնըվեցաւ[16], Յիսուս եկաւ Գալիլեա · Աստուծոյ աւետարանն քարոզումէր և ասում[17] :

15 Թէ ժամանակն կատարվել է[18], և Աստուծոյ արքայութիւնն հասել է[19] · ապաշխարեցէք՝ և աւետարանին հաւատացէք :

16 Երբոր Գալիլեացոց ծովի եզերին (ղըօղըն) մնտ անց էր կենում[20], տեսաւ Սիմոնին և նորա Եղբայրն եղբօրն՝ որ նորանք ուռկաններըն (ևոռ-եըքն) ծովն էին քցել · ինչու որ՝ ձուկըն բռնող էին :

17 Եւ Յիսուս նորանց ասաց · Իմ եւսէ՛ կէք՝ և կանեմ ձեզ որ մարդկանց հօրսորդ լինիք :

18 Եւ շուտով ուռկաններըն թողին և նորա եւսէն գնացին[21] :

19 Եւ էնտեղից որ մին քիչ առաջ գնաց՝ Յակօբոս Զեբեդեանին և նորա Յօհաննէս եղբօրն տեսաւ · երբոր նորանք նաւի մէջըն ուռկաններըն շինումէին՝ և նորանց կանչեց[22] :

20 Եւ շուտով իրանց Զեբեդէոս հօրըն վարձկաններին հետ նաւի մէջն թողին, և նորա եւսէն գնացին :

21 Եւ մտին Կափառնայում՝ և շուտով շաբաթ օրումն ժողովարանի մէջն մտաւ՝ և սովորցնումէր նորանց[23] :

22 Եւ զարմանումէին նորա վարդապետութեանն վերայ[24] · ինչու՝ ինչպէս իշխանութեամբ էր սովորցնում նորանց՝ և ոչ թէ նորանց կարգացողներին պէս :

23 Եւ նորանց ժողովարանի մէջն մին մարդ կար՝ որ պիղծ դև կար նորանում[25] · որ աղաղակեց և ասաց :

24 Թո՛ղ արա՛ դու ի՛նչ բան ունես մեզ հետ[26] Յիսուս Նազարեցի · եկիր որ մեզ կորցնես · գիտումենք քեզ (թէ) ո՛վ ես դու՝ Աստուծոյ Սուրբդ :

25 Յիսուս նորան սաստեց՝ և ասաց[27] · Պապանձվիր՝ և դորանից դուրս ել :

26 Եւ պիղծ դևն նորան գետինն զարկեց[28] · և մեծ ձայնով աղաղա-

(8) Մատթ · գ · 11 : Յովհ · ա · 27 : Գործ · ժգ · 25 : (9) Գործ · ա · 5 : ժա · 16 : ժԹ · ՟ : (10) Ղուկ · խգ · 3 : Յովհ · բ · 28 : Գործ · բ · ՟ : ժ · ՟5 : ժա · 15 · 16 : ա Կորնթ · ժբ · 13 : (11) Մատթ · գ · 13 : Ղուկ · գ · 21 : (12) Մատթ · գ · 16 : Յովհ · ա · 32 : (13) Սաղմ · բ · 7 : Մատթ · գ · 17 : Մարկ · թ · 7 : (14) Մատթ · գ · 1 : Ղուկ · գ · 1 : (15) Մատթ · դ · 11 : (16) Մատթ · դ · 12 : (17) Մատթ · դ · 23 : (18) Դան · թ · 25 : Գալ · գ · ՟ : Եփես · ա · 10 : (19) Մատթ · գ · 2 : գ · 17 : (20) Մատթ · դ · 18 : Ղուկ · ե · ՟ : (21) Մատթ · ժբ · 27 : Ղուկ · ե · 11 : (22) Մատթ · դ · 21 : (23) Մատթ · գ · 13 : Ղուկ · գ · 31 : (24) Մատթ · է · 28 : (25) Ղուկ · գ · 33 : (26) Մատթ · ը · 29 : (27) Վեր · 34 : (28) Մարկ · թ · 29 :

կից , և նորանից դուրս եկաւ :
27 Եւ ամէնքն զարմացան մինչև որ իրար հետ քսխսալով հարցնում էին՝ և ասում · Այս ի՞նչ նոր վարդապետութիւն է՝ որ իշխանութեամբ նոյն պիղծ դևերին էլ սաստում՝ և նազանդվում են սորան :
28 Եւ նորա համբաւն վաղվեցաւ ամէն կողմերն գուրս գնաց :
29 Եւ շուտով ժողովարանից որ դուրս էլաւ , եկաւ Սիմոնի և Անդրէասի տունն[29] Յակոբի և Յոհանէսի հետ :
30 Եւ Սիմոնի զքրանչէն տենտով վէրընկած էր՝ և շուտով նորա համար ասացին նորան :
31 Եւ մօտ եկաւ նորա ձեռից բռնեց՝ և նորան վերկացրուց · և տենտն թողեց նորան՝ և նա ծառայում էր նորանց :
32 Եւ երբոր իրիկուն էլաւ արեգական մտնելոյ ժամանակն , ամէն հիւանդներն և դիւահարներն բերին նորա մօտ[30] :
33 Եւ բոլոր քաղաքն ժողովված էր դրունների առաջին :
34 Եւ շատ հիւանդներ բժշկեց կերպ կերպ ցաւերից՝ և շատ դևեր հանեց · և թոյլ չէր տալիս դևերին որ խօսին[31] · ինչուր՝ գիտում էին նորան որ Քրիստոս է :
35 Եւ առաւօտանց որ լուսացաւ՝ վեր կացաւ գուրս եկաւ և մին անապատ տեղ գնաց[32] , և էնտեղ աղօթք էր անում :
36 Եւ Սիմոնն նորա ետևէն գնաց , և նորանք էլ որ նորա հետ էին :
37 Եւ երբոր նորա գտին՝ նորան ասացին , թէ Ամէնքն քեզ ման են գալիս :
38 Եւ նորանց ասաց · Եկէք ուրիշ մօտիկ գիւղաքաղաքներն էլ գընանք[33] , որ էնտեղ էլ քարոզեմ · ինչուր ես հենց սրա համար եմ եկած[34] :
39 Եւ ամէն Գալիլեացոց երկրի մէջն նորանց ժողովարաններումն քարոզում էր , և դևեր էր հանում[35] :
40 Մին բորոտ նորա մօտ եկաւ[36] , աղաչում էր՝ ծունր էր դնում՝ և ասում էր · Տէր՝ թէ որ կամենաս , կարող ես ինձ սրբել :
41 Յիսուս էլ խղճալով ձեռքն մեկնեց , նորան մօտեցաւ՝ և նորան ասաց · Կամենում եմ՝ սրբվիր :
42 Եւ երբոր էս ասաց նորան , շուտով բորոտութիւնն գնաց նորանից՝ և սրբվեցաւ :
43 Եւ նորան սաստելով՝ շուտով դուրս հանեց նորան , և ասաց նորան :
44 Օգոյշ կաց իսկի մին մարդոյ բան չասես · բայց գնա՛ քահանային քեզ ցոյց տուր , և քո սրբութեան համար պատարագ արա՛ էն որ Մովսէսն հրամայեց՝ նորանց վկայութիւն լինելոյ համար[37] :
45 Եւ նա երբոր դուրս գնաց , սկսեց շատ քարոզել և էն բանն տարածել , մինչև որ էլ նա կարող չէր յայտնի մտնել քաղաք՝ բայց դուրս անապատ (չորս) տեղերում էր[38] · և ամէն կողմերից գալիս էին նորա մօտ[39] :

(29) Մարկ · ը · 14 : Ղուկ · դ · 38 : (30) Մարկ · ը · 16 : Ղուկ · դ · 40 : (31) Մարկ · գ · 12 : Ղուկ · դ · 41 : Գործ · ժգ · 17 , 18 : (32) Ղուկ · դ · 42 : (33) Ղուկ · դ · 43 : (34) Լսայ · կա · 1 : Հովհ · ժգ · 28 : ժէ · 4 : (35) Մարկ · գ · 23 : Ղուկ · դ · 44 : (36) Մարկ · ը · 2 : Ղուկ · ե · 12 : (37) Ղեւ · ժդ · 3 , 4 · 10 : Ղուկ · ե · 14 : (38) Ղուկ · ե · 15 : (39) Մարկ · բ · 13 :

ԳԼ· Ը

3 Վրիստոս մին անդամալուծ մարդ կըբժչկէ , 14 Մատթէոն մաքս ընդունելոյ համար նստած տեղէն կըկանչէ , 15 Մաքսաւորներուն և մեղաւորներուն հետ է ուտում , 18 Իրան աշակերտներուն պաս չիպահելը , 23 Նէ շաբաթ օրումն (յորինի) հասկ պոկելը և ուտելը արդարացնում ։

1 Նէ մինէլ որ մտաւ Կափառնայում մին քանի օրից ետև[1] ,

2 Լսվեցաւ թէ տանն է · և շատ մարդիք ժողովվեցան՝ մինչև որ տեղ էլ չըգար և ոչ էլ դռան առաջին · և (Աստուծոյ) բանըն խօսումէր նոքանց ·

3 Եւ գալիս էին նորա մօտ՝ և մին անդամալոյծ էին բերում չորս մարդով վեր առած ։

4 Եւ երբոր կարում չէին մօտենալ նորան՝ ամբոխի (խռնկէ) պատճառաւն՝ էն տան ծածկըրն քակեցին , որ տեղ որ Յիսուսն էր · և ծորքրն բաց արին և էն մահիճըն (փէօշէխէ) վեր բերին , որ նորանում անդամալուծն կար ։

5 Եւ Յիսուս նորանց հաւատքրն տեսնելով՝ անդամալուծին ասաց · Որդի թող քո մեղքերդ թողված լինին քեզ ։

6 Եւ կարդացողներին մին քանիսն կային՝ որ հնտեղ նստած էին · և իրանց սրտումն միտք էին անում , (թէ)

7 Այս ինչ է՞ որ սա հայհոյութիւն է խօսում · ով կարող է մեղք թողել եթէ ոչ մի Աստուածն[2] ։

8 Եւ Յիսուս իրան հոգով մէջն գիտաց թէ իրանց սրտումն էնպէս են միտք անում , և ասաց · Ինչու էք ձեր սրտերումն էդ մտածում[3] ։

9 Որն է հեշտ[4] · անդամալուծին ասել՝ թող քո մեղքերդ թողված լինին քեզ , թէ ասել՝ վեր կաց , քո մահիճըդ (փէօշէխէդ) առ և քո տունդ գնա ։

10 Հայց որ իմանաք , թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վերայ մեղաց թողութիւն տալ · անդամալուծին ասաց ,

11 Ասումեմ քեզ՝ վեր կաց , քո մահիճըդ (փէօշէխէդ) առ և գնա քո տունդ ։

12 Եւ (նա) շուտով վերկացաւ և մահիճըն առաւ՝ և ամէնի առաջին դուրս գնաց · մինչև որ ամէնքն զարմանումէին և Աստուծոյն փառաւորումէին և ասում՝ թէ Ասկի մին ժամանակ էսպէսի բան չենք տեսել ։

13 Եւ մինէլ դէպի ծովի եզրն (ղըղն) դուրս գնաց[5] , և ամէն ժողովուրդն նորա մօտ էր գալիս · և նորանց սովորցնումէր ։

14 Եւ երբոր անց էր կենում[6] , տեսաւ Ղևի Ալփեանին՝ որ նստած մաքսաւորութիւն (կումրուկլուխ) էր անում · և նորան ասաց · Իմ ետևէս էկ · և վերկացաւ՝ գնաց նորա ետևէն ։

15 Եւ էյաւ՝ երբոր նորա տան մէջն սեղանի վերայ նստած էր՝ և շատ մաքսաւորներ և մեղաւորներ Յիսուսի և նորա աշակերտներին հետ սեղան էին նստած[7] · պատճառն որ՝ շատ մարդիք էին՝ որ նորա ետևէն գնումէին ։

16 Հայց գրագողներն և փարիսեցիքն երբոր տեսին՝ թէ մաքսաւորներին և մեղաւորներին հետ ուտումէ նորա աշակերտներին ասացին · Ինչ ինչ է որ մաքսաւորներին և մեղաւորներին հետ ուտումէք և խմումէք ։

17 Յիսուս երբոր լսեց՝ ասաց նորանց · Առողջներին բժիշկ պէտք

(1) Մարկ · թ · 1 · Ղուկ · ե · 18 ։ (2) Հովհ · ժդ · 4 ։ Նոյն · խգ · 25 ։ (3) Մարկ · թ · 4 ։ (4) Մարկ · թ · 5 ։ (5) Մարկ · թ · 9 ։ (6) Մարկ · թ · 9 ։ Ղուկ · ե · 2 ։ (7) Մարկ · թ · 10 ։

չէ՛ բայց հիւանդներին[8] • և չեկի որ արդարներուն կանչեմ՝ այլ մեղաւորներին ։

18 Եւ Յովհաննէսի աշակերտներն և փարիսեցիներն պասումն էին՝ եկին և Նորան ասացին[9]• Ինչո՞ւ Յովհաննէսի աշակերտներն և փարիսեցիներն պաս են պահում՝ և քո աշակերտներդ չեն պահում ։

19 Եւ Յիսուս Նորանց ասաց • Միթէ կարելի՞ է որ հարսանիքի որդիքն պաս պահեն՝ դեռքանի որ փեսան Նորանց հետ է • քանի որ փեսան իրանց հետ ունին՝ կարելի չէ որ պաս պահեն ։

20 Այլ օրներ կըգան՝ որ փեսան Նորանցից վերկառնըվի • և ապա էն օրումն կըպահեն ։

21 Ոչ ով նոր չըմաշված կարկատանի կտոր հին շորի վերայ չի քցիլ • ապա թէ ոչ՝ նո՛ն իրան ուժովն էն ձիցն կառնէ, և պատառվածքն էլ աւելի չար կըլինի ։

22 Եւ ոչ ով նոր գինին հին տրկերի մէջ չի՛ ածիլ • ապա թէ ոչ՝ գինին տրկերն կըպատառէ՝ գինին կըթափվի, և տրկերն կըկորչին • բայց նոր գինին՝ նոր տրկերի մէջ պէտք է ածվի ։

23 Եւ էլաւ որ Նա շաբաթի օրումն արտերի միջովն անց էր կենում[10] • և աշակերտներն իրանց գընալով ժամանակն սկսեցին հասկ պոկել և ուտել[11] ։

24 Եւ փարիսեցիքն Նորան ասացին • Տե՛ս ինչ են գործում քո աշակերտներդ շաբաթի օրումն՝ որ արժան չէ ։

25 Եւ Յիսուս Նորանց ասաց • Ձուք իսկի մին ժամանակ չէք կարդացել էն, որ Դաւիթն արաւ, երբոր պէտք էլաւ՝ և սովեց նա և Նորանք էլ, որ Նորա հետն էին[12] ։

26 Ինչպէս Աստուծոյ տունն մտաւ Աբիաթար քահանայապետի օրերումն • և առաջաւորութեան (Աստուծոյ սեղանի վերայ դրած) հացըն կերաւ՝ և Նորանց էլ տուաւ որ Նորա հետն էին՝ որ ուրիշի օրէնք չէր ուտել՝ բայց միայն քահանայից[13] ։

27 Եւ Նորանց ասաց • Հաւթաթն մարդոյ համար էլաւ, և ոչ թէ մարդն շաբաթի համար ։

28 Ուրեմն Որդին մարդոյ շաբաթին էլ տէրն է[14] ։

ԳԼ • Գ

1 Նրբիատոս չորացած ձեռն, 10 Նշ շատ ուրիշ հիւանդութիւններ կըբժշկէ • 11 Պիղծ դևերն սաստուվ • 13 Իրան տասներկու աշակերտներն կըկարգէ • 22 Յայց կըտայ կարդացողներին թէ իրան համար Աւետարանով հանուվ դևերն որ ասումն՝ հայհոյութիւն են անում ։ 31 Նշ ցոյց կըտայ թէ ով է իրան եղբայրն քոյրն և մայրն ։

1 Եւ մինէլ ժողովարանին մէջ մտաւ, և էն տեղ մին մարդ կար՝ որ Նորա ձեռն չորացած էր՝ ։

2 Եւ սպասումէին Նորան՝ թէ շաբաթի օրումն բժշկէ Նորան՝ որ չարախօսեն Նորանից ։

3 Եւ ասաց էն մարդոյն՝ որ Նորա ձեռն չորացած էր • Ա՛ռ կաց ևկ մէջ տեղն ։

4 Եւ Նորանց ասաց • Ինչ արժան է շաբաթի օրումն • բարի բա՞ն գործել՝ թէ չար անել • մին հոգի ապրեցնի՞լ՝ թէ կորցնել • և Նորանք լուռ կացան ։

5 Եւ Յիսուս շատ բարկութեանով չորս կողմումն Նորանց մինչ տըւաւ՝ Նորանց սրտերի կուրութեան համար տրտմելով՝ և էն մարդոյն

(8) Մատթ • թ • 12, 13 : Ժբ • 11 : Ղ—ղ • ե • 31, 32 : Ժթ • 10 : ա Տիմ • ա • 15 :
(9) Մատթ • թ • 14 : Ղ—ղ • ե • 33 : (10) Մատթ • Ժբ • 1 : Ղ—ղ • գ • 1 : (11) Բ Օրէն • իդ • 25 : (12) ա Թագ • իա • 6 : (13) Լև • իթ • 32, 33 : Ղ—ղ • իգ • 9 :
(14) Մատթ • Ժբ • 8 : (1) Մատթ • Ժբ • 9 : Ղ—ղ • գ • 6 ։

ասաց · Վա՛ ձեռդ մեկնի՛ր · և նա մեկնեց , և նորա ձեռն ողջացաւ :

6 Եւ փարիսեցիներն շուտով դուրս գնացին[2] Հերովդեսեաններին հետ[3] · նորա համար խորհուրդ էին անում՝ թէ ինչպէս կորցնեն նորան :

7 Իսկ Յիսուս իրան աշակերտներին հետ ծովի եզրն (ղէպն) գնաց · և շատ ժողովուրդ նորա ետևէն գնում էին Գալիլեացիներից · և Երուսաղէմից[4] ,

8 Եւ Երուսաղէմից , և Յորդանանի էն կողմից , և նորանք էլ որ Տիւրոսից և Սիդոնից էին , շատ ժողովուրդ երբոր լսում էին՝ թէ որքան բաներ էր անում , նորա մօտ էին գալիս :

9 Եւ իրան աշակերտներին ասաց , որ մի նաւ պատրաստ լինի իրան համար էն ամբոխի (խալխի) պատճառաւ՝ որ չընեղեն նորան :

10 Ինչուռ՝ շատերին բժշկեց · մինչև որ եկին նորա վերայ թափվեցան՝ որ նորան դիպչին՝ նորանք որ մի ցաւ ունէին :

11 Եւ պիղծ դևերն երբոր նորան տեսնում էին[5] , նորա առաջին ընկնում էին , աղաղակում էին և ասում՝ .

12 Թէ Դու ես Աստուծոյ Որդին[6] · և նա շատ սաստում էր նորանց , որ իրան չը յայտնեն[7] :

13 Ա՛ր էլաւ սարն[8] և իրան մօտ կանչեց նորանց որ ինքն կամեցաւ · և նորա մօտ գնացին :

14 Եւ տասներկու Հոգի կարդեց՝ որ իրան հետ լինին , և որ նորանց ուղարկէ՝ որ քարոզեն ,

15 Եւ իշխանութիւն ունենան ցաւերըն բժշկելոյ՝ և դևերըն հանելոյ :

16 Եւ Սիմօնի անունըն Պետրոս դրաւ[9] ·

17 Եւ Զեբեդեան Յակոբին՝ և Յակոբի եղբայր Յոհաննէսին , նորանց անունըն Խաներգէս դրաւ , որ է՝ Որոտմունքի որդիք ,

18 Եւ Անդրէասին , և Փիլիպպոսին , և Բարթողիմէոսին , և Մատթէոս մաքսաւորին (ևֆ-ֆչի) , և Թոմասին , և Յակոբոս Ալփեանին , և Թադէոսին , և Սիմոն Կանանացոյն ,

19 Եւ Յուդա Իսկարիոտացոյն՝ նա որ մատնեց նորան :

20 Տուն եկին , և միևել նորանց հետ ժողովուրդն եկաւ՝ մինչև որ ժամանակ էլ չէլաւ նորանց՝ որ հաց ուտեն[10] :

21 Եւ երբոր նորա ընտանիքն լսեցին՝ դուրս եկին որ նորան բռնեն · ինչուռ որ՝ համարում էին , թէ նա գժվել է[11] :

22 Եւ կարդացողներն՝ որ Երուսաղէմից էին եկել , ասում էին՝ թէ Բէեղզեբուղ կայ դորանում[12] , և դևերի իշխանովն է հանում դա դևերըն :

23 Եւ նորանց իրան մօտ կանչեց՝ առակներով նորանց հետ խօսում էր[13] · (թէ) Ինչպէս Սատանայ կարող է Սատանային հանել :

24 Ուրեմն՝ եթէ թագաւորութիւն իրան միջումն բաժանվի , էն թագաւորութիւն կարող չէ կենալ :

25 Եւ եթէ տուն իրան միջումն բաժանվի , էն տունն կարող չէ կենալ :

26 Եւ եթէ Սատանան իրան անձին վերայ վերկացաւ և բաժանված է , կարող չէ կենալ , այլ վերջացած է :

27 Ինչ ոչ ով կարող չէ զօրաւոր մարդոյ տուն մտնել և նորա բաները յափշտակել[14] , եթէ առաջ էն զօրաւորըն չը կապէ , և ապա նորա տունըն յափշտակէ :

(2) Մարկ · ժբ · 14 : (3) Մարկ · իբ · 16 : (4) Ղուկ · զ · 17 : (5) Մարկ · ա · 23 , 24 : Ղուկ · դ · 41 : (6) Մարկ · ժդ · 33 : Մարկ · ա · 1 : (7) Մարկ · ժբ · 16 : Մարկ · ա · 25 · 34 : (8) Մարկ · ժ · 1 : զ · 12 : թ · 1 : (9) Հովհ · ա · 42 : (10) Մարկ · գ · 31 : (11) Հովհ · է · 5 : ժ · 20 : (12) Մարկ · թ · 34 : ժ · 25 : Ղուկ · ժա · 15 : Հովհ · է · 20 : ը · 48 · 52 : ժ · 20 : (13) Մարկ · ժբ · 25 : (14) Եսայ · խթ · 24 : Մարկ · ժբ · 29 :

28 Ն՛շմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ Ա՛րդկանց որդոցն ամէն մեղքեր և հայհոյանքներ կրնթողուին՝ որքան որ հայհոյեն[15] :
29 Բայց նա որ Սուրբ Հոգւոյն կրհայհոյէ՝ յաւիտեան թողութիւն չունենայ · այլ յաւիտենական մեղաց պարտական կրլինի :
30 Պատճառնոր՝ ասումէին՝ թէ Պիղծ ղեւ կայ նորանում :
31 Եւ նորա եղբարքն և մայրն եկին , և դուրսն կանգնած՝ ուղարկեցին և նորան կանչումէին[16] :
32 Եւ հնտեղ ժողովուրդն նորա չորս կողմիէն նստած էր · և երբոր ասացին նորան՝ Ա՛հա քո մայրդ և քո եղբարքդ դուրսն կանգնած են , և քեզ են խնդրում ·
33 Նորանց պատասխան տուաւ և ասաց՝ Ո՞վ է իմ մայրս կամ եղբարքս :
34 Իրան չորս կողմիէն աշակերտներին մտիկ տուաւ՝ որ նստած էին , և ասաց · Ա՛հա իմ մայրս և իմ եղբարքս :
35 Ինչուորՙ ով որ Աստուծոյ կամքըն կատարէ՝ նա է իմ եղբայրըս և քոյրս մայրս :

ԿԻ · Դ

1 Սկըսի ցանօղի առակն , և Եւ նորա մեկնութիւնն : 21 Մեր գիտութեան լոյսն պէտք է որ ուրիշներին էլ բաժնենք : 26 Աճածուկ բուսած սերմն , 30 Եւ մանանեխի հատի առակն : 35 Իրիսատոսի ծովի մրրիկին դադարացնելն :

1 Մինէլ ծովի եզերին (ղէօղէն) մօտ սկսեց սովորցնել[1] · և շատ ժողովուրդներ նորա չորս կողմիէն կիտվեցան , մինչև որ նաւ մտաւ , և ծովի վերայ նստաւ · և ամէն ժողովուրդներն ծովի եզերին (ղէօղէն) ցամաքըն բռնած էին :
2 Եւ շատ բան առակներով սովորցնուէր նորանց · և իրան վարդապետութեան մէջն ասումէր նորանց[2] :
3 Լսեցէք՝ ահա մին սերմ ցաւնօղ (մարդ) դուրս գընաց , որ սերմը ցանէ :
4 Եւ սերմելոյ ժամանակն էլաւ որ մինն ճանապարհի վերայ ընկաւ , և թռչուն եկաւ և նորան կերաւ :
5 Եւ մէկէլն քարքարուտ տեղ ընկաւ՝ որ հնտեղ շատ հող չկար · և շուտով բուսաւ · ինչուորՙ բաւական հող չկար :
6 Եւ երբոր արեգակն ծագեց՝ տաքացաւ , և որովհետև արմատ (րէօտ) չունէր՝ չորացաւ :
7 Եւ մէկէլն ընկաւ փշերի մէջը , փշերըն դուրս եկին և խեղդեցին նորան · և պտուղ չտուաւ :
8 Եւ մէկէլն բարի երկրի վերայ ընկաւ · և դուրս եկաւ աճեց և պտուղ էր տալիս[3] , և մինի տեղ բերումէր երեսուն՝ և մինի տեղ վաթսուն՝ և մինի տեղ հարիւր :
9 Եւ ասումէր · Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ :
10 Եւ երբոր մենակ էլաւ[4] նորանք որ նորա մօտ էին աշակերտներին հետՙ հարցրին նորան էն առակներըն :
11 Եւ նորանց ասաց · Ձեզ տրվաձ է Աստուծոյ արքայութեան խորհուրդներըն գիտել , բայց նորանց որ դրսի են՝ ամէն բան առակներով է լինում[5] :
12 Որ տեսնելով տեսնեն՝ և չտեսնեն , և լսելով լսեն՝ և չիմանան[6] · որ իսկի չդառնան , և

(15) Մարկ · ժբ · 31 : Ղուկ · ժբ · 10 : ա Յովհ · ե · 16 : (16) Մարկ · ժբ · 46 : Ղուկ · ը · 19 : (1) Մարկ · ժգ · 16 : Ղուկ · ը · 4 : (2) Մարկ · ժբ · 38 : (3) Յովհ · ժե · 5 : Կող · ա · 6 : (4) Մարկ · ժգ · 10 : Ղուկ · ը · 9 , Հայլէ : (5) ա Կորնթ · ե · 12 : Կող · գ · 5 : ա Թես · գ · 12 : ա Տիմ · գ · 7 : (6) Եսայ · ղ · 9 : Մարկ · ժգ · 14 : Ղուկ · ը · 10 : Յովհ · ժբ · 40 : Գործ · իը · 26 : Հռոմ · ժա · 8 :

թողութիւն լինի նորանց ։

13 Եւ նորանց ասաց · Ոչ առաքս չէք գիտում, և ինչպէս ամէն առակներըն կըգիտենաք ։

14 Ա՛յս որ սերմումն՝ (Աստուծոյ) բանըն է սերմում[7] ։

15 Եւ նորանք են՝ որ ճանապարհի վերայ են՝ որտեղ որ բանն սերմվում · և երբոր են լսումն , Սատանան գալիս է՝ և նորանց սրտերումըն սերմված բանըն Հանումէ ։

16 Եւ որ քարքարուտ տեղն սերմվեցան , նորանք են՝ որ երբոր բանըն լսումն , շուտով ուրախութիւնով ընդունումն ։

17 Եւ իրանց մէջ արմատ (ֆեսֆ) չունին՝ էլ քիչ ժամանակ են մնում · յետոյ երբոր նեղութիւն կամ հալածմունք են Հասնում էն բանին համար , շուտով գայթակղվում են ։

18 Ուրիշ որ փըշերի մէջն սերմվեցան՝ նորանք են , որ երբոր բանըն լսումն ,

19 Աշխարհքի հոգսերն և մեծութեան խաբեբայութիւններն մըտնումն , և բանըն խեղդումեն՝ և անպտուղ է լինում[8] ։

20 Եւ որ բարի երկրի վերայ սերմվեցան՝ նորանք են՝ որ բանըն լսումն և ընդունումն , և պտուղ են տալիս՝ մըրնի տեղ երեսուն՝ և մրնի տեղ վաթսուն՝ և մրնի տեղ Հարիւր ։

21 Եւ նորանց ասաց · Միթէ ճրագն նրա համար է գալիս՝ որ տաշտի կամ մահճի (կաթաղէն) տակն դրնվի[9] · չէ՞ որ ճրագակալի վերայ կըդնվի ։

22 Ինչուր՝ իսկի ծածուկ բան չըկայ՝ որ չըյայտնվի[10] · և թաքուն բան չէլաւ , որ դէպի յայտնութիւն չըգայ ։

23 Ով որ միտն լսելոյ ականջ ունի՝ նա լսէ[11] ։

24 Եւ նորանց ասաց · Տեսէք թէ ինչ էք լսում , և կաւելանայ ձեզ էն որ լսումէք · ինչ չափով որ չափէք՝ նորանով էլ ձեզ կըչափվի[12] ։

25 Ով որ ունի՝ նորան կըտրվի[13] · և ով որ չունի , նորանից էն էլ որ ունի՝ վերկառնվի ։

26 Եւ ասումէր · Աստուծոյ արքայութիւնն էսպէս է[14] · ինչպէս թէ մին մարդ սերմ քցէ Հողի մէջ ,

27 Եւ գիշեր ու ցորեկ քուն լինի և վերկենայ · և էն սերմն բուսնէ և աճի՝ և ինքն չըգիտում ։

28 Ինչուր՝ երկիրն ինքն իրան պտուղ է բերում՝ առաջ խոտըն՝ և յետոյ հասկըն՝ և նրանից ետև լըցված ցորենըն իրան հասկի մէջն ։

29 Ուրիշ երբոր պտուղըն կրտայ՝ շուտով մանգաղ (չէն) կուղարկվի[15] · ինչուր հունձքն հասել է ։

30 Եւ ասումէր · Աստուծոյ արքայութիւնըն ում նմանեցնինք , կամ ինչ առակով յայտնենք նորան օրինակըն[16] ։

31 Ինչպէս մանանեխի հատըն՝ որ երբոր Հողի մէջ սերմվի , ամէն սերմանքիցն աւելի փոքր է՝ որ երկրի վերայ են ։

32 Եւ երբոր սերմվի , բուսնում և ամէն բանջարիցն աւելի մեծ է լինում , և մեծ մեծ ճղներ է դուրս բերում , մինչև որ բաւական է լինում՝ որ երկնքի թռչուններն նորա շուաքի տակն բնակվին ։

33 Եւ էնպէսի առակներով էր խօսում բանըն նորանց Հետ[17] , ինչ-

(7) Մարկ · ԺԳ · 19 ։ (8) ա Տիմ · Ղ · 9 · 17 ։ (9) Մարկ · Ե · 15 ։ Ղուկ · Ը · 16 · Ժա · 33 ։ (10) Մարկ · Դ · 26 ։ Ղուկ · Ժբ · 2 ։ (11) Մարկ · Ժա · 15 ։ Վէր · 9 · (12) Մարկ · Է · 2 ։ Ղուկ · Ղ · 38 ։ (13) Մարկ · ԺԳ · 12 ։ Իս · 29 ։ Ղուկ · Ը · 18 · ԺԹ · 26 ։ (14) Մարկ · ԺԳ · 24 ։ (15) Յոյա · ԺԳ · 15 ։ (16) Մարկ · ԺԳ · 31 ։ Ղուկ · ԺԳ · 18 ։ Ծորթ · Բ · 41 · Դ · 4 · Ե · 14 · ԺԲ · 20 ։ (17) Մարկ · ԺԳ · 34 ։ Յովհ · ԺՂ · 12 ։

պէս որ Նորանք կարօղ էին լսել :
34 Եւ առանց առակի ոչ ինչ էր խօսում Նորանց հետ , միայն թէ առանձին իրան աշակերտներին ա-մէն բան մեկնումէր :
35 Եւ էն օրն՝ երբոր իրիկվան դէմ էր լինում[18] , Նորանց ասաց . Եկէք անցկենանք էն կողմն :
36 Ժողովուրդըն թողին , և Նո-րան հենց նաւումն առին , և ուրիշ նաւերըն էլ՝ որ Նորա հետ էին :
37 Եւ քամի մեծ մրրիկ էր լի-նում , և ալիքներըն էր թափում նաւին մէջ , մինչև որ համարեա թէ լցվումէր :
38 Եւ ինքն նաւի յետին կողմու-մըն բարձի վերայ ննջումէր . Նո-րան զարթնացնումին և ասում . Ո՛վ դպրապետ՝ դու հոգս չունիս , որ մենք կորչումենք հատել :
39 Եւ նա զարթնացաւ և քա-մուն սաստեց և ծովին ասաց . Դա-դարիր պապանձվիր . և քամին դա-դարեց , և մեծ խաղաղութիւն էլաւ :
40 Եւ Նորանց ասաց . Ինչու էդ-պէս վախկոտ էք . դեռ հաւատք չունիք . և մեծ վախով վախեցան , և մինն մընին ասացին . Ա՛ռ ով պիտի լինի՝ որ քամին և ծովն էլ ընազանդվումեն սորան :

ԳԼ · Ն

1 Դրիստոս դևերի լեգեոն ունեցող մարդն Նորանցից կազատէ , 13 Նորանց խոզերի մէջն մտնելն . 25 Դրիստոս տեառատես կինն կըբժշկէ , 35 Յայրոսի աղջկին մեռնելներից կեցա-ըուցանէ :

1 Եւ եկաւ ծովի էն կողմն՝ Գերգեսացոց աշխարհքն[1] :
2 Եւ Նորա նաւիցն դուրս գա-լըլ ժամանակն , Նորան մին մարդ պատահեց գերեզմաններիցն՝ որ Նորան պիղծ դև բռնել էր :
3 Որ Նորա բնակութիւնն գե-րեզմաններումն էր . և ոչ ով շղթաներով (գընճկընեով) էլ չէր կարօղ կապել Նորան :
4 Ինչուոր՝ շատ անգամ ոտաց կապերով և շղթաներով կապումե-ին՝ և նա շղթաներըն կըզարումէր , և ոտաց կապերըն ջարդումէր . և ոչ ով կարօղ չէր բռնել Նորան :
5 Ինչուոր՝ միշտ գիշեր ու ցորեկ գերեզմաններումն և սարերումն ա-զաղակումէր . և ինքն իրան ծե-ծումէր քարերով :
6 Երբոր հեռուանց Յիսուսին տեսաւ՝ վազեց գնաց և Նորան երկրպագութիւն արաւ :
7 Ա՛նծ ձայնով աղաղակեց՝ և ա-սաց . Ի՞նչ բան կայ ինձ հետ Յիսուս բարձրեալ Աստուծոյ Որդի . Աստուծով երդում եմ տալիս քեզ , մի՛ տանջըր ինձ :
8 Պատճառներ՝ Նորան ասումէր՝ Ո՛վ պիղծ դև՝ էդ մարդուցդ դուրս եկ :
9 Եւ հարցնումէր Նորան՝ թէ Ի՞նչ անունդ ի՞նչ է . և Նորան ա-սումէր . Իմ անունս լեգեոն է , ինչուոր մենք շատ ենք :
10 Եւ Նորան շատ պաղատումէին , որ իրանց էն աշխարհքին դուրս չըզարկէ :
11 Եւ էնտեղ սարի մօտ խոզերի մին մեծ երամակ (պ՚ըտ՚ա) կար՝ որ արածումէր :
12 Ամէն դևերն Նորան աղաչեցին և ասացին , Ուղարկիր մեզ էն խո-զերին մէջ՝ որ Նորանց մէջն մտնենք :
13 Եւ Հրաման տուաւ Նորանց . և պիղծ դևերն երբոր դուրս եկին , խոզերի մէջն մտին , և երամակն (պ՚ըտ՚ա) էն բարձր տեղից դէպի ծովն վազեց . երկու հազարի չափ

(18) Մատթ . ը . 18 . 23 : Ղուկ . ը . 22 : (1) Մատթ . ը . 28 : Ղուկ . ը . 26 :

էին , և ծովի միջումն խնդովումէին :
14 Եւ խոզաբաճներն փախան՝ և քաղաքումն և արտերումն պատմեցին • և դուրս եկին որ տեսնեն թէ ինչ է էն՝ որ գործվեցաւ :
15 Իիսուսի մօտ եկին , և դիւահարին տեսին որ նստած էր հագած և խելքն գլուխն եկած՝ նա՝ որ լեգէոնն ունէր • և վախեցան :
16 Եւ նորանց պատմեցին՝ նորանք որ տեսել էին , թէ ինչ ելաւ էն դիւահարին , և ինչ խոզերի համար :
17 Եւ սկսեցին աղաչել նորան՝ որ իրանց երկրից դուրս գնայ[2] :
18 Եւ երբոր նա նաւն մտաւ՝ դիւահարն աղաչումէր նորան՝ որ նորա հետ լինի[3] :
19 Եւ Իիսուս թոյլ չըտուաւ նորան , բայց նորան ասաց • Գնա քո տունդ՝ քո բնտանեաց մօտն , և նորանց պատմի՛ր ամէն ինչ որ Տէրն արաւ քեզ և ողորմեցաւ քեզ :
20 Եւ գնաց և սկսեց Դեկապօլիսի մէջն քարոզել ինչ որ Իիսուս իրան արաւ , և ամէնքն զարմանումէին :
21 Եւ երբոր Իիսուս մինել էն կողմն անցաւ[4] շատ ժողովուրդ նորա մօտ ժողովվեցան , և նա ծովի եղրումն (ղեռաւ) էր :
22 Եւ ահա ժողովրդապետներից մինն գալիս էր՝ որ նորա անունն Յայրոս էր[5] • և երբոր նորան տեսաւ , ընկաւ նորա ոտներն :
23 Նորան շատ աղաչումէր և ասում՝ Թէ Իրան աղջկին մեռնելոյ մօտ է , որ գայ ձեռըն նորա վրայ դնէ՝ որ ողջանայ և ապրի :
24 Եւ նորա հետ գնաց • և շատ ժողովուրդ էլ նորա ետևէն գնում էին , և նորան ընդացնումէին :
25 Եւ մին կին կար արիւն Թաւիղոյ հիւանդութեան մէջ տասներկու տարի[6] :
26 Եւ շատ բժիշկներից շատ չարչարանք էր քաշել , և իրան ամէն ապրանքըն ծախել և մին օգուտ չէր ստացել , բայց ցաւն էլ աւելի սաստկացել էր :
27 Երբոր Իիսուսի համար լսեց՝ ամբոխի (խալխի) մէջն եաւիցն եկաւ՝ և ձեռըն դիպցրուց նորա շորին :
28 Ինչու որ՝ իրան մտքումն մտածումէր , Թէ որ մինակ նորա շորերին մօտենամ , կըփրկըվիմ :
29 Եւ շուտով նորա արիւնի աղբիւրն ցամաքեցաւ • և իրան մարմնումն իմացաւ՝ Թէ էն տանջանքիցըն բժշկվեցաւ :
30 Եւ շուտով Իիսուս էնց էն ժամումն (սահլոնա) Իիսուս իրան անձնումն իմացաւ էն զօրութիւնըն՝ որ իրանից դուրս գնաց , դարձաւ դէպի ամբոխն (խալխն) և ասաց • Ո՞վ դիպաւ իմ շորերիս :
31 Եւ աշակերտներն ասացին նորան • Տեսնումես որ էդ ամբոխդ նեղացնումէ քեզ , և ասումես՝ Թէ Ո՞վ իմ շորերիս դիպաւ :
32 Եւ չորս կողմն նայումէր՝ որ տեսնէ՝ Թէ էն ո՞վ արաւ :
33 Եւ կինն վախենալով և դողալով էն բանի համար՝ որ ծածուկ արաւ՝ ինչուր՝ գիտումէր , ինչ էլաւ իրան • եկաւ ընկաւ նորա առաջին՝ և ամէն բանըն ճշմարտութեամբ ասաց :
34 Եւ Իիսուս նորան ասաց • Դուստր՝ քո հաւատդ ողջացրուց քեզ[8] • գնա խաղաղութեամբ , և քո տանջանքիցն ողջ լինես :
35 Դեռ քանի որ նա էն խօսումէր , ժողովրդապետի տանիցն մին քանիսն եկին և ասացին՝ Թէ Վո-

(2) Մարկ . ը · 34 : Դուրթ . ժգ · 39 : (3) Լուկ . ը · 38 : (4) Մարկ . թ · 1 : Լուկ . ը · 40 : (5) Մարկ . թ · 18 : Լուկ . ը · 41 : (6) Լեւ . ժե · 25 : Մարկ . թ · 20 : (7) Լուկ . ը · 19 : ը · 46 : (8) Մարկ . թ · 22 : Մարկ . ժ · 52 : Դուրթ . ժգ · 9 :

աղջիկդ մեռաւ . էլ ինչու ես աշխատացնում վարդապետիդ[9] :

36 Եւ Յիսուս երբոր ասած բանն լսեց՝ ժողովրդապետին ասաց . Մի վախենար , բայց միայն հաւատա :

37 Եւ իսկի մին մարդուն չընծողեց՝ որ իրան հետ գնայ , բայց միայն Պետրոսին և Յակոբին և Յակոբի եղբայր Յոհաննէսին :

38 Ժողովրդապետի տունն եկաւ . Հնետեղ մեծ ամբոխ (խռնվ) տեսաւ և լացողներ , և շատ ազաղակ :

39 Եւ ներս մտաւ՝ և նորանց ասաց . Ինչու՞ էք շփոթված և լաց էք լինում . երեխան մեռած չէ , բայց քնած է[10] :

40 Եւ ծաղր էին անում նորան . և նա ամենին դուրս հանեց[11] , և երեխայի հօրն և մօրն և նորանց որ նորա հետ էին՝ իրան հետ առաւ , մտաւ հնետեղն՝ որ երեխան դրած էր :

41 Եւ երեխայի ձեռքին բռնելով՝ նորան ասաց . Տալիթա կումի , որ կը թանգմանվի . Վ աղջիկ՝ քեզ եմ ասում՝ վեր կաց :

42 Եւ շուտով վերկացաւ աղջիկն և գնում էր , ինչուց տասներկու տարեկանի չափ էր . և մեծ զարմանքով զարմացան :

43 Եւ նորանց շատ պատուիրեց՝ որ իսկի մին մարդ չիմանայ էն բանն[12] . և ասաց՝ որ նորան՝ բան տան ուտելոյ :

ԳԼ . Զ

1 Քրիստոս իրան քաղաքացիներից կանարգվի : 7 Տասներկուքներին իշխանութիւն կը տայ դիւի դևերի վերայ : 14 Քրիստոսի համար եղած այլև այլ կարծիքներն . 27 Յոհաննէս մկրտիչն գլխատվում , 29 Եւ թաղվում : 30 Առաքեալներն քարոզութենից դարձ են անում : 34 Հինգ հացի և երկու ձուկի հրաշքն : 48 Քրիստոս ծովի վերայ կը գնայ : 53 Եւ ամեն իրան ընդերի ծայրին մտեցողներին կը փրկէ :

1 Ա Եւ էն տեղիցն դուրս գնաց , եկաւ իրան գաւառն[1] . և նորա աշակերտներն նորա ետևէն գնում էին :

2 Եւ էլաւ որ շաբաթ օրումն սկսեց ժողովարանի մէջն սովորցնել . և շատ մարդիք երբոր լսում էին՝ զարմանում էին նորա վարդապետութեան վերայ և ասում . Սորան ո՞ր տեղից է էս բանս[2] , կամ էս ի՞նչ իմաստութիւն է որ տրվված է սորան՝ որ էսպիսի զորութիւններ են լինում սորա ձեռքովն :

3 Ա՞ր որ սա հիւսան (փե-լէ-էրէ) տղան է՝ և Մարիամայ որդին , Յակոբի և Յոսէի և Յուդայի և Սիմոնի եղբայրն[3] . և չէ՞ որ դորա քվերքն էստեղ մեզ մօտ են . և նորա վերայ գայթակղվում էին[4] :

4 Եւ Յիսուս նորանց ասաց . Մարգարէ անարգված չէ բայց միայն իրան գաւառի և իրան ազգականների և իրան տան մէջն[5] :

5 Եւ չէր կարում հնետեղ իսկի մին զորութիւն էլ անել[6] . բայց մինքիչ հիւանդների վերայ ձեռըն էր դնում և բժշկում էր նորանց :

6 Եւ նորանց անհաւատութեան

(9) Լուկ . ը . 49 : (10) Յովհ . ժա . 11 : (11) Դուբ . թ . 40 : (12) Մատ . ը . 4 . թ . 30 : ժբ . 16 : ժէ . 9 : Մարկ . գ . 12 : Լուկ . ե . 14 : (1) Մատ . ժգ . 54 : Լուկ . դ . 16 : (2) Յովհ . զ . 42 : (3) Մատ . ժբ . 46 : Գործ . ա . 19 : (4) Մատ . ժա . 6 : (5) Մատ . ժգ . 57 : Յովհ . դ . 44 : (6) Նմանը . ԺԹ . 22 . ԼԲ . 25 : Մատ . ժգ , 58 : Մարկ . թ . 23 , 24 :

համար զարմանումէր[7] : Եւ գաւառներէն չորս կողմերն ման էր գալիս , և սովորցնումէր[8] :

7 Եւ տասներկուսին իրան մօտ կանչեց[9] , և սկսեց Նորանց երկու երկու ուղարկել և Նորանց իշխանութիւն էր տալիս պիղծ դևերին վերայ :

8 Եւ Նորանց պատուիրեց՝ որ ճանապարհի համար խկի մին բան վեր չառնեն , բայց միայն մին գաւազան . ոչ պարկ , ոչ հաց , ոչ պղինձէ փող գօտիկներումն :

9 Այլ հողաթափ[10] հագնին՝ և Երկու կապայ չը՛հագնի՛ք՝ ասաց :

10 Եւ Նորանց ասումէր . Որ տունը որ մանէք , հետեղ մնացէք՝ մինչև որ հետեղեն գուրս գնաք[11] :

11 Եւ Նորանք որ ձեզ չընդունին , և ձեզ ականջ չըդրնեն[12] , երբոր հետեղեն գուրս կը գնաք՝ ձեր ոտներն փոշին թափ տուէք՝ որ Նորանց վկայութիւն լինի[13] :

12 Եւ գուրս էլան , քարոզումէին՝ որ ապաշխարեն :

13 Եւ շատ դևեր հան էին հանումէ , և շատ հիւանդներ իւղով օծումէին[14] և Նորանց բժշկումէին :

14 Եւ Հերովդես Թագաւորն լսեց , (ինչու որ՝ Նորա անունն յայտնի էլաւ . և ասումէր՝ թէ Յովհաննէս մկրտիչն մեռելներն միջից յարութիւն առաւ , և նրա համար զօրութիւններ են լինում Նորանով[15] :

15 Ուրիշներն ասումէին՝ թէ Եղիան է . և ուրիշներն թէ Մարգարէ է , կամ՝ թէ մարգարէներից մինին պէս[16] :

16 Երբոր Հերովդես լսեց , ասաց . Այս Յովհաննէսն է՝ որ Նորա գլուխն ես կտրեցի . նա մեռելներն միջից յարութիւն առաւ[17] :

17 Ինչուորՙ ինքն Հերովդես ուղարկեց , Յովհաննէսին բռնեց՝ և Նորան կապեց՝ և դրաւ բանտի (գնդապանի) մէջ Հերովդիայի համար , որ իրան եղբօր Փիլիպպոսի կինն էր . պատճառն որՙ նա իրան կին առաւ Նորան :

18 Ինչուորՙ Յովհաննէս Հերովդեսին ասումէրՙ թէ Օրէնք չէ քեզՙ որ քո եղբօր կինն ունենաս[18] :

19 Եւ Հերովդիան Նորա դէմ ոխ էր պահում , և ուզումէր սպանել Նորան՝ և չէր կարում :

20 Պատճառնորՙ Հերովդէսն Յովհաննէսից վախումէր[19] . ինչուորՙ Նորան արդար և սուրբ մարդ էր ճանաչում . և Նորան մխիկ էր տալիս . և Նորանից շատ բան լսելով՝ անումէր , և քաղցրութեամբ առնումէր Նորան :

21 Երբոր մին յարմար օր պատահեց[20] , որ ժամանակ Հերովդես իրան ծնունդի օրումն ընթրիք (հացկերոյթ) էր տալիս իրան իշխաններին և զօրապետներին և Գալիլեացոց մեծամեծներին[21] :

22 Եւ Հերովդիայի աղջիկն որ մտաւ՝ և պար եկաւ , Հերովդեսին և Նորա հետ նստածներին հաճոյ ելաւ . Թագաւորն ասաց աղջկանն . Խնդրիր ինձանից ինչ որ կամենաս , և կրտամ քեզ :

23 Եւ շատ անգամ երդում էլաւ Նորան՝ թէ Ինչ բան որ դու խնդրես ինձանից , կրտամ քեզ , մինչև իմ Թագաւորութեան կէսն[22] :

(7) Նայ . ծթ . 16 : (8) Պատ . թ . 35 : Ղուկ . ժզ . 22 : (9) Պատ . ժ . 1 : Պատ . գ . 13 , 14 : Ղուկ . թ . 1 : (10) Գործ . յը . 3 : (11) Պատ . ժ . 11 : Ղուկ . թ . 4 : ժ . 7 , 8 : (12) Պատ . ժ . 14 : Ղուկ . ժ . 10 : (13) Գործ . ժգ . 51 : ժը . 6 : (14) Յակ . ե . 14 : (15) Պատ . ժգ . 1 : Ղուկ . թ . 7 : (16) Պատ . ժը . 14 : Պատ . ը . 28 : (17) Պատ . ժգ . 2 : Ղուկ . գ . 19 : (18) Ղեւ . ժը . 16 : ի . 21 : (19) Պատ . ժգ . 5 : ի . 26 : (20) Պատ . ժգ . 6 : (21) Ծննդ . ի . 20 : (22) Էսթ . ե . 3 . 6 : է . 2 :

24 Ահա դուրս գնաց և իրան մոբըն ասաց՝ Ի՞նչ խնդրեմ · և նա ասաց , Յովհաննէս մկրտչի գլուխը :
25 Եւ շուտով մինէլ մտաւ թագաւորին մօտ՝ և ասաց · Կամենում եմ որ հիմիկ շուտով սկուտեղի (պինախ) վերայ տաս ինձ Յովհաննէս մկրտչի գլուխը :
26 Եւ թագաւորն շատ տրտմեցաւ[23] · բայց իրան երդմունքի և կանչածի մարդկանցն համար չկամեցաւ անարգել նորան :
27 Եւ թագաւորն շուտով դահիճ (ջելլադ) ուղարկեց և հրամայեց , որ նորա գլուխը բերէ · և գնաց նորա գլուխը կտրեց բանտի միջումն :
28 Եւ նորա գլուխը սկուտեղով (պինախ) բերաւ՝ և աղջկանն տուաւ · և աղջիկն տարաւ տուաւ իրան մօրն :
29 Երբոր նորա աշակերտներն լսեցին , եկին նորա մարմինը վերկալան՝ և գերեզմանի մէջ դրին :
30 Առաքեալներն Յիսուսի մօտ ժողովվեցան[24] , և նորան պատմեցին ամէն ինչ որ արին և ինչ որ սովորցրին :
31 Եւ Յիսուս նորանց ասաց · Ուրուք առանձին անապատ (չէօլ) տեղ եկէք , և մինչիչ հանգիստ առէք[25] · պատճառն որ՝ շատ մարդիք էին որ գնումէին և գալիս էին[26] , և չունէին ժամանակ էլ չունէին :
32 Եւ նաւով առանձին անապատ տեղ գնացին[27] :
33 Եւ տեսին նորանց որ գնումէին՝ և շատ մարդիք իմացան · և ամէն քաղաքներից իրար վերայ դիզված ոտով հետեղ էին վազում , և նորանց մտաւ էին :
34 Եւ դուրս եկաւ , շատ ամբոխ (խալխ) տեսաւ , և նորանց վերայ խղճաց[28] · ինչուոր ոչխարներին պէս էին , որ հովիւ (չոպան) չունին · և սկսեց նորանց շատ բան սովորցընել[29] :
35 Եւ երբոր շատ ժամանակ անցաւ՝ աշակերտներն մօտ եկին և ասացին[30] · Այս տեղս անապատ է · դեռ քանի որ ցերեկ է ,
36 թող արա էդ ժողովուրդնեըրդ որ չորս կողմով էլած շէներն և գիւղերն գնան՝ իրանց համար գնեն ինչ որ ուտելու լինին · պատճառնոր՝ էստեղ ուտելոյ բան չունին :
37 Ահա պատասխան տուաւ և նորանց ասաց · Դուք տուէք դորանց ուտել · նորան ասացին՝ Վնանք երկու հարիւր դահեկանի հաց գընենք , և դորանց տանք՝ որ ուտեն[31] :
38 Նորանց ասաց · Քանի՞ հատ հաց ունիք՝ գնացէք տեսէք · երբ որ գիտացին , նորան ասացին · Հինգ՝ և երկու ձուկն[32] :
39 Եւ հրամայեց նորանց՝ որ դաս դաս կանանչ խոտի վերայ նստին :
40 Եւ դաս դաս նստեցին մինտեղ հարիւր՝ և մին տեղ հիսուն :
41 Եւ էն հինգ հացըն և երկու ձուկըն առաւ , դէպի երկինքն նայեց՝ օրհնեց , էն հացերըն կոտորեց , և աշակերտներին տուաւ՝ որ քցեն նորանց առաջն[33] · և էն երկու ձուկըն բաժանեց ամէնին :
42 Կերին և կըշտացան ,
43 Եւ մնացած կտորներըն տասն երկու քոթոց լիքն վեր կալան , և էն ձկներիցն էլ :
44 Եւ նորանք որ կերին՝ հինգ հազարի չափ մարդիք էին :
45 Եւ շուտով աշակերտներըն

(23) Մատթ · ժդ · 9 : (24) Ղուկ · թ · 10 : (25) Մատթ · ժդ · 13 : (26) Մարկ · զ · 20 : (27) Մատթ · ժդ · 13 : (28) Մատթ · թ · 36 · ժդ · 14 : (29) Ղուկ · թ · 11 : (30) Մատթ · ժդ · 15 · Ղուկ · թ · 12 : (31) Թագ · ժա · 13 · 22 : գ Թագ · գ · 43 : (32) Մատթ · ժդ · 17 · Ղուկ · թ · 13 : Հովհ · զ · 9 : Մատթ · ժե · 34 : Մարկ · ը · 5 : (33) ա Թագ · թ · 13 : Մատթ · իզ · 26 :

վաճաղացրուց , որ նաև մանն[34] , և իրանից առաջ էն կողմն Իսթեսա-միդա գնան՝ մինչև որ ինքն ժողովուրդները արձակէ :

46 Եւ նորանցից բաժանվեցաւ , և վերբեւաւ սարն՝ որ աղօթք անէ :

47 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ նաւըն ծովի մէջն էր , և ինքն ցամաքումն[35] :

48 Եւ նորանց տեսաւ՝ որ նաւ վարելոյ ժամանակն ալէկոծվումէին . ինչու որ քամին ներհակ էր նորանց . և գիշերի չորս բաժընի ժամանակն ծովի վերայ գնալով՝ նորանց մօտ եկաւ , և ուզումէր որ նորանցից անցկենայ[36] :

49 Նորանք երբոր տեսին՝ որ ծովին վերայ գնումէր՝ կարծեցին թէ աչքի երևոյթ բան լինի , և ձայնով աղաղակ բարձրացրին :

50 Ինչուոր՝ ամէնքն նորան տեսին՝ և շըփոթվեցան . և նա շուտով նորանց հետ խօսեց և ասաց . Սրտապինդ կացէք , ես եմ՝ մի՛ վախենաք :

51 Եւ վեր էլաւ նաւն նորանց մօտ՝ և քամին հանդարտեց . և իրանց մէջներումն էլ աւելի յիմարված էին , և շատ զարմանումէին .

52 Ինչուոր՝ էն հացին վերայ էլ չիմացան[37] . պատճառն որ՝ նորանց սիրտն թմրած էր[38] :

53 Եւ երբոր էն կողմն անցկացան , Գեննեսարեթի երկիրն եկին[39] :

54 Եւ երբոր էն նաւից դուրս եկին , էն տեղի մարդիքն շուտով ճանաչեցին նորան :

55 Եւ էս կողմն էն կողմն ամէն գաւառն վազելով սկսեցին հիւանդներին մահճակներով (պէօչէնէքով) բերել՝ որտեղ որ լսումէին՝ թէ էնտեղ է :

56 Եւ որտեղ որ մտնումէր գիւղեր կամ քաղաքներ կամ շէներ՝ ցաւագարներըն փողոցների մէջն էին դնում , և նորան աղաչումէին՝ որ լինի թէ նորա շորերի ծայրին (էշեկնէքին) մօտենան[40] . և ամէն նորանք որ մօտեցան՝ փրկվեցան :

ԿԼ · Ի

1 Աշակերտներն առանց լուանալոյ ձեռքով հաց ուտելոյ համար փարիսեցիներն կը բամբասանն : 8 Իրանք մարդկանց աւանդութիւնն պահելոյ համար՝ Աստուծոյ պատուիրանքն թող կըտան : 14 Ներսակուրն և իսկի մին բան չէ կարող պղծել մարդուն : 24 Կիրխտոս կը բժշկէ Փիւնիկեցի Աորոց աղջկին մին կնիկի աղջկին պղծ դևից , 31 Եւ մինչ խուլ և համր մարդն :

1 Եւ ժողովվեցան նորա մօտ փարիսեցիներն և կարդացօղներից մին քանիսն՝ որ Երուսաղէմից էին եկել՝ :

2 Եւ երբոր տեսին՝ որ նորա աշակերտներից մին քանիսն՝ խառնըված ձեռքով , այսինքն՝ առանց լուանալոյ հաց էին ուտում , բամբասեցին :

3 Պատճառնոր՝ փարիսեցիներն և ամէն Հրէաներն (Ջհուդներըն)՝ թէ որ բուռըն լցված չըլուանան ձեռներըն՝ հաց չեն ուտում . ինչուոր ծերերի աւանդութիւնն են պահում :

4 Եւ փողոցից որ գալիս են՝ եթէ առաջ չըլուացվին , չեն ու-

(34) Մատ . ԺԴ . 22 : Յովհ . Զ . 17 : (35) Մատ . ԺԴ . 23 : Յովհ . Զ . 16 , 17 : (36) Ղուկ . ԻԴ . 28 : (37) Մարկ . Ը . 17 , 18 : (38) Մարկ . Գ . 5 : ԺԶ . 14 : (39) Մատ . ԺԳ . 34 : (40) Մատ . Թ . 20 : Մարկ . Ե . 27 , 28 : Գործ . ԺԹ . 12 : Ա) Մատ . ԺԵ , 1 :

տում • և ուրիշ էլ շատ բան կայ՝ որ ընդունեցին պահել • բաժակների (Ղուեղէ) և փարչերի և պըղընձէ ամաններուն և մահճակալներուն (Թէօշէկներէն) լուացմունքներ ։

5 Ցետոյ փարիսեցիներն և գրագէտներն հարցրին նորան՝ Թէ Ինչու քո աշակերտներդ ծերերի աւանդութեան պէս չեն գնում[2] • այլ խառնրված ձեռքով հաց են ուտում ։

6 Նա պատասխան տուաւ և նորանց ասաց՝ Թէ Եսային լաւ մարգարէացաւ ձեզ կեղծաւորներիդ վերայ՝ ինչպէս որ ասաց • Այս ժողովուրդս պատուներովն է պատուում ինձ , և նորանց սրտերն ինձանից հեռացած ջոկված են[3] ։

7 Ունայն տեղն են պաշտում ինձ • մարդկանցից պատուիրած վարդապետութիւններըն են սովորցնում ։

8 Աստուծոյ պատուիրանքըն թողած՝ մարդկանց աւանդութիւնըն էք պահում , փարչերի և ամանների լուացմունքներ՝ և սորանց նման էլ շատ բաներ էք անում ։

9 Եւ նորանց ասաց • Լաւ էք անարգում Աստուծոյ պատուիրանքըն , որ ձեր աւանդութիւնըն պինդ պահէք ։

10 Ինչուոր՝ Մովսէս ասաց • Պատո հօրդդ և մօրդդ պատուիր[4] • և Նա որ հօրիցն կամ մօրիցն չարախօսութիւն կանչ , թող մահով մեռնի[5] ։

11 Եւ դուք ասում՝ Թէ որ մինըն հօրն կամ մօրն ասէ Թէ Կորբան[6] , այսինքն պատարագ (է) են՝ որ ինձանից պէտք է շահվիս ։

12 Եւ էլ թոյլ չէք տալիս նորան որ մին բան անէ հօրն կամ մօրն ։

13 Եւ Աստուծոյ բանըն անարգում էք ձեր աւանդութիւնովն որ աւանդեցիք • և ուրիշ էլ շատ բաներ՝ որ սրան նման է՝ անում էք ։

14 Եւ ամէն ժողովուրդն իրան մօտ կանչեց , և նորանց ասաց • Լսեցէք ինձ լսեցէք՝ և մտքներդ առէք[7] ։

15 Ոչի մի բան չկայ որ դրսից մարդոյ մէջ մտած՝ կարողանայ պղծել նորան • այլ որ նորանից դուրս է գալիս՝ են է՝ որ մարդոյն պղծում ։

16 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[8] ։

17 Եւ երբոր էն ամբոխից (խուճ խնդն) տուն եկաւ՝ աշակերտներն հարցրին նորան էն առակին համար[9] ։

18 Եւ նորանց ասաց • Այդպէս դուք էլ անխելք էք • չէք իմանում՝ Թէ ամէն ինչ որ դրսից է մտնում մարդոյ մէջն՝ չի կարող պղծել նորան ։

19 Պատճառնոր՝ ոչ Թէ նորա սիրտն է մտնում , բայց փորն՝ և դուրս է գալիս , և ամէն կերակուրներըն սրբում ։

20 Եւ ասում՝ Ինչ որ մարդուցն դուրս է գալիս՝ էն է պղծում մարդոյն ։

21 Ինչուոր՝ ներսից մարդկանց սրտից չար խորհուրդներ են դուրս գալիս[10] , շընութիւններ , պոռնկութիւններ ,

22 Գողութիւններ , սպանութիւններ , գաղտնութիւններ , չարութիւններ , նենգութիւններ , պիղծ ցանկութիւններ , նախանձոտութիւն , հայհոյութիւն , ամբարտաւանութիւն , անզգամութիւն ։

23 Այս ամէն չար բաներս ներսից են դուրս գալիս , և մարդոյն պղծում են ։

24 Եւ հետեղից վերկացաւ՝ և եկաւ Տիւրոսի և Սիդոնի կողմերն[11] •

(2) Մարկ • ժե • 2 ։ (3) Եսայ • խթ • 13 ։ Մարկ • ժե • 8 ։ (4) Ելք • բ • 12 ։ Բ Օրին • ե • 16 ։ Մարկ • ժե • 4 ։ (5) Ելք • իա • 17 ։ Ղեւ • բ • 9 ։ Ընտ • բ • 20 ։ (6) Մարկ • ժե • 5 ։ իդ • 18 ։ (7) Մարկ • ժե • 10 ։ (8) Մարկ • ժե • 15 ։ (9) Մարկ • ժե • 15 ։ (10) Ծննդ • զ • 5 ։ ը • 21 ։ Մարկ • ժե • 19 ։ (11) Մարկ • ժե • 21 ։

և տուն որ մնաւ՝ չէր ուզում որ մինին յայտնըվի , և չըկարաց ծած-
կըվիլ :
25 Ա՛ին կին Նորա համար լսեց՝ որ Նորա աղջիկն պիղծ դևից չար-
չարված էր . եկաւ և Նորա ա-
ռաջին ընկաւ :
26 Եւ էն կինն հեթանոս էր՝ փիւ-
նիկեցի Լսորոց ազգիցն . և աղա-
չումեր Նորան՝ որ դևըն իրան աղջ-
կանիցն դուրս հանէ :
27 Եւ Յիսուս Նորան ասաց . Թո՛ղ՝
որ առաջ երեխաներն կըշտանան .
ինչուո՞ր՝ լաւ չէ՝ երեխաների հա-
ցըն առնել և շներին քցել :
28 Նա պատասխան տուաւ և ա-
սաց . Տէր՝ շներն էլ երեխաների
փշրանքներիցն են կերակրըվում :
29 Եւ Նորան ասաց . Ընդ խօս-
քիդ համար գնա՝ դևն դուրս ե-
կաւ քո աղջկանիցն :
30 Գնաց իրան տունն , և գտաւ
որ դևն դուրս էր եկել , և աղ-
ջիկն՝ որ մահճի (փէօշէնի) վերայ
վէր ընկած էր :
31 Եւ մինէլ Տիւրոսի և Սիդօնի
կողմերիցն դուրս գնաց , և Գալիլ-
եացոց ծովի կողն (ղըռղն) եկաւ՝
Դեկապօլիսի միջի կողմերն[12] :
32 Եւ մին խուլ (խոռ) և համր
(լռլիկ) (մարդ) բերին Նորա առա-
ջըն[13] . և աղաչումեին որ ձեռըն
դնէ Նորա վերայ :
33 Եւ Նորան ամբոխիցն (խալխ-
ըցն) մին կողմն տարաւ , իրան մատ-
ներըն Նորա ականջներին մէջ տա-
րաւ՝ և թքեց հնտեղ , և Նորա
լեզուիցն բռնեց[14] :
34 Երկինքն նայեց[15] , յոգոց հա-
նեց և ասաց[16] . Եփփաթա՝ որ է
ասել , բացվիր :
35 Եւ շուտով հենց էն ժամումն
(սահլուկումն) Նորա ականջներն բաց-
ուան , և լեզուի կապանքներն ար-
ձակվեցան[17] . և շիտակ խօսումեր :
36 Եւ Նորանց պատուիրեց՝ որ
խոկի մինին չասեն[18] . և որչափ նա
պատուիրումեր Նորանց , Նորանք
էլ աւելի քարոզումեին .
37 Եւ չափիցն էլ աւելի զարմա-
նումեին և ասում . Ա՛ա ամէն բան
լաւ գործեց . ինչուո՞ր՝ խուլերին
(խոռներին) լսել է տալիս՝ և համըր-
ներին (լռլիկներին) խօսել :

ԳԼ · Ը

1 Քրիստոս հրաշքով ժողովուրդն կըկերակրէ , 11 փարիսեցոց խնդրած նշանն չէ՛ ուզում տալ . 15 Իրան աշակերտներին խրատ կըտայ որ փարիսեցոց և Հերովդեսեանների խմորիցն զգուշ լինին : 22 Մին կոյր մարդու աչքերն կըբանայ : 27 Պետրէ Թէ ինչէ է Քրիստոսն՝ որ պիտք է Նորան շատ չարչարանք քաշել և երեք օրից յարութիւն առնել : 34 Նէ կըսովրցնէ որ աւետարանի համար իրանց հալածված ժամանակն համբերութիւն անեն :

1 Ն օրերումն մինէլ շատ ժո-
ղովուրդ կար , և բան չունէին
ուտելոյ՝ . իրան աշակերտներըն
կանչից՝ և Նորանց ասաց :
2 Խնդճա գալիս է էդ ժողովըր-
դիդ վերայ . ինչուո՞ր՝ հիմիկ երեք
օր է՝ որ ինձ մօտ են , և բան
չունին որ ուտեն :
3 Եւ թէ որ Նորանց սոված ար-
ձակեմ դէպի իրանց տունն՝ սոված
ծուխներնիցն կըթուլանան ճանապար-
հումն . ինչուո՞ր՝ դորանցից կան ,
որ հեռու տեղից են եկել :
4 Նորա աշակերտներն պատաս-

(12) Մարկ . ԺԵ . 29 : (13) Մարկ . Թ . 32 : Ղուկ . ԺԱ . 14 : (14) Մարկ . Ը . 23 : Յովհ . Թ . 6 : (15) Մարկ . Ղ . 41 : Յովհ . ԺԱ . 41 : ԺԷ . 1 : (16) Յովհ . ԺԱ . 33 . 38 : (17) Ղուկ . Լ . 5 , 6 : Մարկ . ԺԱ . 5 : (18) Մարկ . Ե . 43 : (1) Մարկ . ԺԵ . 32 :

խան տուին Նորան • Որտեղից կա-
րող ես հացով կըշտացնել դորանց
էս անապատ (չէօլ) տեղումն :

5 Եւ Նորանց հարցնումէր՝ Թէ
Քանի՞ հատ հաց ունիք • Եւ Նո-
րանք ասացին՝ Եօթն[2] :

6 Եւ ժողովըրդին հրամայեց որ
երկրի վերայ նստին • Եւ էն եօթն
հացըն առաւ՝ գոհացաւ , կտրեց , և
աշակերտներին էր տալիս՝ որ քցեն •
Եւ քցեցին ժողովըրդի առաջն :

7 Եւ մին քիչ ձուկըն ունէին •
Եւ Նորան էլ օրհնեց , և հրամա-
յեց որ քցեն[3] :

8 Կերին և կըշտացան • Եւ աւել-
ցած կտորներըն եօթն քթոց վեր-
կալան :

9 Եւ Նորանք որ կերին՝ չորս
հազարի չափ էին • Եւ Նորանց ար-
ձակեց :

10 Եւ շուտով էն ժամումն (առ-
Հասուա՜ն) աշակերտներին հետ Նաւ
մտաւ[4] և Դալմանուննայի կողմերն
եկաւ :

11 Փարիսեցիներն եկին՝ և սկսե-
ցին Նորա հետ հակառակիլ՝ • Եւ Նո-
րան փորձելով՝ Նորանից մին նշան
էին խնդրում երկնքից :

12 Եւ Նա շատ տրտմեցաւ իրան
սրտումն՝ և ասաց • Ի՞նչ է , որ
էս ազգս նշան է խնդրում • Ճշմա-
րիտըն ասումեմ ձեզ , Թէ որ էս
ազգիս նշան տրվվի :

13 Ետրանց թողեց • մինել Նաւ
մտաւ՝ և էն կողմն գնաց :

14 Եւ մոռացան իրանց հետ հաց
վեռառնել[6] բայց մէնակ մին հաց
ունէին իրանց հետ Նաւի մէջն :

15 Եւ Նորանց պատուիրումէր և
ասում[7] • Զգոյշ կացէք էն փա-
րիսեցիների խմորիցն և Հերովէս-
եանների խմորիցն :

16 Եւ իրար հետ միտք էին ա-
նում՝ և ասում , Թէ Նրա հա-
մար՝ որ հաց չունինք[8] :

17 Յիսուս իմացաւ և Նորանց ա-
սաց՝ Թէ Ի՞նչ էք միտք անում ձեր
սրտերումդ՝ որ Թերահաւատներ ,
Թէ հաց չունիք • դեռ չէք իմա-
նում և չէք յիշում[9] • Թմրութիւ-
նըն բռնել է ձեր սրտերըն :

18 Աչք ունիք՝ և չէք տեսնում •
ականջ ունիք՝ և չէք լսում • և դեռ
չէք իմանում , և չէք յիշում :

19 Որ ժամանակ էն հինգ հացըն
հինգ հազարին համար (կտրեցի) ,
քանի՞ քթոց լիքն վեր առիք Նորա
կտորներըն[10] • Եւ Նորան ասացին՝
Տասներկու :

20 Եւ որ ժամանակ եօթն հացըն
չորս հազարին համար , քանի՞ քը-
թոց լիքն վեր առիք Նորա կտոր-
ներըն[11] • Եւ Նորանք ասացին , Եօ-
թըն :

21 Եւ Նորանց ասաց • Ա՞պա ի՞նչ-
պէս չէք իմանում[12] :

22 Եւ Բեթսայիդա եկին , և Նորա
առաջն մին կոյր բերին , և Նորան
աղաչեցին՝ որ մօտենայ Նորան :

23 Եւ կոյրի ձեռքից բռնեց՝ շէ-
նից դուրս հանեց , Նորա աչքե-
րին մէջ թքեց , և ձեռըն դրաւ
Նրա վերայ[13] • Եւ Նորան հարցնու-
մէր՝ Թէ մին բան տեսնումէ :

24 Նայվաւ՝ և ասումէր • Ա՛րդ-
կանց տեսնումեմ՝ որ ծառերի պէս
ման են գալիս :

25 Ա՛յնէլ ձեռներըն Նորա աչ-
քերին վերայ դրաւ՝ բայ արաւ ,
և տեսնումէր • ողջացաւ՝ և ամէն
բան Համաձակ տեսնումէր :

26 Ետրան ուղարկեց իրան տու-
նըն՝ և ասաց • Հէնն չէ մըտ-
նես , բայց քո տունդ գնա • և երբոր

(2) Մարկ • ժե • 34 : Մատ • ը • 38 : (3) Մարկ • ժդ • 19 : Մատ • ը • 41 : (4) Մարկ • ժե • 39 : (5) Մարկ • ժբ • 38 : ժդ • 1 : Հովհ • ը • 30 : (6) Մարկ • ժդ • 5 : (7) Մարկ • ժդ • 6 : Ղուկ • ժբ • 1 : (8) Մարկ • ժդ • 7 : (9) Մատ • ը • 52 : (10) Մարկ • ժդ • 20 : Մատ • ը • 43 : Ղուկ • թ • 17 : Հովհ • ը • 13 : (11) Մարկ • ժե • 37 : վէր • 8 : (12) Մատ • ը • 52 : վէր • 17 : (13) Մատ • է • 33 :

չէնն մանես՝ չէնի մէջն մընինչ ասես[14]։
27 Եւ Յիսուս աշակերտներին հետ դուրս գնաց Փիլիպպեայ կեսարիայի շէներն[15] • և ճանապարհումն աշակերտներին հարցնումէր և ասումէր՝ Մարդիկն ինձ համար ո՞վ են ասում՝ որ լինիմ։
28 Նորանք պատասխան տուին՝ և ասացին • (Թէ) Յովաննէս մկրտիչն, և ուրիշներն՝ (թէ) Եղիան, և ուրիշներն՝ (թէ) Մարգարէներից մինն[16]։
29 Նորանց ասաց • Դուք ո՞վ էք ասում ինձ համար՝ որ լինիմ • Պետրոսն պատասխան տուաւ, և Նորան ասաց • Դու Քրիստոսն ես[17]։
30 Եւ Նորանց սաստեց՝ որ իսկի մընին բան չասեն իրան համար[18]։
31 Եւ սկսեց սովորցնել Նորանց, (թէ պէտք է՝ որ Որդին մարդոյ շատ չարչարանք քաշէ, և անարգվի ծերերից և քահանայապետներից և կարդացողներից, և մեռնի՝ և երեք օրումն յարութիւն առնի[19]։
32 Եւ համարձակ խօսից բանըն • և Պետրոս Նորան մին կողմ քաշեց՝ և սկսեց սաստել Նորան։
33 Եւ Նա դարձաւ, աշակերտներին տեսաւ՝ Պետրոսին սաստեց և ասաց • Յետ գնա ինձանից Սատանայ • ինչուր՝ դու Աստուծոյ բաներըն միտք չես անում՝ բայց մարդկանց բաներըն։
34 Եւ ժողովուրդըն աշակերտներին հետ իրան մօտ կանչեց • և Նորանց ասաց • (Թէ որ մինն ուզումէ իմ ետևէս գալ՝ նա թող իրան անձըն ուրանայ, և իրան խաչըն վեր առնի՝ և իմ ետևէս գայ[20]։
35 Պատճառնոր ով որ կամենայ իրան անձըն ապրեցնել՝ կկորցնէ Նորան[21] • և ով որ իրան անձըն աւետարանին համար կկորցնէ, կապրեցնէ Նորան։
36 Ի՞նչ օգուտ է մարդոյ որ ամէն աշխարհքըս ստանայ՝ և իրան անձին վնաս տայ։
37 Պատճառնոր՝ ի՞նչ բան կըտայ մարդն իրան անձին տնկակ։
38 Ինչուր՝ ով որ ինձ և իմ խօսքերըս[22] ամօթ կըհամարէ[23] էս շնացող և մեղաւոր ազգիս միջումն, Որդին մարդոյ էլ Նորան ամօթ կանի՝ երբոր իրան Հօր փառքովն և սուրբ հրեշտակներովն կգայ։
39 Եւ Նորանց ասաց • Ճշմարիտըն ասումեմ ձեզ • (Թէ էստեղ կանգնածներից մին քանին կան՝ որ մահ չեն տեսնիլ[24] մինչև որ Աստուծոյ արքայութիւնըն տեսնեն զօրութեամբ գալ եկած[25]։

ԳԼՈՒԽ Թ

1 Յիսուսի կերպարանքի փոխվելն։ 11 Նրանց գալը համար աշակերտներին կրպատմէ • 24 Մին մունջ համր և խուլ դև դուրս կըհանէ։ 30 Իրան մեռնելն և յարութիւն առնելն առաջուց կասէ։ 34 Իրան աշակերտներին խրատ կըտայ որ խոնարհ լինին, 38 Եւ կըպատուիրէ թէ իրանց հակառակ չկռղներին չարգելեն, 41 Ո՛չ էլ հաւատացեալներից մընին զայթակղութիւն չտան։

1 Եւ վեց օրից ետև Յիսուս նէսին իրան հետ առաւ, և Նոպետրոսին և Յակոբին և Յովհան- բանց առանձին մին բարձր սար

(14) Մատթ • ը • 4։ Մարկ • ճ • 43։ (15) Մատթ • ժգ • 13։ Ղուկ • թ • 18։ (16) Մատթ • ժգ • 2։ (17) Մատթ • ժգ • 16։ Յովհ • գ • 69 • ժա • 27։ (18) Մատթ • ժգ • 20։ (19) Մատթ • ժգ • 21։ ժէ • 22։ Ղուկ • իբ • 22։ (20) Մատթ • ժ • 38 • ժգ • 24։ Ղուկ • թ • 23։ ժդ • 27։ (21) Յովհ • ժբ • 25։ (22) Մատթ • ժ • 33։ Ղուկ • թ • 26։ ժբ • 9։ (23) Հռոմ • ա • 16։ բ Տիմ • ա • 8։ բ • 12։ (24) Մատթ • ժգ • 28։ Ղուկ • թ • 27։ (25) Մատթ, իզ • 30։ իմ • 31։ Ղուկ • իբ • 18։

հանեց · և Նորա կերպարանքն փոխվեցաւ Նորանց առաջին[1] :

2 Եւ Նորա շորերն փայլուն և շատ սպիտակ էլան[2] · որ երկրիս վերայ կտաւ սպիտակացնողներն չեն կարող հնպէս սպիտակացնել :

3 Եւ Եղիան Մովսէսին հետ Նորանց երևեցաւ , և Յիսուսի հետ խօսումէին :

4 Պետրոս պատասխան տուաւ՝ և Յիսուսին ասց · Ռաբբի՝ լաւ է որ մենք էս տեղ կենանք · և երեք տաղաւար (շատըր) կըշինենք՝ մինը քեզ համար և մինը Մովսէսին և մինը Եղիային :

5 Պատճառնոր՝ չէր գիտում ինչ էր խօսում · ինչուոր՝ խիստ վախեցած էին :

6 Եւ մին ամպ էլաւ՝ որ Նորանց վերայ շուաք արաւ · էն ամպիցն ձայն էլաւ՝ և ասց · Այս է իմ սիրելի Որդին , դորան ականջ դրէք :

7 Եւ շուտով որ էս կողմն էն կողմն նայեցին՝ էլ ուրիշ մարդ չըտեսին , բայց մենակ Յիսուսին իրանց հետ :

8 Եւ երբոր էն սարիցն վէր էին գալիս , Նորանց պատուիրեց՝ որ իսկի մէնին չըպատմեն ինչ որ տեսին[3] , բայց էն ժամանակն որ Որդին մարդոյ մեռելների միջիցն յարութիւն առնէ :

9 Եւ Նորանք էն խօսքըն մտքնեբումն էին պահում՝ , և իրար հետ հարցնումէին՝ թէ ինչ է էն մեռելների միջիցն յարութիւն առնելն :

10 Նորան հարցրին և ասացին · Ինչ է էն՝ որ կարդացօղներն ասումեն՝ թէ պէտք է որ առաջ Եղիան գայ[4] :

11 Նա պատասխան տուաւ Նորանց՝ և ասց · Եղիան առաջ կըգայ , և ամէն բան կարգին կըդնէ · բայց ինչպես է գրված Որդոյ մարդոյ համար[5] , թէ շատ պիտի չարչարվի և անարգվի[6] :

12 Մի՝այն թէ ես ասումեմ ձեզ՝ թէ Եղիան եկաւ , և ինչ որ ուզեցին , Նորան արին[7] · ինչպես որ էլ Նորա համար գրված է :

13 Եւ երբոր եկին աշակերտներին մօտ , Նորանց չորս կողմնին ամբոխ (խալկ) տեսին[8] , և կարդացօղներին՝ որ Նորանց հետ հակառակութիւն էին անում :

14 Եւ շուտով ամէն ժողովուրդն երբոր տեսին Նորան , զարմացան և առաջ վազելով՝ Նորան բարև էին տալիս :

15 Եւ Նորանց հարցրուց՝ թէ ինչ էիք հակառակում Նորանց հետ :

16 Ժողովրդի միջիցն մինն պատասխան տուաւ՝ և ասց[9] · Վարդապետ՝ իմ որդիս քեզ մօտ բերի , որ Նորան համր (լալկի) դև բռնել է :

17 Եւ որտեղ որ Նորան հասնում՝ Նորան գետնով է տալիս · և փրփրացնումէ՝ և ատամներըն կըճըտացնումէ և ցամաքումէ · և քո աշակերտներին ասացի՝ որ հանեն , և չըկարացին հանել Նորան :

18 Նորանց պատասխան տուաւ և ասց · Ով անհաւատ ազգ՝ մինչև երբ ձեզ հետ պիտի լինիմ , մինչև երբ ձեզ պիտի համբերեմ · Նորան ինձ մօտ բերէք :

19 Եւ Նորան բերին Նորա մօտ · երբոր դևն Նորան տեսաւ , շուտով սաստիկ շարժեց Նորան[10] · և գե-

(1) Մարկ · ժէ · 1 : Ղուկ · թ · 28 : (2) Դան · է · 9 : Մարկ · իը · 3 : (3) Մարկ · ժէ · 9 : (4) Մալ · դ · 5 : Մարկ · ժէ · 10 : (5) Մալ · իը · 6 : Նայ · ծգ · 2 : Նայն : Դան · թ · 26 : (6) Ղուկ · իդ · 11 : Գնչ · բ · 7 : (7) Մարկ · ժա · 13 : ժէ · 12 : Ղուկ · ա · 17 : (8) Մարկ · ժէ · 14 : Ղուկ · թ · 37 : (9) Մարկ · ժէ · 14 : Ղուկ · թ · 38 : (10) Մարկ · ա · 26 : Ղուկ · թ · 42 :

մինն ընկած Թաւալումէր և փրփրըրումէր ։

20 Նորա հօրն հարցուց և ասաց • Ո՞րան ժամանակ է՝ որ էդ բանդ էլաւ դորան • և նա ասաց՝ Երեխայութենիցն ։

21 Հա՛ւատ անդամ կրակի մէջն է քցում և ջրի մէջն՝ որ դորան կորցընէ • ապա թէ որ մին բան կարող ես՝ օգնիր մեզ Տէր՝ խղճալով մեզ վերայ ։

22 Եւ Յիսուս նորան ասաց • Ասացիր՝ թէ որ կարող ես • ամէն բան կարելի է նորան՝ որ հաւատումէ[11] ։

23 Եւ շուտով տղայի հայրն աղաղակեց՝ և ասաց • Հաւատումեմ, իմ անհաւատութենանս օգնիր ։

24 Երբոր Յիսուս տեսաւ՝ թէ ժողովուրդն վերայ է կիտվում, էն պիղծ դևին սաստեց և ասաց • Ո՛վ համր (լռէն) և խուլ (չաա) դև՝ ես հրաման եմ տալիս քեզ, դորանից դուրս եկ, և մինէլ դորա մէջ չըմտնես ։

25 Եւ շատ աղաղակեց՝ և սաստիկ չարչարեց նորան, և դուրս եկաւ • և տղան մեռածի պէս էլաւ • մինչև որ շատերն ասումէին՝ թէ Ա՛նուս ։

26 Եւ Յիսուս նորա ձեռիցն բռնանեց, նորան վերկացուց, և կանգնեց ։

27 Եւ երբոր նա տուն մտաւ՝ աշակերտներն առանձին հարցրին նորան՝ (թէ) Ա՛նք ինչու՞ չըկարացինք հանել նորան[12] ։

28 Եւ նորանց ասաց • Ձեզ ցեղ ուրիշ բանով դուրս չի գալ, եթէ ո՛չ պաստ և աղօթքով ։

29 Եւ էն տեղից դուրս եկած՝ Գալիլեացոց միջովն անց էին կենում • և չէր ուզում որ մինն իմանայ ։

30 Ինչուար՝ իրան աշակերտներըն սովորցնումէր՝ և նորանց ասումէր՝ թէ Որդին մարդոյ մարդկանց ձեռքն պիտի մատնվի, և նորան կըսպանեն • և երբոր կըսպանվի, երեք օրումն յարութիւն կառնի[13] ։

31 Եւ նորանք էն բանըն չէին իմանում • և վախումէին որ հարցնեն նորան ։

32 Կափառնայում եկաւ[14] • և երբոր տուն մտաւ, նորանց հարցնումէր՝ (թէ) Ո՞նց էիք հակառակում իրար հետ ։

33 Եւ նորանք լուռ էին կենում • պատճառնըր՝ ճանապարհումն իրար հետ հակառակումէին թէ ով լինի մեծն ։

34 Եւ երբոր նստեց, տասներկուսին կանչեց և նորանց ասաց • Ով որ մինն ուզումէ առաջին լինել՝ թող ամէնիցն փոքր՝ և ամէնին պաշտօնեայ լինի[15] ։

35 Եւ մին երեխայ առաւ, կանգնացուց նորանց միջումն[16] • և նորան առաւ իրան գիրկն՝ և նորանց ասաց ։

36 Ո՛վ որ էսպէսի երեխաներիցն մինըն իմ անունովս կընդունի՝ ինձ կընդունի • և ո՛վ որ ինձ կընդունի՝ ինձ չի՛ ընդունիլ, այլ նորան՝ որ ինձ ուղարկեց[17] ։

37 Յովհաննէս նորան պատասխան տուաւ և ասաց[18] • Վարդապետ՝ մինը տեսինք որ քո անունովդ դևեր էր հանում՝ և մեր նաւէն մեզ չէր գալիս, և արգելեցինք նորան ։

38 Եւ նա ասաց • Ո՛չ արգելէք նորան • ինչուար՝ ո՛չ ով չըկայ՝ որ իմ անունովս զօրութիւն անէ, կարենայ հայհոյել ինձ[19] ։

(11) Մարկ • ժէ • 21 ։ Մատ • ժա • 23 ։ Ղուկ • ժէ • 6 ։ Յովհ • ժա • 40 ։ (12) Մարկ • ժէ • 19 ։ (13) Մարկ • ժէ • 22 ։ Ղուկ • թ • 44 ։ (14) Մարկ • ժը • 1 ։ Ղուկ • թ • 46 ։ իբ • 24 ։ (15) Մարկ • ի • 26, 27 ։ Մատ • ժ • 43 ։ (16) Մարկ • ժը • 2 ։ Մատ • ժ • 16 ։ (17) Մարկ • ժ • 40 ։ Ղուկ • թ • 48 ։ (18) Մարկ • ժա • 28 ։ Ղուկ • թ • 49 ։ (19) ա Պետր • ժը • 3 ։

39 Պատճառնոր՝ նա որ մեզ հա-
կառակ չէ՝ մեր կողմն է[20] :
40 Եւ ով որ մին բաժակով (ըմ-
պել) ջուր կրնտացնէ ձեզ ես անուա-
նովս՝ թէ դուք Քրիստոսինն էք ,
ճշմարիտն ասումեմ ձեզ՝ նա չի
կորցնիլ իրան վարձքն[21] :
41 Եւ ով որ կրգայթակղեցնէ
ես փոքրներուս մինին՝ որ ինձ հաւա-
տումն , աւելի լաւ էր նորան՝ որ
իրան վզովը մին իշու ջադացի քար
անցկացնուին , և ծովն քցվի[22] :
42 Եւ եթէ քո ձեռդ քեզ գայ-
թակղեցնէ՝ կտրիր նորան , քեզա-
նից դէն քցիր · ինչուր՝ լաւ է քեզ՝
որ խեղ (առկոյս) մտնես կեանքն ,
քանթէ երկու ձեռք ունենաս՝ և գնհեննի
անանցնելի կրակին մէջն[23] :
43 Որտեղ որ նորանց որդն չի
մեռնում՝ և կրակն չի անցնում[24] :
44 Եւ եթէ քո ոտդ քեզ գայ-
թակղեցնէ , կտրիր նորան՝ քեզա-
նից դէն քցիր · լաւ է քեզ որ կաղ
մտնես յաւիտենական կեանքին ,
քանթէ երկու ոտք ունենաս՝ և գե-
հենն ընկնիս էն անանցնելի կրակի
մէջն :
45 Որտեղ որ նորանց որդն չի
մեռնում՝ և կրակն չի անցնում :
46 Եւ եթէ քո աչքդ քեզ գայ-
թակղեցնէ՝ դուրս հանիր նորան ·
լաւ է քեզ՝ որ մին աչքով Աստու-
ծոյ արքայութիւնն մտնես , քանթէ
երկու աչք ունենաս՝ և գեհենն ընկ-
նիս :
47 Որտեղ որ նորանց որդն չի
մեռնում՝ և կրակն չի անցնում :
48 Պատճառնոր՝ ամէն բան կրա-
կով պէտք է աղանվի , և ամէն մա-
տաղն աղով պէտք է աղանվի[25] :
49 Աղն բարի է[26] · և թէ որ աղն
անհամանայ , ինչով պիտի համե-
ղանայ · ուրեմն դուք աղըն բունե-
ցէք ձեր անձներումնի[27] , և իրար հետ
խաղաղութիւն արէք[28] :

ԳԼ · Ժ

2 Քրիստոս կին բաց Թողելոյ գրին համար փարիսեցոց հետ հակաճառութիւն կանէ · 13 Իրան բերված երեխաներըն կօրնէ · 17 Հայց կըտայ թէ հարուստ մարդն ինչպէս կարօղ է յաւիտենական կեանքն ժառանգել , 23 Հարուստների վտանգն իրան աշակերտներին ցոյց կըտայ · 28 Նէհոտարանի համար ամէն բան Թողողներին՝ վարձքի խոստմունք կըտայ , 32 Իրան մատ և չարութիւն առնելն առաջուց ասումէ · 35 Պատռ սիրող երկու աշա-
կերտներին պատուէր կըտայ որ ամէնից աւելի իրան հետ չարչարելոյ վերայ մտածեն ։
46 Նէ Յարիխոեցոն աչքերըն կը բանայ ։

1 Եւ հետեւելոցն վերկացաւ և
կաւ Երբեստանի (Ջհուդապետական)
կողմերն՝ Յորդանանի էն կողմն[1] · և
մինէլ ժողովուրդն կիտված գնուա-
մէին նորա մօտ , և ինչպէս որ նո-
րա սովորութիւն էր՝ մինէլ սո-
վորցնումէր նորանց :
2 Հայց փարիսեցիներն մօտ և-
կին , և փորձելով նորան հարցնուա-
մէին և ասում · թէ Թոյժան է մար-
դոյ՝ որ իրան կինը բաց Թողէ[2] :
3 Նա պատասխան տուաւ նո-
րանց և ասաց · Մովսէսն ինչ պա-
տուիրեց ձեզ :

(20) Մարկ · ԺԲ · 30 : (21) Մարկ · Ժ · 42 : (22) Մարկ · ԺԲ · 6 : Ղուկ · Ժէ · 1 :
(23) Բ Օրէն · Ժգ · 6 : Մարկ · Թ · 29 : ԺԲ · 8 : (24) Եսայ · կգ · 24 :
(25) Ղեւ · Բ · 13 : Եհէ · խդ · 24 : (26) Մարկ · Թ · 13 : Ղուկ · Ժգ · 34 : (27) Եփես · գ ·
29 : կող · դ · 6 : (28) Հռոմ · ԺԲ · 18 : ԺԴ · 19 : Բ Կորնթ · ԺԳ · 11 : Եբր · ԺԲ ·
14 : (1) Մարկ · ԺԹ · 1 : Հովհ · Ժ · 40 : ԺԱ · 7 : (2) Մարկ · ԺԹ · 3 :

4 Եւ նորանք ասացին . Մովսէսն հրաման տուաւ՝ գուրս անելոյ թուղթ գրել , և գուրս անել[3] :

5 Յիսուս պատասխան տուաւ և նորանց ասաց . Ձեր քարասրտութեան համար էն պատուիրանքն գրեց ձեզ :

6 Այլ ստեղծագործութեան սկզբիցն Աստուած նորանց արու (ոչխ) և էգ արաւ[4] , և ասաց .

7 Սրահամար մարդն իրան հօրն և մօրն կըթողէ , և իրան կնկան հետն կըգնայ[5] :

8 Եւ երկուքն մին մարմին կըլինին . և նրանից ետև երկու չեն՝ բայց մին մարմին են :

9 Ուրեմն էն որ Աստուած միաւորեց՝ թող մարդն չըջոկէ :

10 Եւ տան մէջն աշակերտներն մինէլ հենց էն բանըն հարցրին նորան :

11 Եւ նորանց ասաց . Ով որ մարդ իրան կինն բաց թողէ՝ և մին ուրիշն առնէ , շնութիւն է գործում[6] :

12 Եւ կինն՝ թէ որ իրան մարդուն դուրս գնայ՝ և ուրիշ մարդոց լինի՝ շնութիւն է գործում :

13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ ձեռըն դնէ նորանց վրայ . բայց աշակերտներն սաստում էին նորանց՝ որ բերումէին :

14 Երբոր Յիսուս տեսաւ՝ բարկացաւ և նորանց սաստից և ասաց . Թոյլ տուէք էդ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան , և մի՛ արգելէք դորանց . ինչուոր էդպիսիներն է Աստուծոյ արքայութիւնն[8] :

15 Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ (թէ) ով որ Աստուծոյ արքայութիւնն չընդունի ինչպես երեխայ՝ նա չի մտնիլ նորա մէջ[9] :

16 Եւ նորանց գիրկն առաւ՝ ձեռըն դրաւ նորանց վերայ՝ և նորանց օրհնեց :

17 Եւ հետզհետէ որ գուրս գնաց ճանապարհն , ահա մին հարուստ մարդ վազելով եկաւ՝ ծունր էր դրնում՝ նորան հարցնումէր և ասում . Բարի վարդապետ . ինչ գործեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ[10] :

18 Եւ Յիսուս նորան ասաց . Ինչի՞ ես ինձ բարի ասում՝ ոչ ով բարի չըկայ , բայց միայն մինն Աստուած :

19 Պատուիրանքներըն գիտումես՝ Մի՛ շնար , Մի՛ սպաներ , Մի՛ գողանար , Մի՛ սուտ վկայիր , Պատիւ տուր հօրըդ և մօրըդ պատուիրի[11] :

20 Էս պատասխան տուաւ և նորան ասաց . Վարդապետ՝ էդ ամենըդ իմ երեխայութենիցն արի . ապա էլ ինչ բանով եմ պակաս :

21 Եւ Յիսուս նորան մտիկ տուաւ՝ նորան սիրեց , և նորան ասաց . Մինն բան պակաս է քեզանից . թէ որ կամենաս կատարեալ լինիլ , գնա , ինչ որ ունիս՝ ծախիր և աղքատներին տուր . և դանձ (խազնայ) կունենաս երկնքումն[12] . և խաչըն առ՝ և իմ ետևէս եկ :

22 Եւ նա էն բանին համար դժուարացաւ՝ և տըրտմած գնաց . պատճառն որ՝ շատ ապրանք ունէր :

23 Եւ Յիսուս էսկողմն էնկողմն նայելով՝ աշակերտներին ասաց . Ինչքան դժուար է՝ որ նորանք որ ապրանք ունին՝ Աստուծոյ արքայութիւնն մտնեն[13] :

(3) բ Օրին . իդ . 1 : Ծննդ . և . 31 : ժթ . 7 : (4) Ծննդ . ա . 27 : և . 2 : (5) Ծննդ . բ . 24 : ա Կորնթ . զ . 16 : Եփես . և . 31 : (6) Ծննդ . և . 32 : ժթ . 9 : Ղուկ . ժգ . 18 : Հռոմ . է . 3 : ա Կորնթ . է . 10 , 11 : (7) Ծննդ . ժթ . 13 : Ղուկ . ժը . 13 : (8) ա Կորնթ . ժգ . 20 : ա Պետր . բ . 2 : (9) Ծննդ . ժը . 3 : (10) Ծննդ . ժթ . 16 : Ղուկ . ժը . 18 : (11) Ելք . բ : Հռոմ . ժգ . 9 : (12) Ծննդ . զ . 19 , 20 : ժթ . 21 : Ղուկ . ժբ . 33 : ժգ . 9 : (13) Ծննդ . ժթ . 23 : Ղուկ . ժը . 24 :

24 Եւ աշակերտներն զարմացեալ էին նորա խօսքերին վերայ · բայց Յիսուս մինէլ պատասխան տուաւ նոցանց և ասաց · Որդեակներ՝ ո՛րքան գժուար է՝ որ նորանք՝ որ իրանց յոյսըն ապրանքի վերայ են դրել, Աստուծոյ արքայութիւնն մտնեն[14] :

25 Աւելի հեշտ է որ ուղտն ասղի ծակով անցկենայ, քանթէ հարուստըն Աստուծոյ արքայութիւնն մտնէ :

26 Եւ նորանք էլ աւելի զարմանուէին՝ և միմեանց մէնէին ասուէին · Ապա ո՛վ կարենայ ապրիլ :

27 Յիսուս նորանց մտիկ տուաւ և ասաց · Մարդկանց կողմանէ՝ էդ անկարելի է, բայց ո՛չ թէ Աստուծոյ կողմանէ[15] :

28 Պետրոսն սկսեց նորան ասել · Էհա մենք ամէն բան թողինք, և քո ետևէդ եկինք[16] :

29 Յիսուս պատասխան տուաւ և ասաց · Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ ո՛չ ով չըկայ՝ որ տունը կամ եղբարները կամ քրվերքը կամ հօրը կամ մօրը կամ որդիքը կամ արտերը թողնէ՝ ինձ համար կամ աւետարանին համար ·

30 Իր հարիւրապատիկ հիմիկ էս ժամանակումն չառնէ տըներ և եղբարներ և քրվերք և մարք և որդիք և արտեր հալածմունքի հետ, և էն նոր գալու աշխարհքումն յաւիտենական կեանքըն[17] :

31 Պատճառներ՝ շատ առաջիններ յետինք կըլինին՝ և յետիններն առաջինք[18] :

32 Եւ ճանապարհի վերայ էին՝ որ Երուսաղէմ էին գնում, և Յիսուս նորանցից առաջ էր գընում[19] · և նորանք՝ որ ետևէն գընումէին, զարմացած էին և վախենումէին : Եւ տասներկուսին միւնէլ առանձին առաւ, սկսեց նոցանց ասել՝ թէ ինչ բաներ իրան վերայ պիտի անցկենան[20] :

33 Թէ Էհա վեր ենք էլում Երուսաղէմ · և Որդին մարդոյ կըմատնըվի քահանայապետների և կարդացօղների ձեռքն · և նորան մահով կըդատապարտեն, և նորան հեթանոսներին կըմատնեն ·

34 Եւ նորան ծաղր կանեն, և նորան կըծեծեն, և նորա վերայ կըթքեն, և կըսպանեն · և երեք օրումն յարութիւն կառնէ :

35 Եւ Յակոբեդիայի որդիքն՝ Յակօբոսն և Յօհաննէսն նորա մօտ էին գնում՝ և նորան ասացին · Վարդապետ՝ ուզումենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ անես[21] :

36 Եւ նա նորանց ասաց · Ինչ էք խնդրում ինձանից՝ որ ձեզ անեմ :

37 Եւ նորանք ասացին նորան · Տո՛ւր մեզ՝ որ մինն քո աջ կողմդ և մէկէն քո ձախ կողմդ նստինք քո փառքումդ :

38 Յիսուս պատասխան տուաւ և նորանց ասաց · Չէք գիտում՝ (թէ) ինչ էք խընդրում · կարո՞ղ էք էն բաժակըն (նաւքն) խմել՝ որ ես պիտի խմեմ, կամ էն մկրտութենովն մկրտվել՝ որ ես պիտի մկրտվիմ :

39 Եւ նորանք ասացին նորան · Կարօղ ենք · և Յիսուս նորանց ասաց · Էն բաժակըն (նաւքն)՝ որ ես պիտի խմեմ, կըխմէք, և (էն) մկրտութենովն՝ որես պիտի մկրտվիմ կըմկրտվիք :

40 Այլ իմ աջ և իմ ձախ կողմըս նստացնելն իմս չէ որ տամ · բայց նորանց՝ որ պատրաստված է :

(14) Յովբ · լա · 24 : Սաղ · ծբ · 7 : կբ · 10 : ա Տիմ · զ · 17 : (15) Երէմ · լբ · 17 : Սաղ · ժթ · 26 : Ղուկ · ա · 37 : (16) Սաղ · ժթ · 27 : Ղուկ · ժբ · 28 : (17) բ Տնոց · իե · 9 : Ղուկ · ժբ · 30 : (18) Սաղ · ժթ · 30 : ի · 16 : Ղուկ · ժգ · 30 : (19) Սաղ · ի · 17 : Ղուկ · ժբ · 31 : (20) Մատ · ը · 31 : թ · 31 : Ղուկ · թ · 22 : ժբ · 31 : (21) Սաղ · ի · 20 ·

41 Եւ էն (մկկէլ) տասներն որ լսեցին, սկսեցին բարկանալ Յակոբի և Յովհաննէսի վերայ[22] :

42 Եւ Յիսուս նորանց իրան մօտ կանչեց, և նորանց ասաց • Դիտումէք՝ որ հնձանոցների իշխան կոչվածներն նորանց վերայ տիրում են, և նորանց մեծամեծներն իշխանութիւն են անում նորանց վերայ[23] :

43 Այնպէս չի պիտի լինի ձեր միջումդ • բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինել՝ թող ձեզ պաշտօնեայ լինի[24] :

44 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինել՝ թող ամենից ծառայ լինի :

45 Պատճառներ՝ Որդին մարդոյ էլ չեկաւ՝ որ իրան ծառայեն՝ բայց որ ինքն ծառայէ[25], և իրան անձն շատերի տեղակ փրկութեան գին տայ[26] :

46 Եւ Երիքով եկին • և երբոր նա աշակերտներովն և շատ ժողովուրդներով Երիքովից դուրս եկաւ, Տիմէի որդի Բարտիմէոս կոյրն ճանապարհի վերայ նստած էր մուրացող[27] :

47 Երբոր լսեց՝ թէ Յիսուս Նազովրեցին է, սկսեց աղաղակել և ասել • Յիսուս որդի Դաւթի՝ ինձ ողորմեայ :

48 Եւ շատ մարդիք սաստում էին նորան՝ որ լուռ կենայ • և նա էլ աւելի աղաղակէր • Որդի Դաւթի՝ ինձ ողորմեայ :

49 Յիսուս կանգնեց և հրամայեց՝ որ նորան կանչեն • կուրին կանչեցին՝ և նորան ասացին • Սիրտդ պինդ բռնիր • վերկաց, քեզ կանչում է :

50 Եւ նա իրան շորերն վեր քցեց՝ վերկացաւ և Յիսուսի մօտ եկաւ :

51 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց • Ի՞նչ ես կամենում, որ անեմ քեզ • կոյրն նորան ասաց • Ռաբբունի՝ որ բացվիմ :

52 Եւ Յիսուս նորան ասաց • Գնա՝ քո հաւատդ քեզ ապրեցրուց[28] • և շուտով բացվաւ, և ճանապարհումն նորա ետևէն գնում էր :

ԳԼՈՒԽ

1 Երիքոնոյ աւանակի վերայ նստած փառքով Երուսաղէմ մտնում • 13 Միայն տերևով լիք անպտուղ ծառն կանիծէ • 15 Տաճարն կըմաքրէ • 20 Իրան աշակերտներին խրատ կը տայ որ հաստատ հաւատք ունենան, և իրանց թշնամիներին ներեն • 27 Իրան արած գործերն ինչ իշխանութիւնով լինին Յովհաննէսի մկրտութիւնովն ցոյց կըտայ որ նորան Աստուածանից ուղարկված մին մարդ էր :

1 Եւ երբոր Երուսաղէմին մօտենան, Բեթփագէ և Բեթանիա (եկին) Ձիթենեաց սարին մօտ՝ էն աշակերտներից երկուսը ուղարկեց[1] :

2 Եւ նորանց ասաց • Գնացէք դուք էդ գիւղը՝ որ ձեր առաջին կայ • և շուտով երբոր նորա մէջ մտնէք, մին քուռակ կըգտնէք կապած՝ որ նորա վերայ իսկի մարդ չէ նստած • նորան արձակեցէք և բերէք :

3 Եւ թէ որ մինն ասէ ձեզ • Թէ ինչու համար էք էդ քուռա-

(22) Մարկ • բ • 24 : (23) Ղուկ • իբ • 25 : (24) Մարկ • բ • 26 • 28 : Մատ • թ • 35 : Ղուկ • թ • 48 : (25) Հովհ • ժգ • 14 : Փիլիպ • բ • 7 : (26) Մարկ • բ • 28 ; ա Տիմ • բ • 6 : Տիտ • բ • 14 : (27) Մարկ • բ • 29 : Ղուկ • ժը • 35 : (28) Մարկ • թ • 22 : Մատ • ե • 34 : (1) Մարկ • իա • 1 : Ղուկ • ժթ • 29 : Հովհ • ժը • 14 :

կըդ արձակում, ասացէք՝ Թէ Ահա տէրին պէտք է. և շուտով Նորան էստեղ կուղարկէ ։

4 Վնասին և քուռակըն գտին դուրսն փողոցի մէջ դըռների առաջին կապած, և Նորան արձակեցին ։

5 Եւ մին քանիսն Նորանցից՝ որ էնտեղ կանգնած էին՝ ասացին Նորանց. Ի՞նչ էք անում. ինչո՞ւ համար էք արձակում էդ քուռակըդ,

6 Եւ Նորանք ասացին Նորանց ։ ինչպէս որ Յիսուս ասց. և Թոյլ տուին Նորանց ։

7 Քուռակըն Յիսուսի մօտ բերին. և Նորա վերայ շորեր քցեցին, և Նորա վերայ նստեց ։

8 Եւ շատ մարդիք իրանց շորերըն ճանապարհի վերայ փռումէին, և ուրիշներն ծառերից ճըղներ էին կտրում և ճանապարհի վերայ փռում[2] ։

9 Եւ Նորանք որ առաջին և ետևէն գնումէին՝ աղաղակումէին և ասում. Ովսաննայ Խարձրելոյն[3] ։

10 Օրհնեալ (եւս)՝ որ Տէրի անունովն ես գալիս. օրհնեալ է մեր Դաւիթի հօր եկած թագաւորութիւնն. խաղաղութիւն երկնքումն՝ և փառք ի բարձունս ։

11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ՝ տաճարին մէջ[4]. և չորս կողմով ամէն բանի մտիկ տուաւ. և որովհետև իրիկվան ժամանակ էր, դուրս գնաց Բեթանիա՝ տասներկուսին հետ ։

12 Եւ հէգուցվան օրն երբոր Բեթանիայից դուրս էին գալիս, նա սովեց[5] ։

13 Եւ հեռուանց մին թզղի ծառ տեսաւ տերևով լիքն[6]. և մօտ եկաւ՝ որ Նորա վերայ մին բան գըտնէ. և երբոր եկաւ՝ իսկի մին բան չըգտաւ Նորանում՝ բայց միայն տերև. ինչուոր դեռ թզղի ժամանակն չէր ։

14 Պատասխան տուաւ և Նորան ասց. Մինէլ մինն քեզանից յաւիտեան պտուղ չուտէ. և Նորա աշակերտներն լսումէին ։

15 Եկին Երուսաղէմ[7]. և տաճարն մտաւ՝ սկսեց դուրս հանել վաճառականներըն և գնողներըն՝ որ տաճարումն էին. և ըստակ փոխողների (առաքինէրի) սեղաններըն ցրվեց, և աղաւնի ծախողների աթոռներըն կործանեց ։

16 Եւ չէր թողում՝ որ մինն մին բան տաճարի միջովն անցկացնէ ։

17 Եւ սովրեցնումէր և Նորանց ասումէր. Կրված է Թէ Իմ տունս ըստ աղօթքի տուն պիտի կոչվի ամէն հեթանոսներին համար[8]. և դուք աւազակների բուն արիք դարան[9] ։

18 Քահանայապետներն և կարգաւորները լսեցին և խնդրումէին՝ թէ ի՞նչպէս կորցընեն Նորան[10]. բայց վախենումէին Նորանից. ինչուոր՝ ամէն ժողովուրդն նորա վարդապետութեան վերայ զարմացել էին[11] ։

19 Եւ երբոր իրիկուն էր լինում՝ քաղաքից դուրս էին գնում ։

20 Եւ առաւօտանց երբոր Նորա մօտովն անց էին կենում՝ տեսին էն թզղի ծառն արմատից (ռիզից) չորացած[12] ։

21 Պետրոս միտքն բերաւ՝ և Նորան ասաց. Ռաբբի՝ ահա էն թզղի ծառն որ անիծեցիր՝ չորացաւ ։

22 Յիսուս պատասխան տուաւ և Նորանց ասաց. Թէ որ Աստուծոյ հաւատքըն ունենաք,

23 Ամէն իսկ ձեզ, Թէ Ով որ էս սարիս ասէ՝ Թէ Վէր կաց և ծովն ընկիր, և ի-

(2) Մատ. իա. 8 ։ (3) Սաղ. ճժը. 26 ։ Ղուկ. ։ 1 ։ (4) Մատ. իա. 12 ։ (5) Մատ. իա. 18 ։ (6) Մատ. իա. 19 ։ (7) Մատ. իա. 12 ։ Ղուկ. ժթ. 45 ։ Յովհ. բ. 14 ։ (8) Եսայ. ծզ. 7 ։ (9) Երեմ. է. 11 ։ (10) Մատ. իա. 45, 46 ։ Ղուկ. ժթ. 47 ։ (11) Մատ. է. 28 ։ Մարկ. ա. 22 ։ Ղուկ. դ. 32 ։ (12) Մատ. իա. 19 ։

բան սրտումն չի՛ երկմտի , բայց հաւատայ՝ թէ էն որ ասուածն կըլինի , նորան կըլինի ինչ որ կասէ[13] :

24 Սրահամը ասուածմ ձեզ՝ թէ Ամէն բան , որ նորա համար ա- ղօթք անելով խնդրէք , և հաւա- տաք՝ թէ կառնէք , էն կըլինի ձեզ[14] :

25 Եւ որ ժամանակ աղօթք ա- նէք , թողութիւն տուէք՝ թէ որ մէնիցն մին բան ունենաք[15] • որ ձեր Հայրն էլ որ երկնքումն է՝ ձեր մեղքըն թողէ ձեզ :

26 Պատճառնոր՝ եթէ դուք թո- ղութիւն չըտաք , ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է , ձեր մեղքըն չի թողիլ ձեզ[16] :

27 Ա՛ինէլ Երուսաղէմ եկին • և դեռքանի որ նա տաճարումն ման էր գալիս , քահանայապետներն և կարդացօղներն և ծերերն նորա մօտ եկին[17] :

28 Եւ նորան ասացին • Ի՞նչ իշ- խանութենով ես անում էդ՝ և մի՞ տուաւ քեզ էդ իշխանութիւնըդ :

29 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց • Ես էլ ձեզանից մին բան կըհարցընեմ • ինձ պա- տասխան տուէք , և ես էլ կասեմ ձեզ՝ թէ ի՛նչ իշխանութենով եմ անում էս :

30 Յօհաննէսի մկրտութիւնն եր- կնքի՞ցն էր թէ մարդկանցից • ինձ պատասխան տուէք :

31 Իրար հետ միտք էին անում և ասում • Եթէ ասենք՝ թէ Երկընք- քից , մեզ կասէ • Ա՛պա ինչո՞ւ չը- հաւատացիք նորան :

32 Ա՛յլ եթէ ասենք՝ Ա՛րդկան- ցից (է) , ժողովրդից վախենում- մենք • ինչուոր՝ ամէնքն ճանաչու- մէն Յօհաննէսին՝ թէ մարգարէ էր[18] :

33 Պատասխան տուին՝ և Յիսու- սին ասացին • Չենք գիտում : Եւ Յիսուս նորանց պատասխան տուաւ և ասաց • Ես էլ չեմ ասիլ ձեզ , թէ ի՛նչ իշխանութենով եմ ա- նում էս :

ԻԱ • ԺՒ

1 Ընկերախտ մշակներն տըվված այդոյ առակովը Քրիստոս Հրէաների դուռս քցվիլն և հե- թանոսների կոչվիլն առաջուց ասում է : 13 Այսորին հարկ տալը համար փարիսեցիներին և Հերովդէսեաններին որ խօսքով որսալ են ուզում՝ նորանից աղատվիլն : 18 Սադուկեցինե- րի մտըրված լինելն ցոյց կըտայ , որ նորանք ասուածին թէ Յարութիւն չկայ : 28 Առա- ջին պատուիրանքի համար կարդացողի հարցրածին պատասխան կըտայ • 35 Ցոյց կըտայ թէ Քրիստոսի համար կարդացողների կարծիքն ճշմարիտ չէ՛ • 38 Եւ պատուէր կըտայ ժողովրդին որ նորանց փառասիրութենից և կեղծաւորութենից զգոյշ լինին • 41 Եւ եր- կու լման քցող որբևարի հնին ամենից աւելի դովում է :

1 Եւ սկսեց նորանց հետ առակ- ներով խօսիլ՝ և ասել • Ա՛յին մարդ այգի (քաղ) տնկեց , և նորա չորս կողմնովն պարիսպ քաշեց , և գուբ ընձան փորեց , և աշտարակ (քո-ղէ) շինեց՝ և նորան մշակներին տուաւ՝ և հեռու աշխարհք գնաց՝ :

2 Եւ ժամանակով մշակների մէ- տըն մին ծառայ ուղարկեց որ էն մշակներից այդոյ (քաղէ) պըտղից առնէ :

3 Եւ նորանք բռնեցին՝ նորան

(13) Մարկ • ժ • 20 • իա • 21 : Ղ-ղ • ժ • 6 : (14) Մարկ • է • 7 : Ղ-ղ • ժա • 9 : Յովհ • ժդ • 13 : ժե • 7 : ժզ • 24 : Յակ • ա • 5 , 6 : (15) Մարկ • զ • 14 : Կող • գ • 13 : (16) Մարկ • ժը • 35 : (17) Մարկ • իա • 23 : Ղ-ղ • ի • 1 : (18) Մարկ • գ • 5 : ժդ • 5 : Մարկ • զ • 20 : (1) Մարկ • իա • 33 : Ղ-ղ • ի • 9 :

ծնծեցին , և դատարկ ճանապարհ քցեցին :

4 Ա՝ինել ուրիշ ծառայ ուղարկեց • և նորա գլուխըն պատառեցին՝ և թուքնումուր տալով արձակեցին :

5 Ա՝ինել ուրիշը ուղարկեց՝ և նորան սպանեցին • և էլ շատ ուրիշները , մին քանիսըն ծեծումէին և մին քանիսըն սպանումէին :

6 Ըպա իրան մին սիրելի որդի ունէր՝ յետոյ նորան ուղարկեց նորանց մօտ , և ասաց • Լ՝ինի որ էս իմ որդուցս ամաչեն :

7 Ռայց մշակներն երբոր տեսին նորան՝ որ գալիս էր , իրար ասացին • Ա՛ս է ժառանգն • եկէք սորան սպանենք՝ և ժառանգութիւնն մեզ լինի :

8 Եւ նորան բռնեցին , սպանեցին և այգուցն դուրս հանեցին :

9 Ըպա այգոյ տէրն ի՞նչ կանէ • կըգայ և էս մշակներըն կըկորցնէ , և այգին ուրիշների ձեռքըն կըտայ :

10 Եւ դուք չէ՞ք կարդացել էն գրածըն՝ թէ Ի՝ն քարն՝ որ շինողներն անարգեցին՝ նա էլաւ անկիւնի գլուխ[3] :

11 Տ՝էրիցն էլաւ էս բանս , և մեր աչքերի առաջին զարմանալի է :

12 Եւ կամենումէին՝ որ նորան բռնեն , և ժողովրդից վախեցան[3] • ինչուր՝ իմացան՝ թէ էն առակըն ի՝ րանց համար ասաց • և նորան թողն և գնացին :

13 Եւ փարիսեցիներից և Հ՝երոդէսեաններից մին քանի հոգի նորա մօտ ուղարկեցին՝ որ խօսքով որսան նորան[4] :

14 Եւ նորանք եկին՝ հարցնումէին նորան խաբերայութենով և ասում • Ա՝րդապետ՝ գիտումենք՝ որ ճշմարիտ Ե՝ս , և իսկի մըրնից հոգս չունի՝ և մարդոց երեսպաշտութիւն չես անում , բայց Ա՝ստուծոյ ճանապարհըն ճշմարտութենով սովորցնումես • ապա ասա մեզ , Կայսերին հարկ տալ արժա՞ն է՝ թէ չէ՞ տանք՝ թէ չըտանք :

15 Եւ Յիսուս իմացաւ նորանց կեղծաւորութիւնըն , նորանց ասաց • Ինչո՞ւ էք փորձում ինձ՝ կեղծաւորներ • մին դահեկան բերէք ինձ՝ որ տեսնեմ՝ :

16 Եւ նորանք բերին • և նորանց ասաց • Ի՝ս պատկերս կամ գիրս ո՞ւմ է • և նորանք ասացին նորան՝ Կայսերին :

17 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց • Վ՝նացէք կայսերիններն կայսերին տուէք՝ և Ա՝ստուծոյն՝ Ա՝ստուծոյն • և զարմացան նորա վերայ :

18 Ը՝նորա մօտ եկին սադուկեցիքն՝ որ ասումեն՝ թէ Յարութիւն չըկայ[5] • նորան հարցնումէին և ասում՝ :

19 Ա՝րդապետ՝ Ա՝օսէս մեզ հաւմար գրեց[7] • թէ որ մըրնի եղբայրն մեռնի և (իրան) կինըն թողէ , և որդի չըթողէ՝ թող նորա եղբայրն նորա կինըն առնէ , և իրան եղբօր համար զաւակ վերկացնէ :

20 Ըպա մեզ մօտ եօթըն եղբարք կային • առաջինն կին առաւ՝ և մեռաւ , և զաւակ չըթողեց :

21 Եւ երկրորդն նորան առաւ՝ և մեռաւ , և նա էլ զաւակ չըթողեց • էսպէս էլ երրորդն նորան առաւ :

22 Եւ չեն եօթն էլ՝ և զաւակ չըթողին • և ամենից ետև կինն էլ մեռաւ :

23 Ըպա յարութեան ժամանակումն՝ երբոր յարութիւն կանեն , նորանցից որի՞ն կըլինի կին • ինչուր՝ եօթըն էլ նորան կին առին :

24 Յիսուս պատասխան տուաւ և

(2) Սաղ • ճՀբ • 22 : (3) Մաթթ • իա • 45 , 46 : Մարկ • ժա • 18 : Յովհ • է • 25 • 30 • 44 : (4) Մաթթ • իբ • 15 : Ղ՝ուկ • ի • 20 : (5) Մաթթ • իբ • 23 : Ղ՝ուկ • ի • 27 : (6) Դուբ • իգ • 8 : (7) Բ Օրէն • իե • 5 :

նորանց ասաց • ՀՀ որ հենց դրա համար մոլորված էք՝ որ ոչ գիրքն էք գիտում և ոչ Աստուծոյ զօրութիւնն :

25 Պատճառնոր՝ երբոր մեռելներէ միջէն յարութիւն կառնեն՝ ոչ մարդիք կին կառնեն՝ և ոչ կանայք մարդոյ կըգնան՝ բայց հրեշտակներին պէս կըլլնին՝ որ երկնքումն են[8] :

26 Ա՛իայն թէ մեռելներուն յարութիւն համար՝ թէ յարութիւն պիտի առնեն, դուք չէք կարդացել Ա՛օսէսի գրքի մէջն՝ թէ Աստուած ինչպէս մոշի միջումն նորան ասաց • Ես եմ Աբրահամու Աստուածն, և Իսահակայ Աստուածն, և Յակոբայ Աստուածն[9] :

27 Եւ Աստուած՝ մեռելներուն (Աստուած) չէ, բայց կենդանիներուն • ուրեմն դուք շատ մոլորված էք :

28 Եւ կարդացողներէն միոն մօտ եկաւ՝ նորանց լսումէր՝ դեղքանի որ հակառակումէին • երբոր տեսաւ թէ լաւ պատասխան տուաւ նորանց՝ նորան հարցրուց և ասաց • Ո՞րն է պատուիրանքն որն է[10] :

29 Եւ Յիսուս նորան ասաց • Ա՛ռջինն առաջինն (էն է՝ թէ) Լսէր Իսրայէլ՝ մեր Տէր Աստուածն մին Տէր է[11] :

30 Եւ սիրէր քո Տէր Աստուածդ՝ քո ամէն սրտովդ, և քո ամէն անձնովդ, և քո ամէն մտքովդ, և քո ամէն զօրութենովդ • էս է առաջին պատուիրանքն :

31 Եւ երկրորդն՝ սորան նման • Պիտ ընկերդդ քո անձիդ պէս սիրէր • սորանցից աւելի մեծ ուրիշ պատուիրանք չկայ[12] :

32 Եւ կարդացողն նորան ասաց • Լա՛ւ ես ա՛րդապետ • ճշմարտութեանով ասացիր՝ թէ մին Աստուած է, և նորանից զոկ ուրիշ չկայ[13] :

33 Եւ նորան սիրելն ամէն սրտով և ամէն զօրութենով և ամէն մտքով, և ընկերըն անձին պէս սիրելն՝ աւելի է քանեթէ ողջակէզներն և մատաղներն[14] :

34 Եւ Յիսուս որ տեսաւ՝ թէ իմաստութենով պատասխան տուաւ՝ նորան ասաց • Դու Աստուծոյ արքայութենիցն հեռու չես • և նրանից ետև էլ մինն չէր համարձակվում՝ որ նորան մին բան հարցընէ[15] :

35 Յիսուս պատասխան տուաւ և ասաց, դեռքանի որ տաճարումն սովորցնումէր • կարդացողներն ինչպէս են ասում՝ թէ Քրիստոսն Դաւթի որդին է[16] :

36 Եւ ինքն Դաւիթ Սուրբ Հոգովն ասումէ[17] • Տէրն իմ Տէրին ասաց • (թէ) Իմ աջ կողմն նստիր՝ մինչև քո թշնամիներըն քո ոտացդ գոսնելիք դնեմ[18] :

37 Պա՛ թէ որ հենց ինքն Դաւիթ նորան Տէր է կոչում՝ ինչպէս նորա որդին կըլլնի • և շատ ժողովուրդներ քաղցրութենով լսումէին նորան :

38 Եւ իրան վարդապետութեան մէջ սովորցնելով ասումէր[19] • Զգաջ կացէք կարդացողներից՝ որ կամենումն պայծառ հագուստներով շուռ գալ[20], և բաց փողոցներումն առաջին բարևները խնդրել[21],

39 Եւ ժողովարանների մէջն առաջին աթոռները, և սեղան նըս-

(8) ա Կորնթ • ժե • 42 • 49 • 52 : (9) Ելք • գ • 6 : (10) Մատթ • իե • 35 : (11) բ Օրէն • ղ • 4 : Ղեւի • ժ • 27 : (12) Ղեւի • ժթ • 18 : Մատթ • իե • 39 : Հռովմ • ժգ • 9 : Գաղ • ե • 14 : Յակ • բ • 8 : (13) բ Օրէն • գ • 39 : Նեեմ • իե • 6 • 14 : Խղ • 9 : (14) ա Թագ • ժե • 22 : Ովսէ • ղ • 6 : Մարկ • ղ • 6 , 7 , 8 : (15) Մատթ • իե • 46 : (16) Մատթ • իե • 41 : Ղեւի • ի • 41 : (17) բ Թագ • իգ • 2 : (18) Պսաղ • ճժ • 1 : (19) Մատթ • գ • 2 : (20) Մատթ • իգ • 2 : Ղեւի • ի • 46 : (21) Ղեւի • ժա • 43 :

տելոյ ժամանակն գլխաւոր տեղերըն :
40 Որ որբևէրիների տներըն ու-
տումեն[22] , և պատճառներով երկար
աղօթք են անում՝ որ էլ աւելի
դատապարտութիւն առնեն :
41 Յիսուս գանձանակի դիմացն
կանգնած էր՝ տեսնումէր թէ ժո-
ղովուրդն ինչպէս էր պղինձ քցում
գանձանակն[23] • և շատ հարուստ-
ներ շատ բան քցեցին[24] :
42 Մին որբևէրի կին եկաւ՝ և
երկու լումայ քցեց , որ մին նաքա-
րակիտ (հինգ դող) է :
43 Եւ իրան աշակերտներըն իրան
մօտ կանչեց , և նորանց ասաց •
Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ էն
խղճալի որբևէրին շատ քցեց քան-
թէ էն ամէնքն՝ որ գանձանակն
քցեցին[25] :
44 Պատճառնոր ամէնքն իրանց ա-
ւելցածներիցն քցեցին • բայց նա
իրան չքաւորութենիցն ամէն ինչ
որ ունէր՝ իրան կեանքի ամէն ապ-
րուստըն քցեց[26] :

ԻԶ • ՅԻ

1 Քրիստոս տաճարի քանդվելն առաջուց ասումէ , 9 Եւ աւետարանի համար լինելոյ հալա-
ծանքներն • 10 Պէտք է որ աւետարանն ամէն ազգերի քարոզվի , 14 Մէ մեծ նեղու-
թիւնները գալիս են Երուսէղից վերայ : 24 Քրիստոսի դատաստանի գալն • 32 Որթա ժամն
ո՛չ ոք չի գիտում , նորա համար պէտք է որ ամէն մարդ արթուն լինի և աղօթք անէ որ
պատրաստ գտվի , և ամէնին էլ պէտք է որ արթուն լինին • ինչուոր՝ չեն գիտում թէ տան
տէրն երբ կըգայ • այսինքն՝ թէ մանչ երբ կըգայ :

1 Եւ տաճարիցն որ դուրս գնաց՝
նորա աշակերտներիցըն մինն նորան
ասաց • Վարդապետ , տես էս ինչ-
պէսի քարեր են , և ինչպէսի շին-
ուածներ են[1] :
2 Յիսուս նորան պատասխան տը-
ւաւ և ասաց • Տեսնումես էդ ամէն
շինուածներըդ • Ճշմարիտըն ասու-
մեմ ձեզ • որ էդ տեղ քար քարի
վերայ չի թողվիլ որ չը քանդվի[2] :
3 Եւ երբոր նա Ձիթենեացց սա-
րումն նստած էր տաճարի դիմացն ,
Պետրոսն և Յակոբոսն և Յոհան-
նէսն և Անդրէասն առանձին հար-
ցընումէին նորան :
4 Ասա մեզ • էդ բաներըդ երբ
կըլինի՞ և նշանն ի՞նչ է՝ երբոր էդ
ամէն բաներըդ պիտի կատարվին[3] :
5 Յիսուս պատասխան տուաւ և
նորանց ասաց • Զգոյշ կացէք ,
չը լինի որ մինն խաբէ ձեզ[4] :
6 Ինչուոր՝ շատ մարդիք կըգան
իմ անունովս , և կասեն՝ թէ Ես
եմ քրիստոսն՝ և շատ մարդ կը-
մոլորացնեն :
7 Այլ երբոր կռիւներ և կը-
ռիւների համբաւըն կըլսէք՝ մի՛ շը-
փոթվիք , ինչուոր՝ պէտք է որ էն
լինի • բայց դեռ վերջն չէ :
8 Պատճառնոր՝ ազգ ազգի վերայ
վերկըկենայ՝ և թագաւորութիւն
թագաւորութեան վերայ • և տեղ
տեղ երկրի շարժմունքներ կըլի-
նին , և սովեր և սաստիկ մահեր
և խռովութիւններ • բայց էն ամ-
ենն նեղութեանց սկիզբն է[5] :
9 Եւ հենց ձեզ էլ տիվանների
կըմատնեն , և ժողովարանների մէ-
ջըն կըտանջըվիք , և դատաւորնե-
րի և թագաւորների առաջին կը-

(22) Մարկ • իգ • 14 : (23) Ղուկ • իա • 1 : (24) դ Թագ • ժբ • 9 : (25) բ Կորնթ •
ը • 12 : (26) բ Օրին • իդ • 6 : ա Յովհ • դ • 17 : (1) Մարկ • իդ • 1 : Ղուկ • իա •
5 : (2) Ղուկ • ժբ • 44 : (3) Մարկ • իդ • 3 : Ղուկ • իա • 7 : (4) Երէմ • իթ •
8 : Եփես • ե • 6 : բ Թես • բ • 3 : (5) Մարկ • իդ • 8 :

կանգնիք ինձ համար՝ որ նորանց վկայութիւն լինի[6] ,

10 Եւ ամէն հեթանոսներին • մինչ*եւ* թէ առաջ պէտք է՝ որ Էս աւետարանս քարոզվի[7] :

11 Բայց երբոր ձեզ կըտանեն որ մատնեն՝ առաջուց հոգս չանիք և չը՛մտածիք թէ ի՞նչ պիտի խօսիք[8] • բայց ինչ որ էն ժամուն (առհա՛ս) կըտրվի ձեզ՝ էն պիտի խօսիք • ինչուոր՝ դուք չէք՝ որ խօսուիք , բայց Սուրբ Հոգին[9] :

12 Եղբայր եղբօրըն կըմատնէ մահի մէջ և հայր որդին • և որդիք վերկըկենան հարանց վերայ , և նորանց կըսպանեն[10] :

13 Եւ ամէնին ատելի կըլինիք իմ անունիս համար[11] • բայց ով որ մինչև վերջն կըհամբերէ՝ նա կապրի[12] :

14 Եւ երբոր տեսնիք աւերածի պղծութիւնըն , որ էն տեղումն կըկանգնի՝ որ արժան չէ[13] • ով որ կարդումէ , մի՛տ առնէ[14] • էն ժամանակն նորանք որ Հրէաստանումըն են՝ թող սարերն փախչին[15] :

15 Եւ ով որ կտներնրի վերայ է թող վե՛րչըգայ տան մէջ և չը՛մտնէ՝ իրան տանիցն մին բան վերառնել :

16 Եւ ով որ յանդումն է թող յետ չըդառնէ , որ իրան շորերըն առնէ :

17 Բայց էն օրերումն վա՛յ կըլինի յղացածներին և ծիծ տուօղներին[16] :

18 Աղօթք արէք՝ որ էն ձմեռան ժամանակումն չը՛լինի :

19 Էն օրերումն էնպէսի նեղութիւններ կըլինին՝ ինչպէս որ աշխարհքի սկզբիցն մինչև հիմիկ խօսկի մին ժամանակ չեն եղած , և էլ չեն լինիլ[17] :

20 Եւ թէ որ Տ՛ստուած իրան ընտրըվածներին համար էն օրերըն չէր կարճացրել , խկի մին մարմին չէր ապրիլ • բայց էն ընտրըվածներին համար՝ որ ընտրեց՝ էն օրերըն կարճացրուց :

21 Էն ժամանակն թէ որ մինն ասէ ձեզ՝ թէ Տ՛նա էս տեղ է Քրիստոս կամ էն տեղ , մի՛ հաւատաք[18] :

22 Պատճառներ՝ սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ վերկըկենան • և նշաններ և հրաշքներ առաջ կըբերեն՝ որ եթէ կարելի լինէր՝ ընտրըվածներին էլ կըմոլորացընեին :

23 Բայց դուք զգո՛յշ կացէք[19] • ահա ամէն բանըն առաջուց ասացի ձեզ :

24 Բայց էն օրերումն էն նեղութենիցն ետև արեգակն կըխաւարի՝ և լուսինն իրան լոյսն չի՛ տար[20] :

25 Եւ աստղներն երկնքիցն կըթափվին , և զօրութիւններն երկրնքումն կըշարժվին :

26 Եւ էն ժամանակն կըտեսանեն Որդին մարդոյ ամպերով եկած , շատ զօրութենով և փառքով[21] :

27 Եւ էն ժամանակն իրան հրեշտակներըն կուղարկէ , և իրան ընտրըվածներին չորս կողմիցն կըժողովէ երկրի ծայրեցն մինչև երկնքի ծայրն :

(6) Մարկ • ժ • 17 , 18 : Ղկ • 9 : Հայոց • բ • 10 : (7) Մարկ • Ղկ • 14 : (8) Մարկ • ժ • 19 : Ղ՛նա • ժբ • 11 : Ղա • 14 : (9) Գործ • բ • 4 : գ • 8 • 31 : (10) Մի՛ք • է • 6 : Մարկ • ժ • 21 : Ղկ • 10 : Ղ՛նա • Ղա • 16 : (11) Մարկ • Ղկ • 9 : Ղ՛նա • Ղա • 17 : (12) Գնա • ժբ • 12 : Մարկ • ժ • 22 : Ղկ • 13 : Հայոց • բ • 10 : (13) Մարկ • Ղկ • 15 : (14) Գնա • թ • 27 : (15) Ղ՛նա • Ղա • 21 : (16) Ղ՛նա • Ղա • 23 : Ղկ • 29 : (17) Գնա • թ • 26 : ժբ • 1 : Հայվէ՛ • բ • 2 : Մարկ • Ղկ • 21 : (18) Մարկ • Ղկ • 23 : Ղ՛նա • ժէ • 23 : Ղա • 8 : (19) Բ Պետր • գ • 17 : (20) Գնա • է • 10 : Նախ • ա • 15 : Մարկ • Ղկ • 29 : Ղ՛նա • Ղա • 25 : (21) Գնա • է • 13 , 14 : Մարկ • ժգ • 27 : Ղկ • 30 : Մարկ • ժգ • 62 : Գործ • ա • 11 : ա Թես • գ • 16 : բ Թես • ա • 7 • 10 : Հայոց • ա • 7 :

28 Ասայ դուք՝ Երզն ծառիցն սո-
վորեցէք առակըն • երբոր նորա ճը-
ղըն մին քիչ կըկակղին և տերև
կարձակվի նորանում՝ գիտուէք թէ
ամառն մօտ է[22] :

29 Ինպէս էլ դուք՝ երբոր տես-
նէք էս ամէն բաներըս էլած՝ իմա-
ցէք թէ էն մօտիկ է դրըներին :

30 Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ ,
թէ Իս պորտս չի անցկենալ մինչև
որ էս ամէնս լինի :

31 Երկինքն և երկիրս անցկըկե-
նան , բայց իմ խօսքերս չեն անցկե-
նալ[23] :

32 Ա՛յայն թէ էն օրին և ժամին
(սահմընին) համար ոչ ով չի գի-
տում՝ ոչ հրեշտակներն երկնքումն՝
և ոչ Որդին , բայց միայն Հայրն :

33 Զգո՛ւշ եղէք , արթո՛ւն կացէք
և աղօթք արէք • ինչուոր՝ չէք գի-
տում , թէ էն ժամանակն երբ կը-
լինի[24] :

34 Ինչպէս մին մարդ՝ որ հեռու
աշխարհք գնալոյ ժամանակումն՝ ի-
րան տուներն կըթողէ • և իրան ծա-
ռաներին իշխանութիւն կըտայ , և
ամէն մէկին իրան գործըն • և դըռ-
նապանին հրաման կըտայ՝ որ ար-
թուն կենայ[25] :

35 Արթո՛ւն կացէք[26] • ին-
չուոր՝ չէք գիտում , տան տէրն
երբ կըգայ՝ իրիկո՞ւնն , թէ մէջքի-
շերն , թէ հաւի խօսելոյ ժամանա-
կըն , թէ առաւօտանց :

36 Որ չըլինի թէ յանկարծ գայ՝
և ձեզ քընի մէջ գտնէ :

37 Ասայ ինչ որ ձեզ ասում՝ ա-
մէնին էլ ասումեմ • Արթո՛ւն կացէք :

ԳԼ • ՀԴ

1 Ա՛րիստոսի դէմ խորհուրդ կանէն որ Նորան բռնեն : 3 Մէն կին Նորա գլխին վերայ ազ-
նիւ իւղ կըթափէ : 10 Յուդայի իրան Տէր մատնելն վողի համար : 18 Ա՛րիստոս ուտա-
ջուց ասումէ թէ ի՞նչպէս իրան աշակերտներից մինն Նորան մատնումէ : 22 Օշխին պատ-
րաստելոյ և ուտելոյ ետև իրան ընթրիքն կըհաստատէ : 26 Խօսումէ առաջուց թէ ամէն ի-
րան աշակերտներն կըգայթակղըվին Նորանից և կըցրվին , և Պետրոսն էլ Նորան պիտի ու-
րանայ : 43 Յուդայի համբուրելով Նորան մատնելն : 46 Պարտէզի մէջ Նորան բռնու-
մէն , 55 Նրան սուտ վկայութիւն կանէն , և Հրէից ժողովն անօրէնութիւնով Նորան կը-
դատապարտեն • 65 Խայտառակութիւնով կընախատեն : 66 Պետրոսի երեք անգամ ու-
րանալն :

1 Եւ երկու օրից ետև զատիկըն
էր և բաղարջակերք[1] • քահանայա-
պետներն և կարգացօղներն խնդրուս-
մէն՝ թէ ի՞նչպէս Նորան ննենգու-
թենով բռնեն և սպանեն :

2 Ասայ ասումէին՝ թէ Իս տօ-
նուս չըլինի՝ որ ժողովրդի մէջն խը-
ռովութիւն չըլինի :

3 Եւ երբոր Բեթանիա էր՝ Սի-
մօն բորոտի տանն սեղան նստած[2]
մին կին եկաւ՝ որ մին շիշ (ղուշ)
աղնիւ թանկագին նարդոսի իւղ ու-
նէր , և էն շիշըն (ղուշն) կոտրեց՝
և Նորա գլխին վերայ թափեց :

4 Եւ աշակերտներն դժուարա-
նումէին և ասում • Ինչո՞ւ էդ իւղդ
(զուր տեղն) կորաւ :

5 Կարելի էր էդ իւղդ երեք հա-

(22) Մարկ • իդ • 32 : Ղուկ • իա • 29 : (23) Նոյն • ի • 8 : (24) Մարկ • իդ • 42 :
իե • 13 : Ղուկ • իզ • 40 : իա • 34 : Հռոմ • ժդ • 11 : ա Թես • ե • 6 : (25)
Մարկ • իդ • 45 : իե • 14 : (26) Մարկ • իդ • 42 • 44 : (1) Մարկ • իզ • 2 : Ղուկ •
իբ • 1 : Յովհ • ժա • 55 : ժդ • 1 : (2) Մարկ • իզ • 6 : Ղուկ • է • 37 : Յովհ •
ժբ • 1 • 3 :

բիւր դահեկանին աւելի թանգ ծա-
խել, և աղքատներին տալ. և շատ
բարկութենով տրտնջումին նորա
վերայ։

6 Եւ Յիսուս նորանց ասաց.
Թո՛ղ արէք դորան. ինչու՞ էք նե-
ղութիւն տալիս դորան. ինչու որ
դա մին բարի բան գործեց ինձ վե-
րայ։

7 Ա՛մէն ժամանակ աղքատներըն
ձեզ հետ ունիք, և երբոր կամե-
նաք կարող էք նորանց բարի անել[3].
բայց ինձ ամէն ժամանակ ձեզ հետ
չունիք։

8 Ինչ որ ունէր՝ արաւ. ա-
ռաջուց իմ մարմինը օծեց՝ որ պա-
տանքի նշան լինի։

9 Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ՝ որ
Ա՛մէն աշխարհքի մէջն որտեղ որ էս
աւետարանս կըքարոզվի՝ դորա յի-
շատակին համար էն էլ կըխօսվի՝ որ
դա արաւ։

10 Եւ Յուդա Իսկարիօտացին՝ էն
տասներկուսիցն մինն, քահանայա-
պետներին մօտ գնաց՝ որ նորան մատ-
նէ նորանց ձեռքըն[4]։

11 Նորանք երբոր լսեցին՝ ուրա-
խացան, և խոստացան՝ որ նորան ար-
ծաթի տան. և խնդրումէր՝ թէ ի՞նչ-
պէս յարմար ժամանակով մատնէ
նորան։

12 Եւ բարղարջակերաց առաջին
օրումն՝ որ ժամանակ որ զատկի գա-
ռըն մորթումին, աշակերտներն
նորան ասացին. Ո՞ւր տեղ ես կա-
մենում որ գնանք պատրաստենք՝
որ զատիկըն ուտես[5]։

13 Եւ էն աշակերտներիցն երկու-
սին ուղարկեց և նորանց ասաց.
Գնացէք քաղաքն, և երբոր մըտ-
նէք քաղաքն՝ մին մարդ կըպատահի
ձեզ՝ որ ջրի կուժըն ուսին վերայ
կունենայ. նորա ետևէն գնացէք։

14 Եւ որ տունն որ մտնէ, էն տան
տիրոջն ասացէք. Վարդապետն
ասումէ՝ Որ է էն վէր գալոց տե-
ղըն՝ որ նորանում զատիկըն ուտեմ
աշակերտներիս հետ։

15 Եւ նա մին մեծ զարդարված
վերնատունն ցոյց կըտայ ձեզ. էն
տեղ պատրաստեցէք մեզ համար։

16 Եւ նորա աշակերտներն գնա-
ցին որ պատրաստեն. քաղաքն ե-
կին և էնպէս գտին ինչպէս որ նո-
րանց ասաց. և զատիկըն պատ-
րաստեցին։

17 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ տասն-
երկուսին հետ նկաւ[6]։

18 Եւ երբոր սեղան նստեցին՝ և
դեռ ուտումէին, Յիսուս ասաց.
Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ՝ որ ձե-
զանից մինն կըմատնէ ինձ. նա որ
հենց ինձ հետ ուտումէ։

19 Եւ նորանք սկսեցին տրտմել
և մինն մընից ետև ասել՝ Մի՞թէ
ես եմ. և մէկէլն՝ Մի՞թէ ես եմ։

20 Նա պատասխան տուաւ և նո-
րանց ասաց. Իդ տասներկուսիցդ
մինն՝ որ ինձ հետ ձեռըն էդ սկա-
ւառակիդ (սահնակ) մէջն մտցրուց։

21 Որդի մարդոյ կըգնայ՝
ինչպէս որ նորա համար գրված է.
բայց վայ է էն մարդոյն՝ որ նորա
ձեռովն Որդին մարդոյ կըմատնվի.
լաւ էր նորան՝ թէ էն մարդն իսկի
ծնված չըլինէր[7]։

22 Եւ դեռըանի որ ուտումէին,
Յիսուս հաց առաւ՝ օրհնեց և կըտ-
րեց՝ տուաւ նորանց և ասաց. Ա-
ռէք՝ էդ է իմ մարմինս[8]։

23 Եւ բաժակըն (ըմպանն) առաւ՝
գոհացաւ, նորանց տուաւ, և ա-
մէնքն խմեցին նորանից։

24 Եւ նորանց ասաց. Էն է իմ
արիւնս նոր ուխտի և պայմանի, որ
շատերի տեղակ թափվումէ։

(3) բ Օրէն. ժե. 11։ (4) Մարկ. իզ. 14։ Ղուկ. իբ. 3, 4։ (5) Մարկ. իզ. 17։ Ղուկ. իբ. 7։ (6) Մարկ. իզ. 20, Հայտն։ (7) Մարկ. իզ. 24։ Ղուկ. իբ. 22։ (8) Մարկ. իզ. 26։ Ղուկ. իբ. 19։ ա Կորնթ. ժա. 23։

25 Ա՛շմարիտըն ասուսմամ ձեզ · թէ մինէվ որթի (ջաղջ) քերքիցն չեմ խմի մինչև էն օրն , երբոր նորան նոր կրխմեմ Աստուծոյ արքայութեան մէջն :

26 Եւ գոհացան՝ և դուրս էլան Ձիթենեաց սարն[9] :

27 Եւ Յիսուս նորանց ասաց · Ամէնդ էս գիշերս կրգայթակղվիք ինձանից[10] · ինչուր՝ գրված է՝ թէ Հովիւըն (չոպանն) կրզարկեմ՝ և ոչխարներըն կրցրրվին[11] :

28 Այց իմ յարութենիցն ետև ձեզանից առաջ կրգնամ Գալիլեա[12] :

29 Պետրոս պատասխան տուաւ և նորան ասաց · Թէվ ամէնքն էլ գայթակղվին , բայց ես չէ[13] :

30 Եւ Յիսուս նորան ասաց · Ա՛րշմարիտ ասուսմամ քեզ · թէ հենց դու էս գիշերս՝ գեռքանի որ հաւն (երկու անգամ) չէ խօսացել՝ երէք անգամ կուրանաս ինձ :

31 Այց Պետրոսն էլ աւելի խօսքըն հաստատումէր և ասում · Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ , քեզ չեմ ուրանալ · Էնպէս էլ ամէնքն էին ասում :

32 Եկին էն գիւղն՝ որ նորա անունն Գեթսեմանի էր · և աշակերտներին ասաց · Այստեղ նստեցէք՝ մինչև որ ես աղօթք անեմ[14] :

33 Եւ Պետրոսին և Յակոբին և Յոհաննէսին իրան հետ առաւ , և սկսց տրտմել և հոգս քաշել :

34 Էն ժամանակն նորանց ասաց · Իմ անձս մեռնելոյ չափ տրտմված է[15] · Էստեղ մնացէք և արթուն կացէք :

35 Եւ մին քիչ առաջ գնաց , իրան երեսին վերայ գետինն ընկաւ , և աղօթք էր անում՝ որ եթէ կարելի է՝ էն ժամն (սահմանն) իրանից անցկենայ :

36 Եւ ասաց · Աբբա Հայր[16] ամէն բան կարելի է քեզ[17] · էս բաժակըս (կառսը) ինձանից անցկացրուն՝ բայց էնէթէ ինչպէս ես եմ կամենում , բայց ինչպես որ դու ես կամենում[18] :

37 Եւ եկաւ գտաւ նորանց որ քնած էին՝ և Պետրոսին ասաց · Սիմո՛ն քնո՞ւմես · չը կարացիր մին ժամ (սահմ) արթուն կենալ :

38 Արթուն կացէք և աղօթք արէք , որ փորձութեան մէջ չը՛ մրտնէք · Հոգին յօժար է , բայց մարմինս տկար[19] :

39 Եւ մինէլ գնաց աղօթք արաւ , և հենց էն խօսքերըն ասաց :

40 Մինէլ դարձաւ և նորանց քնի մէջ գտաւ · ինչուր՝ նորանց աչքերն ծանրացել էին , և էէին գիտում՝ թէ ինչ պատասխան տան նորան :

41 Երրորդ անգամ եկաւ և նորանց ասաց · Արանից ետև քունն էլէք և հանգիստ առէք , ինչուր՝ վերջն հասել է · ժամն (սահմանն) եկաւ , և ահա Որդին մարդոյ մատնվում մեղաւորաց ձեռքն[20] :

42 Կպա վեր կացէք գնանք[21] · ահա մատեցաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ :

43 Եւ գեռքանի որ նա էն խօսումէր , Յուդա Իսկարիոտացին՝ էն տասներկուսիցն մինն եկաւ , և նորա հետ ամբոխ (խալկ) սրերով և բշրրներով՝ քահանայապետներիցն և կարգացողներիցն և ծերներիցն[22] :

44 Մատնիչն նորանց նշան էր տը-

(9) Մարկ · իգ · 30 : (10) Մարկ · իգ · 31 : (11) Զաք · ժգ · 7 : (12) Մարկ · ժգ · 7 : (13) Մարկ · իգ · 33 , 34 : Ղուկ · իբ · 33 , 34 : Յովհ · ժգ · 37 , 38 : (14) Մարկ · իգ · 36 : Ղուկ · իբ · 39 : Յովհ · ժբ · 1 : (15) Յովհ · ժբ · 27 : (16) Հռովմ · ը · 15 : Գաղ · դ · 6 : (17) Եբր · ե · 7 : (18) Յովհ · ե · 30 : զ · 38 : (19) Հռովմ · է · 22 , 23 : Գաղ · ե · 17 : (20) Յովհ · ժգ · 1 : (21) Մարկ · իգ · 46 : Յովհ · ժբ · 1 , 2 : (22) Մարկ · իգ · 47 : Ղուկ · իբ · 47 : Յովհ · ժբ · 3 :

ւել՝ և ասել , Թէ Որին որ ես կը-
համբուրեմ՝ նա է . նորան բռնեցէք
և զգուշութեամբ տարէք :
45 Եւ շուտով մօտ եկաւ և Նո-
րան ասաց . Ռաբբի , Ռաբբի , և
նորան համբուրեց :
46 Եւ նորանք ձեռք ձգեցին Նո-
րան՝ և նորան բռնեցին :
47 Եւ նորանցից մինն՝ որ նորա
մօտ կային՝ սուրը քաշեց , և քա-
հանայապետի ծառային զարկեց ,
և նորա ականջն կտրեց :
48 Յիսուս պատասխան տուաւ և
նորանց ասաց . Ինչպէս մին աւա-
զակի վերայ սրերով և բրէրրնե-
րով՝ դուրս եկիք ինձ բռնել[23] :
49 Ա՛իշտ ձեզ մօտ էի և տաճա-
րումն սովորցնումէի . և ինձ չը-
բռնեցիք . բայց Նրահամար՝ որ մար-
գարէների գրքերն կատարվին[24] :
50 Յն ժամանակն ամէն աշա-
կերտներն նորան թողնի՝ և փախան[25] :
51 Եւ մին երիտասարդ նորա ե-
տևէն գնումէր՝ որ մերկ մարմնոյն
վերայ կտաւ էր առել . և երիտա-
սարդներն բռնումէին նորան :
52 Եւ նա կտաւն բաց թողեց՝
և մերկ փախաւ նորանցից :
53 Եւ Յիսուսին տարան Կայիա-
փա քահանայապետին մօտ . և ա-
մէն քահանայապետներն և կարդա-
ցօղներն և ծերերն նորա մօտ էին
գալիս[26] :
54 Եւ Պետրոս հեռուանց գնու-
մէր նորա ետևէն մինչև հենց քա-
հանայապետի սրահի ներսն , և ըս-
պասաւորներին հետ նստումէր՝ և
լուսոյ մօտն տաքանումէր :
55 Իսկ քահանայապետներն և
ամէն տիրանն Յիսուսին հակառակ
մին վկայութիւն էին ուզում՝ որ նո-
րան սպանեն՝ և չէին գտնում[27] :
56 Պատճառնոր՝ շատ մարդիք սուտ
վկայութիւն էին վկայում նորանից .
և վկայութիւններն իրար նման չէին :
57 Ուրիշներ վերկացան և նորա-
նից սուտ էին վկայում , և ասում .
58 Մենք Ա՛նք դորանից լսեցինք ,
որ ասումէր՝ (Թէ) Ես էդ ձեռքով
շինած տաճարդ կըքանդեմ՝ և ե-
րեք օրում ուրիշը կըշինեմ՝ որ
ձեռքով չի շինած[28] :
59 Իսկ էնպէս էլ նորանց վկա-
յութիւնն իրար նման չէր :
60 Ետպա քահանայապետն վերկա-
ցաւ մէջ տեղն՝ և Յիսուսին հարց-
նումէր և ասում[29] . Իսկի պատաս-
խան չես տալիս , ի՞նչ դորանք քե-
զանից վկայումեն :
61 Եւ նա լուռ էր կենում՝ և խա-
կի մին պատասխան չէր տալիս[30] .
քահանայապետն մինէլ երկրորդ ան-
գամ նորան հարցնումէր և ասում .
Դո՞ւ ես Քրիստոսն՝ օրհնեալ Աս-
տուծոյ Որդին[31] :
62 Յիսուս պատասխան տուաւ և
նորան ասաց . Դու ասացիր՝ որ ես
եմ . բայց կըտեսնէք Որդին մարդոյ
Օրհնեալն աջ կողմն նստած , և
երկնքի ամպերով եկած[32] :
63 Եւ քահանայապետն շուտով
իրան շորերըն պատառեց՝ և ասաց .
Էլ ի՞նչ պէտք է մեզ վկայ :
64 Էդ ամէնդդ դորա բերանիցն
հայհոյանքըն լսեցիք . ի՞նչպէս է ե-
րևում ձեզ . և ամէնքն դատապար-
տեցին նորան՝ Թէ մահապարտ է :
65 Եւ մին քանիսն սկսեցին նորա
երեսին թքել , գլխին վերայ շոր քո-
ցել , բռունցքով թակել և ասել .
Ա՛ղ մարգարէացիր՝ Քրիստոսդ՝
Թէ էն ով է՝ որ քեզ զարկեց . և
սպասաւորներն նորան ապտակ (ծեծ
էլ) էին տալիս :

(23) Մարկ . իգ . 55 : Ղուկ . իբ . 52 : (24) Մատ . իբ . 6 : Նոյ . ծգ . 7 : Ղուկ . իբ . 37 : իգ . 44 : (25) Մատ . ձը . 8 : վէր . 27 : (26) Մարկ . իգ . 57 : Ղուկ . իբ . 54 : Հովհ . ժը . 13 : (27) Մարկ . իգ . 59 : (28) Մատ . ժե . 29 : Հովհ . բ . 19 : (29) Մարկ . իգ . 62 : (30) Նոյ . ծգ . 7 : (31) Մարկ . իգ . 63 : (32) Մարկ . իդ . 30 : իգ . 64 : Ղուկ . իբ . 69 :

66 Եւ Պետրոսն դեռ որ ներքին կողմն սրահի մէջն էր, քահանայապետի մին աղախին (ղեբռուշ) և կաւ[33],

67 եւ նորան տեսաւ՝ որ տաքանումէր • մտիկ տուաւ նորան՝ և ասաց • Դու էլ Յիսուս Նազովրեցոյն հետ էիր։

68 Նա ուրացաւ և ասաց • Չեմ ճանաչում և չեմ գիտում, թէ դուն ինչ ես խօսում • և երբոր դուրս գնաց դրսի սրահն, հաւն խօսեց։

69 Ա՛ինէլ էն աղախինն (ղեբռուշն) նորան տեսաւ, և սկսեց ասել նորանց՝ որ չորս կողմնէն էին կանգնած, թէ Այ էլ նորանցից է[34]։

70 Եւ նա մինէլ ուրացաւ • և մինչ քիչ յետոյ նորանք՝ որ չորս կողմնէն կանգնած էին, մինէլ ասացին Պետրոսին • Շ՛իտակ՝ որ դուն էլ նորանցից ես[35], ինչուր՝ Գալիլեացի ես, և հնոց քո խօսելդ էլ նման է[36]։

71 Եւ նա սկսեց անիծել, երդում ուտել և ասել՝ թէ Չեմ գիտում էն մարդն՝ որ դուք ասուսմէք։

72 Եւ շուտով հաւն երկրորդ անգամ խօսեց[37] • և Պետրոս միտքն բերաւ էն բանն՝ որ Յիսուս նորան ասաց • թէ Հաւն դեռ որ երկու անգամ չի խօսացել՝ դուն երեք անգամ ինձ կուրանաս • և սկսեց լաց լինել։

ԳԼ • ԺԶ

1 Յիսուս կապված Պիղատոսին կըտանին և նորա առաջն չարախօսութիւն կանեն։ 14 Ըմբոխի աղաղակին մարդասպան Բարաբբային արձակվելն, և Յիսուսի նորանց ձեռներին տրվիլն որ խաչվի։ 17 Փուշերով կըպսակվի, 19 նորա երեսին կըթքին, և ծաղր կանեն, 21 նորա խաչափայտըն Սիմոն Կիւրենացին վերկառնէ։ 27 Երկու աւազակների մէջ կըխաչվի, 29 Հրէից նախատինքները կըքաշէ։ 39 Հարիւրապետն կըխոստովանի թէ նա Աստուծոյ Որդին է։ 43 Յոսէփն պատիւով կըթաղէ նորան։

1 Եւ շուտով առաւօտանց՝ քահանայապետներն ծերերին և կարգաւորներին հետ՝ և բոլոր տիվանն էլ խորհուրդ արին, և Յիսուսին կապեցին՝ և տարան մատնեցին Պիղատոսին[1]։

2 Եւ Պիղատոս նորան հարցրուց և ասաց • Դու ես Հրէից թագաւորն[2]։ նա պատասխան տուաւ նորան և ասաց • Դու ես ասում։

3 Եւ քահանայապետներն շատ չարախօսութիւն էին անում նորանից • և նա իսկի պատասխան չէր տալիս։

4 Նայց Պիղատոս մինէլ հարցնումէր նորան • Իսկի պատասխան չես տալիս, տես՝ որքան չարախօսութիւն են անում քեզանից[3]։

5 Եւ Յիսուս նրանից ետև իսկի մին պատասխան չէր տուաւ, մինչև որ՝ Պիղատոսն շատ զարմանումէր[4]։

6 Նայց տօնի ժամանակումն մին բանտարկեալ էր արձակում նորանց համար՝ որին որ իրանք խնդրումէին[5]։

7 Եւ մինն կար՝ որ նորա անունն Բարաբբա էր՝ խռովութիւն անող

(33) Մաթ • իզ • 58 • 69 • Ղուկ • իբ • 55 • Յովհ • ժը • 16 • (34) Մաթ • իզ • 71 • Ղուկ • իբ • 58 • Յովհ • ժը • 25 • (35) Մաթ • իզ • 73 • Ղուկ • իբ • 59 • Յովհ • ժը • 26 • (36) Գործ • բ • 7 • (37) Մաթ • իզ • 75 • (1) Ղուկ • բ • 2 • Մաթ • իէ • 1 • Ղուկ • իբ • 66 • իդ • 1 • Յովհ • ժը • 28 • Գործ • գ • 13 • դ • 23 • (2) Մաթ • իէ • 11 • (3) Մաթ • իէ • 13 • (4) Եսայ • ծգ • 7 • Յովհ • ժթ • 9 • (5) Մաթ • իէ • 15 • Ղուկ • իդ • 17 • Յովհ • ժը • 39 •

ներին հետ կապված , որ իրանց խոստովանեցուն մին մարդ էին սպանել :

8 Ելմօխն (Խալխն) սկսեց բարձր ձայնով աղաղակել , և խնդրել ինչպես որ սովոր էր , որ Խարաբբայի արձակէ նորանց համար :

9 Պիղատոս պատասխան տուաւ և նորանց ասաց . Կամենուք՝ որ Հրէից թագաւորըն արձակեմ ձեզ համար :

10 Պատճառնոր՝ գիտուէր թէ քահանայապետներն նախանձով էին մատնել նորան :

11 Իր ամբոխին (Խալխին) էլ հաւանացրին՝ որ Խարաբբային արձակէ նորանց համար[6] :

12 Պիղատոս մինէլ պատասխան տուաւ և նորանց ասաց . Ապա Հրէից թագաւորին ինչ էք ուզում՝ որ անեմ :

13 Եւ նորանք քահանայապետներն դըրդված մինէլ աղաղակեցին՝ խաչ հանիր դորան :

14 Պիղատոս նորանց ասաց . Ա՛ա ինչ չար բան է արել . և նորանք էլ աւելի աղաղակումին և ասում . խաչ հանիր դորան :

15 Ա՛այց Պիղատոս՝ որովհետև կամեցաւ ամբոխի (խալխի) կամքըն կատարել , Խարաբբային արձակեց նորանց համար[7] . և Յիսուսին ծեծեց , և ձեռներն տուաւ , որ խաչվի :

16 Եւ զինուորներն նորան տարան ներսի սրահն՝ որտեղ որ հրապարակն (Ըդիսանն) էր[8] . և բոլոր գունդըն (պէօլուքն) մին տեղ կանչեցին :

17 Եւ նորան կարմիր քղամիդ (ֆէրաճէ) և ծիրանի շորեր հագցրին , և փշերից շինած պսակ նորա գլուխն դրին :

18 Եւ սկսեցին նորան ողջոյն տալ՝ և ասել . Ո՛ղջ կաց Հրէից (Ջհուդլէրի) թագաւոր :

19 Եւ նորա գլուխըն եղեգով (ղամըշով) թակուէին , և նորա երեսին թքուէին՝ և ծունր դնելով երկրպագութիւն էին տալիս նորան :

20 Եւ երբոր ծաղր արին նորան՝ էն քղամիդըն (ֆէրաճէն) և ծիրանի շորերըն նորանից հանեցին , և իրան շորերըն հագցրին իրան , և դուրս տարան , որ խաչ հանեն նորան :

21 Եւ ուժով բռնեցին Սիմոն Կիւրենացոյն , Ղղեքսանդրի և Ռուփի հօրըն՝ որ յանդիցն եկած էն տեղիցն անց էր կենում . որ նորա խաչափայտըն վերառնէ[9] :

22 Եւ տարան նորան մին Գողգոթա (ասված) տեղ , որ կըթարգմանվի՝ գլխատեղ տեղ[10] :

23 Եւ նորան զմռսած գինի էին տալիս , և նա չառաւ[11] . և նորան խաչ հանեցին :

24 Եւ նորա շորերըն բաժանեցին , վիճակ քցելով նորանց վերայ՝ թէ ով ինչ պիտի առնէ[12] :

25 Երեք ժամն (սահլէն) էր՝ և նորան խաչ հանեցին[13] :

26 Եւ նորա վնասի (սուչի) գիրն գրված էր՝ թէ Հրէից թագաւորն է[14] :

27 Եւ նորա հետ երկու աւազակ խաչ հանեցին . մինը նորա աջ կողմըն՝ և մինը ձախ կողմն[15] :

28 Եւ կատարվեցաւ էն գիրն , որ ասում՝ թէ Ընօրէններին հետ համարվեցաւ[16] :

29 Եւ նորանք՝ որ էնտեղով անց էին կենում , նորան հայհոյում-

(6) Մատ . իէ . 20 : Մարկ . գ . 14 : (7) Մատ . իէ . 26 : Ցովհ . ժթ . 1 . 16 : (8) Մատ . իէ . 27 : (9) Մատ . իէ . 32 : Ղուկ . իգ . 26 : (10) Մատ . իէ . 33 . Ղուկ . իգ . 33 : Ցովհ . ժթ . 17 : (11) Մատ . իէ . 34 : (12) Սաղ . իբ . 18 . Ղուկ . իգ . 34 : Ցովհ . ժթ . 23 : (13) Մատ . իէ . 45 : Ղուկ . իգ . 44 : Ցովհ . ժթ . 14 : (14) Մատ . իէ . 37 : Ցովհ . ժթ . 19 : (15) Մատ . իէ . 38 : (16) Նոյ . ծգ . 12 : Ղուկ . իբ . 37 :

ին , իրանց գլխներըն շարժումին և ասում[17] • Ա՛հ որ տաճարըն քանդումիր՝ և երեք օրումն շինումիր[18] ,

30 Ապրեցրու՛ քո անձդ և վեր ել խաչիցդ ։

31 Նոյնպես էլ քահանայապետներըն կարդացողներին հետ իրար մէջ ծաղր էին անում՝ և ասում՝ Ուրիշներին ապրեցրուց՝ իրան անձըն չի՛ կարում ապրեցնել ։

32 Նդ Քրիստոսդ Իսրայէլի թագաւորդ հիմիկ թող էդ խաչիցդ վեր գայ , որ տեսնենք և դորան հաւատանք • և նորանք էլ որ նորա հետ խաչված էին , նորան նախատինք էին տալիս[19] ։

33 Եւ երբոր վեց ժամ (սահմէ) էլաւ՝ խաւար ամեն երկրին բռնեց մինչև ինն ժամն[20] ։

34 Եւ ինն ժամի ժամանակումն Յիսուս մեծ ձայնով աղաղակեց և ասաց • Էլի Էլի լմա սաբաքթանի[21] • որ կը թարգմանվի՝ Ի՛մ Աստուած , իմ Աստուած , ինչո՞ւ թողիր ինձ ։

35 Եւ մինքանիան նորանցից՝ որ նորա մօտ կանգնած էին , երբոր լսեցին , ասումէին՝ Թէ Եղիային է կանչում ։

36 Եւ մինն վազեց մին սպունգ (սէնէը) քացախով լցրուց , և ե՛ղէգի (ղամըշ) վերայ անցրուց[22] , և տուաւ նորան՝ որ խմէ , և ասաց[23] • Թո՛ղ տեսնենք՝ Թէ Եղիան կըգայ որ նորան վեր բերէ ։

37 Եւ Յիսուս մեծ ձայն արձակեց՝ և հոգին հանեց[24] ։

38 Եւ տաճարի վարագուրն երկու կտոր պատառվեցաւ՝ վերևիցն մինչև ցածն[25] ։

39 Եւ հարիւրապետն՝ որ հենտեղ կանգնած էր[26] , երբոր տեսաւ՝ Թէ (Յիսուս) աղաղակեց և հոգին հաննեց , ասաց • Ա՛շմարիտ որ էս մարդըս Աստուծոյ Որդի էր ։

40 Կանայք[27] էլ կային՝ որ հեռուանց մտիկ էին տալիս[28] • որ նորանց միջումն էր Մարիամ Մագդաղենացին , և Մարիամ փոքր Յակոբի և Յօսէի մայրն , և Սալոմէն ։

41 Որ նորանք՝ երբոր նա Գալիլեա էր՝ նորա ետևէն ման էին գալիս և նորան ծառայումէին[29] • և էլ ուրիշ շատ կանայք՝ որ հենց նորա հետ Երուսաղէմ էին եկել ։

42 Եւ երբոր իրիկուն էլաւ[30] , ինչուոր՝ ուրբաթի օր էր՝ որ շաբաթին էր մտնում ,

43 Յօսէին եկաւ՝ որ Արիմաթիայիցն էր՝ պարկեշտ իշխանաւոր մարդ՝ որ ինքն էլ Աստուծոյ արքայութիանն սպասումէր[31] • սա համարձակվեցաւ՝ Պիղատոսի մօտ մըտաւ , և Յիսուսին մարմինն իըննդրեց ։

44 Եւ Պիղատոս զարմացաւ՝ որ էնքան շուտով մեռաւ • և հարիւրապետին իրան մօտ կանչեց , նորան հարցրուց և ասաց՝ Թէ Իրաւի որ էնքան շուտով մեռաւ ։

45 Եւ երբոր էն հարիւրապետիցըն տեղեկացաւ (քանին)՝ մարմինըն Յօսէփին շնորհեց ։

46 Եւ Յօսէփ կտաւ գնեց՝ և նորան վեր բերաւ և կտաւով պատեց , և գերեզմանի մէջ դրաւ՝ որ

(17) Սաղ • իբ • 7 ։ (18) Մարկ • ժգ • 58 ։ Յովհ • բ • 19 ։ (19) Մատթ • իե • 44 ։ Ղուկ • իգ • 39 ։ (20) Մատթ • իե • 45 ։ Ղուկ • իգ • 44 ։ (21) Սաղ • իբ • 1 ։ Ժամթ • իե • 46 ։ (22) Մատթ • իե • 48 ։ Յովհ • ժթ • 29 ։ (23) Սաղ • կթ • 21 ։ (24) Մատթ • իե • 50 ։ Ղուկ • իգ • 46 ։ Յովհ • ժթ • 30 ։ (25) Մատթ • իե • 51 ։ Ղուկ • իգ • 45 ։ (26) Մատթ • իե • 54 ։ Ղուկ • իգ • 47 ։ (27) Մատթ • իե • 55 ։ Ղուկ • իգ • 49 ։ (28) Սաղ • լը • 11 ։ (29) Ղուկ • ը • 2 , 3 ։ (30) Մատթ • իե • 57 ։ Ղուկ • իգ • 50 ։ Յովհ • ժթ • 38 ։ (31) Ղուկ • բ • 25 • 38 ։

Նորան քարիցն էր փորել[32] · և մին մեծ քար քցեց գերեզմանի դուռն առաջին :

47 Ասյց Ա՛արիամ Ա՛ագդաղենացին և Յակօբի և Յօսէի Ա՛արիամն տեսին էն տեղն՝ որ դրվաւ :

ԳԼ · ԺՕ

1 Հրեչտակն երեք կնիկներին կասէ որ Ա՛րիստոս յարութիւն առաւ : 9 Ա՛րիստոս Մագդաղենացոյ Մարիամին , 12 Յանդն գնացող երկու մարդկանց երևումն · 14 Նաև Եաւքելոց էլ , 15 Որ Նորանք աւետարանն քարոզելոյ կուղարկէ · 19 Եւ երկինքն համբառնումն :

1 Եւ երբոր շաբաթն անցկացաւ , Ա՛արիամ Ա՛ագդաղենացին և Յակօբի Ա՛արիամն և Սաղովմն[11] գնացին խունկ պատրաստեցին , որ գան Նորան օծեն[2] :

2 Եւ մէկշաբթի օրումն առաւօտանց արեգական ծագելոյ ժամանակն՝ եկին գերեզմանն[3] :

3 Եւ իրար ասումէին՝ Ո՞վ պիտի էն քարըն մեզ համար գերեզմանի դրունիցըն դէն թօլանէ :

4 Եւ նայեցին տեսին՝ որ քարն գերեզմանիցն հեռու էր թօլարած · ինչուոր շատ մեծ էր :

5 Եւ գերեզմանի մէջն որ մտին , մին երիտասարդ տեսին՝ որ աջ կողմն նստած էր՝ սպիտակ կապայ հագած , և շատ վախեցան[4] :

6 Եւ նա ասաց Նորանց · Ա՛ի վախենաք[5] , դուք Յիսուս Նազօրեցի խաչվածն էք ուզում · նա յարութիւն առաւ · էստեղ չէ · ահա էն տեղըն՝ ուր որ Նորան դրին :

7 Ասյց գնացէք Նորա աշակերտներին և Պետրոսին ասացէք՝ թէ ահա նա ձեզանից առաջ կըգնայ Գալիլեա · էնտեղ կըտեսնէք Նորան ինչպէս որ նա ասաց ձեզ[6] :

8 Եւ երբոր լսեցին՝ դուրս եկին և փախան գերեզմանիցն , պատճառնոր՝ ահով բռնված էին , և խոկի մընին բան չասացին՝ · ինչուոր վախենումէին :

9 Յիսուս որ յարութիւն առաւ՝ մէկշաբթի առաւօտանց առաջ երեւեցաւ Ա՛արիամ Ա՛ագդաղենացոյն[8] որ Նորանից եօթըն դև էր հանել[9] :

10 Եւ նա գնաց պատմեց Նորանց՝ որ Նորա հետն էին[10] , դեռքանի որ սուգ և լաց էին անում :

11 Նորանք երբոր լսեցին՝ թէ (նա) կենդանի է , և երևեցաւ Նորան՝ չը՛հաւատացին[11] :

12 Յետոյ ուրիշ կերպարանքով երևեցաւ Նորանց՝ որ յանդն էին գնում[12] :

13 Նորանք գնացին ուրիշներին պատմեցին՝ և Նորանց էլ չը՛հաւատացին :

14 Յետոյ՝ երբոր տասնումիներն սեղան էին նստած՝ Նորանց երևեցաւ և Նորանց անհաւատութիւնըն և քարասրտութիւնըն յանդիմանեց՝ որ չը՛հաւատացին Նորանց , որ ինքն մեռնելների միջից յարութիւն

(32) Մարկ · իե · 59 , 60 : Ղուկ · իգ · 53 : Յովհ · ժթ · 40 : (1) Մարկ · իը · 1 : Ղուկ · իգ · 1 : Յովհ · ի · 1 : (2) Ղուկ · իգ · 56 : (3) Ղուկ · իգ · 1 : Յովհ · ի · 1 : (4) Ղուկ · իգ · 3 : Յովհ · ի · 11 , 12 : (5) Մարկ · իը · 5 , 6 , 7 : (6) Մարկ · իգ · 32 : Մատ · ժգ · 28 : (7) Մարկ · իը · 8 : Ղուկ · իգ · 9 : (8) Յովհ · ի · 14 : (9) Ղուկ · ը · 2 : (10) Ղուկ · իգ · 10 : Յովհ · ի · 18 : (11) Ղուկ · իգ · 11 : (12) Ղուկ · իգ · 13 :

առաջ երևեցաւ Նորանց[13] ։

15 Եւ Նորանց ասաց[14] • Գնացէք ամէն աշխարհք, և աւետարանն ա-մէն ըստեղծվածներուն քարոզեցէք[15] ։

16 Ո՛վ որ հաւատայ և մկրտվի՝ կապրի[16] • և ո՛վ որ չը՛հաւատայ՝ կըդատապարտվի[17] ։

17 Նորանց՝ որ հաւատումեն, էս նշաններս կըհետևին • իմ անունովս դևեր կըհանեն[18], լեզուներ կըխօսին[19],

18 Իրանց ձեռներովն օձեր վեր կառնեն, և թէ որ մին մահադեղ խմեն՝ ձեռաս չի տալ Նորանց[20] • հիւանդներուն վերայ ձեռք կըդնեն՝ և կըբժշկվին[21] ։

19 Եւ ինքն Տէր Յիսուս Նորանց հետ խօսելուցն ետև[22] երկինքն համբարձաւ[23], և Հօր աջ կողմն նստեց[24] ։

20 Եւ Նորանք դուրս գնացին, բոլոր աշխարհքի մէջըն քարոզումէին՝ Տէրն օգնականութենովն, և Աստուծոյ խօսքըն հաստատումէին ամէն նշաններով՝ որ հետևումէին Նորանց[25] ։

ԱՒՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ղուկաս աւետարանչի առաջաբանութիւնն իրան գրած աւետարանի համար ։ 5 Յօհաննէս մկրտչի պատմութիւնն ։ 26 Նա Քրիստոսի յղութիւնն ։ 39 Քրիստոսի համար Նդհսաբեթի և Մարիամի արած մարգարէութիւնն ։ 57 Յօհաննէսի ծնանիլն և թլփատիլըն ։ 67 Զաքարիայի Քրիստոսի համար, 76 Նա Յօհաննէսի համար արած մարգարէութիւնն ։

1 Որովհետեւ շատ մարդիք յօժարեցին՝ որ նոր կարգեն էն բաներին պատմութիւնըն՝ որ մեր մէջն հաստատվեցան •

2 Ինչպէս որ մեզ աւանդեցին Նորանք[1] որ սկըզբիցն իրանց աչքովն տեսին և սպասաւոր էլան բանին[2] •

3 Ես էլ, որ սկըզբիցն ամէն բաներին ճշմարտութենով հետևեցի[3]

(13) Ղուկ · իդ · 36 ։ Յովհ · ի · 19 ։ ա Կորնթ · ժե · 5 ։ (14) Մարկ · իը · 19 ։ Յովհ · ժե · 16 ։ (15) Կող · ա · 23 ։ (16) Յովհ · գ · 18 · 36 ։ Գործ · բ · 38 ։ ժզ · 30 , 31 , 32 ։ Հռոմ · ժ · 9 ։ ա Պետր · գ · 21 ։ (17) Յովհ · ժբ · 48 ։ (18) Ղուկ · ժ · 17 ։ Գործ · ե · 16 ։ ը · 7 · ժզ · 18 · ժթ · 12 ։ (19) Գործ · բ · 4 ։ ժ · 46 · ժթ · 6 ։ ա Կորնթ · ժբ · 10 · 28 ։ (20) Ղուկ · ժ · 19 ։ Գործ · իը · 5 ։ (21) Գործ · ե · 15 , 16 ։ թ · 17 · իը · 8 ։ Յակ · ե · 14 , 15 ։ (22) Գործ · ա · 2 , 3 ։ (23) Ղուկ · իդ · 51 ։ (24) Մարկ · ձժ · 1 ։ Գործ · է · 55 ։ (25) Գործ · ե · 12 · ժզ · 3 ։ ա Կորնթ · բ · 4 , 5 ։ Եբր · բ · 4 ։ (1) Եբր · բ · 3 ։ ա Պետր · ե · 1 ։ բ Պետր · ա · 16 ։ ա Յովհ · ա · 1 ։ (2) Մարկ · ա · 1 ։ Յովհ · ժե · 27 ։ (3) Գործ · ժե · 19 · 25 · 28 ։ ա Կորնթ · է · 40 ։

կամեցայ , որ կարգով գրեմ[4] քեզ՝ ով պատուականդ Թէոփիլէ[5] ։

4 Որ իմանաս էն բաներուն ճշմարտութիւնըն , որ սովորեցիր[6] ։

5 Եւ Հերովդէս Հրէաստանի (ջնջհոպոպոպանէ) թագաւորի օրերումն , մին քահանայ էլաւ Աբիայի դասակարգութենիցըն . և նորա կինն Հարոնի աղջկներէն , և նորա անունն Եղիսաբեթ[8] ։

6 Եւ երկուսն էլ Աստուծոյ առաջին արդար էին՝ և Տէրի ամէն պատուիրանքներումն և իրաւունքներումն անմեղ էին գնում[9] ։

7 Եւ նորանք որդի չունէին , պատճառնոր՝ Եղիսաբեթն ամուլ (չըբէր) էր . և երկուսն էլ իրանց օրերըն անց էին կացրել ։

8 Եւ էլաւ որ՝ երբոր նա Աստուծոյ առաջին քահանայութիւն էր անում՝ իրան հասած կարգի օրերումն[10] ,

9 Քահանայութեան սովորութեան պէս (վիճակ) ընկաւ նորան՝ որ Աստուծոյ տաճարն մտնէ , և խնկարկութիւն անէ[11] ։

10 Եւ ժողովըրդի ամէն բազմութիւնն դուրսն աղօթք էին անում՝ խնկարկութեան ժամանակումն[12] ։

11 Եւ Տէրի հրեշտակն երևեցաւ նորան . որ կանգնած էր խնկի սեղանի աջ կողմն[13] ։

12 Եւ Զաքարիան երբոր տեսաւ՝ շփոթվեցաւ , և վախ ընկաւ նորա վերայ[14] ։

13 Տէրի հրեշտակն նորան ասաց . Մի վախենար Զաքարիա . ինչուր՝ քո աղօթքդ լսվեցաւ , և քո եղիսաբեթ կինդ մին որդի կրծնի քեզ՝ և նորա անունըն Յովհաննէս կըկանչես[15] ։

14 Եւ քեզ ուրախութիւն և ցնծութիւն կըլինի , և շատ մարդիք նորա ծնվելովն կուրախանան[16] .

15 Ինչուր՝ (նա) մեծ կըլինի Տէրի առաջին՝ և գինի և օղի (հաբէեցնօղ խմելիք) թող չը՛խմի[17] , և դեռ իրան մոր փորումն՝ Սուրբ Հոգովն կըլցվի[18] ։

16 Եւ Իսրայէլի որդիքներին շատ հոգի կըդարձնէ դէպի իրանց Տէր Աստուածըն[19] ։

17 Եւ ինքն կրգայ նորա առաջին Եղիայի հոգովն և զօրութենովն[20] որ հարանց սրտերն դէպի որդիքն դարձնէ . և անհնազանդներն դէպի արդարների իմաստութիւնըն՝ որ Տէրին համար բարեկարգ ժողովուրդ պատրաստէ ։

18 Եւ Զաքարիան հրեշտակին ասաց . Ապա ինչով ճանաչեմ էդ բանըդ[21] . պատճառնոր՝ ես ծեր եմ , և իմ կինս իրան օրերըն անց է կացրել ։

19 Հրեշտակն պատասխան տուաւ և նորան ասաց . Ես Գաբրիէլն եմ[22] որ Աստուծոյ առաջին եմ

(4) Դորձ . ժա . 4 ։ (5) Դորձ . ա . 1 ։ (6) Հռովմ . ի . 31 ։ Վեցերորդ տո նախ քան ՀԲրիստոս ։ (7) Մարկ . բ . 1 ։ (8) ա Մնաց . իդ . 10 . 19 ։ Նեհեմ . ժբ . 4 . 17 . (9) Ծննդ . է . 1 ։ ժե . 1 ։ գ Թագ . թ . 4 ։ դ Թագ . ի . 3 ։ Հռովմ . ա . 1 ։ Դորձ . իդ . 1 ։ իդ . 16 ։ Փիլպ . գ . 6 ։ (10) ա Մնաց . իդ . 19 ։ բ Մնաց . ը . 14 ։ լա . 2 ։ (11) Ելք . Լ . 7 , 8 ։ ա Թագ . բ . 28 ։ ա Մնաց . իդ . 13 ։ բ Մնաց . լթ . 11 ։ (12) Ղևտ . ժգ . 17 ։ Հայտ . ը . 3 , 4 ։ (13) Ելք . Լ . 1 ։ (14) Դատ . գ . 22 ։ ժգ . 22 ։ Դան . ժ . 8 ։ վեր . 29 ։ Ղևտ . բ . 9 ։ Դորձ . ժ . 4 ։ Հայտ . ա . 17 ։ (15) վեր . 60 . 63 ։ (16) վեր . 58 ։ (17) Թվոց . գ . 3 ։ Դատ . ժգ . 4 ։ Ղևտ . է . 33 ։ (18) Երեմ . ա . 5 ։ Դատ . ա . 15 ։ (19) Մաղ . գ . 5 , 6 ։ (20) Մաղ . գ . 5 ։ Մատթ . ժա . 14 ։ Մարկ . թ . 12 ։ (21) Ծննդ . ժէ . 17 ։ (22) Դան . ը . 16 ։ թ . 21 , 22 , 23 ։ Մատթ . ժը . 10 ։ Եբր . ա . 14 ։

կանգնում, և ուղարկվեցայ՝ որ քեզ հետ խօսիմ, և եդ բանդ քեզ ա-ւետիք տամ։

20 Եւ ահա՛ համր (լռիկ) կըլինիս, և չես կարենալ խօսիլ, մինչև էն օրն՝ որ եդ բանդ կըլինի[23]· պատ-ճառն որ՝ չը՛հաւատացիր իմ խօս-քերիս՝ որ իրանց ժամանակումն պի-տի կատարվին։

21 Եւ ժողովրդն սպասումէին Զաքարիային՝ և զարմանումէին նո-րա տաճարի միջումն ուշանալոյն համար։

22 Եւ երբոր դուրս եկաւ՝ չէր կարում խօսիլ նորանց հետ· և ի-մացան՝ թէ տաճարի մէջն տեսիլք տեսաւ· և նա նշաններով էր խօ-սում նորանց հետ՝ և կար պա-պանձված։

23 Եւ էլաւ՝ երբոր նորա պաշտօնի օրերն լցվան, գնաց իրան տունն[24]։

24 Եւ էն օրերիցն ետև նորա Ե-լիսաբեթ կինն յղացաւ, և հինգ ամիս իրան անձն ծածուկ էր պա-հում՝ և ասումէր·

25 Այս ի՞նչ բան է՝ որ Տէրն ինձ վերայ գործեց էս օրերումս՝ որ ինձ վերայ նայեց՝ որ իմ նախատինքս մարդկանց միջիցն վեր առնէ[25]։

26 Եւ վեցերորդ ամսումն Գաբ-րիէլ հրեշտակն Աստուածանից ու-ղարկվեցաւ Գալիլեացոց մին քա-ղաք՝ որ նորա անունն Նազարէթ էր,

27 Մի՛ն կուսի մօտ՝ որ նշանված էր մին մարդոյ՝ որ նորա անունն Յոսէփ էր՝ Դաւթի տանիցն։ և էն կուսի անունն Մարիամ (էր)[26]։

28 Եւ հրեշտակն որ նորա մօտ ե-կաւ՝ ասաց· Ուրախ լեր շնորհով լցվածդ[27]· Տէրն քեզ հետ[28]։

29 Եւ նա էն խօսքերին համար շփոթվեցաւ[29], և իրան մտքումն մտածումէր՝ թէ ինչպէսի բան պի-տի լինի էս բարեւս։

30 Եւ հրեշտակն նորան ասաց· Մի՛ վախենար Մարիամ· ինչու որ Աստուածանից շնորհք գտար։

31 Եւ ահա՛ կը յղանաս և որդի կը ծնիս[30]· և նորա անունը Յի-սուս կը կանչես[31]։

32 Նա մեծ կըլինի, և Որդի Բարձրելոյն կը կոչվի[32]· և Տէր Ա-ստուած նորա Դաւիթ հօր աթոռն[33] կը տայ նորան· և Յակոբայ տանն վերայ յաւիտեան կը թագաւորէ[34]։

33 Եւ նորա թագաւորութեանն վերջ չի լինիլ։

34 Եւ Մարիամն ասաց հրեշտա-կին· Այդ բանդ ի՞նչպէս կըլինի ինձ, որ ես մարդ չեմ գիտում։

35 Հրեշտակն պատասխան տուաւ և նորան ասաց· Սուրբ Հոգին կը գայ քեզ վերայ, և Բարձրելոյ զորութիւնն քեզ վերայ շուաք կա-նէ[35]· ինչու որ՝ նա էլ, որ քեզա-նից պիտի ծնվի, սուրբ է, և Աս-տուծոյ Որդի կը կոչվի[36]։

36 Եւ ահա՛ քո ազգական Եղիսա-բեթն, նա էլ յղի է իրան ծերու-թենումն· և էս նորա վեցերորդ ամիսն է նա որ ամուլ էր կոչված·

37 Ինչուորո՛ Աստուծոյ առաջին իսկի մին բան անկարելի չէ[37]։

(23) Նղէ· գ· 26· խդ· 27։ (24) դ Թագ· ժա· 5· ա Արաց· թ· 25։ (25) Ծն-նդեդ· լ· 23։ Լուսյ· դ· 1· ծդ· 1· ֆ։ (26) Սաղ· ա· 18· Ղուկ· բ· 4, 5։ (27) Գան· թ· 23· ժ· 19· (28) Դատ· զ· 12։ (29) Վէր· 12։ (30) Լուսյ· է· 14։ Սաղ· ա· 21։ (31) Ղուկ· բ· 21։ (32) Սաղ· ճ· 7։ (33) բ Թագ· է· 11, 12։ Լուսյ· թ· 6, 7։ ժզ· 5։ Նբէմ· խդ· 5։ Սաղ· ձզբ· 11· Հայտ· գ· 7։ (34) Գան· բ· 44· է· 14· 27։ Ընդր· 21։ Մին· դ· 7։ Յովհ· ժբ· 34։ Նբէր· ա· 8։ (35) Սաղ· ա· 20։ (36) Սաղ· ժգ· 33։ իզ· 63, 64։ Սաղ· ա· 1։ Յովհ· ա· 34։ բ· 31։ Գործ· ը· 37։ Հռով· ա· 4։ (37) Ծննդ· ժը· 14։ Նբէմ· լբ· 17։ Օրէ· ը· 6։ Սաղ· ժթ· 26։ Սաղ· ժ· 27։ Ղուկ· ժը· 27։ Հռով· դ· 21։

38 Եւ Ա՝արիամն ասաց • Ա՝չա (ես) Տէրի աղախին (ղաբա-ուշ) եմ • թող քո խօսքիդ պէս լինի ինձ • և հրեշտակն գնաց նորանից :

39 Ա՝արիամն էն օրերումն վերկացաւ, և վռազով սարերի կողմն գընաց Յուդայի քաղաքն[38] :

40 Եւ Օ՝աքարիայի տունն մտաւ, և Եղիսաբեթին բարև տուաւ :

41 Եւ էլաւ երբոր Եղիսաբեթն Ա՝արիամու բարևն լսեց, երեխան նորա փորումն խաղաց • և Եղիսաբեթ Սուրբ Հոգով լցվաւ :

42 Եւ բարձր ձայնով աղաղակեց և ասաց • Օրհնեալ ես դու կանանց միջումն, և օրհնեալ է քո փորի պտուղն[36] :

43 Եւ էս ինչ տեղից է ինձ՝ որ իմ Տէրի մայրն ինձ մօտ գայ :

44 Ինչուր՝ ահա երբոր քո բարևի ձայնն իմ ականջս հասաւ, իմ երեխաս իմ փորիս մէջն ուրախաձայնով խաղաց :

45 Եւ երանի է նորան՝ որ կըհաւատայ՝ թէ էն բաներն կրկատարվին, որ Տէրիցն իրան ասված են :

46 Եւ Ա՝արիամն ասումէր • Մեծ իմ անձս փառաւորէ Տէրին[40] •

47 Եւ իմ հոգիս ուրախացաւ՝ իմ փրկիչ Աստուծովս :

48 Պատճառնոր՝ իրան աղախնոյ (ղաբա-ուշի) խոնարհութեանն մտիկ տուաւ[41], ինչու որ՝ ահա հիմիկուց ետև ամէն ազգերն երանի կըտան ինձ[42] :

49 Պատճառնոր՝ Օ՝րաւորն մեծ մեծ բաներ արաւ ինձ[43], և սուրբ է նորա անունն[44] :

50 Եւ նորա ողորմութիւնն պորտէ պորտ նորա վախեցողներին վրայ է[45] :

51 Օ՝րաւորութիւն արաւ իրան բազկովն[46]՝ ցրվեց ամբարտաւաններին իրանց սրտի մտածմունքներովն[47] :

52 Օ՝րաւորներին իրանց աթոռից կործանեց, և խոնարհներին բարձրացրուց[48] :

53 Սովածներին բարութենովն լցրուց, և հարուստներին դատարկ թողեց[49] :

54 Իրան Իսրայէլ ծառային ընդունաւ տարաւ՝ իրան ողորմութիւնն երբեն յիշելով[50] :

55 Ինչպէս որ մեր հարանց խոստացաւ՝ Ա՝բրահամին և նորա զաւակին՝ մինչև յաւիտեան[51] :

56 Ա՝արիամն մնաց նորա մօտ եռքիք ամսի չափ և (ապա) դարձաւ իրան տունն :

57 Եւ Եղիսաբեթի ծնելոյ ժամանակն լցվաւ, և որդի ծնաւ :

58 Եւ նորանք՝ որ նորա չորս կողմումն էին՝ և նորա ազգականներն լսեցին՝ թէ Տէրն իրան ողորմութիւնն մեծ արաւ նորա վերայ • և ուրախացան նորա հետ[52] :

59 Եւ էլաւ՝ ութ օրումն եկին, որ երեխային թլփատեն, և նորան իրան հօր անունովն Օ՝աքարիա էին կոչում[53] :

60 Նորա մայրն պատասխան տուաւ և ասաց • Ո՛չ այլ Յովհաննէս պիտի կոչվի[54] :

(38) Հիւ • իա • 9, 10, 11 : (39) Գործ • ե • 24 : (40) ա Թագ • բ • 1 : Սաղ • լգ • 2, 3 : լե • 9 : Ա՛բ • գ • 18 : (41) ա Թագ • ա • 11 : Սաղ • ճլը • 6 : (42) Ա՛ղ • գ • 12 : Ղ՛ած • ժա • 27 : (43) Սաղ • հա • 19 : ճիը • 2, 3 : (44) Սաղ • ճժա • 9 : (45) Ծննդ • ժէ • 7 : Ելք • բ • 6 : Սաղ • ճգ • 17, 18 : (46) Սաղ • զը • 1 : ճիը • 15 : Ածայ • խ • 10 : ծա • 9 : ծբ • 10 : (47) Սաղ • լգ • 10 : ա Պետր • ե • 5 : (48) ա Թագ • բ • 6 : Յոբ • ե • 11 : Սաղ • ճժգ • 6 : (49) ա Թագ • բ • 5 : Սաղ • լգ • 10 : (50) Սաղ • զը • 3 : Երեմ • լա • 3 • 20 : (51) Ծննդ • ժէ • 19 : Սաղ • ճլը • 11 : Հ՛ոով • ժա • 28 : Գաղ • գ • 16 : (52) Վէր • 14 : (53) Ծննդ • ժէ • 12 : Ղ՛ած • ժբ • 3 : (54) Վէր • 13 :

61 Եւ Նորան ասացին՝ Թէ Ո՛չ ով չը՛կայ քո ազգումդ՝ որ Նորա անունն Յօհաննէս կոչվի :

62 Նորա Հօրն աչքով էին ա-նուա՝ Թէ ի՞նչ կըկամենայ կոչել Նորան :

63 Եւ Նա տախտակ խնդրեց , գրեց՝ և ասաց , դորա անունն Յօհաննէս է • և ամէնքն զարմացան[55] :

64 Եւ շուտով Նորա բերանն և լեզուն բացվաւ • և խօսում՝ և Աստուծոյն օրհնում[56] :

65 Եւ ահ ընկաւ ամէնին վերայ , որ էս (քանըս) լսումին , և որ Նորանց ջորս կողմովն բընակված էին • և Հրէաստանի սարերի ամէն կողմերումն էս ամէն բաներըս պատմվումին[57] :

66 Եւ ամէնքն՝ որ լսումին՝ իրանց սրտերումն դրին և ասացին[58] • Էս երեխաս ի՞նչ պիտի լինի • և Տէրի ձեռն Նորա հետն էր[59] :

67 Եւ Նորա Հայր Զաքարիան Սուրբ Հոգով լցվաւ , մարգարէացաւ և ասաց[60] •

68 Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածն[61] որ մեզ տեսութիւն և կաւ՝ և իրան ժողովըրդին համար փրկութիւն արաւ[62] :

69 Եւ իրան Դաւիթ ծառայի տանին փրկութեան եղջիւր վերկացուց մեզ համար[63] :

70 Ինչպէս որ խօսեց սրբոց բերանովն՝ որ յաւիտենից Նորա մարգարէներն էին[64] :

71 Փրկութիւն մեր թշնամիներից • և ամէն մեզ ատողների ձեռքից :

72 Որ մեր հարանց վերայ ողորմութիւն անէ , և իրան սուրբ ուխտն և պայմանըն յիշէ[65]՝

73 Ին երդումն , որ մեր Հայր Աբրահամին երդվաւ՝ որ մեզ տայ[66] ,

74 Որ մեր թշնամիների ձեռքից ազատված՝ առանց վախի պաշտենք իրան[67] ,

75 Արդութենով և արդարութեամբ նորա առաջին՝ մեր կենաց ամէն օրերումն[68] :

76 Եւ դու ով երեխայ՝ Վարձրեալդ մարգարէ կըկոչվիս • ինչուր՝ պիտի գնաս Տէրի երեսաց առաջին՝ որ Նորա ճանապարհըն պատրաստես[69] :

77 Նորա ժողովըրդին փրկութեան գիտութիւն տաս իրանց մեղաց թողութեան համար[70] :

78 Ար Աստուծոյ քաղցր ողորմութեան համար , որ Նորանով արեգակն վերևից տեսութիւն եկաւ մեզ[71] :

79 Որ երևի Նորանց՝ որ խաւարումն և մահի շուաքումն նստած էին , որ մեր ոտներըս դէպի խաղաղութեան ճանապարհն շիտակէ[72] :

80 Եւ երեխան աճումէր՝ և հո-

(55) վէր • 13 : (56) մէր • 20 : (57) վէր • 39 : (58) Ո՛ւշ • բ • 19 • 51 : (59) Ծն-նդեր • լթ • 2 : Սաղ • ճ • 17 : ճթ • 21 : Գործ • ժա • 21 : (60) Յովել • բ • 28 : (61) գ Թագ • ա • 48 : Սաղ • խա • 13 : հբ • 18 : ձշ • 48 : (62) Լուկ • գ • 16 : գ • 31 : Սաղ • ճժա • 9 : Ո՛ւշ • է • 16 : (63) Սաղ • ձլը • 17 : (64) Լուկ • իգ • 5 , 6 : Լ • 10 : Գործ • թ • 24 : Գործ • գ • 21 : Հռով • ա • 2 : (65) Ո՛ւխտ • իզ • 42 : Սաղ • ղը • 3 : ճե • 8 , 9 : ձշ • 45 : Լուկ • ժգ • 60 : մէր • 54 : (66) Ծննդ • ժբ • 3 : ժե • 4 : իբ • 16 , 17 : Լուկ • գ • 13 • 17 : (67) Հռով • գ • 18 • 22 : Լուկ • թ • 14 : (68) Լուկ • լբ • 39 , 40 : Լուկ • գ • 24 : բ Թագ • բ • 13 : բ Տիմ • ա • 6 : Տիտ • բ • 12 : ա Պետր • ա • 15 : բ Պետր • ա • 4 : (69) Լուսա • խ • 3 : Մատ • գ • 1 : գ • 5 : Մարկ • ժա • 10 : մէր • 17 : (70) Մարկ • ա • 4 : Ո՛ւշ • գ • 3 : (71) Թագ • իգ • 17 : Լուսա • ժա • 1 : Օրհ • գ • 8 : գ • 12 : Մատ • գ • 2 : (72) Լուսա • թ • 2 • խբ • 7 : խթ • 9 : Մարկ • դ • 16 : Գործ • իգ • 18 :

գով զօրանումբ[73] . և անապատ- էն օրն՝ որ նա երևեցաւ Իսրա- ներուն (չՕլՂՐՈՒՆ) էր մինչև յելին[74] :

ԳԼՒ· Ր

1 Օգոստոս կայսրն ամէն Հռովմայի տէրութեան տակ էլղներին աշխարհագիր կառնէ : 6 Ի բիւստոսի ծնունդն : 8 Մին հրեշտակ էս աւետիքն հովիւներին կըտայ : 13 Շատ մար- դիկ սորա համար Աստուած կըգովին : 21 Ի բիւստոսի թլփատվիւն : 22 Մարիամ սըր- բութեան օրերն կըլըցվին : 28 Սիմէոնն և Աննան Ի բիւստոսի համար կըմարգարէանան : 40 Ի բիւստոսի շնորհքով աճիլն ; 46 Տաճարին մէջ վարդապետներին բան հարցանելն : 51 Եւ իրան ծնողաց ենազանդութիւնն :

1 Եւ էլաւ որ էն օրերումն՝ հր- բաման գուրս եկաւ Օգոստոս կայ- սերիցն , որ ամէն աշխարհքի միջի մարդիկն գրի տակ ձգվին :

2 Էս առաջինն աշխարհագիրն կիւրենի Ասորոց դատաւորութեան ժամանակումն էլաւ[1] :

3 Եւ ամէնքն գնումէին՝ որ էն աշխարհագիրն մտնեն՝ ամէն մէկն իրան քաղաքն :

4 Էնօսէփին էլ Գալիլեայիցըն՝ Նա- զարէթ քաղաքիցն գնաց Հրէաստան (ՔՂհոպոսպոան) Դաւթի քաղաքն[2] , որ Բեթղէհէմ է կոչվում . ինչու որ՝ նա Դաւթի տանիցն և ազգիցն էր[3] :

5 Որ աշխարհագիրն մտնէ Ա՝ա- բիամու հետ՝ որ նշանված էր նո- բան , և յղի էր :

6 Եւ եղբոր նորանք էն տեղ էս- սին , նորա ծնելոց օրերն լցվան :

7 Եւ իրան առջինեկ որդին ծը- նաւ , և պատեց խանձարուրների (ՔՈՒԲՈՒՆԵՐՔ) մէջ՝ և մսուրի (ԽՈՒ- ՐՔ) մէջ դրաւ[4] . ինչուորՙ էն վեր- գալոց տեղումն տեղ չըկար նորանց համար :

8 Եւ էն տեղումն հովիւներ (չՈ- պանՆԵՐ) կային գուրս տեղն կացող՝ որ գիշերի ժամանակն իրանց հօտե- րըն (ՀՒՐՈՒՆԵՐՔՆ) պահումէին :

9 Եւ Տէրի հրեշտակն երևեցաւ նորանց , և Տէրի փառքն նորանց վերայ ծագեց . և մեծ վախով վա- խեցան[5] :

10 Եւ հրեշտակն նորանց ասաց . Ա՛ի վախենաք , ինչուորՙ ահա մեծ ուրախութեան աւետիք եմ տալիս ձեզ , որ ամէն ժողովըրդին պիտի լինի[6] :

11 Պատճառնորՙ էս օր[7] ձեզ Փըր- կիչ ծնվաւ՝ Դաւթի քաղաքումն[8] . որ նա Օծեալ Տէր է[9] :

12 Եւ էս լինի ձեզ նշան . մին ե- րեխայ կըգտնէք խանձարուրներով (ՔՈՒԲՈՒՆԵՐՈՎ) պատած , և մսուրի (ԽՈՒՐՔ) մէջ դրած :

13 Եւ յանկարծակի էն հրեշտա- կին հետ էլաւ երկնաւոր զօրքի բազ- մութիւնն , որ Աստուծոյն օրհնու- մին՝ և ասում[10] .

14 Փառք (ԼԻՆԻ) Աստուծոյ ի

(73) Լատ . բ . 40 : (74) Մատթ . գ . 1 : ժա . 7 : Հինգերորդ ամ նախ քան զՏասա- րակ թուականն Ի բիւստոսի : (1) Գործ . ե . 37 : (2) ա Թագ . ժգ . 1 . 4 : Հովհ . է . 42 : (3) Մատթ . ա . 16 : Լատ . ա . 27 : (4) Մատթ . ա . 25 : (5) Լատ . ա . 12 : (6) Ծննդ . ժբ . 3 : Մատթ . իը . 19 : Մարկ . ա . 15 : Լատ . իդ . 47 : Սաղ . ա . 23 : (7) Լատ . թ . 6 : (8) Մատթ . ա . 21 : (9) Մատթ . ա . 16 . ժգ . 16 : Լատ . ա . 43 : Գործ . բ . 36 . 38 : ժ . 36 : Փիլիպ . բ . 11 : (10) Ծննդ . իը . 12 . լբ . 1 , 2 : Սաղ . ձդ . 20 , 21 : ճառը . 2 : Դան . է . 10 : Եբր . ա . 14 : Ճայտ . է . 11 :

բարձունս[11] , և երկրի վերայ խա-
ղաղութիւն[12] , և մարդկանց մէջ հա-
ճոյութիւն[13] :

15 Եւ էլաւ երբոր հրեշտակներն
նորանցից վերացան երկինքն , հո-
վիւներն (չոպանները) իրար ասացին .
Եկէք գնանք մինչև Բեթղէհէմ, և
տեսնենք ինչ է էս բանս՝ որ էլաւ ,
որ Տէրն ցոյց տուաւ մեզ :

16 Եւ վռազով եկին և գտին
Մարիամին և Յօսէփին , և երե-
խային մսուրի մէջ դրած :

17 Եւ իմացան էն բանըն՝ որ էն
երեխայի համար ասվեցաւ նորանց :

18 Եւ ամէնքն՝ որ լսումէին , զար-
մանումէին էն բաներին համար՝ որ
հովիւներն նորանց հետ խօսեցին :

19 Եւ Մարիամն էս ամէն բանե-
րըս պահումէր , և իրան սրտումն
մտածումէր[14] :

20 Եւ հովիւներն դարձան . Աս-
տուածոյն փառաբանումէին և օրհնու-
մէին էն ամէն բաներին համար՝ որ
տեսին . ինչպէս որ նորանց պատ-
մվեցաւ :

21 Եւ երբոր ութ օր լցվաւ[15]՝ որ
նորան թլրփատեն , նորա անունն
Յիսուս կոչվեցաւ՝ էն որ հրեշտա-
կին էր կոչված , դեռքանի որ նա
չէր յղացված փորումն[16] :

22 Եւ երբոր նորա սրբութեան
օրերն լցվան՝ Մօսէսի օրէնքին
պէս[17] , նորան տարան Երուսաղէմ՝
որ Տէրի առաջին կանգնացնեն :

23 Ինչպէս որ Տէրի օրէնքումն
գրված է թէ Ամեն արու (ոչ ղա-
ւէ)՝ որ արգանդ բանայ[18] , Տէրին
սուրբ պիտի կոչվի :

24 Եւ որ Տէրի օրէնքումն ասա-
ծին պէս պատարագ բերեն մին ջուխտ
տատրակ (ղումրի) , կամ աղաւնու
երկու ձագ[19] :

25 Եւ ահա Երուսաղէմումն մին
մարդ կար՝ որ նորա անունն Սիմէօն
էր . և էն մարդն արդար և Աստ-
ուածավախ էր , և Իսրայէլի մխի-
թարութեանն սպասումէր[20] , և
Սուրբ Հոգի կար նորանում :

26 Եւ նա Սուրբ Հոգուցն հրա-
ման էր առել՝ որ մահ չըտեսնէ[21] ,
մինչև որ Տէրի Քրիստոսն տեսնէ :

27 Եւ նա Հոգուոյն եկաւ տաճա-
րըն[22] . և երբոր ծնողներն Յիսուս
երեխային բերին՝ որ օրէնքի սովո-
րութեան պէս նորա վերայ անեն .

28 Նա էլ նորան առաւ ընդունեց
իրան գիրկն , և Աստուածոյն օրհնեց ,
և ասաց .

29 Տէր հիմիկ քո խօսքիդ պէս խա-
ղաղութենով ես արձակումէ քո ծա-
ռայիդ[23] .

30 Ինչուոր՝ իմ աչքերս քո փըր-
կութիւնդ տեսին[24] ,

31 Որ նորան ամէն ժողովուրդնե-
րի առաջին պատրաստեցիր :

32 Լոյս՝ որ հեթանոսներին պիտի
յայտնվի , և փառք քո Իսրայէլ
ժողովրդիդ համար[25] :

33 Եւ նորա հայրն և մայրն զար-
մացել էին էն բաներին վերայ՝ որ նո-
րա համար խօսվումէին :

34 Եւ Սիմէօնն օրհնեց նորանց ,

(11) Լուկ . ժթ . 38 : Նէեմ . ա . 6 : գ . 10 . 21 : Յոպ . ե . 13 : (12) Նոյ : ծէ . 19 : Լուկ . ա . 79 : Հռոմ . ե . 1 : Նէեմ . բ . 17 : Կող . ա . 20 : (13) Յովհ . գ . 16 : Նէեմ . բ . 4 . 7 : բ Թես . բ . 16 : ա Յովհ . գ . 9 , 10 : (14) Ծննդ . լէ . 11 : Լուկ . ա . 66 : վեր . 51 : (15) Ծննդ . ժէ . 12 : Ղեւ . ժբ . 3 : Լուկ . ա . 59 . (16) Մատթ . ա . 21 . 25 : Լուկ . ա . 31 : (17) Ղեւ . ժբ . 2 , 3 , 4 . 6 : (18) Ելք . ժգ . 12 : խբ . 29 : լգ . 19 : Թես . գ . 13 : ը . 17 : ժը . 15 : (19) Ղեւ . ժբ . 2 . 6 . 8 : (20) Նոյ . խ . 1 : Մատ . ժե . 43 : վեր . 38 : (21) Սաղ . ձթ . 48 : Եբր . ժա . 5 : (22) Մատթ . դ . 1 : (23) Ծննդ . խզ . 30 : փիլիպ . ա . 23 : (24) Նոյ . ծբ . 10 : Լուկ . գ . 6 : (25) Նոյ . թ . 2 : խբ . 6 : խթ . 6 : 4 . 1 , 2 , 3 :

և Նորա մայր Մարիամին ասաց • Մա-
ՀԱ սա կայ շատ մարդկանց համար
ընկնելոյ և կանգնելոյ պատճառ[26]
Իսրայէլի միջումն , և հակառակու-
թեան նշան[27] :
35 Եւ հենց քո անձնոմդ սուր
կանցնէ , որ շատ սրտերից խոր-
հուրդներն յայտնվին[28] :
36 Եւ Հնտեղ էր Աննա մարգարէ՝
փանուէլի աղջիկ Ասերի ազգիցն •
սա ինքն շատ օրերը անց էր կացրել
որ իրան կուսութեան ժամանակիցն
եօթն տարի էր մնացել մարդոյ հետ :
37 Եւ ութսուն և չորս տարոյ չափ
որբևէրի էր՝ որ տաճարիցն չէր հե-
ռանում • բայց պասով և աղօթ-
քով գիշերուցրնկ ծառայումէր
(Աստուծոյն)[29] :
38 Եւ սա էլ էն ժամումն (սահա-
ՆՈՒՆ) վերկացաւ և Տէրիցն գոհա-
նումէր , և նորա համար ամէնին հետ
խօսումէր՝ որ Երուսաղէմի փրկու-
թեանն սպասումէին[30] :
39 Եւ երբոր ամէն բաներըն Տէրի
օրէնքին պէս կատարեցին , յետ
դարձան Գալիլէա՝ իրանց Նազա-
րէթ քաղաքն :
40 Եւ երեխան աճումէր[31] և զօ-
րանում իմաստութենով լցված • և
Աստուծոյ շնորհքն նորա վերայ էր :
41 Եւ նորա ծնողքն տարուց տա-
րի Երուսաղէմ էին գնում զատկի
տօնումն[32] :
42 Եւ երբոր նա տասն երկու տա-
րեկան էլաւ , նորանք տօնի սովո-
րութեան պէս Երուսաղէմ գնացին :
43 Եւ երբոր (էն) օրերն կատար-
վեցան՝ և յետ դարձան , Յիսուս
տղան Երուսաղէմումն մնաց • և նո-
րա ծնողքն չիմացան :
44 Կարծումէին՝ թէ նա ճանա-
պարհի ընկերներին հետ կըլինի •
մին օրվան չափ ճանապարհ եկին՝
և նորան ման էին գալիս դրացինե-
րի (հարեհանէրէ) և ծանօթների
մօտն :
45 Եւ երբոր չը գտին , յետ դար-
ձան Երուսաղէմ՝ որ նորան ման
գան :
46 Եւ էլաւ որ երեք օրից ետև
նորան տաճարի մէջն գտին , որ վար-
դապետներին հետ նստած էր • նո-
րանց ականջ էր դնումէ , և նորան-
ցից հարցնումէր :
47 Եւ ամէնքն՝ որ նորանից լսու-
մէին՝ զարմանումէին նորա իմաստու-
թեան և պատասխաններին վերայ[33] •
48 Եւ երբոր նորան տեսին՝ շատ
զարմացան • և նորա մայրն ասաց
նորան • Որդեակ՝ էս ինչ բան արիր
մեզ հետ • ահա քո հայրդ և ես մեծ
նեղութենով ման էինք գալիս քեզ
համար :
49 Եւ նորանց ասաց • Ինչ էիք
ինձ ման գալիս • չէիք գիտումէ՝ թէ
պէտք է , որ ես իմ Հօր տանն
լինիմ[34] :
50 Եւ նորանք չիմացան էն բա-
նըն՝ որ նորանց հետ խօսեց[35] :
51 Եւ նորանց հետ վերեկաւ , և
գնաց Նազարէթ • և նորանց հը-
նազանդ էր • և նորա մայրն էն ա-
մէն բաներըն պահումէր իրան սըր-
տումն[36] :
52 Եւ Յիսուս աճումէր իմաստու-
թենով և հասակով[37] , և շնորհ-
քով Աստուծոյ և մարդկանց ա-
ռաջին :

(26) Նոյ • ը • 14 : Ովս • ժդ • 9 : Ասոր • ք • 44 : Հռով • թ • 32 , 33 : ա Պետր • ա • 23 , 24 : բ Պետր • բ • 16 : ա Պետր • բ • 7 , 8 : (27) Գործ • իը • 22 : (28) Սաղ • իբ • 10 : Յովհ • ժբ • 25 : (29) Գործ • իզ • 7 : ա Տիմ • ե • 5 : (30) Մարկ • ժե • 43 : Վէր • 25 : Հռով • իգ • 21 : (31) Վէր • 52 : Հռով • ա • 80 : (32) Նէ • իգ • 15 • 17 : Ղև • 23 : բ Օրէն • ժզ • 1 • 16 : (33) Մարկ • է • 28 : Մարկ • ա • 22 : Հռով • դ • 22 • 32 : Յովհ • է • 15 • 46 : (34) Յովհ • բ • 16 : (35) Հռով • թ • 45 : ժբ • 34 : (36) Վէր • 19 : Գործ • է • 28 : (37) ա Թագ • բ • 26 : Վէր • 40 :

ԳԼ• Գ

1 Հօհաննէսի քարոզութիւնն և մկրտելն , 15 Քրիստոսի համար իւրեան արած վկայութիւնը : 21 Երօդէս Հօհաննէսն բանտումն կընդնէ : Քրիստոս կըմկրտվի , և երկինքէն նորա վկայութիւն կըտրվի : 23 Քրիստոսի ցեղն և ազգահամարն Հօսէփից սկսած մինչև Ադամ:

1 Տիբերիոս կայսերի տէրութեան տասն և հինգ տարումն , Պոնտացի Պիղատոսի Հրէաստանի վերայ դատաւորութեան ժամանակումն , և Հերօդէսի Գալիլեացոց վերայ չորրորդապետութեան ժամանակումն , և նորա փիլիպպոս եղբօր՝ Իտուրացոց և Տրաքոնացոց աշխարհքին վերայ չորրորդապետութեան ժամանակումն , և Լիւսանիայի Աբիլենացոց վերայ չորրորդապետութեան ժամանակումն ,

2 Եւ Աննայի և Կայիափայի քահանայապետութեան օրերումն՝ Ես տուեծոյ խօսքն Յովաքարիայի որդի Հօհաննէսին վերայ ելաւ՝ անապատի (Հօրէ) միջումն[1] :

3 Եւ նա եկաւ Յորդանանի ամէն կողմերն[2], որ ապաշխարութեան մկրտութիւնըն քարոզէ մեղաց թողութեան համար[3] :

4 Ինչպէս որ Եսայի մարգարէի խօսքերի գրքումն գրված է՝ (Ձէ) Կանչօղի ձայն անապատումն[4] . (Ձէ) պատրաստ արէք Տէրի ճանապարհըն , և շիտակ արէք նորա գնալոց ճանապարհներըն :

5 Ամէն ձորերն լցվին , և ամէն սարերն և դարերն խոնարհվին . և դժուարներն հեշտ լինին , և դարուփոսներն հաւասար ճանապարհներ լինին :

6 Եւ Թող ամէն մարմին Աստուծոյ փրկութիւնըն տեսնէ[5] :

7 Եւ էն ժողովուրդներին՝ որ դուրս էին եկած , որ նորանից մկրտվին՝ ասաց . (Իժ) Օձի զաւակներ՝ ո՞վ սովորցրուց ձեզ փախչիլ էն բարկութենից՝ որ գալու է[6] :

8 Ապաշխարութեան արժանի պտուղներ արէք . մի ըսկսէք ասել թէ Ունինք Աբրահամ ունինք հայր . եսասումեմ ձեզ , թէ Աստուած կարող է էս քարերիցս որդիք հանել Աբրահամի համար :

9 Այժ ահա կացինն ծառերի արմատին (Հէօրին) մօտ դրած է . ամէն ծառ՝ որ բարի պտուղ չի բերում[7] , կըկտրվի և կրակի մէջ կըքցվի :

10 Եւ ժողովուրդներն նորան հարցնումին և ասում . Ապա ի՞նչ գործենք[8] :

11 Պատասխան տուաւ և նորանց ասաց . Ով՝ որ երկու շոր ունի , թող մինը նորան տայ՝ որ չունի . և նա էլ՝ որ կերակուր ունի , թող էնպես անէ[9] :

12 Մաքսաւորներն (Հէրմօլէնէրն) էլ եկին՝ որ մկրտվին , և նորան ասացին . Վարդապետ՝ ի՞նչ գործենք[10] :

13 Եւ Նա ասաց նորանց . Չեզ հրամայածիցն աւելի բան մի անէք[11] :

14 Զինուորներն էլ նորան հարցնումին և ասում . Ապա մենք ի՞նչ

(1) Յովհ • ժա • 49 • 51 : ԺԸ • 13 : Դուբ • գ • 6 : (2) Մատ • գ • 1 : Մարկ • ա • 4 : (3) Ղուկ • ա • 77 : (4) Եսայ • խ • 3 : Մատ • գ • 3 : Մարկ • ա • 3 : Յովհ • ա • 23 : (5) Սաղ • ղը • 2 : Եսայ • ծբ • 10 : Ղուկ • բ • 10 : (6) Մատ • գ • 7 : (7) Մատ • է • 19 : (8) Դուբ • բ • 37 : (9) Ղուկ • ժա • 41 : բ Կորնթ • ը • 14 : Յովհ • բ • 15 , 16 : ա Յովհ • գ • 17 : գ • 20 : (10) Մատ • իա • 32 : Ղուկ • է • 29 : (11) Ղուկ • ԺԹ • 8 :

գործենք • Նորանց ասաց • Իսկի մընին մի՛ նեղացընէք՝ մընին ղըրպարտութիւն մի՛ անէք , թող ձեր վարձքերն բաւական լինին ձեզ[12] :

15 Վասն որ Ժողովուրդն սպասուելիք՝ և ամենքն իրանց սրտերումն մտածուելիին Յօհաննէսին համար՝ միթէ սա լինի Քրիստոս :

16 Յովհաննէս պատասխան տուաւ և ասաց • Ես ջրով եմ մկրտում ձեզ[13] • բայց ինձանից էլ զօրաւորն է գալիս՝ որ ես արժանի չեմ նորա կօշիկները վեր առնել • Նա ձեզ Սուրբ Հոգով և կրակով կմկրտէ :

17 Որ նորա հօսելին իրան ձեռին է՝ որ իրան կալըն կըսրբէ՝ և ցորենն իրան հաւաքն կըժողովէ , և դարմանն կայրէ անանցնելի կրակով[14] :

18 Եւրիշ էլ շատ բաներ մխիթարութենով աւետիք էր տալիս ժողովրդին :

19 Հայց Հերովդէս չորրորդապետն նորանից յանդիմանուած իրան եղբօր կնկան Հերոդիայի պատճառովն , և էն ամէն չար գործքերին համար՝ որ Հերոդէսն արաւ[15] ,

20 Էն ամենին վերայ էս էլ աւելացրուց՝ որ Յօհաննէսին բանտի (պշպռանէ) մէջ դրաւ :

21 Էս էլաւ ամէն ժողովուրդի մկրտվելոյ ժամանակն , և երբոր Յիսուս մկրտվեցաւ՝ և աղօթք էր անում , երկինքն բացվաւ[16] .

22 Եւ Սուրբ Հոգին մարմնաւոր կերպարանքով աղաւնու պէս վէր էր գալիս նորա վերայ • և երկրքիցն ձայն եկաւ՝ որ ասումէր • Դու ես իմ սիրելի Որդին՝ քեզ հաւան կացայ :

23 Եւ ինքն Յիսուս սկսած էր երեսուն տարեկանի չափ լինել[17] որ ինչպես որ կարծրվումեր , Յօսէփի որդին էր[18] • և նա՝ Յակոբին • և նա՝ Հեղիին • և նա՝ Մատաթիային :

24 Եւ նա՝ Լևիին • և նա՝ Մեղքիին • և նա՝ Յաննէին • և նա՝ Յօսէփին :

25 Եւ նա՝ Մատթէին • և նա՝ Յմոսին • և նա՝ Նաւումին • և նա՝ Եսղլիին • և նա՝ Նանգէին :

26 Եւ նա՝ Մահաթիին • և նա՝ Մատաթին • և նա՝ Սեմին • և նա՝ Յօսէքին • և նա՝ Յօդին :

27 Եւ նա՝ Յօհանին • և նա՝ Րեսին • և նա՝ Զօրաբաբէլին • և նա՝ Սաղաթիէլին • և նա՝ Նէրիին :

28 Եւ նա՝ Մեղքիին • և նա՝ Եդդէին • և նա՝ Կօսամին • և նա՝ Եղմոդադին • և նա՝ Երին :

29 Եւ նա՝ Յիսուսին • և նա՝ Եղիազարին • և նա՝ Յօրամին • և նա՝ Մատթային • և նա՝ Լևիին :

30 Եւ նա՝ Սիմէօնին • և նա՝ Յուդային • և նա՝ Յօսէփին • և նա՝ Յօնամին • և նա՝ Եղեկիմին :

31 Եւ նա՝ Մեղքին • և նա՝ Մեննային • և նա՝ Մատաթին • և նա՝ Նաթանին[19] • և նա՝ Դաւթին[20] :

32 Եւ նա՝ Յեսսէին[21] • և նա՝ Յօբէդին • և նա՝ Բոոսին • և նա՝ Սաղմոնին • և նա՝ Նասսօնին :

33 Եւ նա՝ Ամինադաբին • և նա՝ Րամին • և նա՝ Եդմէին • և նա՝ Նաննէին • և նա՝ Եսրոմին • և նա՝ Փարեսին • և նա՝ Յուդային :

34 Եւ նա՝ Յակոբին • և նա՝ Իսահակին • և նա՝ Աբրահամին • և նա՝ Թարայինն[22] • և նա՝ Նաքորին :

(12) Նե • իդ • 1 : Ղևտ • ժթ • 11 : (13) Մատթ • գ • 11 : (14) Մաղ • դ • 12 : Մատթ • ժգ • 30 : (15) Մատթ • ժգ • 3 : Մարկ • գ • 17 : (16) Մատթ • գ • 13 : Յովհ • ա • 32 : (17) Ծննդ • դ • 3 • 35 • 39 • 43 • 47 : (18) Մատթ • ժգ • 55 : Յովհ • գ • 42 : (19) Զաքար • ժբ • 12 : (20) Բ Թագ • ե • 14 : ա Պետ • գ • 5 : (21) Հեռոդ • դ • 18 , Եսայի : ա Պետ • բ • 10 , Եսայի : (22) Ծննդ • ժա • 24 • 26 •

35 Եւ նա՝ Սերուքին · և նա՝ Նագաւրին · և նա՝ Փաղեկին · և նա՝ Երեւրին · և նա՝ Սաղային :
36 Եւ նա՝ Կայնանին[23] · և նա՝ Ըրփաքսադին · և նա՝ Սէմին[24] · և նա՝ Նդրին · և նա՝ Ղամբրին :
37 Եւ նա՝ Մաթուսաղային · և նա՝ Ենոքին · և նա՝ Յարետին · և նա՝ Մաղաղիէլին · և նա՝ Կայնանին:
38 Եւ նա՝ Ենոսին · և նա՝ Սէթին · և նա՝ Ադամին · և նա՝ Աստուծոյն[25] :

ԳԼ · Դ

1 Ըրիստոսի փորձվելն և ծոմ պահելն : 13 Նա Սատանային կը յաղթէ · 14 Ըսկսի կըսկսի : 16 Նազարէթի ժողովուրդն կըզարմանայ նորա ընդհաց խօսքերին վերայ : 23 Դև ունեցող մին մարդ կըբժշկէ · 38 Պետրոսի զքնջնէն , 41 Նաև ուրիշ կերպ ցաւերով հիւանդներն կըբժշկէ : 42 Դևերն Ըրիստոսն կըխոստովանին , և սորա համար Ըրիստոս սաստուկ նորանց : 43 Ըրիստոսի ամէն քաղաքներն մէջ քարոզութիւնն :

1 Նէ Յիսուս Սուրբ Հոգովն լցված Յորդանանէն գարձաւ[1] և Հոգովն վարվեցաւ անապատն[2] (չէօլէն) :
2 Քառասուն օր Սատանայէն փորձվեցաւ · և էն օրերումն ոչ կերաւ և ոչ խմեց[3] · և երբոր նոքանք կատարվեցան , սովեց :
3 Եւ Սատանն նորան ասաց · Թէ որ դու Աստուծոյ Որդին ես , էգ քարիդ ասա՛ որ հաց լինի :
4 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց · Գրված է , թէ Ոչ մէնակ հացով կապրի մարդ , այլ Աստուծոյ ամէն խօսքովն[4] :
5 Եւ նորան մին բարձր սար հանեց՝ և աշխարհքի ամէն թագաւորութիւններըն ցոյց տուաւ նորան մին աչքի թափ տալը ժամանակում :
6 Եւ Սատանն ասաց նորան · Էս ամէն իշխանութիւններըս և սոքանց փառքըն քեզ կըտամ · ինչու որ՝ ինձ տրվված է · և ում որ կամենամ՝ կըտամ սորան[5] :
7 Ուրեմն՝ եթէ իմ առաջիս ընկած երկրպագութիւն անես , ամէնն քեզ լինի :
8 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց · Գրված է Թէ Տէր Աստուծդդ պէտք է երկրպագութիւն անես , և նորան մէնակ պաշտես[6] :
9 Եւ տարաւ նորան Երուսաղէմ, և տաճարի աշտարակին (քուրջէն) վերայ · կանգնացրուց , և նորան ասաց · Թէ որ Աստուծոյ Որդի ես, էստեղից քեզ վէր քցիր[7] :
10 Պատճառնոր՝ գրված է Թէ Իրան հրեշտակներին հրամայել է քեզ համար՝ որ քեզ պահեն[8] :
11 Որ ձեռներին վերայ քեզ վեր առնեն՝ որ խկի մին ժամանակ քո ոտդ քարի չի դիպչընես :
12 Յիսուս նորան պատասխան տուաւ և ասաց · Ըսված է Թէ Մի փորձեր քո Տէր Աստուծոդդ[9] :
13 Եւ Սատանան երբոր էն ամէն փորձութիւնները կատարեց , հեռացաւ նորանից մին ժամանակ[10] :
14 Եւ Յիսուս[11] Հոգով զօրութեա-

(23) Ղուկ · ժա · 12 : (24) Ղուկ · ե · 6 , Լայլ : ժա · 10 , Լայլ : (25) Ղուկ · ե · 1 , 2 : (1) Մարկ · դ · 1 : Մատ · ա · 12 : (2) Վայր · 14 : Ղուկ · բ · 27 : (3) Նէ · լե · 28 : գ Թագ · ԺԹ · 8 : (4) բ Օրէն · ը · 3 : (5) Յովհ · ԺԲ · 31 : Ժգ · 30 : Յայտ · Ժգ · 2 · 7 : (6) բ Օրէն · ջ · 13 : Ժ · 20 : (7) Մարկ · դ · 5 : (8) Սաղմ · ղա · 11 : (9) բ Օրէն · ջ · 16 : (10) Յովհ · Ժգ · 30 : Եբր դ · 15 : (11) Մարկ · դ · 12 : Յովհ · դ · 43 :

նովն[12] գարձաւ Գալիլեա[13] • և նո-
րա համբաւն դուրս գնաց էն գա-
ւառի ամէն կողմերն :

15 Եւ նա սովորցնումէր նորանց
ժողովարաններումն , և ամէնից
փառաւորվումէր :

16 Եւ եկաւ Նազարէթ՝ որտեղ
որ մեծացել էր[14] • և իրան սովո-
րութեան պէս շաբաթ օրումն ժո-
ղովարանին մէջ մտաւ[15] :

17 Եւ Եսայի մարգարէի գիրքըն
տուին նորան՝ և վերկացաւ՝ որ կար-
դայ • և երբոր գիրքըն բացաւ՝ էն
տեղըն գտաւ՝ որ նորանումն գրված
էր •

18 Տէրի Հոգին ինձ վերայ է[16] •
և հենց նրա համար էլ օծեց ինձ •
նա ինձ ուղարկեց՝ աղքատներին ա-
ւետիք տալ , սրտով կոտրվածնե-
րին բժշկել ,

19 Գերիներին թողութիւն քա-
րոզել , և կուրերին տեսութիւն •
կոտրվածներին արձակել դէպի թո-
ղութիւն , Տէրի ընդունելի տարին
քարոզել :

20 Եւ գիրքըն խփեց՝ և պաշտօն-
եային տուաւ , և նըստեց • և ժո-
ղովարանի մէջն ամէն լինողների աչ-
քերն նորան էին մտիկ տալիս :

21 Եւ սկսեց ասել նորանց՝ (թէ)
Այսօր էս գիրքս կատարվեցաւ ձեր
ականջներումն :

22 Եւ ամէնքն վկայումէին նո-
րան , և զարմանումէին էն շնոր-
հաց խօսքերին վերայ՝ որ դուրս ե-
լին գալիս նորա բերանիցն[17] • և
ասումէին՝ Չէ՞ որ սա Յոսէփի որ-
դին է[18] :

23 Եւ նորանց ասաց • Լինի թէ
էս առակըս ասէք ինձ • Լաժիշկ՝ քո
անձըդ բժշկիր • որչափ բաներ լը-
սեցինք՝ որ Կափառնայումի մէջն ա-
րիր[19] էտեղ էլ արա քո գաւա-
ռումդ[20] :

24 Եւ ասաց • Ա՛շմարիտըն ա-
սումեմ ձեզ՝ թէ Մարգարէն ըն-
դունելի չէ իրան քաղաքումն[21] :

25 Իրաւի ասումեմ ձեզ • թէ Ե-
ղիայի օրերումն Իսրայէլի մէջն շատ
որբևէրիներ կային՝ երբոր երկին-
քըն երեք տարի և վեց ամիս փակ-
վեցաւ , և ամէն երկրի մէջ մեծ
սով էլաւ[22] :

26 Եւ Եղիան նորանցից մընին
մեռ չուղարկվեցաւ , բայց միայն
Սիդոնացոց Սարեփթա (քաղաքն)՝
մին որբևէրի կնկան մեռ :

27 Եւ շատ բորոտներ կային Իս-
րայէլի մէջն Եղիսէ մարգարէի ժա-
մանակումն • և նորանցից ոչ ոմ
չըսրբվեցաւ , բայց միայն Նէե-
ման Ասորին[23] :

28 Եւ ամէնքն՝ որ ժողովարանի
մէջն էին , բարկութեունով լցվան՝
երբոր էս լսեցին :

29 Եւ վերկացան՝ նորան քաղա-
քիցն դուրս հանեցին , և տարան
նորան մինչև էն սարի գլուխն՝ որ
նորանց քաղաքն նորա վերայ էր շին-
ված՝ որ բարձր տեղիցն վեր քցեն
նորան :

30 Եւ նա նորանց միջովն անցաւ
գնաց[24] :

31 Եւ վերեկաւ Կափառնայում՝
Գալիլեացոց քաղաքն[25] , և շաբաթ
օրերումն սովորցնումէր նորանց :

32 Եւ զարմանումէին նորա վար-
դապետութեան վերայ , ինչուր

(12) վէր • 1 : (13) Գաղ • ժ • 37 : (14) Մատ • բ • 23 : Ժգ • 54 : Մարկ • գ • 1 :
(15) Գաղ • Ժգ • 14 : Ժէ • 2 : (16) Եսայ • կա • 1 : (17) Սալմ • խե • 2 : Մատ •
Ժգ • 54 : Մարկ • գ • 2 : Գործ • բ • 47 : (18) Յովհ • գ • 42 : (19) Մատ • գ •
13 : Ժա • 23 : (20) Մատ • Ժգ • 54 : Մարկ • գ • 1 : (21) Մատ • Ժգ • 57 : Մարկ •
գ • 4 : Յովհ • գ • 44 : (22) ա Թագ • Ժէ • 9 : Ժը • 1 : Յակ • ե • 17 : (23) գ
Թագ • ե • 14 : (24) Յովհ • ը • 59 : ժ • 39 : (25) Մատ • դ • 13 : Մարկ • ա • 21 :

Նորա խօսքն իշխանութեամբ էր[26] :
33 Եւ ժողովարանի մէջն մին մարդ կար՝ որ նորան պիղծ դեւ բռնել էր , և մեծ ձայնով աղաղակեց[27] ,
34 Եւ ասաց . Թո՛ղ արա . դու ի՞նչ բան ունիս մեզ հետ՝ Յիսուս Նազովրեցի . եկի՞ր որ մեզ կորցնես . գիտեմ քեզ՝ (թէ) ո՛վ ես դու՝ Աստուծոյ Սուրբդ[28] :
35 Յիսուս սաստեց նորան և ասաց . Պապանձո՛ւիր և դո՛ւրս եկ դորանից . դևն էն մէջ տեղումն գետնին զարկեց նորան՝ և դուրս եկաւ նորանից , և իսկի մին վնաս չը՛գործեց նորան :
36 Եւ զարմանք էլաւ ամէնին վրայ . իրար հետ խօսումին և ասում . Ո՞ս ի՞նչ բան է՝ որ իշխանութեամբ և ուժով պիղծ դևերին սաստում՝ և դուրս են գալիս :
37 Եւ նորա համբաւն գնումէր էն գաւառի ամէն չորս կողմերն :
38 Եւ վերկացաւ էն ժողովարանից , և մտաւ Սիմոնի տունն[30] :
39 Սիմոնի զոքանչն սաստիկ տենդով չարչարվումէր՝ և նորան աղաչեցին նորա համար :
40 Նորա մօտ կանգնեց՝ սաստեց տենդին , և թողեց նորան . և շուտով վերկացաւ՝ և նորանց ծառայումէր :
41 Եւ արեգակն մտնելոյ ժամանակն՝ ամէնքն՝ որ կերպ կերպ ցաւերով հիւանդներ ունէին՝ նորանց բերումէին նորա մօտ . և նա նորանց ամէն մէկին վրայ ձեռք էր դնում՝ և նորանց բժշկումէր[31] :
42 Շատ մարդկանցից էլ դուրս էին գալիս դևեր , և աղաղակում՝ թէ Դու ես Աստուծոյ Որդին[32] . և նա սաստումէր նորանց՝ և թոյլ չէր տալիս՝ որ խօսին . ինչուո՞ր՝ գիտումին թէ նա Քրիստոսն է[33] :
43 Եւ երբոր ցերեկ էլաւ՝ դուրս եկաւ գնաց անապատ (չօլ) տեղ . և ժողովուրդներն ման էին գալիս նորան՝ և եկին մինչև նորա մօտն . և արգելումէին նորան՝ որ չը՛գնայ իրանցից[34] :
44 Եւ նա ասաց նորանց . Պէտք է՛ որ ես ուրիշ քաղաքներին էլ Աստուծոյ արքայութիւնըն աւետարանեմ . ինչուո՞ր՝ հենց սրա՛համար ուղարկվեցայ :
45 Եւ Գալիլեացոց ժողովարանների մէջն քարոզումէր[35] :

ԳԼ · Ե

1 Քրիստոս Պետրոսի նաւերի մէջից ժողովուրդն կըսովորցնէ . 4 Հրաշքով ձկներ բռնել կըտայ և Պետրոսին կհմայնէ թէ նա իրան ընկերներովն մարդկանց հոգսորդներ պիտի անէ . 12 Բորոտի սրբվիլն . 16 Քրիստոսի անապատ տեղերանքի աղաչ աղօթքն . 18 Մին անդամալոյծ կըբժկէ . 27 Մատթէոս մաքսաւորն կըկանչէ . 29 Հոգոց բժիշկ լինելոյ համար մեղաւորներին հետ ուտելն . 34 Իրան համբառնալուցն ետև առաքելոց պաս պահելն և նորանց քաշելոյ հարցաբանքներն առաջուց կըպատմէ . 36 Նոր շորից հին հագուստի վրայ չի՛ քցվելոյ և նոր գինին հին տոպրների մէջ չի՛ ածվելոյ առակներն ասումէ :

1 Եւ էլաւ որ ժողովուրդն նորա վերայ կիտվումէր , և Աստուծոյ բանըն լսումէր , և ինքն Գենեսարեթի ծովակին մօտ կանգնած էր[1] :
2 Եւ երկու նաւ տեսաւ՝ որ ծո-

(26) Մարկ · գ · 28 , 29 : Տէաթ · բ · 15 : (27) Մարկ · ա · 23 : (28) Վարք · 42 : (29) Սաղմ · ժգ · 10 : Դան · թ · 24 : Ղուկ · ա · 35 : (30) Մարկ · բ · 14 : Մարկ · ա · 29 : (31) Մարկ · բ · 16 : Մարկ · ա · 32 : (32) Մարկ · ա · 34 : գ · 11 : (33) Մարկ · ա · 25 · 34 : Վէր · 34 , 35 : (34) Մարկ · ա · 35 : (35) Մարկ , ա · 39 : (1) Մարկ · դ · 18 : Մարկ · ա · 16 :

վակին մօտ կանգնած էին , և ձուկ Հորսօղներն նորանցից դուրս էին եկած և գործիքներըն լուանում էին :

3 Նա էն նաւերից մէնի մէջն մտաւ՝ որ Սիմոնին էր , և նորան աղաչեց՝ որ նաւըն մին քիչ ցամաքից ներս տանի . նստից՝ և նաւից սովորնումէր ժողովուրդներին :

4 Եւ երբոր խօսքըն վերջացրուց , Սիմոնին ասաց . Նաւըն դէպի խորն տար , և ձեր գործիքներըդ քցեցէք Հորսալոյ համար[2] :

5 Սիմոն պատասխան տուաւ՝ և նորան ասաց . Ո՛վ վարդապետ՝ էս բոլոր գիշերս աշխատեցինք՝ և իսկի մին բան չը բռնեցինք , միայն թէ քո խօսքիդ համար գործիքներս կը քցենք :

6 Երբոր էս արին՝ ձկներէն մեծ բազմութիւն ներս փակեցին , մինչև որ նորանց ուռկաններն (Լուսէն) պատռվում էին :

7 Եւ աչքով էին անում մէկէլ նաւի մէջ լինող Հորսընկերներին՝ որ գան իրանց օգնեն . և եկին՝ և երկու նաւն էլ լցան , մինչև որ թաղ վելոյ մօտ էին :

8 Երբոր Սիմոն Պետրոսն տեսաւ՝ ընկաւ Յիսուսի ծունկերըն և ասաց . Տէր իմ՝ ինձանից հեռու գնա[3] , ինչուր՝ ես մեղաւոր մարդ եմ :

9 Պատճառնոր՝ ահ պատեց նորան և ամէնին էլ՝ որ նորա հետ էին՝ էն ձկներուն Հորսին համար , որ բռնեցին .

10 Ինպէս էլ Զեբեդէոսի որդիքներին՝ Յակոբին և Յոհաննէսին , որ Սիմոնի Հորսընկերներըն էին . և Յիսուս Սիմոնին ասաց . Մի վախենար՝ սրանից ետև մարդկանց կը Հորսաս դէպի կեանքն[4] :

11 Եւ նաւըն հանեցին ցամաքն , ամէն բաներըն թողին[5] , և նորա ետևէն գնացին :

12 Եւ էլաւ՝ երբոր նա քաղաքներիցն մէնի մէջ էր , ահա մին մարդ՝ որ բորոտութենով լիքն էր , երբոր Յիսուսին տեսաւ՝ երեսին վրայ ընկաւ , նորան աղաչեց՝ և ասաց . Տէր՝ թէ որ կամենաս , կարող ես ինձ սրբել[6] :

13 Իրան ձեռըն մեկնեց՝ հասցրուց նորան՝ և ասաց . Կամենում՝ սրբվիր . և շուտով բորոտութիւնն գնաց նորանից :

14 Եւ նա պատուիրեց նորան՝ որ իսկի մրնին չասէ[7] , բայց թէ՝ գնա , քո անձըդ ցոյց տուր քահանային , և քո սրբութեան համար պատարագ բեր՝ ինչպես որ Մովսէսն էլ հրամայից , որ նորանց վկայութիւն լինի[8] :

15 Եւ նորա համբաւն էլ աւելի շատանում էր . և շատ ժողովուրդներ ժողովվում էին՝ որ լսեն և իրանց հիւանդութիւններից բժշկվին[9] :

16 Եւ նա քաշվում էր անապատ (Հեօ) տեղերանք , և աղօթք էր անում[10] :

17 Եւ մին օր էլաւ՝ որ ինքն սովորցնում էր՝ և փարիսեցիներն և օրինաց վարդապետներն նստած էին , որ Գալիլեացոց և Հրէաստանի ամէն քաղաքներից և Երուսաղէմից հաւաքված էին . և Տէրի զօրութիւնն կար նորանց բժշկելոյ համար :

18 Եւ ահա մարդիք մին մարդ էին բերում մահճով (Քեօշէվով)՝ որ

(2) Յովհ • իա • 6 : (3) Բ Թագ • գ • 9 : գ Թագ • ժէ • 18 : (4) Մատթ • դ • 19 : Մարկ • ա • 17 : (5) Մատթ • դ • 20 : ժԹ • 27 : Մարկ • ա • 18 : Ղուկ • ժը • 28 , (6) Մատթ • ը • 2 : Մարկ • ա • 40 : (7) Մատթ • ը • 4 : (8) Ղեւ • ժգ • 4 • 10 • 21 , 22 : (9) Մատթ • դ • 25 : Մարկ • գ • 7 : Յովհ • գ • 2 : (10) Մատթ • ժդ • 23 : Մարկ • զ • 46 :

անդամալուծ էր , և ուզումէին՝ որ Նորան ներս տանեն , և Նորա առաջին դնեն[11] :

19 Եւ երբոր տեղ չէին գտնում՝ որ Նորան ներս տանեն՝ էն ամբոխի (խալխ) պատճառովին , վեր էլան կըտուրը , և օճռուբիցն կախեցին Նորան , և մահիճովին (ֆէօշէխէ) վեր բերին մէջ տեղն Յիսուսի առաջին :

20 Եւ Նորանց հաւատքըն որ տեսաւ՝ Նորան ասաց • Ա՛վ մարդ՝ թող քո մեղքերդ թողված լինին քեզ :

21 Կարդացօղներն և փարիսեցիներն սկսեցին միտք անել , և ասացին[12] • Այ ո՞վ է՝ որ հայհոյանք է խօսում • ո՛վ կարօղ է մեղքըն թողնել բայց միայն Աստուած[13] :

22 Յիսուս երբոր Նորանց մտածմունքներըն իմացաւ , պատասխան տուաւ և Նորանց ասաց • Ի՞նչ էք միտք անում ձեր սրտերումն :

23 Որն է աւելի հեշտ • ասել՝ թէ Քո մեղքերդ թողված լինին քեզ , թէ ասել՝ Ա՛ռ ելի կաց և գնա՛ :

24 Նայց որ իմանաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի՝ երկրիս վերայ մեղքերըն թողնելոյ • անդամալուծին ասաց , Ա՛ռել եմ ասում՝ վեր կաց քո մահիճդ (ֆէօշէխէդ) ա՛ռ՝ և գնա՛ քո տունդ :

25 Եւ հենց էն ժամումն (սահաթ) ամէնի առաջին վերկացաւ , իրան վերայ առաւ էն՝ որ Նորա վերայ ընկած դրբած էր , գնաց իրան տունն , և փառք էր տալիս Աստուծոյն :

26 Օարմանք բռնեց ամէնին , և փառք էին տալիս Աստուծոյն • ահով լցվան , և ասումէին՝ թէ Նայօր նոր նշան տեսինք :

27 Եւ Նրանից հետև Յիսուս էն տեղից գնաց՝ և մին մաքսաւոր (կիւմրուկչի) տեսաւ՝ որ նորա անունն Ղևի էր , և նստած մաքսաւորութիւն էր անում • և Նորան ասաց , Իմ հետևէս եկ[14] :

28 Եւ նա ամէն բան թողեց , վերկացաւ գնաց Նորա հետևէն :

29 Եւ Ղևի Նորան մեծ հացկերութիւն արաւ իրան տան մէջն[15] • և շատ ժողովուրդ կար մաքսաւորների (կիւմրուկչիներ) և ուրիշների՝ որ Նորանց հետ սեղան էին նստել[16] :

30 Եւ փարիսեցիներն և Նորանց կարգացօղներն Նորանից տրանջում էին Նորա աշակերտների առաջին՝ և ասում • Ինչո՞ւ էք մաքսաւորների և մեղաւորների հետ ուտում և խըմում :

31 Յիսուս պատասխան տուաւ և Նորանց ասաց • Առողջներին բժիշկ պէտք չէ , այլ հիւանդներին :

32 Ոչ եմ եկել՝ որ արդարներըն կանչեմ , այլ մեղաւորներըն՝ որ ապաշխարեն[17] :

33 Եւ Նորանք ասացին Նորան • Ինչո՞ւ Յօհաննէսի աշակերտներն շատ ժամանակ պաս են պահում՝ և աղօթք են անում , Էնպէս էլ փարիսեցիներինն • և քո (աշակերտներըդ) ուտումեն և խմում[18] :

34 Եւ նա Նորանց ասաց • Ա՞րեթէ կարօղ էք հարսանիքի տղաներին , դեռքանի որ փեսան Նորանց հետ է , հրաման տալ որ պաս պահեն :

35 Օրեր կըգան՝ երբոր փեսան վերկառնվի Նորանցից • ապա էն օրերումն կըպահեն :

36 Ա՛յն առակ էլ ասաց Նորանց , թէ Ո՛չ ով մին նոր շորից հին հագուստի վերայ (կարկատան) չի քըցիլ • ապա թէ չէ՝ էն նորըն էլ

(11) Մարկ • թ • 2 : Մատ • բ • 3 : (12) Մարկ • թ • 3 : Մատ • բ • 6 , 7 : (13) Սաղմ • լբ • 5 : Եսայ • խգ • 25 : (14) Մարկ • թ • 9 Մատ • բ • 13 , 14 : (15) Մարկ • թ • 10 : Մատ • բ • 15 : (16) Ղուկ • ժե • 1 : (17) Մարկ • թ • 13 : ա Տիմ • ա • 15 : (18) Մարկ • թ • 14 : Մատ • բ • 18 :

կըպատառէ , և կտորն՝ որ Նորից
է , կընին հետ չի միաբանիլ[19] :
37 Եւ ո՛չ ոք նոր գինին հին տո-
կերի մէջ չի ածիլ . ապա թէ չէ՝
նոր գինին հին տոկերը կըպատա-
ռէ . ինքն կըթափվի , և տոկերըն
կըկորչին :
38 Այլ նոր գինին նոր տոկերի
մէջ պէտք է ածվի , և երկուքն էլ
կըպահվին :
39 Եւ ո՛չ ոք չը՛կայ՝ որ հինըն
խմէ և նորըն կամենայ . ինչուռը՝
ասում՝ թէ Հինն աւելի քաղցր
է :

ԳԼ · Զ

1 Ջրհատաց շաբաթն պահելոյ համար փարիսեցոց ունեցած կուրութիւնն Յուրը Ժրքերի վրայութիւնով իրաւունքով և հրաշքով իրանց երեսին կըթակէ : 13 Տասներկու առաքեալներին կընտրէ : 17 Հիւանդներն և պիղծ դևերից չարչարվածներն կըժշկէ : 20 Յոզովուրդի առաջին աշակերտներին երանութիւն և ուրիշներին վայ կըտայ : 27 Նէ ցոյց կըտայ թէ ինչպես պէտք է որ մեր թշնամիներն սիրենք . 46 Նէ իրան խօսքերն լսելով նոքանց անենք , որ չը՛լինի թէ փորձութեան ժամանակումն հողի վերայ շինած հիմն չունեցող տան պէս կործանվինք :

1 Եւ եղաւ՝ որ նա երկրորդի ա-
ռաջին շաբաթի օրումն արտերովն
անց էր կենում , և նորա աշա-
կերտներին հասկ էին պոկում՝ ա-
պի մէջն փրշրումին , և ուտում[1] :
2 Եւ փարիսեցիներից մին քա-
նիսն ասացին նորանց . Ընդ ինչու
էք անում՝ որ շաբաթի օրումն օ-
րէնք չէ[2] :
3 Յիսուս նորանց պատասխան
տուաւ և ասաց . Ո՞չ էք կար-
դացել էն՝ որ Դաւիթն արաւ ,
երբոր սովից ինքն և նորանք՝ որ
նորա հետն էին[3] :
4 (Մէկ) ինչպես նա Աստուծոյ
տունն մտաւ , և առաջաւորութեան
(Պաոնէ֊ծոյ սեղանի վերայ դրած)
հացըն կերաւ , և նորանց էլ տը-
ւաւ՝ որ նորա հետ էին . որ օ-
րէնք չէր ուտել , բայց միայն քա-
հանայապետներին[4] :
5 Եւ նորանց ասաց . Որդին մար-
դոյ շաբաթի էլ տէրն է :
6 Եւ եղաւ՝ որ նա մէկել շա-
բաթի օրումն ժողովարանի մէջ մը-
տաւ՝ և սովորցնումէր . և էնտեղ
մին մարդ կար՝ և նորա աջ ձեռն
չորացել էր[5] :
7 Եւ կարդացողներն և փարի-
սեցիներն սպասումէին նորան՝ եթէ
շաբաթի օրումն բժշկէ , որ նորա-
նից չարախօսելոյ պատճառ գտնեն :
8 Եւ նա գիտումէր նորանց մը-
տածմունքներըն , և էն մարդոյն՝ որ
նորա ձեռն չորացել էր՝ ասաց .
Ա՛ եր կաց ե՛կ մէջ տեղն . և նա
վերկացաւ կանգնեց :
9 Յիսուս նորանց ասաց . Ա՛ին
բան Հարցնում ձեզանից . Ի՞նչ ար-
ժան է շաբաթի օրումն , բարի՞ բան
անել՝ թէ չար գործել , մին հոգի
ապրեցնի՞՝ թէ կորցնել :
10 Եւ շատ բարկացած չորս կող-
մով ամէնին վերայ նայեց՝ և նո-
րան ասաց . Ձգո ձեռդ մեկներ .
և նա մեկնեց , և նորա ձեռն մէ-
կելին պէս հաստատվեցաւ :
11 Նորանք յիմարութեամբ լըց-
ան , և իրար հետ խօսումէին՝
թէ ի՞նչ անեն Յիսուսին :

(19) Մարկ · թ · 16 , 17 : Մատ · բ · 21 , 22 : (1) Մարկ · ժբ · 1 : Մատ · բ · 23 ,
(2) Լեւ · ի · 10 : (3) ա Թագ · իա · 6 : (4) Ղեւ · իգ · 9 : (5) Մարկ · ժբ · 9 :
Մատ · գ · 1 : Ղեւ · ժգ · 14 · ժդ · 3 : Յովհ · թ · 16 :

12 Եւ էլաւ էն օրերումն՝ որ վեր-
էլաւ սարն՝ աղօթք անել , գիշե-
րըն լուսացրուց աղօթք անելով
դէպի Ա֊ստուած[6] :

13 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ իրան
աշակերտներըն կանչեց , և նորան-
ցից տասներկուսին ընտրեց՝ որ էլ
առաքեալ անուանեց նորանց[7] :

14 Սիմոնին՝ որ էլ Պետրոս ա-
նուանեց նորան[8] , և նորա Ա֊նդրէ-
աս եղբօրըն , և Յակոբին և Յո-
հաննէսին , և Փիլիպպոսին և Բար-
թողիմէոսին ,

15 Եւ Մ֊աթէոսին և Թովմա-
սին և Յակոբոս Ա֊լփեանին , և Սի-
մէոնին՝ նախանձայոյզ կոչվածին :

16 Եւ Յակոբայ Յուդային[9] , և
Յուդա Իսկարիօտացին՝ որ էլ մատնիչ էլաւ :

17 Եւ վէր եկաւ նորանց հետ
մին տափակ տեղ • և հետեղ էր
նորա աշակերտների ժողովն և ժո-
ղովրդի մեծ բազմութիւն , ամէն
Ա֊րեաստանից և Երուսաղէմից և
ծկկէ կողմերից և Տիւրոսի և Սի-
դոնի ծովի եզերքն (ղողշէ)[10] •

18 Որ եկին նորանից լսել և ի-
րանց հիւանդութիւններից բժըշ-
կիլ • և պիղծ դևերից չարչարված-
ներն բժշկուէին

19 Եւ ամէն ժողովուրդն խընդ-
րուէր՝ որ մօտենայ նորան[11] , ին-
չուոր՝ նորանից շատ զօրութիւն էր
դուրս գալիս և ամէնին բժշկուէր[12] :

20 Եւ նա իրան աչքերըն դէպի
իրան աշակերտներին բարձրացրուց՝
և ասաց • Երանի՛ ձեզ՝ հոգով
աղքատներիդ , որ ձերն է Ա֊ստու-
ծոյ արքայութիւնն[13] :

21 Երանի՛ նորանց՝ որ հիմիկ սո-
ված են[14] , որ պիտի կըշտանան • և-
րանի՛ նորանց՝ որ հիմիկ լաց են լի-
նում , որ պիտի ծիծաղեն[15] :

22 Երանի՛ է ձեզ , երբոր մար-
դիք նախատինք կըտան ձեզ[16] , և
երբոր ձեզ կըջոկեն և կատեն , և
ձեզ վերայ չար անուն կըհանեն՝
Որդոյ մարդոյ պատճառովն[17] :

23 Ուրախ էլէք էն օրումն և ցըն-
ծացէք , ինչուոր՝ ահա ձեր վարձքն
շատ է երկինքումն[18] • Հենց էդ կեր-
պով մարգարէներին էին անում նո-
րանց հարքն[19] :

24 Վայ ձեզ[20] հարուստներ-
դիդ[21] , ինչուոր՝ ձեր մխիթարու-
թիւնըդ ընդունեցիք[22] :

25 Վա՛յ ձեզ՝ որ հիմիկ կըշտացել
էք[23] , ինչուոր՝ պիտի սովիք • վա՛յ
ձեզ՝ որ հիմիկ ծիծաղում էք , ին-
չուոր՝ սուգ պիտի անէք , և լաց
պիտի լինիք[24] :

26 Վա՛յ ձեզ՝ երբոր ամէն մարդիք
ձեղանից բարի ասեն , ինչուոր՝ էդ-
պէս էլ սուտ մարգարէներին էին
անում նորանց հարքն[25] :

27 Բայց ձեզ՝ որ լսում էք , ասում
եմ[26] • Սիրեցէք ձեր թշնամիներըն ,
բարի արէք ձեզ ատողներին :

28 Օրհնեցէք ձեզ անիծողներին ,
աղօթք արէք ձեզ նեղացնողներին
վերայ[27] :

29 Ա֊յս որ քո մին երեսիդ զար-

(6) Մատթ · ժգ · 23 : (7) Մատթ · ժ · 1 : (8) Յովհ · ա · 42 : (9) Յակոբ · 1 : (10) Մատթ · գ · 25 : Մարկ · գ · 7 : (11) Մատթ · ժգ · 36 : (12) Մարկ · ե · 30 : Ղուկ · ը · 46 : (13) Մատթ · ե · 3 : ժա · 5 : Յայտ · բ · 5 : (14) Նռոյ · ծե · 1 : կե · 13, Մատթ · ե · 6 : (15) Նռոյ · կա · 3 : Մատթ · ե · 4 · (16) Մատթ · ե · 11 : ա Պետր · բ · 19 : գ · 14 : դ · 14 : (17) Յովհ · ժգ · 2 : (18) Մատթ · ե · 12 : Գործ · ե , 41 : Կող · ա · 24 : Յայտ · ա · 2 : (19) Գործ · է · 51 : (20) Ըմուս · գ · 1 : Յայտ · ե · 1 : (21) Ղուկ · ժբ · 21 : (22) Մատթ · զ · 2 · 5 · 16 : Ղուկ · ժգ · 25 : (23) Նռոյ · կե · 13 : (24) Ըուկ · ժգ · 13 : (25) Յովհ · ժե · 19 : ա Յովհ · գ · 5 : (26) Նէ՛ · իդ · ե : Ըուկ · ըե · 21 : Մատթ · ե · ՀՀ : վերջ · 35 : Հռովմ · ժբ · 20 : (27) Ղուկ · իդ · ՅՀ : Գործ · է · 60 :

կումՔ՝ մէկէլըն էլ դէմ արա նո-
րան[28] · և նա որ քո կապան քեզա-
նից հանումՔ՝ չապիկըդ էլ մի՛ ար-
գելեր նորանից[29] :

30 Ումէնին՝ որքան ուզումՔ քեզա-
զանից՝ տուր , և ինչ որ միևն քե-
զանից հանումՔ՝ յետ մի՛ ուզեր[30] :

31 Եւ ինչպէս որ կամենումՔ՝ թէ
մարդիքն ձեզ անեն , էնպէս էլ դուք
արէք նորանց[31] :

32 Եւ թէ որ դուք ձեզ սիրօղնե-
րին սիրէք՝ ի՞նչ շնորհք է ձեզ , ին-
չուոր՝ մեղաւորներն էլ իրանց սի-
րօղներին սիրումեն[32] :

33 Եւ թէ որ ձեր բարերարներին
բարի անէք՝ ի՞նչ շնորհք է ձեզ , ին-
չուոր՝ մեղաւորներն էլ հենց էնպէս
են անում :

34 Եւ եթէ փոխ տաք նորանց՝ որ
նորանցից յետ առնելոց յոյս ունիք՝
ի՞նչ շնորհք է ձեզ[33] · ինչուոր՝ մե-
ղաւորներն էլ մեղաւորներին փոխ
են տալիս , որ հաւասար չափըն յետ
առնեն :

35 Ինայց սիրեցէք ձեր թշնամինե-
րըն[34] , և բարի արէք ձեզ ատօղնե-
րին · և փոխ տուէք նորանց՝ որ յետ
առնելոց յոյս չունիք[35] · և ձեր
վարձքն շատ կլինի , և Ինարձե-
լոց որդիք կլինիք[36] · ինչուոր՝ նա
քաղցր է չարերի և երախտամոռների
վերայ :

36 Ուրեմն ողորմած էլէք՝ ինչպէս
որ ձեր Հայրն էլ ողորմած է[37] :

27 Ու՛ր դատէք՝ և չէք դատվիլ[38] ·
մի՛ պատժէք՝ և չէք պատժվիլ · ար-
ձակեցէք՝ և կարձակվիք :

38 Տուէք՝ և կըտրվի ձեզ[39] · լաւ
թաւի տրվված շարժված առատ չափ
կըտան ձեր գոգն[40] · որ չափով որ
չափէք՝ նորանով կըչափվի ձեզ[41] :

39 Ու՛ն առակ էլ ասաց նորանց՝
թէ Ումէն կարօղ է կոյրն կուրին
առաջնորդել[42] , չէ՞ որ երկուքն էլ
փոսի մէջ կընկնին :

40 Ուշակըրտն իրան վարդապետիցն
լաւ չէ[43] · ամէն կատարեալն իրան
վարդապետին պէս կըլինի :

41 Ինչո՞ւ քո եղբօր աչքին մէջի
ծեղըն տեսնումես , և քո աչքիդ մի-
ջի գերանըն չես տեսնում[44] :

42 Կամ ի՞նչպէս կարօղ ես քո
եղբօրդ ասել · Եղբայր՝ թող քո աչ-
քիդ ծեղըն հանեմ , և քո աչքիդ
միջի գերանըն չես տեսնում · կեղ-
ծաւոր՝ առաջ քո աչքիդ գերանըն
հանիր , և ապա մտիկ արա՝ որ քո
եղբօր աչքիցն ծեղն հանես[45] :

43 Ինչուոր՝ բարի ծառ չը՛կայ՝ որ
չար պտուղ բերէ , և էնպէս էլ չար
ծառ չը՛կայ՝ որ բարի պտուղ բե-
րէ[46] ·

44 Ինչուոր՝ ամէն մէկ ծառ իրան
պըտղիցն է ճանաչվում[47] · պատ-
ճառնոր՝ ո՛չ փըշերիցն թուզ են քա-
դում , և ո՛չ մօշիցն խաղող են կը-
քաղում :

45 Ինարի մարդն իրան սրտի բարի
գանձուցն (խազնայէնն) բարիք է
բղխում[48] , և չար մարդն չար (գան-
ձուցն) չարիք է բղխում · ինչուոր՝
սրտի աւելցածիցն է խօսում նորա
բերանն[49] :

46 Ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր կո-
չում , և էն որ ասումեմ , չէք ա-
նում[50] :

(28) Մատթ · ե · 39 : (29) ա Կորնթ · ը · 7 : (30) բ Օրին · ժե · 7 , 8 · 10 : Ղուկ · ե · 26 : Մատթ · ե · 42 : (31) Մատթ · է · 12 : (32) Մատթ · ե · 46 : (33) Մատթ · ե · 42 : (34) Վէր · 27 : (35) Ղուկ · ե · 26 · Վէր · 30 : (36) Մատթ · ե · 45 : (37) Մատթ · ե · 47 : (38) Մատթ · է · 1 : (39) Ղուկ · ժը · 17 : (40) Ղուկ · ղը · 12 : (41) Մատթ · է · 2 : Մարկ · գ · 24 : Ղուկ · բ · 13 : (42) Մատթ · ժե · 14 : (43) Մատթ · ժ · 24 : Ղուկ · ժգ · 16 · ժե · 20 : (44) Մատթ · է · 3 : (45) Ղուկ · ժը · 17 : (46) Մատթ · է · 16 , 17 : (47) Մատթ · ժը · 33 : (48) Մատթ · ժը · 35 : (49) Մատթ · ժը · 34 : (50) Մղ · ա · 6 : Մատթ · է · 21 , ին · 11 : Ղուկ · ժգ · 25 :

47 Ումե՛ն՝ ով որ ինձ մօտ է գալիս, և իմ խօսքերըս լսում՝ և նորանց անում, ցոյց տամ ձեզ՝ թէ ո՛ւմ նման է[51]։

48 Նման է էն մարդոյն որ տուն կը շինէ · որ փորեց և խորացրուց, և հիմըն քարի վերայ դրաւ · ջրի հեղեղներ որ վերկացան՝ գետն էն տանըն թակեց, և չը՛կարաց շարժել նորան, ինչուոր՝ նորա հիմըն քարի վերայ հաստատված էր։

49 Նայց նա՝ որ իմ խօսքերըս լսում՝ և չի անում, նման է էն մարդոյն՝ որ տունըն հողի վերայ կը շինէ առանց հիմունքի · գետն նորան թակեց, և շուտով վէր ընկաւ · և էն տան կործանվիլն սաստիկ էլաւ։

ԳԼ · Ե

1 Երբոր տեղեաց հարիւրապետի մէջ Հրէաներից շատ աւելի մեծ հաւատք է գտում, 10 Հռոմ տեղից նորա ծառան կըբժշկէ · 11 Նայլոց քաղաքի որբևէրի կնոջ մեռեալ որդին կը յարուցանէ · 19 Յովհաննէսի ուղարկած մարդկանց՝ հրաշքներով պատասխան կը տայ · 24 Յողովուրդի առաջն կըվկայէ թէ նա Յովհաննէսի համար ինչ կարծիք ունի · 30 Հրէաներն սաստումէ որ ո՛չ Յովհաննէսի և ո՛չ էլ իրան բռնած ճամբուն կը յորդորվին · 36 Նւ Սարիամ Մագդաղինացիի պատճառով ցոյց կըտայ թէ նա մեղաւորաց բարեկամն է, չէ՛ թէ նորանք մեղքի մէջ մնալոյ համար նորանց բարեկամ կըլինի, հապա որ նորանք հաւատան իրան և ղղջալով՝ իրանց մեղքերըն թողութիւն առնեն նորանից։

1 Նւ երբոր իրան ամէն խօսքերըն կատարեց ժողովրդի ականջները տումն, մտաւ Կափառնայում[1]։

2 Սի՛ն հարիւրապետի ծառայ խիստ հիւանդացած՝ մեռնելոյ մօտ էր, որ պատուական էր նորան։

3 Երբոր Յիսուսի համար լսեց, Հրէաների (ըլհո-պռնէրի) ծերերըն ուղարկեց՝ որ աղաչեն նորան՝ որ գայ իրան ծառային ապրեցնէ։

4 Եւ նորանք Յիսուսի մօտ եկին՝ նորան խիստ աղաչումէին՝ և ասում, թէ Ար՛ժանի է նա՝ որ էս շնորհըս անես նորան։

5 Պատճառնոր՝ մեր ազգին սիրումէ, և ժողովարանըն նա շինեց մեզ համար։

6 Եւ Յիսուս նորանց հետ գընաց · երբոր տանից շատ հեռու չէր, հարիւրապետն բարեկամներ ուղարկեց նորա մօտ, և նորան ասաց · Տէր՝ աշխատանք մի՛ քաշեր, ինչու որ՝ արժանի չեմ՝ որ իմ (տան) ծածքի տակն մտնես։

7 Նւրա համար էլ ես իմ անձըս արժանաւոր չը՛համարեցի՝ որ քեզ մօտ գամ · բայց խօսքով ասա՛ և իմ տղաս կըբժշկվի։

8 Ինչուոր՝ ես էլ մի իշխանութեան տակ լինող մարդ եմ · իմ ձեռիս տակն զինուորներ ունիմ, և մըրնին ասումեմ՝ թէ Կնա՛, և նա գնում · և մեկելին՝ թէ Եկ՛, և գալիս է · և իմ ծառային՝ թէ Էս բանըս արա՛, և անում։

9 Եւ երբոր Յիսուս էս լսեց՝ զարմացաւ, դարձաւ դէպի ժողովուրդն՝ որ նորա ետևէն գնումէին՝ և ասաց · Ա՛մարիտն ասումեմ ձեզ՝ թէ Իսրայէլի մէջն էլ էսքան հաւատք չը՛գտի։

10 Եւ էն ուղարկված մարդիքն յետ դարձան տուն, և հիւանդ ծառային բժշկված գտին։

11 Եւ յետևի օրումն էլաւ՝ որ մին քաղաք էր գնում, որ նորա

(51) Մաթ · է · 24։ (1) Մաթ · ը · 5։

անունն Ղային էր · Նորա աշակերտներն էլ Նորա հետ գնումէին և շատ ժողովուրդ էլ :

12 Երբոր մօտեցաւ քաղաքի դրանն, ահա մին մեռեալ էին դուրս բերում՝ որ իրան մօր միածնուհի որդի էր, և նա որբևէրի էր · և քաղաքից շատ ժողովուրդ կար Նորա հետ :

13 Երբոր Տէրն Նորան տեսաւ՝ խղճաց Նորա վերայ և ասաց · Լաց մի՛ լինիր :

14 Եւ մօտ եկաւ նաժին մօտեցաւ · և Նորանք՝ որ վեր առած տարնումէին, կանգնեցին · և ասաց, Ա՛վ երիտասարդ՝ քեզ եմ ասում՝ վեր կաց[2] :

15 Ա՛ռեռաւն վերկացաւ, նստեց և սկսեց խօսել · և Նորան տուաւ իրան մօրն :

16 Եւ ահ բռնեց ամէնին[3], և Աստուծոյն փառք էին տալիս՝ և ասում՝ թէ Ա՛յն մեծ մարգարէ[4] առաջ է եկել մեր միջումն, և թէ Աստուած իրան ժողովրդին աւսուլթիւն եկաւ յարուցանելով[5] :

17 Եւ էս ձայնս Նորա համար գնաց բոլոր Հրէաստանն՝ և էն աշխարհքի ամէն կողմերն :

18 Եւ Յօհաննէսին պատմեցին իրան աշակերտներն էս ամէն բանը րիս համար[6] :

19 Եւ Յօհաննէս իրան աշակերտներից երկու հոգի կանչեց իրան մօտ, ուղարկեց Տէրին մօտ և ասաց · Դո՛ւ ես էն՝ որ պէտք է գաս, թէ ուրիշի սպասենք :

20 Եւ էն մարդիքն Նորա մօտ եկին և ասացին · Յօհաննէս Մկրտիչն մեզ ուղարկեց քեզ մօտ՝ և ասում է, Դո՛ւ ես էն՝ որ պէտք է գաս, թէ ուրիշի սպասենք :

21 Եւ (Յիսուս) հենց էն ժամուն (սահմռուն) շատ մարդկանց բժշկեց հիւանդութիւններից և չարչարանքից և չար դևերից, և շատ կուրերին տեսնել շնորհեց :

22 Պատասխան տուաւ Նորանց և ասաց · Գնացէք Յօհաննէսին պատմեցէք՝ ինչ որ տեսիք և լսեցիք · թէ կուրերն տեսնումեն, կաղերն գնումեն, բորոտներն սրբվումեն, խուլերն (ականջն) լսումեն, մեռելներն յարութիւն են առնում[8], աղքատներին աւետարան է քարոզվում[9] :

23 Եւ երանի է Նորան՝ որ ինձ վերայ չի դայթակղվի :

24 Եւ երբոր Յօհաննէսի ուղարկված մարդիքն գնացին, սկսեց ժողովուրդներին հետ Յօհաննէսի համար խօսել[10] · (Դուք) ի՞նչ տեսնելու դուրս գնացիք անապատն, մին եղէգ (ղամիշ)՝ որ քամուցն շարժվումէ :

25 Ա՛պա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մին մարդ փափուկ շորերով զարդարված · ահա նորանք՝ որ փառաւոր շորերումն և փափկութիւնումն են՝ թագաւորների պալատներումն են :

26 Ա՛պա ի՞նչ տեսնելու դուրս գնացիք, մին մարգարէ · իրաւի ասումեմ ձեզ՝ որ մարգարէից էլ աւելի է :

27 Ինչուոր՝ սա էն է՝ որ Նորա համար գրված է, թէ Ա՛հա իմ հրեշտակըս ուղարկումեմ քո առաջից՝ որ քո առաջից քո ճանապարհդ պատրաստէ[11] :

28 Ա՛շմարիտն ասումեմ ձեզ՝ որ Կանանց ծնվածների միջումն ոչ ոք աւելի մեծ մարգարէ չի՛կայ՝ քան Յօհաննէսն · բայց Աստուծոյ ար-

(2) Ղուկ · ը · 54 : Յովհ · ժա · 43 : Գործ · թ · 40 : Հռոմ · դ · 17 : (3) Ղուկ · ա · 65 : (4) Ղուկ · իդ · 19 : Յովհ · գ · 19 : ը · 14 : թ · 17 : (5) Ղուկ · ա · 68 : (6) Մատթ · ժա · 2 : (7) Մատթ · ժա · 5 : (8) Եսայ · լե · 5 : (9) Ղուկ · դ · 18 : (10) Մատթ · ժա · 7 : (11) Մաղ · դ · 1 :

քայութեան միջև փոքրն Նորանից մեծ է :

29 Եւ ամէն ժողովուրդն երբոր էս լսեցին՝ և մաքսաւորներն (Աստուածային արդարացրին · ինչուր՝ Յովհաննէսի մկրտութեամբն մկրտվեցան[12] :

30 Իսայ փարիսեցիներն և օրէնք գիտօղներն Աստուծոյ խորհուրդն անարգեցին իրանց անձներումն[13] · ինչուր՝ չ՚մկրտվեցան Նորանից :

31 Ասա ո՞մ նմանեցնեմ էս ազգիս մարդիքըն · և ո՞մ նման են[14] :

32 Են տղայոց նման են որ փողոցներումն նստին, իրար կանչեն և և ասեն · Փող փչեցինք ձեզ համար՝ և պար չեկիք, սուգ արինք՝ և լաց չեկաք :

33 Յովհաննէս մկրտիչն եկաւ՝ ոչ ուտումար և ոչ խմումբ, և ասում էիք՝ Դև կայ Նորանում[15] :

34 Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ և խմումէ, և ասումէք · Ո՛չա ուտօղ և խմօղ մարդ՝ մաքսաւորների (Աստուածային արդարացրեք) և մեղաւորների բարեկամ :

35 Եւ իմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներիցն[16] :

36 Փարիսեցիներից մին աղաչումէր Նորան՝ որ Հաց ուտէ իրան հետ[17] · և մտաւ փարիսեցոյ տունն՝ և սեղան Նստեց :

37 Եւ էն քաղաքումն մին մեղաւոր կին կար · երբոր իմացաւ, թէ փարիսեցոյ տանըն սեղան է նըստած, մին շիշ (շուշայ) պատուական իւղ բերաւ ·

38 Դնաց եւ ևկեցին Նորա ոտաց մօտ կանգնած էր, և լայ էր լինում · և արտասուքովն Նորա ոտներըն սկսեց Թրջել, և իրան գլխի մազերովն սրբումէր, և Նորա ոտներըն համբուրումէր, և իւղովն օծումէր :

39 Եւ (էն) փարիսեցին՝ որ Նորան կանչեց, երբոր տեսաւ՝ իրան մտքումն ասումէր · Սա թէ որ մին մարգարէ էր, ապա կըգիտէր՝ թէ ո՞վ կամ ի՞նչպէսի կին է նա՝ որ իրան մօտենումէ, ինչուր մեղաւոր է[18] :

40 Յիսուս պատասխան տուաւ և Նորան ասաց · Սիմօն մին բան ունիմ ասել քեզ · և Նա ասաց · Ասա ո՛ վարդապետ · և ասաց ·

41 Երկու մարդ պարտական էին մին փոխ տուօղի · մինն հինգ հարիւր դահեկան պարտական էր, և մէկէն յիսուն :

42 Եւ երբոր Նորանք բան չունէին՝ որ վճարեն, երկուսին էլ բաշխեց · հիմիկ ասա՝ Նորանցից ո՞վ աւելի կըսիրէ Նորան :

43 Սիմօն ասաց · Ինձ էսպէս է երևումէ, թէ Նա՝ որ Նորան շատ բաշխեց · և Նա ասաց Նորան · Շիտակ դատեցիր :

44 Եւ դարձաւ դէպի կինն, և Սիմօնին ասաց · Տեսնումես էս կինըս, քո տունդ մտի՝ իմ ոտացս ջուր չըտուիր, բայց սա իրան արտասուքովն իմ ոտներըս թրջեց, և իրան մազերովն սրբեց :

45 Դու մին համբոյր չըտուիր ինձ · սա՝ ասկա քանի որ էստեղ եմ մըտնել՝ իմ ոտներըս համբուրելուցն չըդադարեց :

46 Դու իւղով չօծեցիր իմ գլուխըս[19] · սա՝ անուշ իւղով օծեց :

47 Դորահամար ասումէմ քեզ · Սրա շատ մեղքերն իրան թողված կըլինին, ինչուր շատ սիրեց[20] ·

(12) Մատ · գ · 5 : Դ–ղ · գ · 12 : (13) Կորդ · ի · 27 : (14) Մատ · ժա · 16 : (15) Մատ · գ · 4 : Մարկ · ա · 6 : Դ–ղ · ա · 15 : (16) Մատ · ժա · 19 : (17) Մատ · իգ · 6 : Մարկ · ժգ · 3 : Գործ · ժա · 3 : (18) Դ–ղ · ժե · 3 : (19) Մատ · իգ · 5 : (20) = Տիմ · ա · 15 :

պատճառնոր՝ որին որ շատ կը-
թողվի՝ նա շատ կըսիրէ , և որին
որ քիչ՝ նա քիչ :
48 Եւ նորան ասաց · Ներ-
քերդ թողված լինին քեզ[21] :
49 Եւ նորանք՝ որ նորա հետ սե-
ղան էին նստած , սկսեցին իրանց
մտքումն ասել · Ա՛ո՞վ է որ մեղք
է թողում[22] :
50 Եւ նա ասաց էն կնկանըն ·
Ո՛ր հաւատքդ ապրեցրուց քեզ՝ գը-
նա խաղաղութենով[23] :

ԳԼ · Ը

3 Աղիկներն իրանց ապրանքներից Յրիխտոսի ծառայութիւն էին անում : 4 Յրիխտոս խօ-
սան աշակերտներով քաղաքներն և գիւղերն քարոզելուցն ետև սերմ ցանողի , 16 նո-
ռա ճրագի առակն կասէ · 21 Հայց կըսայ թէ որո՞նք են իրան մայրն և եղբայրներն · 22 Ո՛ռա-
մոյն ասատեն : 26 Դևերի լեգէոնն մարդուցն հանելն և նորանց խոզերի երամակումն ու-
զարկելն · 37 Վերդեասցիքն նորան չեն ընդունում : 43 Արիւն տեսնող կինն կըբժշկէ ,
49 Եւ Յայրոսի մեռեալ աղջիկն կապրեցնէ :

1 Եւ նրանից ետև էլաւ՝ որ նա
ման էր գալիս քաղաքներն և գիւ-
ղերն , քարոզումէր և Աստուծոյ
արքայութիւնըն աւետարանումէր ·
և էն տասներկուքն էլ նորա հետ ,
2 Եւ քանի մի կանայք՝ որ չար
դևերից և հիւանդութիւններից բը-
ժշկված էին՝ Մարիամն՝ որ Մագ-
դաղենացի էր կոչվում , որ նորա-
նից եօթն դև էին դուրս եկել[2] ,
3 Եւ Յովաննան՝ Հերովդէսի
անտես Ո՛ուզայի կինն , և Շու-
շաննն , և շատ ուրիշներ , որ ի-
րանց ապրանքներիցն նորան ծառա-
յութիւն էին անում :
4 Եւ երբոր շատ ժողովուրդներ
հաւաքվեցան , և ամէն մէկ քա-
ղաքներից նորա մօտ եկին՝ առա-
կով ասաց[3] :
5 Մ՛ին սերմ ցանող մարդ դուրս
գնաց՝ որ իրան սերմանիքըն ցանէ ·
և իրան սերմելոյ ժամանակն՝ կար
որ ճանապարհի վերայ ընկաւ՝ և
կոխվեցաւ , և երկնքի թռչուննե-
րըն նորան կերին :
6 Եւ մէկէլըն քարքարուտ տեղ
ընկաւ · և բուսնելոյ ժամանակն՝
չորացաւ հողի պակասութեան պատ-
ճառովն :
7 Եւ մէկէլն փըշերի մէջն ըն-
կաւ , և փըշերն նորա հետ բուս-
ան՝ և խեղդեցին նորան :
8 Եւ մէկէլն բարի և պարարտ
երկրի վերայ ընկաւ · և բուսաւ՝
և հարիւրապատիկ պտուղ տուաւ ·
երբոր էս խօսեց , ասաց · Ով որ
լսելոյ ականջ ունի՝ թող լսէ :
9 Աշակերտներն նորան հարց-
նումէին՝ թէ ի՞նչ է էն առակն[4] :
10 Եւ նա ասաց · Ձեզ տըվված
է Աստուծոյ արքայութեան խոր-
հուրդներըն գիտել , բայց ուրիշ-
ներին առակներով · որ տեսնեն՝ և
չի տեսնեն , և լսեն՝ և չիմանան[5] ·
11 Մ՛իայն թէ առակն էս է ·
սերմն Աստուծոյ բանն է[6] :
12 Եւ որ ճանապարհի վերայ են ,
նորանք են՝ որ լսումեն · և ապա
Սատանան գալիս է՝ բանըն նորանց
սրտիցն հանումէ , որ չըհաւատան՝
և ապրին :
13 Եւ որ քարքարուտի վերայ են ,

(21) Մարկ · թ · 2 : Մրկ · բ · 5 : (22) Մարկ · թ · 3 : Մրկ · բ · 7 : (23) Մարկ ·
թ · 22 : Մրկ · ե · 34 : ժ · 52 : Ղուկ · ը · 48 : ժը · 42 : (1) Մարկ · իե · 55 ,
56 : (2) Մրկ · ժզ · 9 : (3) Մարկ · ժգ · 2 : Մրկ · գ · 1 : (4) Մարկ · ժգ · 10 :
Մրկ · դ · 10 : (5) Եսայ · զ · 9 : Մրկ · դ · 12 : (6) Մարկ · ժգ · 18 : Մրկ ·
դ · 14 :

Նորանք են որ երբոր լսեն՝ բանըն ուրախութեենով ընդունումեն , և արմատ (ﬠ) չունին • նորանք մին ժամանակ հաւատումեն , և փորձութեան ժամանակումն հետանումեն ։

14 Ասյց են՝ որ փշերի մէջն ընկաւ , նորանք են՝ որ երբոր բանըն լսումեն՝ հոգսերով և մեծութեենով և աշխարհքի ցանկութիւններով զըզուած՝ խեղդումեն , և պտուղ չեն տալիս ։

15 Ասյց են՝ որ պարարտ երկրին վերայ (ընկաւ) , նորանք են՝ որ բարի և յօժար սրտով բանըն լըսումեն՝ և ընդունումեն , և համբերութեենով պտուղ են տալիս ։

16 Ո՛չ ով ճրագ չի վառիլ և ամանի տակ թաքցնիլ կամ մահիճի (կաբաւէն) տակ դնիլ , բայց ճրագակալի վերայ կըդնէ , որ նորանք՝ որ ներս են մտնում , լոյս տեսնեն[8] ։

17 Ասկի ծածուկ բան չը'կայ՝ որ չը'յայտնըվի[8] • և ոչ թաքուն բան՝ որ չիմացվի , և գէպի լոյսն գայ ։

18 Ը'պա տեսէք՝ թէ դուք ինչպես էք լսում • ինչուր՝ ով որ ունի , նորան կըտըվի , և ով որ չունի՝ են էլ որ կարծումի՝ թէ ունի , նորանից վեր կառնըվի[9] ։

19 Ասյրա մայրն և նորա եղբարքըն նորա մօտ եկին[10] , և չէին կարում նորա մօտ հասնել (մարդկանց) բազմութեան պատճառովն ։

20 Ասյրան իմաց արին և ասացին • Ահա մայրդ և քո եղբարդք դուրսն կանգնած են՝ և ուզումեն քեզ տեսնել ։

21 Եւ նորանց ասաց • Իմ մայրըս և իմ եղբարքս սորանք են՝ որ Աստուծոյ խօսքըն լսումեն և անում ։

22 Եւ էլաւ օրերից մըննում՝ որ ինքն նաւ մտաւ , և նորա աշակերտներն էլ , և նորանց ասաց[11] • Եկէք անց կենանք ծովակի էն կողմըն • և գնացին ։

23 Եւ դեռ որ նաւով գնումէին՝ նա քուն մտաւ • և քամոյ մըրիկ ընկաւ էն ծովակի մէջ և (ծովն) բարձրանումէր , և նեղութեան մէջ էին ։

24 Ը'օտ եկին , նորան զարթնացըրին և ասացին • Վարդապետ վարդապետ՝ ահ կորչումենք • և նա վերկացաւ , և քամոյն և ջրի ալէկոծութեանն սաստեց և հանգարտեցին , և խաղաղութիւն էլաւ ։

25 Ասաց նորանց • Ը'ինչ տեղ է ձեր հաւատքն • և խիստ վախեցած զարմացան , և իրար ասումէին • Սա ո՞վ պիտի լինի՝ որ քամիներին և ջրերին հրաման է տալիս , և ընազանդվումեն սորան ։

26 Եւ նաւով գնացին , հասին Գերգեսացոց աշխարհքն[12] որ էն կողմն է Գալիլեայի դիմացն ։

27 Եւ երբոր նա դուրս էր գալիս ցամաքն , քաղաքից մին մարդ պատահեց նորան՝ որ նորանում դևեր կային • և շատ ժամանակ շոր չէր հագած և ոչ տան մէջ բնակված , այլ գերեզմաններումն ։

28 Եւ Յիսուսին որ տեսաւ , աղաղակեց և նորա առաջին ընկաւ , և բարձր ձայնով ասաց • Ասյ քո՞նչ բան կայ ինձ հետ՝ Յիսուս բարձրեալ Աստուծոյ Որդի • աղաչումեմ քեզ՝ մի տանջեր ինձ ։

29 Պատճառըն՝ նա պիտի դևին հրաման էր տալիս՝ որ էն մարդուցն դուրս գայ • ինչուր՝ շատ անգամ յափշտակել էր նորան , և շղթաներով (ընձեռնեռով) կապվումէր , և երկաթների մէջ պահվումէր , և

(7) Մատ • ե · 15 ։ Մարկ • դ · 21 ։ Ղուկ • ժա · 33 ։ (8) Մատ • ժ · 26 ։ Ղուկ • ժբ · 2 ։ (9) Մատ • ԻԳ · 12 ։ ԼԸ · 29 ։ Ղուկ • ԻԹ · 26 ։ (10) Մատ • ԻԲ · 46 ։ Մարկ • գ · 31 ։ (11) Մատ • Ը · 23 ։ Մարկ • դ · 35 ։ (12) Մատ • Ը · 28 ։ Մարկ • ե · 1 ։

Նա կապանքներըն կարուէր , և գե֊ ֆեն քաշվուէր անապատ տեղ :

30 Յիսուս Նորան հարցրուց՝ և ա֊ սաց • Վո՛ր անունդ ի՞նչ է • և Նա ասաց • Լեգէօն , ինչուո՛ր՝ շատ դե֊ եր էին մտած Նորա մէջ :

31 Եւ աղաչուէին Նորան՝ որ չը֊ հրամայէ Նորանց գնալ անդուն֊ դըն[13] :

32 Եւ հնտեղ շատ խոզերի մի֊ երամակ (անո֊ղո֊) կար՝ որ էն սա֊ րին վերայ արածուէին , և աղաչե֊ ցին Նորան՝ որ հրաման տայ իրանց մտնել Նորանց մէջ • և հրամայեց Նորանց :

33 Եւ գևերն էն մարդուցն գուրս եկին՝ և խոզերին մէջ մտին • և ե֊ րամակն էն բարձր տեղիցն վազեց ծովակին մէջ և խեղդվեցաւ :

34 Երբոր խոզաթաձներն տեսին էն բաներըն՝ որ էլան , փախան , և էն քաղաքի և շէների մէջն պատ֊ մեցին :

35 Եւ երբոր (մարդիք) գուրս է֊ լան էն բաներըն տեսնելոյ , և Յի֊ սուսի մօտ եկին , էն մարդըն գտին՝ որ Նորանից գևերն գուրս էին ե֊ կել , որ հագած և խելքն գլուխն եկած՝ Յիսուսի ոտներին մօտ նըս֊ ւած էր • և վախեցան :

36 Նորանք՝ որ տեսել էին , պատ֊ մեցին Նորանց , թէ ինչպէս փրկվե֊ ցաւ էն դիւահարն :

37 Եւ Գերգեսացոց ամէն չորս կողմերն էլած մարդիքն աղաչու֊ մէին[14] Նորան՝ որ իրանց սահմաննե֊ րիցն գնայ[15] , պատճառն որ՝ սաստիկ ահով և վախով բռնըված էին • և Նա նաւ մտաւ՝ և յետ դարձաւ ;

38 Իւն մարդն՝ որ Նորանից գևե֊ րըն գուրս էին եկել , Նորան աղա֊ չէմէր՝ որ Նորա հետ ման գայ[16] • արձակեց Նորան՝ և ասաց •

39 Վարձիր քո տունդ , և պատ֊ միր ամէն ինչ որ Աստուած քեզ արաւ • Նա գնաց քաղաքն՝ և քարո֊ զուէր ինչ որ Յիսուս իրան արաւ :

40 Եւ երբոր Յիսուս յետ դար֊ ձաւ , ժողովուրդն ընդունեց Նորան • ինչուո՛ր՝ ամէնքն էլ սպասուէին Նո֊ րան :

41 Եւ ահա մի մարդ եկաւ՝ որ Նորա անունն Յայրոս էր , և Նա ժո֊ ղովարանի իշխան էր[17] • Յիսուսի ոտներըն ընկաւ՝ աղաչուէր Նորան , որ իրան տունն մտնէ :

42 Ինչուո՛ր՝ մի միածնուէնդ աղ֊ ջիկ ունէր , իրը տասներկու տարե֊ կան , և Նա մեռնելոյ մօտ էր • և Նո֊ րա գնալոյ ժամանակն՝ ժողովուրդ֊ ներն նեղացնուէին Նորան :

43 Եւ մի կին կար արիւն թա֊ փելոյ հիւանդութեան մէջ տասներ֊ կու տարուց՝ որ իրան ամէն ապրանք֊ ներըն բժշկներին էր տուել՝ փո֊ ճացրել[18] , որ Նորան ընար չէր է֊ լած՝ մընիցն բժշկվելոյ :

44 Սա մօտ եկաւ , և եւսիցըն Նո֊ րա շորի ծայրերին (ֆէշէրէն) դի֊ պաւ • և շուտով հենց էն ժամուն (սահաղոռ֊ն) Նորա արիւնի վազելն դադարեց :

45 Եւ Յիսուս ասաց • Ո՞վ է՝ որ ինձ դիպաւ • երբոր ամէնքն ուրա֊ նուէին , Պետրոս և Նորանք որ Նորա հետ էին՝ ասացին • Ա՛րդա֊ պետ՝ ժողովուրդներդ պնդուէն և նեղացնուէն քեզ :

46 Եւ Յիսուս ասաց • Ո՞ինն դի֊ պաւ ինձ • ինչուո՛ր՝ իմացայ՝ որ զո֊ րութիւն գուրս եկաւ ինձանից[19] :

47 Երբոր կինն տեսաւ՝ որ չը֊ ծածկվեցաւ Նորանից , դողալով ե֊ կաւ՝ և Նորա առաջին ընկաւ , և ամէն ժողովրդի առաջին պատմեց՝ թէ ինչ բանի համար Նորան դիպաւ ,

(13) Յայտ • ի • 3 ; (14) Մատթ • ը • 34 ; (15) Դուբ • ժգ • 39 ; (16) Մարկ • ե • 18 ; (17) Մատթ • թ • 18 ; Մարկ • ե • 22 ; (18) Մատթ • թ • 20 ; (19) Մարկ • ե • 30 • Ղուկ • զ • 19 •

և թէ ինչպէս հենց էն ժամուն բժշկվեցաւ ։

48 Եւ (նա) ասաց · Արտագինդ կաց դուստր՝ քո հաւատդ ողջացրուց քեզ , գնա խաղաղութեանով ։

49 Եւ դեռ որ նա խօսումէր , էն ժողովրդապետի տանիցն մին մարդ եկաւ , և նորան ասաց[20] · Որ աղջիկդ մեռաւ , էլ դորան մի՛ աշխատացներ ։

50 Ինչ Յիսուս երբոր լսեց , նորան պատասխան տուաւ և ասաց , Մի՛ վախենար , միայն հաւատա՛ և նա կապրի ։

51 Եւ տունն որ մտաւ՝ իսկի մընին չը՛թողից որ մանէ , բայց միայն Պետրոսին , և Յակոբին և Յոհաննէսին , և երեխայի հօրն և նորա մօրն ։

52 Լմինքն լաց էին լինումՙ և նորա վերայ սուգ էին անումՙ · և նա ասաց , Լաց մի՛ լինիք , ինչուո՛ր մեռած չէ , այլ քնած է[21] ։

53 Եւ նորանք ծաղր էին անումՙ նորան , ինչուո՛ր գիտումէին , որ մեռաւ ։

54 Եւ նա ամենին դուրս հանեց ,

55 Նորա ձեռիցն բռնեց , խօսեց և ասաց · Ովՙ երեխայ՝ վերկաց[22] , կանգնիր ։

56 Եւ նորա հոգին դարձաւ , և շուտով կանգնեց · և հրամայեց՝ որ նորան բան տան ուտելոյ ։

57 Եւ նորա ծնօղքն զարմացան · և նա պատուիրումէր՝ որ իսկի մընին չասեն էն՝ ինչ որ էլաւ[23] ։

ԿԻ · Թ

1 Լաբաքեաներն հրաչք գործելոյ և քարոզելոյ կուղարկվին ։ 7 Հերովդես Յիսուսն խընդրումՙ որ տեսնի ։ 17 Հրիւտոս հինգ հազար մարդկանց կըկշտացնէ · 18 Կըհարցնի աշակերտներին թէ ժողովուրդն իրան համար ո՞վ են ասում · 22 Իրան չարչարանքներն ասացուց կասի · 23 Նորանց առաջն դնումէ որ իրան հետէն գնացողներն իրանց անձըն ուրանան և իրանց խաչըն առնեն և իրան հետէն գնան ։ 28 Իրան կերպարանքի փոխվիլն · 37 Լուսնան կըբժշկէ · 43 Մինէլ կըխօսի իրան աշակերտներին՝ իրան քաշելոյ չարչարանքներին վերայ · 46 Իրան աշակերտներն խոնարհութիւն կըքարոզէ · 51 Նէ պատասխէր կըտայ նորանց որ ամէն մարդ սիրէն , և ոխ հանող չըլինին · 57 Մին քանի մարդ մին մին պատճառով Հրիստոսի հետէն գնալ են ուզում ։

1 Եւ տասներկու առաքեալներն ի մի կանչեց , և նորանց զօրութիւն և իշխանութիւն տուաւ ամէն դևերին վերայ , և հիւանդութիւններ բժշկելոյ[1] ։

2 Եւ նորանց ուղարկեց՝ որ Աստուծոյ արքայութիւնն քարոզեն · և ցաւագարներըն բժշկեն[2] ։

3 Եւ նորանց ասաց · Իսկի մին բան վեր չառնէք ճանապարհի համար · ոչ գաւազան , ոչ պարկ , ոչ հաց և ոչ արծաթ , երկու հագուստ էլ չունենաք[3] ։

4 Եւ որ տուն որ մտնէք՝ էն տեղ մնացէք , և էնտեղիցըն գընացէք[4] ։

5 Եւ նորանք՝ որ ձեզ չընդունին[5] , երբոր էն քաղաքիցն դուրս կըգնաք , ձեր ոտների փոշին թմփ տուէք՝ որ նորանց վկայութիւն լինի[6] ։

(20) Մարկ · ե · 35 ։ (21) Յովհ · ժա · 11 · 13 ։ (22) Ղուկ · է · 14 ։ Յովհ · ժա · 43 ։ (23) Մատթ · ը · 4 · թ · 30 ։ Մարկ · ե · 43 ։ (1) Մատթ · ժ · 1 ։ Մարկ · գ · 13 · ը · 7 ։ (2) Մատթ · ժ · 7 , 8 ։ Մարկ · ը · 12 ։ Ղուկ · ժ · 1 · 9 ։ (3) Մատթ · ժ · 9 ։ Մարկ · ը · 8 ։ Ղուկ · ժ · 4 ։ իբ · 35 ։ (4) Մատթ · ժ · 11 ։ Մարկ · ը · 10 ։ (5) Մատթ · ժ · 14 ։ (6) Դործ · ժգ · 51 ։

6 Եւ դուրս գնացին և ման էին գալիս քաղաքներն և գիւղերն՝ աւետարանելն քարոզելու, և ամէն տեղ բժշկութիւն էին անում[7]:

7 Հերովդէս չորրորդապետն էն ամէն գործերըն լսեց[8] · և զարմանում էր նորա համար՝ որ մին քանիսն ասում էին ·

8 Թէ Յովհաննէսն մեռելների միջից յարութիւն առաւ, և մին քանիսն՝ թէ Եղիան յայտնվեցաւ՝ և ուրիշներն՝ թէ Նաւղին մարգարէներից մինն յարութիւն առաւ:

9 Եւ Հերովդէսն ասաց · Յովհաննէսի գլուխը ես կտրեցի · բայց սա ովքե՞ր է որ նորանից էսպէսի բաներ եմ լսում · և խնդրում էր, որ տեսնէ նորան[9]:

10 Նաւղիները դարձան և պատմեցին նորան ամէն՝ ինչ որ արին[10] · և նորանց առաւ՝ և գնաց առանձին մի անապատ (Հօլ) տեղ, մին քաղաքի մօտ՝ որ նորա անունն Նեթսայիդա էր[11]:

11 Եւ ժողովուրդներն երբոր գիտացին, նորա ետևէն գնացին · և նորանց ընդունեց և նորանց հետ Նստուծոյ արքայութեան համար խօսում էր, և նորանց՝ որ բժշկութեան կարօտ էին՝ բժշկում էր:

12 Եւ օրն սկսեց մթնել · տասներկուքն մօտ եկին և նորան ասացին · Թող արա էդ ժողովուրդդ, որ չորս կողմով էլած գիւղերն և շէներն գնան, հանգիստ առնեն, և կերակուր գտնեն · ինչու որ հետեղ անապատ տեղում ենք[12]:

13 Նորանց ասաց · Դուք տուէք դորանց ուտել · և նորանք ասացին · Մենք հինգ հատ հացից և երկու ձկնից աւելի բան չունինք, եթէ ոչ՝ գնանք էդ ժողովրդիդ համար բաւական կերակուր գընենք:

14 Ինչուորՙ հինգ հազարի չափ մարդիք էին · աշակերտներին ասաց · Տասցրէք դորանց դասդաս՝ յիսուն յիսուն:

15 Եւ հնպէս արին, և ամէնին նստացրին:

16 Եւ էն հինգ հացըն և երկու ձուկըն առաւ, դէպի երկինքն նայեց, օրհնեց և կարեց, և տալիս էր աշակերտներին՝ որ քցեն ժողովրդին:

17 Ամէնքն կերին և կշտացան · և կտորների փշրանքներըն վերկացան՝ տասներկու քոշոց:

18 Եւ էլաւ՝ երբոր նա առանձին աղօթք էր անում՝ նորա աշակերտներն էլ նորա հետ էին · հարցրուց նորանց և ասաց · Ժողովուրդներն ինձ համար ովքե՞ն են ասում՝ որ լինիմ[13]:

19 Եւ նորանք պատասխան տուին և ասացին · Յովհաննէս Մկրտիչն[14], և ուրիշներն՝ (թէ) Եղիան, և ուրիշներն՝ թէ Նաւղին մարգարէներից մինն յարութիւն առաւ:

20 Նորանց ասաց · Դուք ովքե՞ր էք ասում ինձ համար՝ որ լինիմ · Պետրոսն պատասխան տուաւ և ասաց · Նստուծոյ Քրիստոսն[15]:

21 Նա սաստեց նորանց, և պատուիրեց՝ որ էն խոկի մրնին չասեն[16]:

22 Եւ ասաց՝ թէ Պէտք է, որ Որդին մարդոյ շատ չարչարվի և անարգվի քահանայապետներից և ծերերից և կարգաղներից, և սպանվի՝ և երեք օրումն յարութիւն առնէ[17]:

(7) Մատ · Ղ · 12 : (8) Մատ · ԺԴ · 1 : Մարկ Գ · 14 : (9) Ղուկ · ԻԳ · 8 : (10) Մարկ · Ղ · 30 : (11) Մատ · ԺԴ · 13 : (12) Մատ · ԺԴ · 15 : Մարկ · Ղ · 35 : Յովհ · Ղ · 1 · 5 : (13) Մատ · ԺՃ · 13 : Մարկ · Ը · 27 : (14) Մատ · ԺԴ · 2 · ԱՒԷ · 7 , 8 : (15) Մատ · ԺՃ · 16 : Յովհ · Ճ · 60 : (16) Մատ · ԺՃ · 20 : (17) Մատ · ԺՃ · 21 : ԺԷ · 22 :

23 Եւ ասէին ասուածքր , Թէ որ միւնն կամենուի իմ ետեւէս գալ՝ Թող իրան անձրն ուրանայ՝ և առնէ ամէն օր իրան խաչըն առնէ՝ և իմ ետեւէս գայ[18] :

24 Պատճառնոր՝ ով որ կամենայ իրան անձրն ապրեցնել՝ կրկորցնէ նորան . և ով որ իրան անձրն կրկորցնէ ինձ համար՝ կապրեցնէ նորան :

25 Ո՞նչ օգուտ է մարդոյ՝ որ աշխարհքրս ստանայ , և իրան անձրն կորցնէ , կամ (նորան) վնաս տայ[19] :

26 Ինչուար՝ ով որ ինձ և իմ խօսքերրս ամօթ կըհամարէ՝ Որդին մարդոյ էլ նորան ամօթ կանէ՝ երբոր որ իրան և Հօր և սուրբ հրեշտակների փառքովն կըգայ[20] :

27 Ասյց ուղորդըն աւո մեմ ձեզ . Թէ Աստեղ լինողներիցըն միւնքանիսն կան , որ մահ չեն տեսնիլ , մինչև որ Աստուծոյ արքայութիւնըն տեսնեն[21] :

28 Եւ էլաւ՝ որ ութ օրի չափ էս խօսքերիցս ետև , Պետրոսին և Յակոբին և Յովհաննէսին առաւ՝ և վեր էլաւ միւն սար աղօթք անելոյ[22] :

29 Եւ նորա աղօթք անելոյ ժամանակն՝ նորա երեսի կերպարանքն ուրիշ կերպ էլան . և նորա հագուստն փոխվեցաւ՝ և սպիտակ փայլուն էլաւ :

30 Եւ ահա երկու մարդ խօսուէին նորա հետ . որ նորանք Մովսէսն և Եղիան էին ,

31 փառքով երևացած՝ և նորա վախճանին համար խօսուէին՝ որ Երուսաղէմումն պէտք էր կատարւէ :

32 Իսայց Պետրոսն և նորանք՝ որ նորա հետ էին՝ որ քնով ծանրացած էին , զարթնացան՝ տեսին նորա փառքըն , և էն երկու մարդըն՝ որ նորա մօտ կանգնած էին[23] :

33 Եւ էլաւ երբոր նորանք հեռանուէին նորանից , Պետրոսն ասաց Յիսուսին . Վարդապետ՝ լաւ է , որ մենք էստեղ կենանք , և երեք տաղաւար (չատր) չինենք , միւնըն քեզ համար . և միւնըն Մովսէսին և միւնըն Եղիային . և չէր գիտում՝ Թէ ինչ էր խօսում :

34 Եւ երբոր էս ասաց , մին ամպ եկաւ և նորանց վերայ շուաք արաւ . և վախեցան , երբոր էն ամպին մէջ մտին :

35 Ձայն էլաւ ամպիցն և ասաց . Դա է իմ ընտրված Որդին[24] դորան ականջ դրէք[25] :

36 Եւ էն ձայնն որ էլաւ՝ Յիսուս մենակ գտաւ , և նորանք լուռ կացան և էն օրերումն իսկի մին մարդոյ չըպատմեցին էն բաներիցն՝ որ տեսին[26] :

37 Եւ էլաւ էգուցվան օրումն՝ երբոր էն սարիցն վեր էին գալիս՝ շատ ժողովուրդ նորա առաջն եկաւ[27] :

38 Եւ ահա էն ժողովրդիցն մին մարդ աղաղակեց և ասաց . Վարդապետ՝ աղաչումեմ քեզ , մտիկ տուր իմ որդոյս . ինչուար՝ միածնունդ է ինձ :

39 Եւ ահա դև բռնումէ նորան , և յանկարծ գոռգոռումէ՝ և նորան գետնով է տալիս , և թաւալացնումէ նորան և փրփրացնումէ , և դժուար Թէ նորան կոտրատելուցըն ետև հեռանումէ նորանից :

40 Եւ քո աշակերտներին աղա-

(18) Մատ . ժ . 38 : ԺԶ . 24 : Մարկ . ը . 34 : Ղուկ . ժգ . 27 : (19) Մատ . ԺԶ . 26 : Մարկ . ը . 36 : (20) Մատ . ժ . 33 : Մարկ . ը . 38 : բ Տիմ . բ . 12 : (21) Մատ . ԺԶ . 28 : Մարկ . Թ . 1 : (22) Մատ . ԺԷ . 1 : Մարկ . Թ . 2 : (23) Ղուկ . ը . 18 : ժ . 9 : (24) Մատ . գ . 17 : (25) Գործ . գ . 22 : (26) Մատ . ԺԷ . 9 . 2 7) Մատ . ԺԷ . 14 : Մարկ . Թ . 14 . 17 :

չեցի , որ հանեն նորան , և չկա-
րացին :
41 Յիսուս պատասխան տուաւ և
ասաց · Ով անհաւատ և ծուռ
ազգ , մինչև երբ ձեզ հետ պիտի
լինիմ և համբերեմ ձեզ · քո որ-
դին էստեղ բեր :
42 Եւ դեռ որ մօտ էր գալիս ,
դևն գետնով գարկեց նորան՝ և շատ
սաստիկ շարժեց :
43 Յիսուս սաստեց պիղծ դևին ,
և տղային բժշկեց · և նորան տը-
ւաւ իրան հօրն :
44 Եւ ամենքն զարմանում էին Ա-
ստուծոյ մեծամեծ գործքերին վե-
րայ · և դեռ որ ամենքն զարմա-
նում էն ամէն բաներին վերայ՝
որ անում էր , իրան աշակերտներին
ասաց · Լսա բաներըս գրէք դուք
ձեր ականջներին[28] · որ Որդին մար-
դոյ մարդկանց ձեռքն պիտի մատ-
նվի :
45 Եւ նոքանք չէին գիտում էն
բանըն և ծածկված էր նորանցից՝
որ չը'գիտենան[29] · և վախումէին
հարցնել նորան էն բանին համար :
46 Ո՛վ ի՞նչ խորհուրդ մտաւ նորանց
մէջ՝ թէ նորանցից ո՛վ լինի մեծ[30] :
47 Յիսուս երբոր նորանց սրտերի
մտածմունքներըն իմացաւ՝ մին երե-
խայ առաւ՝ և նորանց միջումն կանգ-
նացրուց իրան մօտ ,
48 Եւ նորանց ասաց · Ով որ էս
երեխայիս կընդունի իմ անունումս՝
ինձ կընդունի[31] · և ով որ ինձ կըն-
դունի՝ իմ ուղարկողին կընդունի ·
պատճառն որ՝ ով որ ձեր ամենիդ
մէջն շատ փոքրն է՝ նա մեծ կըլի-
նի[32] :
49 Յովհաննէսն պատասխան տը-
ւաւ և ասաց[33] · Ա՛վրդապետ՝ մի-
նը տեսինք՝ որ քո անունովդ դե-
ևեր էր հանում՝ և արգելեցինք նո-
րան , ինչուր՝ մեզ հետ ման չէր
գալիս :
50 Յիսուս նորանց ասաց · Մի՛
արգելէք նորան · պատճառն որ՝ ով
որ ձեր թշնամի չէ՝ ձեր կողմն է[34] :
51 Եւ էլաւ՝ երբոր նորա վերա-
նալու օրերն կատարվումէին[35] , և
ինքն երեսըն հաստատեց՝ որ գնայ
Երուսաղէմ :
52 Եւ իրան երեսի առաջին պատ-
գամաւորներ ուղարկեց՝ և երբոր
գնացին՝ Սամարացոց մին գիւղ մտին՝
որ նորա համար բան պատրաստեն :
53 Եւ չընդունեցին նորան · ին-
չուր՝ իրան երեսըն գրած էր՝ որ
Երուսաղէմ գնայ[36] :
54 Երբոր Յակոբոս և Յովհաննէս
աշակերտներն տեսին՝ ասացին · Տէր՝
կըկամենաս՝ որ ասինք , և կրակ
վերայ երկնքից՝ և նորանց սա-
տակէ[37] :
55 Դարձաւ՝ սաստեց նորանց և ա-
սաց · Չէք գիտում՝ թէ ո՛ր հոգոյ
էք դուք :
56 Պատճառն՝ Որդին մարդոյ
չեկաւ՝ որ մարդկանց հոգիներըն
կորցնէ , այլ որ ապրեցնէ[38] · և
գնացին ուրիշ գիւղ :
57 Եւ դեռ որ ճանապարհումն
գնումէին՝ մին մարդ նորան ասաց ·
Ես էլ քո հետէդ կըգամ՝ որ տեղ
որ գնաս[39] :
58 Յիսուս նորան ասաց · Ղո-
ւէներն բուն ունին , և երկընքի
թըռչուններն գազարելոյ տեղ՝ և
Որդին մարդոյ տեղ չունի՝ որ իրան
գլուխըն դնէ :

(28) Ա՛ռաք · ժէ · 22 : (29) Մա՛ր · թ · 32 : Ղու՛կ · թ · 50 : ժը · 34 : (30) Մա՛ռ · ժը · 1 : Մա՛ր · թ · 34 : (31) Մա՛ռ · ժ · 40 : ժը · 5 : Մա՛ր · թ · 37 : Յովհ · ժը · 44 : ժգ · 20 : (32) Մա՛ռ · իգ · 11 , 12 : (33) Ա՛ռաք · ժա · 28 : Մա՛ր · թ · 38 : (34) Մա՛ռ · ժը · 30 : Ղու՛կ · ժա · 23 : (35) Մա՛ր · ժշ · 19 : Գործ · ա · 2 : (36) Յովհ · գ · 4 · 9 : (37) Գ Թագ · ա · 10 · 12 : (38) Յովհ · գ · 17 : ժը · 47 : (39) Մա՛ռ · ը · 19 :

59 Ա՛յն ուրիշն ասաց՝ Իմ եռե-
լա՛ւ էս ե՛կ . և նա ասաց . Տէր՛
հրամա՛ն տուր՝ որ գնամ առաջ իմ հայրս
թաղեմ[40] :

60 Յիսուս նորա՛ն ասաց . Թո՛ղ
մեռելներին՝ որ իրանց մեռելները
թաղեն . և դու գնա՛ քարոզեցո՛ ար-
քայութիւնն պատմի՛ր :

61 Ա՛յն ուրիշն էլ ասաց . Տէ՛ր՝
քո եռելդ կը գամ . միայն թո՛ղ ա-
ռաջ հրաման տուր ինձ , որ իմ տանս
բա՛րև մնա անեմ[41] :

62 Յիսուս նորա՛ն ասաց . Մա՛ր ով՝
որ ձեռնն մա՛ճի վերայ դնէ՝ և յետ
նայի՝ Աստուծոյ արքայութեան հա-
մար յաղողուած չէ՛ :

ԿՂ · Ժ

1 Յետոյ հօթանասուն և երկու աշակերտներ էլ կուղարկէ որ նորանք հրաչք անեն և քարոզեն · 17 Նորանց խրատ կըտայ որ խոնարհ լինին , և թէ ո՛ր բանի համար պէտք է որ նորանք ուրախ լինին · 21 Շնորհակալ կըլինի իրան Հօրից որ էս խորհուրդն տղայոց յայտնեց · 23 Իրան հկնդեցող վիճակին երանի կըտայ · 25 Օրէնք գիտօղին կըսովորցնէ թէ յաւիտենական կեանքը ինչպես պիտի ժառանգէ , և իրան պէտք է որ ամէն կարօտ հիւրերին ողորմութիւն անէ իրան ընկերներին պէս : 41 Մարթան սաստում և նորա քոյր Մարիամն գովում :

1 Ա՛յնից ետև Տէրն ուրիշ հօ-
թանասուն և երկու հոգի էլ կար-
գեց . և նորանց երկու երկու ի-
րան առաջին ուղարկեց էն ամէն
քաղաքներն և տեղերն՝ որ տեղ որ
ինքն պէտք էր գնայ[1] :

2 Եւ նորանց ասաց . Հունձքն
շատ է , և մշակներն քի՛չ[2] . ու-
րեմն աղաչեցէ՛ք հընձի Տիրոջն՝ որ
մշակներ ուղարկէ իրան հունձքն[3] :

3 Գնացէ՛ք . ա՛ՀԱ ուղարկումիմ
ձեզ ինչպէս գառներ գայլերի մէջ[4] :

4 Ա՛խր մի՛ առնէ՛ք ո՛չ քսակ ,
ո՛չ պարկ , ո՛չ կօշիկներ[5] . և ճա-
նապարհումն իսկի մըրնի բարև չը-
տա՛ք[6] :

5 Ո՛ր տուն որ մտնէ՛ք՝ առաջ
ասացէ՛ք՝ Թէ Ողջո՛ւն էս տանս[7] :

6 Ո՛վ որ էնտեղ ողջունի որդի
լինի , ձեր ողջոյնն նորա վերայ
կըմնայ . ապա թէ չէ՛ յետ կը-
գառնայ դէպի ձեզ :

7 Եւ էն տանն մնացէ՛ք[8] , նո-
րանցից կերէ՛ք և խմեցէ՛ք[9] . ինչու-
որ՝ մշակն իրան վարձքին արժանի
է[10] . տանից տուն մի՛ փոխվի՛ք :

8 Ո՛ր քաղաք որ մտնէ՛ք՝ և ձեզ
ընդունին , կերէ՛ք՝ ինչ որ կըդը-
նեն ձեր առաջին :

9 Եւ հիւանդներին՝ որ էնտեղ
լինին՝ բժշկեցէ՛ք[11] . և նորանց ա-
սացէ՛ք՝ (թէ) Աստուծոյ արքայու-
թիւնն մօտացել է ձեզ վերայ[12] :

10 Այլ որ քաղաք որ մտնէ՛ք ,
և ձեզ չընդունին՝ երթը դուրս
գաք նորա թաղոցներն՝ ասա-
ցէ՛ք .

11 Նա՛ փոշիս էլ որ ձեր քաղա-
քիցն մեր ոտներիս է կպել՝ թօփ
ենք տալիս ձեզ վերայ[13] . միայն

(40) Մատ . ը · 21 : (41) գ Թագ . ԺԹ · 20 : (1) Մատ . ժ · 1 : Մարկ . ղ · 7 (2) Մատ . թ · 37 , 38 : Հայեր . գ · 35 : (3) բ Թես . գ · 1 : (4) Մատ . ժ · 16 : (5) Մատ . ժ · 9 , 10 : Մարկ . ղ · 8 : Ղուկ . թ · 3 : (6) գ Թագ . գ · 29 : (7) Մատ . ժ · 12 : (8) Մատ . ժ · 11 : (9) ա Կորնթ . ժ · 27 : (10) Մատ . ժ · 10 . ա Կորնթ . թ · 4 , Լևտ . : ա Տիմ . ե · 18 : (11) Ղուկ . թ · 2 : (12) Մատ . գ . 2 : գ · 17 : ժ · 7 : Ղուկ . 11 : (13) Մատ . ժ · 14 : Ղուկ . թ · 5 : Գործ : ԺԳ · 51 : ԺԸ · 6 :

թէ ես գիտացէք՝ , որ Աստուծոյ արքայութիւնն մօտացել է ։

12 Սուտեմ ձեզ՝ որ Սոդոմացոց համար աւելի հեշտ կըլինի են օրումն՝ քանէ են քաղաքին համար[14] ։

13 Ա՛յ քեզ Քորազին ։ վա՛յ քեզ Բեթսայիդա[15] ։ պատճառն որ՝ եթէ Տիւրոսի և Սիդոնի մէջն եղած էին են զօրութիւններն՝ որ ձեր մէջն էյան՝ շատ առաջուց քըրձի (տալէ շորէ) և մոխրի մէջ նըստած ապաշխարել էին[16] ։

14 Բայց Տիւրոսի և Սիդոնի համար աւելի հեշտ կըլինի դատաստանի օրումն՝ քանէ ձեզ համար ։

15 Եւ դո՛ւ Կափառնայում[17]՝ որ մինչև երկինքն բարձրացած ես[18]՝ մինչև դժոխքն պիտի վէր գաս[19] ։

16 Ով որ ձեզ կըլսէ՝ ինձ կըլսէ[20] ։ և ով որ ձեզ կանարգէ՝ ինձ կանարգէ[21] ։ և ով որ ինձ կանարգէ , ինձ ուղարկողին կանարգէ[22] ։ և ով որ ինձ կրլսէ՝ նորան կըլսէ , որ ինձ ուղարկեց ։

17 Յն եօթանասուն և երկուքն ուրախութենով չետ դարձան և ասացին[23] ։ Տէ՛ր՝ դևերն էլ ենա-զանդվում են մեզ քո անունովդ ։

18 Եւ նորանց ասաց ։ Տեսնում էի Սատանային , որ կայծակի պէս երկնքիցն վէր էր ընկնում[24] ։

19 Ա՛հա իշխանութիւն տուի ձեզ՝ որ օձերը և կարիճները և թշնամոյ ամէն զօրութիւնըն կոխէք , և ձեզ իսկի վնաս՝ չանեն[25] ։

20 Ա՛յայն թէ՝ Նորա համար մի՛ ուրախանաք՝ որ դևերն ենազանդվումեն ձեզ՝ բայց ուրախացէք՝ որ ձեր անուններն երկնքումն գըրված են[26] ։

21 Հենց էն ժամումն (սահլոտըն) հիսուս Սուրբ Հոգովն ցընծաւ և ասաց ։ Խոստանում քեզանից ով Հայր՝ երկնքի և երկրի Տէր , որ իմաստուններից և գիտուններից էս բանըս ծածկեցիր և տղայոցն յայտնեցիր սրան ։ իրաւի ով Հայր ։ ինչուր՝ էսպէս հաճոյ էլաւ քո առաջիդ[27] ։

22 Ամեն բան տըվաւ ինձ իմ Հօրիցս[28] ։ և ո՛չ ով չի գիտում՝ թէ ով է Որդին՝ բայց միայն Հայրըն ։ և թէ ով է Հայրն՝ բայց միայն Որդին , և ում որ Որդին կամենայ յայտնել[29] ։

23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝ և ասաց ։ Երանի է են աչքերին՝ որ տեսնումեն են՝ որ դուք տեսնումք[30] ։

24 Սուտեմ ձեզ՝ թէ շատ մարգարէներ և թագաւորներ կամեցան տեսնել են՝ որ դուք տեսնումք , և չը՛տեսին[31] ։ և լսել էն՝ որ դուք լսումք , և չը՛լսեցին ։

25 Եւ ահա մին օրէնք գիտօղ վերկացաւ՝ նորան փորձումէր և ասում՝ Ա՛մրդապետ՝ ինչ պիտի անեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ[32] ։

(14) Մատ ։ ժ ։ 15 ։ Մարկ ։ գ ։ 11 ։ (15) Մատ ։ ժա ։ 21 ։ (16) Ղուկ ։ գ ։ 6 ։ (17) Մատ ։ ժա ։ 23 ։ (18) Եսայի ։ ժա ։ 4 ։ բ Օրէն ։ ա ։ 28 ։ Եսայ ։ ժգ ։ 13 ։ Եզեկ ։ ծա ։ 53 ։ (19) Ղուկ ։ իզ ։ 20 ։ լբ ։ 18 ։ (20) Մատ ։ ժ ։ 40 ։ Մարկ ։ թ ։ 37 ։ Հովհ ։ ժգ ։ 20 ։ (21) ա Թես ։ գ ։ 8 ։ (22) Հովհ ։ ե ։ 23 ։ (23) Ա՛ընդ ։ 1 ։ (24) Հովհ ։ ժբ ։ 31 ։ ժզ ։ 11 ։ Հայտ ։ թ ։ 1 ։ ժբ ։ 8 , 9 ։ (25) Մարկ ։ ժզ ։ 18 ։ Պսղմ ։ իբ ։ 5 ։ (26) Ղուկ ։ լբ ։ 32 ։ Ասղ ։ կթ ։ 28 ։ Եսայ ։ գ ։ 3 ։ Դան ։ ժբ ։ 1 ։ Փիլպ ։ գ ։ 3 ։ Եբր ։ ժբ ։ 23 ։ Հայտ ։ ժգ ։ 8 ։ ի ։ 12 ։ իա ։ 27 ։ (27) Մատ ։ ժա ։ 25 ։ (28) Մատ ։ իբ ։ 8 ։ Հովհ ։ գ ։ 35 ։ ե ։ 27 ։ ժէ ։ 2 ։ (29) Հովհ ։ ա ։ 18 ։ Ղ ։ 44 ։ 46 ։ (30) Մատ ։ ժգ ։ 16 ։ (31) ա Պետր ։ ա ։ 10 ։ (32) Մատ ։ ժթ ։ 16 ։ իբ ։ 35 ։

26 Եւ նա ասաց Նոյան · Օրհնեալ Տէր Աստուած Սեմայ, եւ Քանան ծառայ լիցի նոցա :
27 Ընդարձակեսցէ Աստուած զՅեդեթ, եւ բնակեսցէ նա ի տանս Սեմայ, եւ Քանան ծառայ լիցի նոցա :
28 Եւ ապրեցաւ Նոյան ջրհեղեղէն երեք հարիւր հնգիսուն ամ :
29 Եւ եղեն ամք Նոյանի ամենայնի ինն հարիւր հնգասան ամ, եւ մեռաւ :
30 Եւ Աբրահամ ի Քաղդէացւոց երկրէ ելեալ գնաց ի Խառան, եւ ամուսնացաւ Սառայ կնոջ Նաքովրի եղբաւրն իւրոյ, եւ Սառա ամուլ էր, եւ ոչ ունէր զաւակ :
31 Եւ Թարայ առ զՆաքովր որդի իւր, եւ զՂովտ որդի Արանայ որդւոյ իւրոյ, եւ զՍառա հարս իւր կին Նաքովրի որդւոյ իւրոյ, եւ ելին ընդ միասին ի քաղաքէն Ուր Քաղդէացւոց, գնալ ի Քանան երկիր, եւ եկին մինչեւ ի Խառան, եւ բնակեցան անդ :
32 Եւ եղեն աւուրք Թարայ երկու հարիւր հնգասան ամ, եւ մեռաւ Թարայ ի Խառան :
33 Եւ Աբրահամ էր ամաց եւթանասնից հինգ ամ, եւ ելանէ ի Խառանէ, եւ գնայ ի Քանան երկիր, եւ եկն ի Սիւքեմ, եւ ի դրունս Մոռէ, եւ Քանանացին էր յայնմ ժամանակի ի Սիւքեմ :
34 Եւ երեւեցաւ Տէր Աբրահամու, եւ ասէ ցնա · Զսերունդ քո տաց զերկիրս զայս · Եւ շինէ անդ Աբրահամ սեղան Տեառն, որ երեւեցաւ նմա :
35 Եւ յետ այսորիկ գնայ անտի ի լեառնն, որ ընդդէմ Բեթէլի, եւ հաստատէ զվրան իւր, եւ Բեթէլ ի կողմանէ արեւմտից, եւ Հայ ի կողմանէ արեւելից, եւ շինէ անդ սեղան Տեառն, եւ կոչէ զանուն Տեառն :
36 Եւ գնայ Աբրահամ ընթանալով եւ երթալով ի կողմանէ հարաւոյ :
37 Եւ եղեւ սով ի երկրին, եւ իջանէ Աբրահամ յԵգիպտոս, եւ բնակի անդ, զի սաստիկ էր սովն ի երկրին :
38 Եւ եղեւ մերձ եկեալ Աբրահամու մտանել յԵգիպտոս, եւ ասէ Աբրահամ առ Սառա կին իւր · Ահա գիտեմ զի կին գեղեցիկ ես դու յերեսս :
39 Եւ եղիցի յորժամ տեսցեն զքեզ Եգիպտացիք, եւ ասասցեն · Կին նորա է սա, եւ սպանցեն զիս, եւ զքեզ կեցուսցեն :
40 Ասա դու, եթէ քոյր իմ է, զի բարի լիցի ինձ վասն քո, եւ կեցցէ անձն իմ վասն քո :
41 Եւ եղեւ իբրեւ մտին Եգիպտոս, տեսին Եգիպտացիք զկինն, զի գեղեցիկ է յոյժ :
42 Եւ տեսին զնա իշխանք փարաւոնի, եւ գովեցին զնա առ փարաւոն, եւ առեալ կինն տարաւ ի տուն փարաւոնի :
43 Եւ Աբրահամու բարի արար վասն նորա, եւ ունէր ոչխարս եւ արջառս եւ էշս եւ արուս եւ էգս եւ ուղտս :
44 Եւ եղեն նմա ծառայք եւ աղախինք, եւ ելանէ Աբրահամ յԵգիպտոսէ, եւ գնայ ինքն եւ կին նորա եւ ամենայն որ նորա էր, եւ Ղովտ ընդ նմա, ի կողմանէ հարաւոյ :
45 Եւ Աբրահամ էր մեծատուն յոյժ ի հօտս եւ ի հարս եւ ի ոսկի :
46 Եւ գնայ ճանապարհաւ իւրով ի կողմանէ հարաւոյ մինչեւ ի Բեթէլ, մինչեւ ի տեղի ուր էր վրան նորա յառաջագոյն, եւ ուր էր սեղան նորա, զոր արար անդ յառաջագոյն, եւ կոչէ անդ Աբրահամ զանուն Տեառն :
47 Եւ Ղովտ որ գնայր ընդ Աբրահամ, էին նմա հարս եւ արջառք եւ վրանք :
48 Եւ ոչ կարէր տեղի տալ նոցա Աբրահամ, զի էին հարստութիւնք նոցա բազումք, եւ ոչ կարէին բնակել միասին :
49 Եւ եղեւ կռիւ ի մէջ հովուաց անասնոց Աբրահամու եւ հովուաց անասնոց Ղովտայ, եւ Քանանացին եւ Փերեզացին էին յայնմ ժամանակի ի տեղւոջ յայնմիկ :
50 Եւ ասէ Աբրահամ առ Ղովտ · Մի եղիցի կռիւ ի մէջ իմ եւ ի մէջ քո, եւ ի մէջ հովուաց անասնոց իմոց եւ հովուաց անասնոց քոց, զի եղբարք եմք մեք :
51 Ահա ամենայն երկիր առաջի քո է, զատարո զիս ի քէն, եթէ դու յձախակողմանս գնասցես, եւ ես յաջակողմանս գնասցեմ, եւ եթէ դու յաջակողմանս գնասցես, եւ ես յձախակողմանս գնասցեմ :
52 Եւ ամբարձ Ղովտ զաչս իւր, եւ ետես զամենայն դաշտ Յորդանանու, զի ամենայն ջրով ոռոգեալ էր, մինչեւ եկեալ ի Սողոմ եւ ի Գոմոր, իբրեւ զդրախտ Տեառն, եւ իբրեւ զերկիր Եգիպտոսի, մինչեւ եկեալ ի Սուր :
53 Եւ ընտրեաց Ղովտ զամենայն դաշտ Յորդանանու, եւ գնայ Ղովտ ի կողմանէ արեւելից, եւ զատարեցան միմեանց :
54 Եւ Աբրահամ բնակեցաւ ի Քանան երկրի, եւ Ղովտ բնակեցաւ ի քաղաքս դաշտին, եւ վրան իւր մերձ եկեալ Սողոմայ :
55 Եւ մարդիկ Սողոմայ չարք էին եւ մեղաւորք առաջի Տեառն յոյժ :
56 Եւ ասէ Տէր առ Աբրահամ, յետ զատարելոյ Ղովտայ ի նմանէ · Ամբարձ զաչս քո, եւ տես ի տեղւոջէ յորում դու ես, ի կողմանէ հիւսիսոյ եւ հարաւոյ, եւ յարեւելից եւ յարեւմտից :
57 Զի զամենայն երկիրս զոր դու տեսանես, քեզ տաց զնա եւ զսերունդ քո մինչեւ յաւիտեան :
58 Եւ տացեմ զսերունդ քո իբրեւ զհող երկրի, եթէ ոք կարասցէ համրել զհող երկրի, եւ զսերունդ քո համրեսցէ :
59 Արի, պտտեա զերկիրն երկայնութեամբ եւ լայնութեամբ, զի քեզ տաց զնա :
60 Եւ տեղաւորեաց Աբրահամ զվրան իւր, եւ եկն եւ բնակեցաւ ի դրունս Մոռէ, որ է ի Քեբրոն, եւ շինէ անդ սեղան Տեառն :
61 Եւ եղեւ յաւուրս Ամրափելի թագաւորի Սենաարայ, եւ Արիովքայ թագաւորի Ելլասարայ, եւ Քադողոմորայ թագաւորի Ելամայ, եւ Թադաղայ թագաւորի Ազգանեցւոց,
62 պատերազմեցան ընդ Բարայ թագաւորի Սողոմայ, եւ ընդ Բերսայ թագաւորի Գոմորայ, եւ ընդ Սենաբայ թագաւորի Ադամայ, եւ ընդ Սեմեբերայ թագաւորի Սեբովիմայ, եւ ընդ թագաւորի Բալայ, որ է Սեգովր :
63 Եւ հինգ թագաւորքն ի հինգ թագաւորացն պատերազմեցան ի հովիտն Սիդիմ :
64 Եւ ի հովիտն Սիդիմ էին հորք բազումք ի հողոյ, եւ փախեան թագաւորքն Սողոմայ եւ Գոմորայ, եւ անկան անդ, եւ որ մնացին ի լերինն փախեան :
65 Եւ առին զամենայն ստացուածս Սողոմայ եւ Գոմորայ, եւ զամենայն կերակուրս նոցա, եւ գնացին :
66 Եւ առին զՂովտ եւ զամենայն ստացուածս նորա, եւ գնացին, եւ նա նստէր ի Սողոմ :
67 Եւ եկն մի ի փախստեայսն, եւ պատմեաց Աբրահամու եբրայեցւոյ, եւ նա բնակէր ի դրունս Մոռէ Ամովրհացւոյ, եղբաւր Եսքովրայ եւ եղբաւր Եներ, եւ նոքա էին ուխտակիցք Աբրահամու :
68 Եւ լուաւ Աբրահամ, եթէ գերեցաւ Ղովտ եղբայր նորա, եւ զինեաց զծառայս իւր զերեսուն եւ երիս եւ զերեսուն եւ չորս, եւ հալածեաց զնոսա մինչեւ ի Դան :
69 Եւ եղեւ գիշերի, եւ բաժանեցաւ ի նոսա, եւ հարեալ զնոսա, եւ հալածեաց զնոսա մինչեւ ի Քոբա, որ է ընդ ձախակողմանս Դամասկոսի :
29 Եւ Աբրահամն ասաց. Նորանք օսէսին և մարգարէներին ունին՝ թող նորանց ականջ դնեն[15]։
30 Եւ նա ասաց. Ոչ, հայր Աբրահամ, բայց թէ որ մեռելներիցն մինն նորանց մօտ գնայ, կապաշխարեն։
31 Եւ նորան ասաց. Թէ որ Մովսէսին և մարգարէներին ականջ չեն դնում՝ էլ թէ որ մեռելներիցն մինն յարութիւն առնէ՝ չեն հաւատալ[16]։

ԻԶ · ԺԱ

1 Խրիստոս կըսովորցնէ որ գայթակղութիւն տալոյ բաներից զգույշ լինին, 3 և իրար ներքն։ 6 Հաւատքի զօրութիւնն։ 7 Մենք Աստուծոյն պարտական ենք, և չէ թէ Աստուած մեզ պարտական է։ 11 Տասն բորոտների սրբվիլն։ 22 Աստուծոյ արքայութեան և Որդոյ մարդոյ գալոյ պատմութիւնն։

1 Իրան աշակերտներին էլ ասաց. Թէ կարելի չէ՝ որ գայթակղութիւն չըգայ[1]. բայց վայ է էն մարդոյն՝ որ նորա ձեռովն կըգայ։
2 Լաւ էր նորան՝ որ նորա վըզնին ջաղացի քար կախվեր և ծովըն ընկնէր՝ քան թէ էս փոքրիկներից մէկն գայթակղացնէ։
3 Զգոյշ կացէք անձներիդ. Թէ որ քո եղբայրդ մեղք անէ[2] սաստիր նորան[3]. և թէ որ ապաշխարէ՝ թողութիւն տուր նորան։
4 Եւ թէ որ եօթն անգամ քեզ դէմ մեղք անէ՝ և եօթն անգամ քեզ մօտ դառնայ և ասէ՝ (թէ) Ապաշխարում եմ՝ թողութիւն տուր նորան։
5 Եւ առաքեալներն ասացին Տէրին՝ Մեր հաւատքըն աւելացրու։
6 Եւ Տէրն ասաց. Թէ որ մանանեխի (նրբաւէլ) հատին չափ հաւատք ունենաք, և էս թըզի ծառին ասէք. Պոկվիր և ծովի մէջն անկըվիր՝ կըլսազանդվի ձեզ[4]։

(12) Ա՛ռ. · ժդ · 12։ (13) Ւ՛ոով. · կղ · 24։ Մարկ. · թ · 44, Ե՛սայ. · (14) Հոբ. · խ · 13։ Ղու՛կ. · զ · 24։ (15) Ւ՛ոով. · ը · 20։ ւգ · 16։ Հովհ. · ե · 39 · 45։ Գործ · ժե · 21։ ժէ · 11։ (16) Հովհ. · ժբ · 10, 11։ (1) Մատթ. · ժը · 6, 7։ Մարկ. · թ · 42։ ա Կորնթ. · ժա · 19։ (2) Մատթ. · ժը · 15 · 21։ (3) Ղու՛կ. · ժթ · 17։ Ե՛ղեկ. · ժէ · 10։ Հով. · ե · 19։ (4) Մատթ. · ժէ · 20։ իա · 21։ Մարկ. · թ · 23։ ժա · 23։

7 Ասյց ձեզանից ո՞վ է նա՝ որ մին հողագործ կամ հովիւ (յոպան) ծառայ ունենայ, որ երբոր գան-դիցն (գայ տուն) մանէ՝ շուտով ա-սէ նորան՝ թէ եկ սեղան նստիր։

8 Ասյց չասէ՞ նորան՝ թէ Պատ-րաստիր ինչ որ իրիկունս պիտի ուտեմ, և գոտիկըդ կապած ինձ ծառայիր՝ մինչև որ ուտեմ և խը-մեմ, և յետոյ դուն էլ կիր և խը-միր[5]։

9 Միթէ էն ծառային շնորհա-կալ կըլինի՝ որ էն ամէն հրաման-ներըն արաւ։

10 Ինպէս էլ դուք՝ երբոր ամէն ձեզ հրամայված բաներըն անէք, ասացէք թէ՝ Մենք անպիտան ծա-ռաներ ենք[6]. էն որ պարտական էինք անելոյ, արինք։

11 Եւ ելաւ՝ երբոր նա Երուսա-ղէմ էր գնում՝ և ինքն Սամարի-այի և Գալիլեացոց միջըցն էր անց-կենում[7]։

12 Եւ երբոր մին գիւղ էր մըտ-նում, տասն բորոտ մարդիք պա-տահեցին նորան որ հեռուանց կանգ-նեցին[8]։

13 Ձայներըն բարձրացրին՝ և ա-սացին. Յիսուս Վարդապետ՝ մեզ ողորմեա։

14 Եւ երբոր տեսաւ նորանց՝ ա-սաց նորանց. Գնացէք անձներըդ քահանաներին ցոյց տուէք[9]. և ե-ղաւ երբոր գնացին՝ շուտով սըրբե-վեցան։

15 Նորանցից մինն երբոր տեսաւ՝ թէ բժշկըվեցաւ, յետ դարձաւ՝ բարձր ձայնով փառք էր տալիս Աստուծոյն։

16 Իրան երեսին վերայ ընկաւ նորա ոտների առաջին, և գոհա-նում էր նորանից. և ինքն Սամա-րացի էր։

17 Յիսուս պատասխան տուաւ և ասաց. Չէ՞ որ տասն էին սորանք որ սրբվեցան. ապա էն ինն ո՞ւր են։

18 Որ իսկի չըգտան որ յետ դառնան՝ և Աստուծոյն փառք տան, բայց միայն էս այլազգիս։

19 Եւ ասաց նորան. Վեր կաց գնա. ինչու որ քո հաւատքդ ապ-րեցրուց քեզ[10]։

20 Երբոր փարիսեցիներից հարց-վեցաւ՝ թէ Աստուծոյ արքայու-թիւն ե՞րբ պիտի գայ. պատաս-խան տուաւ նորանց և ասաց. Աս-տուծոյ արքայութիւն դըբսի նը-շաններով չի գալ։

21 Եւ չեն ասիլ՝ թէ Ահա էստեղ կամ էնտեղ է[11]. ինչուր՝ ահա Աստուծոյ արքայութիւն հենց ձեր ներսըտումն է[12]։

22 Աշակերտներին էլ ասաց. Օ-րեր կըգան՝ որ դուք կըցանկանաք Որդոյ մարդոյ օրերից մինն տես-նելոյ, և չէք տեսնիլ[13]։

23 Եւ թէ որ ասեն ձեզ՝ Ահա էստեղ է կամ էնտեղ՝ եւ-ւէն չը-գնաք[14]։

24 Պատճառն որ՝ ինչպես կայծա-կըն որ փայլում է, երկնքի տակն (մին կողմից) լոյս է տալիս մին-չև երկնքի տակովն (մեկել կողմն)՝ էնպէս էլ Որդին մարդոյ իրան օ-րումն[15]։

25 Ասյց առաջ պէտք է՝ որ նա շատ չարչարվի և անարգվի էս աղգիցս[16]։

(5) Ղեւ. ժբ. 37։ (6) Յոբ. իբ. 3։ Լբ. 7։ Սալ. ժգ. 2։ Մաթ. իե. 30։ Հռով. գ. 12։ ժա. 35։ ա Կորնթ. թ. 16, 17։ Փիլմ. 11։ (7) Ղեւ. թ. 51, 52։ Յովհ. դ. 4։ (8) Ղեւ. ժգ. 46։ (9) Ղեւ. ժգ. 2։ ժդ. 2։ Մաթ. ը. 4։ Ղեւ. ե. 14։ (10) Մաթ. թ. 22։ Մրկ. ե. 34։ ժ. 52։ Ղեւ. է. 50։ ը. 48։ ժը. 42։ (11) Սայր. 23։ (12) Հռով. ժգ. 17։ (13) Մաթ. թ. 15։ Յովհ. ժէ. 12։ (14) Մաթ. իդ. 23։ Մրկ. ժգ. 21։ Ղեւ. իա. 8։ (15) Մաթ. իդ. 27։ (16) Մրկ. ը. 31։ թ. 31։ ժ. 33։ Ղեւ. թ. 22։

26 Եւ ինչպէս որ Նոյի օրերումն էլաւ՝ էնպէս էլ Որդոյ մարդոյ օրերումն կըլինի[17] :

27 Ուտումէին՝ խմումէին՝ կին էին առնումՙ և մարդոյ էին գնումՙ մինչև էն օրն՝ որ Նոյ մտաւ տապանն . և ջրհեղեղն եկաւ և ամէնին կորցրուց :

28 Ինպէս էլ ինչպէս որ Ղովտի օրերումն էլաւ . ուտումէին , խըմումէին , գնումէին՝ ծախումէին , տնկումէին՝ շինումէին[18] :

29 Եւ էն օրումն՝ որ Ղովտ Սոդոմից դուրս եկաւ՝ կրակ և ծծումբ (ծուխ-ծուբ) թափվեցաւ երկընքիցն և ամէնին կորցրուց[19] :

30 Հենց էն կերպովն էլ կըլինի էն օրումն՝ որ Որդին մարդոյ կըյայտնըվի[20] :

31 Ին օրումն՝ նա որ կըտրի վերայ լինի և իրան բաներն տան մէջն՝ թող վեր չըգայ , որ նորանց առնէ[21] . և ով որ յանդումն լինի՝ էնպէս էլ թող յետ չըդառնայ :

32 Ընդքներդ բերէք Ղովտի կնոն[22] :

33 Ով որ կրկամենայ իրան անձըն ապրեցնել՝ կկորցնէ նորան . և ով որ կկորցնէ , կապրեցնէ նորան[23] :

34 Ըսումըմ ձեզ . Ին գիշերումն եթէ երկու հոգի մին մահճի (խէօշէկի) մէջ լինին՝ մինն կառնըվի և մէկէն կրթողվի[24] :

35 Եւ եթէ երկու հոգի մինտեղ աղալըղ վերայ լինին՝ մինն կառնըվի և մէկէն կրթողվի . և եթէ երկու հոգի յանդումն լինին՝ մինն կառնըվի և մէկէն կրթողվի :

36 Պատասխան տուին՝ և նորան ասացին . Տէր՝ որտեղ (պիտի լինի)[25] :

37 Եւ նա ասաց նորանց . Որտեղ որ մարմին կայ , արծիւներն էլ էնտեղ կըհաւաքվին :

ԳԼՈՒԽ ԺՈՂ

3 Հատ աշխատացնող որբևէրի կնկան , և փարիսեցոյ և մաքսաւորի պատմութիւնն : 15 Նրբխանչերին Քրիստոսի բերլիքն : 18 Հաւիտենական կեանքն կամեցող և Քրիստոսի ետևէն գնալոյ համար իրան հարստութենից արգելված իշխանն : 28 Քրիստոսի համար ամէն բաներըն քցողի վարձքն : 31 Քրիստոս իրան մանկ առաջուց ցույց կըտայ : 35 Մին կույր մարդոյ աչքերն կըբանայ :

1 Ին առակ էլ ասաց նորանց՝ նրա վերայ թէ պէտք է նորանց՝ որ ամէն ժամանակ աղօթք անեն և չըձանձրանան[1] :

2 Ըսաց . Ին դատաւոր կար մին քաղաքի մէջ , որ Աստուածծանից չէր վախենում և մարդկանցից էլ չէր ամչում :

3 Եւ մին որբևէրի էլ կար էն քաղաքումն , նորա մօտ էր գալիս և ասում , թէ Իրաւունք արա ինձ իմ հակառակ ոսոխիցս :

4 Եւ նա շատ ժամանակ չէր կամենում . նրանից ետև իրան մտքումն ասաց . Թէև և Աստուածծանից չեմ վախենում և մարդկանցից չեմ ամչում ,

5 Այց որովհետև էս որբևէրիս

(17) Ննդ . է : Մտթ . իդ . 37 : (18) Ննդ . ժթ : (19) Ննդ . ժթ . 16 . 24 : (20) ը Թես . ա . 7 : (21) Մտթ . իդ . 17 : Մրկ . ժգ . 15 : (22) Ննդ . ժթ . 26 : (23) Մտթ . ժ . 29 : ժզ . 25 : Մրկ . ը . 35 : Ղուկ . թ . 24 : Յովհ . ժբ . 25 : (24) Մտթ . իդ . 40 , 41 : ա Թես . դ . 17 : (25) Յոբ . լթ . 30 : Մտթ . իդ . 28 : (1) Ղուկ . ժա . 5 : իա . 36 : Հռովմ . ժբ . 12 : Կէս . ը . 18 : Կող . դ . 2 : ա Թես . ե . 17 :

աշխատացնումէ ինձ՝ իրաւունք կա-
նեմ նորան՝ որ չը'գայ աղաչելով
խպառ ձանձրացնէ ինձ[2] :

6 Եւ Տէրն ասաց · Լսեցէք թէ
անիրաւ դատաւորն ինչ էր ասում :

7 Այլ Աստուած միթէ իրան
ծառաներին համար վրէժ չի՞ խընդ-
րիլ , որ ցերեկ և գիշեր աղաղա-
կումեն դէպի նա[3] · և մենակ նո-
րանց համա՞ր երկայնամիտ կրլինի :

8 Ասում եմ ձեզ՝ թէ
շուտով վրէժխնդրութիւն կանէ
նորանց համար[4] · բայց Որդին մար-
դոյ երբոր կրգայ՝ միթէ հաւատք
կրգտնի՞ երկրի վերայ :

9 Ա՛յն քանի մարդկանց էլ՝ որ
իրանց մտքերումն պարծենումէին՝
իբր թէ արդար են՝ և ուրիշներին
ոչ ինչ էին համարում՝ էս առա-
կըս ասաց[5] :

10 Երկու մարդ վեր էլան տա-
ճարն որ աղօթք անեն · մինն փա-
րիսեցի և մեկելն մաքսաւոր (հա-
յո-ւյն) :

11 Փարիսեցին ջոկ կանգնած էր
և առանձին էս աղօթքըս էր ա-
նում[6] · Ա՛մ Աստուած , գոհանու-
մեմ քեզանից՝ որ ես ուրիշ մարդ-
կանց պէս չեմ՝ յափշտակողների ,
և անիրաւների , և շնացօղների ,
կամ թէ էս մաքսաւորիս պէս[7] :

12 Այլ շաբաթումն երկու ան-
գամ պաս եմ պահում՝ և իմ ա-
մէն ապրանքներիցս տասանորդ եմ
տալիս :

13 Եւ մաքսաւորն հեռու կանգ-
նած էր՝ և իրան աչքերըն էլ չէր
կամենում դէպի երկինքն բարձրա-
ցընել · բայց իրան կուրծքըն (պօ-
չըն) թակումէր և ասում · Աստ-
ուած՝ քաւիր ինձ մեղաւորիս :

14 Ասումեմ ձեզ՝ թէ այս արդա-
րացած գնաց իրան տունըն քան-
թէ նա · ինչու որ՝ ամեն ով որ
իրան անձըն բարձրացնումէ՝ կը-
խոնարհվի , և ով որ իրան անձըն
խոնարհացնումէ՝ կրբարձրանայ[8] :

15 Երեխաներ էլ բերումէին նո-
րա մօտ՝ որ նորանց մօտենայ[9] · ա-
շակերտներն երբոր տեսին , սաս-
տումէին նորանց :

16 Այլ Յիսուս նորանց իրան
մօտ կանչեց , և ասաց · Թոյլ
տուէք էդ երեխաներիդ՝ որ ինձ
մօտ գան , և մի արգելէք դո-
րանց · ինչու որ՝ էդպէսիներին է
Աստուծոյ արքայութիւնն[10] :

17 Ճշմարիտըն ասումեմ ձեզ ·
թէ ով որ Աստուծոյ արքայութիւ-
նըն չընդունի ինչպէս երեխայ՝ նա
չի՛ մտնիլ նորա մէջ[11] :

18 Եւ մի իշխան՝ հարցրուց նո-
րան և ասաց · Վարի՛ վարդապետ՝
ի՞նչ գործեմ , որ յաւիտենական
կեանքըն ժառանգեմ[12] :

19 Յիսուս նորան ասաց · Ինչու
ես ինձ բարի ասում · ոչ ով բարի
չը'կայ՝ բայց միայն մինն Աստուած :

20 Պատուիրանքներըն գիտումես ·
Մի՛ շնար , Մի՛ սպաներ , Մի՛ գո-
ղանար , Մի՛ սուտ վկայեր[13] , Պատ-
ուիր քո հօրըդ , և մօրըդ[14] :

21 Եւ նա ասաց · Էդ ամենըդ
իմ երեխայութենիցն պահեցի :

22 Յիսուս երբոր էս լսեց՝ նորան
ասաց · Ա՛յն բան էլ պակաս է քեզ ·
ամեն ինչ՝ որ ունիս , ծախիր և աղ-
քատներին տուր , և գանձ (խոչ-

(2) Ղ—ժ · ժա · 8 : (3) Յայտ · ղ · 10 : (4) Ես · ժ · 37 : բ Պետր · գ · 8 , 9 :
(5) Ղ—ժ · ժ · 29 : ժղ · 15 : (6) Սաղ · ճէ · 2 : (7) Ւսայ · ս · 15 : ծը · 2 : Յայտ ·
գ · 17 : (8) Ես · իբ · 29 : Սաղ · իդ · 12 : Ղ—ժ · ժգ · 11 : Յակ · գ · 6 : ա
Պետր · ե · 5 , 6 : (9) Սաղ · ժթ · 13 : Սաբ · ժ · 13 : (10) ա Կորնթ · ժգ · 20 ·
ա Պետր · բ · 2 : (11) Սաբ · ժ · 15 : (12) Սաղ · ժթ · 16 : Սաբ · ժ · 17 : (13)
Ես · ի · 12—16 : բ Օրին · ե · 16—20 : Հռովմ · ժգ · 9 : (14) Ելից · ղ · 2 :
Կող · գ · 20 :

նայ) կունենաս երկնքում, և իմ եւս եկ[15]։

23 Ա՛յս երբոր էս լսեց՝ տրտմեցաւ. ինչու որ՝ շատ հարուստ էր։

24 Յիսուս երբոր նորան տըրտմած տեսաւ, ասաց. Որքա՜ն ապրանք ունին՝ ի՞նչպէս դժուարութեամբ կրմտնեն Աստուծոյ արքայութիւնն[16]։

25 Աւելի հեշտ է որ ուղտն ասեղի ծակով անցկենայ, քան թէ հարուստն Աստուծոյ արքայութիւնն մտնէ։

26 Եւ նորանք որ լսեցին՝ ասուեցին. Ուրեմն կարէ ապրիլ։

27 Եւ նա ասաց. Ինչ բաներն որ անկարելի են մարդկանց մօտ՝ կարելի են Աստուծոյ մօտ[17]։

28 Եւ Պետրոս ասաց. Ահա մենք մեր ամէն բաներըն թողինք և քո եւեդ եկինք[18]։

29 Եւ նա ասաց նորանց. Ա՛մէն մարիտն ասումեմ ձեզ, թէ Ոչ ոք չ'կայ՝ որ տըները կամ ծնօղները կամ եղբարները կամ կինը կամ որդիքը թողից Աստուծոյ արքայութեան համար[19],

30 Որ շատ աւելի չառնէ էս ժամանակումս և էն աշխարհումն որ գալու է՝ յաւիտենական կեանքըն ժառանգէ[20]։

31 Եւ էն տասներկուսին առանձին առաւ և նորանց ասաց[21]. Ահա վեր ենք ելնում Երուսաղէմ. և ամէն բաներն որ մարգարէների ձեռովն Որդոյ մարդոյ համար գրված են, կըկատարվին[22]։

32 Ինչու որ՝ Հեթանոսների ձեռքն կրմատնվի և ծաղր կըլինի[23]։

33 Եւ կրծեծեն և կրսպանեն նորան. և երեք օրումն յարութիւն կառնէ։

34 Եւ նորանք ոչ ինչ չիմացան էն բաներից՝ բայց խօսքն ծածկըված էր նորանցից՝ և ասած բաները չէին գիտում[24]։

35 Եւ երբոր նա Երիքովին մատենում[25], մին կոյր ճանապարհի վերայ նստած էր՝ մուրացական։

36 Երբոր ժողովրդի անցկենալըն լսեց, հարցնում՝ թէ ինչ ի՞նէ է։

37 Եւ պատմեցին նորան՝ թէ Յիսուս Նազովրեցին անց է կենում։

38 Աղաղակեց և ասաց. Յիսուս որդի Դաւթի՝ ինձ ողորմեա։

39 Եւ նորանք՝ որ առաջ էին գնում, սաստումէին նորան՝ որ լուռ կենայ. և նա էլ աւելի աղաղակումէր. Որդի Դաւթի՝ ինձ ողորմեա։

40 Յիսուս կանգնեց և հրամայեց՝ որ նորան իրան մօտ բերեն. և երբոր իրան մօտ եկաւ՝ հարցրուց նորան և ասաց։

41 Ի՞նչ ես ուզում դու որ անեմ քեզ. և նա ասաց. Տէր՝ որ իմ աչքերս բացվին և տեսնեմ։

42 Եւ Յիսուս ասաց նորան. Նայիր, քո հաւատքդ ապրեցրուց քեզ[26]։

43 Եւ շուտով տեսաւ, և նորա ետևէն գնումէր՝ և Աստուծոյն փառաւորումէր[27]. և ամէն ժողովուրդն՝ որ տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս Աստուծոյն։

(15) Մատթ. գ. 19, 20։ ժթ. 21։ ա Տիմ. գ. 19։ (16) Ա՜ռաք. ժա. 28։ Մատթ. ժթ. 23։ Մարկ. ժ. 23։ (17) Երեմ. լբ. 17։ Ա՜ռաք. ը. 6։ Մատթ. ժթ. 26։ Ղուկ. ա. 37։ (18) Մատթ. ժթ. 27։ (19) բ Օրին. լգ. 9։ (20) Հոբ. խբ. 10։ (21) Մատթ. ժզ. 21։ ժէ. 22։ ի. 17։ Մարկ. ժ. 32։ (22) Սաղ. խբ. Եսայ. ծգ։ (23) Մատթ. խէ. 2։ Ղուկ. ի. 1։ Յովհ. ժը. 28։ Գործ. գ. 13։ (24) Մարկ. թ. 32։ Ղուկ. բ. 50։ թ. 45։ Յովհ. ժ. 6։ ժը. 16։ (25) Մատթ. ի. 29։ Մարկ. ժ. 46։ (26) Ղուկ. ժէ. 19։ (27) Ղուկ. է. 26։ Գործ. գ. 21։ ժա. 18։

ՂԻ· ԺԹ

2 Օաքէոս մաքսաւորն : 11 Անանիայի առակն : 28 Երիստոսի քուրակին հետած չար-թութիւնով Երուսաղէմ մտնելը · 41 Վաղաքին վերայ կլալ · 45 Ծախողներին և գնողներին տաճարից դուրս կրհանէ · 47 Իւր ամէն օր էն տեղ կրսովորցնէ · քահանայապետներն և կարգացողներն ուզումին որ նորան կորցնեն՝ բայց ժողովրդից վախենումին :

1 Եւ մտաւ Երիքովի միջովն անց էր կենում :
2 Եւ ահա մին մարդ անունն Օաքէոս կոչված · և նա մաքսաւորների (հետևողների) գլխաւորն էր , և ինքն էր հարուստ :
3 Եւ ուզումէր որ տեսնէ՝ թէ ո՛վ է Յիսուսն , և մարդկանց բազմութեան պատճառովն չէր կարում · ինչու որ հասակովն կարճ էր :
4 Եւ առաջ վազեց և վեր էլաւ մին ժանտաթզի ծառ՝ որ տեսնէ նորան · ինչու որ (Յիսուս) հենց էնտեղովն պէտք էր անցկենայ :
5 Երբոր էն տեղն եկաւ՝ Յիսուս վեր նայեց և նորան ասաց · Օաքէ շուտ արա էդ տեղիցդ վեր եկ , ինչու որ՝ պէտք է ինձ՝ որ էս օր քո տանդ վերը գամ :
6 Նա վռազելով վեր եկաւ և ուրախութեանով ընդունեց նորան :
7 Ամէնքն երբոր տեսին , տըրտընջումէին և ասում · թէ Ո՛ւ-դաւոր մարդոյ մօտ մտաւ հանգիստ առնելոյ համար[1] :
8 Օաքէոսն եկաւ կանգնեց և Տէրին ասաց · Տէր՝ ահա իմ ապրանքների կէսըն աղքատներին կըտամ · և եթէ մինըն զրկեցի[2] չորս տակ կրվըճարեմ[3] (նորան) :
9 Եւ Յիսուս նորան ասաց · Էս օր փրկութիւն էլաւ էս տանս · ինչու որ՝ սա էլ[4] Աբրահամու որդի է[5] :
10 Պատճառն որ՝ Որդին մարդոյ եկաւ , որ մանգայ և ապրեցնէ կորածին[6] :
11 Եւ դեռ որ նորանք էս բաները լսումէին՝ մին առակ աւելացրուց և ասաց , իրան Երուսաղէմին մտնենալոյ համար , և նորանց կարծելոյ համար՝ թէ Աստուծոյ արքայութիւնն շուտով պիտի յայտնվի[7] :
12 Ասաց · Ո՛րին մեծազգի մարդ գնաց հեռու աշխարհ , որ թագաւորութիւն առնէ իրան համար և յետ դառնայ[8] :
13 Եւ իրան ծառաներին կանչեց , տասն մինաս տուաւ նորանց , և ասաց նորանց · Էդ բանացրէք մինչև որ գամ :
14 Եւ նորա քաղաքացիները , նորան ատումէին · նորա ետևէն պատգամաւորներ ուղարկեցին և ասացին · Թէ Չենք ուզում որ դա թագաւորէ մեզ վերայ[9] :
15 Եւ էլաւ՝ որ նա թագաւորութիւնըն առաւ՝ յետ դարձաւ · և էն ծառաներին՝ որ արծաթըն նորանց էր տուել , կանչեց , որ գիտենայ , թէ ով ինչ շահվեցաւ :
16 Առաջինն եկաւ և ասաց · Տէր քո մինագ տասն մինաս (շահ) արաւ :
17 Եւ նորան ասաց · Աշխի՛ւ և բարի ծառայ՝ որովհետև էդ քիչ

(1) Մարկ · թ · 11 : Ղուկ · ե · 30 : (2) Ղուկ · գ · 14 : (3) Նէհ · իբ · 1 : ա Թագ · ժբ · 3 : բ Թագ · ժբ · 6 : (4) Ա՛ռակ · դ · 11 , 12 · 16 : Գաղ · գ · 7 : (5) Ղուկ · ժգ · 16 : (6) Մարկ · ը · 6 : ժե · 24 : ժբ · 11 : (7) Գործ · ա · 6 : (8) Մարկ · իե · 14 : Մատ · ժգ · 34 : (9) Հովհ · ա · 11 :

բանումդ Հաւատարիմ էլար՝ Թող տան քաղաքի վերայ իշխանութիւն ունենաս[10] :

18 Երկրորդն եկաւ՝ և ասաց . Տէր մնասդ հինգ մնաս (չաՀ) արաւ :

19 Տէրն էլ ասաց . Թող դու էլ հինգ քաղաքի վերայ լինիս :

20 Մ՚եկէլն էլ եկաւ և ասաց . Տէր ահա քո մնասդ՝ որ վարշամակի (մանրամայլ) մէջ պատած պահումի :

21 Վ ախենումի քեզանից . ինչու որ՝ դու մին քարասիրտ մարդ ես . վեր ես առնում էն՝ որ չդրիր՝ և ընձումես էն՝ որ չսերմեցիր[11] :

22 Եւ ասաց Նորան . Տէր բանիդ քեզ կդատեմ , անհաւատ ծառայ[12] . դու գիտումիր՝ որ ես մին քարասիրտ մարդ եմ[13] , վեր եմ առնում էն՝ որ չդրի , և հընձումեմ՝ որտեղ որ չսերմեցի :

23 Էլ ինչու իմ արծաթըս տակ փոխողներին (սոռոֆնէրին) չտուր , որ ես գայի շահով չետ առնէի :

24 Եւ ծառաներին ասաց . Ա՚ռէք դորանից էն մնասըն , և տարէք տուէք Նորան՝ որ տասն մնասըն ունի :

25 Եւ Նորան ասացին . Տէր . (նա) տասն մնաս ունի :

26 Ա՚սումիմ ձեզ , թէ Ա՚մէնին որ ունի , կըաըվի . և նա որ չունի , Նորանից էն էլ , որ ունի , վեր կառնըվի[14] :

27 Ա՚յց էն իմ թշնամիներիս՝ որ չէին ուզում , որ ես Նորանց վերայ թագաւորիմ , էստեղ բերէք և սպանեցէք իմ առաջիս :

28 Եւ երբոր էս ասաց , առաջ գնաց , որ վեր էլնի Ե՚րուսաղէմ[15] :

29 Եւ էլաւ երբոր Ե՚լեթփագէին և Ե՚լեթանեային մօտեցաւ էն սարին մօտ՝ որ Ձիթենեաց սար է կոչվում՝ իրան աշակերտներիցն երկուսը ուղարկեց և ասաց[16] .

30 Գնացէք դուք էդ գիւղդ , որ մեր դիմացն է . և երբոր մտնէք Նորա մէջ՝ մին քուռակ կըգտնէք կապված , որ Նորա վերայ իսկի մին ժամանակ մարդ չը՚նստեց . Նորան արձակեցէք և բերէք :

31 Եւ թէ որ մինն հարցնէ ձեզ՝ թէ Ինչու էք արձակում՝ Նորան էսպես ասացէք՝ թէ Տէրին պէտք է սա :

32 Երբոր գնացին Նորանք որ ուղարկվեցան , էնպէս գտին ինչպէս որ Նորանց ասաց , քուռակըն կանգնած էր :

33 Եւ երբոր քուռակըն արձակումին՝ Նորա տէրերն ասացին Նորանց . Ինչու էք արձակում էդ քուռակըդ :

34 Եւ Նորանք ասացին . Տէրին պէտք է սա :

35 Եւ Նորան բերին Յիսուսի մօտ . և շորեր քցեցին Նորա վերայ , և Յիսուսին հեծացրին[17] :

36 Եւ դեռ որ գնումէր՝ իրանց շորերըն փռումին ճանապարհին վերայ[18] :

37 Եւ երբոր դեռ որ մօտեցաւ որ Ձիթենեաց սարիցն դէպի ցածն վեր գնայ՝ աշակերտների ամէն բազմութիւնն ուրախութենով բըսկսեց օրհնութիւն ասել Ա՚ստուծոյն բարձր ձայնով՝ էն ամէն էլած զորութիւնների համար որ տեսել էին :

38 Եւ ասումին . Օրհնեալ է դա՝ որ գալիս է թագաւոր Տէրի

(10) Մատթ . իե . 21 : Ղուկ . ԺԹ . 10 : (11) Մատթ . իե . 24 : (12) Բ Թես . ա . 16 : Յոբ . ԺԸ . 6 : Մատթ . ԺԲ . 37 : (13) Մատթ . իե . 26 : (14) Մատթ . Ժգ . 12 : իե . 29 : Մարկ . գ . 25 : Ղուկ . Ը . 18 : (15) Մարկ . Ժ . 32 : (16) Մատթ . իա . 1 : Մարկ . Ժա . 1 : (17) Բ Թագ . Թ . 13 : Մատթ . իա . 7 : Մարկ . Ժա . 7 : Յովհ . ԺԲ . 14 : (18) Մատթ . իա . 8 :

անունովն[19] · խաղաղութիւն (լի-
նի՛) երկնքումն և փառք ՚ի բար-
ձունս[20] ։

39 Եւ փարիսեցիներիցն մին քա-
նիսն , որ ժողովուրդների մէջն է-
ին , նորան ասացին · Վարդա-
պե՛տ՝ սաստի՛ր քո աշակերտներիդ ։
40 Պատասխան տուաւ և ասաց՝
Ըսուսմէ ձեզ՝ որ եթէ սորանք էլ
լուռ կենան՝ էդ քարերդ կաղաղա-
կեն[21] ։

41 Եւ երբոր մօտեցաւ , տեսաւ
քաղաքին՝ և լաց էլաւ նորա վե-
րայ և ասաց[22] ·

42 Եթէ գոնեա էս օրս գիտենա-
յիր քո խաղաղութիւնըդ · բայց
հիմիկ ծածկըվեցաւ քո երեսիդ ։
43 Ընչու որ՝ օրեր կըգան քեզ
վերայ , և քո թշնամիներդ քո չորս
կողմովդ պատնէշ (ՏԷԼԷԼԻՈ) կըպա-
տեն և քեզ կըպաշարեն և ամէն
կողմից քեզ կընեղացնեն[23] ։
44 Եւ հիմնայատակ կանեն քեզ
և քո որդիքըդ էլ քո միջումդ[24] ·
և իսկի քար քարի վերայ չեն թո-
ղիլ քո միջումդ[25] · ինչու որ՝ չը-
ճանաչեցիր (Ը.ԱՓՈՓԻՈՅ) քեզ տես
գալոց ժամանակըն[26] ։

45 Եւ մտաւ տաճարն և սկսեց
դուրս հանել աղաւնի ծախօղներին
և գնօղներին , և ըստակ փոխօղ-
ների տախտակներըն ցրվեց[27] ։
46 Եւ նորանց ասաց · Կրված է՝
Թէ իմ տունս աղօթքի տուն պի-
տի լինի[28] , և դուք դորան աւա-
զակներուն բուն արիք[29] ։
47 Եւ ամէն օր սովորցնումէր նո-
րանց տաճարի միջումն · բայց քա-
հանայապետներն և կարդացօղնե-
րըն և ժողովըրդի գլխաւորներն
խնդրումէին , որ կորցնեն նորան[30] ։
48 Եւ չէին գտնում՝ թէ ինչ ա-
նեն · պատճառն որ՝ ամէն ժողո-
վուրդն նորանից կախված էր որ
(նորա խօսքըն) լսէ ։

ԿՂ · Ի

1 Ի բրիստոս Յօհաննէս Մկրտիչի համար մին բան հարցնելով քահանայապետներին և կարդա-
ցօղներին իրան իշխանութիւնն որ տեղից լինելն կըպահէ ։ 9 Ը.յդոյ առակն ։ 20 Պայսերին
հարկ տալոյ վերայ ։ 27 Ի բրիստոս սադուկեցիներին կըհամոզէ , նորանք մեռելների յարու-
թիւնն կուրանան ։ 41 Ի բրիստոս ինչպէս Դաւթի որդին է ։ 45 Իրան աշակերտներին
կըպատուիրէ որ կարդացօղների աջած բաներից զգոյշ լինին ։

1 Եւ էլաւ որ էն օրերից մի-
նումն՝ դեռ քանի որ տաճարու-
մըն սովորցնումէր ժողովըրդին և
աւետարանումէր , քահանայապետ-
ներն և կարդացօղներն ծերերին
հետ վերայ հասին[1] ։
2 Եւ նորան ասացին · Ը.սա մեզ ,
դու ի՞նչ իշխանութեննով ես ա-
նում էդ[2] , կամ ո՞վ է նա , որ էդ
իշխանութիւնըդ տուաւ քեզ ։

(19) Սաղ · ԽՄԸ · 26 ։ Դուտ · ժգ · 35 ։ (20) Դուտ · բ · 14 ։ Ելթս · բ · 14 ։ (21)
Ե.ՍԲ · բ · 11 ։ (22) Հեսի · ժա · 35 ։ (23) Ղուայ · ԻԹ · 3 , 4 ։ Երեմ · զ · 3 · 6 ։
Դուտ · իա · 20 ։ (24) գ Թագ · թ · 7 , 8 ։ Ամո · գ · 12 ։ (25) Մաթ · իդ · 2 ։
Մարկ · ժգ · 2 ։ Դուտ · իա · 6 ։ (26) Դան · թ · 24 ։ Դուտ · ա · 68 · 78 ։ ա
Պետր · բ · 12 ։ (27) Մաթ · իա · 12 ։ Մարկ · ժա · 11 · 15 ։ Հովհ · բ · 14 , 15 ։
(28) Ղուայ · ծգ · 7 ։ (29) Երեմ · է · 11 ։ (30) Մարկ · ժ · 18 ։ Հովհ · է · 19 · ը ·
37 ։ (1) Մաթ · իա · 23 ։ (2) Գործ · դ · 7 · է · 27 ։

3 Պատասխան տուաւ և ասաց Նոքաւնց · Եսէլ ձեզանից մին բան կըՀարցնեմ , և ասացէք ինձ ։
4 Յովհաննէսի մկրտութիւնն երբ կընքիցն էր , թէ մարդկանցիցն ։
5 Եւ Նոքաւնք իրանց միջումն միտք արին և ասացին ·
6 Թէ որ ասենք , Երկնքիցն · կասէ · Պատ ինչու չը՛Հաւատացիք Նորան · և թէ որ ասենք՝ Մարդկանցիցն , ամէն Ժողովուրդն մեզ քարկոծ կանեն · ինչու որ՝ իրանց մտքումն Հաստատ դրել են Յովհաննէսին Համար՝ թէ (նա) մարգարէ է[3] ։
7 Եւ պատասխան տուին՝ չը՛գիտել , թէ որ տեղից է ։
8 Եւ Յիսուս Նորանց ասաց · Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ինչ իշխանութիւնով եմ անում էս ։
9 (Պատ) սկսեց էս առակս ասել Ժողովըրդին · Մի Մարդ այգի (Բաղ) տնկեց , և մշակներին տուաւ Նորան , և ինքն ճանապարհ գնաց շատ ժամանակ[4] ։
10 Եւ ժամանակն որ եկաւ՝ մին ծառայ ուղարկեց մշակներին մօտ , որ այգոյ (Բաղէ) պըտղիցն իրան տան · և մշակներն ծեծեցին Նորան և դատարկ յետ արձակեցին ։
11 Եւ Նրա վերայ մին ուրիշ ծառայ էլ ուղարկեց · և Նորան էլ ծեծեցին , թուքումուր տուին և դատարկ յետ ուղարկեցին ։
12 Եւ Նրա վերայ երրորդին էլ ուղարկեց · Նորանք Նորան էլ խոցեցին և դուրս Հանեցին ։
13 Պատ այգոյ տէրն ասաց · Ի՞նչ անեմ · իմ սիրելի որդիս կուղարկեմ՝ լինի թէ սորանից ամաչեն ։
14 Մշակներն երբոր Նորան տեսին՝ իրար մէտ խորՀուրդ արին և ասացին · Սա է ժառանգն · սպանենք սորան · որ ժառանգութիւնն մեզ լինի ։
15 Եւ այգուցն (Բաղէն) դուրս Հանեցին Նորան և սպանեցին · ապա այգոյ տէրն ի՞նչ պիտի անէ Նորանց ։
16 Ձէ՞ որ կըգայ և են մշակներըն կըկորցնէ և այգին ուրիշներին կըտայ , երբոր էս լսեցին՝ ասացին · Չլաե լինի ։
17 Եւ Նա մտիկ տուաւ Նորանց և ասաց · Պատ ի՞նչ է են որ գըրված է՝ թէ Քարն՝ որ շինողներն անարգեցին՝ Նա եղաւ անկիւնի գլուխ[5] ։
18 Պատն՝ ով որ էս քարիս վերայ ընկնի՝ կուիշըվի և ում վերայ որ (Նա) ընկնի՝ կըջարդէ Նորան[6] ։
19 Եւ կարգացողներն և քահանայապետներն Հենց էն ժամումն (սահաՀուշմ) ուզեցին , որ ձեռք ձգեն Նորա վերայ , և Ժողովըրդիցն վախեցան · ինչու որ՝ գիտացին որ՝ իրանց Համար ասաց էն առակըն ։
20 Եւ ապա սպասեցին և նենգաւոր մարդիք ուղարկեցին՝ որ կեղծաւորութիւնով իրանց անձներըն արդար երևացրին · որ խօսքով բռնեն Նորան՝ որ մատնեն Նորան դատաւորի տէրութեանն և իշխանութեանն[7] ։
21 Պատն Հարցրին և ասացին · Ա՛րդապետ՝ գիտենք , որ շիտակ ես խօսում և սովորցնում , և երեսպաշտութիւն չես անում · բայց ճշմարտութեամբ Պատոյ ճանապարհըն սովորցնում[8] ։
22 Պրժան է մեզ՝ որ կայսերին Հարկ տանք , թէ չէ ։
23 Եւ Նորանց չարութիւնն տեսնելով՝ ասաց Նորանց · (Ինչու էք փորձում ինձ ·)

(3) Մատ · ժգ · 5 ։ իա · 26 ։ Ղուկ · կ · 29 ։ (4) Մատ · իա · 33 ։ Մարկ · ժբ · 1 ։ (5) Սաղ · ճժբ · 22 ։ Մատ · իա · 42 ։ (6) Պետ · բ · 34 , 35 ։ Մատ · իա · 44 ։ (7) Մատ · իբ · 15 ։ (8) Մատ · իբ · 16 ։ Մարկ · ժբ · 14 ։

24 Այլ տուէք ինձ էն գահլեանն · և նորանք ցոյց տուին · և ասաց · Ո՞ւմ պատկերըն և գիրըն ունի (սա) · պատասխան տուին և ասացին · Կայսերին ։

25 Եւ նա ասաց նորանց · Ուրեմն գնացէք կայսերինըն կայսերին տուէք , և Աստուծունըն Աստուծոյ ։

26 Եւ չըկարացին խօսքերով բռնել նորան ժողովրդի առաջին · և նորա պատասխանին վերայ զարմացան և լուռ կացան ։

27 Սադուկեցիներից[9] որ հակառակումին թէ յարութիւն չըկայ[10] , մին քանիսն մօտ եկին և նորան հարցրին ·

28 Եւ ասացին · Վ արդապետ · Մ՝օսէսն գրեց մեզ[11] · Թէ որ մըրնի եղբայրն մեռնի , որ կին ունենայ և անորդի լինի , որ նորա եղբայրն էն կինըն առնէ , և իրան եղբօր համար զաւակ վերկացնէ ։

29 Այս՝ եօթն եղբայրք կային՝ և առաջինն կին առաւ և առանց զաւակի մեռաւ ։

30 Երկրորդն էլ նորան առաւ , և նա էլ առանց զաւակի մեռաւ ։

31 Երրորդն էլ նորան առաւ · Հնպէս հենց էն եօթն էլ , և որդի չըթողին ։

32 Եւ (ամենից ետև) էն կինն էլ մեռաւ ։

33 Այս յարութեան ժամանակումն նորանցից որին պիտի լինի կին · Ինչու որ՝ էն եօթն էլ կին առին նորան ։

34 Յիսուս պատասխան տուաւ նորանց և ասաց · Այս աշխարհքիս որդիքն կին են առնում և մարդոց են գնում ։

35 Բայց նորանք որ արժանի լինին էն աշխարհքին հասնելոյ և մեռելների միջից յարութիւն առնելոյ , ոչ կին կառնեն և ոչ մարդոյ կըգընան ։

36 Պատճառն որ՝ էլ չեն կարօղ մեռնիլ · ինչու որ՝ հրեշտակներին հաւասար են և Աստուծոյ որդիք[12] , նրահամար որ յարութեան որդիք են[13] ։

37 Բայց դրահամար թէ մեռելներն յարութիւն կառնեն՝ Մ՝օսէսն էլ մարգարէացաւ մոշի մօտն՝ ինչպէս որ Տէրին համար ասումէ՝ Աստուած Աբրահամու և Աստուած Սահակայ և Աստուած Յակօբայ[14] ։

38 Եւ Աստուած մեռելներին չէ՝ բայց կենդանիներին · ինչու որ՝ ամենքն կենդանի են նորան[15] ։

39 Կարդացօղներիցն մին քանիսն պատասխան տուին նորան և ասացին · Վ արդապետ՝ լաւ ասացիր ·

40 Եւ էլ իսկի մինն չէր համարձակվումմ՝ որ նորանից իսկի մին բան հարցնէ ։

41 Եւ նորանց էլ ասաց · Ինչպէս են ասում Քրիստոսի համար՝ թէ Դաւթի որդին է[16] ։

42 Եւ Դաւիթ ինքն Սաղմոս գրքումն ասումէ · Տէրն իմ Տէրին ասաց՝ թէ նմ աջ կողմն նստիր[17] ,

43 Մինչև որ քո թշնամիներըդ քո ոտացդ կոխելիք դնեմ ։

44 Այս՝ թէ որ Դաւիթն Տէր է կոչում նորան , ինչպէս նորա որդի կըլինի ։

45 Եւ ամեն ժողովրդի առաջին որ լսումէին՝ ասաց աշակերտներին[18] ։

46 Զգոյշ կացէք կարդացօղներից՝ որ լայն կապաններով կամենում մանգալ[19] , և սիրումեն բաց տե-

(9) Մարկ · իբ · 23 · Մատ · ժբ · 18 ։ (10) Գործ · իգ · 6 · 8 ։ (11) Բ Օրէն · իե · 5 ։ (12) ա Կորնթ · ժե · 42 · 49 · 52 ։ ա Յովհ · գ · 2 ։ (13) Հռոմ · բ · 23 ։ (14) Ելք · գ · 6 ։ (15) Հռոմ · զ · 10 , 11 ։ (16) Մարկ · իբ · 42 ։ Մատ · ժբ · 35 ։ (17) Սաղմ · ճժ · 1 ։ Գործ · բ · 34 ։ (18) Մարկ · իգ · 1 ։ Մատ · ժբ · 38 ։ (19) Մարկ · իգ · 5 ։

ղերանքումն բարև առնելըն[20], և Ժողովարանների մէջն առաջին աթոռներըն՝ և ընդիրքներումն վերևի տեղերըն ։

47 Որ որբևէրիների տներըն ուտումեն, և պատճառներով երկար աղօթք են անում. նորանք աւելի դատապարտութիւն կընդունին[21] ։

ԳԼ· ԻԸ

2 Ջրհեղեղ մին աղքատ որբևէրին կգովէ ։ 5 Տաճարի և նրուսաղէմի քանդվիլն ։ 25 Նէ վերջի օրից առաջ լինելոյ նշանները առաջուց կասէ ։ 34 Կըյտրդորէ որ արթուն կենան ընդդմարդոյ գալըն սպասելով ։

1 Ա՛ն մտիկ տուաւ, տեսաւ հարուստներին՝ որ իրանց տուրքըն դանձանակն էին քցում[1] ։

2 Ա՛յն որբևէրի աղքատ կին էլ տեսաւ՝ որ երկու լմայ քցեց հնտեղ ։

3 Եւ ասաց. Ա՛շմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ էն աղքատ որբևէրին ամէնից աւելի քցեց[2] ։

4 Ինչու որ՝ նորանք ամէնքն իրանց աւելցածներիցն քցեցին Աստուծոյ ընծաների մէջն, բայց նա իրան կարօտութենիցն իրան բոլոր կենաց ապրուստըն՝ որ ունէր՝ քըցեց ։

5 Եւ երբոր մին քանի մարդ ասում էին տաճարի համար՝ թէ Վառ. քեցիկ քարերով և աշտարակներով (Քառքէրով) զարդարված է, նա ասաց[3].

6 Այդ ամէնըդ որ տեսնումէք՝ օրեր կըգան՝ որ էդ տեղ քար քարի վերայ չի թողվիլ՝ որ չըքանդվի[4] ։

7 Հարցրին նորան և ասացին. Ա՛րդապետ՝ էդ երբ կըլինի, և ի՞նչ է նշանն՝ երբոր էդ պիտի լինի ։

8 Եւ նա ասաց. Զգոյշ կացէք՝ որ չըխաբվիք[5]. ինչու որ՝ շատ մարդիք կըգան իմ անունովս և կասեն՝ թէ Ես եմ. և ժամանակըն մօտեցաւ. նորանց ետևէն մի՛ գնաք ։

9 Եւ երբոր կռիւներ և խռովութիւններ կըլսէք՝ մի՛ շփոթվիք. ինչու որ՝ պէտք է, որ առաջ էն լինի, բայց դեռ շուտով վերջն չէ ։

10 Յն ժամանակն նորանց ասաց. Ազգ ազգի վերայ վեր կըկենայ և թագաւորութիւն թագաւորութեան վերայ[6] ։

11 Եւ մեծամեծ գետնաշարժութիւններ՝ և տեղ տեղ սովեր և սաստիկ մահեր (կըլինին). և երկնքիցն ահաւոր բաներ և մեծամեծ նշաններ կըլինին ։

12 Այլ էս բաներիցս առաջ իրանց ձեռներըն ձեզ վերայ կըձգեն և կըհալածեն[7]. (և) Ժողովարանների և բանտերի մէջ կըմատնեն[8], և կըտանեն դատաւորների և թագաւորների առաջին[9] իմ անունիս համար[10] ։

13 Եւ էն կըլինի ձեզ վկայութեան համար[11] ։

14 Ուրեմն ձեր սրտի մէջ դրէք՝

(20) Ղուկ. ժա. 43 ։ (21) Մարկ. իգ. 14 ։ (1) Մարկ. ժբ. 41 ։ (2) Բ Կորնթ. ը. 12 ։ (3) Մարկ. իդ. 1 ։ Մարկ. ժգ. 1։ (4) Ղուկ. ժթ. 44 ։ (5) Մարկ. իդ. 6 ։ Մարկ. ժգ. 5 ։ Ղեւտ. ե. 6 ։ Բ Թես. բ. 3 ։ (6) Մարկ. իդ. 7 ։ (7) Մարկ. ժգ. 9 ։ Յովան. բ. 10 ։ (8) Պորձ. դ. 3 ։ ե. 18 ։ ժբ. 4 ։ ժզ. 24 ։ (9) Պորձ. իե. 23 ։ (10) ա Պետր. բ. 13 ։ (11) Փիլիպ. ա. 28 ։ Բ Թես. ա. 5 ։

որ առաջուց միտք չանէք պատասխան տալոյ համար[12] :

15 Վասն զի որ՝ ես բերան և իմաստութիւն կըտամ ձեզ · որ ձեր ամէն հակառակողներն չեն կարենալ գէմ կենալ կամ պատասխան տալ նորան[13] :

16 Կըմատնըվիք էլ ծնօղներից և եղբարներից և ազգականներից և բարեկամներից[14] · և ձեզանից կըսպանեն[15] :

17 Եւ ամէնին ատելի կըլինիք իմ անունիս համար[16] :

18 Եւ ձեր գլխից մին մազ չի կորչիլ[17] :

19 Եւ ձեր համբերութեանովն ձեր հոգին կըշահէք :

20 Ասոյց երբոր կըտեսնէք թէ Երուսաղէմըն չորս կողմանն պատած է զօրքերով՝ էն ժամանակն գիտացէք թէ նորա քանդվիլն մօտիկ է[18] :

21 Էն ժամանակն նորանք՝ որ Հրէաստանումն են՝ թող սարերն փախչին, և նորանք՝ որ նորա միջումն են՝ թող դուրս քաշվին, և նորանք՝ որ նորա գաւառներումն են՝ թող չի մանեն նորա մէջն :

22 Վասն զի որ՝ էն (օրերն) վրէժ խնդրելոյ օրերն են՝ որ ամէն գրվածքներն կատարվին[19] :

23 Ասոյց էն օրերումն վայ կըլինի յղացածներին և ծիծաւորներին[20] · վասն զի որ՝ մեծ նեղութիւն կըլինի երկրիս վերայ, և (Աստուծոյ) բարկութիւնն էն ժողովըրդին վերայ :

24 Եւ սրի բերան կընկնին, և ամէն հեթանոսների մէջ գերի կըտանվին · և Երուսաղէմն հեթանոսներից կոխված կըլինի՝ մինչև որ հեթանոսների ժամանակներն կատարվին[21] :

25 Եւ նշաններ կըլինին, արեգակումն և լուսնումն և աստեղներումն, և երկրումս հեթանոսների սաստիկ ահ և վախ (կըլինի) ինչպէս ծովի և խռովութեան ձայներից[22] :

26 Որովհետև մարդկանց հոգիքն դուրս կըգան վախի համար և էն բաներին մոխիկ տալոյ համար՝ որ բոլոր աշխարհքի վերայ պիտի գան · վասն զի որ՝ երկնքի զօրութիւններն կըշարժվին[23] :

27 Եւ էն ժամանակն կըտեսնեն Որդին մարդոյ ամպերի վերայ եկած զօրութեանով և շատ փառքով[23] :

28 Եւ երբոր էս բաներս կըսկսեն լինել՝ վեր կալէք և բարձրացրէք ձեր գլխներըդ · վասն զի որ՝ ձեր փրկութիւնն մօտ է[25] :

29 Եւ նորանց մին առակ ասաց · Տեսէք թըզի ծառըն և ամէն ծառերըն[26] .

30 Երբոր իրանց պտուղըն երևացնումեն՝ տեսնումէք և նորանցից ճանաչումէք, թէ ամառն մօտ է :

31 Այնպէս էլ դուք՝ երբոր էս ամէն բաներըս էլած տեսնէք՝ գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնն մօտ է :

32 Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ այս պորտս չի անցկենալ, մինչև որ էս ամէն բաներս լինին :

33 Երկինքն և երկիրս անց կըկենան և իմ խօսքերս չեն անցկենալ[27] :

34 Ուգիշ կացէք անձներիդ՝ որ ձեր սրտերն չըծանրանան շատակերութեանով և արբեցութեանով և

(12) Մարկ · ժ · 19 : Մարկ · ժգ · 11 : Ղուկ · ժբ · 11 : (13) Ղուկ · ջ · 10 : (14) Միք · է · 6 : Մարկ · ժգ · 12 : (15) Ղուկ · է · 59 : ժբ · 2 : (16) Մարկ · ժ · 22 : (17) Մարկ · ժ · 30 : (18) Մարկ · իդ · 15 : Մարկ · ժգ · 14 : (19) Ղուկ · ի · 22 : 27 : Ովս · ժա · 1 : (20) Մարկ · իդ · 19 : (21) Ղուկ · ի · 27 : ժբ · 7 : Ղևտ · ժա · 25 : (22) Մարկ · իդ · 29 : Մարկ · ժգ · 24 : բ Պետր · գ · 10—12 : (23) Մարկ · իդ · 29 : (24) Մարկ · իդ · 30 : Հայտ · ա · 7 : ժգ · 14 : (25) Ղուկ · ը · 19 · 23 : (26) Մարկ · իդ · 32 : Մարկ · ժգ · 28 : (27) Մարկ · իդ · 35 :

աշխարհական հոգսերով , և էն օրն յանկարծ հասնէ ձեզ վերայ[28] ։
35 Ինչու որ՝ (հենց) որոգայթի (Ըռալովի) պես կըհասնէ էն ամէնին վերայ՝ որ բոլոր երկրի երեսին վերայ բնակված են[29] ։
36 Արթնեա՛ արթուն կացէ՛ք[30] , աՀէն ժամանակ աղօթք արէք[31] , որ արժանի լինիք ազատվիլ էն ամէն բաներից՝ որ պիտի լինին , և կանգնիլ Որդոյ մարդոյ առաջին[32] ։
37 Եւ ցերեկն տաճարում սովորցնում[33] և գիշերներն դուրս էր գալիս և կենում էն սարումն՝ որ Ձիթենեաց (սար) էր կոչվում[34] ։
38 Եւ ամէն ժողովուրդն առաւօտանց շուտով գնում էր տաճարն նորա մօտ՝ որ նորանից բան լսէ ։

ԿԱ · ԻՌ

2 Ընդհանրն Քրիստոսի համար խորհուրդ կանէն ։ 3 Սատանան Յուդայի մէջ կըմտնէ որ նորան մատնէ ։ 7 Առաքեալներն պասէքըն կըպատրաստեն ։ 19 Քրիստոս Սուրբ Ընթրիքըն կըհաստատէ ։ 21 Նոյնձուկ մատնօղն առաջուց կասէ ։ 24 Ուսկէզ առաքեալներն փառաբերութենից կըզգուշացնէ ։ 31 Իմաց կըտայ Պետրոսին որ իրան հաւատքըն պիտի չքաքնվի , 34 Բայց երեք անգամ նորան պիտի ուրանայ ։ 39 Քրիստոսի Ձիթենեաց սարին մին տեղ աղօթելն և արիւն քրտունքն թափելն , 47 Յուդան մին համբոյրով Քրիստոսին կըմատնէ ։ 50 Հինսուս Մաղքոսի ականջըն կըբժշկէ , 54 Պետրոսի երեք անգամ ուրանալն ։ 63 Քրիստոսի ծաղր լինելով անարգվելն , 66 Եւ իրան անձըն Ըստուծոյ Որդի լինել կըխոստովանի ։

1 Բաղարջակերաց տօնն մօտեցաւ՝ որ Պասքա էր կոչվում[1] ։
2 Եւ քահանայապետներն և կարգացօղներն խնդրում էին՝ թէ ինչպէս սպանեն նորան[2] · բայց ժողովրդից վախենում էին ։
3 Բայց Սատանան մտաւ Իսկարիովտացի ասած Յուդայի մէջ՝ որ տասներկուսի թուից էր[3] ։
4 Նա գնաց քահանայապետներին և կարգացօղներին և ժողովրդի իշխաններին հետ խօսք կապեց՝ որ նորան մատնէ նորանց ։
5 Եւ նորանք ուրախացան և խոստացան՝ որ արծաթ տան նորան[4] ։
6 Եւ նա խօսք տուաւ և յարմար ժամանակ էր ուզում՝ որ նորան ամբոխից (խռնկէն) հեռու գտած մատնէ նորանց ։
7 Բաղարջակերաց օրն եկաւ՝ որ օրէնք էր պասէքըն (զոհն) նորանում մորթել ։
8 Եւ Պետրոսին և Յոհաննէսին ուղարկեց և ասաց · Գնացէք պատրաստեցէք մեզ համար որ ուտենք ։
9 Եւ նորանք ասացին · Ո՞ւր տեղ ես կամենում՝ որ պատրաստենք ։
10 Եւ նորանց ասաց · Ահա երբոր քաղաքն կըմտնէք՝ մին մարդ կըպատահի ձեզ ջրի կուժը վերկացած · նորա հետևէն գնացէք էն տունն՝ որ նա կըմտնէ ·

(28) Ղուկ · ԻԱ · 13 : ա Մատ · Ե · 6 : ա Պետր · Դ · 7 : (29) ա Մատ · Ե · 2 : բ Պետր · Գ · 10 : Յայտ · Գ · 3 : ԺԷ · 15 : (30) Մարկ · Իգ · 42 : Իե · 13 : Մատ · ԺԴ · 33 : (31) Ղուկ · ԻԸ · 1 : (32) Սաղ · ա · 5 : Ղեվ · Ղ · 13 : (33) Ցուխ · Ը · 1 , 2 : (34) Ղուկ · ԻԸ · 39 : (1) Մարկ · Իգ · 2 : Մատ · ԺԶ · 1 : (2) Սաղ · Բ · 2 : Ցուխ · ԺԱ · 47 : Դուբ · Դ · 27 : (3) Մարկ · Իգ · 18 : Մատ · ԺԶ · 10 : Ցուխ · ԺԶ · 2 · 27 : (4) Ղեւտ · ԺԱ · 12 : (5) Մարկ · Իգ · 17 : Մատ · ԺԶ · 12 :

11 Եւ էն տան տիրոջն ասացէք· Վարդապետն ասում քեզ· Թէ Ի՞ր է իմ վէր գալոց տեղն՝ որ Նորանում պասէքն ուտեմ իմ աշակերտներիս հետ։

12 Եւ նա մին մեծ զարդարված վերնատուն ցոյց կըտայ ձեզ, և էն տեղ պատրաստեցէք։

13 Եւ գնացին էնպէս գտին՝ ինչպէս որ ասաց Նորանց· և պասէքըն պատրաստեցին։

14 Եւ ժամն (սահմանն)՝ որ էլաւ՝ սեղան նստեց[6]· և տասներկու առաքեալներն էլ Նորա հետ։

15 Եւ Նորանց ասաց· Յանկանալով ցանկացայ՝ որ էս պասէքըս ձեզ հետ ուտեմ՝ իմ չարչարվելուցն առաջ։

16 Ասյց ասումեմ ձեզ՝ Թէ սորանից էլ չեմ ուտիլ՝ մինչև որ կատարվի Աստուծոյ արքայութիւնումն[7]։

17 Եւ բաժակըն (Խասըն) առաւ՝ գոհացաւ և ասաց· Առէք դորան և ձեր միջումըն բաժանեցէք։

18 Աստումեմ ձեզ՝ Թէ Այրնից եւ տէ որթի (Խաղի) բերքից չեմ խըմիլ՝ մինչև որ՝ Աստուծոյ արքայութիւնն գայ[8]։

19 Եւ հաց առաւ, գոհացաւ, կտրեց և Նորաց տուաւ և ասաց[9]· Էս է իմ մարմինս՝ որ շատերին համար տըվվումէ։ Էս արէք· իմ յիշատակիս համար[10]։

20 Էնպէս էլ ընթրիքից եւտև բաժակըն (Խասըն) առաւ, և ասաց· Էս բաժակս Նոր ուխտ է պայման է իմ արիւնովս՝ որ ձեզ համար թափվումէ[11]։

21 Ասյց ահա՛ իմ մատնողի ձեռն ինձ հետ է սեղանումս է[12]։

22 Եւ Որդին մարդոյ կըգնայ[13] ինչպէս որ սահմանված է· բայց վայ էն մարդոյն՝ որ Նորա ձեռուվն կըմատնըվի[14]։

23 Եւ Նորանք սկսեցին հարցնել իրանց միջումն՝ Թէ իրանցից ո՞վ է նա՝ որ պիտի էն բանըն գործէ[15]։

24 Նորանց միջումն հակառակութիւն էլ էլաւ՝ Թէ իրանցից ո՞վ պիտի մեծ համարվի[16]։

25 Եւ նա ասաց Նորանց· Հզգերի թագաւորներն տիրապետումեն Նորանց վերայ, և Նորանք՝ որ իշխանութիւն են անում Նորանց վերայ՝ բարերար են կոչվում[17]։

26 Ասյց դուք էնպէս չէ[18]· այլ ով որ ձեր միջումն մեծ է՝ Թող փոքրի պէս լինի, և առաջնորդն ծառայի պէս[19]։

27 Ո՞վ է մեծ, սեղան նստողն[20], Թէ ծառան· չէ՞ որ սեղան նստողն· բայց ես՝ ձեր միջումն ծառայի պէս եմ[21]։

28 Եւ դուք էք, որ միշտ ինձ հետ եիք իմ փորձութիւններումս[22]։

29 Եւ ես Հաստատ խոստանում ձեզ արքայութիւնն՝ ինչպէս որ Հայրն էլ ինձ Հաստատ խոստացաւ[23]։

30 Որ ուտէք և խմէք իմ սեղանիս վերայ իմ արքայութենումն[24],

(6) Մարկ · իզ · 20 : Մատ · ժգ · 17 : (7) Ղուկ · ժգ · 15 : Գործ · ժ · 41 : Հայտ · ժթ · 9 : (8) Մարկ · իզ · 29 : Մատ · ժգ · 25 : (9) Մարկ · իզ · 26 : Մատ · ժգ · 22 : (10) ա Կորնթ · ժա · 24 : (11) ա Կորնթ · ժ · 16 : (12) Սաղմ · խա · 9 : Մարկ · իզ · 21 · 23 : Մատ · ժգ · 18 : Յովհ · ժգ · 21 · 26 : (13) Մարկ · իզ · 24 : (14) Գործ · բ · 23 : գ · 28 : (15) Մարկ · իզ · 22 : Յովհ · ժգ · 22 · 25 : (16) Մատ · թ · 34 : Ղուկ · թ · 46 : (17) Մարկ · ի · 25 : Մատ · ժ · 42 : (18) Մարկ · ի · 26 : ա Պետր · ե · 3 : (19) Ղուկ · թ · 48 : (20) Ղուկ · ժբ · 37 : (21) Մարկ · ի · 28 : Յովհ · ժգ · 13, 14 : Փիլիպ · բ · 7 : (22) Եբր · դ · 15 : (23) Մարկ · իգ · 47 : Ղուկ · ժբ · 32 : բ Կորնթ · ա · 7 : բ Տիմ · բ · 12 : (24) Մարկ · ը · 11 : Ղուկ · ժգ · 15 : Հայտ · ժթ · 9 :

և տասներկու ազգաց վերայ նրա տէր՝ Իսրայէլի տասներկու ցեղին դատաստան անելոյ համար[25] :

31 Եւ Տէրն ասաց · Միմն Մովսէս · ահա Սատանան ուզեց[26] որ ձեզ խաղալէ ցորենի պէս[27] ·

32 Այլ ես աղաչեցի քեզ համար՝ որ քո հաւատքդ չդադարի[28] · և դու մի ժամանակ դառնաս և քո եղբարներդ հաստատես[29] :

33 Եւ նա ասաց Նորան · Տէր · ես պատրաստ եմ՝ որ քեզ հետ հինգ բանտի (պընդանի) և մահի մէջ էլ գնամ :

34 Եւ նա ասաց Նորան · Ասում քեզ Պետրէ, որ ես օր դեռ որ հաւն չըխօսացել, դու երեք անգամ կուրանաս չըգիտել ինձ[30] :

35 Եւ Նորանց ասաց · Երբոր ուղարկեցի ձեզ առանց քսակի, և պարկի և կօշիկների՝ միթէ կարօտացաք մի բանի[31] :

36 Եւ Նորանք ասացին · Իսկի մի բանի էլ չէ · ապա ասաց · բայց հիմի ով որ քսակ ունի, թող վեր առնէ, հնպէս էլ պարկը, և ով որ չունի՝ թող իրան շորերըն ծախէ և իրան համար սուր գնէ :

37 Այլ ասում ձեզ, թէ ես էլ որ գրված է, պէտք է որ կատարվի ինձանում՝ թէ Անօրէնների հետ համարվեցաւ[32] · պատճառն որ՝ ինչ որ ինձ համար ասված է՝ գլուխ է եկած :

38 Եւ Նորանք ասացին · Տէր՝ ահա էստեղ երկու սուր կայ · և Նա ասաց Նորանց · Հաւական են :

39 Եւ դուրս էլաւ իրան սովորութեան պէս[33] գնաց Ձիթենեաց սարն՝ աշակերտներն էլ Նորա ետևէն գնացին[34] :

40 Երբոր հասաւ՝ Նորանց ասաց · Աղօթք արէք՝ որ փորձութեան մէջ չըմտնէք[35] :

41 Եւ ինքն Նորանցից հեռացաւ մի քար քցելոյ չափով՝ ծունր դրաւ՝ աղօթք էր անում[36] ·

42 Եւ ասում · Հայր՝ եթէ կամենում՝ էս բաժակը (Խաչն) անցկացրու ինձանից · միայն թէ՝ ոչ իմ կամքս՝ բայց քո (կամքդ) լինի[37] :

43 Եւ հրեշտակ երևեցաւ[38] Նորան երկնքից, և զօրացնում էր Նորան, և մեռնելոյ չափ խռովութեան մէջ էր, և աւելի ջանքով աղօթք էր անում[39] :

44 Եւ քրտունքն վազումէր Նորանից, ինչպէս արիւնի կաթիլք՝ որ կլոր կլոր երկրի վերայ էին թափվում :

45 Եւ աղօթքից վերկացաւ՝ եկաւ աշակերտներին մօտ, և Նորանց քնի մէջ գտաւ տրտմութեան պատճառովն ·

46 Եւ Նորանց ասաց · Ինչու էք քնում · վերկացէք աղօթք արէք[40], որ փորձութեան մէջ չըմտնէք :

47 Եւ դեռ որ խօսում՝ ահա ամբոխ (խաչէ), և Նա որ Յուդա էր կոչվում՝ էն տասներկուսիցն միննն՝ առաջնորդում Նորանց[41] · երբոր մօտեցաւ Յիսուսին՝ համբուրեց Նորան · պատճառն որ՝ էն

(25) Սամ · խթ · 14 : Սաղ · ժթ · 28 : ա Կորնթ · գ · 2 : Յայտ · գ · 21 : (26) ա Պետր · և · 8 : (27) Յովհ · թ · 9 : (28) Յովհ · ժէ · 9 · 11 · 15 : (29) Սամ · ծա · 13 : Յովհ · իա · 15 , 16 , 17 : (30) Սաղ · իգ · 34 : Սաբ · ժդ · 30 : Յովհ · ժգ · 38 : (31) Սաղ · ժ · 9 : Ղուկ · թ · 3 : ժ · 4 : (32) Եսայ · ծգ · 12 : Սաբ · ժե · 28 : (33) Սաղ · իգ · 36 : Սաբ · ժգ · 32 : Յովհ · ժը · 1 : (34) Ղուկ · իա · 37 : (35) Սաղ · գ · 13 : իգ · 41 : Սաբ · ժգ · 38 : ալայր · 46 : (36) Սաղ · իգ · 39 : Սաբ · ժգ · 35 : (37) Յովհ · ե · 30 : գ · 38 : (38) Սաղ · գ · 11 : (39) Յովհ · ժը · 27 : Եբր · ե · 7 : (40) ալէք · 40 : (41) Սաղ · իգ · 47 : Սաբ · ժգ · 43 : Յովհ · ժը · 3 ·

Նշան էր տուել Նորանց , թէ ո-
րին որ ես կը համբուրեմ՝ նա՛ է
Նորան բռնեցէք :
48 Յիսուս Նորան ասաց • Յու-
դա՛ համբուրելո՞վ ես Որդին մարդ-
ոյ մատնում :
49 Երբոր Նորանք՝ որ Նորա հե-
տըն էին՝ տեսին ինչ որ էլաւ՝ Նո-
րան ասացին • Տէր սրով զար-
կե՞նք Նորանց :
50 Եւ Նորանցից մինն քահանա-
յապետի ծառային զարկեց՝ և նո-
րա աջ ականջըն կտրեց[42] :
51 Յիսուս պատասխան տուաւ և
ասաց • Մո՛ղ տուէք մինչև էդ տե-
ղըդ • և ականջին մօտեցաւ և բը-
ժըշկեց Նորան :
52 Եւ իրան վերայ եկածներին՝
քահանայապետներին և տաճարի
իշխաններ ին և ծերերին ասաց[43] •
Ինչպէս մին աւազակի վերայ դուրս
եկիք սրերով և բհըրներով :
53 Ա՛մէնօր ձեզ հետ էի տաճա-
րումն • և ձեռներըն չը՛ձգեցիք
ինձ վերայ • Էս է ձեր ժամն (սա-
հմանն) և խաւարի իշխանու թիւնն[44] :
54 Եւ Նորան բռնեցին տարան և
մտցրին քահանայապետի տունն[45] •
և Պետրոս հեռուանց գնումէր Նո-
րա ետէն[46] :
55 Երբոր սրահի մէջն կրակ վա-
ռեցին և չորս կողմով նստեցին ,
Պետրոսն էլ նստեց Նորանց միջու-
մըն[47] :
56 Մ՛ին աղախին (պաբասաշ) տե-
սաւ Նորան՝ որ լուսոյ մօտ նըս-
տած էր • մտիկ տուաւ Նորան և
ասաց • Սա՛ էլ Նորանց հետ էր՝
որ Նորա հետն էին :
57 Ըայց Պետրոսն ուրացաւ և
ասաց • Մ՛վ կին • ես Նորան չե՛մ
գիտում :
58 Եւ մինքիչ յետոյ մին ուրիշն
տեսաւ Նորան և ասաց[48] • Դու՛ էլ
Նորանցից ես • և Պետրոսն ասաց •
Մ՛վ մարդ՝ ես Նորանցից չե՛մ :
59 Եւ երբոր մին ժամ (սահմ)
վերայ անցկացաւ՝ մին ուրիշն հա-
կառակուէլ և ասում , Շ՛իտակ ,
որ սա՛ էլ Նորա հետն էր[49] • ինչու
որ՝ Գալիլեացի է :
60 Պետրոսն ասաց • Մ՛վ մարդ՝
չեմ գիտում թէ դու ինչ ես խո-
սում՝ • և հենց էն ժամումն դեռ որ
նա էն ասումէր՝ հաւն խօսեց :
61 Տէրն դարձաւ և մտիկ տուաւ
Պետրոսին՝ և Պետրոսն միտքն քե-
րաւ Տէրի էն խօսքըն որ ասաց Նո-
րան[50] , թէ Հաւն դեռ չը խօսած ,
երեք անգամ կուրանաս՝ չըգիտել
ինձ[51] :
62 Եւ դուրս գնաց և դառն ար-
տասուո՛քով լաց էլաւ :
63 Եւ մարդի՛կ՝ որ Նորան պա-
հումէին՝ ծաղր էին անում Նորան և
զարկում[52] :
64 Նորա երեսըն ծածկումէին և
չարչարումէին , և Նորան հարցը-
նումէին և ասում • Մ՛արգարեացիր՝
ո՞վ է նա՝ որ քեզ զարկեց :
65 Եւ էլ ուրիշ շատ բաներ հայ-
հոյանքով խօսումէին Նորա դէմ :
66 Եւ երբոր առաւօտ էլաւ[53]՝
ժողովըրդի ծերերն և քահանայա-
պետներն և կարագօղներն ժողով-
վեցան[54] , և Նորան հանեցին տա-

(42) Մաթ • իզ • 51 : Մարկ • ժդ • 47 : Հովհ • ժը • 10 : (43) Մաթ • իզ • 55 : Մարկ • ժգ • 48 : (44) Հովհ • ժը • 27 : (45) Մաթ • իզ • 57 : (46) Մաթ • իզ • 58 : Հովհ • ժը • 15 : (47) Մաթ • իզ • 69 : Մարկ • ժդ • 66 : Հովհ • ժը • 17 , 18 : (48) Մաթ • իզ • 71 : Մարկ • ժդ • 69 : Հովհ • ժը • 25 : (49) Մաթ • իզ • 73 : Մարկ • ժդ • 70 : Հովհ • ժը • 26 : (50) Մաթ • իզ • 75 : Մարկ • ժդ • 72 : (51) Մաթ • իզ • 34 • 75 : Հովհ • ժգ • 38 : (52) Մաթ • իզ • 67 , 68 : Մարկ • ժդ • 65 : (53) Մաթ • իէ • 1 : (54) Գործ • դ • 26 : Գործ • իբ • 5 :

բան իրանց տիմանն՝ և ասացին[55] · Ճե որ դու Ի՛րիստոնն ես , ասա մեզ ։

67 Ի՛որանց ասաց · Ճե որ ասեմ ձեզ , հնպես էլ դուք չէք հաւատալ ։

68 Եւ թէ որ միւն բան հարցնեմ ձեզ , ինձ պատասխան չէք տալ կամ արձակիլ ։

69 Ի՛այց սրանիցն ետև Որդին մարդոյ՝ Աստուծոյ զօրութեան աջ կողմին կրնստի[56] ։

70 Եւ ամենքն ասացին · Ուրեմն դու ես Աստուծոյ Որդին · և նա ասաց Նորանց · Դուք էք ասում[57] , որ ես եմ ։

71 Եւ Նորանք ասացին · Ի՛նչ ինչ պէտք է մեզ վկայութիւն , ինչու որ՝ հենց մեք ինքն լսեցինք դորա բերանիցն[58] ։

ԳԼ · ԻԻ

1 Հիսուսն կըշարախօսեն Պիղատոսի առաջին և Հերովդէսի կուղարկվի , 8 Հերովդէս նորան կանարգէ և ծաղր կանէ ։ 12 Պիղատոս և Հերովդէս իրար հետ բարեկամ կըլինին ։ 13 Ժողովուրդն կամենումէ որ Բարաբբան արձակվի , 25 Պիղատոսն Հիսուսին Նորանց կամքն կըմատնէ որ Նորան խաչվի ։ 27 Ի՛րիստոս իրան վերայ կոծ և սուգ անող կանանց Երուսաղէմի քաղվիչն իմաց կըտայ · 34 Իրան թշնամիներին համար աղօթք կանէ ։ 39 Երկու չարագործներին խօսիլն որ իրան հետ խաչն էին հանում ։ 46 Հիսուսի մահն , 50 Եւ թաղվիլն ։

1 Ի՛այց Նորանց ամէն բազմութիւնն վերկացաւ՝ և Նորան տարան Պիղատոսի մօտ[1] ։

2 Եւ սկսեցին չարախօսութիւն անել Նորանից և ասել · Սորան գտինք՝ որ մեր ազգին ծռումէր[2] և արգելումէր կայսերին հարկ տալուցն[3] · և ինքն իրան համար ասումէր՝ թէ Ի՛րիստոսն թագաւոր է[4] ։

3 Ի՛այց Պիղատոս հարցրուց Նորան և ասաց · Դու ես Հրեից թագաւորն[5] · Նա պատասխան տուաւ Նորան և ասաց · Դու ասացիր ։

4 Պիղատոս ասաց քահանայապետներին և ժողովրդին · Ես մին չեմ գտնում էս մարդումս[6] ։

5 Եւ Նորանք սաստկացնումէին և ասում · Թէ Ժողովուրդներըն խռովացնումէ , և բոլոր Հրէաստանի մէջն սովորցնումէ՝ Գալիլեացըն սկսած մինչև հասելս ։

6 Ի՛այց Պիղատոս երբոր Գալիլեայի համար լսեց , հարցրուց՝ եթէ էդ մարդը Գալիլեացի՞ է ։

7 Եւ երբոր իմացաւ՝ թէ Հերովդէսի իշխանութենիցն է՝ տաւ Նիւ տուաւ Նորան Հերովդէսի մօտ · ինչու որ՝ նա էլ էն օրերումն Երուսաղէմումն էր ։

8 Եւ Հերովդէսն՝ երբոր Հիսուսին տեսաւ՝ շատ ուրախ էլաւ · ինչու որ՝ շատ ժամանակից ետև ցանկանումէր տեսնել Նորան[8] · պատճառն որ՝ շատ անգամ Նորա համար լսումէր , և սպասումէր՝ որ միւն Նշան տեսնէ Նորանից էլած[9] ։

9 Շատ խօսքերով հարցնումէր

(55) Մարկ · իզ · 63 · Մաթ · ժգ · 61 · (56) Մարկ · իզ · 64 · Մաթ · ժգ · 62 · Ղուկ · ա · 3 · բ · 1 · (57) Մարկ · իզ · 64 · Մաթ · ժգ · 62 · (58) Մարկ · իզ · 65 · Մաթ · ժգ · 63 · (1) Մարկ · իե · 2 · Մաթ · ժե · 1 · Հովհ · ժբ · 28 · (2) Ղուկ · ժե · 7 · (3) Մարկ · ժե · 27 · իբ · 21 · Մաթ · ժբ · 17 · (4) Հովհ · ժբ · 12 · (5) Մարկ · իե · 11 · ա Տիմ · զ · 13 · (6) ա Պետր · բ · 22 · (7) Ղուկ · գ · 1 · (8) Ղուկ · բ · 9 · (9) Մարկ · ժգ · 1 · Մաթ · չ · 14 ·

Նորան՝ և նա իսկի մին պատասխան չըտուաւ Նորան ։

10 Պահանայապետներն և կառավարիչներն կանգնած էին՝ և շատ սաստիկ չարախօսում էին Նորանից ։

11 Ելեազէան էլ իրան զինուորներին հետ անարգեց Նորան . և ծաղր անելով՝ մին սպիտակ շոր քրցեց Նորա վերայ , և յետ տանիլ տուաւ Պիղատոսի մօտ[10] ։

12 Եւ Պիղատոս և Ելեազէս բարեկամ էլան էն օրումն . ինչու որ՝ առաջ իրար հետ թշնամի էին[11] ։

13 Պիղատոս կանչեց քահանայապետներին և իշխաններին և ժողովրդին[12] ,

14 Եւ Նորանց ասաց . Դուք ինձ մօտ բերիք էս մարդը ինչպէս ժողովրդի մոլորացնող[13] . և ահա ձեր առաջին դատեցի՝ և խակի մեղաս չըգտի էս մարդումն էն բաներին համար , որ դուք չարախօսեցիք դորանից[14] ։

15 Եւ ոչ էլ Ելեազէան . ինչու որ՝ դորան տանիլ տուի Նորա մօտ . և ահա իսկի մեռնելոյ արժանի բան չի գործել դա ։

16 Կըխրատեմ դորան՝ և կարձակեմ[15] ։

17 Պատճառն որ՝ տօնի ժամանակումն հարկաւոր էր՝ որ մին մարդ արձակէ Նորանց համար[16] .

18 Եւ Նորանք ամէն բազմութիւնովն աղաղակումէին և ասում[17] . Դորան վեր առ՝ և Խարաբբային արձակիր մեզ համար .

19 Որ նա քաղաքումն էլած խռովութեան և մարդասպանութեան համար բանտն էր մտել ։

20 Պիղատոսն մին էլ սկսեց խօսիլ . ինչու որ՝ կամենումէր արձակել Յիսուսին ։

21 Եւ Նորանք մին էլ աղաղակումէին և ասում . Խաչ հանիր դորան ։

22 Եւ նա երեք անգամ ասաց Նորանց . Ինչ չար բան գործեց սա . խակի մեռնելոյ վնաս չըգտի սորանում . կըխրատեմ սորան և կարձակեմ ։

23 Եւ Նորանք բարձր ձայնով սիրտ էին էնում և խնդրումէին՝ որ խաչ հանէ Նորան . և Նորանց և քահանայապետների աղաղակելն զօրանում էր ։

24 Եւ Պիղատոս հաւանկացաւ՝ որ Նորանց խնդիրքըն անէ[18] ։

25 Խարաբբային արձակեց Նորանց համար՝ որ խռովութեան և մարդասպանութեան համար բանտի մէջ էր քցված , որ Նորանք էլ հետ էլնեն Նորան էին խնդրում . և Յիսուսին մատնեց Նորանց կամաց ։

26 Երբոր Նորան առին գնացին , մին Սիմոն Կիւրենացի (ասած) մարդ բանեցին՝ որ յանդից էր գալիս . (և) խաչըն Նորա վերայ դրին , որ Յիսուսի հետևէն բերէ[19] ։

27 Եւ շատ ժողովուրդ էր գնում Նորա հետևէն . և կանայք էլ՝ որ կոծ և սուգ էին անում Նորա վերայ ։

28 Յիսուս դարձաւ և Նորանց ասաց . Երուսաղէմի աղջիկներ՝ լաց մի լինիք ինձ վերայ՝ այլ լաց եղէք ձեր անձներիդ և ձեր որդոց վերայ ։

29 Ինչու որ՝ օրեր կըգան՝ որ Նորանցում կասեն՝ թէ երանի ա-

(10) Նաղ · ծգ · 3 · (11) Դուբ · գ · 27 · (12) Մաթ · իե · 23 · Մարկ · ժե · 14 · Ցովհ · ժը · 38 · ժթ · 4 · (13) Ա Յէր · 1 , 2 · (14) Ա Յէր · 4 · (15) Մաթ · իե · 26 · Ցովհ · ժթ · 1 · (16) Մաթ · իե · 15 · Մարկ · ժե · 6 · Ցովհ · ժը · 39 · (17) Դուբ · գ · 14 · (18) Մաթ · իե · 26 · Մարկ · ժե · 15 · Ցովհ · ժթ · 16 · (19) Մաթ · իե · 32 · Մարկ · ժե · 21 · Ցովհ · ժթ · 17 ·

մանրներին (չքնեքնեքին) և են փոքրերին, որ չըծուան, և են ծըծներին, որ չըծրծացրէն[20]։

30 Էն ժամանակն կսկսեն ասել սարերին՝ թէ Մեզ վերայ րնկէք, և րլուններին՝ թէ Ծածկեցէք մեզ[21]։

31 Էնչու որ՝ եթէ կանաչ փայտին էս են անում, ապա չորին ինչ կրլինի[22]։

32 Ուրիշ երկու չարագործ մարդիկ էլ տարան, որ նորա հետ սպանեն[23]։

33 Երբոր եկին հասան՝ որ Կոզգաթէն էր կոչվում, հասել խաչ հանեցին նորան. և են չարագործներն էլ, միր ած կողմն և մեկելը ձախ կողմն խաչեցին[24]։

34 Էն Հիսուս ասաց. Հայր՝ թողուլեն տուր դորանց[25]. քնչու որ՝ չեն գիտում թէ ինչ են անում[26]. և երբոր նորա չորերըն բաժանում էին, վիճակ քցեցին[27]։

35 Էն ժողովուրդն կանգնած նայում էին[28]. իշխաններն նորանց հետ ծաղր էին անում՝ և ասում[29]. ուրիշներին ապրեցրաց՝ թող իրան անձրն էլ ապրեցնէ՝ եթէ դա է Աստուած, Աստուծոյ ընտրված Որդին։

36 Օխնուարներն էլ ծաղր էին անում նորան. և մոտ գալով քացախ էին տալիս նորան.

37 Էն ասում՝ Եթէ որ դու Հրեից թագաւորն ես՝ փրկիր քո անձրդ։

38 Էն դիր էր գրված նորա վերայ, Հնարաւոն, Լատինէրէն և Հրեայերէն գրով, թէ Սա է Հրեից թագաւորն[30]։

39 Էն են կախված չարագործներից միրն Հայհոյում էր նորան և ասում՝ Քո որ դու ես Աստուած, փրկիր քո անձրդ և մեզ էլ[31]։

40 Միրա րնկերն պատասխան տալս ասաւ նորան՝ և ասաց. Չես վախենում դու Աստուածանից, որ դու հենց էն պատժի մէջն ես։

41 Էն մենք իրաւունքով, քնչու որ՝ մեր արած գործքերին արժանի հատուցումն ենք առնում. և սա իսկի անիրաւ բան չըգործեց։

42 Էն Հիսուսին ասաց. Տէր՝ Յիշիր՝ երբոր քո թագաւորութեանդ գաս։

43 Էն Հիսուս ասաց նորան. Ճշմարիտն ասում եմ քեզ, թէ Այս օր իմ հետ դրախտում կրլինես։

44 Էն վեց ժամին (սահմանին) դեմ էր. և ամէն երկրի վերայ խաւար եղաւ մինչև իննն ժամին[32]. արեգակն խաւարվեցաւ։

45 Էն տաճարի վարագուրն միջից պատռվեցաւ[33]։

46 Էն Հիսուս մեծ ձայնով կանչեց և ասաց. Հայր՝ իմ հոգիս քո ձեռքդ եմ աւանդում[34]. երբոր էս ասաց, հոգին հանեց[35]։

47 Էն Հարբերապետն որ տեսաւ ինչ որ էրաւ, Աստուծոյն փառք տալս ասաց. Ճշմարիտ որ էս մարդս արդար էր[36]։

48 Էն ամէն ժողովուրդներն, որ

(20) Ուաթ. իդ · 19 · Ղուղ. իա · 23 · (21) Հոսէ · բ · 10 · Ամբա · ժ · 8 · Հայտ · զ · 16 · ի · 6 · (22) Ըզեղ · ժա · 31 · Երեմ · իե · 29 · Երեմ · բ · 47 · իա · 3, 5 · ա Պետր · գ · 17 · (23) Հոսէ · ծգ · 12 · Ուաթ · իե · 38 · (24) Ուաթ · իե · 33 · Ուաթ · ժե · 22 · Հովհ · ժի · 17, 18 · (25) Ուաթ · ե · 44 · Պօղ · է · 60 · ա Պետր · գ · 12 · (26) Պօղ · գ · 17 · (27) Ուաթ · իե · 35 · Ուաթ · ժե · 24 · Հովհ · ժի · 23 · (28) Ուաղ · իը · 17 · Ղուղ · ժբ · 10 · (29) Ուաղ · իը · 7 · Ուաթ · իե · 39 · Ուաթ · ժե · 39 · (30) Ուաթ · իե · 37 · Ուաթ · ժե · 26 · Հովհ · ժի · 19 · (31) Ուաթ · իե · 44 · Ուաթ · ժե · 32 · (32) Ուաթ · իե · 45 · Ուաթ · ժե · 33 · (33) Ուաթ · իե · 51 · Ուաթ · ժե · 38 · (34) Ուաղ · կա · 5 · ա Պետր · բ · 23 · (35) Ուաթ · իե · 50 · Ուաթ · ժե · 37 · Հովհ · ժի · 30 · (36) Ուաթ · իե · 54 · Ուաթ · ժե · 39 ·

եկել էին և են եւթն բաներըն տես-
նուելին , կուրծքերըն (գոշերըն)
թնակուելին՝ և չետ էին դառնում ։
49 Այրթա ամէն ծանօթներն էլ
Հետուանից կանգնած էին , և են
կանայքն էլ , որ Գալիլեայիցն նո-
րա եաևէն էին եկել՝ և տեսնում-
էին են[37] ։
50 Եւ ահա մին մարդ՝ Յասէփ ա-
նունն՝ որ իշխան էր՝ բարեգործ և
արդար մարդ[38] ։
51 Սա չէր միաբանվել նորանց
խորհուրդին և գործերին հետ ։
Հրէանների Արիմաթիա քաղաքին
(էր)՝ որ հենց ինքն էլ սպասում էր
Աստուծոյ արքայութեանն[39] ։
52 Սա գնաց Պիղատոսի մօտ և
հիսուսի մարմինըն խընդրեց ։
53 Եւ վերքերաւ նորան ազնիւ
կտաւով պատեց , և քարից փորած
գերեզմանի մէջ դրաւ՝ որ էն տեղ
եւ իսկի մին մարդ դրած չէր[40] ։
54 Եւ օրն ուրբաթին էր՝ և շա-
բաթի էր լուսանում[41] ։
55 Եւ էն կանայքն՝ որ Գալիլեա-
յիցն նորա հետ էին եկել՝ գնում-
էին նորա եաևէն[42] , տեսին գերեզ-
մանըն և թէ ինչպես դրվաւ նորա
մարմինըն[43] ։
56 Գնեց դարձան՝ և խընկեր և
իւղեր պատրաստեցին[44] ։ և շաբաթի
օրումն հանդարտ մնացին պատու-
իրանքի պատճառուվն[45] ։

ԿԻ · ԻԹ

1 Երկու հրեշտակներ գերեզման գնացող կրկնակերին՝ Երիսասի յարութիւնըն իմաց կըտան ։
9 Տերանք էլ ես համբաւն ուրիշներին իմաց կըտան ։ 13 Երիսասս Էմմաուս գնացող
երկու աշակերտներին երեւում ։ 36 Նաև աշակերտներին երեւում և իրանց անհաւատու-
թիւնըն նորանց երեսներին կըխոսկ ։ 47 Տէրանց պատուէր կըտայ ։ 49 Սուրբ Հոգին
նորանց կըխոստանայ , 51 Եւ երկնքումն կըհամբառնայ ։

1 Շաբաթ մէկ շաբթի օրումն ա-
ռաւօտանց կանուխ եկին գերեզմա-
նըն՝ , և բերին են խընկերըն ,
որ պատրաստեցին[1] ։ և ուրիշ կա-
նայք էլ նորանց հետ ։
2 Եւ քարըն գերեզմանիցըն հե-
ռու թօթաւած գտին[2] ։
3 Եւ ներս մտին և Տէր Յի-
սուսի մարմինըն չգ'տին[3] ։
4 Եւ երբոր նրանցմոր շատ
զարմանում էին՝ ահա երկու մարդ
Հասին նորանց լուսաւոր շորերով[4] ։
5 Եւ երբ ահով լցան , և ե-
րանց երեսներըն գետի երկիրն խո-
նարհացրին , նորանց ասացին ։ Ին-
չու՞ էք կենդանին մեռելների մէջն
խնդրում[5] ։
6 Չատեղ չէ , բայց յարութիւն
առաւ ։ մտքներդ բերէք՝ ինչպես
որ (նա) ձեզ հետ խոսեց՝ երբոր
Գալիլեայումն էր[6] ։
7 Եւ ասում էր՝ թէ Պէտք է , որ

(37) Մատ · լը · 11 · Մարկ · իե · 55 · Մաթ · ժե · 50 · Հովհ · ժթ · 25 · (38) Մարկ · իե · 57 · Մաթ · ժե · 42 , 43 · Հովհ · ժթ · 38 · (39) Մաթ · ժե · 43 · Ղուկ · ը · 25 · 38 · (40) Մարկ · իե · 59 , 60 · Մաթ · ժե · 46 · (41) Մարկ · իե · 62 · (42) Ղուկ · ը · 2 · (43) Մաթ · ժե · 47 · (44) Մարկ · ժգ · 1 · (45) Ելք · ի · 10 · (1) Մարկ · իը · 1 · Մաթ · ժգ · 1 · Հովհ · ի · 1 · (2) Ղուկ · իգ · 56 · (3) Մարկ · իը · 2 · Մաթ · ժգ · 5 · (4) Ածոյ · 23 · Մաթ · ժգ · 5 · (5) Հովհ · ի · 42 · Գործ · ա · 10 · (6) Մարկ · ժգ · 21 · ժե · 23 · Մաթ · ը · 31 · իզ · 31 · Ղուկ · իզ · 22 ·

Արդին մարդոյ մեղաւոր մարդկանց ձեռքն մատնուիմ՝ և խաչ հանիմ՝ և երեք օրուընն յարութիւն առնէ։

8 Եւ նորա խօսքերըն յիշեցին՝։

9 Եւ գնա դարձան և եա ամէն բաներըս պատմեցին տասնումէրնին և ամէն ուրիշներին՝։

10 Եւ (նորանք) էին Մարիամ Մագդալենացին, և Յոհաննան, և Յակոբոյ Մարիամն, և նորանց հետ ուրիշներն էլ՝ որ էս բաներս պատմեցին առաքեալներին՝։

11 Եւ նորանց ասածներն առասպելական խօսքեր երևեցաւ նորանց առաջին՝ և չէրն հաւատում նորանց՝։

12 Պետրոս վերկացաւ վազից գերեզմանին, և նայելով տեսաւ՝ որ կտաւներն միայնակ կային՝։ և գնաց զարմանալով իրան մըտքումն, թէ ինչ էլաւ։

13 Եւ ահա նորանցից երկու հոգի հետց էն օրումն մին գիւղ էին գնում՝ որ մականն Եմմաուս (Յանկեցէլ) Երուսաղէմիցն հեռու էր, և նորա անունն Կլէոմէաս էր՝։

14 Եւ նորանք իրար հետ խօսումէն էն ամէն անցկացած բաներին համար։

ձեր ժամանակն միշտ պատրաստ
է[5] :

7 Աշխարհքն կարօղ չէ ձեզ ա-

(44) բ Կորնթ · գ · 6 : (45) Ղևտ · 36 : (46) Հովհ · բ · 24 , 25 : ժգ · 11 : (47) Ղևտ · 44 , 45 : (48) Ղևտ · 61 : (49) Դուրթ · ե · 20 : (50) Մատթ · ժգ · 16 : Մարկ · ը · 29 : Ղուկ · թ · 20 : Հովհ · ա · 49 : ժա · 27 : (51) Ղուկ · զ · 13 : (52) Հովհ · ժգ · 27 : (1) Հովհ · ե · 16 · 18 : (2) Ղևտ · իգ · 34 : (3) Մատթ · ժբ · 46 : Մարկ · գ · 31 : Դուրթ · ա · 14 : (4) Մարկ · գ · 21 : (5) Հովհ · բ · 4 : ը · 20 : Ղևտ · 8 · 30 :

տել[6] • բայց ինձ ատում է , ինչու որ՝ ես նորա համար վկայում եմ՝ թէ նո-
րա գործքերն չար են[7] :
8 Դուք գնացէք էն տօնն , ես չեմ գնում էն տօնն • ինչու որ՝ իմ
ժամանակս դեռ լրված չէ[8] :
9 Այս որ ասաց՝ ինքն մնաց էն տեղ Գալիլեայի մէջն :
10 Երբոր նորա եղբարներն գնա-
ցին , ապա ինքն էլ գնաց էն տօնն,
չէ թէ յայտնի , բայց իբր մին ծա-
ծուկ կերպով :
11 Եւ Հրէաներն խնդրում էին նո-
րան էն տօնում և ասում , թէ Ա-
ՀԱ ՊԻՏԻ ԼԻՆԻ[9] :
12 Եւ ժողովրդի միջումն տըր-
տընջունք կար նորա համար[10] • կէսն
ասում էին՝ թէ Նարի մարդ է[11] • ու-
րիշներն ասում էին՝ չէ , բայց ժողո-
վըրդին մոլորացնում :
13 Եւ ոչ ոք համարձակ չէր խո-
սում նորա վերայ , Հրէաների վա-
խին համար[12] :
14 Երբոր տօնն կէս էլաւ , Յի-
սուս վեր էլաւ տաճարն՝ և սո-
վորցնում էր :
15 Հրէաներն զարմանում էին և
ասում • Սա ի՞նչպէս է գիտում
գրքերն , որ իսկի սովորած չէ[13] :
16 Յիսուս պատասխան տուաւ նո-
րա՛ց և ասաց • Իմ վարդապե-
տութիւնս իմս չէ , այլ նորանն է՝
որ ինձ ուղարկեց[14] :
17 Եթէ որ մին կամենում է նորա
կամքն անել՝ նա կիմանայ իմ
վարդապետութեան համար , եթէ
Աստուածանից է , կամ եթէ ես
իմ անձնիցն եմ խօսում[15] :
18 Ով որ իրան անձնիցն է խո-
սում , իրան անձին փառքն է
խնդրում • բայց նա՝ որ նորա փառ-
քըն է խնդրում՝ որ ուղարկեց նո-
րան՝ նա ճշմարիտ է , և անիրաւ-
ութիւն չըկայ նորանում[16] :
19 Չէ՞ որ Մովսէսն տուաւ ձեզ
օրէնքըն , և ձեզանից ոչ ոք չի
կատարում օրէնքն[17] :
20 Ինչու էք ուզում ինձ սպա-
նել • ժողովուրդն պատասխան տը-
ուաւ և ասաց[18] • Դեւ կայ քեզ տա-
նում • ո՞վ է ուզում՝ որ քեզ ըս-
պանէ[19] :
21 Յիսուս պատասխան տուաւ
նորա՛ց և ասաց • Մի՛ն գործ գոր-
ծեցի , և ամէնքդ զարմացել էք :
22 Ա՛րդ համար Մովսէս ձեզ տը-
ուաւ թլփատութիւնն , չէ թէ որ
Մովսէսից էր[20] , բայց էն հին հա-
րանցից[21] • և շաբաթ օրումն մարդ
էք թլփատում :
23 Եթէ մարդ շաբաթ օ-
րումն թլփատութիւն է առնում ,
որ Մովսէսի օրէնքըն չըքանդվի ,
ինձ վերայ բարկացած էք՝ որ ես
ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օ-
րումն[22] :
24 Չէքի երևոյթով մի՛ դատէք ,
բայց շիտակ դատաստան արէք[23] :
25 Երուսաղէմացիներից մին քա-
նիսն ասում էին • Չէ՞ որ սա էն է որ
ուզում էին նորան սպանել :
26 Եւ ահա յայտնի խօսում է , և

(6) Յովհ • ժե • 19 : (7) Յովհ • է • 19 : (8) Յովհ • ը • 20 : Ա՚ԼԲ • 6 : (9) Յովհ •
ժա • 56 : (10) Յովհ • թ • 16 : ժ • 19 : (11) Մատթ • իա • 46 : Ղ՚ՈՒԿ • է • 16 •
Յովհ • ը • 14 : Ա՚ՄՍ • 40 : (12) Յովհ • թ • 22 : ժբ • 42 : ժԲ • 38 : (13) Մատթ •
ժգ • 54 : Մարկ • զ • 2 : Ղ՚ՈՒԿ • դ • 22 : Գործ • բ • 7 : (14) Յովհ • է • 11 : ը •
28 : ժբ • 49 : ժէ • 10 • 24 : (15) Յովհ • ը • 43 : (16) Յովհ • ե • 41 : ը • 50 :
(17) Նէե • խէ • 3 : բ Օրէն • լգ • 4 : Յովհ • ա • 17 : Գործ • է • 38 : (18) Մատթ •
ժբ • 14 : Մարկ • գ • 6 : Յովհ • ե • 16 • 18 : ժ • 31 • 39 : ժա • 53 : (19) Յովհ •
ը • 48 • 52 : ժ • 20 : (20) Ղ՚ՈՒԿ • ժբ • 3 : (21) ՆՈՒՄ • ժե • 10 : (22) Յովհ • ե •
8 , 9 • 16 : (23) բ Օրէն • ա • 16 , 17 : Ընտ • խգ • 23 : Յովհ • ը • 15 : Յով •
բ • 1 :

բան չեն ասում գորան · չըլինի՛ որ իշխանները էլ իմացան՝ որ սա է Քրիստոսն[24] :

27 Բայց սորան գիտումենք թէ որտեղից է[25] · և Քրիստոսն երբոր կըգայ , իսկի մինն չի գիտենալ թէ որտեղից է :

28 Յիսուս աղաղակեց տաճարումըն , սովորցնումեր և ասումեր · Թէ ինձ գիտումք , և թէ ինչ տեղից եմ եկել գիտումք[26] · և իմ անձնիցըս չեմ եկել[27] · բայց նա ճշմարիտ է՝ որ ինձ ուղարկեց[28] · որ դուք նորան չէք գիտում[29] :

29 Ես գիտումեմ նորան , ինչու որ՝ հենց նորանից եմ , և նա ուղարկեց ինձ[30] :

30 Եւ ուզումէին բռնել նորան[31] , և նորանց ձեռներիցն դուրս գնաց · և ոչ ով ձեռք չը ձգեց նորան[32] · ինչու որ՝ նորա ժամանակն դեռ չէր հասել :

31 Եւ ժողովըրդիցն շատ մարդիք հաւատացին նորան՝ և ասումէին · Քրիստոսն երբոր կըգայ՝ միթէ աւելի նշաններ կանէ , քան էն՝ որ սա անում[33] :

32 Եւ փարիսեցիներն լսեցին ժողովըրդի էն տրտունջն՝ որ նորա համար արել էին · և քահանայապետներն և փարիսեցիներն սպասաւորներ ուղարկեցին՝ որ բռնեն նորան :

33 Յիսուս ասաց · Մինչ քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ՝ և գնումեմ նորա մոտ , որ ուղարկեց ինձ[34] :

34 Ինձ մանը կըգաք և չէք գտնիլ , և որտեղ որ ես գնումեմ , դուք չէք կարող գալ[35] :

35 Հրեաներն իրար ասացին · Պա դա որ տեղ պիտի գնայ , որ մենք չըգտնենք գորան · միթէ հեթանոսների մէջ ցրված ժողովուրդների մէջն կըգնայ և հեթանոսներին կրսովորցնէ[36] :

36 Ի՞նչ է էն խօսքն՝ որ ասաց · Թէ ինձ մանը կըգաք՝ և չէք գտնիլ՝ և որտեղ որ ես գնումեմ , դուք չէք կարող գալ :

37 Վերջին մեծ օրումն Յիսուս կանգնած էր՝ աղաղակումէր և ասում[37] · Եթէ որ մինն ծարաւ է թող ինձ մօտ գայ , և խմի[38] :

38 Ինչպէս որ գիրքն էլ ասումէ՝ ինչպէս որ գիրքն էլ ասում[39] , Կրօրա փորիցն կենդանի ջրերի գետեր կըզղխին[40] :

39 Էս բանըս ասումէր էն Հոգոյն Հաւատումէին նորանք , որ հաւատումէին նորան[41] , ինչու որ՝ դեռ Հոգին չըլկար , որովհետև Յիսուս դեռ չէր փառաւորված[42] :

40 Ժողովըրդիցն մին քանիսն երբոր էս խօսքըս լսումէին , ասումէին · Ա՛ս ճշմարիտ մարգարէն է[43] :

41 Ուրիշներն ասումէին · Սա Քրիստոսն է[44] · բայց կէսն ասումէին՝ Միթէ Քրիստոսն Գալիլեացիցն կըգայ[45] :

42 Չէ՞ որ գրքերն ասումեն , թէ

(24) Վեր · 48 : (25) Մատ · ժգ · 55 · Մարկ · գ · 3 · Լուկ · գ · 22 : (26) Յովհ · ը · 14 : (27) Յովհ · է · 43 · ը · 42 : (28) Յովհ · է · 32 · ը · 26 : Հռոմ · գ · 4 : (29) Յովհ · ա · 18 · ը · 55 : (30) Մատ · ժա · 27 · Յովհ · ժ · 15 : (31) Մարկ · ժա · 18 · Լուկ · ժթ · 47 · ի · 19 · Գործ · 20 · ը · 37 : (32) Վեր · 44 · ը · 20 : (33) Մատ · ժբ · 23 · Յովհ · գ · 2 · ը · 30 : (34) Յովհ · ժգ · 33 · ժշ · 16 : (35) Ովս · է · 6 · Յովհ · ը · 21 · ժգ · 33 : (36) Նաում · ժա · 12 · Յով · ա · 1 : ա Պետր · ա · 1 : (37) Լուս · իգ · 36 : (38) Նաում · ծե · 1 · Յովհ · զ · 35 · Յայտ · իբ · 17 : (39) բ Օրին · ժը · 15 : (40) Ըսաւ · ժը · 4 : Նաում · ժբ · 3 · Իսա · 3 : Յովհ · գ · 14 : (41) Նաում · Իսա · 3 : Յովհէլ · բ · 28 : Յովհ · ժշ · 7 : Գործ · բ · 17 · 33 · 38 : (42) Յովհ · ժբ · 16 · ժշ · 7 : (43) բ Օրին · ժը · 15 · 18 : Յովհ · ա · 21 · զ · 14 : (44) Յովհ · գ · 42 · զ · 70 : (45) Վեր · 52 · Յովհ · ա · 46 :

Ք՛րիստոսն Դաւթի զաւակից[46] , և Ներեղէմ գիւղից պիտի գայ՝ որտեղ որ Դաւիթն էր :

43 Եւ տարաձայնութիւն էլաւ ժողովրդի միջումն նորա համար[48] :

44 Եւ նորանից մին քանիցն կամեցան բռնել նորան[49] • բայց իսկի մինն ձեռք չըձգեց նորա վերայ :

45 Եւ սպասաւորներն յետ եկին քահանայապետների և փարիսեցիների մօտն • և սորանք ասացին նոցա • Ի՞նչու համար նորան չըբերիք էստեղ :

46 Սպասաւորներն պատասխան տուին և ասացին • Իսկի մին ժամանակ մին մարդ (Հնպէս) չըխօսեց՝ ինչպէս որ էն մարդն[50] :

47 Փարիսեցիքն պատասխան տուին և ասացին • Մ՛իթէ դո՞ւք էլ մոլորվեցաք :

48 Մ՛իթէ իշխաններից կամ փարիսեցիներից մինն հաւատաց նորան[51] :

49 Բայց էն ռամիկ ժողովուրդն՝ որ օրէնքըն չի գիտում և անիծված են :

50 Նիկոդիմոսն՝ որ առաջ գիշերումն նորա մօտ էր եկել՝ և նորանցից մինն էր • ասաց նորանց[52] •

51 Մ՛իթէ մեր օրէնքն մին մարդ դատո՞ւմն՝ թէ որ առաջ բան չըլսեն նորանից կամ գիտենան՝ թէ ինչ է գործում[53] :

52 Պատասխան տուին նորան և ասացին • Մ՛իթէ դո՞ւ էլ Գալիլեացիցն ես , քննիր և տե՛ս՝ որ Գալիլեայից մարգարէ դուրս չի գալ[54] :

53 Եւ ամէն մէկն գնացին իրանց տեղն :

ԿԱ · Ը

1 Ք՛րիստոս ընութեան մէջ բռնըված կինն կազատէ : 12 Որքարողէ թէ ինքն աշխարհքի լոյսն է , և իրան անձին վկայութիւնն կըհաստատէ : 33 Ըբրահամով պարծանք անօղ Հրէաներին պատասխան կըտայ • 59 Ինքն իրան անձըն նորանց չարութենից կըպահէ :

1 Բայց Յիսուս գնաց Ձիթենեաց սարն :

2 Եւ առաւօտանց մին էլ եկաւ տաճարն , և ամէն ժողովուրդն նորա մօտ էր գալիս • և նստած սովորցնում էր նորանց :

3 Կարդացօղներն , քահանայապետներն և փարիսեցիներն մին կին բերին շնութեան մէջ բռնըված , և կանգնացրին նորա առաջին •

4 Նորան ասացին • Վ՛արդապետ՝ էս կինս որ բըռնել ենք՝ ինքն յայտնապէս շնացած է :

5 Եւ օրէնքումն Մ՛օսէս պատուիրեց մեզ , որ էսպէսիներն քարկոծվին • ապա՝ դու ի՞նչ ես ասում դորա համար[1] :

6 Այս բանըս նորան փորձելոյ համար էին ասում , որ չարախօսութիւն ունենան նորանից • բայց Յիսուս ցած նայելով մատովն գըրում էր երկրի վերայ :

7 Բայց երբոր զօռ արին հարցնելով նորան , վեր նայեց՝ և ա-

(46) Սամ · ծը · 11 : Երեմ · իգ · 5 : Մատ · ե · 2 : Մարկ · բ · 5 : Ղուկ · բ · 4 : (47) ա Թագ · ժգ · 1 · 4 : (48) Վէր · 12 : Հովհ · թ · 16 : ժ · 19 : (49) Վէր · 30 : (50) Մարկ · է · 29 : (51) Հովհ · ժբ · 42 : Դորթ · գ · 7 : ա Պետր · ա · 20 · 26 : բ · 8 : (52) Հովհ · գ · 2 : (53) բ Օրէն · ա · 17 : ժէ · 8 , Եսայ · ժթ · 15 : (54) Նաում · թ · 1 , 2 : Մատ · դ · 15 : Հովհ · ա · 46 : Վէր · 41 : (1) Ղուկ · է · 10 : բ Օրէն · իբ · 22 :

սաց · Ձեզանից ով որ անմեղ է՝ թող առաջ նա քար քցէ դորա վերայ[2] :

8 Եւ մինէլ ցած նայելով գըրուէր երկրի վերայ :

9 Եւ էս որ լսեցին մինն մընից ետև դուրս էին գնում , առաջինները իրեն սկսած մինչև յետիններն[3] · և Յիսուս մէնակ մնաց , և կինն կանգնած էր նորա առաջին :

10 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորան · Ա՛վ կին՝ ո՞ւր են , ո՛չ ով քեզ չըդատապարտեց :

11 Եւ ասաց · Չէ՛ Տէր · և Յիսուս ասաց · Ես էլ քեզ չեմ դատապարտում[4] · գնա՛ սրանից և ետև մեղք մի՛ գործեր[5] :

12 Յիսուս մինէլ խօսեց նորանց հետ և ասաց · Ես եմ աշխարհքի լոյսն[6] · ով որ իմ ետևէս գայ՝ նա խաւարով չի գնալ , բայց կենաց լոյսն կընդունի :

13 Փարիսեցիները ասացին նորան · Դու՛ քո անձիդ համար ես վկայում՝ և քո վկայութիւնդ ճշմարիտ չէ[7] :

14 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց · Թէև իմ՝ անձիս համար վկայումեմ՝ իմ վկայութիւնըս ճշմարիտ է · ինչու որ՝ գիտումեմ՝ թէ որտեղից եկի և որտեղ եմ գնում · բայց դուք չէք գիտում՝ թէ որ տեղից եմ գալիս , և որ տեղ եմ գնում[8] :

15 Դուք մարմնոյ վերայ նայելով էք դատաստան անում[9] · ես չեմ դատում ո՛չ մընին էլ[10] :

16 Թէև և դատեմ էլ մընին , իմ դատաստանս ճշմարիտ է · ինչու որ՝ (ես) մէնակ չեմ՝ բայց ես և Հայրն՝ որ ինձ ուղարկեց[11] :

17 Եւ հենց ձեր օրէնքումն էլ գրած է՝ թէ երկու մարդկանց վկայութիւնն ճշմարիտ է[12] :

18 Ես եմ՝ որ ինձ համար վկայումեմ , և Հայրն էլ՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ համար վկայումէ[13] :

19 Նսումէին նորա · Որ տեղ է քո Հայրդ · Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց · Ո՛չ ինձ էք գիտում՝ և ո՛չ իմ Հօրըս[14] · թէ որ ինձ գիտենայիք՝ լինի որ իմ Հօրըս էլ գիտենայիք[15] :

20 Այս բանըս Յիսուս գանձատան մէջն խօսեց նորանց հետ՝ երբոր տաճարումն սովորցնումէր[16] · և ո՛չ ով չըբռնեց նորան[17] · պատճառն որ՝ դեռ նորա ժամն (սահմանն) չէր հասել[18] :

21 Յիսուս մինէլ ասաց նորանց · Ես գնումեմ և ինձ ման կըգաք[19] · և ձեր մեղաց մէջն կըմեռնիք[20] · ինչու որ՝ որտեղ որ ես եմ գընում , դուք չէք կարող գալ :

22 Հրէաներն ասումէին · Մի՞թէ ինքն իրան կըսպանէ , որ ասումէ՝ թէ Որտեղ որ ես եմ գընում՝ դուք չէք կարող գալ :

23 Եւ ասաց նորանց · Դուք էս տեղից ներքևիցն էք , և ես էն տեղից վերևիցն եմ[21] · դուք էս աշխարհքիցս էք՝ ես չեմ էս աշխարհքիցս[22] :

24 Ասացի ձեզ՝ թէ Չեր

(2) Բ Օրէն · ԺԷ · 7 : Հռով · Բ · 1 : (3) Հռով · Բ · 22 : (4) Ղուկ · Թ · 56 : ԺԲ · 14 : Յովհ · Գ · 17 : (5) Յովհ · Ե · 14 : (6) Յովհ · Ա · 4 , 5 · 9 : Գ · 19 : Թ · 5 : ԺԲ · 35 , 36 · 46 : (7) Յովհ · Ե · 31 : (8) Յովհ · Է · 28 : Թ · 29 : (9) Յովհ · Է · 24 : (10) Յովհ · Գ · 17 : ԺԲ · 47 : ԺԸ · 36 : (11) Ա՛ստ · 29 : Յովհ · ԺԶ · 32 : (12) Բ Օրէն · ԺԷ · 6 : ԺԹ · 15 : Ա՛ստ · ԺԸ · 16 : Բ Կորն · Ժգ · 1 : Եբր · Ժ · 28 : (13) Յովհ · Ե · 37 : (14) Վստ · 55 : Յովհ · ԺԶ · 3 : (15) Յովհ · ԺԴ · 7 : (16) Մարկ · ԺԲ · 41 : (17) Յովհ · Է · 30 : (18) Յովհ · Է · 8 : (19) Յովհ · Է · 34 : ԺԳ · 33 : (20) Վստ · 24 : (21) Յովհ · Գ · 31 : (22) Յովհ · ԺԸ · 19 : ԺԹ · 16 : Ա Յովհ · Դ · 5 :

մեղաց մէջն կըմեռնիք[23] · ինչու որ՝ եթէ չըհաւատաք՝ թէ էն ես եմ՝ ձեր մեղաց մէջն կըմեռնիք[24] :

25 Ասացին նորան · Դու ով ես · Յիսուս ասաց նորանց · Առաջ էն՝ որ հետց ձեզ հետ խոսումեմ՝ :

26 Շատ բան ունիմ՝ ձեզ համար խոսիլ և դատել · բայց նա որ ինձ ուղարկեց՝ ճշմարիտ է[25] · և ես ինչ որ նորանից լսեցի՝ էն եմ խոսում աշխարհումի[26] :

27 Եւ չիմացան՝ թէ Հօր համար էր ասում նորանց :

28 Յիսուս ասաց նորանց · Երբոր Որդոյն մարդոյ կըբարձրացընէք[27]՝ էն ժամանակն կիմանաք՝ թէ ես եմ[28] · և իմ անձնից բան չեմ անում[29] · բայց ինչպէս իմ Հայրս սովորցրուց ինձ՝ էն եմ խոսում[30] :

29 Եւ նա՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ հետ[31] է · ինձ մենակ չըթողեց[32] , ինչու որ՝ ես միշտ էն բաներն եմ անում՝ , որ հաճոյ են նորան[33] :

30 Երբոր էս (բանըս) խոսեց՝ շատ մարդիք հաւատացին նորան[34] :

31 Եւ Յիսուս հաւատացեալ Հրէաներին ասաց · Թէ որ դուք իմ խոսքիս մէջ կենաք՝ իմ ճշմարիտ աշակերտներս էք :

32 Եւ ճշմարտութիւնն կըճանաչէք · և ճշմարտութիւնն կազատէ ձեզ[35] :

33 Պատասխան տուին նորան և ասացին · Մ՚ենք Աբրահամի զաւակ ենք , և իսկի մըրնին չըծառայեցինք[36] · էլ ինչպէս ես ասում՝ թէ Ազատ կըլինիք :

34 Յիսուս պատասխան տուաւ նորանց · Ճշմարիտն ճշմարիտն ասումեմ ձեզ՝ թէ Ամեն ով որ մեղք է անում՝ մեղքի ծառայ է[37] :

35 Եւ ծառան յաւիտեան չի կենում տան մէջն , բայց որդին յաւիտեան է կենում[38] :

36 Ուրեմն եթէ Որդին ազատէ ձեզ , ճշմարիտ ազատ կըլինիք[39] :

37 Գիտեմ որ Աբրահամի զաւակ էք · բայց ուզումէք՝ որ ինձ սպանէք[40] · ինչու որ՝ իմ խոսքիս համար տեղ չըկայ ձեզանում :

38 Ես ինչ որ տեսի իմ Հօր մօտն՝ էն եմ խոսում[41] · և դուք՝ ինչ որ ձեր հօրից լսեցիք՝ անումէք :

39 Պատասխան տուին նորան և ասացին · Մ՚եր Հայրն Աբրահամն է · Յիսուս նորանց ասաց[42] · Թէ որ Աբրահամի որդիք լինէիք՝ Աբրահամի գործքերըն կըգործէիք[43] :

40 Հայց հիմիկ ուզումէք որ ինձ սպանէք , մին մարդ՝ որ ճշմարտութիւնն խոսեցի ձեզ[44] · էն որ իմ Հօրից լսեցի · էդ բանըդ Աբրահամ չարաւ[45] :

41 Դուք ձեր հօր գործքերըն էք անում · ասացին նորան · Մ՚ենք պոռնկութենից չենք ծնված · մեր Հայրն մին է (այսինքն) Աստուած[46] :

42 Յիսուս նորանց ասաց · Թէ որ ձեր Հայրն Աստուած լինէր , ապա ինձ կըսիրէիք[47] · ինչու որ՝ ես Աստ-

(23) Վէր · 21 : (24) Մարկ · ժգ · 16 : (25) Յովհ · է · 28 : (26) Յովհ · գ · 32 : ժե · 15 : (27) Յովհ · գ · 14 : ժբ · 32 : (28) Հովհ · ա · 4 : (29) Յովհ · է · 19 · 30 : (30) Յովհ · գ · 11 : (31) Յովհ · ժգ · 10 , 11 : (32) Վէր · 16 : (33) Յովհ · գ · 34 : է · 30 : զ · 38 : (34) Յովհ · է · 31 : ժ · 42 : ժա · 45 : (35) Հովհ · զ · 14 · 18 · 22 : ը · 2 : Յով · ա · 25 : բ · 12 : (36) Ղևտ · իե · 42 : Մարկ · գ · 9 : Պայ · 39 : (37) Հովհ · զ · 16 · 20 : բ Պետր · բ · 19 : (38) Գաղ · գ · 30 : (39) Հովհ · ը · 2 : Գաղ · է · 1 : (40) Յովհ · է · 20 : Վայ · 40 : (41) Յովհ · գ · 32 : է · 19 · 30 : ժգ · 10 · 24 : (42) Մարկ · գ · 9 : Վէր · 33 : (43) Հովհ · բ · 28 : թ · 7 : Գաղ · գ · 7 · 29 : (44) Վէր · 26 : (45) Վէր · 37 : (46) Եսայ · կգ · 16 : կգ · 8 : Մաղ · ա · 6 : (47) ա Յովհ · է · 1 :

ուածանից դուրս էլայ և եկի[48] · և չէ թէ իմ անձինս եկի , բայց նա ուղարկեց ինձ[49] :

43 Ինչու՞ համար իմ խօսքըս չէք իմանում · Ընդհամառն որ դուք չէք կարօղ իմ բանըս լսել[50] :

44 Դուք Սատանայ Հօրից էք · և կամենումէք ձեր հօր ցանկութիւններն անել[51] · ինչու որ՝ նա սկզբից մարդասպան էր , և ճշմարտութեան մէջ չմնաց , պատճառն որ՝ ճշմարտութիւն չկայ նորա մէջ[52] · երբոր սուտ խօսի՝ հինից իւրան բաներից է խօսում · ինչու որ՝ սուտ է և նորա (ստութեան) հայր :

45 Բայց ես՝ որովհետև ճշմարտութիւնըն եմ խօսում , ինձ չէք հաւատում :

46 Ձեզանից ո՞վ է որ ինձ մեղաց համար յանդիմանէ · թէ որ ճշմարիտըն եմ ասում ձեզ՝ ինչու՞ չէք հաւատում ինձ :

47 Ով որ Աստուածանից է՝ Աստուծոյ բանին ականջ է դնում · և դուք նրա համար ականջ չէք դնում , որ Աստուածանից չէք[53] :

48 Հրէաներն պատասխան տուին և նորան ասացին · Ճի՞շ որ լաւ ենք ասում՝ թէ դու Սամարացի ես , և դև կայ քեզանում[54] :

49 Յիսուս պատասխան տուաւ և ասաց · Ինձանում դև չկայ՝ բայց իմ Հօրըս պատուումեմ , և դուք անարգումէք ինձ :

50 Ես իմ փառքըս չեմ խնդրում · կայ մինն՝ որ խնդրումէ և դատումէ[55] :

51 Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ · Թէ որ մինն իմ խօսքըս պահէ՝ նա մահ չի տեսնիլ յաւիտեան[56] :

52 Հրէաներն ասացին նորան · Հիմիկ իմացանք՝ որ դև կայ քեզանում · Աբրահամն մեռաւ և մարգարէներն[57] · և դու ասումես՝ Թէ որ մինն իմ խօսքըս պահէ՝ նա յաւիտեան մահ չի տեսնիլ :

53 Մի՞թէ դու մին աւելի մեծ ես քան մեր Հայրը Աբրահամն , որ մեռաւ և մարգարէներն մեռան · ապա դու քեզ ո՞վ ես անում :

54 Յիսուս պատասխան տուաւ · Թէ որ ես իմ անձըս փառաւորեմ , իմ փառքս ոչինչ է[58] · Հայրն է՛ որ ինձ փառաւորումէ , որ դուք նորա համար ասումէք՝ Թէ Ա՛ստուածն է[59] :

55 Եւ չէք ճանաչում նորան[60] · բայց ես գիտումեմ նորան · և Թէ որ ասեմ՝ Թէ չեմ գիտում նորան , ձեզ նման սուտ կըլինիմ · բայց գիտումեմ նորան , և նորա խօսքըն պահումեմ :

56 Աբրահամ ձեր Հայրն ցանկացաւ իմ օրըս տեսնել[61] , տեսաւ և ուրախ եղաւ[62] :

57 Հրէաներն նորան ասացին · Դու դեռ հիսուն տարեկան չես , և Աբրահամին ի՞նչ տեսիր :

58 Յիսուս նորանց ասաց · Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ · ես Աբրահամի լինելուցն էլ առաջ եմ[63] :

59 Հրէաներն քարեր վերկալան , որ նորա վերայ քցեն[64] · և Յիսուս մինկողմն քաշվեցաւ , և դուրս եղաւ գնաց տաճարիցն[65] :

(48) Յովհ · ժգ · 27 · ժէ · 8 · 25 · (49) Յովհ · է · 43 · է · 28 , 29 · (50) Յովհ · է · 17 · (51) Մատթ · ժգ · 38 · ա Յովհ · գ · 8 · (52) Յոհ · 6 · (53) Յովհ · ժ · 26 , 27 · ա Յովհ · գ · 6 · (54) Յովհ · է · 20 · ժ · 20 · վերայ · 52 · (55) Յովհ · է · 41 · է · 18 · (56) Յովհ · է · 24 · ժա · 26 · (57) Ովսէ · ա · 5 · Նբէ · ժա · 13 · (58) Յովհ · է · 31 · (59) Յովհ · է · 41 · ժգ · 14 · ժէ · 1 · Գործ · գ · 13 · (60) Յովհ · է · 28 , 29 · (61) Ղուկ · ժ · 24 · (62) Նբէ · ժա · 13 · (63) Նբ · գ · 14 · Նաում · թգ · 13 · Յովհ · ժէ · 5 · 24 · Ա՛ստ · ա · 17 · Յայտ · ա · 8 · (64) Յովհ · ժ · 31 · 39 · ժա · 8 · (65) Ղուկ · գ · 30 ·

ԳԼ • Ը

1 Ծնընդեան կոյրի աչքերին բացվիլը : 18 Նա փարիսեցոց տանուամն : 28 Ընթանք էս էլած բանի վերայ չատ կըբարկանան , և կոյրն ժողովարանին դուրս կըհանեն . 35 Յիսուսի էն կոյր մարդոյ ընդունելն , և նորա դաւանութիւնն : 39 Կրկիսոսի դատաստանով նոքանք՝ որ չեն տեսնում՝ կըտեսնեն , և նորանք՝ որ տեսնումն՝ կըկուրանան :

1 Եւ երբոր անց էր կենում՝ մին մարդ տեսաւ ծնընդեան կոյր :
2 Եւ նորա աշակերտներն հարցըրին նորան և ասացին . Ռաբբի՝ հըմ մեղքն է , սորանն՝ թէ իրան չօրն և մօրն , որ սա կոյր ծնվաւ[1] :
3 Յիսուս պատասխան տուաւ . Ո՛չ դորան մեզք է , և ո՛չ էլ իրան չօրն և ո՛չ մօրն . բայց որ Աստուծոյ գործքերն յայտնի լինին դորանում[2] :
4 Եւ ինձ պէտք է՝ որ նորա գործքերըն գործեմ , որ ինձ ուղարկեց դեռ քանի որ օր կայ . գիշերն գալիս է՝ որ էն ժամանակըն ո՛չ ով կարօղ չէ գործելի[3] :
5 Մինչի որ աշխարհքի միջումըն եմ՝ աշխարհքի լոյսն եմ[4] .
6 Երբոր էս ասաց՝ թքեց գետինըն՝ և էն թըքըցն ցեխ շինեց՝ և էն ցեխըն ծեփեց կուրի աչքերին վերայ[5] :
7 Եւ նորան ասց . Գնա՝ լուացց Սելովամայ աւազանումն[6] . որ թարգմանվումն՝ Ղրաքեալ . գնաց լուացաւ՝ եկաւ և տեսնումր[7] :
8 Նայց դրացիներն (հաճախանըքըն) և նորանք՝ որ առաջուց տեսել էին նորան՝ որ մուրացական էր , ասումին թէ՝ Ըէ որ սա էր՝ որ նստումր և մուրանումր . էսըն ասումին՝ թէ Նա է :
9 Ուրիշներն ասումին . Թէ Ըէ . բայց նորան նման է . և ինքն ասումր՝ թէ Ես եմ :
10 Նորան ասացին . Պա քո աչքերդ ի՞նչպես բաց էլան :
11 Նա պատասխան տուաւ . Մին մարդ՝ որ Յիսուս են ասում , ցեխ շինեց և իմ աչքերիս ծեփեց , և ինձ ասաց[8] . Գնա Սելոամ , և լուացց . գնացի լուացայ և տեսնումեմ :
12 Նորան ասացին . Նա որտեղ է . Նորանց ասաց . Չեմ գիտում :
13 Փարիսեցիների մօտ տարան նորան , որ մին ժամանակ կոյր էր :
14 Եւ շաբաթ օր էր՝ երբոր Յիսուս ցեխըն շինեց և կուրի աչքերն բաց արաւ :
15 Մինչև փարիսեցիներն էին հարցնում նորան՝ թէ ի՞նչպես ես տեսնում . և նա նորանց ասաց . Ցեխ դրաւ իմ աչքերիս վերայ և լուացայ և տեսնումեմ :
16 Էն փարիսեցիներից մինքանիսն ասացին . Էն մարդն Աստուածանից չէ՝ ինչու որ՝ շաբաթ օրերըն չի պահում . կէսն ասումին՝ Պա ի՞նչպես կարօղ է մեղաւոր մարդն նշաններ անել[9] . և տարաձայնութիւն էր նորանց միջումն[10] :
17 Մինչև ասացին կուրին . Դու ի՞նչ ես ասում նորա համար՝ որ քո աչքերդ բաց արաւ . և նա ասաց թէ Մարգարէ է[11] :

(1) Վայր • 34 : (2) Յովհ • ժա • 4 : (3) Յովհ • գ • 34 : Հ • 10 • 36 : ժա • 9 : ժբ • 35 : ժէ • 4 : (4) Յովհ • ա • 5 • 9 : գ • 19 : Ը • 12 : ժբ • 35 • 46 : (5) Մարկ • է • 33 : Ը • 23 : (6) Նեհեմ • գ • 15 : (7) Դ Թագ • է • 14 : (8) Զէբ • 6 , 7 : (9) Վայր • 33 : Յովհ • գ • 2 : (10) Յովհ • է • 12 • 43 • ժ • 19 : (11) Յովհ • գ • 19 : Ը • 14 :

18 Եւ Հրէաներն չէին հաւատում Նորա համար՝ թէ կոյր էր եւ բացվաւ · մինչև որ աչքը բացարածի ծնօղքըն կանչեցին ։

19 Նորանց հարցրին եւ ասացին · Սա է ձեր որդին՝ որ դուք Նորա համար ասումք՝ թէ կոյր ծնվաւ · ապա ինչպէս է տեսնում ։

20 Նորա ծնօղքն պատասխան տուին եւ ասացին · Գիտումենք որ սա մեր որդին է , եւ թէ կոյր ծնվաւ ·

21 Բայց թէ հիմիկ ինչպէս է տեսնում՝ էն չենք գիտում · կամ թէ ով բաց արաւ Նորա աչքերըն՝ մենք չենք գիտում · հենց իրան հարցրէք · ինքն չափն հասած է՝ թող հենց ինքն խօսի իւրան համար ։

22 Նորա ծնօղքն էս ասացին · պատճառն որ՝ Հրէաներից վախենումին[12] · ինչու որ՝ Հրէաները ուխտ էին դրել որ՝ եթէ մինըն Քրիստոս դաւանէ Նորան՝ ժողովարանից դուրս լինի[13] ։

23 Նորա համար Նորա ծնօղքն ասացին՝ թէ Ինքն չափն հասած է՝ հենց իրանից հարցրէք ։

24 Ինչէ երկրորդ անգամ կանչեցին էն մարդուն՝ որ կոյր էր , եւ Նորան ասացին · Աստուծոյ փառք տուր[14] · մենք գիտումենք՝ որ էն մարդն մեղաւոր է[15] ։

25 Եւ Նա ասաց · Եթէ մեղաւոր է՝ ես չեմ գիտում , միայն թէ էս եմ գիտում , որ կոյր էի՝ եւ հիմիկ տեսնումեմ ։

26 Ինչէ ասացին Նորան · Ո՞նչ արաւ քեզ · ինչպէս բաց արաւ քո աչքերըդ ։

27 Նորանց պատասխան տուաւ · Հիմիկ ձեզ ասացի եւ չլսեցիք · ինչու էք մինէլ կամենում լսել · միթէ դուք էլ կամենումք Նորան աշակերտ լինել ։

28 Նորանք հայհոյումիին Նորան եւ ասում · Դու լինիր Նորան աշակերտ · մենք Մօսէսի աշակերտներն ենք ։

29 Մենք գիտումենք՝ որ Աստուած Մօսէսի հետ խօսեց · սորան չենք գիտում՝ (թէ) ո՛ր տեղից է[16] ։

30 Էն մարդն պատասխան տուաւ եւ Նորանց ասաց · Հենց էդ է զարմանալի բան՝ որ դուք չէք գիտում՝ թէ սա ո՛ր տեղից է՝ եւ իմ աչքերըս բաց արաւ[17] ։

31 Հիտումենք՝ որ Աստուած մեղաւորներին չի լսում[18] · բայց թէ որ մինն աստուածապաշտ է՝ եւ նորա կամքըն կատարումէ՝ Նորան լսումէ ։

32 Հաւիտենից մին մարդ չլսեց՝ թէ մինն ծնըն[դ]ից կոյր ծնվածի աչքերըն բաց արաւ ։

33 Եթէ որ էն մարդն Աստուածանից չէր՝ (ապա) մին բան չէր կարող անել[19] ։

34 Պատասխան տուին՝ եւ Նորան ասացին · Դու իսպառ մեղքի մէջըն ես ծնվել , եւ դու վարդապետ ես լինում մեզ[20] · եւ դուրս հանեցին Նորան ։

35 Հիսուս լսեց՝ որ Նորան դուրս հանեցին , եւ երբոր Նորան գտաւ՝ Նորան ասաց · Դու հաւատումես Աստուծոյ Որդուն[21] ։

36 Նա պատասխան տուաւ եւ ասաց · Տէր՝ ո՛վ է Նա՝ որ հաւատամ Նորան ։

(12) Յովհ · է · 13 · ժբ · 42 · ժթ · 38 · Դործ · է · 13 · (13) Վայր · 34 · ժգ · 2 · (14) Յես · է · 19 · ա Թագ · գ · 5 · (15) Վեր · 16 · (16) Յովհ · ը · 14 · (17) Յովհ · գ · 10 · (18) Յոբ · իէ · 9 · լծ · 12 · Առակ · ժը · 41 · կգ · 18 · Ընտ · ա · 28 · ժե · 29 · իը · 9 · Եսայ · ա · 15 · Երեմ · ժա · 11 · ժդ · 12 · Եզեկ · ը · 18 · Միխ · գ · 4 · Զաք · է · 13 · (19) Վեր · 16 · (20) Վեր · 2 · (21) Մատթ · ժգ · 33 · ժզ · 16 · Մարկ · ա · 1 · Յովհ · ժ · 36 · ա Յովհ · է · 13 ·

37 Յիսուս նորան ասաց · Հենց տեսիր նորան · և հենց նա է , որ քեզ հետ խօսումէ[23] :
38 Եւ նա ասաց · Հաւատում եմ Տէր՝ և երկրպագութիւն արաւ նորան :
39 Եւ Յիսուս ասաց · (Ես) դատաստանի համար եկի ես աշխարհքս[20]՝ որ նորանք՝ որ չեն տեսնում՝ տեսնեն , և նորանք՝ որ տեսնումեն՝ կուրանան[24] :
40 Փարիսեցիներից մին քանիան՝ որ նորա հետ էին՝ լսեցին և նորան ասացին · Միթէ մենք էլ կոյր ենք[25] :
41 Յիսուս նորանց ասաց · Թէ որ կոյր լինէիք՝ մեղք չէիք ունենայ[26] · բայց հիմիկ ասումէք թէ՝ տեսնումենք , և (նրահամար) ձեր մեղքերն հաստատված են ձեզանում :

ԳԼ · Ժ

1 Քրիստոսն դուռ է և բարի հովիւ : 19 Իրան համար եղած կերպ կերպ կարծիքները ժողովուրդումն : 24 Իրան գործքերովն կըվկայէ թէ ինքն է Քրիստոսն Աստուծոյ Որդին · 39 Հրէաներից ձեռքից դուրս կըգնայ , 40 Եւ մինէլ Յորդանանի մէկէլ կողմն կըգնայ , և էն տեղ շատ մարդիկ իրան կըհաւատան :

1 Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ · Ով որ դրռնովն չի մտնում ոչխարների գաւիթն (պըտ նոն)՝ բայց ուրիշ կողմից է վեր էլնում էնտեղ՝ նա գող և աւազակ է :
2 Այց նա որ դրռնովն է մըտնում , ոչխարների հովիւն (չոպանն) է :
3 Դրռնապանն նորա համար բաց է անում · և ոչխարներն նորա ձայնին լսումեն , և իրան ոչխարներըն իրանց անունովն կանչումէ , և նորանց դուրս է հանում :
4 Եւ երբոր իրաններըն ամէնըն հանումէ , նորանց առաջին գնումէ , և ոչխարներն նորա ետևէն գնումեն · ինչուր՝ նորա ձայնըն ճանաչումեն :
5 Օտարի ետևէն չեն գնում · բայց նորանից փախչումեն , ինչու որ՝ օտարների ձայնըն չեն ճանաչում :
6 Էս առակըս Յիսուս ասաց նորանց · և նորանք չէին գիտում , թէ ինչ էր էն՝ որ խօսումէր նորանց հետ :
7 Ա՛յն էլ Յիսուս նորանց ասաց · Ա՛շմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ · Թէ ես եմ ոչխարների դուռն :
8 Ամէնքն՝ որ ինձանից առաջ եկին , գողեր և աւազակներ էին · ոչխարներն էլ նորանց չլսեցին :
9 Ես եմ դուռն · Թէ որ մինն ինձանով ներս մտնէ՝ նա կապրի · կըմտնէ և դուրս կըգայ , և արօտ կըգտնէ[1] :
10 Գողն չի գալիս , բայց միայն որ գողանայ և սպանէ և կորցնէ · ես եկի որ կեանք ունենան , և էլ աւելի ունենան :
11 Ես եմ բարի հովիւն (չոպանն) · բարի հովիւն իրան անձըն դնումէ ոչխարներին վերայ[2] :
12 Այց վարձկանն՝ որ հովիւ չէ , որ ոչխարներն իրանն չեն · երբոր տեսնումէ՝ որ գայլն գալիս է , ոչ

(22) Յովհ · դ · 26 : (23) Յովհ · ե · 22 · 27 : դ · 17 : ԺԲ · 47 : (24) Մատթ · ԺԳ · 13 : (25) Հռովմ · բ · 19 : (26) Յովհ · ԺԵ · 22 · 24 : (1) Յովհ · Ժգ · 6 : Եփես · բ · 18 : (2) Եսայ · խ · 11 : Եզեկ · լդ · 12 · 23 : լե · 24 : Երէմ · ԺԳ · 20 : ա Պետր · բ · 25 : ե · 4 :

խարներն թողումէ և փախչի՛ր • և գայլն յափշտակումէ նորանց և ցրվումէ[3] :

13 Պատճառն որ՝ վարձկան է , և ոչխարներուն համար հոգս չունի :

14 Ես եմ բարի հովիւն (յոյնն) , և իմոնքներուն ճանչնումեմ և իմոնքներիցն էլ ճանչվումեմ[4] :

15 Ինչպէս որ Հայրն ինձ գիտէ՛ , ես ալ Հօրն գիտեմ , և իմ անձիս դնումեմ ոչխարներուն վերայ[5] :

16 Ես դեռ ուրիշ ոչխարներ էլ ունիմ , որ էս գաւթիցս (պնոյէն) չեն[7] , և նորանց էլ պէտք է , որ ես էս տեղ բերեմ • և իմ ձայնիս կըլսեն , և մին հօտ (պո՛ղոս) և մին հովիւ (յոյնն) կըլինին[8] :

17 Ասրահամար իմ Հայրս սիրումէ ինձ , պատճառն որ իմ անձիս դնումեմ՝ որ մին էլ առնեմ նորան[9] :

18 Ո՛չ ով նորան չի հանում ինձնից • բայց ես ինքս իմ անձնովս եմ դնում նորան • իշխանութիւն ունիմ նորան դնելու և իշխանութիւն ունիմ նորան մինէլ առնելու[10] • էս պատուէրն առի իմ Հօրիցս[11] :

19 Ո՛րինէլ տարաձայնութիւն եր լինում Հրէաներուն միջումն՝ էս բաներիս համար[12] :

20 Եւ նորանցից շատերն ասումէին՝ Թէ դիվ կայ նորանում և գժվումէ[13] • ինչու՞ համար խսպառ ականջ էք դնում նորան :

21 Ուրեմն ասումէին • Խսպէսի խօսքեր դիւահարի չեն • միթէ դևն կարօղ[14] է կուրի աչքերըն բանալ[15] :

22 Իսն ժամանակն Երուսաղէմումն նաւակատիք տօն էլաւ՝ և ձմեռն էր :

23 Եւ Յիսուս ման էր գալիս տաճարումն Սաղոմոնի սրահին մէջըն[16] :

24 Հրէաներն նորան չորս կողմնէն պատեցին և ասացին • Մի՛նչև երբ մեր հոգիներըս չանես • Թէ որ դու ես Քրիստոսն՝ համարձակ ասա մեզ :

25 Յիսուս պատասխան տուաւ նորանց և ասաց • Կասցի ձեզ և ինձ չէք հաւատում • էն գործքերըն՝ որ իմ Հօրս անունովն գործումեմ՝ վկայումեն ինձ համար[17] :

26 Բայց դուք չէք հաւատում[18] • ինչու որ՝ իմ ոչխարներիցս չէք :

27 Իմ ոչխարներս իմ ձայնիս լսումեն և ես ճանչումեմ նորանց , և իմ ետևէս գալիս են[19] :

28 Եւ ես յաւիտենական կեանքն եմ տալիս նորանց , և յաւիտեան չեն կորչի՛ և ո՛չ ով չի յափշտակիլ նորանց իմ ձեռքիցս[20] :

29 Իմ Հայրս[21] որ նորանց տուաւ ինձ , ամէնից մեծ է , և ո՛չ ով կարօղ չէ իմ Հօրս ձեռքիցն յափշտակել նորանց[22] :

30 Ես և իմ Հայրս մին ենք[23] :

31 Հրէաներն քարեր վեր առին՝ որ նորան քարկոծ անեն[24] :

32 Յիսուս նորանց պատասխան տուաւ • Շատ բարի գործքեր ցույց տուի ձեզ իմ Հօրիցս • նո-

(3) Օ.տ • ժա • 16 , 17 : (4) ը Տիմ • բ • 19 : (5) Մատ • ժա • 27 : (6) Յովհ • ժե • 13 : (7) Եսայ • ծզ • 8 : (8) Եզեկ • լե • 22 • Եզեխ • բ • 14 • ա Պետր • բ • 25 , (9) Եսայ • ծգ • 7 , 8 • 12 • Եբր • բ • 9 : (10) Յովհ • բ • 19 : (11) Յովհ • չ • 38 • ժե • 10 • Գործ • բ • 24 • 32 : (12) Յովհ • է • 43 : թ • 16 : (13) Յովհ • է • 20 • ը • 48 • 52 : (14) Եսթ • գ • 11 : Սաղ • ղդ • 9 : Ճաղ • 8 : (15) Յովհ • թ • 6 , 7 • 32 , 33 : (16) Գործ • գ • 11 : ե • 12 : (17) Սայր • 38 : Յովհ • գ • 2 : ե • 36 • (18) Յովհ • ը • 47 : ա Յովհ • գ • 6 : (19) Սէր • 4 • 14 : (20) Յովհ • չ • 37 : ժե • 11 , 12 : ժը • 9 : (21) Յովհ • ժգ • 28 : (22) Յովհ • ժե • 2 • 6 , Լուկ : (23) Յովհ • ժե • 11 • 22 : (24) Յովհ • ը • 59 :

բանից որ գործի համար էք ինձ քարկոծ անում ։

33 Հրէացիքն պատասխան տուին . Քարի գործքի համար քեզ չենք քարկոծ անում , բայց հայհոյութեան համար . և որ դու մարդ ես , և քո անձդ Աստուած ես անում[25] ։

34 Յիսուս նորանց պատասխան տուաւ . Չէ՞ որ ձեր օրէնքումն գրված է՝ Թէ Ես ասացի՝ Թէ աստուածներ էք[26] ։

35 Պա Թէ որ նորանց աստուածներ է ասում՝ որ (մեռնակ) Աստուծոյ խօսքն էլաւ նորանց վրայ[27] . և կարելի չէ որ գիրքն քանդվի ։

36 Պա նորան որ Հայրն սրբեց[28] և ուղարկեց աշխարհք[29] , դուք ասում էք Թէ Հայհոյում ես . պատճառն որ ասացի[30]՝ Թէ Աստուծոյ Որդի եմ[31] ։

37 Թէ որ իմ Հօրս գործքն չեմ գործում , մի՛ հաւատաք ինձ[32] ։

38 Պա Թէ որ գործումեմ , Թէև ինձ չը հաւատաք , բայց գոնեայ գործքերին հաւատացէք[33] . որ գիտնաք և ճանաչէք , Թէ Հայրն ինձանում է և ես Հօր միջումն[34] ։

39 Ո՛ինէլ ուզումէին որ նորան բռնեն , և նորանց ձեռքիցն դուրս եկաւ[35] ։

40 Եւ մինէլ գնաց Յորդանանի էն կողմն հետեղն , որ Յովհաննէսն առաջուց կար և մկրտումէր[36] . և հետեղ էր լինում ։

41 Շատ մարդիք նորա մօտ եկին և ասացին . Թէ Յովհաննէսն մի նշան չըգործեց ։

42 Նայց ամէն ինչ որ Յովհաննէսն նորա համար ասաց[37] , ճըշմարիտ էր . և հետեղ շատ մարդիք հաւատացին նորան[38] ։

ԻԱ · ԺՈ

1 Հրիստոս յոյս օրվան Թաղված Ղազարոսին յարութիւն առնել կըտայ ։ Շատ Հրէաներ իրան կըհաւատան ։ 47 Վհաննապապետներն և փարիսեցիներն և տիվանն Հրիստոսի վերայ խորհուրդ անելոյ կըժողովին ։ 49 Կայիափայի մարգարէութիւն ։ 54 Յիսուս իրան անձըն կըպահե ։ 55 Զատկի տօնումն ման կըգան նորան , և քահանայապետներն և փարիսեցիներն հրաման կըտան մարդկանց որ բռնեն նորան ։

1 Հե՛ւ մին Ղազարոս մարդ կար հիւանդ՝ Նեթանիայիցն , Ա՛րիամի և նորա քոյր Ա՛րթայի գիւղցն[1] ։

2 Նա էն Ա՛րիամն էր՝ որ Տէրին իւղով օծեց և նորա ոտներըն սրբեց իրան մազերովն . որ նորա Ղազարոս եղբայրն հիւանդ էր[2] ։

3 Նորա քրվերքն ուղարկեցին նորա մօտ և ասացին . Տէր՝ աչն նա՝ որ դու սիրումէիր՝ հիւանդացել է ։

4 Յիսուս երբոր լսեց՝ ասաց . Նչն հիւանդութիւնն մեռնելոյ հա-

(25) Յովհ · ե · 18 ։ (26) Պաղմ · ձբ · 6 ։ (27) Հռովմ · ժգ · 1 ։ (28) Յովհ · գ · 27 ։ (29) Յովհ · դ · 17 ։ ե · 36 , 37 ։ ը · 42 ։ (30) Յովհ · ե · 17 , 18 ։ Ա Հր · 30 ։ (31) Ղուկ · ա · 35 ։ Յովհ · թ · 35 · 37 ։ (32) Յովհ · ժե · 24 ։ (33) Յովհ · ե · 36 ։ ժգ · 10 , 11 ։ (34) Յովհ · ժգ · 10 , 11 ։ ժե · 21 ։ (35) Յովհ · է · 30 · 44 · ը · 59 ։ (36) Յովհ · ա · 28 ։ (37) Յովհ · գ · 30 ։ (38) Յովհ · ը · 30 ։ ժա · 45 ։ (1) Ղուկ · ժ · 38 , 39 ։ (2) Մատ · իզ · 7 ։ Մարկ · ժգ · 3 ։ Յովհ · ժբ · 3 ։

մար չէ՞ այլ Աստուծոյ փառաց համար • որ Որդին Աստուծոյ նորանով փառաւորվի[3] :

5 Եւ Յիսուս սիրուէր Մարթային և նորա քոյր Մարեային և Ղազարին :

6 Երբոր լսեց՝ թէ նա հիւանդացել է , երկու օր մնաց հնտեղը՝ որ էր[4] :

7 Ապա նրանից ետև ասաց նորանց • Եկէք միևնել գնանք Հրէաստան :

8 Աշակերտներն նորան ասացին • Ռաբբի՝ հնից հիմիկ Հրէաներն ուզում էին քել քարկոծ անել՝ • և միևնել հնտեղ ես գնում :

9 Յիսուս պատասխան տուաւ • Չէ որ օրն տասներկու ժամ (սահմ) ունի • թէ որ մինն ցերեկն կըգնայ , նա չի գայթակղվի[6] • ինչու որ՝ էս աշխարհքիս լոյսըն տեսնում :

10 Ապա թէ որ մինն գիշերումն կըգնայ՝ կըգայթակղվի • ինչու որ՝ լոյս չըկայ նորա հետ՝ :

11 Երբոր էս ասաց , սրանից ետև ասաց նորանց • Մեր Ղազարոս բարեկամն քուն էլաւ • բայց կըգնամ՝ որ զարթնացնեմ նորան[8] :

12 Աշակերտներն նորան ասացին • Տէր՝ թէ որ քուն էլաւ՝ ապա կառողջանայ :

13 Նայց Յիսուս նորա մեռնելուն համար էր ասում • նորանց հնպէս երևեցաւ թէ քընի թեքընկած լինելոյ համար ասում էր :

14 Յն ժամանակն Յիսուս յայտնի ասաց նորանց • Ղազարոս մեռաւ :

15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար՝ որ դուք հաւատաք ինձ , որ ես հնտեղ չէի • բայց հիմիկ եկէք գնանք նորա մօտ :

16 (Ապա) Թովմաս Երկուորեակ (քուրտակ) կոչվածն (իրան) ընկեր աշակերտներին ասաց • Ապա եկէք՝ որ մենք էլ նորա հետ մեռնինք :

17 Յիսուս եկաւ՝ նորան չորս օր գերեզմանի մէջ (դրած) գտաւ :

18 Եւ Բեթանիա մօտ էր Երուսաղէմին տասն հինգ ասպարէզի (հանդէս) չափով :

19 Հրեաներից շատեր եկել էին Մարթայի և Մարիամի մօտ , որ եղբօր կողմանէ մխիթարեն նորանց :

20 Երբոր Մարթա լսեց՝ թէ Յիսուս գալիս է , գնաց նորա առաջը • բայց Մարիամն հնտեղ տան միջումն նստած էր :

21 Մարթա Յիսուսին ասաց • Տէր՝ թէ որ դու հնտեղ էլած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռել :

22 Նայց հիմիկ էլ գիտում եմ , թէ ինչ որ Աստուածանից խնդրես՝ Աստուած կտայ քեզ՝ :

23 Յիսուս նորան ասաց • Քո եղբայրդ յարութիւն կառնէ :

24 Մարթան նորան ասաց • Գիտումեմ որ յարութիւն կառնէ յարութենումն յետին օրումն[10] :

25 Յիսուս նորան ասաց • Ես եմ յարութիւն[11] և կեանք[12] • ով որ ինձ հաւատումէ՝ թէ և մեռնի՝ կապրի[13] :

26 Եւ ամեն ով որ կենդանի է և ինձ հաւատումէ , նա յաւիտեան չի մեռնիլ • հաւատումես սրան :

27 Նորան ասաց • Այո՝ Տէր , ես հաւատացի՝ թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ Որդին[14] , որ պէտք է աշխարհք գայիր :

28 Եւ երբոր էս ասաց , գնաց

(3) Յովհ · թ · 3 : Վեր · 30 : (4) Յովհ · ժ · 40 : (5) Յովհ · ժ · 31 : (6) Յովհ · թ · 4 : (7) Յովհ · ժբ · 35 : (8) բ Օրին · լա · 16 : Պտն · ժբ · 2 : Մատթ · թ · 24 : Գործ · է · 59 : ա Կորնթ · ժե · 18 · 51 : (9) Յովհ · թ · 31 : (10) Գործ · ժգ · 14 : Յովհ · ե · 29 : (11) Յովհ · ե · 21 : ղ · 39 , 40 · 44 : (12) Յովհ · ա · 4 : ղ · 35 : ժգ · 6 : Կող · գ · 4 : ա Յովհ · ա · 1 , 2 · ե · 11 : (13) Յովհ · գ · 36 : ա Յովհ · ե · 10 , Լուկ : (14) Մատթ · ժգ · 16 : Յովհ · գ · 42 : ղ · 14 · 70 :

թաքուն կանչեց իրան Մարիամ քրոջորըն և ասաց . Ս արդապետն եկել է և քեզ կանչումէ :

29 Նա երբոր լսեց՝ շուտով վերկացաւ , և եկաւ Յիսուսի մօտ :

30 Յիսուս դեռ չէր եկել գիւղըն՝ բայց էնտեղն էր՝ որտեղ որ Մարթան եկաւ նորա առաջն :

31 Հայց Հրէաներն՝ որ էնտեղ տան մէջն նորա հետ էին՝ և նորան մխիթարումէին , երբոր Մարիամին տեսին՝ թէ շուտով վերկացաւ և գնաց՝ նորանք էլ նորա ետևէն գնացին . կարծումէին՝ թէ գերեզմանն է գնում , որ էնտեղ լաց լինի[15] :

32 Հայց Մարիամն երբոր եկաւ էն տեղն՝ որ Յիսուսն էր՝ և նորան տեսաւ , նորա ոտներըն ընկաւ և ասաց . Տէր՝ թէ որ էստեղ պատահած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռել[16] :

33 Յիսուս երբոր նորան տեսաւ՝ որ լաց էր լինում և Հրէաներն էլ՝ որ նորա հետ էին՝ լաց էին լինում , իրան հոգով մէջն գժուաբացաւ շատ տրտմածի նման :

34 Եւ ասաց . Ո՞ւր տեղ դրիք նորան . նորան ասացին . Տէր՝ ել և տես :

35 Եւ Յիսուս արտասուեց[17] :

36 Հրէաներն ասումէին . Տեսէք՝ թէ որքան սիրումէր նորան :

37 Նորանցից էլէն ասումէին . Մի՞թէ սա որ կուրի աչքերըն բաց արաւ՝ չէր կարող անել՝ որ սա էլ չըմեռնի[18] :

38 (Ա՛պա) Յիսուս միևէլ իրան մտքումն սաստիկ տրտմած՝ եկաւ գերեզմանըն . և էն մի այր (Տաղարկայ) էր՝ և մի քար նորա վերայ դրած :

39 Եւ Յիսուս ասաց . Ա՛ռ քարըդ դէն քցեցէք . մեռելի քոյրն՝ Մարթան նորան ասաց . Տէր՝ հիմի հոտած կըլինի . ինչու որ՝ չորս օրվան է :

40 Յիսուս նորան ասաց . Չէ՞ որ քեզ ասացի . եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքըն կըտեսնես[19] :

41 Եւ երբոր քարըն վերառին , Յիսուս իրան աչքերըն դէպի վեր բարձրացրուց և ասաց . Հա՛յր՝ գոհանումեմ քեզանից , որ ինձ լսեցիր :

42 Եւ ես գիտումէի՝ որ ամէն ժամանակ լսումես ինձ . բայց էս ժողովրդիս համար եմ անում՝ որ չորս կողմովս կանգնած են , որ հաւատան թէ դու ուղարկեցիր ինձ[20] :

43 Երբոր էս ասաց , մեծ ձայնով աղաղակեց և ասաց . Ղա՛զարէ՝ վեր կաց՝ դուրս եկ :

44 Եւ մեռեալն դուրս եկաւ կապած ոտներով , և ձեռներըն շորերով պատած , և երեսն վարշամակներով (կտաւով) պատած[21] . և Յիսուս նորանց ասաց . Ըրձակեցէք դորան և թողէք որ գնայ :

45 Հրէաներից շատերն՝ որ Մարիամների մօտն էին եկել՝ երբոր տեսին էն՝ որ նա արաւ , հաւատացին նորան[22] :

46 Եւ նորանցից մին քահան գըներցին փարիսեցիներին մօտ , և նորանց պատմեցին ինչ որ Յիսուսն արաւ :

47 Քահանայապետներն և փարիսեցիներն տիվան ժողովեցին[23] , և ասացին . Ի՞նչ անենք , ինչու որ՝ էն մարդն շատ նշաններ է անում[24] :

48 Եթէ որ նորան էսպես թողնենք՝ ամէնքն կըհաւատան նորան , և Հռոմայեցիքն կըգան և մեր ազգըն և տեղըն վեր կառնեն :

(15) Վէր . 19 : (16) Վէր . 21 : (17) Ղ . ժբ . 41 : (18) Յովհ . թ . 6 : (19) Վ . 4 . 23 : (20) Յովհ . ժբ . 30 : (21) Յովհ . ի . 7 : (22) Յովհ . բ . 23 : ժ . 42 : ժբ . 11 . 18 : (23) Սաղ . բ . 2 : Սաքր . իշ . 3 : Սբղ . ժգ . 1 : Ղ . ի . ըբ . 2 : (24) Յովհ . ժբ . 19 : Գործ . գ . 16 :

49 Այորանցից մինն կայիափա անունով՝ որ էն տարվան քահանայապետն էր՝ նորանց ասաց[25] · Դուք իսկի բան չէք գիտում՝

50 Եւ իսկի էլ չէք մտածում, թէ լաւ է մեզ համար՝ որ մին մարդ մեռնի ժողովրդիս վերայ՝ և ամէն ազգըս չկորչի[26] :

51 Այս բանըս ոչ թէ իրանից ասաց · բայց որովհետև էն տարվան քահանայապետն էր, մարգարէացաւ՝ թէ Յիսուս պիտի մեռնէր ազգին վերայ :

52 Եւ ոչ թէ մենակ ազգին վերայ[27], բայց որ Աստուծոյ ցրված որդիքներն էլ մինտեղ ժողովէ[28] :

53 Այսպա էն օրից ետև խորհուրդ արին՝ որ նորան սպանեն :

54 Եւ Յիսուս նրանից ետև էլ համարձակ չէր մանգալիս Հրեաների մէջն[29] · բայց հետևից գնաց մին երկիր, որ անապատին մօտ էր, մին քաղաքի մէջ՝ որ նորա անունն Եփրայիմ էր[30] · և հետեղ էր կենում աշակերտներին հետ :

55 Եւ Հրէաների զատիկն մօտ էր, և էն գաւառից շատ մարդիք առաջ վեր էլան Երուսաղէմ, որ իրանց անձներն սրբեն[31] :

56 Ո՞ւն էին գալիս Յիսուսին, և իրար ասում էին[32] երբոր տաճարումն էին · Ի՞նչպես է երևում ձեզ · միթէ էս տօնիս չի գալ նա էստեղ · (բայց) քահանայապետներն և փարիսեցիներն հրաման էին տուել, որ եթէ մինն գիտենայ՝ թէ ինչ տեղ է, նորա համար իմաց տայ՝ որ բռնեն նորան :

ԻՀ · ՀՐ

3 Յիսուս Մարիամին կըդովէ որ իրան ոտներըն օծեց : 9 Շատ ժողովուրդ կըգան էն տեղ որ Ղազարոսին էլ տեսնեն : 10 Քահանայապետներն խորհուրդ կանեն՝ որ նորան էլ սպանեն : Բրիստոս էշով Երուսաղէմ կըդնայ : 20 Հեթանոսներն փափաքումն որ Յիսուսին տեսնեն : 23 Իրան մահին համար առաջուց իմաց կըտայ : 27 Հրէաներն մեծ կուրութիւն · 42 Շատ իշխաններից կըհաւատան նորան · բայց յայտնի չեն դառնում · 44 Բրիստոս ցոյց կըտայ որ իրան հաւատացողներն Աստուծոյն էլ կըհաւատան : 47 Բրիստոսի խօսքն կըդատէ յետին օրումն :

1 Բայց Յիսուս զատկից վեց օր առաջ եկաւ Բեթանիա, որտեղ որ մեռած Ղազարոսն էր՝ որ Նորան մեռելների միջից յարոյց[1] :

2 Եւ հետեղ հացկերութիւն արին նորա համար[2] · և Մարթա ծառայումէր սեղանին, և Ղազարըն նորա հետ նստողներից մինն էր :

3 Բայց Մարիամն մին լիտրը նարդոսի ազնիւ մեծագին իւղ առաւ[3] · և Յիսուսի ոտներըն օծեց, և իրան մազերումն սրբում էր նորա ոտներըն · և տունն լցված էն իւղի հոտումն :

4 Աշակերտներից մինն՝ Յուդա Իսկարիօտացին, որ նորան մատնելու էր՝ ասաց ·

5 Ինչու համար էդ իւղը երեք հարիւր դինարի չծախվեցաւ, և աղքատներին տրվաւ :

6 Այս ասաց՝ ոչ թէ որ նա աղ-

(25) Ղ–ի · գ · 2 : Ցուղ · ժը · 14 : Պետ · դ · 6 : (26) Ցուղ · ժը · 14 : (27) Նոյ · խթ · 6 : ա Ցուղ · բ · 2 : (28) Ցուղ · ժ · 16 : Նէա · բ · 14—17 : (29) Ցուղ · գ · 1 · 3 : է · 1 : (30) բ Պետ · ժգ · 19 : (31) Ցուղ · բ · 13 : է · 1 : Ը · է : (32) Մէյ · 7 : (1) Ցուղ · ժա · 1 · 43 : (2) Մատ · իզ · 6 : Մարկ · ժգ · 3 : (3) Ղ–ի · ժ · 38, 39 : Ցուղ · ժա · 2 :

քաաների համար հոգս ունէր · բայց Նրա համար որ գող էր՝ և քսակըն ինքն ունէր · և ինչ որ ընկնուէր՝ նա էր պահում[4] :

7 Յիսուս ասաց · Թո՛ղ տուր դորան , որ մինչև իմ պատանքիս օրն պահէ էդ :

8 Աղքաաներըն ամէն ժամանակ ձեզ հետ ունիք · (բայց) ինձ ամէն ժամանակ ձեզ հետ չունիք[5] :

9 Երբոր Հրէաներից շատ ժողովուրդ գիտաց՝ թէ (նա) հնտեղ է եկին , ոչ թէ միայն Յիսուսի համար , բայց որ Ղազարին էլ տեսնեն , որ նորան մեռելների միջից յարոյց[6] :

10 Քահանայապետներն խորհուրդ արին՝ որ Ղազարին էլ սպանեն[7] :

11 Պատճառն որ՝ Հրէաներից շատ մարդիք գնում էին և հաւատում էին Յիսուսին[8] :

12 Այս յետևի օրումն շատ ժողովուրդ որ եկել էին տօնն , երբոր լսեցին՝ թէ Յիսուս գալիս է Երուսաղէմ[9] ·

13 Ըմաւի ծառի ճղներ առին , և դուրս գնացին նորա առաջն , աղաղակում էին և ասում · Ովսաննայ , օրհնեալ (ես) որ Տէրի անուն նովն գալիս ես դու Իսրայէլի թագաւորդ[10] :

14 Եւ Յիսուս մին էշ գտաւ , և նորա վերայ նստեց · ինչպես որ գըրված է՝ (թէ)[11] ·

15 Մի՛ վախենար Սիոնի աղջիկ , ահա քո թագաւորդ գալիս է իշի քուռակի վերայ նստած[12] :

16 Եւ աշակերտներն առաջ չիմացան էն բանըն[13] · բայց երբոր Յիսուս փառաւորվեցաւ[14] էն ժամանակն մտքներն բերին՝ թէ էն էր՝ որ նորա համար գրված էր[15] · և էն բանըն արին նորան :

17 Եւ ժողովուրդն՝ որ նորա հետ էր՝ վկայում էր , թէ Ղազարին գերեզմանից մինակ դուրս կանչեց · և հնպես մեռելների միջից յարոյց նորան :

18 Եւ նորա համար ժողովուրդն գնաց նորա առաջն , ինչու որ լըսեցին թէ նա էն նշանըն արել էր[16] :

19 Բայց փարիսեցիներն իրար մէջ ասում էին · Տեսնո՞ւմէք՝ որ իսկի հընար չէք գտնում · ահա ամէն աշխարհք նորա հետևն գնաց[17] :

20 Ինտեղ մի քանի Հեթանոսներ էլ կային նորանց միջումն[18] · որ եկել էին հնտեղ , որ երկրպագութիւն անեն էն տօնումն[19] :

21 Նորանք եկին Փիլիպպոսի մօտըն՝ որ Գալիլեացւոց Բեթսայիդայից էր , նորան աղաչում էին և ասում · Տէր՝ կամենումենք Յիսուսին տեսնել[20] :

22 Փիլիպպոսն եկաւ և Անդրեասին ասաց · Անդրեասն և Փիլիպպոսն ասացին Յիսուսին :

23 Եւ Յիսուս պատասխան տըւաւ նորանց՝ և ասաց · Ժամն (սահմանն) հասաւ՝ որ Որդին մարդոյ փառաւորվի[21] :

24 Ճշմարիտըն ճշմարիտըն ասում եմ ձեզ · Թէ որ ցորենի հատն հողի մէջ չընկնի և մեռնի[22] ,

25 Ինքն մինակ կըմնայ · բայց թէ որ մեռնի՝ շատ պտուղ կըբերէ · ով որ իրան անձըն սիրում՝ կըկոր-

(4) Յովհ · ժգ · 29 : (5) Մատթ · իզ · 11 : Մարկ · ժգ · 7 : (6) Յովհ · ժա · 43 , 44 : (7) Գործ · ը ժգ · 31 : (8) Յովհ · ժա · 45 : Այտ · 18 : (9) Մատթ · իա · 8 : Մարկ · ժա · 8 : Ղուկ · ժԹ · 35 , 36 , Լայտ : (10) Սաղմ · ճԺը · 25 , 26 : (11) Մատթ · իա · 7 : (12) Զաքար · Թ · 9 : (13) Ղուկ · ժը · 34 : (14) Յովհ · է · 39 : (15) Յովհ · ժգ · 26 : (16) Վէր · 11 : (17) Յովհ · ժա · 47 , 48 : (18) Գործ · ժէ · 4 : (19) Գ Թագ · ը · 41 , 42 : Գործ · ը · 27 : (20) Յովհ · ա · 44 : (21) Յովհ · ժգ · 32 : ժէ · 1 : (22) ա Կորնթ · ժե · 36 :

ցընէ Նորան · և ով որ իրան անձն ատումէ էս աշխարհքումս , յաւիտենական կենաց մէջ կըպահէ Նորան[23] :

26 Թէ որ մինն ծառայէ ինձ՝ թող նա իմ ետևէս գայ · և որտեղ որ ես եմ՝ էնտեղ էլ իմ պաշտօնեայս կըլինի · Թէ որ մինն ծառայէ ինձ , իմ Հայրս կըպատուէ Նորան[24] :

27 Հայց հիմիկ իմ անձս տըրտմած է[25] · և ինչ ասեմ · Հայր՝ ապրեցրու ինձ էս ժամիցս (սահմանէս) · բայց հենց նրահամար եկի էս ժամիս մէջն[26] :

28 Հայր՝ փառաւորիր քո Որդդդ · երկնքիցն ձայն եկաւ , (Թէ) փառաւորեցի և միևնէլ կըփառաւորեմ[27] :

29 Եւ ժողովուրդն՝ որ կանգնած էր և լսումէր՝ ասումէին , Թէ Ոըոտմունք է լինում · և ուրիշնակ խօսեց Նորա հետ :

30 Յիսուս պատասխան տուաւ և ասաց · Ոչ ձայնս ոչ Թէ ինձ համար եկաւ , բայց ձեզ համար[28] :

31 Հիմիկ է էս աշխարհքիս դատաստանն · հիմիկ էս աշխարհքիս իշխանն դուրս կըքցվի[29] :

32 Եւ ես երբոր կըբարձրանամ երկրիցս[30] , ամէնին կըքաշեմ ինձ մօտ[31] :

33 Այս բանըս ասումէր՝ որ ցոյց տայ Թէ ինչ մահով պիտի մեռնի[32] :

34 Ժողովուրդն պատասխան տուաւ Նորան · Մենք օրէնքիցն լսեցինք՝ Թէ Քրիստոսն յաւիտեան կըկենայ · և դու ինչպես ես ասում՝ Թէ պէտք է՝ որ Որդին մարդդդ բարձրանայ · ով է էն Որդին մարդդդ[33] :

35 Յիսուս Նորանց ասաց · Մինչ քիչ ժամանակ դեռ լոյսն ձեզ հետ է[34] · գնացէք , քանի որ լոյսըն ունիք՝ որ խաւարն ձեզ չըհասնի[35] · պատճառն որ՝ ով որ խաւարումն է գնում , չի գիտում (Թէ) ուր է գնում[36] :

36 Դեռ քանի որ լոյսըն ձեզ հետ ունիք՝ հաւատացէք լուսոյն , որ լուսոյ որդիք լինիք[37] · Յիսուս էս (բանըս) խօսեց , և գնաց Թաք կացաւ Նորանցից[38] :

37 Եւ էնքան նշաններ արել էր Նորանց առաջին · և Նորանք չէին հաւատում Նորան :

38 Որ Եսայի մարգարէի խօսքն կատարվի՝ որ ասաց · Տէր՝ մեր խօսքին ով հաւատաց , և Տէրի բազուկն (քեֆլին) ումի յայտնըվեցաւ[39] :

39 Ուրահամար չէին կարում հաւատալ · ինչու որ՝ Եսային միևնէլ ասումէ ·

40 Թէ Նորանց աչքերըն կուրացրուց , և Նորանց սրտերըն Թըմրացրուց[40] · որ աչքով չըտեսնեն ,

(23) Մատ · ժ · 39 · ժզ · 25 : Մարկ · ը · 35 : Ղուկ · թ · 24 : ժէ · 33 : (24) Յովհ · ժդ · 3 · ժէ · 24 : ա Թես · գ · 16 : (25) Մատ · իզ · 38 , 39 : Ղուկ · ժբ · 50 : Յովհ · ժգ · 21 : (26) Ղուկ · իբ · 53 : Յովհ · ժը · 37 : (27) Մատ · գ · 17 : (28) Յովհ · ժա · 42 : (29) Մատ · ժբ · 29 : Ղուկ · ժ · 18 : Յովհ · ժգ · 30 : ժզ · 11 : Պօղ · իզ · 18 : բ Կորնթ · գ · 4 : Եփես · բ · 2 : զ · 12 : (30) Յովհ · գ · 14 : ը · 28 : (31) Հովհ · ե · 18 : Եբր · բ · 9 : (32) Յովհ · ժը · 32 : (33) Մատ · ձԹ · 36 , 37 : Ա՛ռ · 4 : Նասյ · Թ · 7 : ծգ · 6 : Նախ · լ՛ · 25 : Գաղ · բ · 44 : է · 14 · 27 : Մէյխ · գ · 7 : (34) Յովհ · ա · 9 : ը · 12 : Թ · 5 : Աստր · 46 : (35) Երեմ · ժգ · 16 : Եփես · ե · 8 : (36) Յովհ · ժա · 10 : ա Յովհ · բ · 11 : (37) Ղուկ · ժզ · 8 : Եփես · ե · 8 : ա Թես · ե · 5 : ա Յովհ · բ · 9—11 : (38) Յովհ · ը · 59 : ժա · 54 : (39) Նասյ · ծգ · 1 : Հովհ · ժ · 16 : (40) Նասյ · զ · 9 , 10 : Մատ · ժգ · 14 :

և սրտով չիմանան , և դառնան՝ և (ես) բժշկեմ նորանց ։

41 Եսային էս ասաց . երբոր նորա փառքըն տեսաւ , և նորա համար խօսեց[41] ։

42 Այլ էնպէս էլ իշխաններիցն շատերն հաւատացին նորան . բայց փարիսեցիների պատճառովն չէին յայտնում՝ , որ ժողովարանիցն դուրս չըլինին[42] ։

43 Ինչու որ՝ մարդկանց փառքըն աւելն սիրեցին քանթէ Աստուծոյ փառքըն[43] ։

44 Եւ Յիսուս աղաղակումէր և ասում . Այս որ ինձ հաւատում՝ ոչ թէ ինձ է հաւատում՝ , բայց նորան՝ որ ինձ ուղարկեց[44] ։

45 Եւ նա որ ինձ տեսնում՝ , նորան է տեսնում՝ որ ինձ ուղարկեց[45] ։

46 Ես լոյս եկի աշխարհքս , որ ամէն ոք հաւատում ինձ՝ խաւարի մէջ չըմնայ[46] ։

47 Եւ թէ որ մինն իմ խօսքերիս լսէ և չըպահէ , ես չեմ դատիլ նորան[47] . պատճառն որ՝ ես չեկի՝ որ աշխարհքը դատեմ[48] , այլ որ աշխարհքը փրկեմ ։

48 Ով որ ինձ անարգումէ , և իմ խօսքերըս չէ ընդունում[49] , կայ՝ որ կըդատէ նորան . էն խօսքն՝ որ ես խօսեցի , նա կըդատէ նորան յետին օրումն[50] ։

49 Ինչու որ՝ ես իմ անձինըս չըխօսեցի[51] . բայց Հայրն՝ որ ինձ ուղարկեց , նա պատուէր տուաւ ինձ՝ թէ ինչ պիտի ասեմ՝ և ինչ պիտի խօսիմ[52] ։

50 Եւ գիտումեմ՝ որ էն պատուիրանքն յաւիտենական կեանք է . ապա ինչ որ ես խօսումեմ , էնպէս եմ խօսում՝ ինչպէս որ Հայրն ասաց ինձ ։

ԳԼ . ՅԴ

5 Յիսուս իրան աշակերտներին տաներըն կըլուանայ . 14 Նորանց օրինակ կըտայ որ իրար սիրեն և խոնարհութիւն անեն ։ 18 Հուդայի համար առաջուց կասէ՝ որ ինքն պիտի մատնէ , և մին նշանակ նորանց ցոյց կըտայ էն մատնողն . 34 Նորանց պատուիրանք կըտայ որ իրար սիրեն , 36 Նէ Պետրոսի ուրանալն առաջուց իրան կըյայտնէ ։

1 Զատկի տօնիցն առաջ՝ Յիսուս գիտաց[1] , որ իրան ժամն (ատ Հաւնն) հասել է[2] որ էս աշխարհքիցս փոխվի դէպի Հայրն , իրան. ներին՝ որ էս աշխարհքումն են՝ սիրեց . և մինչև վերջն սիրեց նորանց ։

2 Եւ երբոր ընթրիքն (էբէվնան հայկերտոնէն) էր լինում , Սատանան Սիմոնեան Հուդա Իսկարիոտացոյ սրտի մէջն քցել էր՝ որ մատնէ Նորան[3] ։

3 Յիսուս գիտաց՝ որ Հայրն ամէն բան իրան ձեռքն տուաւ[4] , և որ Աստուածանից եկաւ , և Աստուծոյ մօտն է գնում՝ ։

(41) Նսայ . ղ . 1 ։ (42) Յովհ . է . 13 ։ թ . 22 ։ (43) Յովհ . ե . 44 ։ (44) Մարկ . թ . 36 ։ ա Պետր . ա . 21 ։ (45) Յովհ . ժգ . 9 ։ (46) Ա Յհ . 35 , 36 ։ Յովհ . գ . 19 ։ ը . 12 ։ թ . 5 . 39 ։ (47) Յովհ . ե . 45 ։ ը . 15 . 26 ։ (48) Յովհ . գ . 17 ։ (49) Ղուկ . ժ . 16 ։ (50) բ Օրէն . ժը . 19 ։ Մարկ . ժգ . 16 ։ (51) Յովհ . ը . 38 ։ ժգ . 10 ։ (52) բ Օրէն . ժը . 18 ։ (1) Մատթ . իգ . 2 ։ (2) Յովհ . ժբ . 23 ։ ժէ . 1 . 11 ։ (3) Ղուկ . իբ . 3 ։ Ա Յայտ . 27 ։ (4) Մատթ . ժա . 27 ։ իբ . 18 ։ Յովհ . գ . 35 ։ ժէ . 2 ։ Գործ . բ . 36 ։ ա Կորնթ . ժե . 27 ։ Եբր . բ . 8 ։ (5) Յովհ . ը . 42 ։ ժգ . 28 ։

4 Հաց կերուբենիցն վերկացաւ և շորերըն վէր դրաւ , և մին դեղ-
ջակ (ֆեղտոսէլ) առաւ մէջքովն պատեց[6] :
5 Եւ յետոյ ջուր առաւ՝ լըցրուց տաշտակը , և սկսեց աշա-
կերտների ոտներըն լուանալ , և էն դեղջակովն՝ որ մէջքումն պատած էր՝ սրբումէր :
6 Սիմոն Պետրոսի մօտ եկաւ , և Նա Նորան ասաց • Տէր՝ դուն ես
իմ ոտներս լուանում[7] :
7 Յիսուս պատասխան տուաւ Նորան՝ և ասաց • Ինչ որ գործումեմ , դուն հիմիկ չես գիտում ,
բայց յետոյ կըգիտենաս[8] :
8 Պետրոս Նորան ասաց • Դու
իմ ոտներըս յաւիտեան չը պիտի լուանաս • Յիսուս պատասխան տուաւ • Թէ որ քո ոտներըդ չըլուանամ , դու ինձ հետ բաժին չունիս[9] :
9 Սիմոն Պետրոսն Նորան ասաց • Տէր՝ ոչ թէ իմ ոտներըս մէնակ ,
բայց իմ՝ ձեռներըս և գլուխըս էլ :
10 Յիսուս Նորան ասաց • Լուացածին բան պէտք չէ՝ բայց միայն որ ոտներըն լուանայ • ինչու որ՝ իսպառ սուրբ է (նա) • և դուք սուրբ էք , բայց չէ թէ ամենքդ[10] :
11 Պատճառն որ՝ գիտուէր Նորան , որ իրան պիտի մատնէր • Նրա համար ասաց , թէ Ո՛չ ամենքդ սուրբ չէք[11] :
12 Եւ երբոր Նորանց ոտներըն լուացաւ , իրան շորերըն առաւ՝ և մինէլ սեղան նստեց , և Նորանց ասաց • Ո՞րթէ գիտումէք թէ ես ինչ արի ձեզ :
13 Դուք ինձ Վարդապետ և Տէր էք կոչում • և էն լաւ էք անում , ինչու որ ես հենց էն եմ[12] :
14 Ուպա թէ որ ես՝ Տէրս և Վարդապետս ձեր ոտներըն լուացի[13] , դուք էլ պէտք է՞ որ իրար ոտները լուանաք[14] :
15 Ինչու որ՝ ձեզ մին օրինակ տուի , որ ինչպէս որ ես ձեզ արի , դուք էլ անէք[15] :
16 Ա՛շմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ • Ծառան աւելի մեծ չէ քան թէ իրան տէրն • և ոչ էլ ուղարկվածն աւելի մեծ է՝ քան թէ նա՝ որ ուղարկեց Նորան[16] :
17 Թէ որ էս գիտումէք , էլ աւելի երանելի էք՝ թէ որ էս անէք[17] :
18 Ձեզ ամենիդ համար չեմ ասում • ինչու որ՝ ես գիտումեմ Նորանց , որ ընտրեցի • բայց որ գիրքըն կատարվի՝ թէ Ուա որ ինձ հետ հաց էր ուտում՝ ինձ խաբէութիւն արաւ[18] :
19 Հենց հիմիկուց ետև ասումեմ ձեզ՝ դեռ քանի որ չի կըլէ[19] • որ երբոր լինի՝ հաւատաք թէ ես եմ :
20 Ա՛շմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ • Ով որ ընդունումէ մընին՝ որ ես կուղարկեմ՝ ինձ է ընդունում • և Նա որ ինձ է ընդունում , Նորան է ընդունում՝ որ ինձ ուղարկեց[20] :
21 Յիսուս երբոր էս ասաց[21] տրտմեցաւ իրան հոգով մէջն , վկա-

(6) Ղ՚ուկ • իբ • 27 : Փիլպ • բ • 7 , 8 : (7) Մատ • գ • 14 : (8) Ղ՚ուկ • ժ • 12 : (9) Յովհ • գ • 5 : ա Կորնթ • ղ • 11 : Լևէտ • ճ • 26 : Տէտ • գ • 5 : Եբր • ժ • 22 : (10) Յովհ • ժճ • 3 : (11) Յովհ • ղ • 65 : (12) Մատ • իգ • 8 - 10 : Ղ՚ուկ • ղ • 46 : ա Կորնթ • ը • 6 : ժբ • 3 : Փիլպ • բ • 11 : (13) Ղ՚ուկ • իբ • 27 : (14) Հռովմ • ժբ • 10 : Գաղ • ղ • 1 , 2 : ա Պետր • ե • 5 : (15) Մատ • ժա • 29 : Փիլպ • բ • 5 : ա Պետր • բ • 21 : ա Յովհ • բ • 6 : (16) Մատ • ժ • 24 : Ղ՚ուկ • ղ • 40 : Յովհ • ժճ • 20 : (17) Յով • ա • 25 : (18) Սաղ • խա • 9 : Մատ • իգ • 23 : Ղ՚ուկ • 21 : (19) Յովհ • ժգ • 29 : ժղ • 4 : (20) Մատ • ժ • 40 : իե • 40 : Ղ՚ուկ • ժ • 16 : (21) Մատ • իգ • 21 : Մարկ • ժգ • 18 : Ղ՚ուկ • իբ • 21 :

ձեց և ասաց[22] · Ո՛շմարիտն ճըշմարիտն ասումեմ ձեզ , թէ ձեզանից մինն պիտի մատնէ ինձ[23] :

22 Աշակերտներն տարակուսած՝ իրար մտիկ էին տալիս , թէ ո՛ւմ համար ասած լինի :

23 Եւ աշակերտներից մինն Յիսուսի մօտ նստած էր , որ Յիսուս նորան սիրումէր[24] :

24 Սիմոն Պետրոսն նորան աչքով էր անում՝ որ հարցընէ՝ թէ նա ո՛վ է , որ նորա համար ասումէ :

25 Եւ նա Յիսուսի լանջքովն (ջէօլշէն) ընկաւ , և նորան ասաց · Տէր՝ նա ո՛վ է :

26 Յիսուս պատասխան տուաւ և ասաց · Նա է՝ որ ես պատառն թաց կանեմ և նորան կըտամ . և պատառն թաց արաւ և տուաւ Յուդա Իսկարիօտացոյն :

27 Եւ էն պատառից ետև՝ Սատանան մտաւ նորա մէջն[25] . և Յիսուս նորան ասաց · Ո՛րիկ ինչ որ անելու ես՝ շուտով արա՛ :

28 Եւ էս բանըս էն սեղան նըստողներից ո՛չ ով չիմացաւ՝ թէ ի՛նչ պատճառով ասաց նորան :

29 Ինչու որ՝ մին քանիսն կարծումէին՝ թէ որովհետև Յուդան փողն քսակըն ունէր , Յիսուս նորան ասաց՝ թէ Գնի՛ր ինչ բան որ էս տօնումն պէտք է մեզ[26] . կամ թէ՝ որ աղքատներին բան տայ :

30 Եւ նա երբոր պատառըն առաւ , շուտով դուրս գնաց · և գիշեր էր :

31 Եւ երբոր դուրս գնաց , Յիսուս ասաց · Հիմիկ Որդին մարդոյ փառաւորվեցաւ[27] · և Աստուած նորանում փառաւորվեցաւ[28] :

32 Ու՝ եթէ Աստուած նորանում փառաւորվեցաւ , Աստուած էլ նորան կըփառաւորէ իրան անձնումն[29] · և շուտով կըփառաւորէ նորան[30] :

33 Իմ որդեակներս՝ մին քիչ ժամանակ էլ ձեզ հետ եմ · ինձ մանկըդաք · և ինչպես որ Հրէաներին ասացի , թէ Որտեղ որ ես գնումեմ՝ դուք չէք կարօղ գալ[31] · և հիմիկ ձեզ եմ ասում :

34 Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ , որ իրար սիրէք · ինչպես որ ես ձեզ սիրեցի , որ դուք էլ իրար սիրէք[32] :

35 Սրանով կըգիտենան ամէնքն՝ որ իմ աշակերտներս էք , եթէ իրար սիրէք[33] :

36 Սիմոն Պետրոսն նորան ասաց · Տէր՝ ո՛ւր ես գնում · Յիսուս պատասխան տուաւ · Որտեղ որ ես գնումեմ՝ դու հիմիկ չես կարօղ իմ ետևէս գալ · բայց յետոյ իմ ետևէս կըգաս[34] :

37 Պետրոսն նորան ասաց · Տէր՝ ինչո՞ւ չեմ կարօղ հիմիկ քո ետևէդ գալ · հենց իմ անձըս էլ քեզ վերայ կըդնեմ[35] :

38 Յիսուս պատասխան տուաւ · Քո անձըդ կըդնես ինձ վերայ · Ճշմարիտըն ճշմարիտն ասումեմ քեզ , որ Կոհ հաւն չըխօսած՝ դու երեք անգամ կուրանաս ինձ :

(22) Յովհ · ժբ · 27 : (23) Գործ · ա · 17 : ա Յովհ · բ · 19 : (24) Յովհ · ժէ · 26 : է · 2 : իա · 7 · 20 · 24 : (25) Լուկ · իբ · 3 : Յովհ · ղ · 71 : (26) Յովհ · ժբ · 6 : (27) Յովհ · ժբ · 23 : (28) Յովհ · ժդ · 13 : ա Պետր · դ · 11 : (29) Յովհ · ժէ · 1 · 4 , 5 , 6 : (30) Յովհ · ժբ · 23 : (31) Յովհ · է · 34 : ը · 21 : (32) Լուկ · ժէ · 18 : Յովհ · ժե · 12 · 17 : Երէս · ե · 2 : ա Թես · դ · 9 : Յով · բ · 8 : ա Պետր · ա · 22 : ա Յովհ · բ · 7 , 8 : գ · 11 · 23 : դ · 21 : (33) ա Յովհ · բ · 5 : դ · 20 : (34) Յովհ · իա · 18 : բ Պետր · ա · 14 : (35) Մատթ · իզ · 33 , 34 , 35 : Մարկ · ժդ · 29 , 30 , 31 : Լուկ · իբ · 33 , 34 :

ԻԱ· ԺԴ·

1 Խրիստոս իրան աշակերտներին երկինք տանելոյ յայսմիկ կը մխիթարէ · 6 Ինքն ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք և Հօր հետ մին լինելն կը խոստովանի · 13 Կը հաստատէ թէ իրան անունով հլած աղօթքն պիտի ընդունելի լինի · 15 Ցոյց կուտայ նորանց թէ որ նա սիրումն իրան պատուիրանքներն պահումն : 16 Իրան Հօրըն կաղաչէ որ մխիթարիչ Սուրբ Հոգին տայ նորանց , 27 Եւ իրան խաղաղութիւնն նորանց կը թողու ։

1 Ձեր սրտերդ թո՛ղ չը շըփոթի՝ ձեր՝ · բայց Աստուծոյն հաւատացէք՝ և ինձ հաւատացէք ։

2 Իմ Հօր տանն շատ բնակարաններ կան · ապա թէ չէր՝ ես ձեզ ասած կը լինէի , որ կ՚երթամ և ձեզ համար տեղ կը պատրաստեմ[2] ։

3 Եւ թէ որ գնամ և ձեզ համար տեղ պատրաստեմ , մինէլ կը գամ և ձեզ ինձ մօտ կառնեմ[3] · որ որտեղ որ ես լինիմ՝ էնտեղ էլ դուք լինիք[4] ։

4 Եւ որտեղ որ գնումեմ՝ գիտումէք , և ճանապարհըն գիտումէք ։

5 Թովմաս Նորան ասաց · Տէր՝ չենք գիտում՝ ո՛րտեղ ես գնում , և ի՞նչպէս կարենանք ճանապարհը գիտել ։

6 Յիսուս Նորան ասաց · Ես եմ ճանապարհն[5] և ճշմարտութիւնն[6] և կեանքն[7] · ո՛չ ով չի գալ Հօր մօտ՝ եթէ ո՛չ ինձանով[8] ։

7 Ով որ ինձ գիտենայիք՝ իմ Հօրս էլ կը գիտենայիք[9] · և սրանից ետև կը գիտենաք Նորան ։

8 Փիլիպպոս Նորան ասաց · Տէր՝ Հայրըն ցոյց տուր մեզ՝ և բաւական է մեզ ։

9 Յիսուս Նորան ասաց · Իս քան ժամանակ ձեզ հետ եմ , և ինձ չճանաչեցիը՝ Փիլիպպոս · ով որ ինձ տեսաւ՝ Հօրըն տեսաւ · և դու ի՞նչպէս ես ասում , թէ Հայրըն ցոյց տուր մեզ[10] ։

10 Չիս հաւատում՝ որ ես Հօր մէջն եմ , և Հայրն ինձանումէ[11] · էն բանն՝ որ ես խօսումեմ ձեզ հետ , չէ թէ իմ անձինցս եմ խօսում , բայց Հայրն՝ որ ինձանում բնակված է , նա է գործում էն գործքերըն[12] ։

11 Հաւատումէք ինձ , որ ես Հօր մէջն եմ՝ և Հայրն ինձանում ։

12 Ապա թէ չէ՝ գոնեա գործքերին համար հաւատացէք ինձ[13] · ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ ձեզ , թէ Ով որ ինձ հաւատումէ , էն գործքերըն որ ես գործումեմ՝ նա էլ կը գործէ , և էնից նրանցից աւելի մեծ բաներ էլ կը գործէ · ինչու որ՝ ես Հօր մօտն եմ գնում[14] ։

13 Եւ ինչ որ խնդրէք իմ անունով՝ էն կանեմ[15] ,

14 Որ Հայրն փառաւորվի Որդովն ։

15 Ով որ ինձ սիրումէք՝ իմ պատուիրանքներըս պահեցէք[16] ։

(1) Ա՚ոյր · 27 · Յովհ · ժգ · 3 · 22 · (2) Յովհ · ժգ · 33 · 36 · (3) Ա՚ոյր · 18 · 28 , Դատ · ա · 11 · (4) Յովհ · ժբ · 26 · ժէ · 24 · ա Թես · գ · 16 · (5) Եբր · թ · 8 · (6) Յովհ · ա · 17 · ը · 32 · (7) Յովհ · ա · 4 · ժա · 25 · (8) Յովհ · ժ · 9 · (9) Յովհ · ը · 19 · (10) Յովհ · ժբ · 45 · Կող · ա · 15 · Եբր · ա · 3 · (11) Ա՚ոյր · 20 · Յովհ · ժ · 38 · ժէ · 21 · 23 · (12) Յովհ · ե · 19 · է · 16 · ը · 28 · ժբ · 49 · (13) Յովհ · ե · 36 · ժ · 38 · (14) Մատթ · իա · 21 · Մարկ · ժգ · 17 · Ղ՚ուկ · ժ · 17 · (15) Մատթ · է · 7 · իա · 22 · Մարկ · ժա · 24 · Ղ՚ուկ · ժա · 9 · Յովհ · ժե · 7 · 16 · ժգ · 23 , 24 · Յով · ա · 5 · ա Յովհ · գ · 22 · ե · 14 · (16) Ա՚ոյր · 21 · 23 · Յովհ · ժե · 10 · 14 · ա Յովհ · ե · 3 ։

16 Եւ ես Հօրն կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կըտայ ձեզ · որ յաւիտեան ձեզ հետ բնակվի[17] :
17 Ճշմարտութեան Հոգին[18]՝ որ աշխարհքս կարօղ չէ ընդունել նորան[19] · ինչու որ՝ չի տեսնում նորան · և չի ճանաչում նորան · բայց դուք նորան ճանաչում էք, ինչու որ՝ ձեզ մօտ կըբնակվի՝ և ձեզ հետ կըլինի[20] :
18 Ձեզ որբ չեմ թողնիլ[21] · ձեզ մօտ կըգամ[22] :
19 Մի՛ն փոքր ժամանակ էլ՝ և աշխարհքն էլ չի տեսնիլ ինձ, բայց դուք կըտեսնէք ինձ[23] · ինչու որ՝ ես կենդանի եմ՝ և դուք կենդանի պիտի լինիք[24] :
20 Յն օրումն դուք կըճանաչէք, որ ես իմ Հօր մէջն եմ՝ և դուք ինձանում՝ և ես ձեզանում[25] :
21 Ով որ իմ պատուիրանքներըս ունի՝ և նորանց պահումէ, նա է՝ որ ինձ սիրումէ · և նա՝ որ ինձ սիրումէ՝ իմ Հօրիցս կըսիրվի · և ես կըսիրեմ նորան, և ինձ կերևացնեմ նորան[26] :
22 Յուդան՝ ոչ թէ էն Իսկարիօտացին, նորան ասաց · Ինչո՞ւ համար է, որ մեզ կըյայտնես քեզ՝ և աշխարհքին չէ՞[27] :
23 Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց · Ով որ մինն ինձ սիրումէ՝ իմ խօսքըս կըպահէ, և իմ Հօրս կըսիրէ նորան[28] · և նորա մօտն կըգանք և բնակութիւն կանենք նորա մօտ[29] :
24 Եւ նա՝ որ ինձ չի սիրում՝ իմ խօսքըս չի պահում · և իմ խօսքս՝ որ լսումէք՝ իմ չէ, բայց Հօրն է՝ որ ինձ ուղարկեց[30] :
25 Յս խօսեցի ձեզ հետ՝ դեռ քանի որ ձեզ մօտ եմ :
26 Բայց Մխիթարիչն Սուրբ Հոգին՝ որ Հայրն իմ անունովս կուղարկէ[31], նա ամէն բան կըսովորցընէ ձեզ, և ինչ որ ձեզ ասացի, ձեր մտքներդ կըբերէ[32] :
27 Խաղաղութիւն եմ թողում ձեզ, իմ խաղաղութիւնս եմ տալիս ձեզ[33] · չէ թէ՝ ինչպէս աշխարհքն տալիս է՝ ես եմ տալիս ձեզ · ձեր սրտերդ չըշփոթվին և չըվախենան[34] :
28 Լսեցիք, որ ես ասացի ձեզ[35], թէ Կ'երթամ և էլ կըգամ ձեզ մօտ · թէ որ ինձ սիրէիք, ապա ուրախ կըլինէիք՝ որ ես Հօր մօտն եմ գնում[36] · ինչու որ՝ իմ Հայրս մեծ է ինձանից :
29 Եւ (ես) հիմիկ ասացի ձեզ[37] · դեռ քանի որ չի եկել՝ որ երբոր լինի, հաւատաք[38] :
30 Յէլ շատ չեմ խօսիլ ձեզ հետ · ես աշխարհքիս իշխանըն գալիս է, և ինձանում բան չի գտնում[39] :
31 Բայց որ աշխարհքն գիտենայ՝ թէ (ես) սիրումեմ Հօրըն · և ինչպէս որ Հայրն պատուիրեց ինձ, էնպէս եմ անում · էլ վեր կացէք գնանք էտեղից[40] :

(17) Յովհ · ժե · 26 · ժզ · 7 : Հռոմ · ը · 15 · 26 : (18) Յովհ · ժե · 26 · ժզ · 13 · ա Յովհ · դ · 6 : (19) ա Կորնթ · բ · 14 : (20) ա Յովհ · բ · 27 : (21) Մատթ · իը · 20 : (22) Վէր · 3 · Վայր · 28 : (23) Յովհ · ժզ · 16 : (24) ա Կորնթ · ժե · 20 : (25) Վէր · 10 : Յովհ · ժ · 38 : ժե · 21 · 23 · 26 : (26) Վէր · 15 : Վայր · 23 · ա Յովհ · բ · 5 · ե · 3 : (27) Դատ · զ · 16 : (28) Վէր · 15 : (29) ա Յովհ · բ · 24 : Յայտ · գ · 20 : (30) Վէր · 10 : Յովհ · ե · 19 · 38 · է · 16 · ը · 28 · ժբ · 49 : (31) Վէր · 16 : Դատ · իզ · 49 : Յովհ · ժե · 26 · ժզ · 7 : (32) Յովհ · բ · 22 · ժբ · 16 · ժզ · 13 · ա Յովհ · բ · 20 · 27 : (33) Փիլպ · դ · 7 : Կող · գ · 15 : (34) Վէր · 1 : (35) Վէր · 3 · 18 : (36) Վէր · 12 : Յովհ · ժզ · 16 · ի · 17 : (37) Յովհ · է · 18 : ժ · 30 : Փիլպ · բ · 6 : (38) Յովհ · ժգ · 19 : ժզ · է : (39) Յովհ · ժբ · 31 · ժզ · 11 : (40) Յովհ · ժ · 18 : Փիլպ · բ · 8 : Եբր · է · 8 :

ԳԼ · ԺԹ

1 Վրիատոս որթոյ առակովն ցոյց կըտայ իրան անդամներին և իրան մէջ ելած էն սէրն որ
ի՛նքն ալ կըլինի , և նորանց կըմխիթարէ : 18 Աշխարհքն որ ժամանակ որ նորանց կա-
տէ՝ մին մխիթարութիւն է տալիս նորանց : 26 Սուրբ Հոգւոյն և առաքեալներին վկայու-
թիւնն իրան համար :

1 Ես ես ճշմարիտ որթն (վազն) ,
և իմ Հայրս (նորա) մշակն է :
2 Ամէն ճուղն որ ինձանում է՝
և պտուղ չըտալիս , նորան կտրում
է . և էն ամէնն՝ որ պտուղ է տա-
լիս՝ (նա) սրբում է նորան , որ էլ
աւելի պտղաբեր լինի[1] :
3 Հէնց հիմիկ դուք սուրբ էք՝ էն
բանին համար՝ որ ձեզ հետ խօսեցի[2] :
4 Կացէք ինձանում՝ և ես ձե-
զանում . ինչպէս որ ճուղն իրան
անձինքն կարօղ չէ պտուղ բերել ,
եթէ որթումն (վազո՛ւմն) հաստատ-
ված չըլինի , էնպէս էլ դուք՝ եթէ
ինձանում հաստատված չըլինիք[3] :
5 Ես որթն (վազն) եմ՝ և դուք
ճուղ . նա՝ որ ինձանում է հաս-
տատված՝ և ես նորանում , նա շատ
պտուղ է բերում[4] . ինչու որ՝ ա-
ռանց ինձ՝ իսկի մին բան չէք կա-
րօղ անել :
6 Մէկ որ մինն ինձանում չէ
հաստատված , նա դուրս է քցվում
ինչպէս ճուղ՝ և չորանում . և ժո-
ղովմէն նորան և կրակի մէջ են
քցում՝ և այրվում[5] :
7 Մէկ որ կենաք ինձանում՝ և իմ
խօսքերս ձեզանում կենան , ինչ որ
կամենաք , կըխնդրէք՝ և կըլինի ձեզ[6] :
8 Սրանով փառաւորվեցաւ իմ
Հայրս՝ որ շատ պտուղ բերէք . և
իմ աշակերտներս լինիք[8] :
9 Ինչպէս որ իմ Հայրն ինձ սի-
րեց՝ ես էլ ձեզ սիրեցի . հաստատ
կացէք իմ սիրոյ մէջն :
10 Մէկ որ իմ պատուիրանքներըս
պահէք , իմ սիրոյ մէջն կըկենաք .
ինչպէս որ ես իմ Հօրս պատուի-
րանքներըն պահեցի , և նորա սիրոյ
մէջն կենում եմ[9] :
11 Ես խօսեցի ձեզ հետ՝ որ իմ
ուրախութիւնս ձեզանում լինի , և
ձեր ուրախութիւնն լցված լինի[10] :
12 Ես է իմ պատուիրանքս՝ որ ի-
րար սիրէք , ինչպէս որ ես ձեզ սի-
րեցի[11] :
13 Ոչ ով աւելի մեծ սէր չունի
քանթէ էն՝ որ իրան անձըն դնէ ի-
րան բարեկամներին վերայ[12] :
14 Դուք իմ բարեկամներս էք ,
թէ որ անէք էն՝ որ ես պատուիրու-
մեմ ձեզ[13] :
15 Էլ ծառայ չեմ կանչում ձեզ ,
ինչու որ՝ ծառան չի գիտում՝ թէ
իրան տէրն ինչ է գործում . բայց
ձեզ բարեկամ կանչեցի , ինչու որ՝
ամէն ինչ՝ որ լսեցի իմ Հօրիցս , ի-
մացրի ձեզ[14] :

(1) Մատ . ԺԵ . 13 : (2) Յովհ . ԺԴ . 10 : ԺԷ . 17 : Երէս . Ե . 26 : ա Պետր . ա . 22 : (3) Կող . ա . 23 : ա Յովհ . Բ . 6 : (4) Ընտ . ԺԴ . 8 : Փիլիպ . ա . 11 : գ . 13 : Գործ . դ . 12 : (5) Մատ . գ . 10 : է . 19 : (6) Մարկ . 16 : Յովհ . ԺԴ . 13 , 14 : ԺԶ . 23 : (7) Մատ . Ե . 16 : Փիլիպ . ա . 11 : (8) Յովհ . ը . 31 : ԺԴ . 35 : (9) Յովհ . ԺԴ . 15 . 21 . 23 : (10) Յովհ . ԺԶ . 24 : ԺԷ . 13 : ա Յովհ . ա . 4 : (11) Յովհ . ԺԳ . 34 : ա Թես . դ . 9 : ա Պետր . դ . 8 : ա Յովհ . գ . 11 : դ . 21 : (12) Յովհ . Ժ . 11 . 15 : Հռոմ . Ե . 7 , 8 : Երէս . Ե . 2 : ա Յովհ . գ . 16 : (13) Յովհ . ԺԴ . 15 . 23 : Մատ . ԺԲ . 50 : (14) Ծննդ . ԺԸ . 17 : Յովհ . ԺԷ . 26 : Գործ . Բ . 27 :

16 Ձէ թէ դուք ինձ ընտրեցիք[15] · բայց ես ձեզ ընտրեցի՝ և ձեզ դրի[16], որ դուք գնաք՝ և պտղաբեր լինիք · և ձեր պտուղն մնայ · և ինչ որ իմ Հօրից խնդրէք իմ անունովս՝ էն կըտայ ձեզ[17] :

17 Այս եմ պատուիրում ձեզ՝ որ իրար սիրէք[18] :

18 Եթէ որ աշխարհքն ատումէ ձեզ , գիտացէք՝ որ առաջ ինձ ատեց[19] :

19 Եթէ որ էս աշխարհքիցս լինէիք՝ ապա աշխարհքն իրաններին կըսիրէր[20] · բայց որովհետև աշխարհքից չէք[21] · բայց ես ընտրեցի ձեզ աշխարհքից , նրա համար աշխարհքն ատումէ ձեզ :

20 Յիշեցէք էն խօսքըն՝ որ ասացի ձեզ · Թէ Ծառան իրան տիրոջից մեծ չէ[22] · Թէ որ ինձ հալածեցին , ապա ձեզ էլ կըհալածեն · Թէ որ իմ խօսքրս պահեցին՝ ապա ձերըն էլ կըպահեն[23] :

21 Բայց էն (բաներըն) կանեն ձեզ իմ անունիս համար[24] · ինչու որ՝ չըճանաչեցին Նորան՝ որ ինձ ուղարկեց :

22 Եթէ որ ես չէի եկել՝ և նորանց հետ խօսացել , նորանք մեղք չէին ունենալ[25] · բայց հիմիկ իսկի պատճառ չունին իրանց մեղաց համար[26] :

23 Որ ինձ է ատումՙ իմ Հօրըս էլ ատումէ[27] :

24 Եթէ որ էն գործքերըն՝ չէի գործել նորանց միջումն , որ մին ուրիշ մարդ չըգործեց , նորանք իսկի մեղք չունէին · բայց հիմիկ տեսին՝ և ատեցին ինձ և իմ Հօրըս[28] :

25 Բայց որ էն բանն կատարվի՝ որ նորանց օրէնքումն գրված է · Թէ Օրուր տեղն ատեցին ինձ[29] :

26 Բայց երբոր Մխիթարիչն կըգայ՝ որ նորան ես Հօրից կուղարկեմ ձեզ , Ճշմարտութեան Հոգին[30] , որ Հօրից է դուրս գալիս , նա կըվկայէ ինձ համար[31] :

27 Եւ դուք (էլ) կըվկայէք[32] , ինչու որ՝ սկըզբից ինձ հետ էք[33] :

ԿԼ · ԺՕ

1 Քրիստոս Աստըծ Հոգով խոստումնքումն , և իրան յարութիւն առնելոյ և երկինք համբառնալոյ յոյսումն աշակերտներն իրանց քաջնալոյ նեղութիւններին համար կըմխիթարէ : 23 Ընդհատատէ թէ ինչ որ իրան Հօրից խնդրումն իրան անունումն էն նորանց կըտայ : 33 Քրիստոսի հետ խաղաղութիւն և աշխարհքումն նեղութիւն պիտի ունենանք :

1 Այս խօսեցի ձեզ հետ , որ չըգայթագղվիք[1] :

2 Իրանց ժողովարաններիցն ձեզ դուրս կըհանեն[2] · բայց ժամանակ

(15) Յովհ · գ · 71 : Ժգ · 18 : ա Յովհ · դ · 10 · 19 : (16) Մարկ · իը · 19 · Ղուկ · Ժգ · 15 : Կող · ա · 6 : (17) Ա Հոր · 7 : Յովհ · Ժգ · 13 : (18) Ա Հոր · 12 : (19) ա Յովհ · գ · 1 · 13 : (20) ա Յովհ · դ · 5 : (21) Յովհ · Ժէ · 14 : (22) Մարկ · ժ · 24 · Ղուկ · գ · 40 : Յովհ · Ժգ · 16 : (23) Եղեռ · գ · 7 : (24) Մարկ · ժ · 22 : իդ · 9 : Յովհ · Ժգ · 3 : (25) Յովհ · թ · 41 : (26) Հռովմ · ա · 20 : Յակ · դ · 17 : (27) ա Յովհ · բ · 23 : (28) Յովհ · դ · 2 : է · 31 : թ · 32 : (29) Սաղմ · լե · 19 : կթ · 4 : (30) Ղուկ · իդ · 49 : Յովհ · Ժգ · 17 , 26 : Ժգ · 7 · 13 : Գործ · բ · 33 : (31) ա Յովհ · ե · 6 : (32) Ղուկ · իդ · 48 : Գործ · ա · 8 · 21 , 22 : բ · 32 : գ · 15 : դ · 20 · 23 : ե · 32 : ժ · 39 : Ժգ · 31 : ա Պետր · ե · 1 : բ Պետր · ա · 16 : (33) Ղուկ · ա · 2 : ա Յովհ · ա · 1 , 2 : (1) Մարկ · ժա · 6 : իդ · 10 : իզ · 31 : (2) Յովհ · թ · 22 · 34 : Ժբ · 42 :

կրգայ՝ որ ամէն ով որ սպանէ ձեզ, կրկարծէ թէ Աստուծոյ պաշտօն է մատուցանում[3]։

3 Եւ էն կանեն ձեզ վերայ. ինչու որ՝ ոչ Հօրըն ճանաչեցին՝ և ոչ ինձ[4]։

4 Այլ էս էլ խօսեցի ձեզ հետ, որ երբոր ժամանակն կրգայ՝ մրտքնեդ բերէք, թէ ես ասացի ձեզ[5]։ Էս բանըս սկզբնում չասացի ձեզ[6]. պատճառն որ՝ ես ձեզ հետ էի։ Այլ հիմիկ ես ինձ ուղարկողն մօտն եմ գնում. և ձեզանից իսկի մինն չի հարցնում ինձ, թէ Որ ես գնում[7]։

6 Այլ որովհետև էս խօսեցի ձեզ հետ, տրտմութիւնն լցրուց ձեր սրտերըն[8]։

7 Այլ ես ճշմարիտն ասում ձեզ՝ թէ լաւ է ձեզ համար, որ ես գնամ. ինչու որ՝ եթէ ես չգնամ, Մխիթարիչն չի գալ ձեզ մօտ[9]. բայց թէ որ գնամ, նորան կուղարկեմ ձեզ մօտ[10]։

8 Եւ նա երբոր կրգայ աշխարհքին կըյանդիմանէ, մեղաց համար, և արդարութեան համար, և դատաստանի համար։

9 Մեղաց համար՝ որ ինձ չեն հաւատում[11]։

10 Արդարութեան համար[12], որ ես իմ Հօր մօտն եմ գնում, և էլ ինձ չէք տեսնիլ[13]։

11 Դատաստանի համար[14] որ էս աշխարհքիս իշխանն դատապարտված է[15]։

12 Էլ շատ բան ունիմ որ ձեզ ասեմ, բայց հիմիկ չէք կարօղ տանել[16]։

13 Երբոր նա ճշմարտութեան Հոգին կրգայ[17], նա ձեզ ամէն ճշմարտութեանով կառաջնորդէ[18]. պատճառն որ՝ չէ թէ իրան անձնէից մին բան կրխօսի, բայց ինչ որ կըլսէ՝ էն կրխօսի, և նոր գալու բաներըն կրպատմէ ձեզ։

14 Նա ինձ կրփառաւորէ, ինչու որ՝ իմ բաներիցն կառնէ և կրպատմէ ձեզ։

15 Ամէն ինչ որ Հայրն ունի՝ իմը է. նրաՀամար ասացի ձեզ, թէ իմ բաներիցն կառնէ և կրպատմէ ձեզ[19]։

16 Մի՛նչեւ ժամանակ էլ, և էլ չէք տեսնիլ ինձ. և յետոյ մի քիչ էլ, և կրտեսնէք ինձ[20]. և ես Հօր մօտն եմ գնում[21]։

17 Աշակերտներիցն մին քանիսի իրար ասումէին. Նա ի՞նչ է որ ասումէ մեզ. Թէ Մի քիչ ժամանակ՝ և էլ չէք տեսնիլ ինձ, և մինէլ մի քիչ էլ, և կրտեսնէք ինձ, և Թէ ես իմ Հօր մօտն եմ գնում,

18 Եւ ասումէին. Ի՞նչ է էն մի քիչ ժամանակն. չենք գիտում՝ թէ ինչ է խօսում։

19 Յիսուս իմացաւ՝ թէ ուզում էին հարցնել իրան՝ և ասաց նոցա. Իրարհամար հարցնումէք իրար միջումն, որ ասացի՝ Թէ Մի քիչ ժամանակ, և չէք տես-

(3) Գործ. է. 59։ Թ. 1։ Իշ. 9, 10, 11։ (4) Յովհ. ժե. 21։ Հռոմ. ժ. 2։ ա Կորնթ. բ. 8։ ա Տիմ. ա. 13։ (5) Յովհ. ժգ. 19։ ժդ. 29։ (6) Մատթ. Թ. 15։ (7) Ալաւ. 10. 16։ է. 33։ ժգ. 3։ ժդ. 28։ (8) Ալաւ. 22։ Յովհ. ժգ. 1։ (9) Յովհ. է. 39։ ժգ. 16. 26։ ժե. 26։ (10) Գործ. բ. 33։ Եփես. գ. 8։ (11) Գործ. բ. 32։ (12) Գործ. բ. 32։ (13) Յովհ. գ. 14։ է. 32։ (14) Գործ. իշ. 18։ (15) Ալաւ. ժ. 18։ Յովհ. ժբ. 31։ Եփես. բ. 2։ Կող. բ. 15։ Եբր. բ. 14։ (16) Մատթ. գ. 33։ ա Կորնթ. գ. 2։ Եբր. է. 12։ (17) Յովհ. ժգ. 17։ ժե. 26։ (18) Յովհ. ժգ. 26։ ա Յովհ. բ. 20. 27։ (19) Մատթ. ժա. 27։ Յովհ. գ. 35։ ժգ. 3։ ժե. 10։ (20) Ալէք. 10։ Յովհ. է. 33։ ժգ. 33։ ժգ. 19։ (21) Ալաւ. 28։ Յովհ. ժգ. 3։

Նիլ ինձ , և մինչ՝ մինքիչ էլ , և կրտեսնէք ինձ ։

20 Ա՛շմարիտըն ճշմարիտըն ասում ձեզ , որ դուք լայ կըլլենիք և կըողբաք , և աշխարհքն կուրախանայ • դուք կըտրտմիք , բայց ձեր տրտմութիւնն ուրախութիւն կըլլենի ։

21 Ա՛յն կին , երբոր ծնի՝ տըրտմութիւն ընդունի նորան , ինչու որ՝ նորա ժամանակն հասել է • բայց երբոր երեխան ծնովում , էն նեղութիւնըն չէյիշում էն ուրախութեան համար՝ որ մին մարդ ծընվաւ աշխարհքի մէջ[22] ։

22 Եւ դուք հիմիկ տրտմութիւն ունիք[23] , բայց մինէլ կըտեսնեմ ձեզ , և ձեր սրտերն ուրախ կըլլինին • և ձեր ուրախութիւնըն իսկի մինն չի Ա՛նիլ ձեզանից[24] ։

23 Եւ էն օրում իսկի մին բան չէք Հարցնիլ ինձ • Ա՛շմարիտըն ճշմարիտըն ասում ձեզ՝ թէ Ինչ որ իմ Հօրիցս խնդրէք իմ անունովս , էն կրտայ ձեզ[25] ։

24 Ա՛յնչէև հիմիկ՝ իսկի բան չըխնդրեցիք իմ անունովս • խնդրեցէք և կառնէք , որ ձեր ուրախութիւնըն կատարեալ լինի[26] ։

25 Այս բանըս առակով խօսեցի ձեզ Հետ • ժամանակ կըգայ , երբոր էլ առակով չեմ խօսիլ ձեզ Հետ • բայց յայտնի կըպատմեմ ձեզ Հօր համար ։

26 Այն օրում իմ անունովս կըխնդրէք • և չեմ ասում՝ ձեզ՝ թէ ես ձեզ համար կաղաչեմ Հօրըն[27] ։

27 Ինչու որ՝ Հենց Հայրն ինքն սիրում ձեզ[28] • ինչու որ՝ դուք ինձ սիրեցիք և Հաւատացիք , թէ ես Աստուածանից դուրս եկի[29] ։

28 Հօրից դուրս եկի՝ և եկի աշխարհք • մին էլ աշխարհքըն թողում եմ և Հօր մօտն եմ գընում[30] ։

29 Աշակերտներն նորան ասացին • Ա՛հա հիմիկ յայտնի ես խօսում , և իսկի մին առակ չես ասում ։

30 Հիմիկ գիտումենք՝ որ դու ամէն բան գիտումես[31] • և իսկի պէտք չէ՝ որ մինն Հարցնէ քեզ • սրանով Հաւատումենք՝ թէ դու Աստուածանից դուրս եկիր[32] ։

31 Յիսուս պատասխան տուաւ նորանց և ասաց • Հիմիկ Հաւատո՞ւմէք ։

32 Ա՛հա ժամանակ կըգայ , և Հենց հիմիկ եկած է[33] , որ ամէն մէկդ կըցրվիք իրան տեղն , և ինձ մէնակ կըթողէք[34] • և մէնակ չեմ[35] • ինչու որ՝ Հայրն ինձ Հետ է ։

33 Այս խօսեցի ձեզ Հետ , որ ինձանում խաղաղութիւն ունենաք[36] • Էստեղ աշխարհքումն նեղութիւն կունենաք[37] , բայց սրտապինդ կացէք[38] , ինչու որ ես աշխարհքին յաղթեցի[39] ։

(22) Նոայ • իշ • 17 ։ (23) Ա՛իր • 6 ։ (24) Գ՛ոէ • իդ • 41 • 52 ։ Յովհ • ժդ • 1 • 27 ։ ի • 20 ։ Գործ • բ • 46 ։ ժգ • 52 ։ ա Պետր • ա • 8 ։ (25) Մատ • է • 7 ։ Յովհ • ժդ • 13 ։ ժե • 16 ։ (26) Յովհ • ժե • 11 ։ (27) Ա՛իր • 23 ։ (28) Յովհ • ժգ • 21 • 23 ։ (29) Ա՛այր • 30 ։ Յովհ • դ • 13 ։ ժէ • 8 ։ (30) Յովհ • ժգ • 3 ։ (31) Յովհ • իա • 17 ։ (32) Ա՛իր • 27 ։ Յովհ • ժէ • 8 ։ (33) Մատ • իշ • 31 ։ Մարկ • ժգ • 27 ։ (34) Յովհ • ի • 10 ։ (35) Յովհ • ը • 29 • ժգ • 10 , 11 ։ (36) Նոայ • թ • 6 ։ Յովհ • ժգ • 27 ։ Հռոմ • ե • 1 ։ Եփես • բ • 14 ։ Կող • ա • 20 ։ (37) Յովհ • ժե • 19 , 20 , 21 ։ բ Տիմ • գ • 12 ։ (38) Յովհ • ժգ • 1 ։ (39) Հռոմ • ը • 37 ։ ա Յովհ • դ • 4 ։ ե • 4 ։

ԳԼ · ԺԷ

1 Հիսուս իրան Հօրն կաղօթէ որ Նորան փառաւորէ , 11 Եւ իրան աշակերտներն սուրբ պահէ որ մին լինին , 17 Որ Նորանց սուրբ անէ իրան ճշմարտութենովն , 20 Նորանց և ամեն ուրիշ հաւատացեալներին համար աղաչէ մէ , 24 Որ Նորանք մին լինին և իրան հետ երկընքումն լինին :

1 Երբոր Յիսուս էս խօսեց՝ իրան աչքերըն բարձրացրուց դէպի երկինքն և ասաց . Հայր՝ ժամն (սահմանն) հասել է , փառաւորիր քո Որդոյդ՝ որ քո Որդին էլ քեզ փառաւորէ[1] :

2 Ինչպէս որ Նորան իշխանութիւն տուիր ամեն մարմնոյ վերայ , որ յաւիտենական կեանքն տայ էն ամենին[2] որ տուիր Նորան[3] :

3 Էս է յաւիտենական կեանքն[4] , որ քեզ միայն ճշմարիտ Աստուած ճանաչեն[5] , և Նորան , որ ուղարկեցիր Յիսուսին Քրիստոսին[6] :

4 Ես քեզ փառաւորեցի երկրի վերայ[7] . էն գործըն կատարեցի[8] , որ տուիր ինձ՝ որ անեմ[9] :

5 Եւ հիմիկ Հայր՝ փառաւորիր ինձ քեզ մօտ էն փառքովն՝ որ Նորան աշխարհքի լինելուցն առաջ ունէի քեզ մօտ[10] :

6 Քո անունըդ յայտնեցի էն մարդկանց[11] որ աշխարհքիցն տուիր ինձ[12] . քո էին , և ինձ տուիր Նորանց . և քո խօսքըդ պահեցին :

7 Հիմիկ իմացան՝ որ էն ամեն բանն՝ որ ինձ տուիր՝ քեզանից է .

8 Ինչու որ՝ էն խօսքըն՝ որ ինձ տուիր՝ (ես) Նորանց տուի[13] . և Նորանք ընդունեցին , և ճշմարտութենով իմացան՝ որ քեզանից դուրս եկի[14] . և հաւատացին՝ թէ դու ուղարկեցիր ինձ :

9 Աղաչում եմ Նորանց համար եմ աղաչում , և աշխարհքի համար չեմ աղաչում . բայց Նորանց համար՝ որ ինձ տուիր , ինչու որ՝ քո էին[15] :

10 Եւ ինչ որ իմս է՝ էն ամենն քո է . և ինչ քո է՝ էն իմս է[16] . և ես փառաւորված եմ Նորանցում :

11 Եւ ես էլ աշխարհքումս չեմ , և Նորանք աշխարհքումս են , և ես քեզ մօտ եմ գալիս[17] . սուրբ Հայր՝ պահիր Նորանց քո անունովդ[18] , որ Նորանով տուիր ինձ՝ որ մին լինին[19] , ինչպէս որ մենք էլ մին ենք[20] :

12 Դեռ քանի որ աշխարհքումն Նորանց հետ էի , ես էի պահում Նորանց քո անունովդ , Նորանց որ

(1) Յովհ · ժբ · 23 : ժգ · 32 : (2) Դան · է · 14 : Ա Կորնթ · ժա · 27 : Իսա · 18 : Յովհ · գ · 35 : է · 27 : ա Կորնթ · ժե · 25 · 27 : Փիլիպ · բ · 10 : Եբր · բ · 8 : (3) Ա Յոան · 6 · 9 · 24 : Յովհ · զ · 37 : (4) Ղուկ · ծգ · 11 : Երեմ · թ · 24 : (5) ա Կորնթ · ը · 4 : ա Թես · ա · 9 : (6) Յովհ · գ · 34 : է · 36 , 37 : զ · 29 · 58 : է · 29 : ժ · 36 : ժա · 42 : (7) Յովհ · ժգ · 31 : ժգ · 13 : (8) Յովհ · դ · 34 : է · 36 : թ · 3 : ժթ · 30 : (9) Յովհ · ժգ · 31 : ժե · 10 : (10) Յովհ · ա · 1 , 2 : ժ · 30 : ժգ · 9 : Փիլիպ · բ · 6 : Կող · ա · 15 · 17 : Եբր · ա · 3 · 10 : (11) Ա Յոան · 26 : Ասվ · Իր · 22 : (12) Ա Յոան · 2 : Ա Յոան · 9 · 11 : Յովհ · զ · 37 · 39 : ժ · 29 : ժե · 19 : (13) Յովհ · ը · 28 : ժբ · 49 : ժգ · 10 : (14) Ա Յոան · 25 : Յովհ · ժգ · 27 · 30 : (15) ա Յովհ · է · 19 : (16) Յովհ · ժգ · 15 : (17) Յովհ · ժգ · 1 : ժգ · 28 : (18) ա Պետր · ա · 5 : Յուդ · 1 : (19) Ա Յոան · 21 , Ասյե : (20) Յովհ · ժ · 30 :

տուիր ինձ , էլ պահեցի[21] · և նո-
րանցից մինն չըկորաւ[22] , բայց մի-
նակ կորուստի որդին[23] , որ գիրքն
կատարվի[24] :

13 Այայց հիմիկ քեզ մօտ եմ գա-
լիս · և էս բանըս աշխարհքումն
խօսումեմ , որ իմ ուրախութիւնըս
լիութեամբով ունենան իրանց անձ-
ներումն :

14 Ես քո խօսքըդ նորանց տուի[25] ,
և աշխարհքս նորանց ատեց , պատ-
ճառն որ՝ աշխարհքիցս չեն[26] , ինչ-
պէս որ ես էլ աշխարհքիցս չեմ[27] :

15 Այս չեմ աղաչում , որ աշ-
խարհքիցս վեր առնես նորանց ·
բայց որ չարիցն պահես նորանց[28] :

16 Այս աշխարհքիցս չեն , ինչպէս
որ ես էլ աշխարհքիցս չեմ[29] :

17 Նորանց սուրբ արա քո ճըշ-
մարտութեամբով[30] · ինչու որ՝ քո
խօսքդ ճշմարտութիւն է[31] :

18 Ինչպէս որ ինձ ուղարկեցիր
աշխարհք , ես էլ նորանց ուղար-
կեցի աշխարհք[32] :

19 Եւ ես նորանց վերայ իմ ան-
ձըս սուրբ եմ անում , որ նորանք
էլ ճշմարտութեամբով սրբված լի-
նին[33] :

20 Այայց ոչ թէ մինակ նորանց
համար եմ աղաչում , այլ ամենին
համար էլ՝ որ նորանց խօսքովն կը-
հաւատան ինձ :

21 Որ ամենքն մին լինին , ինչ-
պէս որ[34] դու Հայր ինձանում՝ և
ես քեզանում , որ նորանք էլ մե-
զանում լինին[35] · որ աշխարհքն
հաւատայ թէ դու ուղարկեցիր ինձ :

22 Եւ ես՝ էն փառքն՝ որ ինձ
տուիր՝ նորանց տուի , որ մին լի-
նին՝ ինչպէս որ մենք էլ մին ենք[36] :

23 Ես նորանցում՝ և դու ինձա-
նում , որ մընի մէջ կատարեալ
լինին[37] · և աշխարհքն գիտենայ
թէ դու ուղարկեցիր ինձ · և ես
սիրեցի նորանց՝ ինչպէս որ դու
ինձ սիրեցիր :

24 Հայր՝ նորանք՝ որ դու ինձ
տուիր[38] , կամենում եմ որ՝ ինչտեղ
որ ես եմ , նորանք էլ ինձ հետ լի-
նին · որ իմ փառքըս տեսնեն , որ
տուիր ինձ · ինչու որ՝ աշխարհ-
քի լինելուցն առաջ սիրեցիր ինձ[39] :

25 Արդար Հայր՝ աշխարհքն չը-
ճանաչեց քեզ[40] · բայց ես ճանաչե-
ցի քեզ[41] , և սորանք ճանաչեցին ,
որ դու ուղարկեցիր ինձ[42] :

26 Եւ քո անունըդ ճանաչացրի
նորանց , և կրճանաչացնեմ[43] · որ
էն սէրն , որ ինձ սիրեցիր՝ նորան-
ցում լինի , և ես էլ նորանցում[44] :

(21) Յով · ղ · 39 · ժ · 28 · Լբեր · բ · 13 · (22) Յով · ժը · 9 · ա Յով · բ · 19 · (23) Յով · ղ · 71 · ժգ · 18 · (24) Սամ · ձթ · 8 · Պսղ · ա · 20 · (25) Ա Հեր · 8 · (26) Յով · ժե · 18 , 19 · ա Յով · դ · 13 · (27) Յով · ը · 23 · Ա Պետ · 16 · (28) Մատ · ղ · 13 · Գաղ · ա · 4 · բ Թես · գ · 3 · ա Յով · ե · 18 · (29) Ա Հեր · 14 · (30) Յով · ժե · 3 · Գսղ · ժե · 9 · Լփես · ե · 26 · ա Պետ · ա · 22 · (31) բ Թագ · է · 28 · Սամ · ձթ · 142 · 151 · Յով · ը · 40 · (32) Յով · ք · 21 · (33) ա Սրբն · ա · 2 · 30 · ա Թես · դ · 7 · Լբեր · ժ · 10 · (34) Ա Հեր · 11 · Պ Պետ · 22 , 23 · Յով · ժ · 16 · Հռով · ժը · 5 · Գաղ · գ · 28 · (35) Յով · ժ · 38 · ժգ · 11 · (36) Յով · ժգ · 20 · ա Յով · ա · 3 · գ · 24 · (37) Կող · գ · 14 · (38) Յով · ժը · 26 · ժգ · 3 · ա Թես · դ · 16 · (39) Ա Հեր · 5 · (40) Յով · ժե · 21 · ժգ · 3 · (41) Յով · է · 29 · ը · 55 · ժ · 15 · (42) Ա Հեր · 8 · Յով · ժգ · 27 · (43) Ա Հեր · 6 · Յով · ժե · 15 · (44) Յով · ժե · 9 ·

ԳԼ · ՀՐ

1 Յուդան Յիսուսին կը մատնէ : 6 Պապասւորներն գետին վերայ կը զարկվին : 10 Պետրոս Մաղքոսի ականջը կը կոտրէ : 12 Կը բռնեն Յիսուսին և կը տանին Ննայի մօտ : 15 Պետրոսի ուրանալն : 19 Յիսուսին Վհանայապետի առաջև դատվիլն : 28 Պիղատոսի առաջին իրան վերայ էլած չարախօսութիւնն : 36 Իրան թագաւորութիւն : 40 Հրէաներն աղաղակումն որ Խարբբան նորանց արձակվի :

1 Յիսուս երբոր էս ասաց , ա-
շակերտներին հետ դուրս գնաց[1] Կետրոնի ձորի մէկէ կողմն , որտեղ որ պարտէզ (պօսքան) կար[2] • որ նորա մէջ մտաւ ինքն և իրան ա-
շակերտներն :

2 Յուդա էլ որ պիտի մատնէր նորան , գիտումէր էնտեղն • ին-
չու որ՝ Յիսուս շատ անգամ ժո-
ղովվել էր էնտեղն աշակերտներին հետ[3] :

3 Եւ Յուդան զինուորների գունդը (պէօլիւքը) և քահանայապետ-
ներից և փարիսեցիներից սպասա-
ւորներ առաւ իրան հետ , և եկաւ էնտեղ ջահերով և լապտերներով (ֆանարներով) և զէնքերով[4] :

4 Ինչ Յիսուս երբոր տեսաւ էն ամէնն , որ իրան վերայ էր եկել , դուրս եկաւ և նորանց ասաց • Ո՞Մ էք ուզում :

5 Պատասխան տուին նորան թէ՝ Յիսուս Նազօրեցոյն • Յիսուս նո-
րանց ասաց • Ես եմ • Յուդան էլ որ նորան մատնումէր՝ կանգնած էր նորանց հետ :

6 Երբոր (Յիսուս) ասաց թէ Ես եմ , (նորանք) յետ գնացին , և գետնի վերայ զարկվեցան :

7 Ո՞ՐՆԷ Հարցրուց նորանց՝ թէ Ո՞Մ էք ուզում • և նորանք ասա-
ցին • Յիսուս Նազօրեցոյն :

8 Յիսուս նորանց պատասխան տուաւ • Ձեզ ասացի թէ Ես եմ • ուրեմն թէ որ ինձ էք ուզում , թող տուէք դորանց , որ գնան :

9 Որ կատարվի էն բանն՝ որ ա-
սաց , թէ Նորանց՝ որ ինձ տուիր , նորանցից իսկի մինըն էլ չեմ կորց-
նել[5] :

10 Ինչ Սիմոն Պետրոսն՝ որովհետև սուր ունէր՝ քաշեց էն և քա-
հանայապետի ծառային զարկեց , և նորա աջ ականջը կտրեց • և էն ծառայի անունն Մ՝ալքոս էր[6] :

11 Յիսուս Պետրոսին ասաց • Սուրդ դարձրու քցիր իրան պա-
տենքի (կընի) մէջն • էն բաժակըն (կոսքն) որ իմ Հայրս տուաւ ինձ , էն չըխմեմ[7] :

12 Ինչ զինուորների գունդըն (պէօլիւքն) և հազարապետն և Հր-
էաների սպասաւորներն բռնեցին Յիսուսին , և կապեցին :

13 Եւ տարան նորան[8] Ննայի մօտ , որ կայիափայի աներն էր • որ էն տարվան քահանայապետն էր[9] :

14 Մա էն կայիափան էր , որ Հր-
էաներին խրատ տուաւ՝ թէ Լաւ է , մին մարդ մեռնի ժողովրդի վե-
րայ[10] :

15 Եւ Սիմոն Պետրոսն և մէկէլ աշակերտն գնումէին Յիսուսի ե-
տևէն : Էն աշակերտն՝ որովհետև

(1) Մատ · իզ · 36 : Մարկ · ժգ · 32 : Ղուկ · իբ · 39 : (2) Բ Թագ · ժե · 23 : (3) Ղուկ · իա · 37 : իբ · 30 : (4) Մատ · իզ · 47 : Մարկ · ժգ · 43 : Ղուկ · իբ · 47 : Գործ · ա · 16 : (5) Յովհ · ժե · 12 : (6) Մատ · իզ · 51 : Մարկ · ժգ · 47 : Ղուկ · իբ · 49 , 50 : (7) Մատ · ի · 22 : իզ · 39 · 42 : (8) Մատ · իզ · 57 : (9) Ղուկ · գ · 2 : (10) Յովհ · ժա · 50 :

ճանաչէ էր քահանայապետին , Յի-
սուսի հետ մտաւ քահանայապետի
սրահն[11] :

16 Եւ Պետրոս դուռն մնաց կանգ-
նած էր դուրսն[12] . էն միւսն աշա-
կերտն , որ քահանայապետին ճա-
նաչէ էր , դուրս եկաւ և դռնապա-
նին ասաց , և Պետրոսին ներս
մտցրուց :

17 Էն աղջկին՝ որ դռնապան էր՝
Պետրոսին ասաց . Մի՛թէ դու էլ
էն մարդոյ աշակերտներիցն ես . և
նա ասաց՝ Թէ Չեմ :

18 Էնտեղն ծառաներն և սպասա-
ւորներն կանգնած էին , կրակը վա-
ռած , ինչու որ՝ ցուրտ էր՝ և տա-
քանում էին . Պետրոսն էլ Նորանց
հետ կանգնած էր և տաքանում էր :

19 Եւ քահանայապետն Յիսուսին
հարցրուց (իրան) աշակերտներն
համար՝ և իրան վարդապետութեան
համար :

20 Յիսուս պատասխան տուաւ Նո-
րան . Ես յայտնի խօսեցի աշխարհ-
քի մէջն[13] . ես ամէն ժամանակ սո-
վորցրի ժողովարանում , և հենց
տաճարում , որտեղ որ ամէն Հը-
րէաներն ժողովված էին , և խոկի
մին ծածուկ բան չըխօսեցի :

21 Ինչու՞ ես ինձ հարցնում . Նորանց հարցրու՝ որ լսեցին , թէ
ինչ խօսեցի Նորանց հետ . ահա
Նորանք գիտումեն՝ ինչ որ խօսեցի :

22 Երբոր նա էս ասաց , սպասա-
ւորներիցն միւն , որ հետեղ կանգ-
նած էր , Յիսուսին ապտակ (անէ
ձէ) տուաւ՝ և ասաց[14] . Դպկես
ես պատասխան տալիս քահանայա-
պետին :

23 Եւ Յիսուս Նորան ասաց . Թէ
որ չար բան խօսեցի՝ վկայիր էն չա-
րին համար . բայց Թէ որ բարի (ա-
սացի) , ինչու՞ ես զարկում ինձ :

24 Եւ Հանա Նորան կապած ու-
ղարկեց Կայիափա քահանայապետի
մօտն[15] :

25 Եւ Սիմոն Պետրոսն հետեղ
կանգնած էր՝ և տաքանումէր . Նո-
րան ասացին[16] , Մի՛թէ դու էլ Նո-
րա աշակերտներիցն ես . Նա ուրա-
ցաւ և ասաց՝ Թէ Չեմ :

26 Եւ քահանայապետի ծառանե-
րիցն միւնն՝ որ ազգական էր Նորան ,
որ Պետրոս Նորա ականջն կտրեց .
ասաց . Չէ՞ որ հենց ես տեսի քեզ
էն պարտէզումն (պօսպանում) Նորա
հետ :

27 Պետրոսն միւնէլ ուրացաւ . և
շուտով հաւն խօսեց[17] :

28 Եւ Յիսուսին Կայիափայի տա-
նիցն տարան դատաւորի պալատն[18] .
և առաւօտ էր . և Նորանք չըմը-
տին պալատի մէջն , որ չըպղծ-
վին , բայց որ զատիկըն ուտեն[19] :

29 Պիղատոս դուրս եկաւ Նորանց
մօտ և ասաց . Ինչ մարդոյ հա-
մար բ՞նչ չարախօսութիւն էք ա-
նում :

30 Պատասխան տուին և Նորան
ասացին . Թէ որ էն մարդն չա-
րագործ չըլինէր , ապա Նորան
չէինք մատնել քեզ :

31 Պիղատոս Նորանց ասաց . Դուք
առէք Նորան , և ձեր օրէնքին
պէս դատեցէք . Հրէաներն Նորան
ասացին . Մենք արժան չէ որ մին
(մարդ) սպանենք :

32 Որ Յիսուսի խօսքն կատարվի՝

(11) Մարկ . իգ . 58 : Մաթ . ժգ . 54 : Ղուկ . իբ . 54 : (12) Մարկ . իզ . 69 : Մաթ . ժգ . 66 : Ղուկ . իբ . 54 : (13) Մարկ . իզ . 55 : Ղուկ . դ . 15 : Յովհ . է . 14 . 26 . 28 . ը . 2 : (14) Երեմ . ի . 2 : Գործ . իգ . 2 : (15) Մարկ . իզ . 57 : (16) Մարկ . իզ . 69 . 71 : Մաթ . ժգ . 69 : Ղուկ . իբ . 58 : (17) Մարկ . իզ . 74 : Մաթ . ժգ . 72 : Ղուկ . իբ . 60 . Յովհ . ժգ . 38 : (18) Մարկ . իե . 2 : Մաթ . ժե . 1 : Ղուկ . իգ . 1 : Գործ . գ . 13 . Մարկ . իե . 27 : (19) Գործ . ժ . 28 : ժա . 3 :

որ ասաց , ցույց տալով՝ թէ ինչ մահով պիտի մեռնի[20] :

33 Պիղատոս մինէլ մտաւ պալատըն , Յիսուսին կանչեց՝ և նորան ասաց • Դո՞ւ ես Հրէաների թագաւորն[21] :

34 Յիսուս պատասխան տուաւ • Քեզմէ՞նից ես ասում էդ , թէ ուրիշներն ասացին քեզ ինձ համար :

35 Պիղատոս պատասխան տուաւ • Ա՞րեթէ ես էլ Հրեայ եմ • քո ազգդ և քահանայապետներն քեզ մատնեցին ինձ , դու ինչ բան ես արել :

36 Յիսուս պատասխան տուաւ[22] • Իմ թագաւորութիւնս էս աշխարհքից չէ[23] • Թէ որ իմ թագաւորութիւնս էս աշխարհքից լինէր , ապա իմ ծառաներս կռիւ կանէին՝ որ չըմատնըվիմ Հրէաների ձեռքն • բայց իմ հիմիկ իմ թագաւորութիւնս էստեղից չէ :

37 Պիղատոս ասաց նորան • Ա՞պա թէ որ էդպէս է , դու մին թագաւոր ես • Յիսուս պատասխան տուաւ • Դու ես ասում՝ որ ես թագաւոր եմ • բայց ես ինձ դրահամար եմ ծնված , և ինձ դրահամար եմ եկել աշխարհք , որ ճշմարտութեանն վկայեմ • ամէն ով որ ճշմարտութենիցն է՝ իմ խօսքիս լսում[24] :

38 Պիղատոս նորան ասաց • Ի՞նչ է ճշմարտութիւն • երբոր էս ասաց , մինէլ դուրս գնաց Հրեաների մօտ և նորանց ասաց • Ես իսկի մին պատճառ չեմ գտնում նորանում[25] :

39 Բայց ձեր սովորութիւն է՝ որ զատկի ժամանակումն մին մարդ արձակեմ ձեզ համար • ուրեմն կամենում՝ որ Հրեաների թագաւորն արձակեմ ձեզ համար[26] :

40 Ամէնքն աղաղակեցին՝ և ասում էին[27] • Նորան չէ , բայց Բարաբբային • և էն Բարաբբան (մին) աւազակ էր[28] :

ԳԼ · ԺԹ

1 Յիսուսի ծեծվիլն , փշերով պսակվիլն և ապտակվիլն : 4 Պիղատոս կամենում՝ որ նորան արձակէ , բայց Հրեաների աղաղակին համար նորանց ձեռքն կըտայ որ խաչ հանվի : 23 Նորա կապային վերայ վիճակ կըձգեն : 26 Իրան մայրն Յովհաննէսի կըձգէ : 30 Կըմեռնի : 34 Նորա կողքն կըխոցեն : 38 Յովսէփն և Նիկոդիմոսն նորան կըթաղեն :

1 Յետ ժամանակին Պիղատոս Յիսուսին առաւ և ծեծեց[1] :

2 Եւ զինուորներն փշերից մին պսակ շինեցին , նորան գլխովն դրին , և ծիրանի շոր հագցրին նորան :

3 Եւ գալիս էին նորա մօտ , և ասում • Ո՛ղջ կաց Հրէից թագաւոր • և ապտակներ (անլեհեզ) էին տալիս նորան :

4 Պիղատոս մինէլ դուրս գնաց և նորանց ասաց • Ո՛հա նորան դուրս եմ բերում ձեզ մօտ , որ գիտեցէք թէ՝ ես իսկի մին մեղաս չեմ գտնում նորանում[2] :

5 Յիսուս դուրս եկաւ և փշեղ-

(20) Մարկ · ի · 19 : Յովհ · ժբ · 32 , 33 : (21) Մարկ · ιե · 11 : (22) ա Տիմ · գ · 13 : (23) Դան · բ · 44 : է · 14 : Դատ · ժբ · 14 : Յովհ · գ · 15 : ը · 15 : (24) Յովհ · ը · 47 : ա Յովհ · գ · 19 : դ · 6 : (25) Մարկ · ιե · 24 : Դատ · ιգ · 4 : Յովհ · ժե · 4 · 6 : (26) Մարկ · ιե · 15 : Մատ · ժե · 6 : Դատ · ιգ · 17 : (27) Ժողթ · գ · 14 : (28) Դատ · ιգ · 19 : (1) Մարկ · ի · 19 : ιե · 26 : Մատ · ժե · 15 : Դատ · ժբ · 33 : (2) Յովհ · ժբ · 38 : Դատ · 6 :

րից պսակ ունէր , և ծիրանի հա-
գուստ • և Նորանց ասաց • Ահա
եկ մարդ ձեր առաջիդ ։

6 Երբոր քահանայապետներն և
սպասաւորներն Նորան տեսին , ա-
ղաղակեցին՝ և ասացին[2] • Խաչ հա-
նիր դորան • Պիղատոս Նորանց
ասաց • Ձեզ մօտ առէք դորան , և
Հինց ձեզանից խաչ հանեցէք • ին-
չու որ՝ ես իսկի մեսս չեմ գտնում
դորանում ։

7 Հրէաներն պատասխան տուին
Նորան • Մենք օրէնք ունինք , և
մեր օրէնքին պէս պէտք է մեռնի[4] •
ինչու որ՝ իրան անձըն Աստուծոյ
Որդի արաւ[5] ։

8 Երբոր Պիղատոս էս բանս լը-
սեց , էլ աւելի վախեցաւ ։

9 Մինէլ մտաւ պալատի մէջ , և
Յիսուսին ասաց • Դու ի՞նչ տե-
ղից ես • և Յիսուս պատասխան
չըտուաւ Նորան[6] ։

10 Պիղատոս ասաց Նորան • Ինձ
հետ չես խոսում • միթէ չես գի-
տում, որ իշխանութիւն ունիմ քեզ
խաչ հանելոյ , և իշխանութիւն ու-
նիմ քեզ արձակելոյ ։

11 Յիսուս պատասխան տուաւ •
Դու իշխանութիւն չունէիր ինձ
վերայ , թէ որ վերևից չէր տըվ-
ած քեզ՝ • Նրահամար՝ նա որ ինձ
մատնեց քեզ , նորա մեղքն (աւելի)
մեծ է ։

12 Եւ Նրանից հետև Պիղատոս ու-
զումէր՝ որ Նորան արձակէ • և Հը-
րէաներն աղաղակումէին և ասում •
Թէ որ դորան արձակես՝ կայսերի
բարեկամ չես[8] • ամեն ով որ իրան
անձըն թագաւոր է կոչում , նա
կայսերին հակառակ է[9] ։

13 Պիղատոս երբոր էս բաներըս
լսեց , Յիսուսին դուրս բերաւ , և
բեմին վերայ նստեց , հետեղն՝ որ
Վարայատակ էր կոչվում , և Եբ-
րայեցերէն Կապպաթա ։

14 Օրսակի ուրբաթն էր՝ իրր վեց
ժամն (սահաթն) էր , և Հրէաներին
ասաց • Ահա ձեր թագաւորն ձեր
առաջին (է)[10] ։

15 Եւ Նորանք աղաղակումէին ,
Մեզանից վեր առ , մեզանից վեր
առ՝ և խաչ հանիր դորան • Պիղա-
տոս Նորանց ասաց • Ես ձեր թա-
գաւորն խաչ հանեմ • քահանայա-
պետներն պատասխան տուին • Մենք
թագաւոր չունինք կայսերից զոկ
(սահաչ)[11] ։

16 Յն ժամանակն Նորան տուաւ
Նորանց ձեռքն , որ խաչ հանվի[12] ։

17 Եւ Նորանք առին տարան Նո-
րան • և խաչափայտըն ինքն էր
վերկալել[13] , և դուրս էր գնում էն
տեղն՝ որ Գողգոթա էր ասվում ,
և Եբրայեցերէն Գողգոթա էր կոչ-
վում[14] ։

18 Յնտեղ խաչ հանեցին Նորան •
և Նորա հետ երկու ուրիշ մարդ էլ
Նորա էս կողմն և էն կողմն , և Յի-
սուսին մէջ տեղն ։

19 Պիղատոս էլ մին տախտակ գը-
րեց , և խաչի վերայ դրաւ • և գը-
րած էր • ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ
ՀՐԷԱՅԻ[15] ։

20 Յն տախտակըն Հրէաներից
շատ մարդիք կարդացին • ինչու որ՝
քաղաքին մօտ էր հետեղն՝ որ Յի-
սուս խաչվեցաւ • և էն գրված էր
Եբրայեցերէն, Լատիներէն և Յու-
նարէն (գրով) ։

(2) Գործ • գ • 13 • (4) Ղևտ • իդ • 16 • (5) Մատթ • իգ • 65 • Յովհ • ե • 18 • ժ • 33 • (6) Ղուկ • ծգ • 7 • Մատթ • իե • 12 • 14 • (7) Ղևտ • իբ • 53 • Յովհ • է • 30 • (8) Ղևտ • իգ • 2 • (9) Գործ • ժե • 7 • (10) Մատթ • իե • 62 • (11) Նահում • ի • 10 • (12) Մատթ • իե • 26 • 31 • Մարկ • ժե • 15 • Ղևտ • իգ • 24 • (13) Մատթ • իե • 31 • 33 • Մարկ • ժե • 21 , 22 • Ղևտ • իգ • 26 • 33 • (14) Թուոց • ժե • 36 • Նբր • ժգ • 12 • (15) Մատթ • իե • 37 • Մարկ • ժե • 26 • Ղևտ • իգ • 38 •

21 Հրէաների քահանայապետներն ասացին Պիղատոսին • Մի՛ գրեր Հագարացոց Հրէից , այլ թէ Նա ասաց՝ Թէ Հագարացոց եմ Հրէից :
22 Պիղատոս պատասխան տուաւ • Ինչ որ գրեցի՝ գրեցի :
23 Հայց զինուորներն երբոր Յիսուսին խաչ հանեցին , նորա շորերն առին՝ և չորս բաժին արին , ամէն մէկ զինուորի համար մին բաժին[16] • բայց կապան՝ որովհետև առանց կարի էր՝ վերևիցն (մինչև ցածն) բոլորն մին հիւսած •
24 Իրար ասացին • Պարան չպատառենք , բայց վիճակ քցենք դորա վերայ՝ ումո՞ր դուրս գայ • որ գիրքն կատարվի , որ ասում՝ Թէ Իմ շորերըս իրանց մէջ բաժանեցին և իմ կապայիս վերայ վիճակ քցեցին[17] • զինուորներն էն բանն արին :
25 Եւ Յիսուսի խաչին մօտ կանգնած էին նորա մայրն[18] , և նորա մօր քոյրն Մարիամ Կղէօպան[19] և Մարիամ Մագդաղենացին :
26 Յիսուս երբոր տեսաւ իրան մօրըն և էն աշակերտին՝ որ սիրում էր[20] , որ մօտիկ կանգնած էր , մօրըն ասց • Կի՛ կին՝ ահա քո որդի[21] :
27 Յետոյ աշակերտին ասաց • Ահա քո մայրդ • և էն ժամուակից՝ էն աշակերտն իրան մօտ առաւ նորան[22] :
28 Սրանից ետև երբոր Յիսուս գիտաց , թէ ամէն բան կատարված է , որ գիրքն կատարվի՝ ասաց • Ծարաւ եմ[23] :
29 Եւ հնտեղ մին ման կայ քացախով լիքն • և նորանք մին սպունգ (սէնդէր) լցրին քացախով լեղոյ հետ՝ և զոպայի մշտիկի (չըբըչ) վերայ պատած նորա բերանին մօտացրին[24] :
30 Երբոր Յիսուս էն քացախըն լեղոյ հետ առաւ՝ ասաց • Լմին բան կատարված է[25] • և գլուխըն խոնարհացրուց և հոգին աւանդեց :
31 Հայց Հրէաներն՝ որովհետև ուրբաթ օրն էր[26] , որ մարմիններն չըմնան խաչի վերայ մինչև շաբաթ օրն , ինչու որ էն շաբաթի օրն մեծ էր[27] • Պիղատոսին աղաչեցին , որ նորանց ծընկներըն ջարդեն • և վեր առնվին :
32 Ոնուրներն եկին և առաջին ծընկներըն ջարդեցին , էնպէս էլ մէկէլնին՝ որ նորա հետ խաչված էր :
33 Հայց երբոր Յիսուսի մօտ եկին և տեսին , որ նա մեռած էր , նորա ծընկներըն չըջարդեցին :
34 Հայց զինուորներից մինն գիզարդով (նըզաքով) նորա կողըն խոցեց • և շուտով արիւն և ջուր դուրս եկաւ[28] :
35 Եւ նա որ էն տեսաւ՝ վկայեց • և վկայութիւնն ճշմարիտ է • և նա գիտէ՝ թէ ճշմարիտըն է ասում , որ դուք էլ հաւատաք :
36 Նա էլաւ՝ որ գիրքն կատարվի , թէ Նորա ոսկորն չըպիտի փշրըվի[29] :
37 Եւ մինէլ ուրիշ գիրք ասում՝ թէ Որին կըտան նորան՝ որ խոցեցին[30] :
38 Սրանից ետև Պիղատոսին աղաչեց Յովսէփն , որ Արիմաթեա-

(16) Մատթ • իե • 35 • Մարկ • ժե • 24 • Ղուկ • իդ • 34 • (17) Սաղ • իը • 18 • (18) Մատթ • իե • 55 • Մարկ • ժե • 40 • Ղուկ • իդ • 49 • (19) Ղուկ • իդ • 18 • (20) Մատթ • իե • 55 • Մարկ • ժե • 40 • Ղուկ • իդ • 49 • (19) Ղուկ • իդ • 18 • (20) Յովհ • ժգ • 23 • ի • 2 • իա • 7 • 20 • 24 • (21) Յովհ • բ • 4 • (22) Յովհ • ա • 11 • ժգ • 32 • (23) Սաղ • կթ • 21 • (24) Մատթ • իե • 48 • (25) Յովհ • ժե • 4 • (26) Ելք • 42 • Մարկ • ժե • 42 • (27) ը Օրէն • իա • 23 • (28) ա Յովհ • ե • 6 • 8 • (29) Ելք • ժբ • 46 • Թուոց • թ • 12 • Սաղ • լգ • 20 • (30) Սաղ • իը • 16 , 17 • Զաք • ժբ • 10 • Յայտ • ա • 7 •

չիցն էր[31]՝ Հրէաներուն վախիցն ծա-
ծուկ աշակերտ (էյած) Յիսուսին ,
որ Յիսուսի մարմինը վեր առնէ[32] ։
և Պիղատոս հրաման տուաւ ։ և
ապա եկաւ և վերկալաւ նորան ։
39 Նիկոդիմոս էլ եկաւ՝ որ ա-
ռաջ Յիսուսի մօտն էր եկել գի-
շերումն[33] ։ և գմուռս հալուեի հետ
խառնած ելուաւ՝ հարիւր լըտրի չափ ։
40 Յիսուսի մարմինը առին , և
էն խըմնկերին հետ կտաւներով պա-
տեցին , ինչպես որ Հրէաներուն օ-
րէնք էր պատել[34] ։

41 Եւ էն տեղումն , որ խաչվե-
ցաւ՝ մին պարտէզ (պօսպան) կար ,
և էն պարտէզումն մին նոր գե-
բեզման , որ նորանում իսկի մին
ժամանակ մին մարդ չէր դըված ։

42 Ընտեղն դրին Յիսուսին[35] Հը-
րէաներուն ուրբաթին համար , պատ-
ճառն որ՝ գերեզմանն մօտ էր[36] ։

ԳԼ · Ի

1 Մարիամ գերեզմանն կըզնայ , 3 Պետրոս և Յովհաննէսն էլ Քրիստոսի Յարութիւն առ-
նելը չըդիտեզով էն տեղ կըզնան ։ 11 Յիսուս Մարիամ Մագդաղենացոյն , 19 Նէ իրան
աշակերտներին կերեւանայ ։ 24 Թովմասի անհաւատութիւնն և դաւանութիւնն ։ 30 Այսր
Գիրքն էնքան գըվեցաւ որ հաւատան թէ Յիսուս է Քրիստոս , և յաւիտենական կենաքն
ընդունին ։

1 Եւ մէկ շաբթի օրումն Մա-
րիամ Մագդաղենացին առաւօտանց
լուսանալոց ժամանակումն եկաւ գե-
բեզմանն , և տեսաւ որ քարն գե-
բեզմանի դրնիցն վերբեր առած[1] ։
2 Վազ վազեց և եկաւ Սիմոն
Պետրոսի մօտն և մէկէլ աշակերտի
մօտն՝ որ Յիսուս սիրումէր նորան[2] ,
և ասաց նորանց · Տէրին վերա-
ռին էն գերեզմանիցն , և չենք գի-
տում՝ թէ որտեղ դրին նորան ։
3 Դուրս եկաւ Պետրոսն և մէ-
կէլ աշակերտն՝ և գալիս էին գե-
բեզմանն[3] ։
4 Երկուքն միտեղ վազումէին ·
և մէկէլ աշակերտն շուտով անց-
կացաւ Պետրոսիցն , և առաջ ե-
կաւ գերեզմանն ։
5 Եւ վեր խոնարհված տեսաւ՝
որ կտաւներն էնտեղ կային[4] , բայց
ներս չըմտաւ ։
6 Սիմոն Պետրոսն էլ եկաւ՝ որ
նորա ետևէն գալիս էր , և մտաւ
գերեզմանի մէջն , և կտաւներըն
տեսաւ՝ որ էն տեղ կային ։
7 Եւ վարշամակն[5] որ նորա գըլ-
խումն էր՝ ուրիշ կտաւներին հետ
չըկար , բայց ջոկ ծալած մէկ կող-
մըն դրած էր ։
8 Էն ժամանակն մէկէլ աշակեր-
տըն էլ ներս մտաւ , նա որ ա-
ռաջ գերեզմանն էր եկել , տե-
սաւ և հաւատաց ։
9 Ինչու որ՝ դեռ չէին գիտում
գրքերըն՝ թէ պէտք է որ նա մե-
ռելների միջիցն յարութիւն առնէ[6] ։
10 Ապա աշակերտներն միեղ գը-
նացին իրար մօտն ։
11 Բայց Մարիամն գերեզմանի
դուրսն կանգնած էր՝ և լաց էր լի-

(31) Մատթ · իէ · 57 ։ Մարկ · ժե · 42 ։ Ղուկ · իգ · 50 ։ (32) Հովհ · թ · 22 ։ ժբ · 42 ։ (33) Հովհ · գ · 1 , 2 ։ է · 50 ։ (34) Պօրդ · է · 6 ։ (35) Ղուկ · ծգ · 9 ։ (36) Ա Էր · 31 ։ (1) Մատթ · իը · 1 ։ Մարկ · ժգ · 1 ։ Ղուկ · իգ · 1 ։ (2) Հովհ · ժգ · 23 ։ ժբ · 26 ։ իա · 7 · 20 · 24 ։ (3) Ղուկ · իգ · 12 ։ (4) Հովհ · ժբ · 40 ։ (5) Հովհ · ժա · 44 ։ (6) Սաղ · ժգ · 10 ։ Գործ · բ · 25—31 · ժգ · 34 , 35 ։

նում · և լաց լինելոյ ժամանակն՝ խոնարհվեցաւ (մտիկ տուաւ) գե-
րեզմանի մէջ[7] ։
12 Եւ երկու հրեշտակ տեսաւ սպիտակ շորերով, որ նստած էին, մինն գլխի կողմն՝ և մէկէլն ոտների կողմն, որտեղ որ Յիսուսի մար-
մինն կար ։
13 Եւ նորանք ասացին նորան · Ա՛վ կին՝ ինչո՞ւ լաց ես լինում · Նո-
րանց ասաց · Վերահամար՝ որ իմ Տէրիս վեր առին էս գերեզմանի-
ցըս, և չեմ գիտում՝ թէ որտեղ դրին նորան ։
14 Երբոր էս ասաց, դարձաւ ի-
րան յետին կողմն, և Յիսուսին տեսաւ՝ որ կանգնած էր[8] · և չէր գիտում՝ թէ Յիսուսն է[9] ։
15 Յիսուս նորան ասաց · Կին դու՝ ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմ ես մանգալիս · Նորան հնկէս ե-
րևեցաւ՝ թէ նա պարտէզպանն (պօա-
պանձին) է, նորան ասաց · Տէր՝ թէ որ դու վերառիր նորան՝ ասա ինձ՝ որտեղ ես դրել նորան, որ ես վերառնեմ Նորան ։
16 Յիսուս նորան ասաց · Մա՛-
րիամ · և նա յետ դարձաւ, և նորան ասաց՝ Եբրայեցերէն · Ռաբ-
բունի, որ կըթարգմանվի՝ Վար-
դապետ ։
17 Յիսուս նորան ասաց · Մի՛ մտանար ինձ, ինչու որ դեռ չեմ վեր հլէլ իմ Հօր մօտն · բայց դու գնա իմ եղբարներիս մօտ[10], և նորանց ասա · Ես վեր եմ հլ-
լում իմ Հօր մօտ՝ և ձեր Հօր մօտ[11], իմ Աստուծոյ մօտ՝ և ձեր Աստուծոյ մօտ[12] ։
[18 Մարիամ Մագդաղենացին ե-
կաւ՝ և աշակերտներին պատմեց, թէ նա տեսաւ Տէրին, և էս բա-
նըս իրան ասաց[13] ։
19 Եւ մէկ շաբթի օրումն, երբ-
որ իրիկուն էր՝ և դռներն փակված, էն տեղն որ աշակերտներն ժողով-
ված էին Հրեաների վախից, Յի-
սուս եկաւ՝ և նորանց միջումն կանգ-
նեց, և նորանց ասաց · Ողջոյն ձեզ[14] ։
20 Երբոր էս ասաց՝ իրան ձեռ-
ներըն և իրան կողըն ցոյց տուաւ նորանց · և աշակերտներն ուրա-
խացան՝ երբոր Տէրին տեսին[15] ։
21 Մինէլ ասաց նորանց · Ող-
ջոյն ձեզ · ինչպէս որ իմ Հայրս ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում[16] ։
22 Եւ երբոր էս ասաց՝ փչեց դէ-
պի նորանց և ասաց · Առէք Սուրբ Հոգին ։
23 Ով որ մըրնի մեզքն թողէք՝ թողված կըլինի նորանց · թէ որ մըրնին բռնէք՝ բռնըված կըլինի[17] ։
24 Իայց Թովմաս տասներկուսից մինն՝ Երկուորեակ (Ջոխոտ) կոչ-
վածն, նորանց հետ չէր՝ երբոր Յիսուս եկաւ[18] ։
25 Մհկէլ աշակերտներն ասում-
ին նորան, թէ Տէրին տեսինք · և նա ասաց նորանց, Ով որ նո-
րա ձեռներում բևեռների (մեխաթո-
նէրի) նշանըն չըտեսնեմ, և իմ մատներըս չըդնեմ բևեռների տե-
ղըն, և իմ ձեռներըս չըմտցնեմ նորա կողն՝ չեմ հաւատալ ։
26 Եւ ութ օրից ետև աշակերտ-
ներն մինէլ ներսումն էին, և Թով-
մասն (էլ) նորանց հետ · Յիսուս

(7) Մարկ · ժգ · 5 ։ (8) Մարկ · իը · 9 ։ Մարկ · ժգ · 9 ։ (9) Ղուկ · իդ · 16 · 31 ։ Յովհ · ի · 4 ։ (10) Մատթ · իը · 22 ։ Մարկ · իը · 10 ։ Հռովմ · ը · 29 ։ Եբր · բ · 11 ։ (11) Յովհ · ժգ · 28 ։ (12) Եփես · ա · 17 ։ (13) Մարկ · իը · 10 ։ Ղուկ · իդ · 10 ։ (14) Մարկ · ժգ · 14 ։ Ղուկ · իդ · 36 ։ ա Պետր · ժե · 5 ։ (15) Յովհ · ժգ · 22 ։ (16) Մատթ · իը · 18 ։ Յովհ · ժե · 18 ; 19 ։ Եբր · գ · 1 ։ բ Տիմ · բ · 2 ։ (17) Մարկ · ժգ · 19 ։ ժը · 18 ։ (18) Յովհ · ժա · 16 ։

դրունները փակված լինելով՝ եկաւ և Նորանց միջումն կանգնեց և ասաց · Ողջոյն ձեզ :

27 Յետոյ Թովմասին ասաց · Բե՛ր քո մատներըդ և էստեղ դի՛ր , և իմ ձեռներըս տե՛ս , և քո ձեռնե՛րըդ բե՛ր՝ և իմ կողս մտցըրո՛ւ , և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեա՛լ[19] :

28 Թովմասն պատասխան տուաւ և Նորան ասաց · Իմ Տէրս և իմ Աստուածս :

29 Յիսուս Նորան ասաց · Ընդ որ տեսե՛ր ինձ՝ հաւատացիր · երանի՛ Նորանց՝ որ չեն տեսել և հաւատումեն[20] :

30 Յիսուս ուրիշ էլ շատ նշաններ արաւ իրան աշակերտների առաջին՝ որ չեն գրված էս գրքո՛ւմս[21] :

35 Բայց էս էնքան գրվեցաւ՝ որ հաւատաք[22] , թէ Յիսուս է Քրիստոն Աստուծոյ Որդին · և որ հաւատաք , և յաւիտենական կեանքն ընդունիք Նորա անունովը[23] :

ԳԼ · ԻԸ

1 Քրիստոս մինէլ իրան աշակերտներին երևանալով շատ ձուկըն բռնել տալոյ հրաշքովը իւրան անձըն կըճանաչացնէ : 12 Նորանց հետ հաց կուտէ : 15 Պետրոսի պատուէր կըտայ որ իրան գառներըն և ոչխարներըն արածացնէ : 18 Նորա մեռնելոյ կերպն առաջուց իմաց կըտայ Նորան : 22 Նորա Յովհաննէսի համար ինչ պիտի լինի հարցնելն կըսաստէ : 25 Վերջի խօսքն :

1 Սրանից ետև Յիսուս մինէլ իրան անձըն յայտնեց իրան աշակերտներին Տիբերեայ ծովի եզերին (ղօղըն) մօտ · և էս կերպովս յայտնեց :

2 Միասին էին Սիմոն Պետրոսըն , և Թովմասն Երկուորեակ (ջո՛ւթ) անուանվածն , և Նաթանայէլն՝ որ Գալիլեացոց Կանայիցին էր , և Զեբեդէոսի որդիքներն , և էն աշակերտներիցն ուրիշ երկու հոգի էլ[2] :

3 Սիմոն Պետրոսն Նորանց ասաց · Ես գնումեմ ձուկըն բռնելոյ · Նոքա ասացին · Մե՛նք էլ կըգանք քեզ հետ · գնացին և մտին նաւըն , և էն գիշերն իսկի բան չըբռնեցին :

4 Երբոր առաւօտ էլաւ՝ Յիսուս ծովի եզերումն (ղօղը՛ն) կանգնած էր , բայց աշակերտներն չըճանաչեցին[3] , թէ Յիսուսն է :

5 Յիսուս Նորանց ասաց · Մա՛նկունք՝ իսկի ուտելոյ բան ունի՞ք[4] · պատասխան տուին և Նորան ասացին · Չէ՛ :

6 Նորանց ասաց · Ուղղակըն (ջո՛ւթը) աջի կողմն քցեցէ՛ք , և կըգտնէք · Նոքանք քցեցին , և չէին կարում քաշել՝ ձըկների շատութեան պատճառովը[5] :

7 Էն աշակերտ՝ որ Յիսուս սիրում էր Նորան[6] Պետրոսին ասաց · Էա Տէրն է · Սիմոն Պետրոսն երբոր լսեց՝ թէ Տէրն է , շորըն իրան վերայ առաւ , ինչու որ մերկ էր , և ինքն իրան քցեց ծովի մէջն :

8 Եւ մնացեալ աշակերտներն նաւովն էին գալիս · ինչու որ ցամա-

(19) ա Յովհ · ա · 1 : (20) բ Կորնթ · ե · 7 : ա Պետր · ա · 8 : (21) Յովհ · խ · 25 : (22) Ղուկ · ա · 4 : (23) Յովհ · գ · 15 , 16 : ե · 24 : ա Պետր · ա · 9 : (1) Յովհ · ա · 45 : (2) Մարկ · դ · 21 : (3) Յովհ · ի · 14 : (4) Ղուկ · իդ · 41 : (5) Ղուկ · ե · 4 · 6 , 7 : (6) Յովհ · ժգ · 23 , ի · 2 :

քիցն հեռու չէին· բայց երկու հա-
րիւր գաղթ չափ (էր)՝ և ուռկա-
նըն (ըօ-ըն) ձկներովն քաշումէ-
ին ։

9 Երբոր դուրս եկին ցամաքն՝ տեսին անծուխի կրակ վառած՝ և նորա վերայ մին ձուկ և հաց ։

10 Յիսուս նորանց ասաց· Եկէ-
րէք ինձ էդ ձկներիցն՝ որ դուք հիմիկ բռնեցիք ։

11 Սիմոն Պետրոսն մտաւ և ուռ-
կանըն քաշումէր դէպի ցամաքն՝ մեծ մեծ ձկներով լիքն՝ հարիւր յի-
սունն և երեք հատ· և էնքան բան կար՝ և գործիքն չըպատռվեցաւ ։

12 Յիսուս նորանց ասաց· Եկէք ճաշ կերէք[7]· և աշակերտներից ոչ-ովէր չէր համարձակվում հարցնել՝ Թէ Դու ով ես· ինչու որ՝ գի-
տումէին Թէ Տէրն է ։

13 Յիսուս եկաւ՝ և հացըն ա-
ռաւ՝ և նորանց տուաւ, և էնպէս էլ ձուկըն ։

14 Այս երեք անգամն Յիսուս ա-
շակերտներին երևեցաւ, մեռելնե-
րի միջից յարութիւն առնելուցն հետե[8] ։

15 Եւ երբոր ճաշըն կերին, Յի-
սուս ասաց Սիմոն Պետրոսին· Սի-
մօն Յօնանի (որդի՛) դորանցից ա-
ւելի սիրումես ինձ· նորան ասաց· Այ՛ Տէր, դու էլ գիտումես՝ որ քեզ սիրումեմ· նորան ասաց· Ը-
րածացրու իմ գառներըս ։

16 Ա՛ինէլ ասաց նորան· Սիմոն Յօնանի (որդի՛) սիրումես ինձ· նո-
րան ասաց· Այ՛ Տէր՝ դու էլ գի-
տումես՝ որ քեզ սիրումեմ· նորան ասաց· Ըրածացրու իմ ոչխար-
ներըս[9] ։

17 Ա՛ինէլ երեք անգամն ասաց նորան· Սիմոն Յօնանի (որդի՛) սիրումես ինձ· Պետրոսն տրտմե-
ցաւ· որովհետև երեք անգամ նո-
րան ասաց՝ Թէ Սիրումես ինձ· և նորան ասաց· Տէր՝ դու ամէն բան գիտումես, և ամէն բան ճանա-
չումես[10], և որ սիրումեմ քեզ· Յիսուս նորան ասաց· Ըրածաց-
րու իմ ոչխարներըս ։

18 Ճշմարիտըն ճշմարիտըն ա-
սումեմ քեզ, Թէ դեռ քանի որ տղայ էիր՝ ինքդ քո գօտիկըդ կա-
պումէիր՝ և որ տեղ որ ուզումէ-
իր՝ գնումէիր· և երբոր կրծերա-
նաս, ձեռներըդ վերկառնես· և ուրիշներն գօտիկ կըկապեն քեզ, և կըտանեն՝ որտեղ որ չես ուզել[11] ։

19 Այս ասաց՝ ցոյց տալով Թէ նա ինչ մահով պիտի փառաւորէ Աս-
տուծոյն· և էս երբոր ասաց, նո-
րան ասաց· Իմ ետևէս ել՛կ[12]·

20 Պետրոսն յետ դարձաւ՝ և տե-
սաւ էն աշակերտին, որ Յիսուս սիրումէր[13] նորան, որ ետևէն գա-
լիս էր, նա՝ որ էլ նորա լանջք-
նին (պուշին) ընկաւ և ասաց· Տէր՝ ով է նա՝ որ քեզ պիտի մատնէ ։

21 Պետրոսն երբոր տեսաւ նո-
րան, Յիսուսին ասաց· Տէր՝ ա-
պա սա ինչ (կըլինի) ։

22 Յիսուս նորան ասաց· Թէ որ կամենումեմ, որ դա կենայ, մին-
չև որ ես գամ· դու ինչ հոգս ունիս, դու իմ ետևէս ել՛կ[14] ։

23 Եւ էս բանս դուրս եկաւ եղ-
բայրների միջումն՝ և կարծեցին Թէ էն աշակերտն չի մեռնիլ· և Յի-
սուս չասաց նորան՝ Թէ չի մեռնիլ· բայց Թէ՝ որ կամենումեմ որ դա կենայ մինչև որ ես գամ, (դու ինչ հոգս ունիս) ։

(7) Դատ· ժ· 41 ։ (8) Յովհ· բ· 19· 26 ։ (9) Դատ· բ· 28 ։ Եբր· ժգ· 20 ։ ա Պետր· բ· 25 ։ ե· 2· 4 ։ (10) Յովհ· բ· 24, 25 ։ ժգ· 30 ։ (11) Յովհ· ժգ· 36 ։ Դատ· ժբ· 3, 4 ։ (12) բ Պետր· ա· 14 ։ (13) Յովհ· ժգ· 23· 25 ։ բ· 2 ։ (14) Մատթ· ժգ· 27, 28 ։ իե· 31 ։ ա Կորնթ· դ· 5 ։ ժա· 26 ։ Յայտ· բ· 25 ։ գ· 11 ։ իբ· 7· 20 ։

24 Այս աշակերտս է , որ ես բա-
նիս համար վկայումէ · որ էլ ես
բաներըս գրեց , և գիտումենք որ
նորա վկայութիւնըն ճշմարիտ է[15] :
25 Այլ ուրիշ էլ շատ բաներ
կան[16] որ Յիսուս արաւ , որ եթէ
նորանք մին մին գրված լինէին ,
կարծումեմ թէ աշխարհքս էլ բա-
ւական չէր լինիլ են գրքերըն տա-
նելոյ , թէ որ գրված լինէին[17] :

(15) Յովհ · ժթ · 35 : գ Յովհ · 12 : (16) Յովհ · ի · 30 : (17) Ա՛ովհ · ի · 10 :

ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՅ ԵՒՏԸՐԸՆԵՅ

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Վրխստոս առաքեալներին իրան վերանալն տեսնելոյ համար Հրեիներէս սարսն կրնանի. և պատուէր կրնայ նորանց որ Երուսաղէմի մէջուէն Սուրբ Հոգւոյն գալուստն սպասեն՝ որ մին քանի օրից ուղարկելոյ խօսք կրնայ. որ նորա զօրութիւնովն նորանք մինչև երկրի ծայրերն Վրխստոսի համար վկաներ լինին: 9 Իրան վերանալուն վերջն երկու հրեշտակներ նորանց խրատ կրնան որ էն տեղուէն գնան, և նորանց աւետիք կրնան Վրխստոսի մինէլ գալուստն համար: 12 Նորանք էլ յետ կդառնան, և միտ աղօթք անելով Հոգւոյն տեղն Մատաթիայէն առաքեալ կընտրեն:

1 Զ ԱՌԱՋԻՆ խօսքըն արի՛ ով Թէոփիլէ[1] ամէն բանի համար. որ Յիսուս սկսեց անել և սովորցնել:
2 Մինչև էն օրն՝ որ Սուրբ Հոգոյ ձեռովն պատուէր տուաւ առաքեալներին[2]. (նորանց)՝ որ ընտրեց, և վերացաւ[3]:
3 Որ իրան չարչարանքէն ետև իրան կենդանի կանգնացրուց նորանց առաջին՝ շատ հրաշքներով՝ որ քառասուն օր երևեցաւ նորանց՝ և Աստուծոյ արքայութեան համար խօսեց[4]:
4 Եւ նորանց հետ հացով հաղորդվելոյ ժամանակն, պատուէր էր տալիս նորանց՝ որ Երուսաղէմէն չերհեռանան[5], բայց սպասեն Հօր աւետիքին՝ որ (ասաց) ինձանից լսեցիք[6]:
5 Ինչու որ՝ Յովհաննէան ջրով մկրտեց՝. բայց դուք Սուրբ Հոգովն կըմկրտվիք[8], ոչ թէ շատ օրերից ետև:
6 Եւ նորանք մօտ եկին հարցնումէին նորան՝ և ասումէին. Տէր[9]՝

(1) Ղուկ. ա. 3: (2) Մարկ. ԺԶ. 19: Ղուկ. թ. 51: խդ. 51: Ա՚ոյր. 9: ա Տիմ. գ. 16: (3) Մարկ. իը. 19: Մարկ. ԺԶ. 15: Յովհ. ի. 21: Գործ. ժ. 41, 42: (4) Մարկ. ԺԶ. 14: Ղուկ. խդ. 36: Յովհ. ի. 19. 26: իա. 1. 14: ա Կորնթ. ԺԵ. 5: (5) Ղուկ. խդ. 43. 49: (6) Ղուկ. խդ. 49: Յովհ. ԺԶ. 16. 26, 27: ԺԵ. 26: ԺԶ. 7: Գործ. բ. 33: (7) Մարկ. գ. 11: Գործ. ժա. 16: ԺԹ. 4: (8) Յովէլ. գ. 18: Գործ. բ. 4: ժա. 15: (9) Մարկ. խդ. 3:

մինչեւ հիմիկ էս ժամանակումս պիտի հասցնիս Իսրայէլի թագաւորութիւնն[10] :

7 Ասաց նորանց . Ձեզ (պէտք) չէ որ գիտենաք ժամերըն (սահմանները) եւ ժամանակներըն , որ Հայրըն իրան իշխանութենումն դրաւ (պահեց)[11] :

8 Այլ երբոր Հոգին ձեզ վերայ կըհասնի[12] , դուք զօրութիւն կառնէք[13] . և ինձ վկայ կըլինիք Երուսաղէմումն և ամէն Հրէաստանի և Սամարիայի մէջն , մինչեւ երկրի ծայրերն[14] :

9 Եւ երբոր էս ասաց , դեռ քանի որ նորանք նայումէին[15] վերացաւ . և ամպն վերկալաւ նորան նորանց աչքերիցն[16] :

10 Եւ դեռ որ խիստ մտիկ տալով նայումէին նորա դէպի երկինքըն գնալուն , և ահա երկու մարդիկ երևեցան նորանց սպիտակ շորերով[17] :

11 Որ էլ ասացին . Ա՛վ Գալիլեացի մարդիք՝ ի՞նչ էք կանգնած և մտիկ էք տալիս դէպի երկինքն[18] . էս Յիսուսն՝ որ ձեզանից վերացաւ երկինքն , էնց էսպէս կըգայ՝ ինչպէս որ նորան տեսիք գնալ դէպի երկինքն[19] :

12 Ապա էն Ձիթենեաց անուանված սարիցն յետ գարձան Երուսաղէմին՝ (մին) շաբաթի օրի ճանապարհի չափ[20] :

13 Եւ երբոր մտին , վերէլան վերնատունն՝ որտեղ որ բնակված էին[21] . Պետրոս և Յակոբոս , Յօհաննէս և Անդրէաս , Փիլիպպոս և Թովմաս , Բարթողիմէոս և Մատթէոս[22] , Յակոբոս Ալփեանն և Շմաւօն Նախանձայոյզն[23] և Յուդա Յակոբեանն[24] :

14 Որանք ամէնքն միշտ միաբան աղօթք էին անում[25] կանանց հետ[26] , և Յիսուսի մայր Մարիամ՝ և նորա եղբայրներին հետ[27] :

15 Եւ էն օրերումն Պետրոս վերկացաւ եղբարների մէջն՝ և ասաց . և հետեղ հարիւր և քսան հոգիների չափ բազմութիւն կային[28] :

16 Մարդիք եղբարք՝ պէտք էր որ էն գրվածն կատարվէր . որ առաջուց ասաց Սուրբ Հոգին Դաւթի բերանովն Յուդայի համար[29] , որ Յիսուսի բռնողներին առաջնորդ էլաւ[30] .

17 Պատճառն որ՝ նա մեզ հետ մեր համարումն էր[31] . և էս պաշտօնիս վիճակն նորան (էլ) հասած էր[32] :

18 Այ անիրաւութեան վարձքովն[33] մին գիւղ ստացաւ[34] . և ուռաւ միջեցն ճղվեցաւ , և նորա ամէն փորն դուրս թափվեցաւ :

(10) Ղեսայ . ա . 26 : Դան . է . 27 : Մաղա . թ . 11 : (11) Մարկ . իդ . 36 : Մարթ . ժգ . 32 : ա Թես . ե . 1 : (12) Ղուկ . իգ . 49 : (13) Դուբ . բ . 1 . 4 : (14) Ղուկ . իգ . 48 : Յովհ . ժե . 27 : Ասայ . 22 : Դուբ . բ . 32 : (15) Ղուկ . իգ . 51 : Յովհ . ղ . 63 : (16) Ա՛ԷԼ . 2 : (17) Մարկ . իբ . 3 : Մարթ . ժգ . 5 : Ղուկ . իգ . 4 : Յովհ . ի . 12 : Դուբ . ժ . 3 . 30 : (18) Դուբ . բ . 7 : ժգ . 31 : (19) Դան . է . 13 : Մարկ . իգ . 30 : Մարթ . ժգ . 26 : Ղուկ . իա . 27 : Յովհ . ժգ . 3 : ա Թես . ա . 10 : գ . 16 : բ Թես . ա . 10 : Հայտ . ա . 7 : (20) Ղուկ . իգ . 52 : (21) Դուբ . թ . 37 . 39 : ի . 8 : (22) Մարկ . ժ . 2 , 3 , 4 : (23) Ղուկ . ղ . 15 : (24) Յուդ . 1 : (25) Դուբ . բ . 1 . 46 : (26) Ղուկ . իգ . 49 . 55 : իգ . 10 : (27) Մարկ . ժգ . 55 : (28) Հայտ . գ . 4 : (29) Սաղ . իա . 9 : Յովհ . ժգ . 18 : (30) Ղուկ . իր . 47 : Յովհ . ժը . 3 : (31) Մարկ . ժ . 4 : Ղուկ . ղ . 16 : (32) Ա՛ԷԼ . 25 : Դուբ . ժբ . 25 : ի . 24 : իա . 19 : (33) Մարկ . իղ . 15 : բ Պետր . բ . 15 : (34) Մարկ . իե . 5 . 7 , 8 :

19 Եւ յայտնի էլաւ ամենին՝ որ Երուսաղէմումն բնակված են . մինչև որ էն գիւղի անունն իրանց լեզուովն Ակեղդամայ կոչվեցաւ . որ է ասել Արիւնի գիւղ :

20 Ինչու որ՝ Սաղմոս գրքումն գրված է (թէ) Նորա բնակութիւնըն աւերակ (խոռոչ) պիտի լինի , և մինն էլ չլինի՝ որ նորանում բնակվի[35] . և Նորա կարգըն (մին) ուրիշն պիտի առնի[36] :

21 Ախիկ պէտք է՝ որ էս մարդկանցից որ մեզ հետ եկել են էն ամեն ժամանակն՝ որ Տէր Յիսուսն մեզ հետ ներս մտաւ և դուրս էլաւ .

22 Յովհաննէսի մկրտութենիցն ըսկրսած մինչև էն օրն[37] որ մեզանից վերացաւ[38] . որ սորանցից մինն մեզ հետ վկայ լինի նորա յարութեանն[39] :

23 Եւ երկու (մարդ) կանգնացըրին . Յոսէփին՝ որ Նարսաբա էին կոչում , որ Յուստոս անուանվեցաւ և Մատաթիային[40] :

24 Եւ աղօթք անելով ասացին . Դուն Տէր՝ որ ամենի սիրտըն գիտումես՝ էս երկուսից մինըն յայտնիր՝ որն որ ընտրեցիր[41] :

25 Որ էս պաշտօնիս և առաքեալ լինելոյ վիճակըն առնէ , որ նորանից Յուդան վեր ընկաւ՝ որ գնայ իրան տեղն[42] :

26 Եւ նորանց վերայ վիճակ քցեցին , և վիճակն ընկաւ Մատաթիային վերայ , և նա տասնումին առաքեալներին հետ համարվեցաւ :

ԳԼ · Ր

1 Առաքեալներին Սուրբ Հոգով լցվելոյն և ուրիշ լեզուներով խօսելոյն համար մին քանի մարդիք կըզարմանան , և մին քանիներն էլ ծաղր կանեն : 14 Պետրոս վեր կըկենայ և կըհաստատէ նորանց թէ նորանք Սուրբ Հոգոյ զօրութենովն կըխօսին , թէ Յիսուս մեռել ներից յարութիւն առած է , և երկինքն վերացած և էս Սուրբ Հոգին ուղարկեց , և էն է Ինսիան Ըստուածանից նորանց ցոյց տըվված մին մարդ զօրութենով և նշաններով և հրաշքներով . և Ըստուծոյ խորհրդովն և կանուխ գիտութենովն փայտի վերայ սպանեցին : 37 Պետրոս ղշյացողներից մին շատ մարդիք կըմկրտէ . 41 Որ նորանք միշտ առաքելոց վարդապետութեանն էին հետևում . շատ հրաշքներ գործվըն առաքելոց ձեռքովն , և ամեն օր Եկեղեցին աւելանալն Տէրից :

1 Եւ երբոր Պէնտէկոստէի օրերն կատարվում էին՝ , ամենքն միաբան մին տեղ էին[2] :

2 Եւ յանկարծակի երկնքիցն սաստիկ ձայն էլաւ՝ սաստիկ քամու պէս եկած . և լցրուց (էն) ամեն տունըն՝ որ նորանում նստած էին[3] :

3 Եւ երևեցան նորանց՝ բաժանված լեզուներ ինչպես կրակից . և նստեց նորանց ամեն մէկին վերայ :

4 Եւ ամենքն Սուրբ Հոգով լցվան[4] , և սկսեցին ուրիշ լեզուներով խօսել՝ ինչպես որ Հոգին նորանց խօսել էր տալիս[5] :

(35) Սաղմ . կթ . 25 : (36) Սաղմ . ձթ . 8 : (37) Մարկ . ա . 1 : (38) Ա Էր . 9 : (39) Ձեվ . ժե . 27 : Ա Էր . 8 : Գործ . գ . 33 : (40) Գործ . ժե . 22 : (41) ա Թագ . ժգ . 7 : ա Պետ . իը . 9 : իթ . 17 : Երէմ . ժա . 20 : ժէ . 10 : Գործ . ժե . 8 : Յայտ . բ . 23 : (42) Ա Էր . 17 : (1) Ղուկ . իգ . 15 : բ Օրէն . ժգ . 9 : Գործ . ի . 16 : (2) Գործ . ա . 14 : (3) Գործ . գ . 31 : (4) Գործ . ա . 5 : (5) Մարկ . ժգ . 17 : Գործ . ժ . 46 : ժթ . 6 : ա Կորնթ . ժբ . 10 . 28 . 30 : ժգ . 1 : ժգ . 2 , Լայն :

5 Եւ Երուսաղէմէն բնակված Հին Հրէաներ (Ջհուդիներ)՝ Աստուածավախ մարդիք՝ երկնքի ներքև (հված) ամէն ազգերից ։

6 Եւ երբոր էս ձայնս եղաւ՝ բազմութիւնն եկաւ միտեղ և կիսվեցաւ . պատճառն որ՝ լսումէին նորանց՝ որ ամէն մէկի լեզուներովն խօսումէին ։

7 Հիանումէին ամէնքն և զարմանում՝ և միմեանց մէնէն ասումէին . Էհա չէ՞ որ սորանք ամէնքն՝ որ խօսումեն , Գալիլեացի են[6] ։

8 Եւ ի՞նչպէս (է) որ մենք ամէն մէկս մեր լեզուներովս լսումենք՝ որ նորանում ծնված ենք ։

9 Պարթևներ և Մարք և Ելամացիք , և նորանք՝ որ բնակված են Միջագետումն , Հրէաստանումն , Կապադովկիայ , Պոնտոսումն , և Ասիայի մէջն ։

10 Փռիգիայի և Պամփիլիայի մէջն , Եգիպտոսումն , և Լիբացոց չորս կողմերումն , նորանք՝ որ կիսրենացոց հետ (են) , և նոր եկած Հռոմայեցիքն ։

11 Հրեաներ՝ և նորանց մօտ դարձածներ , Կրետացիք և Արաբացիք , լսումենք որ՝ նորանք մեր լեզուներովս Աստուծոյ մեծամեծ բաներն խօսումեն ։

12 Հիանումէին ամէնքն և զարմանում՝ և միմեանց մէնէն ասումէին . Ես ի՞նչ (բան) պիտի լինի ։

13 Եւ կէսերն ծաղր անելով ասումէին , թէ (Գորանք) քաղցուով (չէքացով) հարբած են ։

14 Ա երկացաւ Պետրոս էն տասնումէնէն հետ՝ իրան ձայներն բարձրացրուց՝ և նորանց հետ խօսեց . Ա՛վ Հրէաստանցի մարդիք , և ամէնք՝ որ բնակված էք Երուսաղէմումն , էս ձեզ յայտնի լինի՛ և իմ խօսքերիս ականջ դրէք ։

15 Չէ թէ ինչպէս որ դուք կարծումէք , թէ սորանք հարբած են . ինչու որ՝ դեռ օրիս երեք ժամն (սահաթն) է՛ ։

16 Հապա էս է՝ որ Յովել մարգարէի ձեռովն ասվեցաւ ։

17 Եւ կըլինի սրանից ետև յետին օրերումն՝ Աստուած ասում[8] , որ իմ Հոգուցս կըթափեմ ամէն մարմնոյ վերայ[9] . և ձեր որդիքներն , և ձեր աղջիկներն կըմարգարէանան[10] . և ձեր երիտասարդներն տեսիլքներ կըտեսնեն , և ձեր ծերերն երազներով երազ կըտեսնեն ։

18 Եւ իմ ծառաներին վերայ՝ և իմ աղախիններին (ղաբաշներին) վերայ՝ էն օրերումն իմ Հոգուցս կըթափեմ , և կըմարգարէանան[11] ։

19 Եւ նշաններ կըտամ վերև երկնքումն , և նշաններ ներքև երկրումս , արիւն և կրակ և ծխի մրրիկ (քլքլոց)[12] ։

20 Արեգակն խաւար կըդառնայ , և լուսինն արիւն՝ դեռ որ Տէրի մեծ և երևելի օրն չեկած[13] ։

21 Եւ կըլինի ամէն ով որ Տէրի անունն կըկանչէ՝ կապրի[14] ։

22 Ա՛վ Իսրայէլացի մարդիք՝ էս բաներըս լսեցէք . Յիսուս Նազովրեցին՝ էն մարդն՝ որ Աստուածանից ցոյց տըվված ձեզանում զօրութեններով և նշաններով և հրաշքներով , որ Աստուած նորանով արաւ ձեր միջումն[15] . ինչպես որ հենց դուք էլ գիտումէք ։

23 Նոյան՝ որ Աստուծոյ սահման-

(6) Գործ . ա . 11 ։ (7) ա Թես . ե . 7 ։ (8) Նաում . խդ . 3 ։ Նվէ . ժա . 19 ։ ԼՂ . 27 ։ Յովել . բ . 28 , 29 ։ Ամո . ժբ . 10 ։ Յովհ . է . 38 ։ (9) Գործ . ժ . 45 ։ (10) Գործ . իա . 9 ։ (11) Գործ . իա . 4 . 9 , 10 ։ ա Կորնթ . ժբ . 10 . 28 ։ ժգ . 1 , Եսայ . ։ (12) Յովել . բ . 30 , 31 ։ (13) Մատթ . իդ . 29 ։ Մարկ . ժգ . 24 ։ Ղուկ . իա . 25 ։ (14) Հռոմ . ժ . 13 ։ (15) Յովհ . գ . 2 ։ ժգ . 10 , 11 ։ Գործ . ժ . 38 ։ Եբր . բ . 4 ։

ված խորհրդովն և կանուխ գիտութենովն մատնված էր[16] անօրէնների ձեռքովն , փայտի վերայ բեւեռած սպանեցիք[17] :

24 Որ Նորան Աստուած յարոյց մահի ցաւերըն խափանելով[18] . ինչու որ՝ կարելի չէր , որ նա բռնուի նովին :

25 Ասենց Դաւիթն էլ ասում նորա համար . Առաջուց տեսնում էի Տէրըն ամէն ժամ (առհասն) իմ առաջիս[19] . ինչու որ՝ իմ աջ կողմն էր , որ չըսասպառիմ :

26 Սրահամար իմ սիրտս ուրախ էլաւ , և իմ լեզուս ցնծացաւ , և իմ մարմինս էլ յուսով կըբնակվի :

27 Պատճառն որ՝ իմ անձս չես թողնիլ դժոխքումն և քո Սրբոյն չես տալ ապականութիւն տեսնել :

28 Կեանքի ճանապարհներըն ճանաչացրիր ինձ . (և) քո երեսիդ ուրախութիւնովն լցրիր ինձ :

29 Ա՛րդիւք եղբայրք՝ պէտք է որ համարձակութենով ասեմ Դաւթի նահապետին համար[20] . Թէ նա մեռաւ և թաղվեցաւ . և նորա գերեզմանն մինչև էս օր մեզ միջումն կայ :

30 Որովհետև (նա) մարգարէ էր , և գիտումէր՝ որ Աստուած երդումով երդվաւ նորան , որ նորա փորի պտղիցն նորա աթոռին վերայ նստացնէ[21] :

31 Առաջուց իմացած խօսեց Քրիստոսի յարութեան համար . որ նորա հոգին դժոխքումն չըթողվաւ՝ և նորա մարմինն ապականութիւն չըտեսաւ[22] :

32 Այս Յիսուսին Աստուած յարոյց[23] որ նորան մենք ամենքս վկայումենք[24] :

33 Աստուծոյ աջովն բարձրացած[25] . և Սուրբ Հոգոյ աւետիքըն Հօրիցըն առած[26] (նա) փուեց էս[27] , որ դուք տեսնում և լսում եք :

34 Պատճառն որ՝ ոչ թէ Դաւիթն վերկաւ երկինքն . բայց հենց ինքն ասում՝ Տէրն իմ Տէրին ասաց . Իմ աջ կողմն նստիր[28] ,

35 Մինչև քո թշնամիներդ քո ոտագդ կոխելիք դնեմ :

36 Հիմի թող ճշմարտութենով գիտենայ Իսրայէլի ամէն տունն , որ Աստուած Նորան Տէր և Օծեալ արաւ . էն Յիսուսին որ դուք խաչեցիք[29] :

37 Եւ երբոր էս լսեցին , իրանց սրտերումն ղջացան[30] . և ասացին Պետրոսին և մնկել առաքեալներին . Ինչ պիտի գործենք՝ մարդիք եղբայրք :

38 Պետրոս նորանց ասաց . Ապաշխարեցէք՝ և ձեզանից ամէն մէկըն թող մկրտվի Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ մեղաց թողութեան համար , և Սուրբ Հոգոյ աւետիքըն կընդունիք[31] :

(16) Ասպ • իզ • 24 : Լուկ • իբ • 22 : իդ • 44 : Գործ • գ • 18 : դ • 28 : (17) Գործ • ե • 30 : (18) Ալար • 32 : Գործ • գ • 15 : դ • 10 : ժ • 40 : ժգ • 30 • 34 : ժե • 31 : Հռոմ • դ • 24 : ը • 11 : ա Կորնթ • զ • 14 : ժե • 15 : բ Կորնթ • գ • 14 : Գալ • ա • 1 : Եփես • ա • 20 : Կող • բ • 12 : ա Թես • ա • 10 : Եբր • ժգ • 20 : ա Պետր • ա • 21 : (19) Սաղ • ժգ • 8 : (20) գ Թագ • բ • 10 : Գործ • ժգ • 36 : (21) բ Թագ • է • 12 , 13 : Սաղ • ճբ • 11 : Լուկ • ա • 32 • 69 : Հռոմ • ա • 3 : բ Տիմ • բ • 8 : (22) Սաղ • ժգ • 10 : Գործ • ժգ • 35 : (23) Ալր • 24 : (24) Գործ • ա • 8 : (25) Գործ • ե • 31 : Փիլպ • բ • 9 : Եբր • ժ • 12 : (26) Յովէլ • ժգ • 26 : ժե • 26 : ժգ • 7 • 13 : Գործ • ա • 4 : (27) Գործ • ժ • 45 : Եփես • դ • 8 : (28) Սաղ • ճժ • 1 : Մատթ • իբ • 44 : ա Կորնթ • ժե • 25 : Եփես • ա • 20 : Եբր • ա • 13 : (29) Գործ • ե • 31 : (30) Հով • ժբ • 10 : Լուկ • գ • 10 : Գործ • ի • 6 : ժգ • 30 : (31) Լուկ • իդ • 47 : Գործ • գ • 19 :

39 Ինչու որ՝ ձեզ և ձեր որդոց համար է էս աւետիքս[32], և էն ամէն հեռաւորներին համար՝ որ Նոյանց մեր Տէր Աստուածն կըկանչէ[33]։

40 Եւ ուրիշ շատ խօսքերով վըկայութիւն էր դնում, և յորդորում էր նորանց՝ և ասում էր. Ազատվեցէք էս ծուռ ազգիցս։

41 Ա՛ին քանիսն նորա խօսքն յօժարութեամբ ընդունեցին և մըկըրտվեցան. և էն օրն երեք հազարի չափ հոգիք աւելացան։

42 Եւ միշտ առաքելոց վարդապետութեանն և հաղորդութեանն, և հացի կոտրելոյն՝ և աղօթքին էին հետևում[34]։

43 Եւ ամէն անձին վերայ ահ և վախ էր լինում. շատ նշաններ և հրաշքներ գործվում էին առաքելոց ձեռքովն[35]։

44 Ամէն հաւատացեալներն իրար հետ միտեղ էին, և ամէն բան հասարակաց ունէին[36]։

45 Եւ ապրանքներըն և ամէն բաներըն ծախում էին, և բաշխում էին ամէնին, ումմ որ միևնոյն բան պէտք էր լինում[37]։

46 Միշտ և ամէն օր միաբանութեամբ[38] տաճարն էին գնում[39], և հացըն տներում էին կոտրում, և ուրախութեամբ և սրտի միամտութեամբ կերակուր էին առնում[40]։

47 Աստուածն օրհնում էին, և ամէն ժողովրդի առաջին շնորհք ունէին[41]. և Տէրն միշտ և ամէն օր փրկվածներ էր աւելացնում նորանց հետ[42]։

ԿԼ. Կ

1 Պետրոս ուրքերըն հաստատված կաղ մարդն տեսնելով վաղող ժողովուրդըն քարոզելով, 12 Աըհաստատվանի թէ էն բժշկութիւնն հենց իրան կամ թէ Յովհաննէսի զօրութեամբ և քաջութեամբ էլած էլ, բայց Աստուածանից և իրան Որդոյն Յիսուսից, և նորա անունի հաւատքովն, 13 Իւ մեղադրում նորանք Յիսուսին խաչելոյ համար։ 17 Իւ որովհետև էս անգիտութեամբ արին, բայց Աստուած որ մարգարէներին բերանովն պատմեց իրան Քրիստոսի չարչարվիլըն՝ էնպես էլ կատարեց, 19 Նարհամար կըյորդորէ նորանք որ զըղջանան՝ որ իրանց մեղքերըն ջնջվին, և էն Յիսուսից օրհնութիւն առնեն։

1 Պետրոսն և Յովհաննէսն գընում էին տաճարն[1] աղօթքի ինն ժամումն (սահլոս)[2]։

2 Եւ մին մարդ կար իրան մօր փորիցն կաղ (ծնված)՝ որ նորան ամէն օր վերկալած դնում էին տաճարի (էն) դռան մօտն՝ որ Նեղլիկ էր կոչվում[3], որ ողորմութիւն խնդրէ նրանցից՝ որ տաճարն էին մտնում[4]։

3 Երբոր տեսաւ Պետրոսին և Յովհաննէսին՝ որ տաճարն էին մըտնում, աղաչեցավ՝ որ ողորմութիւն առնէ նորանցից։

4 Պետրոսն Յովհաննէսին հետ մըտիկ արաւ նորան և ասաց. Նէսպի մեզ նայիր։

5 Նա դարձաւ դէպի նորանց,

(32) Յովէլ. բ. 28։ Գործ. գ. 25։ (33) Գործ. ժ. 45։ ժա. 15. 18։ ժգ. 26։ ժե. 3. 8. 14։ Ղեւտ. բ. 13. 17։ (34) Ա՛ստ. 46։ Գործ. ա 14։ Հռոմ. ժբ. 12։ Ղեւտ. գ. 18։ Ա՛ղդ. դ. 2։ Ելբ. ժ. 25։ (35) Մարկ. ժգ. 17։ Գործ. դ. 33։ ե. 12։ (36) Գործ. դ. 32. 34։ (37) Ղուկ. ծը. 7։ (38) Գործ. ա. 14։ (39) Ղուկ. խգ. 53։ Գործ. ե. 42։ (40) Գործ. բ. 7։ (41) Ղուկ. բ. 52։ Գործ. դ. 33։ Հռոմ. ժգ. 18։ (42) Գործ. ե. 14։ ժա. 24։ (1) Գործ. բ. 46։ (2) Սաղմ. ծե. 17։ (3) Գործ. ժգ. 7։ (4) Յովհ. թ. 8։

և յայս ունէր՝ որ մին բան առնէ Նորանցից ։

6 Եւ Պետրոն ասաց • Արծաթ և ոսկի չունիմ • բայց ինչ որ ունիմ , են քեզ կրտամ • Յիսուսի Քրիստոսի Նազովրեցոյ անունովն վեր կաց՝ և գնա[5] ։

7 Եւ Նորա ալ ձեռիցն բռնեց՝ և վերկացուց Նորան • և շուտով հաստատվեցան Նորա բարձքն (ձեռն չէին)՝ և ոտաց սրունքն (ոտքերն նէրդն) ։

8 Ել եր վազեց՝ և սկսեց գնալ , և Նորանց հետ մտաւ տաճարն[6] • և գնումէր և վազ էր տալիս՝ և Աստուծոյն օրհնումէր ։

9 Եւ ամէն ժողովուրդն տեսաւ Նորան , որ գնումէր՝ և Աստուծոյն օրհնումէր[7] ։

10 Եւ գիտումէին Նորան՝ որ սա էն էր , որ ողորմութեան համար նստումէր տաճարի Վեղեցիկ դրանըն , և զարմանքով լցվան էն նշանին համար՝ որ էլաւ[8] ։

11 Եւ դեռ որ Նա Պետրոսին և Յովհաննէսին բռնած էր , ամէն ժողովուրդն վազեց Նորանց մօտ (էն) սրահն՝ որ Սաղոմոնի էր կոչվում , և զարմացան[9] ։

12 Երբոր Պետրոսն տեսաւ , պատասխան տուաւ ժողովրդին • Ի՛վ Իսրայէլացի մարդիկ՝ ինչո՞ւ էք զարմացել սրա վերայ՝ կամ մեզ վերայ ինչո՞ւ էք սաստիկ նայում , իբր թէ՝ մենք մեր զօրութենով և քաջութենով տուած լինինք դորան գնալն ։

13 Աբրահամու Աստուածն՝ Սահակայ Աստուածն՝ և Յակոբայ Աստուածն , մեր հարանց Աստուածն[10] փառաւորեց իրան Որդի Յիսուսին[11] • Նորան՝ որ դուք մատնեցիք[12] , և ուրացաք Պիղատոսի առաջին , երբոր նա դատումէր՝ որ արձակէ (Նորան)[13] ։

14 Եւ էն Սրբին[14] և Արդարին ուրացաք , և խնդրեցիք՝ որ (նա) մին մահապարտ մարդ շնորհէ ձեզ[15] ։

15 Եւ կենաց Առաջնորդին սպանեցիք , որ Նորան Աստուած մեռելների միջիցն յարոյց[16] • որ Նորան հենց մենք վկայումենք[17] ։

16 Եւ Նորա անունի հաւատքովն սորան՝ որ տեսնումէք և գիտումէք , Նորա անունն հաստատեց[18] • և հաւատքն՝ որ Նորանով է՝ էս առողջութիւնս տուաւ դորան ձեր ամենի առաջին ։

17 Եւ հիմի՝ եղբարք , գիտումեմ՝ որ անգիտութենով արիք՝ ինչպես որ ձեր իշխաններն էլ[19] ։

18 Բայց Աստուած՝ ինչպես որ առաջուց[20] ամէն մարգարէների բերանովն պատմեց իրան Քրիստոսի չարչարվիլըն , էնպես էլ կատարեց[21] ։

19 Ուրեմն՝ զղջացէք և յետ դարձէք , որ ձեր մեղքերն ջնջվին[22] ։

20 Որ Տէրի երեսից հանգստանալու ժամանակներն գան • և Յի-

(5) Գործ • գ • 10 ։ (6) Նաայ • լե • 6 ։ (7) Գործ • գ • 16 • 21 ։ (8) Յովհ • թ • 8 ։ (9) Յովհ • ժ • 23 ։ Գործ • ե • 12 ։ (10) Գործ • ե • 30 ։ (11) Յովհ • է • 39 ։ ժբ • 16 ։ ժե • 1 ։ (12) Մաթ • իե • 2 ։ (13) Մաթ • իե • 20 ։ Մարկ • ժե • 11 ։ Ղուկ • իդ • 18 • 20 , 21 ։ Յովհ • ժը • 40 • ժբ • 15 ։ Գործ • ժգ • 28 ։ (14) Սաղմ • ժզ • 10 ։ Մարկ • ա • 24 ։ Ղուկ • ա • 35 ։ Գործ • բ • 27 ։ գ • 27 ։ (15) Գործ • է • 52 ։ իբ • 14 ։ (16) Գործ • բ • 24 ։ (17) Գործ • բ • 32 ։ (18) Մաթ • թ • 22 ։ Գործ • գ • 10 ։ ժգ • 9 ։ (19) Ղուկ • իդ • 34 ։ Յովհ • ժգ • 3 ։ Գործ • ժգ • 27 ։ ա Կորնթ • բ • 8 ։ ա Տիմ • ա • 13 ։ (20) Ղուկ • իդ • 44 ։ Գործ • իվ • 22 ։ (21) Սաղմ • իբ ։ Նաայ • ծ • 6 ։ ծգ • 5 , Եսայի ։ Գործ • թ • 26 ։ ա Պետ • ա • 10 , 11 ։ (22) Գործ • բ • 38 ։

սուրին Քրիստոսին ուղարկէ , որ առաջուց ձեզ համար սահմանուած է :

21 Որ Նորան երկինքն պէտք է ընդունի[23] մինչև են ամէն բաներուն հաստատուելոյ ժամանակներն[24] • որ Նորանց համար խօսեց Աստուած իր սուրբ մարգարէներուն բերանովը[25] :

22 Մովսէս մեր հարանցն ասաց , Թէ Ձեր Տէր Աստուածն մարգարէ վերկրկացնէ ձեզ համար ձեր եղբարներուն միջէն՝ ինձ նման , Նորան լսեցէք ամէն բանի համար՝ ինչ որ կրնաւսի ձեզ[26] :

23 Եւ կըլինի , որ ամէն անձն՝ որ են մարգարէին չըլսէ , նա ժողովրդէ միջէն թող սատակվի :

24 Եւ ամէն մարգարէներն՝ որ Սամուէլէն մինչև հիմիկ մարգարէացան , հենց էս օրերս պատմեցին :

25 Դուք էք են մարգարէներուն որդիքն՝ և են ուխտին , որ Աստուած մեր հարանց հետ հաստատեց , և Աբրահամին ասաց[27] • Որ զաւակովդ պիտի օրհնվին երկրի ամէն ազգերն[28] :

26 Աստուած առաջ ձեզ համար[29] վերկացուց իրան Որդին , և Նորան ուղարկեց՝ որ ձեզ օրհնէ[30] , որ ձեր ամէն մէկդ յետ դառնաք ձեր չարութենիցն[31] :

ԿԱ • Դ

1 Քահանայապետներն և իշխաններն Պետրոսի քարոզութեանն համար սաստիկ բարկանալով՝ ինքն և Յովհաննէսն բանտի մէջ կըդնեն , 4 Նէն խօսքն լսողներից շատերն կըհաւատան : 5 Երբ որ Նորանք դատաստանի կըհանեն՝ Պետրոս համարձակութենով կըհաստատէ Թէ են կաղ մարդն Յիսուսի անունով ողջացաւ , և Թէ մէնակ Յիսուսի անունովն փրկութիւն կայ երկնքի ներքևն : 13 Նորանք ահ տալով պատուէր կըտան Նորանց որ խնկի չըխօսքն և չըսովրեցնեն Յիսուսի անունովն , 23 Նորանց համար եկեղեցին աղօթք կանէ : 31 Աստուած Նորանց ժողովված տեղն շարժելով Սուրբ Հոգովն ցոյց կըտայ Թէ իրանց աղօթքն լսեց • և Խնկեղեցին կըհաստատէ Սուրբ Հոգովն պարգևներովն , նորանց բազմութիւնն մին սիրտ անելով և ոդորմութենով :

1 Եւ դեռ քանի որ Նորանք ժողովրդին հետ խօսումէին , քահանայապետներն և տաճարի իշխաններն և սադուկեցիքն Նորանց վերայ հասին

2 Վասին բարկացած Նրահամար՝ որ Նորանք ժողովրդին սովորցնումէին , և Յիսուսի ձեռովն մեռելներուի յարութիւն առնելըն պատմումէին[1] :

3 Իրանց ձեռներըն ձգեցին Նորանց , և բանտի (պահպանի) մէջ դրին մինչև առաւօտն • ինչու որ երեկվան դէմ էր :

4 Նայց են խօսքը լսողներից շատերն հաւատացին • և մարդկանց համարն հինգ հազարի չափ էլաւ :

5 Եւ յետևի օրումն էլաւ՝ որ Նորանք իշխաններին և երեցներին և կարդացողներին ժողովեցին Երուսաղէմ ,

6 Եւ Աննա քահանայապետին՝

(23) Գործ • ա • 11 : (24) Սոփ • ժէ • 11 : (25) Ղուկ • ա • 70 : (26) բ Օրէն • ժը • 15 • 18 , 19 : Գործ • է • 37 : (27) Գործ • բ • 39 : Ղուկ • թ • 8 • 8 : ժե • 8 : Գաղ • գ • 26 : (28) Ծննդ • ժբ • 3 • ժը • 18 : իբ • 18 : իդ • 4 : իը • 14 : Գաղ • գ • 8 : (29) Սոփ • ժ • 5 : ժե • 24 : Ղուկ • խդ • 47 : Գործ • ժգ • 32 , 33 • 46 : (30) Ա Յոյր • 22 : (31) Սոփ • ա • 21 : (1) Սոփ • իբ • 23 : Գործ • իդ • 8 :

և Կայիափային, և Յովհաննէսին և Ղէբսանդրոսին, և էն ամէնին՝ որ քահանայական ցեղից էին[2] :

7 Եւ նորանց կանգնացրին մէջ տեղն՝ (և) նորանց հարցնում էին՝ (թէ) Ո՞նչ զօրութեամբ կամ ո՞ր անունով դուք արիք էս[3] :

8 Յն ժամանակն Պետրոս Սուրբ Հոգով լցված՝ նորանց ասաց[4] • Ո՛վ ժողովրդի իշխաններ՝ և Իսրայէլի երեցներ •

9 Թէ արժա՞ն է՝ որ մեզ էս օր դատէք մին տկար մարդոյ երախտիք անելոյ համար, թէ ում ձեռովն սա բժշկվեցաւ :

10 Ծանոյ յայտնի լինի ձեզ ամենիդ՝ և ամէն Իսրայէլի ժողովրդիդ • որ Յիսուսի Նազովրեցւոյ անունովն[5] որ նորան դուք խաչեցիք՝ որ նորան Աստուած յարոյց մեռելների միջիցն, հենց նորանով սա հիմիկ ձեր առաջիդ ողջացած կայ[6] :

11 Նա է ձեզանից շինօղների անարգված քարն, որ անկիւնի գլուխ եղաւ[7] :

12 Եւ էլ մին ուրիշ բանով փրկութիւն չըկայ • ինչու որ էլ ուրիշ անուն չըկայ երկնքի ներքեւն մարդկանց տրվված՝ որ նորանով կարելի լինի մեզ ապրիլ[8] :

13 Պետրոսի և Յովհաննէսի համարձակութիւնն տեսնելով, և գիտելով թէ տգէտ և առանց ուսմունքի մարդիք են, զարմանում էին[9] • պատճառն որ՝ ճանաչում էին նորանց՝ որ Յիսուսի հետ էին :

14 Եւ էն բժշկված մարդոյն էլ տեսնում էին՝ որ նորանց հետ կար • և իսկի չէին կարող մին պատասխան տալ[10] :

15 Եւ հրամայեցին նորանց՝ որ տիվանից դուրս գնան, և իրար հետ խորհուրդ արին :

16 Եւ ասացին • Ի՞նչ անենք էս մարդկանցս՝ որ երևելի նշան է լաւ սորանց ձեռովն[11] • որ հենց ամէն Երուսաղէմի մէջ բնակօղներին յայտնի է, և կարող չենք ուրանալ[12] :

17 Այլ թէ՝ որ աւելի չըտարածվի ժողովրդի մէջն՝ ահ տանք նորանց, որ մինէլ էն անունովն չըխօսին մարդկանց մըտի հետ :

18 Եւ նորանց կանչեցին և պատուէր տուին՝ որ իսկի չըխօսին, և մինէլ չըսովորցնեն Յիսուսի անունովն[13] :

19 Այլ Պետրոսն և Յովհաննէսն պատասխան տուին՝ և նորանց ասացին • Ա՛ծիր կտրեցէք, եթէ արժան է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ աւելի ականջ գնենք՝ քան թէ Աստուծոյն[14] :

20 Ինչու որ՝ մենք չենք կարող չըխօսիլ էն[15]՝ որ տեսինք և լսեցինք[16] :

21 Նորանք ահ տալով արձակեցին նորանց, և ոչ ինչ բան չըգտին՝ թէ ինչպէս պատիժ տան նորանց՝ ժողովրդի պատճառովն[17] • ինչու որ՝ ամէնքն էլ էն էլած բաներին համար փառք էին տալիս Աստուծոյն[18] :

(2) Նահ • գ • 2 : Յովհ • ժա • 49 : ԺԲ • 13 : (3) Նէմ • բ • 14 : Մաթ • իա • 23 : Գործ • է • 27 : (4) Նահ • ԺԲ • 11, 12 : (5) Գործ • գ • 6 • 16 : (6) Գործ • բ • 24 : (7) Սաղ • ՃԺԸ • 22 : Նաոյ • ԻԸ • 16 : Մաթ • իա • 42 : (8) Մաթ • ա • 21 : Գործ • Ժ • 43 : ա Տիմ • բ • 5, 6 : (9) Մաթ • ժա • 25 : ա Կորնթ • ա • 27 : (10) Գործ • գ • 11 : (11) Յովհ • ժա • 47 : (12) Գործ • գ • 9, 10 : (13) Գործ • է • 40 : (14) Գործ • է • 29 : (15) Գործ • ա • 8 : բ • 32 : (16) Գործ • ԻԸ • 15 : ա Յովհ • ա • 1 • 3 : (17) Մաթ • իա • 26 : Նահ • բ • 6 • 19 : ԻԸ • 2 : Գործ • է • 26 : (18) Գործ • գ • 7, 8 :

22 Պատճառն որ՝ էն մարդըն՝ քա-
ռասուն տարուց էլ աւելի էր, որ
Նորա վերայ էս բժշկութեան նշա-
նըս էլաւ։
23 Եւ էնտեղիցն՝ որ արձակվե-
ցան՝ եկին իրանցների մօտըն, և
պատմեցին որքան բան որ քահա-
նայապետներն և էլեցներն ասացին
Նորանց[19]։
24 Եւ Նորանք երբոր լսեցին, ի-
րանց ձայներն բարձրացրին դէպի
Աստուած և ասացին. Տէ՛ր
Աստուած՝ որ արիր երկինքըն և եր-
կիրըս՝ ծովըն և ամէն բան՝ որ Նո-
րանցումն է[20].
25 Որ մեր հայր Դաւթի՝ քո ծա-
ռայի բերանովն խօսեցիր և ասացիր
Սուրբ Հոգով ձեռովն. Ինչու
համար հեթանոսներն խռովվեցան՝
և ժողովուրդներն ունայն բաներ
մտածեցին[21]։
26 Երկրի թագաւորներն վերկա-
ցան, և իշխաններն միտեղ հա-
ւաքվեցան Տէրին համար՝ և Նորա
Օծեալին համար։
27 Ուրեմ որ հաւաքվեցան էս
քաղաքումս[22] քո սուրբ Որդի Յի-
սուսին վերայ[23], որ Նորան օծե-
ցիր[24]. Հերովդէսն և Պոնտոս Պի-
ղատոսն՝ հեթանոսներովն և Իս-
րայէլի ժողովուրդներովն,
28 Որ անեն՝ որչափ որ քո ձե-
ռըն և կամքն առաջուց սահմանեց
որ լինի[25]։
29 Եւ հիմի՝ Տէր, նայիր Նո-
րանց ահ տալըն, և տուր քո ծա-
ռաներին՝ որ ամէն համարձակու-
թենով քո բանըդ խօսին[26]։
30 Երանովի որ քո ձեռըն մեկ-
նես, որ բժշկութիւն, և նշաններ
և հրաշքներ լինին[27], քո սուրբ
Որդի Յիսուսի[28] անունովն[29]։
31 Եւ դեռ քանի որ Նորանք ա-
ղօթք էին անում՝ շարժվեցաւ էն
տեղն՝ որ ժողովված էին, և ամէն-
քըն Սուրբ Հոգով լցան[30]. և
Աստուծոյ բանըն համարձակութե-
նով խօսում էին[31]։
32 Եւ էն հաւատացելոց բազ-
մութիւնն մին սիրտ և մին անձն
էր[32]. և Նորանցից իսկի մինն էլ
չէր ասում իրան ապրանքների հա-
մար՝ թէ իրանն են[33]. բայց Նո-
րանց ամէն բաներն հասարակաց
էր։
33 Եւ առաքեալներն շատ զօրու-
թենով[34] վկայութիւն էին տալիս
Տէր Յիսուսի Յարութիւն առնելոյն համար[35]. և մեծ
մեծ շնորհքներ կային Նորանց ա-
մէնին վերայ[36]։
34 Եւ Նորանց մէջն իսկի մինն
կարօտութիւն չունէր. պատճառն
որ՝ Նորանք ամէնքըն՝ որ գեղերի
կամ տըներուն տէր էին՝ ծախում-
էին, և ծախվածի գինըն բերում-
էին[37]։
35 Առաքելոց ոտներին մօտըն էին
դնում[38]. և ամէնին բաժանում-
էին՝ ինչպէս որ մէնին մին բան պէտք
էր լինում[39]։
36 Յովսէփն՝ որ առաքեալներից

(19) Ելք · ժբ · 12։ (20) Դ Թագ։ · ժե · 15։ (21) Պսալմ · բ · 1։ (22) Մատթ · իզ · 3։ Ղուկ։ · իբ · 2։ իդ · 1 · 8։ (23) Ղուկ։ · ա · 35։ (24) Ղուկ։ · դ · 18։ Եսայ։ · ժ · 36։ (25) Ելք · բ · 23։ գ · 18։ (26) Ա Էր · 13։ Ա Յար · 31։ Ելք · թ · 27։ ժգ · 46։ ժգ · 3։ ժե · 8։ իզ · 26։ իբ · 31։ Երէս · զ · 19։ (27) Ելք · բ · 43։ ե · 12։ (28) Ա Էր · 27։ (29) Ելք · գ · 6 · 16։ (30) Ելք · բ · 2 · 4։ ժզ · 26։ (31) Ա Էր · 29։ (32) Ելք · ե · 12։ Հռոմ։ · ժե · 5, 6։ բ Կորնթ։ · ժգ · 11։ Փիլիպ։ · ա · 27։ բ · 2։ ա Պետր · գ · 8։ (33) Ելք · բ · 44։ (34) Ելք · ա · 8։ (35) Ելք · ա · 22։ (36) Ելք · բ · 47։ (37) Ելք · բ · 45։ (38) Ա Յար · 27։ Ելք · ե · 2։ (39) Ելք · բ · 45։

Խառնաբաս կոչվեցաւ , որ Ա՛ր-
խիմարուքեան ոգի կասվի . Վե-
տացի ցեղից՝ Կիպրոսեցի .

37 Այս մին գիւղ ունէր , (և)
ծախեց՝ և գինըն բերաւ առաքե-
լոց ոտների մօտն դրաւ[40] :

ԳԼ · Ե

1 Ընանիան և Նորա կինն Սափիրան իրանց սուտ ասելոյն համար Պետրոսից սաստկելով վերջնական և իրանց հոգիներն հանեցին , 12 Առաքեալների ձեռովն նշաններ և շատ հրաշք-
ներ կըլինին , 14 Հաւատացեալներըն շատանալոյ համար : 17 Մինչև ձեռք կըձգեն առաքեալներին , և Նորանց կըդնեն բանտի (պահպանի) մէջն , 19 Մին հրեշտակ Նորանց կա-
զատէ և պատուէր կըտայ Նորանց որ համարձակ ամէնին քարոզեն . 21 Նորանք էլ երթոր տաճարին մէջն , 29 Նէ տիվանի առաջին քարոզելոյն , 33 Օձիամիներըն մտածում մին որ Նորանք սպանեն , վերջն մին Գամալիէլ օրէնք սովորցնող Հրէայի խորհրդովն 40 Անհակ կըծեծեն և կարձակեն Նորանց . որ Նրանհամար Ըստուած կըփառաւորեն և ամէն օր չեն դա-
դարում սովորցնելուց՝ և աւետարանելուց :

1 Բայց մին Ընանիա անուն մարդ , իրան Սափիրա կնկան հետ՝ (միս) ագարակ (ղէշլաղ) ծախեց :
2 Եւ Նորա գնիցն գաղտ եց որ կի-
նըն էլ գիտումեր . և միւնիչ բա-
ժին բերաւ առաքելոց ոտների մօ-
տըն դրաւ[1] :
3 Պետրոսն ասաց . Ընանիա՝ ինչո՞ւ համար[2] Սատանան քո սիր-
տըդ լցրուց՝ որ դու սուտ խօսիս Սուրբ Հոգոյն , և ագարակի (ղէշ-
լաղի) գնիցն գաղտս[3] :
4 Չէ՞ որ դեռքանի որ կար՝ քո-
նըն էր , և երբոր ծախումեիր՝ քո իշխանութեանդ տակն էր . Ինչ է՝ որ էս բանըս դրիր քո սրտիդ մէ-
ջըն . ոչ թէ մարդկանց սուտ ա-
սացիր , բայց Ըստուծոյն :
5 Եւ Ընանիան երբոր էս բա-
նըս լսեց , վերջնկաւ և հոգին հա-
նեց[4] . և մեծ վախ էլաւ ամէնին վերայ՝ որ էն լսեցին :
6 Երիտասարդներն վերկացան՝ պատանեցին Նորան , և տարան թաղեցին[5] :
7 Եւ էլաւ երբոր երեք ժամ (սահաթ) անցկացաւ , և Նորա կինն (որ) չէր գիտումՙ ինչ որ էլած էր , ներս մտաւ :
8 Պետրոսն պատասխան տուաւ Նորան՝ և ասաց . Ասա ինձ ասա՝ թէ ըՙնչափ գնով ծախեցիք էն ա-
գարակըն . և Նա ասաց . Այՙ էն-
չափ :
9 Եւ Պետրոսն ասաց Նորան . Ինչ է՝ որ միաբանվեցաք դուք , որ Տէրի Հոգին փորձէք[6] . ահա (Նորանց) ոտներն՝ որ քո մարդըն թաղեցին , դռան մօտն (են)՝ քեզ էլ կըհանեն :
10 Եւ չուտով վերջնկաւ Նորա ոտների առաջին՝ և հոգին հանեց . երիտասարդներն ներս մտին՝ Նորան մեռած գտին , և հանեցին իրան մարդոյ մօտն թաղեցին[7] :
11 Եւ մեծ ահ էլաւ ամէն եկե-
ղեցոյն վերայ , և ամէնին վերայ՝ որ էս լսեցին[8] :
12 Եւ առաքեալների ձեռովն նը-
շաններ և հրաշքներ էին լինում

(40) Ա՛իր · 34 , 35 : Գործ · 6 · 1 , 2 : (1) Գործ · գ · 37 : (2) Յով · Լ · 2 : բ Օ-
րէն · իգ · 21 : Յով · 6 · 4 : (3) Ղ՛ած · իբ · 3 : (4) Այր · 10 , 11 : (5) Հաւ-
ժք · 10 : (6) Ա՛իր · 3 : Սաղմ · գ · 7 : (7) Ա՛իր · 5 : (8) Ա՛իր · 5 : Գործ · բ ·
43 : ժք , 17 :

ժողովրդի մէջն[9] • և ամէնքն միա-
բան Սաղոմոնի սրահումն էին[10] :
13 Եւ էն ուրիշներից իսկի մի-
նըն չէր համարձակվում մօտենալ
նորանց[11] • բայց ժողովուրդն պա-
տիւ էր տալիս նորանց[12] :
14 Եւ էլ աւելի շատանում էին
Տէրի հաւատացեալները • մարդ-
կանց և կանանց բազմութիւնն :
15 Մինչև որ հիւանդներըն հա-
նում էին բաց փողոցներըն , և ի-
րանց սայլերումն և մահիճներումն
(պէօշէնէներումն) հետեղ էին դնում •
որ երբոր Պետրոսն անցկենայ , լի-
նի թէ նորա շուաքն նորանցից
մընին հասնէ[13] :
16 Եւ էն չորս կողմի քաղաքնե-
րից բազմութիւն էին հաւաքվում
Երուսաղէմ , բերում էին հիւանդ-
ներըն և պիղծ դևերից չարչար-
ւածներըն • որ ամէնքն էլ բժըշկ-
վում էին[14] :
17 Մ երկացաւ քահանայապետն և
ամէնքն՝ որ նորան հետ էին , և
սադուկեցոց աղանդն՝ նախանձով
լցվան[15] :
18 Եւ ձեռք ձգեցին առաքեալնե-
րին , և նորանց յայտնի դրին բան-
տի (պէնտանի) մէջն[16] :
19 Բայց Տէրի հրեշտակն գիշերով բանտի դռներըն բաց ա-
րաւ , նորանց հանեց՝ և ասաց[17] .
20 Գնացէք տաճարի մէջն կանգ-
նեցէք , և էս կեանքիս ամէն հր-
բամաններըն խօսեցէք ժողովրդի
հետ[18] :
21 Եւ երբոր լսեցին , առաւօ-
տանց մտին տաճարի մէջն՝ և սո-
վորցնում էին • եկաւ քահանայա-
պետն՝ և նորանք՝ որ նորա հետ է-
ին , տիվանն , և Իսրայէլի որդոց
ամէն ծերակոյտըն կանչեցին մին-
տեղ , և ուղարկեցին բանտն՝ որ
բերեն նորանց[19] :
22 Բ երբոր սպասաւորներն և-
կին՝ նորանց չգտին բանտի մէջն •
յետ դարձան և պատմեցին ,
23 Եւ ասացին • Թէ Բանտըն
ամէն զգուշութեամբ փակված գը-
տինք , և պահապաններըն էլ՝ որ
դռան մօտն կանգնած էին • բաց
արինք՝ և ներսումն իսկի մարդ չը-
գտինք :
24 Երբոր տաճարի իշխաններն և
քահանայապետներն էս բանըս լը-
սեցին , զարմանում էին նորանց հա-
մար , թէ էն ինչ պիտի լինի[20] :
25 Եւ մինն եկաւ նորանց պատ-
մեց՝ Թէ Ահա էն մարդիքն՝ որ բան-
տի մէջ դրիք , տաճարումն կանգ-
նած են՝ և սովորցնումեն ժողովըր-
դին :
26 Այն ժամանակն իշխանն սպա-
սաւորներին հետ գնաց՝ նորանց
բերին առանց բռնութեան • պատ-
ճառն որ՝ ժողովրդից վախենում
էին՝ որ չքարկոծվին[21] :
27 Եւ (երբոր) բերին նորանց՝
կանգնացրին տիվանի առաջին • քա-
հանայապետն հարցրուց նորանց ,
28 Եւ ասաց • Ձէ՞ որ պատուի-
րելով պատուիրեցինք ձեզ՝ որ չքսո-
վորցիք էն անունովն[22] • և հիմիկ՝
ահա Երուսաղէմըն լցրիք ձեր ուս-
մունքովդ , և կամենում էք մար-
դոց արունըն[23] մեզ վերայ բերել[24] :

(9) Կորն • բ • 43 : Ժղ • 3 : Ժթ • 11 : Հռովմ • ժ • 10 : բ Կորնթ • ժբ • 12 : Եբր • բ • 4 : (10) Կորն • գ • 11 : ղ • 32 : (11) Հայվ • թ • 22 : ժբ • 42 : ժթ • 38 : (12) Կորն • բ • 47 : գ • 21 : (13) Մարկ • թ • 21 : ժգ • 36 : Կորն • ժթ • 12 : (14) Մարկ • ժչ • 17 , 18 : Հայվ • ժգ • 12 : (15) Կորն • գ • 1 , 2 • 6 : (16) Գործ • իա • 12 : (17) Կորն • ժբ • 7 : ժչ • 26 : (18) Հայվ • չ • 69 : ժհ • 3 : ա Հայվ • ե • 11 : (19) Կորն • գ • 5 , 6 : (20) Գործ • իբ • 4 : Կորն • գ • 1 : (21) Մարկ • իա • 26 : (22) Կորն • գ • 18 : (23) Մարկ • իգ • 35 : իհ • 25 : (24) Կորն • բ • 2 • 36 : գ • 15 : ե • 52 :

29 Պատասխան տուաւ Պետրոսն և առաքեալներն, և ասացին · Պա-
տուծոյ պէտք է աւելի հնազանդ-
ուիլ՝ քան մարդկանց[25] :
30 Ա՛ստ Հարցանց Յստուածն յա-
րոյց են Յիսուսին[26], որ դուք փայ-
տից կախած սպանեցիք[27] :
31 Յստուած նորան[28] Առաջնորդ[29]
և փրկիչ բարձրացուց իրան ա-
ջովն[30], որ Իսրայէլին ապաշխարու-
թիւն տայ և մեղաց թողութիւն[31] :
32 Եւ մենք ենք նորա վկաներ էս
խօսքերիս համար[32], և Սուրբ Հո-
գին՝ որ Յստուած իրան հնազանդ
լինողներին տուաւ նորան[33] :
33 Եւ նորանք երբոր լսեցին,
բարկանումէին · և մտածումէին,
որ նորանց սպաննեն[34] :
34 Ա՛յն փարիսեցի վերկացաւ տի-
վանի միջումն, որ նորա անունն
Գամաղիէլ էր[35] · օրէնք սովորց-
նող՝ ամէն ժողովրդի առաջին պատ-
ուական · Հրաման տուաւ որ էն
մարդկանց մինչիչ դուրս տանեն,
35 Եւ նորանց ասաց · Իսրայէ-
լացի՛ մարդիկ՝ զնդ վերայ նայեցէք
էս մարդկանցս համար, թէ ի՛նչ
պէտք է անել :
36 *Այս օրերիցս առաջ Թևդասն
վերկացաւ՝ իրան համար ասելով՝
թէ ինքն մին մեծ բան է · որ չորս
հարիւրի չափ մարդիք նորա եաե-
ւէն ընկան · որ (ինքն) սպանվե-
ցաւ՝ և ամէնքն էլ՝ որ նորա հետ
միաբանված էին, քանդվեցան՝ և
ոչինչ էլան :
37 Յորանից ետև Գալիլեացի
Յուդան վերկացաւ աշխարհագրի
օրերումն · և շատ ժողովուրդ ա-
պըստամբացրուց իրան հետ · նա
էլ կորաւ՝ և (էն) ամէնքն էլ՝ որ
նորան հաւանել էին՝ ցրվեցան :
38 Եւ հիմիկ ասումեմ ձեզ · Հե-
ռի կացէք էդ մարդկանցիցդ, և
թողէք դորանց · պատճառն որ՝ ե-
թէ էդ խորհուրդդ կամ էդ գոր-
ծըդ մարդկանցից է՝ կըքանդվի[36] :
39 Այլ թէ որ Յստուածանից
է՝ չէք կարող քանդել դորանց[37] ·
չըլինի որ Յստուծոյ դէմ կռիւ ա-
նող էլ գտնըվիք[38] :
40 Հաւան կացան նորան · և ա-
ռաքեալներին կանչեցին[39]՝ ծեծե-
ցին, և պատուէր տուին՝ որ էլ
չըխօսեն Յիսուսի անունովն · և
արձակեցին նորանց[40] :
41 Եւ նորանք ուրախանալով
գնացին տիվանի երեսից · ինչու
որ՝ արժանի էլան Տէրի անունին
համար անարգվիլ[41] :
42 Եւ ամէն օր չէին դադարում[42]
տաճարումն և տըներումն սովո-
րեցնել և Յիսուսի Քրիստոսի համար
աւետարանել[43] :

(25) Գործ · դ · 19 : (26) Գործ · դ · 13 · 15 : իբ · 14 : (27) Գործ · ժ · 39 : ժգ · 29 : Գաղ · գ · 13 : ա Պետր · բ · 24 : (28) Գործ · բ · 33 · 36 : Փիլպ · բ · 9 : Եբր · բ · 10 : ժբ · 2 : (29) Գործ · դ · 15 : (30) Մատթ · ա · 21 : (31) Գաղ · իդ · 47 : Գործ · գ · 26 : ժգ · 38 : Եփես · ա · 7 : Կող · ա · 14 : (32) Յովհ · ժե · 26, 27 : (33) Գործ · բ · 4 : ժ · 44 : (34) Գործ · բ · 37 : է · 54 : (35) Գործ · իբ · 3 : *Երբորդ Ա՛ն նախ քան զՏասարակ Թուականն Քրիստոսի : (36) Ընդ · իա · 30 : Նոյ · բ · 10 : Մատթ · ժե · 13 : (37) Գաղ · իա · 15 : ա Պետր · ա · 25 : (38) Գործ · է · 51 : թ · 5 : իդ · 9 : (39) Գործ · դ · 18 : (40) Մատթ · ժ · 17 : իգ · 34 : Մարկ · ժգ · 9 : (41) Մատթ · ե · 12 : Հռոմ · ե · 3 : բ Կորնթ · ժբ · 10 : Փիլպ · ա · 29 : Եբր · ժ · 34 : Յակ · ա · 2 : ա Պետր · դ · 13 · 16 : (42) Գործ · դ · 20 · 29 : (43) Գործ · բ · 46 :

ԳԼ · Զ

1 Աղաչեալներին հաճոյ չէ երևում որ Աստուծոյ խօսքն թողնեն և աղքատներին համար հոգս տանին , 3 Նրա համար ևթեն մարդիք կընտրեն՝ որ նորանք սարկաւագութեան պաշտօնն անեն · 5 Որ նորանց միջն Ստեփաննոսն էր՝ Սուրբ Հոգով և հաւատքով լցված մի մարդ : 12 Նորա հետ վիճաբանութիւն անողներն կըրտնեն նորան , 13 Որ սուրբ տեղըն և օրէնքին դէմ հայհոյութիւն արաւ ըսելով՝ նորա վերայ սուտ վկայութիւն կանեն :

1 Եւ էն օրերումն՝ երբոր աշակերտներն շատացան[1] , Հնոնց տրտունջ ելաւ Եբրայեցոց դէմ[2] · ինչու որ՝ նորանց որբևէրի կանայքըն ամեն օրվան պաշտամունքի մէջն անարգվումէին[3] :

2 Տասներկուքն կանչեցին աշակերտներուն բազմութիւնըն և ասացին · Մեզ հաճոյ չէ որ Աստուծոյ խօսքըն թողնք՝ և սեղանին ծառայենք[4] :

3 Եղբարք՝ ևթեն մարդ ընտրեցէք , որ ձեզանից բարի վկայութիւն ունին , և Սուրբ Հոգով և իմաստութենով լցված են , որ նոքանց էս պէտքական բաներիս վերայ կանգնացնենք[5] :

4 Եւ մենք աղօթքին և բանի և պաշտամունքին հետևենք[6] :

5 Եւ էն խօսքն ամեն բազմութեան առաջին հաւանելի երևեցաւ · և ընտրեցին Ստեփաննոսին՝ որ Սուրբ Հոգով և հաւատքով լցված մարդ էր[7] , և Փիլիպպոսին և Պրոխորոնին և Նիկանորային և Տիմոնային և Պարմենային[8] , և Նիկողայոսին[9] :

6 Նորանց կանգնացրին առաքեալներն առաջին · և աղօթք անելով[10] ձեռք դրին նորանց վերայ[11] :

7 Եւ Աստուծոյ խօսքըն մեծանումէր՝ և աշակերտներն համարն աւելի շատանումէր Երուսաղէմումըն[12] · և քահանաներից շատ բազմութիւն ենազանդվումէին հաւատքին[13] :

8 Ստեփաննոս մարդն՝ շնորհքով և զորութենով լցված , մեծ մեծ նշաններ և հրաշքներ էր անում ժողովրդի մէջն :

9 Էն քանի մարդիք՝ էն ժողովարանից՝ որ Լիբեացոց էր կոչվում՝ , և Կիւրենացոց և Աղէքսանդրացոց և նորանց՝ որ Կիլիկիայից և Ասիայից էին , վերկացան , որ Ստեփաննոսի հետ վիճաբանութիւն անեն :

10 Եւ չէին կարում հակառակ կենալ էն իմաստութեանն՝ և էն հոգուն , որ նորանով խօսում էր նա[14] :

11 Էն ժամանակն մի քանի մարդ կանչ սովորցրին՝ որ նորանց ասեն , Թէ Մենք լսեցինք դորանից՝ որ հայհոյութեան բաներ էր խօսում՝ Մովսէսին և Աստուծոյն հակառակ[15] :

12 Եւ ժողովրդին և էրէցներին և կարգացողներին խռովացրին · և վերայ հասին յափշտակեցին նորան՝ և տարան տիվանն :

(1) Գործ · բ · 41 : դ · 4 : ե · 14 : Ալյր · 7 : (2) Գործ · թ · 29 : ժա · 20 : (3) Գործ · դ · 35 : (4) Ելք · ժը · 17 : (5) բ Օրին · ա · 13 : Գործ · ա · 21 : ժգ · 2 : ա Տիմ · գ · 7 : (6) Գործ · բ · 42 : (7) Գործ · ժա · 24 : (8) Գործ · ը · 5 · 26 : իա · 8 : (9) Հայտ · բ · 6 · 15 : (10) Գործ · ա · 24 : (11) Գործ · ը · 17 : թ · 17 : ժգ · 3 · ա Տիմ · դ · 14 : ե · 22 : բ Տիմ · ա · 6 : (12) Գործ · ժբ · 24 : ժթ · 20 : Կող · ա · 6 : (13) Յովհ · ժբ · 42 : (14) Ղուկ · իա · 15 : Գործ · ե · 39 : Ելք · դ · 12 : Նաա · ծգ · 17 : (15) գ Թագ · ա · 10 · 13 : Մարկ · իգ · 59 , 60 :

13 Եւ սուտ վկաներ կանգնացին՝ որ ասումէին · Այս մարդս չի դադարում սուրբ տեղոյն՝ եւ օրէնքին դէմ հայհոյութեան բաներ խօսելուցն ։

14 Ա՛նք լսեցինք դորանից՝ որ ասումէր[16], թէ Յիսուս Նազովրեցին՝ Նա էս տեղըս կը քանդէ, և էն օրէնքըն՝ որ Մովսէսն տուաւ մեզ, կը փոխէ[17] ։

15 Եւ ամէնքն՝ որ էն տիվանում նստած էին, մտիկ տուին Նորան, և Նորա երեսըն հրեշտակի երեսի նման տեսին ։

ԳԼ · Ն

1 Յոհաննոսի հրաման կըտայ Քահանայապետն որ իրան հայհոյութիւն անելուցն սուտ վըկայութեանն համար պատասխան տայ · 2 Նա էլ ցոյց կըտայ թէ Աբրահամ ինչպես ճշմարտութեանով Աստուծոյ երկրպագութիւն արաւ, և թէ Աստուած Հայրերն ինչպես ընտրեց, 20 Մովսէսի ծնվելուցն և խորանի և տաճարի շինվելուցն առաջ · 37 Ան Մովսես ինքն էլ Տիրոջ համար վկայեց, 44 Մինչև թէ ամէն դրսի արարողութիւններն երկընքի օրինակի համար մէնակ Աստուած պատուէր տըվավ մին քիչ ժամանակի համար · 51 Նորանց ապստամբութիւնն երեսներին կը թափէ և իրանց հարքն որ մարգարէներին հալածեցին՝ որ Նորանք առաջուց պատմեցին էն արդարի գալըն համար, որ Նորանք մատնեցին և սպանեցին Նորան՝ էս ամէնին համար կըսաստէ Նորանք ։ 54 Սրահամար ամէն Հրեաներն Նորան կը քարկոծեն, որ էն էլ իրան հոդին Յիսուսի կըյանձնէ և ամէն սրտովն Նորանց համար աղօթք կանէ ։

1 Ն. քահանայապետն ասաց · Թէ Հիտակ որ էդ բանդ էդպէս է ։

2 Եւ նա ասաց՝ Ա՛րդիք եղբարք և հա՛յր՝ ինձ լսեցէք · Փառաց Աստուածն երևեցաւ մեր Հայր Աբրահամին՝ դեռ որ Միջագետումն էր, դեռ որ Նորան Խառանի մէջն չէր բնակացրել · և ասաց Նորան[1] ·

3 Վա՛րս եկ քո երկրիցն և քո ազգիցն, և ե՛կ էն երկիրն՝ որ ես ցոյց կըտամ քեզ[2] ։

4 Յն ժամանակն Վաղդէացոց երկրիցն դուրս եկաւ՝ Խառանումն բնակվեցաւ[3] · և Նորա հօր մեռնելուցն ետև՝ Նորան էնտեղիցն փոխեց, և պանդխտացրուց էս երկրումս, որ սորանում հիմիկ դուք բնակված էք ։

5 Եւ սորանում ժառանգութիւն չըտուաւ Նորան, և ո՛չ (էլ) մին ոտի քայլի չափ (տեղ) · և խոստացաւ՝ որ էս տեղըս բնակութիւն տայ Նորան[4] · և Նորանից ետև՝ Նորա զաւակին, դեռ որ Նա որդի չունէր ։

6 Աստուած էսպէս խօսեց · Թէ Նորա զաւակն պանդխտ կըլինի օտար երկրի մէջ[5] · և ծառայութեան մէջ կը քցեն Նորան, և կըչարչարեն չորս հարիւր տարի[6] ։

7 Եւ էն ազգին՝ որ (Նորանք) կը ծառայեն, Նորան ես կը դատեմ, ասաց Աստուած · և սրանից ետև դուրս կըգան՝ և էս տեղումն ինձ կըպաշտեն[7] ։

8 Եւ Նորան թլփատութեան ուխտ տուաւ[8] · և յետոյ Սահակին ծըննաւ, և ութ օրումն թլփատեց Նորան[9] · և Սահակն (էլ) Յակո-

(16) Դատ · իե · 8 ։ (17) Դան · թ · 26 ։ (1) Դատ · իբ · 1 ։ (2) Ննդ · ժբ · 1 ։ (3) Ննդ · ժա · 31 ։ ժբ · 4, 5 ։ (4) Ննդ · ժբ · 7 ։ ժգ · 15 ։ ժե · 3 · 18 ։ ժէ · 8 ։ իգ · 3 ։ (5) Ննդ · ժե · 13 · 16 ։ (6) Ելք · ժբ · 40 ։ Գաղ · գ · 17 ։ (7) Ելք · գ · 12 ։ (8) Ննդ · ժէ · 9, 10, 11 ։ (9) Ծննդ · իա · 2, 3, 4 ։

քին[10] , և Յակոբն (էլ) տաններ-
կու նահապետներին[11] ։

9 Եւ նահապետներն նախանձ-
վեցան Յովսէփի հետ , և ծախեցին
(նորան) Եգիպտոս[12] . և Աստուած
նորան հետ էր[13] ։

10 Եւ նորան փրկեց իրան ամէն
նեղութիւններից . և նորան շը-
նորհք և իմաստութիւն տուաւ Ե-
գիպտացոց փարաւօն թագաւորի
առաջին . և (նա) նորան իշխան
կանգնացուց Եգիպտացոց , և ի-
րան ամէն տան վերայ[14] ։

11 Եւ սով եկաւ Եգիպտոսի ա-
մէն երկիրն , և Քանան էլ՝ և մեծ
նեղութիւն կար . և մեր հարքն
կերակուր չէին գտնում[15] ։

12 Եւ Յակոբն՝ որ լսեց թէ Ե-
գիպտոսումն կերակուր է գտնը-
վում , մեր հարանցըն ուղարկեց
առաջին անգամն[16] ։

13 Եւ երկրորդ անգամն Յովսէփն
իրան ճանաչել տուաւ իրան եղ-
բարներին . և նորա ազգն յայտ-
նի եղաւ փարաւօնին[17] ։

14 Յովսէփն ուղարկեց և կանչեց
իրան հայր Յակոբին[18] , և ամէն
ազգատոհմին (էլ)՝ եօթանասուն և
հինգ հոգի[19] ։

15 Եւ Յակոբն վէրեկաւ Եգիպ-
տոս[20]՝ և վախճանվեցաւ ինքն և
մեր հարքն էլ[21] ։

16 Եւ փոխվեցան Սիւքեմ[22] , և
դրվան են քարայրի (յաղթայէն) մէ-
ջըն , որ Նորան Աբրահամն Եմո-
րայի որդիքներիցն գնեց արծաթով՝
Սիւքեմումն[23] ։

17 Երբոր էն աւետիքի ժամանա-
կըն մօտեցաւ՝ որ Աստուած Ա-
բրահամին խոստացաւ[24] , ժողովուր-
դըն մեծացաւ և շատացաւ Եգիպ-
տոսումն[25] ։

18 Մինչև որ ուրիշ թագաւոր
վերկացաւ Եգիպտոսումն՝ որ Յո-
սէփին չէր ճանաչում ։

19 Նա նենգ գործեց մեր ազգին
համար , և մեր հարանցըն չարչա-
րեց՝ որ իրանց երախաներըն դուրս
քցեն՝ որ չապրին[26] ։

20 Որ Մովսէսն էլ էն ժամանա-
կումն ծնվաւ[27] , և գեղեցիկ էր
Աստուծոյ առաջին . որ էլ իրան
հօր տանն երեք ամիս կերակրվե-
ցաւ[28] ։

21 Եւ երբոր դուրս քցեցին նո-
րան , փարաւօնի աղջիկն վերկա-
ւաւ նորան , և մեծացուց նորան՝
որ իրան որդեգիր լինի[29] ։

22 Եւ Մովսէսն վարժվեցաւ Ե-
գիպտացոց ամէն իմաստութենովն .
և զօրաւոր էր իրան խօսքերովն և
գործքերովն[30] ։

23 Երբոր նորա քառասուն տա-
րեկան ժամանակն լըցվաւ , նորա
սրտի մէջն ընկաւ՝ որ իրան եղ-
բայրների՝ Իսրայէլի որդիքների մե-
ջըն մտն գայ[31] ։

24 Եւ երբոր տեսաւ , որ մինըն
զրկված էր , դժուար եկաւ իրան .
էն զրկվածին համար վրէժխնդրու-
թիւն արաւ՝ և Եգիպտացոյն սպա-
նեց ։

25 Մտիք էր անում՝ թէ նորա
եղբարքն կիմանան , որ Աստուած

(10) Ննդ . խե . 26 ։ (11) Ննդ . խթ . 31 , Ասյն ։ Հ . 5 , Ասյն ։ լե . 18 . 23 ։
(12) Ննդ . լե . 4 . 11 . 28 ։ Սաղ . ճե . 17 ։ (13) Ննդ . լթ . 2 . 21 . 23 ։ (14)
Ննդ . խա . 37 ։ խբ . 6 ։ (15) Ննդ . խա . 54 ։ (16) Ննդ . խբ . 1 ։ (17) Գոր-
ծըն . խե . 4 . 16 ։ (18) Ննդ . խե . 9 . 27 ։ (19) Ննդ . խզ . 27 ։ բ Օրէն . ժ .
22 ։ (20) Ննդ . խզ . 5 ։ (21) Ննդ . խթ . 33 ։ Նէ . ա . 6 ։ (22) Նէ . ժգ .
19 ։ Յես . իգ . 32 ։ (23) Ննդ . իդ . 16 ։ լե . 19 ։ (24) Ննդ . ժե . 13 ։ Ելք .
6 ։ (25) Նէ . ա . 7 , 8 , 9 ։ Սաղ . ճե . 24 , 25 ։ (26) Նէ . ա . 22 ։ (27) Նէ .
բ . 2 ։ (28) Գբր . ժա . 23 ։ (29) Նէ . բ . 3—10 ։ (30) Ղուկ . իդ . 19 ։ (31)
Նէ . բ . 11 , 12 ։

նորա ձեռովն փրկութիւն պիտի տայ նորանց · և նորանք չիմացան :

26 Եւ յետևի օրումն երևեցաւ նորանց՝ դեռ որ կուիւ էին անում, և յորդորեց նորանց դէպի խաղաղութիւն, ասաց · Ա՛յդիւք՝ դուք եղբարք էք, ինչու՞ էք իրար զըրկում[32] :

27 Ահայ նա՝ որ ընկերին զրկուս մը, նախատեց նորան՝ և ասաց · Ո՞ւր որ կանգնացուց մեզ վերայ իշխան և դատաւոր[33] :

28 Ա՛յնթէ կամենումս ինձ ըզ սպա՛նել, ինչպէս որ ուրեկ Եգիպտացոյն սպանեցիր :

29 Եւ էս խօսքիցս Ա՛օսէս փախաւ, և պանդուխտ էլաւ Ա՛ադիամի երկրումն · ուր որ երկու որդիք ծնաւ[34] :

30 Եւ երբոր քառասուն տարին կատարվեցաւ, Ահնա սարի անապատումն (չէօլըմն) Տէրի հրեշտակըն երևեցաւ նորան կրակի բոցով մօշի միջումն[35] :

31 Եւ Ա՛օսէսն երբոր տեսաւ՝ զարմացաւ էն տեսիլքին համար, և երբոր մօտենումէր որ մտիկ անէ, Տէրի ձայնն էլաւ (և ասաց) ·

32 Ես եմ քո հարանց Ա՛ստուածըն, Ա՛բրահամու՝ և Սահակայ և Յակոբայ Ա՛ստուածն · և Ա՛օսէս սաստիկ ահով բռնված էր՝ և չէր համարձակվումէ նայիլ[36] :

33 Եւ Տէրն ասաց նորան · Կօշիկներըդ հանիր ոտներիդդ, պատճառն որ՝ տեղդ՝ որ դու կանգնել ես, սուրբ երկիր է[37] :

34 Տեսնելով տեսի իմ ժողովըրդիս չարչարանքներըն՝ որ Եգիպտոսումն է, և լսեցի նորանց թառանչ քաշելըն՝ և վեր եկի որ նորանց փրկեմ · և հիմիկ եկ քեզ ուղարկեմ Եգիպտոս[38] :

35 Էն Ա՛օսէսին՝ որ նորան ուրացան և ասացին · Ո՞վ քեզ մի կանգնացուց մեզ վերայ իշխան և դատաւոր, հենց նորան Ա՛ստուած իշխան և փրկիչ ուղարկեց էն հրեշտակի ձեռովն՝ որ մօշի մէջն երևեցաւ նորան[39] :

36 Այս հանեց նորանց[40] և նշաններ և հրաշքներ աւաւ Եգիպտացոց երկրումն[41] · և Կարմիր ծովումըն[42], և անապատումն քառասուն տարի[43] :

37 Էս է էն Ա՛օսէսն, որ Իսրայէլի որդոցն ասաց · Ձեր Տէր Ա՛ստուածն մարգարէ վերկրկացնէ ձեզ համար ձեր եղբայրներիցն ինձ նըման[44], նորան լսեցէք[45] :

38 Այս է՝ որ էլաւ ժողովըրդի մէջըն՝ անապատումն[46] հրեշտակին հետ[47], որ նորա հետ Ահնայ սարումըն խօսեց՝ և մեր հարանց հետ · որ կենդանի[48] հրամաններ առաւ՝ որ տայ մեզ[49] :

39 Որ մեր հարքն չկամեցան հընազանդ լինիլ նորան · բայց դէն քցեցին՝ և իրանց սրտերումն դարձան Եգիպտոսի մէջ :

40 Եւ Ա՛հարոնին ասացին · Ա՛եզ համար աստուածներ շինիր, որ մեր առաջին գնան · պատճառն որ՝ էն Ա՛օսէսն՝ որ Եգիպտացոց երկրիցն մեզ հանեց, չենք գիտում ի՞նչ էլաւ նորան[50] :

(32) Նէ · բ · 13 : (33) Գոյ : · ժբ · 14 · Գործ · գ · 7 : (34) Նէ · բ · 15 · 22 : գ · 20 : ժբ · 3 , 4 : (35) Նէ · գ · 2 : (36) Մատթ · իբ · 32 : Ղեբր · ժա · 16 : (37) Նէ · գ · 5 : Հէս · ե · 15 : (38) Նէ · գ · 7 : (39) Նէ · ժգ · 19 : Թուոց · ի · 16 : (40) Նէ · ժբ · 41 : Ղգ · 1 : (41) Նէ · է : ը : թ : ժ : ժա : ժգ : Սամ · աե · 27 : (42) Նէ · ժգ · 21 · 27 , 28 , 29 : (43) Նէ · ժգ · 1 · 35 : (44) Բ Օրէն · ժբ · 15 · 18 : Գործ · գ · 22 : (45) Մատթ · ժէ · 5 : (46) Նէ · ժբ · 3 · 17 : (47) Նայ · կգ · 9 : Գոզ · գ · 19 : Ղեբր · բ · 2 : (48) Նէ · իա · 1 : Բ Օրէն · ե · 27 · 31 : Ղգ · 4 : Յովհ · ա · 17 : (49) Ձոռմ · գ · 2 : (50) Նէ · ղբ · 1 :

41 Եւ էն օրերում մին հօրթ շի-
նեցին , և մատաղ արին կռոքներին , և ուրախանում էին իրանց ձեռների գործքերովը[51] :

42 Աստուած (նորանցից երեսըն) դարձրուց և նորանց մատնեց[52] որ երկնքի զօրութիւնն պաշտեն[53] • ինչպես որ գրված է մարգարէների գիքերում • Ո՞հիմ է մատաղներ և պատարագներ բերիք ինձ քառասուն տարի անապատում , ով Իսրայէլի տուն[54] :

43 Եւ Մողոքայ վրանըն (չոփչըն) առիք , և Ռեմիա աստուծոյ աստղն • էն պատկերքն՝ որ ա-
րիք նորանց երկրպագութիւն տալոյ համար • և ձեզ կըտիոխեմ Խաբելացոց էն կողմն :

44 Ա կայումեան խորանն մեր հա-
րանց հետ ան ապատումն էր • ինչպես հրաման տուաւ Նա՝ որ Մովսէսի հետ խոսումէր , որ Նորան անէ էն օրինակին պէս՝ որ տեսաւ[55] :

45 Որ Նորան էլ մեր հարքն առին բերին Յեսուայ հետ էն ազգերի երկիրն[56] , որ Աստուած դուրս քրցեց մեր հարանց երեսից • մինչև Դաւթի ժամանակն[57] ,

46 Որ նա Աստուծոյ առաջին շէնորհք գտաւ[58] , և խնդրեց՝ որ Յակօբի Աստուծոյ համար բնակարան գտնէ[59] :

47 Սաղոմոնն էլ Նորա համար տուն շինեց[60] •

48 Ոտայց Ամարձեալն ոչ թէ ձեռքով շինած տաճարում է բնակվում բայց ինչպես որ մարգարէն ասումէ[61] •

49 Երկինքն իմ աթոռն է , և երկիրն իմ ոտաց դնելոյ տեղն • ի՞նչպէսի տուն շինեցիք ինձ , ասումէ Տէրն , կամ ի՞նչ տեղ է իմ հանգիստ առնելոյ (տեղ)[62] :

50 Ձէ որ իմ ձեռս արաւ էս ա-
մէնըս :

51 Ոստապարանոցներ[63] և սըր-
տերով և ականջ երով չըթլփատվածներ[64] • դուք միշտ Սուրբ Հոգոյն հակառակ էք կենում • ինչպէս որ ձեր հարքն՝ (էնպէս) էլ դուք :

52 Ո՞ր գարգէրներից հրն (է որ) չըհայածեցին ձեր հարքն[65] • և սպանեցին նորանց՝ որ առաջուց պատմեցին էն Արդարի գալոյն համար , որ դուք հիմիկ նորան մատնիչ և սպանօղ էյաք[66] :

53 Որ դուք օրէնքըն առիք հրեշտակներից հրամանքովն և չըպահեցիք[67] :

54 Եւ երբոր լսումէին էս (բանըրըս) , իրանց սրտերումն շատ սաստիկ բարկանումէին , և ատամներըն կըճրտացնումէին նորա վերայ[68] :

55 Եւ նա լցված էր Սուրբ Հո-

(51) բ Օրէն • թ • 16 : Յեսու • ձգ • 19 : (52) Սաղմ • ճա • 12 : Նէեմ • ի • 25 , 39 : Հոսէ • ա • 24 : բ Թագ • բ • 11 : (53) բ Օրէն • դ • 19 : Ժէ • 3 : գ Թագ • Ժէ • 16 : իա • 3 : Նէեմ • Ժթ • 13 : (54) Ելևս • ե • 25 , 26 : (55) Նէտ • իե • 40 : իգ • 30 : Նէեր • ը • 5 : (56) Հեսու • գ • 14 : (57) Նեհեմ • թ • 24 : Սաղմ • խգ • 2 : հը • 55 : Գործք • Ժգ • 19 : (58) ա Թագ • Ժգ • 1 : բ Թագ • է • 1 : Սաղմ • ճթ • 19 : Գործք • Ժգ • 22 : (59) գ Թագ • ը • 17 : ա Պետ • իբ • 7 : Սաղմ • ճչը • 4 , 5 : (60) գ Թագ • ղ • 1 : ը • 20 : ա Պետ • Ժէ • 12 : բ Պետ • գ • 1 : (61) գ Թագ • ը • 27 : բ Պետ • բ • 6 : ղ • 18 : Գործք • Ժէ • 24 : (62) Եսայ • կղ • 1 , 2 : Պօղ • է • 34 , 35 : իդ • 22 : (63) Նէտ • լբ • 9 : լդ • 3 : Եսայ • խը • 4 : (64) Ղևտ • իգ • 41 : բ Օրէն • Ժ • 16 : Նէեմ • դ • 4 : գ • 10 : թ • 26 : Նէեմ • խգ • 9 : (65) բ Պետ • լդ • 16 : Պօղ • իա • 35 : իգ • 34 • 37 : ա Թագ • բ • 15 : (66) Գործք • գ • 14 : (67) Նէտ • է • 1 : Գալ • գ • 19 : Նէեր • բ • 2 : (68) Գործք • է • 33 :

գով[69] · դէպի երկինքն նայեց՝ և Աստուծոյ փառքըն տեսաւ և Յիսուսին (Հէ)՝ որ կար Աստուծոյ աջ կողմն · և ասաց · Ահա տեսնում եմ երկինքըն բացված[70] , և մարդոյ Որդին՝ որ կայ Աստուծոյ աջ կողմումն[71] :

56 Ա՛նծ ձայնով աղաղակեցին՝ իրանց ականջներըն խփեցին , և ամէնքն առհասարակ վազեցին նորա վերայ :

57 Եւ քաղաքիցն դուրս հանեցին[72] և նորան քարկոծումեին[73] · և վկաներն իրանց շորերըն դնում էին մին երիտասարդ մարդոյ ոտաց մօտ՝ որ Սաւուղ էր կոչվում[74] :

58 Եւ քարկոծումեին Ստեփանոսին՝ որ կանչումէր և ասում[75] · Տէր Յիսուս՝ իմ հոգիս ընդունի[76] :

59 Ծունր դրաւ՝ և բարձր ձայնով աղաղակեց[77] · Տէր՝ էս դորանց համար մեղք մի՛ համարիր[78] · և երբոր էս ասաց , ննջեց · և Յովհոս կամակից էր նորա սպանվելոյն[79] :

ԳԼ · Ը

1 Երուսաղէմի մէջ եղած հալածմունքի պատճառովն Ամարացոց քաղաքումն Եկեղեցի կըհաստատվի , 5 փիլիպպոս սարկաւագի ձեռնովն , որ էն տեղ քարոզելով և հրաշքներ անելով՝ շատերն մկրտել էր որ նորանց հետ Սիմոն կախարդն էլ՝ որ ժողովուրդն յիմարացնումէր , հաւատաց Տէրին , և մկրտվեցաւ : 14 Պետրոսն և Յովհաննէն էն տեղ կրգնան նորանց մօտ Եկեղեցին մեծացնելոյ և զօրացնելոյ համար , և ձեռներըն դնելով նորանց վրայ՝ աղօթք արին որ Սուրբ Հոգին առնեն · 18 Սիմոն էլ կամեցաւ էս իշխանութիւնն փողով առնել նորանցից , 20 պետրոս էլ իրան կեղծաւորութեանն և ագահութեանն համար շատ սաստումէ , և յորդորումէ նորան որ ապաշխարէ , և Յովհաննէսի հետ վկայութիւն տալով և Աստուծոյ բանըն խօսելով դարձ կանէն Երուսաղէմ · 26 Տէրի հրեշտակն փիլիպպոսին կուղարկէ որ գնայ կէթօպացի (հապաշ) նեռքինոյն (խառըմ) քարոզէ և նորան մկրտէ :

1 Ա՛ւ էն օրերումն մեծ հալածմունք էլաւ Երուսաղէմումն եկեղեցոյն վերայ · և ամէնքն ցրվեցան Հրէաստանի գիւղերին մէջ և Սամարիայի մէջ[1] , առաքեալներից ջոկ (սաւէյէ) :

2 Եւ Աստուածավախ մարդիք Ստեփաննոսին վերառին՝ և մեծ սուգ արին նորա վերայ[2] :

3 Նայց Սօղոս ջնաս էր տալիս եկեղեցւոյն · և տանից տուն էր մանում , և մարդկանց և կանանց քաշումէր՝ և մատնումէր բանտի (զընդան) մէջ[3] :

4 Եւ ցրվածներն ման էին գալիս՝ և (Աստուծոյ) խօսքն աւետարանումէին[4] :

5 Նայց փիլիպպոս[5] վէր եկաւ

(69) Գործ · ը · 5 : (70) Ղեւ · ա · 1 : Ասիր · գ · 18 : Գործ · ժ · 11 : (71) Գան · է · 13 : (72) գ Մակ · իա · 13 : Ղ–է · գ · 29 : Երբ · ժգ · 12 : (73) Ղ–ա · իգ · 16 : (74) բ Օրէն · ժգ · 9 , 10 : ժէ · 7 : Ա–ար · 59 : Գործ · իբ · 20 : (75) Գործ · ի · 14 : (76) Սամ · յա · 5 : Ղ–է · իգ · 46 : (77) Գործ · ի · 40 : ի 3 36 : իա · 5 : (78) Ասիր · է · 44 : Ղ–է · ը · 28 : իգ · 34 : (79) Ա–էր · 57 · Գործ · իբ · 20 : (1) Գործ · ժա · 19 : (2) Ծննդ · իգ · 2 · ծ · 10 : բ Մակ · գ · 31 : (3) Գործ · է · 57 : ի · 1 · 13 · 21 : իբ · 4 : իգ · 10 , 11 : ա Կորնթ · ժէ · 9 : Գալ · ա · 13 : Փիլպ · գ · 6 : ա Տիմ · ա · 13 : (4) Ասիր · ժ · 23 : Գործ · ժա · 19 : (5) Գործ · ը · 5 :

Սամարացոց քաղաքն՝ և Քրիստոսին քարոզումէր նորանց ։

6 Ժողովուրդներն միաբան ականջ էին դնում փիլիպպոսի խօսքերին , երբոր նորանք լսումէին և տեսնում էն նշանները , որ անում էր ։

7 Պատճառն որ՝ շատերն որ պիղծ դևեր ունէին՝ մեծ ձայնով աղաղակումէին , և դուրս էին գալիս[6] ։

8 Եւ շատ անդամալուծներ և կաղեր բժշկվումէին ։

9 Եւ շատ ուրախութիւն էլաւ էն քաղաքումն ։ Մին Սիմոն անուն մարդ՝ առաջուց էն քաղաքումն էր • կախարդ էր , և Սամարացոց ազգըն յիմարացնումէր[7] • իրան անձին համար ասելով՝ թէ մին մեծ բան է[8] ։

10 Որ փոքրներից մինչև մեծերն ամէնքն նորան էին նայում , և ասումէին • (թէ) Սա է Աստուծոյ զօրութիւնն՝ որ մեծ է կոչվում[9] ։

11 Ի՝տիկ էին տալիս նորան • ինչու որ՝ շատ ժամանակ կախարդութիւններով յիմարացրել էր նորանց ։

12 Նայց երբոր հաւատացին փիլիպպոսին , որ Աստուծոյ արքայութեանն համար էր աւետարանում[10] , և Յիսուսի Քրիստոսի անունին համար , ամէնքն (էլ) մկըրտվումէին (թէ) մարդիքն և (թէ) կանայքն ։

13 Եւ Սիմոն ինքն էլ հաւատաց , և երբոր մկրտվեցաւ՝ միշտ փիլիպպոսին հետ էր • և երբոր տեսնումէր էն նշաններն և մեծ մեծ զօրութիւնները՝ որ լինումէին , զարմանումէր ։

14 Երբոր առաքեալքն՝ որ Երուսաղէմումն էին՝ լսեցին , թէ Սամարիայի մէջն էլ Աստուծոյ խօսքըն ընդունեցին , Պետրոսին և Յովհաննէսին ուղարկեցին նորանց մօտ ։

15 Որ նորանք վեր եկին և աղօթք արին նորանց վերայ , որ Սուրբ Հոգին առնեն[10] ։

16 Ինչու որ՝ մինչև էն ժամանակն դեռ իսկի նորանցից մընին վերայ (Սուրբ Հոգին) չէր հասել[11] • բայց Ջնակ Տէր Յիսուսի անունովն[12] մկրտված էին[13] ։

17 Ն ժամանակն ձեռներըն դրին նորանց վերայ՝ և (նորանք) Սուրբ Հոգին առնումէին[14] ։

18 Սիմոնն երբոր տեսաւ՝ թէ առաքեալների ձեռն վերադնելովն՝ Սուրբ Հոգին տրվումէ , փող բերաւ նորանց՝ և ասաց ։

19 Ինձ էլ տուէք էս իշխանութիւնս , որ ում վերայ ձեռք դընեմ՝ Սուրբ Հոգին առնէ ։

20 Եւ Պետրոսն նորան ասաց • Քո արծաթդ թող քեզ հետ կորչի • պատճառն որ՝ դու կարծեցիր , որ Աստուծոյ պարգևներըն[15] փողով կառնես[16] ։

21 Դու բաժին և վիճակ չունիս էդ բանումդ • պատճառն որ՝ քո սիրտդ շիտակ չէ Աստուծոյ առաջին ։

22 Պաշխարիր դու քո էդ չարութենիցդ՝ և Տէրին աղաչիր , որ լինի թէ թողութիւն լինի քեզ քո սրտի գէշ խորհուրդներիցն[17] ։

23 Ինչու որ՝ տեսնումեմ քեզ՝ որ մաղձի դառնութենումն և անիրաւութեան կապանքներումն ես[18] ։

24 Սիմոնն պատասխան տուաւ և ասաց • Դուք ինձ համար աղաչանք արէք Տէրին[19] , որ ինձ վե-

(6) Մարկ • ժգ • 17 ։ (7) Գործ • ժդ • 6 ։ (8) Գործ • Լ • 36 ։ (9) Գործ • ա • 3 ։ (10) Գործ • բ • 38 ։ (11) Գործ • ժԲ • 2 ։ (12) Գործ • ժ • 48 ։ ԺԹ • 5 ։ (13) Մարկ • ԽԸ • 19 ։ Գործ • բ • 38 ։ (14) Գործ • Ղ • 6 ։ ԺԹ • 6 ։ Եբր • գ • 2 ։ (15) Գործ • բ • 38 ։ Ժ • 45 ։ Ժա • 17 ։ (16) Մարկ • ժ • 8 ։ գ Թագ • ե • 16 ։ (17) Գաղ • դ • 27 ։ բ Տիմ • բ • 25 ։ (18) Եբր • ժբ • 15 ։ (19) Ծննդ • ի • 7 • 17 ։ Ելք • ը • 8 ։ Թագ • իա • 7 ։ գ Թագ • ժգ • 6 ։ Յոբ • խը • 8 ։ Յակ • Ե • 16 ։

րայ մին քան զըզայ նորանցից , որ դուք ասացիք ։

25 Եւ նորանք վկայութիւն տալով՝ Խստուծոյ բանըն խօսեցին , և դարձան Երուսաղէմ · և Սամարացոց շատ գիւղերի մէջն աւետարանուէին ։

26 Տէրի հրեշտակն խօսեց Փիլիպպոսին հետ՝ և ասաց · Վե՛ր կաց դու և գնա՛ հարաւային կողմըն՝ էն ճանապարհովն , որ Երուսաղէմիցն վեր է գալիս Գազայ , որ է անապատ ։

27 Եւ վերկացաւ գնաց · և ահա մին Եթովպացի (հոգով) մարդ[20] , Եթովպացոց Կանդակ թագուհոյ ներքինի (խոջա՛) և իշխան · որ նորա ամէն գանձին (խազնայէն) վերայ էր · որ եկել էր Երուսաղէմ երկրպագու լինելոյ[21] ։

28 Եւ էնտեղիցն յետ էր դառնում · և իրան կառքումն (արաբա՛յով) նստած , Եսայեայ մարգարէութիւնըն կարդումէր ։

29 Սուրբ Հոգին Փիլիպպոսին ասաց · Մօտեցիր և հասիր էդ կառքիդ (արաբայիդ) ։

30 Եւ Փիլիպպոսն առաջ վազեց՝ և լսումէր որ Եսայեայ մարգարէութիւնըն կարդումէր , և ասաց · Գիտումե՞ս էդ որ դու կարդումես ։

31 Նա էլ ասաց՝ Ինչպէս կըկարենամ , թէ որ մինն չառաջնորդէ ինձ · և Փիլիպպոսին աղաչեց՝ որ վերկըլի նստի նորա հետ ։

32 Եւ գրի գլուխն՝ որ կարդումէր՝ էս էր · Ինչպէս ոչխար վարվեցաւ սպանվելոյ (տեղն) · և ինչպէս գառն իրան խուզողի առաջին լուռ կացած՝ էնպէս չի բանում իրան բերանըն[22] ։

33 Նորա խոնարհութենումն նորա դատաստանն վերկալվաւ , նորա ցեղըն ով պիտի պատմէ · ինչու որ նորա կեանքն երկրիցս վեր է առնըվում ։

34 Ներքինին պատասխան տուաւ Փիլիպպոսին՝ և ասաց · Աղաչում քեզ՝ մարգարէն էս ում համար է ասում · իրա՞ն համար , թէ մին ուրիշի համար ։

35 Փիլիպպոսն իրան բերանն բաց արաւ , և էս գրքիցս սկսած՝ Յիսուս Քրիստոսն աւետարանեց նորան[23] ։

36 Երբոր ճանապարհումն գնում էին , եկին մին ջրի մօտ · և ներքինին ասաց · Նէ՛ ջուր՝ ինչ կարգելէ ինձ՝ որ մկրտվիմ[24] ։

37 Եւ Նորան ասաց · Եթէ որ քո բոլոր սրտովդ հաւատում ես , կարելի է[25] · Նա պատասխան տուաւ և ասաց · Հաւատումեմ՝ թէ Յիսուս Քրիստոս Խստուծոյ Որդին է[26] ։

38 Եւ հրաման տուաւ , որ կառքըն կանգնացնեն · և երկուսն (էլ) վեր եկին ջուրն՝ Փիլիպպոսն և ներքինին , և մկրտեց Նորան ։

39 Եւ երբոր էն ջրիցն դուրս եկին , Սուրբ Հոգին եկաւ ներքինոյն վերայ[27] · և Տէրի հրեշտակն Փիլիպպոսին յափշտակեց , և ներքինին էլ չըտեսաւ Նորան · և ուրախութենով գնումէր իրան ճանապարհն ։

40 Բայց Փիլիպպոսն Ազոտոսումն գտավ · և մանէր գալիս և աւետարանումէր՝ մինչև որ եկաւ Կեսարիա ։

(20) Գործ · գ · 10 ։ (21) Հովէ · ժբ · 20 ։ (22) Դատ · ծգ · 7 , 8 ։ (23) Դատ · իգ · 27 ։ Գործ · ժբ · 28 ։ (24) Գործ · ժ · 47 ։ (25) Մատթ · իբ · 19 ։ Մարկ · ժգ · 16 ։ (26) Մատթ · ժգ · 16 ։ Հովէ · գ · 70 · թ , 35 · 38 ։ ժա · 27 ։ Գործ · թ · 20 ։ ա Հովէ · գ · 15 ։ ե · 5 · 13 ։ (27) գ Թագ · ժբ · 12 ։ գ Թագ · բ · 16 ։ Նէեմ · գ · 12 · 14 ։

ԳԼ · Թ

1 Աւուրց Դամասկոս գնալոյ Ճանապարհումն , և Էրկրնկի գետին , 10 Ել առաքեալ լինելոյ կընտրելն , 18 Ել Ընանիայիցն կրմկրտվի , 20 Ինքն էլ վերկենալով շուտով Հիսուսին կըքարոզե : 23 Հրեաներն խորհուրդ կանեն՝ որ Նորան սպանեն , 29 Ել Հնու- նց հետ էլ խօսումէր՝ և Նորանք էլ խորհուրդ կանեն , որ սպանեն Նորան , բայց Նա էս ամէնից էլ կաղատվի : 31 Եկեղեցին խաղաղութիւն , Պետրոսի անդամալուծ Ենային բժշկելն , 36 Ել Տաբիթային յարութիւն առնել տալն :

1 Բայց Սողոմն՝ որ դեռ լցված է ահ ու վախ տալովն , և Տէրի ա- շակերտներըն սպանելոյ մտքովն , քահանայապետներին մօտ եկաւ[1] :

2 Եւ նորանցից թղթեր խընդ- րեց Դամասկոսի ժողովարաններին վերայ • որ եթէ միևն գանէ էն ճանապարհին հետևող՝ մարդիք կամ կանայք , նորանց կապած բերէ Ե- րուսաղէմ :

3 Եւ երբոր գնումէր նա , մօ- տեցաւ Դամասկոսին[2] , և յանկար- ծակի նորա չորս կողմնէն լոյս փայ- լեց երկնքիցն :

4 Եւ վերընկաւ գետնին և ձայն լսեց՝ որ ասումէր նորան , Սաւուղ Սաւուղ՝ ինչո՞ւ ես ինձ հալածումէ[3] :

5 Եւ (նա) ասաց • (Դու) ո՞վ ես Տէր • և Նա ասաց • Ես եմ Հիսուսն՝ որ դու հալածումես • դժուար է քեզ՝ խթանին (Քըլէն) քացի տալ[4] :

6 Եւ խիստ վախով բունըված և ապուշ մնացած ասաց • Տէր՝ ինձ ի՞նչ ես կամենում որ ես անեմ[5] :

7 Եւ Տէրն ասաց Նորան • Կանգ- նիր և մտիր էդ քաղաքդ , և կը- պատմվի քեզ՝ թէ ինչ պէտք է քեզ՝ որ անես • բայց էն մարդիքն՝ որ Նորա հետ գնումէին , ապուշ կանգնած էին[6] • մինակ ձայնըն լը- սումէին , բայց իսկի մին բան չէ- ին տեսնում :

8 Սողոսն վերկացաւ գետնիցն , և բաց աչքով իսկի մընին չէր տեսնում • Նորա ձեռիցն բռնած մըտ- ցրին Դամասկոս :

9 Եւ էնտեղ էր երեք օր՝ և չէր տեսնում • և ոչ կերաւ և ոչ խմեց :

10 Եւ Դամասկոսումն մին աշա- կերտ կար Ընանիա անուն[7] , որ Տէրն տեսիլքի մէջն Նորան ասաց • Ընանիա , և Նա ասաց • Ըստեղ եմ Տէր :

31 Եւ նորանք ասացին. Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին և կապրիս դու՝ և քո ամէն տունդ[26]։
32 Եւ Տէրի բանըն խօսեցին նորան՝ և էն ամէնին, որ նորա տունըն կային։
33 Եւ նորանց վեր արաւ գիշերի էն ժամուն (ասհալնուն) էն խոցե՛լից լուացաւ. և չուտով մըկըրտվեցաւ ինքն՝ և նորա ամէն ընտանիքն։
34 Եւ նորանց տարաւ իրան տունըն, նորանց առաջին սեղան դըրաւ. և ուրախ էլաւ ամէն ընտանի՝ հաւատացով՝ որ Աստուծոյն հաւատաց[27]։
35 Եւ երբոր լուսացաւ, զօրագլխաներն ուղարկեցին տիվանի պաշտօնեաներին՝ և ասացին. Լրա՛ա՛ կէր էդ մարդկանցդ։
36 Եւ բանտապետն էն խօսքերըն Պողոսին պատմեց թէ զօրագլխաներն ուղարկեցին՝ որ արձակվիք. ուրեմն դուրս եկէք, և գնացէ՛ք խաղաղութեամբ։
37 Բայց Պողոսն ասաց նորանց. Էմէնի առաջին ծեծեցին մեզ՝ որ անմեղ Հռոմայեցի մարդիք ենք, և բանտի մէջ քցեցին[28]. և հիմիկ մեզ թաքուն են հանում. էդպես չէ, բայց թող հենց իրանք գան մեզ հանեն։
38 Եւ տիվանի պաշտօնեաներն էն խօսքերըն զօրագլխաներին պատմեցին. շատ վախեցան՝ երբոր լսեցին թէ Հռոմայեցիք են. և եկին աղաչեցին նորանց։
39 Եւ երբոր հանեցին, աղաչում էին՝ որ էն քաղաքիցն գնան[29]։
40 Եւ բանտիցն դուրս եկին՝ մտին Լիդիային մօտ[30]. և եղբայրներին որ տեսին՝ նորանց մխիթարեցին և գնացին։

ԳԼ · ԺԷ

1 Պողոս Թեսաղոնիկէի մէջն կըբարոզէ, 5 Որ էն տեղ մին քանիսն կըհաւատան և մին քանիսն նորան կըհալածեն։ 10 Եղբարներն Պողոսին և Հիլային Բերիա կուղարկեն, և էնտեղ կըբարոզեն, 13 Եւ Թեսաղոնիկեցիներից հալածվելով, 15 Պողոս Աթենքն կըգնայ. էն տեղ վիճաբանութիւն կանէ և նորանց չըճանաչած Աստուածն կըբարոզէ, 34 Սրանով շատ մարդիք Քրիստոսի կըդառնան։

1 Եւ Ամփիպօլիսի և Ապողոնիայի մէջն անցկալով՝ եկին Թեսաղոնիկէ, որ էնտեղ Հրէաների ժողովարան կար։
2 Եւ Պողոսն (իրան) սովորութեանն պէս մտաւ նորանց մօտ և երեք շաբաթ (օրերումն) նորանց հետ խօսեց գրքերից[1]։
3 Բացէ՛ր անում՝ և առաջի դնում՝ թէ պէտք էր՝ որ Քրիստոսն չարչարվի՝ և մեռելների միջից յարութիւն առնէ[2]. և թէ՝ նա էն Յիսուս Քրիստոսն է, որ ես պատմում եմ ձեզ։
4 Եւ նորանցից մին քանիսն հաւան կացան[3], և Պողոսի և Հի-

(25) Լուկ · գ · 10 · Գործ · բ · 37 · թ · 6 · (26) Յովհ · գ · 16 · 36 · չ · 47 · ա Յովհ · ե · 10 · (27) Լուկ · ե · 29 · ԺԹ · 6 · (28) Գործ · խբ · 25 · (29) Մատթ · ը · 34 · (30) Ղէր · 14 · (1) Լուկ · դ · 16 · Գործ · թ · 20 · ԺԷ · 5 · 14 · ԺԸ · 1 · ԺՀ · 13 · ԺԹ · 8 · (2) Լուկ · խդ · 26 · 46 · Գործ · ԺԸ · 28 · Գործ · գ · 1 · (3) Գործ · խը · 24 ·

զայի[4] հետ միաւորվեցան · բայց աստուածապաշտ Հեթհանոսների շատ բազմութիւն կար և գլխաւոր կանայիցն էլ քիչ չէ ։

5 Եւ Հրէաներն նախանձվեցան, և մի քանի ոմիկ անօրէն մարդիք առին՝ ամբոխ (խումբ) արին, քաղաքի մէջն շփոթութիւն հնեցին · և Յասոնի տան մօտ հասնելով՝ ուզում էին, որ նորանց տանեն դատաստանատունն[5] ։

6 Եւ երբոր չգտին նորանց՝ Յասոնին և մի քանի եղբայրներին քաշում էին քաղաքապետների մօտ · և սաստիկ աղաղակում էին՝ թէ սորանք՝ որ աշխարհքը շփոթացրին, էստեղ էլ հասին[6] ։

7 Որ Յասոնն ընդունել է նորանց · և սորանք ամէնքն կայսերի հրամաններին հակառակ են գործում · որ մի Յիսուս թագաւոր ին ասում[7] ։

8 Եւ շփոթացրին ժողովուրդն և քաղաքապետներին՝ որ էս լսում էին ։

9 Եւ Յասոնից և ուրիշներից երաշխաւորութիւն (պատիժ) առին՝ և նորանց արձակեցին ։

10 Հայց եղբայրներին Պօղոսին և Շիլային շուտով գիշերում ճանապարհ քցեցին դէպի Հերիա · որ նորանք երբոր էնտեղ հասին, գընացին Հրէաների ժողովարանն[8] ։

11 Հնչու որ՝ սորանք աւելի ազնիւ անձինք էին՝ քան նորանք՝ որ Թեսաղոնիկէում էին · որ (Հաստուծոյ) խօսքն ամէն յօժարութեամբ ընդունեցին · միշտ գրքերն քննում էին, թէ էս (բանս) էսպէս լինի[9] ։

12 Եւ նորանցից շատերն հաւատացին · և Հոյն պարկեշտ կանանցից և մարդկանցից էլ քիչ չէ ։

13 Հայց էն Հրէաներն՝ որ Թեսաղոնիկէում էին, երբոր գիտացին՝ թէ Հերիայի մէջն էլ Հաստուծոյ խօսքն պատմվեցաւ Պօղոսիցն, էնտեղ էլ եկին՝ որ ժողովուրդները շարժեն և շփոթացնեն ։

14 Հյն ժամանակն եղբարներն Պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ մինչև ծովի եզրն գնայ[10] · և Շիլան և Տիմոթէոսն էնտեղ մնացին ։

15 Եւ նորանք՝ որ Պօղոսին տանում էին, նորան մինչև Հթենքն տարան · և որ պատուէր առին նորանից Շիլային և Տիմոթէոսին համար[11], որ շուտով գան նորա մօտ · գնացին ։

16 Եւ Պօղոսն երբոր Հթենքում ընդ նորանց սպասում էր, նորա հոգին սաստիկ դժուարանում էր նրա ներսումն · ինչու որ՝ էն քաղաքըն կռապաշտութեան մէջ էր տեսնում[12] ։

17 Եւ ժողովարանում Հրէաներին հետ և աստուածապաշտներին հետ խօսում՝ և փողոցներում ամէնօր նորանց հետ՝ որ պատահում էին ։

18 Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներից մին քանիսն նորա հետ հակառակում էին · և մին քանիսն ասում էին · Հյս (դատարկաբոս) սերմ քաղօղս ի՞նչ է կամենում խօսիլ · բայց ուրիշներն էլ (ասում էին) թէ Երևում է, որ մին օտար դևքի հաւար պատմում է · պատճառն որ՝ Հիսուսին և յարութիւնն էր աւետարանում[13] ։

19 Եւ առին տարան նորան Հրիսպագոսն՝ և ասում էին · կարճ ենք իմանալ՝ թէ ի՞նչ է էդ նոր վար-

(4) Գործ · ԺԸ · 22 · 27 · 32 · 40 ։ (5) Հովէլ · ԺԶ · 21 ։ (6) Գործ · ԺԶ · 20 ։ (7) Ղուկ · Իգ · 2 ։ Յովհ · ԺԹ · 12 ։ ա Պետր · բ · 15 ։ (8) Գործ · Ք · 25 ։ Պետր · 14 ։ (9) Նոյ · ՀԸ · 16 ։ Ղուկ · ԺԶ · 29 ։ Յովհ · ե · 39 ։ (10) Մատթ · Ժ · 23 ։ (11) Գործ · ԺԶ · 5 ։ (12) բ Պետր · բ · 8 ։

դապետութիւնդ՝ որ դու պատմուես ։

20 Ո՛չ նոր օտար բան ես բերում մեր ականջներին . կամենում ենք իմանալ՝ թէ ես ի՛նչ բան պիտի լինի ։

21 Ասէին որ՝ ամէն Աթենացիք՝ և հիւսեղ եկած օտարներն՝ էլ ուրիշ բանի չէին հետևում , բայց միայն որ նոր բան ասեն կամ լսեն ։

22 Պօղոս կանգնեց Արիսպագի միջն՝ և ասաց . Ով Աթենացի մարդիք , ես ձեզ ամէն կողմանէ կրօնասէր եմ տեսնում .

23 Պատճառն որ՝ ես ման եկի և ձեր պաշտամունքներն տեսի մի սեղան՝ գտի՝ որ նորա վերայ գրած էր ԱՆԱՆՈՒՆՈՑ ԱՍՏՈՒԱԾՈՅՆ . են որ դուք առանց ճանաչելոյ էք պաշտում , հենց էն ես եմ պատմում ձեզ ։

24 Աստուած՝ որ էս աշխարհքըս և ամէն բան՝ որ նորանում կայ[13] արար , նա երկնքի և երկրիս Տէրն է[14] . նա ձեռքով շինած տաճարների միջն չի բնակվում[15] .

25 Եւ մարդկաց ձեռքով չի պաշտվում՝ իբրեթ մի բանի կարօտ լինի[16] . նա ամէնին կեանք և շունչ՝ և ամէն բան տալիս է[17] ։

26 Նա մի արիւնից մարդկանց ամէն ազգերըն արաւ՝ որ երկրի երեսին բնակվին . կարգած ժամանակներ և սահմաններ հաստատեց նորանց բնակութեան համար[18] որ Աստուծոյն խնդրեն[19] .

27 Որ լինի թէ քննեն նորան և գտնեն . և ինքն հեռու չէ հենց մեր ամէն մէկիցս[20] ։

28 Ինչու որ՝ մենք նորանով ենք ապրում և շարժվում՝ և կանք[21] . ինչպէս որ ձեր իմաստուններիցն միք քանիսն էլ ասացին թէ (Ո՛նք) հենց նորա ազգիցն էլ ենք[22] ։

29 Եւ հիմիկ՝ որովհետև Աստուծոյ ազգիցն ենք պէտք չէ՝ որ մենք համարինք՝ թէ Աստուածութիւնն նման լինի ոսկոյ՝ կամ արծաթի կամ քարի , որ մարդոյ վարպետութենով և մտքով փորված շինած է[23] ։

30 Ուստի Աստուած՝ որ անգիտութեան ժամանակներըն անտես արաւ[24] հիմիկ մարդկանց էս է պատուիրում որ ամէն մէկն ապաշխարէ[25] ։

31 Պատճառն որ՝ (մին) օր հաստատեց՝ որ նորանում արդարութենով աշխարհքըս պիտի դատէ էն մարդոյ ձեռովն՝ որ սահմանեց նորանով ամէնին հաւատք տալ[26] որ նորան մեռելների միջից յարոյց[27] ։

32 Երբոր լսեցին մեռելների յարութիւն առնելըն , մին քանիսն ծաղր էին անում . կէսերն ասում էին՝ Լսդ քանիդ (համար) քեզանից մինել պիտի լսենք ։

33 Եւ յետոյ Պօղոսն նորանց միջից դուրս եկաւ գնաց ։

34 Եւ մին քանի մարդիք նորա կողմն ընկան , և հաւատացին . որ նորանց հետն էր Դիոնէսիոս Արիսպագացին , և մին Դամարիս անուն կին՝ և ուրիշներ էլ նորանց հետ ։

(13) Գործ . ժդ . 14 ։ (14) Մատթ . ժա . 25 ։ (15) Գործ . է . 48 ։ (16) Սաղմ . ծ . 10—13 ։ (17) Ընննդ . բ . 7 ։ Յոբ . ժզ . 22 ։ Հոբ . ժբ . 10 ։ իէ . 3 ։ լդ . 4 ։ Նաայ . խբ . 5 ։ ծէ . 18 ։ Ովսէ . ժբ . 1 ։ (18) բ Օրէն . լբ . 8 ։ (19) Ածով . ա . 20 ։ (20) Գործ . ժգ . 16 ։ (21) Կող . ա . 17 ։ Երբ . ա . 3 ։ (22) Տիտ . ա . 12 ։ (23) Նաայ . խ . 18 ։ (24) Գործ . ժդ . 15 ։ Ածով . դ . 25 ։ (25) Ղուկ . իդ . 47 ։ Տիտ . բ . 11 , 12 ։ ա Պետր . ա . 14 ։ դ . 3 ։ (26) Գործ . ժ . 42 ։ Ածով . բ . 16 ։ ժդ . 10 ։ (27) Գործ . բ . 24 ։

ԳԼ · ԺՐ

3 Պօղոս իբան արուեստն կանէ , և Կորնթոսումն Հրէաներին և Հեթանոսներին ամէն շաբաթ օր կը խօսէ : 9 Տէրն տեսիլքեամբ Պօղոսին կը զօրացնէ : 12 Կալղիոս փոխանակ բռնելի առաջին նորա համար զգպրտութիւն կանէ , բայց նա նորանց էն դատաստանին դուրս կը հրանէ : 18 Պօղոս քաղաքէց քաղաք ման գալով աշակերտներըն կ՚հաստատէ : 24 Ապղեան Եկիւղայից և Պրիսկիղայից աւելի Յստուծոյ ճանապարհն սովորնալով 28 Հատ զօրութեամբ Յրիստոսին կը քարոզէ :

1 Ա՛յնէնից ետև Պօղոսն էն Ա-թենացիներիցն հեռացաւ՝ եկաւ Կո-րընթոս :

2 Եւ մին Հրէայ գտաւ Պոնտա-ցոց ազգիցն՝ Ակիւղաս անուն[1] որ Իտալիայիցն նոր եկել էր , և նորա Պրիսկիղա կինն էլ , Կղօդիայի հը-րամանին համար՝ որ ամէ Հրէա-ներն Հռօմիցն դուրս գնան . և նո-րանց մօտ մտաւ :

3 Եւ որովհետև հենց մին ար-ուեստիցն էր (նորանց հետ) մնաց նորանց մօտ՝ և բան էր անում . պատճառն որ՝ արուեստով խորա-նակար (չոփըը կոլօղ) էին[2] :

4 Եւ ժողովարանի մէջն ամէն շաբաթ օր խօսում էր և Հրէա-ներին և Հելեանոսներին հաւա-նացնում[3] :

5 Երբոր Հ՚իղան և Տիմոթէոսն վերեկին Մակեդոնիայիցն[4] Պօղոս հոգովն վառվում էր՝ որ վկայու թիւն դնէ Հրէաներին՝ թէ Յիսուս է Քրիստոսն[5] :

6 Եւ երբոր նորանք ներհակ է-ին դառնում և հայհոյում[6] , շոր-բրն թաւի տուաւ՝ և նորանց ասաց[7] . Ձեր արիւնն ձեր գլխներիդ վե-րայ (լինի)[8] , ես անպարտ եմ[9] . հիմիկուց ետև Հեթանոսների մօտն եմ գնում[10] :

7 Եւ էնտեղից գնաց մտաւ մըն-ի տունն՝ որ նորա անունն Տիտոս Յուստոս էր , մին Աստուածապաշտ մարդ որ նորա տունն ժողովարա-նի մօտ էր :

8 Կ իսպոս ժողովրդապետն ի-րան ամէն տանովն հաւատաց Տէ-րին . և Կորնթացոց շատերն երբ-որ լսեցին՝ հաւատացին և մկրտ-վեցան[11] :

9 Եւ Տէրն գիշերուայ տեսիլքով Պօղոսին ասաց . Մի՛ վախենար՝ բայց խօսիր՝ և լուռ մի՛ կենար[12] :

10 Ինչու որ՝ ես քեզ հետ եմ , և ոչ ով քեզ ներհակ չի դառ-նալ՝ որ քեզ չարչարէ . պատճառն որ ես շատ ժողովուրդ ունիմ էս քաղաքումս[13] :

11 Եւ էնտեղ մին տարի և վեց ամիս նստեց՝ և նորանց Աստուծոյ խօսքըն սովորցնում էր :

12 Գալեթոյ Կալղիոս փոխանակ բռնելի ժամանակումն Հրէաներն միաբան վերկացան Պօղոսին վերայ , և նորան քաշեցին դատաստան .

13 Եւ ասում էին , թէ Այս մարդ-կանց խաբում՝ որ օրինաց հակա-ռակ Աստուած պաշտեն :

14 Եւ երբոր Պօղոսն մօտ էր որ

(1) Հռոմ · ժգ · 3 : ա Կորնթ · ժգ · 19 բ Տիմ · գ · 19 : (2) Գործ · ի · 34 : ա Կորնթ · գ · 12 : ա Թես · բ · 9 : բ Թես · գ · 8 : (3) Գործ · ժէ · 2 : (4) Գործ · ժէ · 14 , 15 : (5) Հոբ · լբ · 18 : Գործ · ժէ · 3 : Ա՚այր · 28 : (6) Գործ · ժգ · 45 : ա Պետր · գ · 4 : (7) Նեհեմ · է · 13 : Մատթ · ժ · 14 : Գործ · ժգ · 51 : (8) Ղեւտ · ի · 9 · 11 , 12 : բ Թագ · ա · 16 : Նվեհ · ժը · 13 · լգ · 4 : (9) Նվեհ · գ · 18 , 19 : լգ · 9 : Գործ · ի · 26 : (10) Գործ · ժգ · 46 : Իսա · 28 : (11) ա Կորնթ · ա · 14 : (12) Գործ · իգ · 11 : (13) Նեհեմ · ա · 18 , 19 : Մատթ · իբ · 20 :

իրան բերանէն բանայ , Պաւղիոնն Հրեաներին ասաց • Ով Հրեաներ , թէ որ մին անիրաւութիւն կամ մին չար նենգութիւն լինէր , ինձ արժան էր որ լսէի[14] ։

15 Ասոր թէ որ ձեր օրէնքին և խօսքի և անուններուն համար խնդիրք կան , դուք ինքն տեսէք • ինչու որ՝ էգպէսի բաներուն դատաւոր չեմ կամենում լինիլ ։

16 Եւ նորանց էն դատաստանէրցն դուրս հանեց ։

17 Եւ ամէն Հոյնքն Սոսթենէս ժողովրդապետին բռնեցին՝ և տիվանի առաջին ծեծուէին[15] • և Պաւղիոնն նորա համար ոչ ինչ հոգս չունէր ։

18 Ասոյց Պօղոս դեռ շատ օրեր մնալուցն ետև , եղբարներէրցն հրաժարեց , և նաւով գնում էր դէպի Ասորէքն • և Պրիսկիլան և Ակիւղան նորա հետ , Կենքրեայումն[16] գլխէքն խուզեց[17] • ինչու որ ուխտ դրած էր ։

19 Եւ երբոր հասին Եփեսոս , նորանց էնտեղ թողեց , և ինքն մտաւ ժողովարանն՝ և Հրեաներին հետ խօսում էր ։

20 Եւ աղաչում էին նորան՝ որ շատ ժամանակ էնտեղ մնայ , և չլսեց ։

21 Ասոյց նորանցից հրաժարեց և ասաց • Պատուիրոյ կալքուին միտել ձեզ մտ յետ կրկնանամ[18] • Եւ փեսոսիցն վերկացաւ ։

22 Եւ վերկու Կեսարիա , վերկաւ՝ և ողջոյն տուաւ եկեղեցոյն • վերկու Անտիոք ։

23 Եւ էնտեղ որ մին ժամանակ մնաց , դուրս եկաւ՝ որ Գաղատացոց աշխարհըումն և Փռիգիայի մէջն կարգով մանկայ[19] , ամէն աշակերտ երքն հաստատելով[20] ։

24 Ի՛ն Հպեղէս անուն Հրեայ[21] ազգով Հղեքսանդրացի , ճարտար խօսող մարդ՝ եկաւ Հասաւ Եփեսոս • նա գրքերուն զօրաւոր էր ։

25 Սա Տէրի ճանապարհին տեղակացած էր , հոգով վառում էր[22] • Հիսուսին համար խօսում՝ և ճշմարտութենով սովորցնում էր • և (ինք՝) մկնակ Հօհաննէսի մկրտութիւնն էր գիտում[23] ։

26 Սա սկսեց ժողովարանի մէջն համարձակ խօսիլ • և երբոր Ակիւղան և Պրիսկիլան նորանից լսեցին , նորան իրանց մտ առին , և էլ աւելի ճշմարտութենով Աստուծոյ ճանապարհըն պատմեցին նորան ։

27 Երբոր նա կամենաւ գնալ Աքայիա , եղբարներն յօժար էլան և գրեցին աշակերտներին՝ որ նորան ընդունեն • երբոր նա էնտեղ հասաւ , հաւատացեալներին շատ օգնութիւն էր տալիս շնորհքի միջոցով[24] ։

28 Ինչու որ՝ խիստ պնդութենով յանդիմանում էր Հրեաներին ամէնի առաջին • գրքին ցոյց տալով՝ թէ Հիսուս է Քրիստոսն[25] ։

(14) Գործ • իգ • 29 • իե • 11 • 19 ։ (15) ա Կորնթ • ա • 1 ։ (16) Հռոմ • ժգ • 1 ։ (17) Թիմոթ • գ • 18 • Գործ • իա • 24 ։ (18) ա Կորնթ • գ • 19 • Երբ • գ • 3 • Յով • գ • 15 ։ (19) Գաղ • ա • 2 • գ • 14 ։ (20) Գործ • ժգ • 21 • ժե • 32 • 41 ։ (21) ա Կորնթ • ա • 12 • գ • 5 , 6 • գ • 6 • Տիտ • գ • 13 ։ (22) Հռոմ • ժբ • 11 ։ (23) Գործ • ժի • 3 ։ (24) ա Կորնթ • գ • 6 ։ (25) Գործ • ի • 22 • ժե • 3 • Աւրիա • 5 ։

ԴԱ · ԺԱԹ

6 Պօղոսի ձեռով Սուրբ Հոգոյ դալն միլուածներին վերայ ։ 9 Հրեաներն իրան վարդապետութիւնն կըլսամրանեն , որ նորան Աստուծոյ զօրութենովն և հրաշքներով հաստատուածր ։ 13 Հրեաներից հրդուտ առնողները , 16 Չար դևից կրնեժվին ։ 19 Կախարդութեան գրքերին այրուիլն ։ 24 Դեմետրիոս իրան շահի համար Պօղոսի դէմ՝ մին մեծ չխոթութիւն կըբցնէ քաղաքումն , 35 Եւ քաղաքի կարգացողների գլխաւորն կըդադարացնէ ։

1 Ու եղաւ դեռ քանի որ Ապողոն Կորնթոս էր , Պօղոսն որ վերի կողմերումն մանր էր եկել՝ վերեկաւ Եփեսոս . և մին քանի աշակերտներ գտաւ ։

2 Ասաց նորանց . Ա՞ր թէ Սուրբ Հոգին ընդունեցիք՝ երբոր հաւատացիք . Նորանք ասացին նորան . Ա՛նանք էլ իսկի չենք լսել եթէ Սուրբ Հոգի կայ ։

3 Եւ ասաց . Ապա ինչով մըկըրտվեցաք . Նորանք ասացին . Յօհաննէսի մկրտութենովն ։

4 Եւ Պօղոսն ասաց . Յօհաննէսն ամէն ժողովրդին ապաշխարութեան մկրտութիւնըն քարոզեց , և ասումէր . թէ նա՝ որ նորա եւ ետէն պիտի գայ , նորան հաւատան . այսի՛ քն է՝ Յիսուս Քրիստոսին ։

5 Եւ երբոր լսեցին , Տէր Յիսուսի անունովն մկրտվեցան ։

6 Եւ երբոր Պօղոս ձեռն դրաւ նորանց վերայ , Սուրբ Հոգին եկաւ նորանց վերայ , լեզուներ էին խոսում՝ և մարգարէանում էին ։

7 Եւ ամէնքն տասներկու մարդոյ չափ էին ։

8 Եւ ժողովարանին մէջ մտաւ՝ երեք ամիս համարձակ խոսում էր , և Աստուծոյ արքայութեանն համաձանում էր ։

9 Երբոր մին քանիսն պնդում էին՝ և նեղսիկ էին դառնում են ճանապարհն բամբասելով բազմութեան առաջին , նա հեռացաւ նորանցից՝ և աշակերտներն ջոկեց ։ ամէն օր մին Տիւրան (մարդոյ) ժողովարանում էր խոսում ։

10 Եւ էս եղաւ մին երկու տարի , մինչև որ Ասիայի ամէն բնակիչներն՝ Հրեաներն և Հեթանոսներն Տէրի խոսքըն լսեցին ։

11 Եւ Աստուած չէ թէ քիչ զօրութիւններ էր անում Պօղոսի ձեռովն ։

12 Մինչև որ նորա քրտնքիցն թաշկինակ եր (հակրամանէր) և վարշամակներ (ֆեշամպէներ) տանում հիւանդներին վե այ , և ցաւերն հեռանում էին նորանցից , և չար դևերն դուս էին գալիս ։

13 Մին քանիսն էն ժանեկօզ Հրեաներիցն՝ որ երդում տուող էին՝ համարձակվեցան Տէր Յիսուսի անունն ասել նորանց վերայ՝ որ չար դևեր ունէին , և ասումէին . Երդում եմ տալիս ձեզ էն Յիսուսովն՝ որ Պօղոսն քարոզումէ ։

14 Մին Սկևի Հրեայ քահանայապետի եօթն որդիք կային , որ էս անումէին ։

(1) ա Կորնթ · ա · 12 · գ · 5 , 6 · (2) ա Թես · գ · 7 · Գործ · ը · 16 · (3) Գործ · ԺԸ · 25 · (4) Մատթ · գ · 11 · Յովհ · ա · 15 · 27 · 30 · Գործ · ա · 5 · Ժա · 16 · ԺԳ · 24 , 25 · (5) Գործ · ը · 16 · (6) Գործ · զ · 6 · ը · 17 · (7) Գործ · բ · 4 · Ժ · 46 · (8) Գործ · Ժէ · 2 · ԺԸ · 4 · (9) Գործ · ա · 8 · ԽԸ · 23 · (10) ը Տիմ · ա · 15 · ը Պետր · բ · 2 · Հայտ · 10 · (11) Գործ · Ի · 2 · ԽՀ · 4 · ԽԳ 14 · Ա Պետր · 23 · (12) Գործ · ԽՀ · 31 · (13) Մատթ · ԺԶ · 20 · Գործ · ԺԳ · 3 · (14) Գործ · Խ · 15 · գ Թես · գ · 29 · (15) Մատթ · ԺԸ · 27 · (16) Մատթ · Ի · 38 · Ղուկ · Ի · 49 ·

15 Ձայր դէմն պատասխան տուաւ և ասաց Նորանց . Յիսուսին գիտեմ՝ և Պօղոսին ճանաչեմ՝ , բայց դուք ով էք :

16 Եւ էն մարդն՝ որ նորանում չար դև կար՝ վազեց էն երկուսին բռնեց , նորանց տակն քցեց , մինչև որ մերկ և խոցված էն տանից փախան :

17 Եւ էն յայտնի եղաւ ամէն Ըրէանների և Ըներանների՝ որ Եփեսոսումն բնակված էին . և ահ ընկաւ նորանց ամէնին վերայ[17] . և Տէր Յիսուսի անունն մեծանում էր :

18 Եւ հաւատացեալներից շատերն գալիս էին՝ խոստովանում էին , և իրանց գործքերըն պատմում էին[18] :

19 Եւ կախարդութեան հետևողներից շատերն գրքերըն բերում էին , և ամէնի առաջին այրում էին . և նորանց գինըն համարեցին՝ և գտնում էին հիսուն հազար արծաթի (դահեկան) :

20 Եւ էսպէս Ըստուծոյ խօսքն աճում էր՝ և զօրանում[19] :

21 Եւ երբոր էս կատարվեցաւ . Պօղոսն միտքն դրաւ[20]՝ որ Մակեդոնիայի և Ըքայիայի միջովն անցկենայ գնայ Երուսաղէմ[21] . ասաց՝ թէ Իմ հետեղ գնալուցն ետև , պէտք է ինձ՝ որ Հռոմ էլ տեսնեմ[22] :

22 Իրան պաշտօնեաներից երկուսին[23] Տիմոթէոսին և Երաստոսին ուղարկեց Մակեդոնիա , և ինքըն մին ժամանակ մնաց Ըսիայի մէջն[24] :

23 Եւ էն ժամանակումն շատ խռովութիւն էլաւ[25] էն ճանապարհին համար[26] :

24 Ինչու որ՝ մին արծաթագործ՝ (ըսկզբով) Դեմետրիոս անուն , Ըրտեմիս կըռքի արծաթէ տաճարներ էր շինում . և քիչ շահ չէր՝ որ տալիս էր վարպետներին[27] :

25 Ո՛ր էն արուեստի բանվորներըն էլ ժողովեց՝ և ասաց . Ո՛վ մարդիք՝ դուք ինքներդ գիտումէք , որ էս գործիցս մենք շահ ունինք :

26 Եւ տեսնումէք և լսումէք՝ որ էս Պօղոսն չէ թէ մենակ Եփեսացոց , բայց համարեա թէ՝ ամէն Ըսիացոց շատ ժողովուրդ հաւատացնելով՝ էն կողմն դարձրուց . որ ասումէ՝ թէ Ձեռքով շինած բաներն աստուած չեն[28] :

27 Եւ չէ թէ մենակ մեր բանս ջանք է անում որ անարգվի , բայց էլ մեծ աստուծոյ Ըրտեմիայի տաճարն ոչ ինչի տեղ է համարվում . և նորա մեծութիւնն էլ կըքանդվի , որ բոլոր Ըսիան՝ և աշխարհք են պաշտում նորան :

28 Եւ երբոր էս լսեցին , բարկութենով լցվան . աղաղակումէին՝ և ասում , Մեծ է Եփեսացոց Ըրտեմիան :

29 Եւ քաղաքն շփոթութենով լցվաւ . ամէնքն էլ միտեղ վազեցին թէատրոնն . և առին քաշեցին Գայիոսին[29] և Ըրիստարքոս Մակեդոնացոյն՝ Պօղոսի ճանապարհի ընկերներին[30] :

30 Ինայց Պօղոսն երբոր կամեցաւ ամբոխի (խալխ) մէջ մտնել , աշակերտներն չըթողին նորան :

31 Ըսիայի գլխաւորներից մին

(17) Ղուկ . ա · 65 : է · 16 : Գործ . բ · 43 : է · 5 . 11 : (18) Մատթ . գ · 6 : (19) Գործ . զ · 7 : Յհ . 24 : (20) Հռոմ . Յհ . 25 : Գաղ . բ · 1 : (21) Գործ . ի · 22 : (22) Գործ . Յհ . 21 : Թագ . 11 : Հռոմ . Յհ . 24—28 : (23) Գործ . Թգ . 5 : (24) Հռոմ . Թգ . 23 : բ Տիմ . գ · 20 : (25) բ Կորնթ . ա · 8 : (26) Գործ . ի · 2 : (27) Գործ . Յհ . 16 . 19 : (28) Սաղմ . ճծե . 4 : Երեմ . խգ . 10—20 : Երեմ . Յ · 3 : (29) Հռոմ . Թգ . 23 : ա Կորնթ . ա · 14 : (30) Գործ . ի · 4 : իե · 2 : Կող . դ · 10 : Փիլմ . 24 :

քանիան էլ՝ որ Նորա բարեկամներն էին, ուղարկեցին Նորա մօտ՝ և աղաչեցուին, որ իրան անձըն չըտայ թէատրոնի մէջ ։

32 Ի՛ն ամբոխումն (խուճուճ) ա-մէն մէկերն ուրիշ բան էին աղաղակում · ինչու որ՝ Նորանց ժողովքն խառնված էր · և Նորանցից շատերն չէին գիտում, թէ ինչու համար են հաւաքված ։

33 Եւ էն շատ ամբոխի միջից Ա՛ղէքսանդրոսին բռնեցին Դուբս քաշեցին · և երբոր Հրէաներն Նորան առաջ բերին, Ա՛ղէքսանդրոսըն[31] ձեռն շարժեց՝ և կամենում ամբոխին (խուճին) պատասխան տալ[32] ։

34 Երբոր գիտացին՝ թէ էն մարդըն Հրէայ է, ամէնքն էլ մին ձայնով երկու ժամի (սահաթ) չափ աղաղակում էին, թէ Ա՛ծ է Եփեսացոց Ա՛րտեմիան ։

35 Կարգացօղների գլխաւորն էն ամբոխին դադարացրուց՝ և ասաց · Ա՛վ Եփեսացի մարդիք՝ ո՞վ է էն մարդն՝ որ չի գիտում թէ էս Եփեսացոց քաղաքս մեծ Ա՛րտեմիս կըռքի և Դիոպետի կըռքերի տաճարներովն զարդարված է ։

36 Եւ որովհետև էդ շիտակ էդպէս է, պէտք է ձեզ որ Հանդարտվիք, և չափիցն դուրս բան չըգործէք ։

37 Ի՛դ մարդկանցըդ բերիք էստեղ, ո՛չ թէ որ կըռքի տուն են կողոպտել՝ և ո՛չ մեր աստուծոյն հայհոյանք են տուել ։

38 Ուրեմն՝ թէ որ Դեմետրիոսն և Նորա հետ լինող վարպետներն՝ մըրնին հետ բան ունենան, Թո՛ղ գընան տիւանն և դատաւորներն կան, և թո՛ղ մինն մըրնիցն դանգատ անեն ։

39 Ի՛պա թէ որ ուրիշ բանի համար խնդիր լինի, Թո՛ղ օրինաւոր ժողովքի մէջն կատարեն ։

40 Ինչու որ՝ մեզ էլ մեծ վտանգ կայ էսօրուան կռւիս համար · որովհետև յանցանք (սուչ) չըկայ, որ էս ժողովքիս համար չենք կարող պատասխան տալ · և էս ասելով՝ ժողովուրդըն արձակեց ։

ԳԼ · Ի

1 Պօղոսի Մակեդոնիա գնալն ։ 7 Տէրի ընթրիքն կանէ և քարոզ կըտայ ։ 9 Նեփթոս վերկընկնի տանից և վեր կըկալվի մեռած · 10 Եւ Նորան Պօղոսի ձեռովն բերուվին կենդանի ։ 17 Մելիտէյցին Եփեսոս մարդ կուղարկէ · և եկեղեցոյ երէցներըն կըկանչէ, և իրան ինչ անելն և ինչ լինելն Նորանց կըպատմէ, 28 Տէրի հօտն (ա՛ւրխն) Նորանց կըյանձնէ, 29 Նորանք սուտ վարդապետներից պահ կանէ, 32 Եւ Նորանք Աստուծոյ կըյանձնէ, 36 Նորանց ամէնին հետ աղօթք կանէ, և Նորանցից կըծկվի կըղնայ ։

1 Եւ ամբոխի (խուճի) դադարելուցնետև՝ Պօղոսն աշակերտներին կանչեց, և մխիթարեց · ողջոյն տուաւ՝ և դուրս եկաւ գնաց Մակեդոնիա[1] ։

2 Եւ էն կողմերն որ ման եկաւ՝ և շատ խօսքերով մխիթարեց Նորանց, եկաւ Ելլադա ։

3 Երբոր հինգ երեք ամիս կացաւ, Հրէաներն որոգայթի (ղաւչի) քցեցին Նորան[2], դեռքանի որ կամենում դուրս գալ Ասորոց երկիրն · խորհուրդ արաւ՝ որ Մակեդոնիայի միջովն յետ դառնայ ։

4 Եւ մինչև Ասիա Նորա հետ գնում Սոսիպատրոս Իերիացին՝

(31) ա Տիմ · ա · 20 · բ Տիմ · գ · 14 · (32) Գործ · իբ · 17 · (1) ա Կորնթ · իգ · 5 · ա Տիմ · ա · 3 · (2) Գործ · իթ · 23 · իգ · 12 · կե · 3 · բ Կորնթ · ժա · 26 ·

Պիւռոսի որդին • և Թեսաղոնիկեցիներին Բրիստոսքոսն և Ակուն-դոսն[3] և Վայիոս Վերբացին[4] և Տիմոթէոսն[5] , և Ասիացիներէն՝ Տիւքիկոսն[6] և Տրոփիմոսն[7] :

5 Սորանք առաջ գնացին՝ սպասումէին մեզ Տրոադայի մէջն :

6 Եւ մենք բաղարջակերաց օրերէն ետև նաւով գնացինք Փիլիպպայիցն[8] , և մինչև հինգ օրումն եկինք Տրոադա նորանց մօտ • էնտեղ եօթն օր դադարեցինք[9] :

7 Եւ շաբաթ օրումն՝ դեռ որ ժողովված էինք հաց կարելոյ համար[10] , Պօղոսն նորանց հետ խօսումէր՝ ինչու որ՝ յետևի օրումն պէտք էր գնայ • և խօսքըն երկարացուց մինչև կէս գիշերն :

8 Եւ շատ լապտերներ (ճաճանչներ) կային էն վերնատանն՝ որ մենք ժողովված էինք[11] :

9 Եւ մին Եւտիքոս անուն երիտասարդ (ճահիճ խոսք) պատուհանին վերայ նստած էր • Պօղոսի երկար խօսելոյ ժամանակն , թանձր քնի մէջն ննջումէր • և որ խոր քնով բռնվված էր՝ տան երրորդ գահկոնիցն (պռինգն) վէր ընկաւ , և վերկացված մեռած :

10 Եւ Պօղոսն վէրեկաւ նորա վերայ ընկաւ[12] • և նորան՝ գիրկն էր առնում և ասում • Մի՛ շփոթվիք[13] , ինչու որ՝ սորա հոգին սորանումէ է :

11 Եւ վեր ելաւ հացըն կարեց՝ և կերաւ • և էլ շատ խօսեց մինչև առաւօտն , և յետոյ դուրս ելաւ և գնաց :

12 Եւ էն տղային բերին կենդանի , և շատ մխիթարվեցան :

13 Եւ մենք նաւն ժամինք՝ գնացինք Ասոն • էնտեղից յոյս ունէինք՝ որ մինէլ Պօղոսին մեզ հետ առնենք • ինչու որ՝ էնպէս էր պատուիրել՝ դեռ որ ինքն ցամաքումն գըներ :

14 Եւ երբոր Ասոնումն հանդիպեցաւ մեզ վեր առինք նորան և կինք Մետիլինէ :

15 Եւ էնտեղից նաւով գնացինք՝ յետևի օրումն հասինք Քիմայի դիմացն • և մէկէլ օրումն հասինք Սամոն • և յետևի օրումն եկինք Միլիտոն :

16 Ինչու որ՝ Պօղոսն իրան մըտքի մէջն դրել էր՝ որ Եփեսոսի մոտումն նաւով անցկենայ՝ որ չըլինի թէ նա Ասիայի մէջն մին ժամանակ յետ մնայ • պատճառն որ՝ վըռազումէր[14] , որ եթէ կարելի լինի նորան՝ Պենտեկոստէի օրումն[15] գըներ Երուսաղէմ[16] :

17 Եւ Միլետէյին ուղարկեց Եփեսոս՝ եկեղեցոյ էրէցներըն կանչեց :

18 Եւ երբոր եկին նորա մօտ , նորանց ասաց • Դուք ինքներդ գիտումէք՝ եթէ էն առաջին օրից ետև որ Ասիա եկի՝ ինչպես էայ ամէն ժամանակներն ձեզ հետ[17] :

19 Ամէն խոնարհութեամբ Տէրին ծառայեցի և շատ արտասուքով և փորձութիւններով որ Հըրէաներուն՝ դաւերուն պատահեցին ինձ[18] :

20 Ինչպես որ իսկի մին օգտակար բան վախով չըծածկեցի , որ չը-

(3) Գործ • ԻԹ • 29 • Իէ • 2 : Կող • դ • 10 : (4) Գործ • ԻԹ • 29 : (5) Գործ • Իզ • 1 : (6) Եփես • զ • 21 : Կող • դ • 7 : (7) Գործ • ԻԲ • 29 : Բ Տիմ • դ • 20 : (8) Ղւկ • Իը • 14 , 15 : Իդ • 15 : (9) Գործ • Իզ • 3 : Բ Կորնթ • բ • 12 : Բ Տիմ • դ • 13 : (10) Գործ • բ • 42 • 46 : ա Կորնթ • Ժ • 16 : Ժա • 20 , Համբ : (11) Գործ • ա • 13 : (12) գ Թագ • Իէ • 21 : դ Թագ • դ • 34 : (13) Մատթ • թ • 24 : (14) Գործ • Իը • 21 : ԻԹ • 21 : իա • 4 • 12 : (15) Գործ • բ • 1 : ա Կորնթ • Իզ • 8 : (16) Գործ • Իդ • 17 : (17) Գործ • Իը • 19 : ԻԹ • 1 • 10 , (18) Վէր • 3 :

պատմեմ և սովորցնեմ ձեզ՝ թէ փողոցումն և ըէ տան մէջն[19] :

21 Ա՛րէաներին և Ա՛ղթանոսներին վկայութիւն տուի[20] էն ապաշխարութեան համար՝ որ դէպի Ա՛ստուած է , և մեր Տէր Յիսուս Ք՛րիստոսին հաւատալոյն համար[21] :

22 Եւ հիմիկ՝ ահա ես հոգովն կապված գնումեմ Երուսաղէմ · և չեմ գիտում՝ թէ ենտեղ ինչ պիտի անձկենայ ինձ վերայ[22] :

23 Մ՛իայն թէ՝ Սուրբ Ա՛ոգին քաղաքից քաղաք ինձ վկայումէ և ասումէ թէ կապանքներ և նեղութիւններ սպասումեն քեզ[23] :

24 Ասյա ես իսկի մին բանով էլ իմ անձրս պատուական չեմ համարում[24] որ ուրախութենով կատարեմ իմ վազելն[25] , և էն պաշտօնըն[26] որ Տէր Յիսուս Ք՛րիստոսից առի , որ Ա՛ստուծոյ շնորհաց աւետարանին վկայ լինիմ[27] :

25 Եւ հիմիկ՝ ահա ես գիտումեմ , որ էլ իմ երեսըս չէք տեսնիլ դուք ամէնքդ[28] , որ ձեր մէջն մանեկի Ա՛ստուծոյ արքայութիւնըն քարոզելոյ համար :

26 Սրահամար՝ էս օր վկայութիւն եմ դնում ձեզ՝ որ ձեր ամէնիդ արիւնիցն անմեղ եմ[29] :

27 Ինչու որ՝ չետ չըքաշվեցայ[30] Ա՛ստուծոյ ամէն կամքըն ձեզ պատմելուց[31] :

28 Ո՛գոյշ կացէք անձ՛ երիդ՝ և ամէն հօտիդ (ախ-բէ-նէ)[32] որ Սուրբ Ա՛ոգին ձեզ վերակացու դրաւ նորանում[33] , որ արածացնէք Տէրի ժողովուրդըն . նորան՝ որ իրան արիւնովն[34] ապրեցրուց[35] :

29 Պատճառն որ՝ ես գիտումեմ որ իմ հեռանալուցն ետև՝ յափրշտակող գայլեր կրգան ձեր մէջն , որ հօտիդ (ախ-բէ-նէ) չեն խնայիլ[36] :

30 Եւ ձեզանից էլ մարդիք վերկրկենան՝ որ ծուռ բաներ կըխօսին , որ աշակերտներին իրանց ետևէն քաշեն[37] :

31 Սրահամար արթուն կացէք և մտքներդ բերէք՝ որ երկու տարի գիշեր և ցերեկ չըդադարեցի ամէն մէկիդ արտասուքով խրատել[38] :

32 Եւ հիմիկ՝ ձեզ Ա՛ստուծոյ եմ յանձնում՝ և նորա շնորհաց խօսքին[39] , որ նա կարող է շինել[40] և ամէն սրբերին հետ ձեզ ժառանգութիւն տալ[41] :

33 Ձեզանից մրնի արծաթին կամ ոսկոյն կամ շորերին չըցանկացայ[42] :

34 Դուք ձեզանից գիտումէք՝ որ էս ձեռներս վաստակեցին իմ պէտքըս , և նորանցն էլ՝ որ ինձ հետ էին[43] :

35 Եւ ամէն ինչ ցոյց տուի ձեզ՝ որ էսպէս պէտք է աշխատիլ , և հիւանդներին հոգս տանել , և Տէր Յիսուսի խօսքըն յիշել . որ

(19) Ա՛ՏՐ · 27 : (20) Գործ · ԺԸ · 5 : (21) Մ՛ԲՒ · ա · 15 : Ա՛ՏԻ · ԻԳ · 17 : Գործ · բ · 38 : (22) Գործ · ԺԹ · 21 : (23) Գործ · ԻԱ · 4 · 11 : ա Թես · գ · 3 : (24) Գործ · ԻԱ · 13 : Ա՛ՒԱՂ · ը · 35 : բ Կորնթ · գ · 16 : (25) բ Տի՛ · գ · 7 : (26) Գործ · ա · 17 : բ Կորնթ · գ · 1 : (27) Գաղ · ա · 1 : Տիտ · ա · 3 : (28) Ա՛ՏՐ · 38 : Ա՛ՒԱՂ · ԺԶ · 23 : (29) Գործ · ԺԸ · 6 : բ Կորնթ · է · 2 : (30) Ա՛ՏՐ · 20 : (31) Ա՛ՒԱՂ · է · 30 : Հայէ · ԺԶ · 15 : Նէեմ · ա · 11 : (32) ա Տի՛ · գ · 16 : ա Պետր · ե · 2 : (33) ա Կորնթ · ԺԸ · 28 : (34) Նէեր · ք · 14 : (35) Նէեմ · ա · 7 · 14 : Կաղ · ա · 14 : Նէեր · ք · 12 : ա Պետր · ա · 19 : Հայտ · ե · 9 : (36) Մ՛ատթ · է · 15 : բ Պետր · բ · 1 : (37) ա Տի՛ · ա · 20 : ա Հովհ · բ · 19 : (38) Գործ · ԺԹ · 10 : (39) Նէեր · ԺԳ · 9 : (40) Գործ · ք · 31 : (41) Գործ · ԻՀ · 18 : Նէեմ · ա · 18 : Կաղ · ա · 12 : գ · 24 : Նէեր · ք · 15 : ա Պետր · ա · 4 : (42) ա Թես · ԺԸ · 3 : ա Կորնթ · ք · 12 : բ Կորնթ · է · 2 : ԺԱ · 9 : ԺԲ · 17 : (43) Գործ · ԺԸ · 3 : ա Կորնթ · գ · 12 : ա Թես · բ · 9 : բ Թես · գ · 8 :

հենց ինքն ասաց[44] : Ա՛ւելի երանելի է տալն՝ քան թէ առնելն :

36 Եւ երբոր էս ասաց, ծունր դրաւ ամենին հետ՝ և աղօթք արաւ[45] :

37 Ամենքն էլ շատ լաց էին լինում՝ և Պօղոսի վզովն ընկած՝

նորան համբուրում էին[46] :

38 Այտերն էլ մանաւանդ կսկծումին էն խօսքին համար՝ որ ասում էր, թէ նորա երեսըն էլ չըպիտի տեսնեն : և նորան ճանապարհ քցեցին դէպի նաւն[47] :

ԳԼ · ԻԸ

1 Պօղոս իակի չքնաղանդիկը՝ որ Երուսաղէմ գնալուցն յետ կենայ : 9 Փիլիպպոսի մարգարէ աղջիկներն, 17 Պօղոսի Երուսաղէմ գնալն, 27 Որ էն տեղ ձեռք կըբռնվի և շատ մեծ վտանգի մէջ կըլինի, 31 Ասայ հազարապետն նորանց ձեռներիցն կառնէ և հրամայ կըտայ նորան՝ որ ժողովուրդի հետն խօսի :

1 Ա՛ւ երբոր էլաւ՝ որ մենք դուրս եկինք և նորանցից ջոկվեցանք, շիտակ գնալով եկինք Կով · և յետևի օրումն (եկինք) Հռոդոն, և էնտեղից Պատարայ :

2 Եւ մին նաւ որ գտինք՝ որ Փիւնիկէն էր գնում, նորա մէջն մտինք գնացինք :

3 Եւ երբոր Կիպրոսն երևեցաւ՝ նորան մեր ձախ կողմն թողինք, նաւն շիտակեցինք դէպի Սորիքն, և վեր եկինք Տիւրոս · ինչու որ նաւն (իրան) բեռներըն էնտեղ պիտի թափէր :

4 Եւ աշակերտներին որ գտինք՝ էնտեղ եօթն օր մնացինք · որ նորանք Սուրբ Հոգոյ ձեռովն Պօղոսին ասում էին, որ վեր չելլի Երուսաղէմ[1] :

5 Եւ երբոր մենք էն օրերըն կատարեցինք, դուրս եկինք գնացինք · ամենքն՝ մեզ կանանցով և որդիքներով ճանապարհ քցեցին մինչև քաղաքի դուրս կողմն · և ծովի եզերքն (ղըռաղն) մօտ ծունր դրինք և աղօթք արինք[2] :

6 Եւ իրարից բաժանվեցանք և վերէլանք նաւն · և նորանք յետ դարձան իրանց տեղերն :

7 Եւ մենք նաւն Տիւրոսիցն առաջ քցեցինք՝ հասինք Պտղոմայիդա · և եղբարներին ողջոյն տուինք՝ նորանց մօտ մին օր մնացինք :

8 Եւ յետևի օրումն էնտեղից դուրս էլանք՝ եկինք Կեսարիա · և Փիլիպպոս աւետարանչի տունն մտինք[3] որ նա էն եօթնիցն էր, և նորա մօտ մնացինք[4] :

9 Այս էրս կոյս աղջիկներ ուներ՝ որ մարգարէ էին[5] :

10 Եւ երբոր մենք էնտեղ շատ օրեր մնումէինք, մին Ագաբոս անուն մարգարէ վերեկաւ Հրէաստանից[6] :

11 Եւ մեզ մօտ որ եկաւ, Պօղոսի գօտիկն առաւ՝ իրան ոտներըն և ձեռներըն կապեց և ասաց · Սուրբ Հոգին էսպէս է ասում · Էն մարդն՝ որ էս գօտիկս նորանն է, Հրէաներն Երուսաղէմումն էս-

(44) Հռով · ժե · 1 : ա Կորնթ · թ · 12 : բ Կորնթ · ժա · 9 · 12 : ժբ · 13 : Եփես · դ · 28 : ա Թես · գ · 11 : ե · 14 : բ Թես · գ · 8 : (45) Գործ · է · 59 : ԻԱ · 5 : (46) Նմանր · խե · 14 : խզ · 29 : (47) Ա Եր · 25 : (1) Ա՛մար · 12 : Գործ · ի · 23 : (2) Գործ · ի · 36 : (3) Եփես · դ · 11 : բ Տիմ · գ · 5 : (4) Գործ · զ · 5 : ը · 26 · 30 : (5) Յովէլ · բ · 28 : Գործ · բ · 17 : (6) Գործ · ի · ժա · 28 :

պէս կըկապեն[7] , և նորան հեթա-
նոսների ձեռքն կըմատնեն :
12 Եւ երբոր էն լսեցինք՝ մենք
աղաչուեցինք , և նորանք էլ՝ որ
էնտեղ էին՝ որ նա վերչէլւի Ե-
րուսաղէմ :
13 Յէն ժամանակն Պօղոսն պա-
տասխան տուաւ և ասաց . (թէ)
Ինչ էք անում , ինչո՞ւ համար էք
լաց լինում և իմ սիրտը կսկծաց-
նում[8] • ինչու որ՝ ես ոչ թէ մէ-
նակ կապվելոյ՝ բայց էլ Երուսա-
դէմումն մեռնելոյ պատրաստ եմ Տէր
Յիսուսի Քրիստոսի անունին հա-
մար :
14 Եւ երբոր նա ականջ չըդը-
րաւ , լուռ կացանք՝ և ասացինք •
Թող Տէրի կամքն լինի[9] :
15 Եւ էն օրերից ետև՝ պատ-
րաստվեցանք՝ վերէինք էլլում Ե-
րուսաղէմ :
16 Յէն Կեսարացի աշակերտների-
ցըն էլ մեզ հետ եկին , և տանուա-
մէին մեզ մին Նասօն անուն Կիպ-
րացի մարդոյ՝ առաջին աշակերտի
մօտ , որ նորա մօտ պէտք էր կե-
նայինք :
17 Եւ երբոր մենք Երուսաղէմ
մտինք , եղբարքն մեզ ուրախու-
թենով ընդունեցին[10] :
18 Յայց յետևի օրումն Պօղոսն
մեզ հետ մտաւ Յակոբի[11] մօտն .
և բոլոր երէցներն եկին :
19 Եւ ողջոյն տուաւ նորանց՝ մին
մին պատմուռէր ինչ որ Աստուած
հեթանոսների մէջն արաւ[12] իրան
ծառայութենովն[13] :
20 Եւ երբոր նորանք լսեցին ,
փառք էին տալիս Աստուծոյ . և
նորան ասումէին • Էղբայր՝ տես-
նումես , որչափ հազարաւոր հա-
ւատացեալ Հրէաներ կան , և ա-
մենքն օրէնքին համար նախանձով
լցված են[14] :
21 Յայց քեզ համար էնպէս են
իմացել՝ թէ հեթանոսների մէջն լի-
նող Հրէաներին սովորցնումես , որ
Մովսէսից յետ քաշվին • ասումես
թող իրանց որդիքներըն չըթլփա-
տեն , և օրինաց կրօնքի պէս չը-
վարվին :
22 Հիմիկ ի՞նչ կըլինի՝ իրաւի որ՝
կըլսեն որ դու եկել ես :
23 Հիմիկ էս արա՝ որ քեզ ասու-
մենք • Մեզանում չորս մարդ կան՝
որ ուխտ են դրած իրանց անձներին
վերայ :
24 Նորանց առ՝ և նորանց հետ
սրբվիր • և նորանց վերայ ծախք
արա՝ որ իրանց գլխներըն վերա-
նեն[15] • և (ապա) ամենքն կըգի-
տեն , թէ ինչ որ քեզ համար իմա-
ցել էին՝ ոչ ինչ է • բայց թէ դու
էլ միաբան ես օրէնքըն պահելոյ
համար :
25 Յայց էն հաւատացեալներին
համար՝ որ հեթանոսներից են ,
մենք ուղարկեցինք՝ ինչպես որ սահ-
մանեցինք , որ նորանք էնպէսի բան
չըպահեն , բայց միայն յետ կենան
կըռքի մատաղից և արիւնից , և
խեղդածից , և պոռնկութենից[16] :
26 Յն ժամանակն Պօղոսն էն
մարդկանցըն առաւ , յետևի օրումն
նորանց հետ սրբվեցաւ , և տաճա-
րըն մտաւ ցոյց տալով[17] սրբութեան
օրերի կատարվիլըն[18] • մինչև որ նո-
րանց ամեն մէկին վերայ պատարագ
էլաւ :
27 Եւ երբոր էն եօթն օրերն կա-

(7) Ա.ՍԴ • 33 : Գործ • ի • 23 : (8) Գործ • ի • 24 : (9) Մատթ • ղ • 10 : իզ • 42 : Ղուկ • ժա • 2 : իբ • 42 : (10) Գործ • ժե • ե : (11) Գործ • ժե • 13 : Գաղ • ա • 19 • բ • 9 : (12) Գործ • ժե • ե • 12 : Հռոմ • ժե • 18 , 19 : (13) Գործ • ա • 17 : ի • 24 : (14) Գործ • իբ • 3 : Հռոմ • ժ • 2 : Գաղ • ա • 14 : (15) Թուոս • գ • 2 • 13 • 18 : Գործ • ժը • 18 : (16) Գործ • ժե • 20 • 29 : (17) Գործ • իգ • 18 : (18) Թուոս • գ • 13 :

տարվելոյ մօտ էին , Յասիայի Հրէաներն նորան տաճարումն տեսին[19] , և ամէն ամբոխին (խուճին) նորա վերայ թափեցին , և նորան ձեռք ձգելով՝ աղաղակումէին[20] ։

28 Ով Իսրայէլացի մարդիք՝ օգնեցէք ։ Ես էն մարդն է՝ որ ժողովրդին՝ և օրէնքին և էստեղիս հակառակ՝ ամէնին ամէն տեղ սովորցնումէ՝ մինչև որ Հեթանոսներ էլ մտցրուց տաճարին մէջ և էն սուրբ տեղն պղծեց[21] ։

29 Ինչու որ՝ Տրոփիմոս Եփեսացոյն առաջուց նորա հետ քաղաքումն տեսել էին[22] ։ և կարծումէին՝ թէ Պօղոսն նորան մտցրուց տաճարին մէջ ։

30 Ամբողջ քաղաքն շարժվեցաւ , և ժողովուրդն կիտվեցաւ ։ և Պօղոսին բռնած տաճարիցն դուրս էին քաշումՙ և շուտով դռներն փակվեցան[23] ։

31 Եւ ուզումէին՝ որ նորան սպանեն ։ զրուց հասաւ գնդի (պէօլ-ին) հազարապետին՝ թէ ամէն Երուսաղէմ շփոթվել է ։

32 Նա էլ շուտով զինուորներ և հարիւրապետներ առաւ՝ և նորանց վերայ վազեց[24] ։ և նորանք երբոր հազարապետին և զինուորներին տեսին , Պօղոսին ծեծելուց դադարեցին ։

33 Յն ժամանակն հազարապետն մօտեցաւ բռնեց նորան՝ և հրամայեց , որ երկու շղթայով (չընճղով) կապեն[25] ։ և հարցնումէր՝ թէ ո՞վ է , և ի՞նչ է արել ։

34 Յմէն մէկերն ամբոխի (խուճի) մէջն մին ուրիշ բան էին աղաղակում նորանից ։ երբոր ամբոխի շփոթութենից չըկարաց ճշմարիտն իմանալ , հրամայեց որ նորան տանեն բանակն (օպոռն) ։

35 Եւ երբոր հասաւ աստիճաններն (նաբպռանի ոդին) , պէտք էլաւ որ ամբոխի զօռ անելոյ պատճառովն զինուորներն նորան վերառնեն բերեն ։

36 Ինչու որ՝ շատ ժողովուրդ էր եւևէն գնումՙ և ասումէին ։ Մի՛ ջիցն վեր կալ դորան[26] ։

37 Վռնքանի որ Պօղոսն բանակն մտնելոյ վերայ էր , հազարապետին ասաց ։ Կարելի է ինձ՝ որ քեզ հետ խօսիմՙ ։ Նա էլ ասաց՝ Յունարէն գիտումես ։

38 Չը՛ լինի թէ դու էն Եգիպտացին ես , որ էս օրերիցս առաջ շփոթութիւն արիր՝ և չորս հազար սիկարեան (չէնճէ) մարդիք հանեցիր անապատն (չէօլն)[27] ։

39 Եւ Պօղոսն ասաց ։ Ես Հրէայ մարդ եմՙ Կիլիկեցոց Տարսոնիցն[28] ։ ոչ թէ աննշան քաղաքի քաղաքացի ։ աղաչումեմՙ քեզ՝ հրամայն տուր ինձ , որ էդ ժողովրդիդ հետ խօսիմՙ ։

40 Եւ երբոր նա հրամայեց , Պօղոսն աստիճաններին վերայ կանգնեց՝ և դէպի ժողովուրդն ձեռն շարժեց[29] ։ երբոր շատ լուռ կացան , սկսեց Եբրայեցոց լեզուովն խօսիլ՝ և ասաց ։

(19) Գործ · իդ · 18 ։ (20) Գործ · իզ · 31 ։ (21) Գործ · իդ · 5 , 6 ։ (22) Գործ · ի · 4 ։ (23) Գործ · իզ · 21 ։ (24) Գործ · իդ · 27 ։ իդ · 7 ։ (25) Ա Եր · 11 ։ Գործ · ի · 23 ։ (26) Ղուկ · իդ · 18 ։ Հովհ · ժթ · 15 ։ Գործ · իբ · 22 ։ * Ժամանակ Խոդեպատցւոյն ամ Տիտոս 55 ։ (27) Գործ · ե · 36 ։ (28) Գործ · թ · 11 ։ իբ · 3 ։ (29) Գործ · իբ · 17 ։

ԳԼ · ԻՌ

1 Պօղոս երկար կըպատմէ որ ինքն ինչպէս հաւատաց Տէրին · 17 Նէ առաքեալ լինելոյ կը կանչուի · 22 Երբոր իրան հեթանոսներուն գնալն յիշուցէ՝ ժողովուրդն աղաղակումէին , 24 Հազարապետն կըհրամայէ որ նորան ծեծելով հարցընեն , 25 Ինչպէ իրան Հռոմայեցի լինելն իմաց տալով կազատվի ։

1 Ա՛րդիւկ եղբարք և հարք՝ հիմիկ իմ՝ ձեզ պատասխան տալոյս լսեցէք[1] ։

2 Երբոր լսեցին՝ թէ Եբրայեցոց լեզուովն նորանց հետ խօսեց , էլ աւելի լուռ կացան ։

3 Եւ նա ասաց · Ես Հրէայ մարդ եմ Կիլիկեցոց Տարսոնումն ծնուած[2] էս քաղաքումս մեծացած Գամալիէլի[3] ոտքի մօտ[4] , ճշմարիտ հայրենական օրէնքին պէս վարժված[5] · Հաստուծոյ կողմանէ խիստ նախանձով ջերմեռանդ էի[6] ինչպէս որ էս օր դուք ամէնդ էք[7] ։

4 Որ հենց էս ճանապարհս հալածելի մահու չափ · որ մարդկանց և կանանց կապուտէի և մատնուտի բանտերի մէջ[8] ։

5 Ինչպէս որ քահանայապետն էլ ինձ վկայուտ՝ և ծերերի ամէն ժողովն էլ[9] · որ նորանցից էլ թղթեր առած գնուտի Գամասկոս եղբարներուն մօտն , որ էն տեղից էլ կապածներ բերեմ Երուսաղէմ , որ պատժվին[10] ։

6 Եւ էլաւ երբոր ես գնուտի՝ և Գամասկոսին մօտենուտի , կէս օրվան դէմ՝ յանկարծակի երկնքիցըն մի սաստիկ լոյս փայլեց իմ չորս կողմովս[11] ։

7 Եւ վէր ընկայ գետնին վերայ , և ձայն լսեցի՝ որ ասուտէր ինձ · Սաւուղ Սաւուղ՝ ինձ ինչու՞ ես հալածում ։

8 Եւ ես պատասխան տուի՝ Թէ Տէր՝ դու ո՞վ ես · և ինձ ասաց · Ես Յիսուս Նազորեցին եմ՝ որ դու հալածումես ։

9 Հայց նորանք՝ որ ինձ հետ էին՝ լոյսը տեսնումին , բայց էն ձայնըն չէին լսում՝ որ ինձ հետ խօսուտէր[12] ։

10 Եւ ասացի · Ինչ պիտի անեմ՝ Տէր · և Տէրն ասաց ինձ · Վէր կաց՝ գնա Գամասկոս , և հետեղ կըպատմվի քեզ ամէն բանի համար՝ որ քեզ հրաման է որ անես ։

11 Երբոր էն լուսոյ փառքիցն կաըոշ չէի տեսնել , նորանք՝ որ ինձ հետ էին , ձեռիցս բռնեցին՝ և մտի Գամասկոս ։

12 Մին Անանիա մարդ՝ աստուածավախ օրէնք պահօղ[13] , Գամասկոսումն բնակված ամէն Հրէանեըրիցն[14] բարի վկայութիւն ունօղ[15] ·

13 Գա եկաւ ինձ մօտ կանգնեց՝ և ասաց · Սաւուղ եղբայր՝ վեր նայիր ։

14 Եւ ես հենց էն ժամումն (ասա՝ հաւնուտին) դէպի նա վերև նայեցի , և նա ինձ ասաց · Մեր հարանց Հաստուածն առաջուց[16] քեզ ընտրեց[17] որ նորա կամքըն ճանաչես ,

(1) Գործ · է · 2 ։ (2) Գործ · իա · 39 ։ բ Կորնթ · ժա · 22 ։ Փիլիպ · գ · 5 ։ (3) Գործ · ե · 34 ։ (4) բ Օրէն · կդ · 3 ։ գ Հաւտ · գ · 38 ։ Ղուկ · ժ · 39 ։ (5) Գործ · իզ · 5 ։ (6) Գործ · իա · 20 ։ Գաղ · ա · 14 ։ (7) Հռոմ · ժ · 2 ։ (8) Գործ · ը · 3 ։ իզ · 9—11 ։ Փիլիպ · գ · 6 ։ ա Տիմ · ա · 13 ։ (9) Ղուկ · իբ · 66 ։ Գործ · գ · 5 ։ (10) Գործ · թ · 2 ։ իզ · 10 , 12 ։ (11) Գործ · թ · 3 ։ իզ · 12 , 13 ։ (12) Գործ · թ · 7 ։ Գաղ · ժ · 7 ։ (13) Գործ · թ · 17 ։ (14) ա Տիմ · գ · 7 ։ (15) Գործ · ժ · 22 ։ (16) Գործ · գ · 13 ։ ե · 30 ։ (17) Գործ · թ · 15 ։ իշ · 16 ։

և էն Լըդարըն[18] տեսնես[19], և նո-
րա բերանիցն խօսք լսես[20] :

15 Ու Նորա վկայ լինիս ամէն
մարդկանց մէջն՝ էն բաներուն հա-
մար[21], որ տեսիր և լսեցիր[22] :

16 Եւ հիմի՝ ինչու՞ ես ծուլա-
նում, վեր կաց մկրտվիր և քո
մեղքերըն լուա[23] Նորա անունըն
(քեզ) կանչելով[24] :

17 Եւ էլաւ երբոր ես յետ դար-
ձայ Երուսաղէմ, և տաճարումն
աղօթք էի անում, ափշութիւն
ինձ բռնեց[25] :

18 Եւ Նորան տեսի՝ որ ինձ ա-
սումէր[26] • Ա րագ արա՝ շուտով
դուրս ել Երուսաղէմիցն[27] • պատ-
ճառն որ՝ չեն ընդունիլ քո վկա-
յութիւնըդ՝ որ ինձ համար տալիս
ես :

19 Եւ ես ասացի • Տէր՝ հենց նո-
րանք գիտումեն՝ որ ես էի՝ որ քեզ
հաւատացողներին բանտի մէջ էի
տալիս[28], և ամէն ժողովարաննե-
րումն ծեծումէի[29] :

20 Եւ երբոր քո Ստեփաննոս վը-
կայիդ արիւնն թափվումէր[30], ես
ինքնս էի՝ որ Նորա մօտ կանգնած
էի, և Նորա սպանօղներին կամա-
կից էի, և Նորա սպանօղների շո-
րերըն պահումէի[31] :

21 Եւ ասաց ինձ • Կնա, ինչու
որ՝ ես հեռու հեթանոսների մէջ
կուղարկեմ քեզ[32] :

22 Եւ մինչև էս խօսքս ականջ
էին դնում Նորան • յետոյ իրանց
ձայներըն բարձրացրին՝ և ասացին •
Չդպիսի մարդըն երկրիցս վեր կալ •
ինչու որ՝ պէտք չէ որ էդպիսիդ
ապրին[34] :

23 Եւ երբոր Նորանք աղաղակու-
մէին՝ և շորերըն վեր էին քցում,
և փոշին օդի (հավայէ) մէջն էին
ցանում •

24 Հազարապետն հրամայեց որ
Նորան բանակին (օբոռին) մէջ մըտ-
ցընեն • ասումէր՝ պէտք է ծեծե-
լով հարցընել Նորան՝ որ գիտե-
նամ, թէ ինչ յանցանքի (սուչէ)
համար էին Նորա վերայ էնպէս ա-
ղաղակում :

25 Եւ երբոր Նորան կաշվէ փո-
կերով պինդ կապեցին, Պօղոս ա-
սաց հարիւրապետին՝ որ մօտ կանգ-
նած էր, թէ Լրժա՞ն է որ դուք
Հռոմայեցի անմեղ մարդ ծեծէք[35] :

26 Երբոր լսեց հարիւրապետն,
մօտեցաւ հազարապետին պատմեց՝
և ասաց • Ինչ ես կամենում ա-
նել, ինչու որ՝ էս մարդս Հռո-
մայեցի է :

27 Եւ հազարապետն մօտ եկաւ՝ և
Նորան ասաց • Պատ ինձ ասա՝ Հռո-
մայեցի՞ ես • և Նա ասաց • Այ :

28 Հազարապետն պատասխան տը-
ւաւ • Ես շատ բանով էս գինուո-
րութիւնս ստացայ • և Պօղոսն ա-
սաց • Ես հենց դորանում ծնված
եմ :

29 Եւ նորանք՝ որ Նորան պիտի
ծեծէին, շուտով հեռացան Նորա-
նից • և հազարապետն էլ վախե-
ցաւ՝ երբոր իմացաւ թէ Հռոմա-
յեցի է • ինչու որ՝ կապել էր Նո-
րան :

(18) Գործ • գ • 14 : է • 52 : (19) ա Կորնթ • թ • 1 : ժե • 8 : (20) ա Կորնթ • ժա • 23 : Գաղ • ա • 12 : (21) Գործ • իգ • 11 : (22) Գործ • գ • 20 : իշ • 16 : (23) Գործ • բ • 38 : Եբր • ժ • 22 : (24) Գործ • թ • 14 : Հռովմ • ժ • 13 : (25) Գործ • թ • 26 : բ Կորնթ • ժբ • 2 : (26) Գործ • 14 : (27) Մարկ • ժ • 14 : (28) Գործ • ը • 3 : (29) Մարկ • ժ • 17 : (30) Գործ • է • 58 : (31) Ղևտ • ժա • 48 : Գործ • է • 59 : Հռովմ • ա • 32 : (32) Գործ • թ • 15 : ժգ • 2 • 46, 47 : ժը • 6 : իշ • 17 : Հռովմ • ա • 5 : ժա • 13 : ժե • 16 : Գաղ • ա • 15, 16 : բ • 7, 8 : Եփես • գ • 7, 8 : ա Տիմ • բ • 7 : բ Տիմ • ա • 11 : (33) Գործ • խա • 36 : (34) Գործ • կե • 24 : (35) Գործ • ժգ • 37 :

30 Եւ յետեւի օրումն կամենումէր՝ որ ճշմարիտըն իմանայ , թէ ի՞նչ է Ա՛րեաների չարաիսօսութիւնն · նոյնա արձակեց՝ և հրամայեց որ քահանայապետըն և բոլոր տիվա- նըն կանչեն · և Պօղոսին էլ վեր բերաւ նորանց մէջն կանդնացրուց :

ԿԻ · ԻԴ

1 Պօղոս երբոր իրան վարվելն Ա՛ստուծոյ առաջին կը պատմէ , 2 Ա՛նանիա քահանայապետն կը ղեմայէ՝ որ նորա բերանըն թակէն : 7 Ինքն չարաիսօղներին տարաձայնութիւնն : 11 Տէրն նորան կը զօրացընէ : 12 Հրէաներին Պօղոսի համար իրար հետ արած երդումն նորան սպանելոյ համար , 20 Հազարապետին իմաց կըտայ մին տղայ : 27 Ի՛նչ էլ Պօղոսն փե- լիքս դատաւորին կ՚ուղղէ :

1 Եւ Պօղոսն տիվանին մտիկ տուաւ՝ և ասաց · Ա՛րդիկ եղբարք՝ ես ամեն շիտակ մտքով վար- վելեմ Ա՛ստուծոյ առաջին մինչև էս օր[1] :

2 Եւ Ա՛նանիա քահանայապետն ծառաներին հրամայեց՝ որ նորա բերանըն թակէն[2] :

3 Ի՛ն ժամանակն Պօղոսն ասաց նորան · Ա՛ստուած պիտի քեզ զար- կէ՝ բուռվ (գաճաճ) ծեփած պատ . և դուն նստի՞ս ես որ ինձ օրէնքին պէս դատես , և օրէնքին հակառակ հրամայումես՝ որ ինձ թակեն[3] :

4 Եւ նորանք՝ որ նորա մօտն էին՝ ասացին · Կու Ա՛ստուծոյ քա- հանայապետին հայհոյո՞նք ես տա- լիս :

5 Եւ Պօղոսն ասաց · Եղբարք՝ ես չէի գիտում՝ որ քահանայապետ է · հենց գրված է՝ թէ Ա՛ռ ժո- ղովրդի իշխանըն չը հայհոյես[4] :

6 Երբոր Պօղոսն իմացաւ թէ մին կողմն սադուկեցոցն է՝ և մէկէլ կողմըն փարիսեցոցն , տիվանի մէջն ա- ղաղակումէր · Ա՛րդիկ եղբարք՝ ես փարիսեցի եմ՝ և փարիսեցոց որդի[5] · ահա մեռելների յուսոյն՝ և յարութիւն առնելոյն համար ես հիմիկ դատվումեմ[6] :

7 Եւ երբոր էս ասաց , փարի- սեցոց և սադուկեցոց մէջն տարա- ձայնութիւն ընկաւ · և բազմու- թիւնն պատռվեցաւ :

8 Պատճառն որ՝ սադուկեցիքն ա- սումեն , թէ ո՛չ յարութիւն կայ՝ ո՛չ հրեշտակ՝ և ո՛չ հոգի[7] · բայց փարիսեցիքն երկուսըն էլ դաւա- նումեն :

9 Եւ մեծ աղաղակ էլաւ · փա- րիսեցոց կողմին մին քանի կարդա- ցողներ վերկացան , հակառակումէ- ին և ասում · Ա՛ենք իսկի չարու- թիւն չենք գտնում էս մարդումմ[8] · միայն թէ հոգի խօսեց դորանում կամ հրեշտակ[9] :

10 Եւ երբոր խռովութիւնն շա- տացաւ , հազարապետն վախեցաւ՝ որ չըլինի թէ Պօղոսն նորանցից ճեղքվի · զինուորներին հրամայեց՝ որ վեր գան նորան նորանց միջիցն խլեն , և բերեն բանակին (օբպո- ն) մէջ :

11 Եւ յետեւի գիշերումն Տէրն

(1) Կորնթ · իդ · 16 : ա Կորնթ · գ · 4 : բ Կորնթ · ա · 12 · գ · 2 : բ Տիմ · ա · 3 : Եբր · ժգ · 18 : (2) գ Հնոփ · իբ · 24 : Երեմ · ի · 2 : Հովհ · ժը · 22 : (3) Ղևտ · ժթ · 35 · բ Օրին · իե · 1 , 2 : Հովհ · է · 51 : (4) Ելք · իբ · 28 : Հոզ · ժ · 20 : բ Պետր · բ · 10 : Հյոբ · 8 : (5) Կորնթ · իգ · 5 : Փիլպ · գ · 5 : (6) Կորնթ · իդ · 15 · 21 : իգ · 6 · իբ · 20 : (7) Մատթ · իբ · 23 : Մարկ · ժբ · 18 : Ղուկ · ի · 27 : (8) Կորնթ · իե · 25 · իգ · 31 : (9) Կորնթ · իբ · 7 · 17 , 18 :

կանգնեց Նորա մօտն՝ և ասաց • Սըրտապիղծ կաց՝ Պօղէ , ինչու որ՝ ինչպէս ինձ համար Երուսաղէմումն վկայեցիր , էնպէս էլ պէտք է Հռոմումն վկայես[10] :

12 Եւ երբոր առաւօտ ելաւ Հրեաներուն ժողովք արին՝ իրանց անձերին վերայ նզովք դրին , որ չուտեն՝ և չըխմեն , մինչև որ Պօղոսին սպանեն[11] :

13 Եւ քառասուն մարդուց աւելի էին Նորանք՝ որ էս երդումըս իրար հետ արել էին :

14 Նորանք քահանայապետներուն և երէցներուն մօտ եկին՝ և ասացին • Նզովքով նզովեցինք մեր անձնըրս՝ որ ոչ ինչ չուտենք՝ մինչև Պօղոսին սպանենք :

15 Նայց դուք տիվանին հետ իմաց արէք հազարապետին • որ Նորան վեր բերէ ձեզ մօտ • իբր թէ կամենաք էլ աւելի ճշմարտութեամբ Նով բան իմանալ Նորա համար • մենք էլ Նորա մօտ գալուն առաջ՝ պատրաստ ենք՝ որ սպանենք Նորան :

16 Եւ Պօղոսի քրվոր որդին՝ երբոր Նորանց էն արած ընդքներըն լսեց , եկաւ մտաւ էն բանակն (օրդոն) և Պօղոսին պատմեց :

17 Եւ Պօղոս էն հարիւրապետներուն մէրին կանչեց իրան մօտ՝ և ասաց • Նա տղայիս տար հազարապետի մօտն • ինչու որ՝ բան ունի Նորան պատմելոյ :

18 Եւ Նա առաւ Նորան հազարապետի մօտն տարաւ՝ և ասաց • Կապած Պօղոսն ինձ կանչեց՝ և աղաչեց , որ էս տղայիս բերեմ քեզ մօտ , որ մին բան ունի քեզ հետ խօսել :

19 Հազարապետն Նորա ձեռէրն բռնեց • գնաց առանձին տեղ՝ հարցնուռւմը , թէ Ինչ բան ունիս ինձ հետ խօսել :

20 Եւ Նա ասաց • Հրեաներն իրար հետ խօսք դրին՝ որ քեզ աղաչեն , որ էգուց Պօղոսին վերբերես տիվանին մէջ իբրեւթէ կամենան մին աւելի ճշմարիտ քննութիւն անել Նորա համար[12] :

21 Նայց դու մարկ չէ՛ անես Նորանց • պատճառն որ՝ Նորանցից քառասուն մարդուց էլ աւելի հոգնարք են գործել Նորա համար որ անձնէրն էլ նզովեցին՝ որ չուտեն և չըխմեն՝ մինչև որ Նորան սպանեն • հիմիկ էլ պատրաստ են՝ և քո հրամանիդ են սպասում :

22 Հապա հազարապետն էն տղային թող արաւ՝ պատուէր տուաւ , որ իսկի մէրին չասէ , որ էս բանըս իմաց արիր ինձ :

23 Եւ հարիւրապետներիցն երկուսին կանչեց՝ և ասաց • Երկու հարիւր զինուոր պատրաստեցէք , որ գնան մինչև Կեսարիա • և եօթանասուն ձիաւոր՝ և երկու հարիւր էլ տիգաւոր (նզոխաւոր) գիշերի երեք ժամի (սահմէ) ժամանակումըն :

24 Եւ գրաստներ (ոչխարներ) էլ պատրաստեն՝ որ Պօղոսին հետեղ վեր բերեն ապրեցնեն :

25 Եւ փելիքս գաւառապետին թուղթ գրեց , որ Նորա օրինակն էս էր •

26 Կղօդիոս Լիւսիաս՝ պատուական փելիքս գաւառապետիդ , ողջոյն •

27 Էս մարդս Հրեաներուն բռնված՝ և Նորանցից սպանվելոյ մօտ էր • ես զինուորներով վերայ հասի պրծացրի , իմանալով՝ որ Հռոմայեցի է[13] :

28 Ուզեցի որ Նորա յանցանքըն (ոչխարն) իմանամ՝ որ Նորա համար գանգատ էին անում դորանից • վեր բերի դորան՝ Նորանց տիվանն[14] :

29 Էն գտի՝ որ իրանց օրէնքին մին վիճմունքի (հերճմէ) համար

(10) Գործ • ԻԳ • 9 • ԽԵ • 23 , 24 • (11) Վ.Օր • 21 • 30 • ԽԵ • 3 • (12) Վ.Եր • 12 •
(13) Գործ • ԽԱ • 33 • ԽԳ • 7 • (14) Գործ • ԽԲ • 30 •

ամբաստանվածք[15] , և իսկի մեռ-
նելոյ կամ կապվելոյ արժանի յան-
ցանք չունեք[16] :

30 Երբոր իմ ականջս հասաւ՝ որ
նորանք էդ մարդոյդ համար վնարք
են գործել[17]՝ նորան քեզ մօտ ու-
ղարկեցի • և չարախօսներին էլ
հրաման տուի՝ որ դուրանից քո ա-
ռաջից խօսեն[18] • Ո՛ղջ կաց :

31 Եւ գինուորներն նորա հրա-
մանին պէս՝ գիշերուայն Պօղոսին ա-
ռին տարան Անտիպատրիս :

32 Եւ յետևի օրուայն ձիաւորնե-
րին գինուորները՝ որ նորա հետ
գնացել էին , և յետ դարձան բա-
նակն (օրդու) :

33 Նորանք մտին Կեսարիա • և
թուղթերն դատաւորին տուին , և
Պօղոսին էլ նորա առաջին կանգ-
նացրին :

34 Երբոր կարդաց՝ հարցրուց թէ
որ գաւառից է • և երբոր տեղե-
կացաւ թէ Կիլիկիայից է[19] ,

35 Ասաց • Կըլսեմ քեզ՝ երբոր
քո չարախօսներն էլ կըգան[20] • և
հրամայեց՝ որ Հերովդէսի պալատու-
մըն պահեն նորան[21] :

ԳԼ • ԻՊ

1 Պօղոս Տերտիղոս ճարտար խօսող մարդուն չարախօսվելով , 10 Իրան անվեղ կեանքի
և արած վարդապետութեան պատմութիւնն կանէ : 24 Դատաւորի և նորա կնկանն Յիս-
տոսի կըքարոզէ : 26 Պատաւորն Պօղոսից փող կըյուսայ , բայց դատարկ կըլինի նորա
յոյսն : 27 Ա՛ըջն իրան իշխանութենէնից դուրս կընկնի , բայց Պօղոսին կապած կըթողէ :

1 Եւ հինգ օրից ետև[1] Անանիա
քահանայապետն մին քանի ծերերի՛
և մին ճարտար խօսող Տերտիղոս
անուն մարդոյ հետ վէր եկաւ , որ
սորանք էլ իմաց արին դատաւորին՝
Պօղոսի համար[2] :

2 Եւ երբոր նորան կանչեց Տեր-
տիղոսն սկսեց գանգատ անել և
ասել • Որովհետև քեզանից շատ
խաղաղութիւն ենք գտել՝ և էս
ազգիս համար շատ բաների շնոր-
կութիւն քո խնամք տանելովդ :

3 Ամեն կերպով և ամեն տեղ
շատ գոհութենով ընդունակալ ենք՝
քեզանից ով ազնուական Փելիքս :

4 Այլ որ չըլինի թէ էլ աւե-
լի նեղութիւն տամ քեզ , աղա-
չումեմ՝ որ մին քիչ լսես մեզ քո
հեզութենովդ :

5 Պատճառն որ՝ մենք գտինք էս
մարդը՝ որ ապականումէ և խռո-
վացնումէ են ամեն Հրէաներին ,
որ բոլոր աշխարհքումն կան • և
Նազովրեցոց հերձուածի առաջնորդ
է[3] :

6 Որ նա հենց տաճարըն էլ կա-
մեցաւ պղծել • որ էլ նորան բըռ-
նեցինք[4] • և մեր օրէնքին պէս ու-
զեցինք դատաստան անել[5] :

7 Լիսիաս հազարապետն եկաւ՝
և մեծ բռնութենով մեր ձեռների-
ցըս հանեց[6] :

8 Հրամայեց՝ որ նորա չարա-
խօսներն էլ գան քեզ մօտ • որ
հենց դուռ մինել դատաստան անե-
լով կարող ես տեղեկանալ նորանից
ամեն բանի համար՝ որ մենք գան-
գատումենք դորանից[7] :

(15) Դուրս • ժը • 15 : իե • 19 : (16) Դուրս • իգ • 31 : (17) Ա՛ըք • 20 : (18) Դուրս •
իգ • 8 : իե • 6 : (19) Դուրս • իա • 39 : (20) Դուրս • իգ • 1 • 10 : իե • 16 : (21)
Ծագք • իե • 27 : (1) Դուրս • իա • 27 : (2) Դուրս • իգ • 2 • 30 • 35 : իե • 2 : (3)
Ղևտ • իգ • 2 : Դուրս • գ • 13 : ժգ • 20 : ժե • 6 : իա • 28 : ա պէտր • բ • 12 • 15:
(4) Դուրս • իա • 28 : (5) Յովհ • ժը • 31 : (6) Դուրս • իա • 33 : (7) Դուրս • իգ • 30 :

9 Հրեաներն էլ միաբան ելան՝ ասացին Նդպես է ։

10 Պողոսն պատասխան տուաւ՝ երբոր դատաւորն Նորան աչքով արաւ որ խօսի . Գիտեմ որ դու շատ տարուց հետէ էս ազգին դատաւորն ես . (ապա) յօժար սրտով իմ բաներիս համար պատասխան եմ տալիս ։

11 Նչնդու որ՝ դու կարող ես գիտել , որ տասներկու օրից աւելի չէ՝ որ ես եկի երկրպագութիւն առնել Երուսաղէմումն[8] ։

12 Եւ տաճարումն ինձ չեն գրտել՝ որ մին մարդոյ հետ խօսացել եմ , և կամ շատ մարդ մինակդ հաւաքելեմ՝ ոչ ժողովարանումն[9] ։

13 Եւ ոչ քաղաքումն . և չեն կարող քո առաջիդ ցոյց տալ են՝ որ հիմիկ նրաշամար չարախօսումն ինձանից ։

14 Նայց էս եմ խոստանումեմ քեզ , թէ էն ճանապարհովն՝ որ ասումն հերձուած[10] , էնպէս եմ պաշտում հայրենական Նստուծոյն , ամէն բաներին հաւատալով[11] որ օրէնքումն և մարգարէներումն գրըված է[12] ։

15 Նոյս ունիմ դէպի Նստուած , որ դորանք էլ սպասումն Նորան[13] թէ արդարների և մեղաւորների յարութիւն պիտի լինի[14] ։

16 Որ հենց Նորանով ես էլ ջանք եմ անում , որ ամէն ժամ (սաղաւթ) անմեղ խղճմտանք ունենամ Նստուծոյ առաջին՝ և մարդկանց առաջին[15] ։

17 Շատ տարիներից ետև եկի՝ որ իմ ազգիս մէջ ողորմութիւն առնեմ . և պատարագացու տուի[16] ,

18 Որանով ինձ գտին տաճարումն սրբված՝ ոչ շատերով՝ և ոչ էլ ամբոխով (խռնով)[17] ։

19 Մին քանի Նսիացի Հրեաներ՝ որ Նորանց պէտք էր գալ քո առաջիդ՝ և գանգատ անել , թէ որ մին բան ունենան ինձանից[18] ։

20 Եւ կամ հենց սորանք՝ թող ասեն . ինձանում ինչ անիրաւութիւն գտին՝ դեռ քանի որ տիվանումն կայի ։

21 Նայց մինակ էս խօսքիս համար՝ որ երբոր Նորանց միջումն կանգնած էի , աղաղակեցի , թէ Մեռելների յարութիւն առնելոյն համար՝ ես էս օր դատվումեմ ձեզանից[19] ։

22 Եւ Փելիքս Նորանց ուշացրուց՝ ինչու որ՝ շատ լաւ տեղեկացած էր էն ճանապարհին համար , ասաց . Երբոր Լիւսիաս հազարապետն էս տեղ կըգայ , կըտեղեկանամ ձեզ համար[20] ։

23 Հարիւրապետին հրամայեց՝ որ Նորան պահէ . և իրան մարդկանցից իսկի մընին չարգելէ՝ Նորան ծառայութիւն անել[21] ։

24 Եւ մին քանի օրից ետև Փելիքս եկաւ իրան Դրուսիլա կնկանըն հետ՝ որ նա Հրեայ էր . Պօղոսին կանչեց՝ և Նորանից՝ Նիսուսուսի Քրիստոսի հաւատքին համար բան լսեց ։

25 Եւ երբոր նա խօսումէր արդարութեան և պարկեշտութեան և նոր գալու դատաստանին համար , Փելիքս շատ ահով բանըվեցաւ , և պատասխան տուաւ . Դու հիմիկ գնա՝ և երբոր ժամանակ կըլինի , կըկանչեմ քեզ ։

(8) Գաւր • 17 • Դործ • իա • 26 • (9) Դործ • իե • 8 • իը • 17 • (10) Բհվս • բ • 14 • Դործ • ի • 2 • (11) ր Տիմ • ա • 3 • (12) Դործ • իգ • 22 • իը • 23 • (13) Դործ • իգ • 6 • իգ • 6 , 7 • իը • 20 • (14) Դան • ժբ • 2 • Հովհ • ե • 28 , 29 • (15) Դործ • իգ • 1 • (16) Դործ • ժ • 20 , 30 • բ • 16 • Հռովմ • ժե • 25 • բ Կորնթ • բ • 4 • Գաղ • բ • 10 • (17) Դործ • իա • 26 , 27 • իգ • 21 • (18) Դործ • իգ • 30 • իե • 16 • (19) Դործ • իգ • 6 • իը • 20 • (20) Գեր • 7 • (21) Դործ • իե • 3 • իը • 16 •

26 Խայց նա էնպէս յոյս էլ ունէր՝ որ Պօղոսից մին բան տըվվի իրան · և նրաՀամար շատ անգամ կանչուռէր նորան՝ և նորա Հետ խօսուռէր[22] ։

27 Եւ երբոր երկու տարին կատարվեցաւ , փեստոս Պորկիոսն եկաւ փելիքսի տեղն · (և) որովՀետև փելիքս կամեցաւ՝ որ Հրէաներին մին շնորՀք անէ , Պօղոսին կապած թողեց[23] ։

ԳԼ · ԻԵ

2 Հրէաներն Պօղոսին Համար փեստոսի չարախօսութիւն կանեն , 8 Պօղոս իրան Համար պատասխան կըտայ փեստոսի առաջին , 11 Եւ դեպի կայսերն կը բողոքէ (գլուխ Իէ-ին) ։ 14 փեստոս էս բանն Ագրիպպաս Թագաւորին կըպատմէ , 23 Պօղոսին կըբերեն նորանց առաջին ։ 25 Եւ փեստոսն կասէ Թէ նա իսկի մեռնելոյ արժանի բան չէ՛գործել ։

1 փեստոսն երբոր իշխանութեանն՝ Հասաւ , երեք օրից ետև կեսարիայիցն վերելաւ Երուսաղէմ՝ ։

2 Եւ քահանայապետներն և Հրէաների գլխաւորներն Պօղոսին Համար իմացուցին տուին նորան՝ ։

3 Եւ աղաչուռէին՝ էս շնորՀքըս խնդրելով նորանից , որ Երուսաղէմ կանչէ նորան · ինչու որ Հընարք էին գործել՝ որ ճանապարՀումն սպաներն նորան[2] ։

4 Խայց փեստոսն պատասխան տուաւ՝ որ նորան կեսարիայումն կըպահէ · և որ Հենց ինքն էլ շուտով էնտեղ կըգնայ ։

5 Եւ ձեզանից ով որ կարօղ են , ասաց՝ Թող ինձ Հետ գան · և Թէ որ էն մարդումն մին չանցանք կրլինի՝ Թող նորանից գանգատ անեն[3] ։

6 Եւ էնտեղ ութ կամ տասն օրից աւելի չըմնացած՝ վերեկաւ կեսարիա · և յետևի օրումն տիվան նստեց , և Հրամայեց որ Պօղոսին բերեն ։

7 Եւ երբոր եկաւ՝ նորա չորս կողմովը կանգնեցին՝ էն Հրէաներն , որ Երուսաղէմիցն եկել էին · շատ և ծանր յանցանք (սու֊Լ) էին դրնում (նորա վերայ՝) որ չէին կարօղ ցոյց տալ[4] ։

8 Պատճառն որ՝ Պօղոսն պատասխան էր տալիս , Թէ՝ Ո՛չ Հրէաների օրէնքին՝ և ո՛չ կայսերին դէմ մին մեղք եմ գործել[5] ։

9 Խայց փեստոսն՝ որ կամեցաւ Հրէաներին շնորՀք անել , պատասխան տուաւ Պօղոսին՝ և ասաց[6] · կամենո՞ւմես Երուսաղէմ գնալ՝ և էնտեղ էդ բաներիդ Համար դատվիլ իմ առաջիս[7] ։

10 Եւ Պօղոսն ասաց · կայսերի տիվանին եմ Հասած կանգնած , որ էնտեղ պէտք է որ ես դատվիմ · Հրէաներին մին չըկաս չեմ տուել , ինչպէս որ դու էլ լաւ գիտումես ։

7 Կարօղ էինք[14] ինչպէս Քրիստոսի առաքեալներն[15] ծանրութիւն տալ[16], բայց հեզաշոգի եղանք ձեր միջումն՝ մին ծրծամօր պէս, որ ևբեխաներ է մեծացնում[17]։

8 Ընդ էնպէս էլ մենք քաղցր սիրով վարվում էինք ձեզ հետ. ա-խորժ էր ևևում մեզ՝ չէ թէ մենակ Աստուծոյ աւետարանն տալ ձեզ[18], բայց մեր անձներըս էլ, պատճառն որ մեր սիրելիներս էլաք[19]։

9 Յիշեցէք եղբարք՝ մեր աշխատանքըն և ջանքն, որ գիշեր և ցերեկ գործում էինք[20] որ ձեզանից իսկի մէնին ծանրութիւն չըտանք[21]. և Աստուծոյ աւետարանն քարոզում էինք ձեզ։

10 Դուք ինքնին վկայումէք՝ և Աստուած էլ[22], թէ ինչպէս սրբութեամով և արդարութեամով և անարատութեամով վարվեցանք ձեր հաւատացեալներիդ միջումն[23]։

11 Ինչպէս որ էլ գիտումէք. որ ձեզանից ամէն մէկին՝ ինչպէս որ հայր՝ որդիքներին

12 Յորդորում էինք և մխիթարում էինք. և վկայութիւն էինք տալիս՝ որ դուք գնաք, ինչպէս որ Աստուծոյն կըվայելէ[24], որ ձեզ իւրան արքայութեան և փառաց մէջ կանչեց[25]։

13 Նրահամար էլ մենք անպակաս գոհանում ենք Աստուածանից, որ դուք Աստուծոյ խօսքի քարոզութիւնըն մեզանից առած՝ ընդունեցիք[26]. ոչ թէ իբր մարդկանց խօսք, այլ ինչպէս Աստուծոյ ճշմարիտ խօսքն. որ էն էլ յօժողված է ձեզանում՝ հաւատացեալներումդ[27]։

14 Ինչու որ եղբարք՝ դուք նման էլաք Աստուծոյ էն եկեղեցիներին՝ որ Հրէաստանում են Քրիստոս Յիսուսումն[28]. ինչու որ դուք էլ հենց էն չարչարանքովն չարչարվեցաք ձեր ազգականներիցն[29], ինչպէս որ նորանք էլ Հրէաներիցն[30]։

15 Որ նորանք Տէր Յիսուսին էլ սպանեցին[31] և մարգարէներին[32], և մեզ էլ չալածեցին, և Աստուծոյ աչքից դուրս էլան. և ամէն մարդկանց հակառակ կացան[33]։

16 Եւ մեզ էլ արգելումէին, որ չըխօսինք հեթանոսներին՝ որ փրկվին[34]. որ ամէն ժամանակ իրանց մեղքերըն կատարեալ անեն[35]. պատճառն որ հասել է նորանց վերայ բարկութիւնն մինչև վերջն[36]։

17 Բայց մենք եղբարք՝ թէ և մինքիչ ժամանակ ձեզանից որը մնացինք, երեսով և ոչ թէ սրտով[37]. էլ աւելի վառեցինք ձեր երեսդ տեսնելոյ մեծ ցանկութեամով[38]։

18 Ցերաշար ես Պօղոսս մին երկու անգամ՝ կամեցայ՝ որ ձեզ մօտ

(14) ա Կորնթ. թ · 4 · 6 · 12 · 18 · բ Կորնթ. ժ · 1 , 2 · 10 , 11 · ժգ · 10 · բ Թես. գ · 9 · Փիլիպ. 8 , 9 · (15) ա Կորնթ. թ · 1 , 2 · 5 · (16) բ Կորնթ. ժա · 9 · ժբ · 13 , 14 · բ Թես. գ · 8 · (17) ա Կորնթ. բ · 3 · թ · 22 · բ Կորնթ. ժգ · 4 · բ Տիմ. բ · 24 · (18) Հռոմ. ա · 11 · ժե · 29 · (19) բ Կորնթ. ժբ · 15 · (20) Գործ. ի · 34 · ա Կորնթ. գ · 12 · բ Կորնթ. ժա · 9 · բ Թես. գ · 8 · (21) բ Կորնթ. ժբ · 13 , 14 · (22) ա Թես. ա · 5 · (23) բ Կորնթ. է · 2 · բ Թես. գ · 7 · (24) Լուկ. գ · 1 · Փիլիպ. ա · 27 · Կող. ա · 10 · ա Թես. գ · 1 · (25) ա Կորնթ. ա · 9 · ա Թես. ե · 24 · բ Թես. բ · 13 · բ Տիմ. ա · 9 · (26) ա Թես. ա · 2 · (27) Մատթ. ժ · 40 · Գործ. գ · 14 · բ Պետր. գ · 2 · (28) Գործ. ա · 22 · (29) Գործ. ժէ · 5 · 13 · (30) Լուկ. ժ · 33 , 34 · (31) Գործ. բ · 23 · գ · 15 · ե · 30 · է · 52 · (32) Մատթ. ե · 12 · իգ · 34 · 37 · Ղուկ. ժգ · 33 , 34 · Գործ. է · 52 · (33) Լուկ. գ · 8 · (34) Ղուկ. ժա · 52 · Գործ. ժգ · 50 · ժգ · 5 · 18 · ժէ · 5 · 13 · ժը · 12 · ժթ · 9 · իբ · 21 , 22 · (35) Ծննդ. ժե · 16 · Մատթ. իգ · 32 · (36) Մատթ. իգ · 6 · 14 · (37) ա Կորնթ. ե · 3 · Կող. բ · 5 · (38) ա Թես. գ · 10 ·

գամ՝ և Սատանան խափանեց մեզ[38]։
19 Ինչու որ ո՞վ է մեր յոյսն կամ ուրախութիւնն[40] կամ պարծանքի պսակն. եթէ ոչ դուք Տէրուն[41]՝ մեր Յիսուսի Քրիստոսի առաջին նորա գալոյ ժամանակումն[42]։
20 Պատճառն որ դուք էք մեր փառքն և ուրախութիւնն։

Գ՚ · Գ

1 Ընտրեալն իրան նորանց վերայ ունեցած սէրն վկայումՙ՝ նորանք զօրացնելոյ և մխիթարելոյ համար Տիմոթէոսն նորանց ուղարկելովՙ և նորանց հաստատ լինելոյն համար ուրախանումՙ. 10 Մինչև նորանց համար աղաչանքՙ Տէրին՝ որ նորանց մօտ գնալովՙ նորանց հաւատքի պակասութիւնն հասուցանէ։

1 Ուստի պատճառով էլ ա՛ւելի համբերութիւն չունինք[1]՝ որ լաւ երեւեցաւ մեզ՝ որ մենք մենակ մնանք Աթենքումն[2]։
2 Եւ ուղարկեցինք մեր Տիմոթէոս եղբօրըս և Աստուծոյ և Քրիստոսի Ա՛ւետարանի գործընկերին՝ որ ձեզ հաստատէ և մխիթարէ ձեր հաւատքին համար[3]։
3 Որ չըթնջանք էս նեղութիւններումն[4]. ինչու որ հենց դուք էլ գիտումք, որ հենց սրա համար կանգնած ենք[5]։
4 Եւ երբոր ձեզ մօտ էինք՝ առաջուց էինք ասում ձեզ, թէ նեղութիւններ կըհասնեն մեզ վերայ. ինչպէս որ էլ էլաւ՝ և դուք իմացաք[6]։
5 Ուրհամար ես էլ՝ որ համբերութիւն չունէի, ուղարկեցի՝ որ ձեր հաւատքըն գիտենամ[7]. որ չիլինի թէ փորձիչն ձեզ էլ փորձեց[8], և մեր աշխատանքըն դուր լինի[9]։
6 Հայց հիմիկ երբոր Տիմոթէոսն ձեզանից եկաւ մեզ մօտ, և ձեր հաւատքի և սիրոյ աւետիքըն տուաւ մեզ, որ ամէն ժամանակ մեր բարի յիշատակըն մտքումդ ունիք[10]. և ցանկանումք մեզ տեսնել՝ ինչպէս որ մենք էլ ձեզ[11]։
7 Ուրհամար եղբարք՝ մխիթարեցանք ձեզ վերայ էն մեր ամէն վիշտերումն և նեղութիւններումն՝ ձեր հաւատքի ձեռնից[12]։
8 Ինչու որ հիմիկ մենք կենդանի ենք՝ թէ որ դուք հաստատ կենաք Տէրումն[13]։
9 Որ ի՞նչ գոհութիւն կարող ենք տալ Աստուծոյ ձեզ համար՝ էն ամէն ուրախութեան պատճառին, որ ուրախանումենք ձեզ համար մեր Աստուծոյ առաջին[14]։
10 Գիշեր և ցերեկ[15] էլ աւելի աղաչումեմ[16]՝ որ ձեր երեսըն տեսնեմ[17], և ձեր հաւատքի պակասութիւնըն հասուցանեմ[18]։
11 Հայց ինքն Աստուած և մեր Հայրն և մեր Տէր Յիսուս Քրիստոս

(39) Հռոմ. ա. 13։ Ժե. 22։ (40) բ Կորնթ. ա. 14։ Փիլիպ. բ. 16։ գ. 1։ (41) Ընտ. Ժգ. 31։ (42) ա Կորնթ. Ժե. 23։ ա Թես. գ. 13։ Հայտ. ա. 7։ իբ. 12։ (1) Ա՚մար. 5։ (2) Գործ. Ժե. 15։ (3) Հռոմ. Ժգ. 21։ ա Կորնթ. Ժգ. 10։ բ Կորնթ. ա. 19։ (4) Լուկ. գ. 13։ (5) Գործ. թ. 16։ Ժգ. 21։ ի. 23։ իա. 11։ ա Կորնթ. գ. 9։ բ Տիմ. գ. 12։ ա Պետր. բ. 21։ (6) Գործ. ի. 23։ (7) Ա՚մր. 1։ (8) ա Կորնթ. է. 5։ բ Կորնթ. Ժա. 3։ (9) Գաղ. բ. 2։ դ. 11։ Փիլիպ. բ. 16։ (10) Գործ. Ժբ. 1. 5։ (11) Փիլիպ. ա. 8։ (12) բ Կորնթ. ա. 4։ է. 6, 7. 13։ (13) Փիլիպ. գ. 1։ (14) ա Թես. ա. 2։ (15) Գործ. իգ. 7։ բ Տիմ. ա. 3։ (16) Հռոմ. ա. 10, 11։ Ժե. 32։ (17) ա Թես. բ. 17։ (18) բ Կորնթ. Ժգ. 9. 11։ Ղուկ. գ. 12։

բիստոսն՝ շիտակէ մեր ճանապարհըն դէպի ձեզ[19] ։

12 Եւ ինքն Տէրն տայ ձեզ շատանալ և աւելանալ սիրով[20] իրար հետ և դէպի ամէնն , ինչպէս որ մենք էլ դէպի ձեզ[21] ։

13 Որ ձեր սրտերն հաստատուին և անարատ լինին սրբութեամբ Աստուծոյ և մեր Հօր առաջին[22]՝ էն ժամանակումն , որ մեր Տէր Յիսուս Քրիստոսն կըգայ իրան ամէն սրբերովն[23] ։

ԳԼ · Դ

1 Հորդորումէ նորանք որ ամէն կերպ Աստուածպաշտութեան մէջ վառուեն , 6 Սրբութեանալ գնան · 9 Իրար սիրեն · 11 Ամէն մէկն իրան գործ գործէ և աշխատէ · 12 Որ ննջեցեալց համար չըտրտմին ուրիշներին պէս՝ որ յոյս չունին · 15 Ինչու որ Քրիստոսն էլ մեռաւ և յարութիւն առաւ և նորա գաւառնանի համար գալուն վերայ էլ մեր քիչ բան խօսումէ ։

1 Ուրեմն եղբարք՝ աղաչումենք ձեզ՝ և յորդորումենք Քրիստոս Յիսուսումն · որ ինչպէս ընդունեցիք մեզանից[1] , թէ ինչպէս պէտք է ձեզ գնալ[2] և հաճոյ լինել Աստուծոյ[3]՝ ինչպէս որ էլ գնումէք , որ աւելի և աւելի առաջանաք նորա նում ։

2 Եւ գիտումէք՝ թէ ինչպէսի պատուիրանք տուինք ձեզ Տէր Յիսուսումն ։

3 Ինչու որ էս է Աստուծոյ կամքն[4] , ձեր սրբութիւնն[5] · որ դուք յետ կենաք պոռնկութենից[6] ։

4 Եւ ձեզանից ամէն մէկն գիտենայ իրան ամանըն պահել սրբութիւնով և պատուով[7] ։

5 Չէ թէ ցանկութեան յաւերժով[8] , ինչպէս ուրիշ հեթանոսներըն[9] որ Աստուծոյն չեն գիտում[10] ։

6 Չըլինի որ մինն էդ բանումդ չափիցն անցկենայ և իրան եղբօրն զրկէ[11] · ինչու որ Տէրն էդ ամէն բաներիդ վերայ վրէժխնդիր է[12] · ինչպէս որ առաջուց ասացինք ձեզ՝ և վկայութիւն տուինք ։

7 Պատճառն որ Աստուած մեզ չըկանչեց պղծութեան մէջ՝ այլ սրբութեան մէջ[13] ։

8 Ուրեմն նա՝ որ (էս) անարգումէ , ոչ թէ մարդ է անարգում , այլ Աստուծոյն[14]՝ որ էլ Սուրբ Հոգին տուաւ ձեզ[15] ։

9 Նայց եղբայրասիրութեան համար պէտք չէ մին բան գրել ձեզ[16] · ինչու որ դուք ինքներդ Աստուա-

(19) Մատ · ա · 3 : (20) ա Թես · գ · 11 : (21) ա Թես · դ · 9 · ե · 15 : բ Պետր · ա · 7 : (22) ա Կորնթ · ա · 8 : Փիլիպ · ա · 10 : ա Թես · ե · 23 : բ Թես · բ · 16 : ա Հովհ · գ · 20 , 21 : (23) Հուդ · ժգ · 5 : Հռոմ · 14 : (1) Փիլիպ · ա · 27 : Կող · բ · 6 : (2) ա Թես · բ · 12 : (3) Կող · ա · 10 : (4) Հռոմ · ժբ · 2 : Եփես · ե · 17 : (5) Եփես · ե · 27 : (6) ա Կորնթ · գ · 15 · 18 : Եփես · ե · 3 : Կող · գ · 5 : (7) Հռոմ · զ · 19 : ա Կորնթ · զ · 15 · 18 : (8) Հռոմ · ա · 24 · 26 : Կող · գ · 5 : (9) Եփես · գ · 17 , 18 : (10) ա Կորնթ · ժե · 34 : Գաղ · գ · 8 : Եփես · բ · 12 · գ · 18 : բ Թես · ա · 8 : (11) Ղևտ · ժթ · 11 · 13 : ա Կորնթ · զ · 8 : (12) բ Թես · ա · 8 : (13) Ղևտ · ժա · 44 : ժբ · 2 : ա Կորնթ · ա · 2 : Եբր · ժ · 14 : ա Պետր · ա · 15 , 16 : (14) Ղևտ · ժ · 16 : (15) ա Կորնթ · բ · 10 · ե · 40 : ա Հովհ · գ · 24 : (16) ա Թես · ե · 1 :

ծանից սովորած էք[17] իրար սիրել[18]։
10 Որ հենց էդ էլ անումէ էն ամէն եղբարներին՝ որ Աստեղօնացոց ամէն կողմերումն են[19]։ (բայց) աղաչումենք ձեզ եղբայրք՝ որ էլ աւելի աւելանաք և ջանք անէք՝ որ հանդարտ լինիք[20]։
11 Եւ ամէն մէկին իրան գործ գործէք[21]՝ և ձեր ձեռքով աշխատէք[22], ինչպէս որ պատուիրեցինք ձեզ՝ որ պարկեշտաբեմով վարվիք դրսիներին հետ՝ և իսկի մին բանով կարօտ չըլինիք[23]։
12 Ըմէ կամենում եղբայրք՝ որ տգէտ լինիք ննջեցեալոց կողմանէ՝ որ չըտամիք ինչպէս ուրիշներն[24] որ յոյս չունին[25]։
13 Թէ որ հաւատում ենք՝ որ Յիսուս մեռաւ և յարութիւն առաւ[26]՝ հենց էնպէս էլ Աստուած ննջեցեալներին Յիսուսի ձեռով կըբերէ նորա հետ[27]։
14 Ասայ էս ենք ասում Տէրի խօսքովն[28], թէ մենք՝ որ կենդանի մնացած ենք մինչև Տէրի գալն, ննջեցեալներիցն չենք առաջանալ[29]։
15 Ինչու որ ինքն Տէրն հրամանովն, հրեշտակապետի ձայնովն[30] և Աստուծոյ փողովն վերկրգայ երկընքիցն[31]։ և Քրիստոսով մեռելներն առաջ յարութիւն կառնեն[32]։
16 Ընտայ մենք էլ որ կենդանի ենք մնացած[33], նորանց հետ միասեղ ամպերով օդի (հաւային) մէջն կըյափշտակվինք Տէրի առաջն[34]։ և էնպէս ամէն ժամանակ Տէրին հետ կըլինինք[35]։
17 Ուրեմն իրար մխիթարեցէք էս խօսքերովս[36]։

ԳԼ · Ե

1 Քրիստոսի գաստատան գալոյ պատմութիւն կանէ, 16 Եւ կերպ կերպ խրատներ կըտայ, 23 Աղաչէս իրան Թեսղէն կըմկրջացնէ։

1 Բայց ժամերին (սահմանները) և ժամանակներին համար եղբայրք[1] պէտք չէ որ գրեմ ձեզ[2]։
2 Ինչու որ դուք ինքներդ հաստատ գիտումէք, թէ Տէրի օրն ինչպէս գիշերվան գողն՝ էնպէս կըհասնէ[3]։
3 Երբոր կասեն թէ խաղաղութիւն և շինութիւն է, էն ժամանակն յանկարծակի կորուստն կը-

(17) Երեմ · ա · 31 · Հովհ · գ · 15 · ժգ · 26 · Երբ · բ · 11 · ա Հովհ · բ · 20 · 27 · (18) Աշարհ · իբ · 39 · Հովհ · ժգ · 34 · ժե · 12 · Երէս · ե · 2 · ա Պետր · գ · 8 · ա Հովհ · գ · 11 · 23 · դ · 21 · (19) ա Թես · ա · 7 · (20) ա Թես · գ · 12 · (21) բ Թես · գ · 11 · ա Պետր · դ · 15 · (22) Պորձ · ք · 35 · Երէս · գ · 28 · բ Թես · գ · 7, 8 · 12 · (23) Էֆես · ժգ · 13 · բ Կորնթ · բ · 21 · Կող · գ · 5 · ա Պետր · բ · 12 · (24) Ղևտ · ժթ · 28 · բ Օրին · ժգ · 1, 2 · բ Թես · ժբ · 20 · (25) Երէս · բ · 12 · (26) ա Կորնթ · ժե · 13 · (27) ա Կորնթ · ժե · 18 · 23 · ա Թես · գ · 13 · (28) գ Թես · ժգ · 17, 18 · ի · 35 · (29) ա Կորնթ · ժե · 51 · (30) Աշարհ · իգ · 30, 31 · Պորձ · ա · 11 · բ Թես · ա · 7 · (31) ա Կորնթ · ժե · 52 · (32) ա Կորնթ · ժե · 23 · 52 · (33) ա Կորնթ · ժե · 51 · (34) Պորձ · ա · 9 · Հայտ · ժա · 12 · (35) Հովհ · ժբ · 26 · ժգ · 3 · ժէ · 24 · (36) ա Թես · ե · 11 · (1) Աշարհ · իգ · 3 · 36 · Պորձ · ա · 7 · (2) ա Թես · գ · 9 · (3) Աշարհ · իգ · 43, 44 · իե · 13 · Ղևտ · ժժ · 39, 40 · բ Պետր · գ · 10 · Հայտ · գ · 3 · ժգ · 15 ·

Հասնէ Նորանց վերայ[4] ինչպէս որ ցաւն յղացածին վերայ , և խնկի չեն պրծնիլ[5] :

4 Այլ դուք եղբարք՝ չէք խաւարումն , որ էն օրն ինչպէս գող ձեզ վերայ հասնէ[6] :

5 Ինչու որ՝ դուք ամենքդ լուսոյ որդիք էք՝ և ցերեկի որդիք , գիշերին չենք՝ խաւարին չենք[7] :

6 Պա ուրեմն չըլինի որ քընի մէջ քննինք ուրիշներին պէս[8] , բայց արթուն և զարթուն լինինք[9] :

7 Պատճառն որ՝ Նորանք՝ որ քընանում՝ գիշերն են քնում[10] , և Նորանք՝ որ հարբենում՝ գիշերն են հարբենում[11] :

8 Այլ մենք որ ցերեկի ենք՝ արթուն լինինք , և հաւատքի և սիրոյ զրահըն հագնենք , և փրկութեան յուսոյ սաղաւարտըն (գլխուխըն) դնենք[12] :

9 Ինչու որ՝ Աստուած մեզ բարկութեան համար չըզրաւ[13] , բայց որ փրկութենով կենդանի լինինք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռնէն[14] :

10 Որ նա մեզ համար մեռաւ , որ թէ արթուն լինինք՝ և թէ քնենք , Նորա հետ ապրինք[15] :

11 Սրահամար իրար մխիթարեցէք , և իրար շինեցէք՝ ինչպէս որ էլ անում էք[16] :

12 Աղաչումենք ձեզ եղբարք՝ որ ճանաչէք ձեր աշխատաւորներին և վերակացուներին Տէրումն , և ձեր խրատօղներին էլ[17] :

13 Եւ Նորանց աւելի սիրոյ արժանի համարեցէք իրանց գործքին համար . իրար հետ խաղաղութեամբ վարվեցէք[18] :

14 Աղաչումենք ձեզ եղբարք՝ խրատեցէք քուռերին[19] , մխիթարեցէք թուլասրտներին[20] , օգնական էլէք տկարներին[21] , երկայնամիտ էլէք ամենին հետ[22] :

15 Ոգոյշ կացէք՝ որ չըլինի թէ մինն չարին չար հատուցանէ[23] , բայց ամեն ժամանակ բարոյն հետևեցէք՝ իրար հետ և ամենին հետ[24] :

16 Ամեն ժամանակ ուրախ էլէք[25] :

17 Աղաղար աղօթք արէք[26] :

18 Ամեն բանի մէջ գոհացէք . ինչու որ էս է Աստուծոյ կամքն ձեզ վերայ՝ Քրիստոս Յիսուսումն[27] :

19 Հոգին մի անգնէք[28] :

20 Մարգարէութիւնները մի անարգէք[29] :

(1) Ղուկ . ժգ . 6—8 : Գործ . ժէ . 27 , 28 , 29 : Ա . Կոր . ա . 34 , 35 : Բ Թես . ա . 9 : (5) Երեմ . ժգ . 21 : Եսայ . ժգ . 13 : (6) Հռոմ . ժգ . 12 , 13 : Ա Յովհ . բ . 8 : (7) Եփես . ե . 8 : (8) Մատթ . իե . 5 : (9) Մատթ . իդ . 42 : իե . 13 : Հռոմ . ժգ . 11—13 : Ա Պետր . ե . 8 : (10) Գործ . իա . 34 . 36 : Հռոմ . ժգ . 13 : Ա Կորնթ . ժե . 34 : Եփես . ե . 14 : (11) Կոչ . բ . 15 : (12) Ղուկ . ծթ . 17 : Եփես . զ . 14 . 16 , 17 : (13) Հռոմ . թ . 22 : Ա Թես . ա . 10 : Ա Պետր . բ . 8 : Յուդ . 4 : (14) Բ Թես . 12 , 13 : (15) Հռոմ . ժգ . 8 , 9 : Բ Կորնթ . ե . 15 : (16) Ա Թես . դ . 17 : (17) Ա Կորնթ . ժգ . 18 : Փիլիպ . բ . 29 : Ա Տիմ . ե . 17 : Եբր . ժգ . 7 . 17 : (18) Մարկ . թ . 49 : (19) Բ Թես . դ . 11 , 12 : (20) Եբր . ժբ . 12 : (21) Հռոմ . ժգ . 1 : ժե . 1 : Գործ . զ . 1 , 2 : (22) Գործ . ե . 22 : Եփես . դ . 2 : Կող . դ . 12 : Բ Տիմ . դ . 2 : (23) Ղևտ . ժծ . 18 : Առակ . բ . 22 : իդ . 29 : Մատթ . ե . 39 . 44 : Հռոմ . ժբ . 17 : Ա Կորնթ . զ . 7 : Պետր . դ . 9 : (24) Գործ . զ . 10 : Ա Թես . դ . 12 : (25) Բ Կորնթ . զ . 10 : Փիլիպ . դ . 4 : (26) Ղուկ . ժբ . 1 : իա . 36 : Հռոմ . ժբ . 12 : Եփես . զ . 18 : Կող . դ . 2 : Ա Պետր . դ . 7 : (27) Եփես . ե . 20 : Կող . դ . 17 : (28) Ա Կորնթ . ժգ . 30 : Եփես . դ . 30 : Ա Տիմ . դ . 14 : Բ Տիմ . ա . 6 : (29) Ա Կորնթ . ժգ . 1 . 39 :

21 Ընդ ամենն բան փորձեցէ՛ք[30], (և) բարին ընդունեցէ՛ք[31]։
22 Ընդ ամենն չար բաներից հեռու կացէ՛ք[32]։
23 Եւ ինքն խաղաղութեան Աստուածն[33] ձեզ սուրբ անէ ամեն կերպով[34]. և ձեր ոգին և շունչն և մարմինն՝ անարատ պահվի մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գալն[35]։
24 Հաւատարիմ է նա՝ որ կանչէց ձեզ, որ հենց էն էլ կանէ[36]։
25 Եղբարք՝ աղօթիք արէք մեզ վերայ էլ[37]։
26 Ողջոյն տուէք ամեն եղբարներին սուրբ համբուրովն[38]։
27 Երդում եմ տալիս ձեզ Տէրուն՝ որ այս թուղթը ամեն սուրբ եղբարների առաջին կարդաք[39]։
28 Մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհն ձեզ հետ (լինի)։ Ամէն[40]։

Թէսաղոնիկեցոց վերջի առաջին նամակն գրվեցաւ։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Պօղոս հաստատումէ իրան լաւ կարծիքըն որ ունէր նորանց հաւատքի, սիրոյ, և համբերութեան վերայ, 5 Որ ինչէ կերպ կերպ պատճառներ բերումէ իրանց հալածանքի մէջ մխիթարութիւն լինելոյ համար, որ Աստուած իրան արդար դատաստանով արժանի կանէ նորանք իրան արքայութեանն որ նորա համար էլ նեղութիւն են քաշում։

1 Պօղոս և Սիղուանոս և Տիմոթէոս[1] Թեսաղոնիկեցոց եկեղեցոյդ՝ Աստուած մեր Հօրումն և Տէր Յիսուս Քրիստոսումն[2]։
2 Շնորհք (լինի) ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրից՝ և Տէր Յիսուս Քրիստոսից[3]։
3 Պէտք է մեզ որ ամեն ժամանակ Աստուծոյ գոհութիւն տանք ձեզ համար եղբարք՝ ինչպէս որ էլ արժան է. ինչու որ ձեր հաւատքըն առաջանալով մեծանում, և ձեր ամեն մէկի սէրն աւելանում իրար վերայ[4]։
4 Մինչև որ մենք էլ ձեզանով պարծենումենք Աստուծոյ եկեղեցի-

(30) ա Կորնթ. բ. 11. 15։ ա Յովհ. գ. 1։ (31) Փիլիպ. գ. 8։ (32) ա Թես. գ. 11։ (33) Փիլիպ. գ. 9։ (34) ա Թես. գ. 13։ (35) ա Կորնթ. ա. 8։ (36) ա Կորնթ. ա. 9։ ժ. 13։ բ Թես. գ. 3։ (37) Կող. գ. 3։ բ Թես. գ. 1։ (38) Հռով. ժգ. 16։ (39) Կող. գ. 16։ բ Թես. գ. 14։ (40) Հռով. ժգ. 20. 24։ բ Թես. գ. 18։ (1) բ Կորնթ. ա. 19։ (2) ա Թես. ա. 1։ (3) ա Կորնթ. ա. 3։ (4) ա Թես. ա. 2, 3։ գ. 6. 9։ բ Թես. բ. 12։

ներումն[5] ձեր համբերութեան և հաւատքին համար[6] էն ձեր ամէն հալածանքներումն և նեղութիւններումն, որ դուք համբերումէք[7] :

5 Որ էն՝ Աստուծոյ արդար դատաստանի նշան է • որ դուք արժանի լինիք Աստուծոյ արքայութեան[8], որ նորա համար էլ նեղութիւն էք քաշում[9] :

6 Որ պէտք է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ նեղացնողներին նեղութիւն հատուցանէ[10] :

7 Եւ ձեզ նեղացածներիդ հանգիստ մեզ հետ[11]՝ երբոր Տէր Յիսուսն կը յայտնվի երկնքիցն իրան զօրութեան հրեշտակներովն[12] :

8 Կրակի բոցով վրէժ առնելոյ նորանցից[13]՝ որ Աստուծոյն չեն ճանաչում[14], և մեր Տէր Յիսուսի աւետարանին չեն ընդունդումա[15] :

9 Որ նորանք պատիժ կրքաշեն յաւիտենական կորուստըն՝ Տէրի երեսից[16] և նորա փառաւոր զօրութենից[17] :

10 Երբոր կըգայ՝ որ փառաւոր լինի իրան սըրբերումն[18], և զարմանալի ամէն հաւատացեալներումն • որ մեր վկայութիւնն որ ձեզ արինք՝ հաւատարիմ կըլինի էն օրումն[19] :

11 Որ ես պատճառովս էլ ամէն ժամանակ աղօթք ենք անում ձեզ համար, որ Աստուած ձեզ արժանի անէ ձեր կոչումին[20]՝ մինչև որ կատարէ ամէն բարի հաճոյութիւնըն, և հաւատքի գործքերըն զօրութեամբ[21] :

12 Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունն փառաւոր լինի ձեզանում[22]՝ և դուք նորանում, մեր Աստուծոյ և Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքին պէս :

ԳԼ • Ր

1 Ընդհանուր նորանց որ իրանց սովորած ճշմարտութենիցն չըշարժվին, 3 Նշ ցոյց կըտայ որ հաւատքից մոլորացնող մարդ է գալիս, 9 Նշ Աստուած պիտի յայտնվի Տէրի օրն լինկած • 12 Մինակ իրան առաջի արած յորդորմունքն յիշեցնել նորանց համար աղօթք կանէ :

1 Ընդհանուր ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գալոյն[1], և մեր նորա մօտ ժողովվելոյն համար[2] :

2 Ըրլինի թէ դուք շուտով շարժվիք ձեր մտքիցն՝ և մի զարհուրիք, ոչ հոգով և ոչ խօսքով՝ և ոչ թըղթերով՝ իբր թէ մեզանից (գրած)[3] • ինչպես թէ Տէրի օրն եկած հասած լինի :

3 Ընդլինի որ մինն խաբէ ձեզ՝ և իսկի մին բանով էլ[4] • պատճառն որ (նա չի գալ) եթէ ոչ առաջ գայ էն ապստամբութիւնն[5], և յայտնըվի անօրէնութեան մարդն[6] կորուսաի որդին[7] ,

(5) բ Կորնթ • է • 14 = թ • 2 : ա Թես • բ • 19 , 20 = (6) ա Թես • ա • 3 : (7) ա Թես • բ • 14 : (8) Փիլիպ • ա • 28 : (9) ա Թես • բ • 14 : (10) Հայտ • գ • 10 : (11) Հայտ • ժգ • 13 : (12) ա Թես • գ • 15 : Հայտ • 14 : (13) Ներ • ժ • 27 : ժբ • 29 • բ Պետր • գ • 7 : Հայտ • իա • 8 : (14) Սաղմ • հթ • 6 : ա Թես • դ • 5 : (15) Հռոմ • բ • 8 : (16) Փիլիպ • գ • 19 : բ Պետր • գ • 7 : (17) բ Օրին • լէ • 2 : Նահայ • բ • 19 : բ Թես • բ • 8 : (18) Սաղմ • ձթ • 7 : (19) Սաղմ • կը • 35 : (20) Ալէք • 5 : (21) ա Թես • ա • 3 : (22) ա Պետր • ա • 7 : գ • 14 : (1) ա Թես • գ • 15 : (2) Մատթ • իգ • 31 : Մարկ • ժգ • 27 : ա Թես • գ • 16 : (3) Մատթ • իգ • 4 : Եփես • ե • 6 : ա Հովհ • գ • 1 : (4) Մատթ • իգ • 4 : Եփես • ե • 6 : (5) ա Տիմ • գ • 1 : (6) Դան • է • 25 : ա Հովհ • բ • 18 : Հայտ • ժգ • 11 , Լայտ : (7) Հովհ • ժէ • 12 :

4 Այն հակառակօղն՝ որ գոռոզացած է[8] էն ամէնին վերայ, որ Աստուած՝ կամ Աստուծոյ պաշտօն անուանված է · մինչև որ նա Աստուծոյ տաճարի մէջ կըննստի, և իրան անձըն ցոյց կըտայ՝ թէ Աստուած է[9] :

5 Չէք յիշուի՝ որ (ես) դեռ քանի որ հենց ձեզ մօտ էի՝ էս բանըս ասումէի :

6 Եւ հիմիկ դուք ինքներդ գիտումէք էն՝ որ խափանումէ, որ նա իրան ժամանակումն յայտնըվի :

7 Ինչու որ անօրէնութեան խորհուրդն հենց հիմիկ զօրանումէ[10] · միայն թէ մինչև էն ժամանակն որ մէջ տեղեն վերառնըվի նա՝ որ հիմիկ խափանումէ :

8 Եւ ապա կըյայտնըվի էն անօրէնն՝ որ Տէր Յիսուսն կըսատակէ[11] իրան բերանի հոգովն[12], և կրխափանէ իրան գալըստեանովն[13] :

9 Որ էն (անօրէնի) գալն Սատանայի ներգործութենիցն է[14], ամէն զօրութենով և սուտ նշաններով և հրաշքներով[15] ·

10 Եւ ամէն անիրաւութեան խաբեպայութիւններով նորանց վերայ՝ որ կորած են[16] · Նրահամար որ ճշմարտութեան սէրըն չընդունեցին՝ որ ապրին · հենց նրահամար Աստուած մոլորութեան ներգործութիւնըն կուղարկէ նորանց[17]՝ որ հաւատան սուտութեան[18] :

11 Որ դատապարտվին ամէնքն՝ որ չըհաւատացին ճշմարտութեան, բայց հաւան կացան անօրէնութեան[19] :

12 Նայց մենք պէտք է որ ամէն ժամանակ Աստուածանից գոհանանք ձեզ համար[20]՝ Տէրիցն սիրվածք եղբայրք, որ Աստուած սկզբիցն[21] ընտրեց մեզ՝ որ փրկութիւն ստանանք Հոգւոյ սրբութենովն՝ և ճշմարիտ հաւատքովն[22] :

13 Որ նորա մէջ ձեզ էլ կանչեց՝ մեր աւետարանովն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի փառաւոր փրկութեան մէջ[24] :

14 Ուրեմն եղբայրք՝ հաստատ կացէք[25], և պինդ բռնեցէք էն աւանդութիւններն՝ որ սովորեցիք, թէ խօսքով և թէ մեր թղթով[26] :

15 Նայց ինքն մեր Տէր Յիսուս Քրիստոսն և մեր Հայր Աստուածըն[27], որ սիրեց մեզ՝ և յաւիտենական մխիթարութիւն տուաւ մեզ[28]՝ և բարի յոյս շնորհքով[29],

16 Նա մխիթարէ ձեր սրտերըն՝ և ամէն բարի խօսքերի և գործքերի մէջ հաստատէ[30] :

(8) նոյ · ժգ · 13 : նղի · իբ · 2 · 6 · 9 : Դան · է · 25 : ժա : 36 : Հայր · ժգ · 6 : (9) ա կորնթ · բ · 5 : (10) ա Հովհ · բ · 18 : գ · 3 : (11) Դան · է · 10, 11 : (12) Հոբ · գ · 9 : նոյ · ժա · 4 ; Եսայ · Ի՞նչ · ը · 5 : Հայր · բ · 16 : ժԹ · 15 · 20, 21 : (13) բ Թես · ա · 8, 9 : նբր · ժ · 27 : (14) Հովհ · ը · 41 · 44 : Նէեմ · բ · 2 : Հայր · ժը · 23 : (15) բ Օրին · ժգ · 1 : Մատթ · իգ · 24 : Հայր · ժգ · 13 · ժԹ · 20 : (16) բ կորնթ · բ · 15 · գ · 3 : (17) գ Թագ · իբ · 22 : նղի · ժգ · 9 : Հռոմ · ա · 24, Եսայ · : (18) Մատթ · իգ · 5 · 11 : ա Տիմ · գ · 1 : (19) Հռոմ · ա · 32 : (20) բ Թես · ա · 3 : (21) Նէեմ · ա · 4 : (22) ա Թես · ա · 4 : (23) Դան · ա · 75 : ա Պետր · ա · 2 : (24) Հովհ · ժե · 22 : ա Թես · բ · 12 : ա Պետր · ե · 10 : (25) ա կորնթ · ժգ · 13 : Փիլիպ · գ · 1 : (26) ա կորնթ · ժա · 2 : բ Թես · գ · 6 : (27) բ Թես · ա · 1, 2 : (28) ա Հովհ · գ · 10 : Հայր · ա · 5 : (29) ա Պետր · ա · 3 : (30) ա կորնթ · ա · 8 : ա Թես · գ · 13 : ա Պետր · ե · 10 :

ԳԼ • Գ

1 Առաքեալն իրանց համար նորանցից աղօթք խնդրումէ • 4 Նորանց վերայ իրանց վստահութիւնըն յայտնումէ, 5 Նորանց համար Աստուծոյ աղաչանք կանէ, 6 Պատուիրումէ նորանց որ յետ քաշվին ամէն անկարգութիւնով վարվող եղբարներից, 14 Եւ չբախառնվին էն մարդոյն հետ՝ որ չընդազանդվիր առաքեալի խօսքին։

1 Ա‚յսուհետև եղբարք՝ աղօթք արէք մեզ վերայ, որ Աստուծոյ խօսքըն առաջանայ, և ամէն տեղ փառաւոր լինի՝ ինչպէս որ էլ ձեզ մօտ[1]։

2 Որ փրկվինք անօրէն և անըզգամ մարդկանց ձեռքից[2]• ինչու որ հաւատքն ամէնի բան չէ[3]։

3 Բայց Տէրն հաւատարիմ է, որ էլ կըՏաստատէ ձեզ[4] և էն չարից կըպահէ[5]։

4 Վստահութիւն ունինք ձեզ վերայ Տէրով, որ էն որ պատուիրեցինք ձեզ՝ էլ անումէք և էլ կանէք[6]։

5 Բայց Տէրն շիտակէ ձեր սրտերըն դէպի Աստուծոյ սէրն՝ և դէպի Քրիստոսի համբերութիւնն[7]։

6 Պատուիրումէմ ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունովն, որ յետ քաշվիք[8] ամէն եղբարներից[9], որ անկարգութեանով են վարվում[10]• և չէ թէ էն պատուիրանքին պէս՝ որ ընդունեցիք մեզանից[11]։

7 Ինչու որ դուք ինքներդ գիտումէք՝ թէ ինչպէս պէտք է ձեզ՝ որ մեզ նմանօղ լինիք[12]• որ ձեզ մօտ իսկի անկարգութեանով չըվարվեցանք[13]։

8 Եւ էլ ձրի (Ա–ֆրաս) իսկի մընի հացըն չըկերինք, բայց ջանքով և աշխատանքով գիշեր և ցերեկ գործումէինք՝ որ ձեզանից իսկի մընին ծանրութիւն չըտանք[14]։

9 Ոչ թէ որ իշխանութիւն չունինք[15]• բայց որ մեր անձներըս օրինակ տանք ձեզ՝ որ մեզ նմանօղ լինիք[16]։

10 Ինչու որ երբոր հենց ձեզ մօտ էինք՝ էս էինք պատուիրում• թէ նա որ չըկամենայ գործել՝ թող էլ չուտէ[17]։

11 Բայց ձեզանից մինքանիսին համար լսումենք՝ որ անկարգութեանով են վարվում[18]• մին բան չեն գործում, բայց ծուլացած հետաքրքիր մանն են գալիս[19]։

12 Ինչպիսիներին պատուիրումենք՝ և աղաչումենք Տէր Յիսուս Քրիստոսումէ[20], որ հանդարտութեանով աշխատեն՝ և իրանց հացըն ուտեն[21]։

13 Բայց դուք եղբարք՝ մի ձանձրանաք բարիք գործելուցն[22]։

14 Ապա թէ որ մինն չէնազանդվի

(1) Ղեվ • Ջ • 19 ։ Կող • դ • 3 ։ ա Թես • ե • 25 ։ (2) Հռով • ժե • 31 ։ (3) Կորնթ • իը • 24 ։ Հռով • ժ • 16 ։ (4) ա Կորնթ • ա • 9 ։ ա Թես • ե • 24 ։ (5) Հովհ • ժե • 15 ։ բ Պետր • բ • 9 ։ (6) բ Կորնթ • է • 16 ։ Կող • ե • 10 ։ (7) ա Տնաշ • իթ • 18 ։ ա Թես • ա • 3 ։ (8) Հռով • ժզ • 17 ։ Ա‚յր • 14 ։ ա Տիմ • Ջ • 5 ։ բ Հովհ • 10 ։ (9) ա Կորնթ • ե • 11 • 13 ։ (10) ա Թես • դ • 11 ։ ե • 14 ։ Ա‚յր • 11, 12 • 14 ։ (11) բ Թես • բ • 14 ։ (12) ա Կորնթ • դ • 16 • ժա • 1 ։ ա Թես • ա • 6, 7 ։ (13) ա Թես • բ • 10 ։ (14) Կորնթ • ժբ • 3 ։ բ • 34 ։ բ Կորնթ • ժա • 9 ։ ա Թես • բ • 9 ։ (15) ա Կորնթ • թ • 6 ։ ա Թես • բ • 6, 7 ։ (16) Ա‚յր • 7 ։ (17) Ընծա • դ • 19 ։ ա Թես • դ • 11 ։ (18) Ա‚յր • 6 ։ (19) ա Թես • դ • 11 ։ ա Տիմ • ե • 13 ։ ա Պետր • դ • 15 ։ (20) ա Թես • դ • 11 ։ (21) Ղեվ • դ • 28 ։ (22) Կող • Ջ • 9 ։

մեր խօսքիս եդ թղթոյդ, դուք նը-
շանեցէք նորան. և մի՛ խառնըվիք
նորա հետ՝ որ ամաչէ[23] :
15 Ասյց թշնամոյ պէս մի՛ համա-
րէք (նորան)[24], այլ խրատեցէք նո-
րան ինչպէս եղբայր[25] :
16 Եւ ինքն խաղաղութեան Տէրն՝
տայ ձեզ խաղաղութիւն ամէն ժա-
մանակ, և ամէն բանի մէջ. Տէրն
ձեզ ամէնիդ հետ (լինի)[26] :
17 Ողջոյնս իմ Պօղոսիս ձեռինն
է, որ նշան է ամէն թղթերուս
մէս. էսպէս եմ գրում[27] :
18 Ա՛ՀԵր Տէր Յիսուսի Քրիստո-
սի շնորհքն ձեզ ամենիդ հետ լինի՛.
ամէն[28] :

Թէսողոնիկեցոց վերայ երկրորդ (նամակ) ընդհատ ժողովոյն գրվեցաւ :

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔՒՆԱՑՈՑ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԴԱՍԻՒՍ ԸՆԿԱՅԻՆ

**3 Պօղոս յիշեցում է տալիս Տիմոթէոսին իրան պատուէրն որ Մակեդոնիա գնացած ժամանակն նորա արաւ. 5 կըհասատատէ թէ օրէնքի գլուխն՝ սէրն է, և նա բարի է՝ թէ որ մինն օ-
րինաւոր կերպով վարէ նորան : 11 Պօղոսի հաւատարիմ լինելն աւետարանին, 20 Հիմե-
նոսի և Աղէքսանդրոսի պատմութիւնն :**

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիս-
տոսի առաքեալ՝ մեր Փրկիչ Աստու-
ծոյ՝ հրամանովն[2] և Յիսուս Քրը-
իստոսի մեր յուսոյն[3] .
2 Տիմոթէոսի[4] սիրելի որդւոյս հա-
ւատովք[5]. շնորհք՝ ողորմութիւն՝
և խաղաղութիւն (լինի) Աստուած
Հօրիցն և մեր Տէր Յիսուս Քրը-
իստոսիցն[6] :
3 Ինչպէս որ աղաչեցի քեզ՝ որ
Եփեսոսումն մնաս՝ երբոր ես գնու-
մէի Մակեդոնիա[7]. որ պատուիրես
մին քանիսին՝ որ օտար ուսմունք չը-
սովորցնեն[8] :
4 Եւ միտիկ չըտան առասպել բա-
ներին և ազգաւհամարներին[9], որ չար

(23) Մատ. ժբ. 17 : ա Կորնթ. ե. 9. 11 : Ա Յհ. 6 : (24) Ղևտ. ժթ. 17 : ա Թես. ե. 14 : (25) Տիտ. գ. 10 : (26) Հռով. ժե. 33 : ժշ. 20 : ա Կորնթ. ժգ. 33 : բ Կորնթ. ժգ. 11 : ա Թես. ե. 23 : (27) ա Կորնթ. ժշ. 21 : Կող. գ. 18 : (28) Հռով. ժշ. 24 : (1) ա Տիմ. բ. 3 : գ. 10 : Տիտ. ա. 3 : բ. 10 : գ. 5 : Հեբր. 25 : (2) Գործ. թ. 15 : Գաղ. ա. 1. 12 : (3) Կող. ա. 27 : (4) Գործ. ժշ. 1 : ա Կորնթ. գ. 17 : Փիլիպ. բ. 19 : ա Թես. գ. 2 : (5) Տիտ. ա. 4 : (6) Գաղ. ա. 3 : բ Տիմ. ա. 2 : ա Պետր. ա. 2 : (7) Գործ. ի. 1. 3 : Փիլիպ. բ. 24 : (8) Գաղ. ա. 6, 7 : ա Տիմ. զ. 3. 10 : (9) ա Տիմ. գ. 7 : զ. 4. 20 : բ Տիմ. բ. 14. 16. 23 : Տիտ. ա. 14 : գ. 9 :

չունին, որ աւելի վիճաբանութիւնները են գրգռում, և չէ թէ Աստուծոյ տնտեսութիւնն՝ որ հաւատքով է[10]:

5 Ինչու որ պատուիրանքի գլուխն՝ սէրն է[11], սուրբ սրտից, և բարի մտքից, և անկեղծ հաւատքից[12]:

6 Որ մին քանիսն նորանցից թեքվեցան՝ և ունայն բանների ետևէն գնացին[13]:

7 Կամենումն օրէնքի վարդապետ լինել, և իրանք չեն իմանում թէ ինչ են խօսում, և ոչ էլ են բանները՝ որ նորանց հետևումն[14]:

8 Վ/իտումնք՝ որ օրէնքն բարի է, թէ որ մինն օրինաւոր կերպով վարէ նորան[15]:

9 ԵՒայց էս պէտք է գիտենայ՝ որ արդարներին վերայ օրէնք չըկայ[16], բայց անօրէններին, անընաղանդներին, ամպարիշտներին, մեղաւորներին, անսուրբներին, պիղծերին, հօր և մօր անարգողներին, մարդ սպանողներին,

10 պոռնիկներին, արուագէտներին, մարդգողացօղներին, սուտ ասողներին, սուտ երդում ուտօղներին վերայ. և թէ որ ուրիշ բան կայ՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեանն[17]:

11 Որ երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին պէս է[18], որ ես հաւատարիմ էլայ նորան[19]:

12 Շնորհակալ եմ նորանից՝ որ զօրացրուց ինձ մեր Տէր Յիսուս Քրիստոսումն[20]. որ ինձ հաւատարիմ համարեց[21] և սպասաւորութեան մէջ դրաւ[22]:

13 Որ ես առաջուց հայհոյօղ և հալածօղ և թշնամանօղ էի[23]. բայց ողորմութիւն գտի, ինչու որ տգիտութենով և անհաւատութենով էի գործում էն[24]:

14 ԵՒայց էլ աւելի շատ էլաւ մեր Տէրի շնորհքն[25] հաւատքովն[26] և սիրովն[27], որ Քրիստոս Յիսուսումն է:

15 Ճշմարիտ է էս խօսքս՝ և ամեն կողմանէ արժանի է ընդունվելոյ[28]. որ Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ մեղաւորներն փրկելու, որ նորանց գլխաւորն ես եմ[29]:

16 ԵՒայց նրահամար (ես) ողորմութիւն գըտի[30], որ առաջ ինձանում Յիսուս Քրիստոս ցոյց տայ ամեն երկայնմտութիւնն՝ որ օրինակ լինի նոյանց՝ որ հաւատալու են նորան յաւիտենական կեանքն (ստանալոյ) համար[31]:

17 ԵՒայց յաւիտենական թագաւորին[32] էն անապականելոյն[33] և աներևութին[34], էն մին Աստուծոյն[35] (լինի) փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից[36]. ամէն:

(10) ա Տիմ. ա. 4: (11) Հռով. ժգ. 8 - 10: Գաղ. ե. 14: (12) բ Տիմ. բ. 22: (13) ա Տիմ. գ. 4. 20: (14) ա Տիմ. գ. 4: (15) Հռով. է. 12: (16) Գաղ. գ. 19. ե. 23: (17) ա Տիմ. գ. 3. բ Տիմ. գ. 3. Տիտ. ա. 9. բ. 1: (18) ա Տիմ. գ. 15: (19) ա Կորնթ. թ. 17: Գաղ. բ. 7: Կող. ա. 25. ա Թես. բ. 4. ա Տիմ. բ. 7: բ Տիմ. ա. 11. Տիտ. ա. 3: (20) բ Կորնթ. ժբ. 9: (21) ա Կորնթ. է. 25: (22) բ Կորնթ. գ. 5, 6. դ. 1. Կող. ա. 25: (23) Գործ. ը. 3. թ. 1. ա Կորնթ. ժե. 9. փիլիպ. գ. 6: (24) Ղևտ. իդ. 34. Եզեկ. թ. 39. 41. Գործ. գ. 17. իզ. 9: (25) Հռով. ե. 20. ա Կորնթ. ժե. 10: (26) բ Տիմ. ա. 13: (27) Ղևտ. է. 47: (28) ա Տիմ. գ. 1. դ. 9. բ Տիմ. բ. 11. Տիտ. գ. 8: (29) Մատթ. թ. 13. Մարկ. բ. 17. Ղևտ. ե. 32. ժթ. 10. Հռով. ե. 8. ա Եզեկ. գ. 5: (30) բ Կորնթ. դ. 1: (31) Գործ. ժգ. 39: (32) Սաղմ. ժ. 16. Ամոս. 1. 3. Գաղ. է. 14. ա Տիմ. ղ. 15, 16: (33) Հռով. ա. 23: (34) Եզեկ. ա. 18. Երեմ. ժա. 27. ա Եզեկ. գ. 12: (35) Հռով. ժղ. 27. Եզեկ. 25: (36) ա Պետ. ե. 11:

18 Ես պատուիրանքըս աւանդուեմ քեզ՝ իմ Տիմոթէոս որդեակս[37], ըստ այն մարգարէութիւնների որ առաջուց քեզ վերայ էլան[38] · որ նորանցով բարի զինուորութիւնով պատերազմիս[39] :

19 Եւ հաւատք ունենաս սուրբ մտքով[40], որ նորան մին քանիսն դուրս քցեցին իրանց անձներից՝ և հաւատքում նաւակոծութիւն քաշեցին[41] :

20 Որ նորանց միջումն են Հիմենոսն[42] և Ղէքսանդրոսն[43], որ նորանց մատնեցի Սատանային[44], որ խրատվին չըհայհոյել[45] :

Գ՚Ի՚ · Ր

1 Պօղոս աղաչումէ որ աղօթք անեն ամէն մարդկանց համար մանաւանդ թագաւորներին՝ և սորա պատճառն ցոյց կըտայ : Կանայքն ինչպես պէտք է որ զարդարուին անեն , 12 Նորանց հրաման չըկայ սովրցնելըդ , 15 Միայն թէ նորանք կապրին որդեծնութեան համար՝ թէ որ կենան հաւատքով սիրով և սրբութեամբ պարկեշտութեան հետ :

1 Արդ համար աղաչումեմ[1] , որ ամէնից առաջ աղօթք անըվին , խնդրուածք , աղաչանք , գոհութիւն ամէն մարդկանց համար :

2 Անաւանդ թագաւորներին[2] և ամէն իշխաններին համար[3] · որ խաղաղութեամբ և հանդարտութեամբ մեր կեանքրն վարենք , ամէն աստուածապաշտութեամբ և սրբութեամբ :

3 Ինչու որ էն է բարի և ընդունելի[4] մեր Փրկիչ Աստուծոյ առաջին[5] :

4 Որ կամենում՝ որ ամէն մարդիկ ապրին[6] , և դէպի ճշմարտութեան գիտութիւնն գան[7] :

5 Պատճառն որ մին Աստուած կայ[8] , և մին միջնորդ Աստուծոյ և մարդկանց մէջ Յիսուս Քրիստոս մարդն[9] :

6 Որ իրան անձրն ամէնին համար փրկութեան գին տուաւ[9] , որ վկայութիւն լինի[10] իրան ժամանակներումն[11] :

7 Որ ես նորա քարոզիչ և առաքեալ կարգվեցայ[12] · ճշմարիտըն ասումեմ Քրիստոսում՝ և սուտ չեմ խօսում[13] · (ես) էլայ Հեթանոսների վարդապետ հաւատքով և ճշմարտութեամբ[14] :

8 (Ուրեմն) կամենումեմ՝ որ մարդիկ ամէն տեղ աղօթք անեն[15] · սուրբ ձեռներ վեր բարձրացնեն առանց բարկութեան և երկմտութեան[16] :

9 Ինպէս էլ կանայքն խոնարհու-

(37) ա Տիմ · զ · 13 , 14 · 20 : բ Տիմ · բ · 2 : (38) ա Տիմ · դ · 14 : (39) ա Տիմ · զ · 12 : բ Տիմ · բ · 3 : գ · 7 : (40) ա Տիմ · գ · 9 : (41) ա Տիմ · զ · 9 : (42) բ Տիմ · բ · 17 : (43) բ Տիմ · գ · 14 : (44) ա Կորնթ · ե · 5 : (45) Գործ · ժգ · 45 : (1) Եզրաս · զ · 10 : Նեհեմ · խ · 7 : (2) Հռովմ · ժգ · 1 : (3) Հռովմ · ժբ · 2 : ա Տիմ · ե · 4 : (4) ա Տիմ · ա · 1 : բ Տիմ · ա · 10 : (5) Նեղեմ · ժբ · 23 : Յովհ · գ · 16 , 17 : Տիտ · 11 : բ Պետր · գ · 9 : (6) Յովհ · ժե · 3 : բ Տիմ · բ · 25 : (7) Հռովմ · գ · 29 , 30 : ժ · 12 : Գործ · գ · 20 : (8) Եբր · ը · 6 : թ · 15 : (9) Մատթ · ի · 28 : Մարկ · ժ · 45 : Եփես · ա · 7 : Տիտ · բ · 14 : (10) ա Կորնթ · ա · 6 : բ Թես · ա · 10 : բ Տիմ · ա · 8 : (11) Հռովմ · ե · 6 : Գործ · գ · 4 : Եփես · ա · 10 : գ · 5 : Տիտ · ա · 3 : (12) Եփես · գ · 7 , 8 : բ Տիմ · ա · 11 : (13) Հռովմ · թ · 1 : (14) Հռովմ · ժա · 13 : ժե · 16 : Գործ · ա · 16 : (15) Մարկ · ա · 11 : Յովհ · գ · 21 : (16) Մատ · ճգ · 3 : Նաում · ա · 15 :

թեան զարդարանքով՝ ամբխածու-
թենով և զգաստութենով իրանց
անձները զարդարեն . չէ թէ ոս-
կէ հիւսվածներով մարգարիտնե-
րով շարած՝ կամ պայծառ շորե-
րով [17] .
10 Այլ ինչպէս որ վայել է էն
կանանցն՝ որ աստուածապաշտու-
թիւնըն անձները են առել՝ բարի
գործքերով [18] :
11 Կինն թող ցածութենով սո-
վորի՝ ամէն ընազանդութենով :
12 Կնկան հրաման չեմ տալիս՝ որ
սովորցնէ [19] , և ոչ էլ մարդուցն ա-
ւելի խօսք խօսի , բայց որ լուռ
կենայ [20] :
13 Պատճառն որ Ադամ առաջ
ստեղծվեցաւ՝ և յետոյ Եւան [21] :
14 Եւ Ադամ չըխաբվեցաւ՝ բայց
կինն խաբվեցաւ և մեղք գործեց [22] :
15 Այլ թէ կապրի որդեծնու-
թեան համար՝ թէ որ կենայ հա-
ւատքով և սիրով և սրբութենով
պարկեշտութեան հետ :

ԳԼ · Գ

2 Եպիսկոպոսներն և սարկաւագներն և նորանց կանայքն ինչպէս պէտք է որ լինին , 14 Ա-
յե ինչ բանի համար Պօղոս էս բաներըն Տիմոթէոսին գրուամ : 15 Հորդորուամ նորան
թէ ինչպէս պէտք է վարվիլ Աստուծոյ տան մէջն՝ որ էն կենդանի Աստուծոյ եկեղեցին է ,
Ճշմարտութեան սիւն և հաստատութիւն :

1 Ճշմարիտ է էս խօսքս [1] . թէ
որ մինն եպիսկոպոսութեան ցանկա-
նայ [2] մին բարի գործոյ է ցանկա-
նում [3] :
2 Եպիսկոպոսին պէտք է որ ան-
արատ լինի [4] , մին կնկան մարդ [5] ,
հեզաշոգի՝ խոնարհ՝ պարկեշտ՝ օ-
տարասէր՝ սովորցնող [6] .
3 Ղէ թէ նախատինք տուող [7] ,
և ոչ զարկող [8] , բայց հանդարտ [9] .
չէ թէ կռիւ անող , և ոչ արծա-
թասէր [10] :
4 Որ հենց իրան տանն բարի վե-
րակացու էլած լինի . որ որդիքներ
ունենայ՝ որ ընազանդ են ամէն պար-
կեշտութենով [11] :
5 Այլ թէ որ մինն չըգիտենայ
իրան տանն վերակացու լինիլ , ի՞նչ-
պէս նա Աստուծոյ եկեղեցոյն հո-
գաբարձու կըլինի :
6 Ոչ թէ հաւատքն նոր եկած ,
որ չըլինի թէ գոռոզանայ և Սա-
տանայի դատաստանի մէջն ընկնի [12] :
7 Այլ պէտք է նորան , որ դըր-
սինեըիցն էլ բարի վկայութիւն ու-
նենայ [13] . որ նախատինքի և Սա-
տանայի որոգայթին (ընալկին) մէջ
չընկնի [14] :
8 Ինպես էլ սարկաւագներն
(պէտք է) պարկեշտ լինին [15] . ոչ
երկու կերպ խօսող , ոչ գինեսէր ,
ոչ պիղծ շահ սիրող [16] .
9 Այլ հաւատքի խորհուրդըն
սուրբ մտքով ունենան [17] :

(17) ա Պետ . գ . 3 : (18) ա Պետ . գ . 4 : (19) ա Կորնթ . ժգ . 34 : (20) Լուկ . ե . 24 : (21) Ծննդ . ա . 27 : բ . 18 . 22 : ա Կորնթ . ժա . 8 , 9 : (22) Ծննդ . գ . 6 : բ Կորնթ . ժա . 3 : (1) ա Տիմ . ա . 15 : (2) Գործ . ի . 28 : Փիլպ . ա . 1 : (3) Լուկ . դ . 12 : (4) Տիտ . ա . 6 , Եսայի : (5) ա Տիմ . ե . 9 : (6) բ Տիմ . բ . 24 : (7) Ա ոյբ . 8 : Տիտ . ա . 7 : (8) բ Տիմ . բ . 24 : (9) բ Տիմ . բ . 25 : (10) ա Պետ . ե . 2 : (11) Տիտ . ա . 6 : (12) Նաում . ժդ . 12 : (13) Գործ . իբ . 12 : ա Կորնթ . ե . 12 : ա Թես . դ . 11 : (14) ա Տիմ . զ . 9 : բ Տիմ . բ . 26 : (15) Գործ . զ . 3 : (16) Ղուկ . ժ . 9 : Նաւի . խգ . 21 : Ղեր . 8 : (17) ա Տիմ . ա . 19 :

10 Իրանք առաջ թմդ փորձվին , և յետոյ են պաշտօնի մէջ մտնեն , որ անարատ լինին ։

11 Նոյնպէս եւ նորանց կանայքըն՝ (պէտք է) պարկեշտ (լինին) · չէ թէ չարախօս , հեզահոգի՝ ամէն բանի մէջ հաւատարիմ[18] ։

12 Սարկաւագներն (պէտք է) մին կնկան մարդիք լինին · որ իրանց որդոցն բարի վերակացու եւած լինին , և իրանց տըներին ։

13 Ինչու որ նորանք՝ որ պաշտօնըն լաւ են կատարում , իրանց անձնեերին համար բարի աստիճան են շահվում , և շատ համարձակութիւն են հաւատքումն՝ որ Քրիստոս Յիսուսումն է[19] ։

14 Ես գրում եմ քեզ՝ որ եկ յոյս ունիմ որ մօտիկ ժամանակումս գամ ։

15 Եթէ որ ուշանամ՝ որ գիտենաս թէ ինչպէս պէտք է վարվիլ Աստուծոյ տան մէջն[20] · որ են կենդանի Աստուծոյ եկեղեցին է , ճշմարտութեան սիւն և հաստատութիւն ։

16 Եւ յայտնի էլ մեծ է Աստուածապաշտութեան խորհուրդն · որ նա երևեցաւ մարմնով[21] արդարացաւ Հոգով[22] յայտնվեցաւ հրեշտակներին[23] քարոզվեցաւ հեթանոսներին[24] հաւատացվեցաւ աշխարհքումս[25] և վերացաւ փառքով[26] ։

Գլ · Դ

1 Պողոս առաջուց իմաց կըտայ Սուրբ Հոգով թէ յետին ժամանակներումն մինքանիսն հաւատքիցն կըբակվին · 6 Նա Տիմոթէոսին իրան պարտքերըն կատարելուցն յետ չմնալոյ համար նորա կերպ կերպ յորդորանքներ կըտայ ։

1 Բայց Սուրբ Հոգին յայտնի ասում[1] , թէ յետին ժամանակներումն մինքանիսն հաւատքիցն կըհեռանան[2] · և մոլորութեան հոգիներին[3] և դևերի վարդապետութիւններին մտիկ կըտան[4] ,

2 Որոնց՝ որ կեղծաւորութենով սուտ են խօսում[5] , և իրանց խըղճմըտանքովն տաղված են[6] ։

3 Որ պսակվելուցն կարգելն[7] , և կերակուրներից՝ որ Աստուած ստեղծեց՝ որ նորանց վայելեն[8] հաւատացեալներն , և նորանք որ ճշմարտութիւնն ճանաչել են[10] ։

4 Պատճառն որ՝ Աստուծոյ ամէն ստեղծվածներն բարի են , և իսկի մին բան անարգելի չէ · մանաւանդ

(18) Տիմ · բ · 3 ։ (19) Մատ · իե · 21 ։ (20) Նէեմ · բ · 21 , 22 · բ Տիմ · բ · 20 ։ (21) Յովհ · ա · 14 ։ ա Յովհ · ա · 2 ։ (22) Մատ · գ · 16 · Յովհ · ա · 32 , 33 ։ Ժո · 26 ։ Ժգ · 8 , 9 ։ Ածվմ · ա · 4 ։ ա Պետր · գ · 18 ։ ա Յովհ · ե · 6 , Լայլ ։ (23) Մատ · իը · 2 ։ Մրկ · Ժգ · 5 ։ Ղուկ · բ · 13 ։ իդ · 4 ։ Յովհ · ի · 12 ։ Նէեմ · գ · 10 ։ ա Պետր · ա · 12 ։ (24) Գործ · ժ · 34 ։ Ժգ · 46 . 48 ։ Գաղ · բ · 8 ։ Նէեմ · գ · 5 , 6 , 8 ։ Ածվմ · ժ · 18 ։ Կող · ա · 27 , 28 ։ ա Տիմ · բ · 7 ։ (25) Կող · ա · 6 · 23 ։ (26) Ղուկ · իգ · 51 ։ Գործ · ա · 9 ։ ա Պետր · գ · 22 ։ (1) Յովհ · Ժգ · 13 ։ բ Յովհ · բ · 3 ։ բ Տիմ · գ · 1 , Լայլ ։ բ Պետր · գ · 3 ։ ա Յովհ · բ · 18 ։ Յուդ · 4 · 18 ։ (2) ա Պետր · ա · 20 ։ (3) բ Տիմ · գ · 13 ։ բ Պետր · բ · 1 ։ Յայտ · Ժգ · 14 ։ (4) Գաղ · ժա · 35 · 37 , 38 ։ Յայտ · թ · 20 ։ (5) Մատ · է · 15 ։ Ածվմ · Ժգ · 18 ։ բ Պետր · բ · 3 ։ (6) Նէեմ · գ · 19 ։ (7) ա Տիմ · է · 28 · 36 · 38 ։ Կող · բ · 20 , 21 ։ Եբր · Ժգ · 4 ։ (8) Ածվմ · Ժգ · 3 · 17 ։ ա Կորնթ · ը · 8 ։ (9) Ծննդ · ա · 29 ։ թ · 3 ։ (10) Ածվմ · Ժգ · 6 ։ ա Կորնթ · ժ · 30 ։

էն որ գոհութենով ընդունվումէ[11] :

5 Ինչու որ՝ Աստուծոյ խօսքովն և աղօթքով սրբվումէ :

6 Այս խրատս որ եղբայրներին տաս՝ Ի Քրիստոսի Յիսուսի բարի պաշտօնեայ կըլինիս, կըմեծանաս և կապրիս հաւատքի խօսքերովն, և էն բարի վարդապետութենովն՝ որ նորան հետևեցիր[12] :

7 Այլ պիղծ խօսքերից և պառաւների առասպելներից չետ կաց[13]. բայց վարժացրու քո անձդ աստուածապաշտութենումն :

8 Ինչու որ՝ մարմնոյ վարժութիւնն քիչ բանի համար օգուտ ունի[14]. բայց աստուածապաշտութիւնն ամէն բանի համար օգուտ ունի[15]. և հիմիկվան և նոր գալու կենաց աւետիքըն ունի[16] :

9 Ճշմարիտ է այս բանս՝ և ամէն կողմանէ արժանի է ընդունվելոյ[17] :

10 Ինչու որ հենց սրահամար աշխատումենք և նախատինք ենք քաշում[18]. որ կենդանի Աստուծոյ վրայ յոյսըն ենք դրել[19], որ նա փրկիչ է ամէն մարդկանց, և մանաւանդ հաւատացեալներին[20] :

11 Այդ բաներդ պատուիրիր և սովորցրու[21] :

12 Ոչ ոքէն որ միևն քո տղայութիւնդդ անարգէ[22]. բայց օրինակ լինիր հաւատացեալներին խօսքերով, վարքով, սիրով, հաւատքով, սրբութենով[23] :

13 Մինչև որ գամ՝ միտք դիր կարդացմունքին, յորդորմունքին և վարդապետութեանն :

14 Ընդհոգ մի լինիր էն շնորհքին համար՝ որ քեզանում է[24]. որ տրվավ քեզ մարգարէութենով[25] և ըռեցների ձեռնադրութենից[26] :

15 Այդ մտածիր՝ դորանում ջանք արա. որ քո առաջանալն ամէնին յայտնի լինի :

16 Օգոյշ կաց անձիդ և վարդապետութեանդդ՝ և դորանում մնա[27]. էդ թէ որ անես՝ քո անձդդ կապրեցնես[28], և նորանց էլ՝ որ քեզ կըլսեն[29] :

ԳԼՈՒԽ Ե

1 Ծերը (մարդոյն) և երիտասարդներին յորդորելոյ համար կանոններ կըտայ. 3 Որբևէրիների համար, 17 Իշխեցների համար, 23 Նաև Տիմոթէոսի առողջութեան համար կանոններ. 24 Մարդկանց մեղքերին համար խօսումէ, թէ յայտնի են և դատաստանի հասած մինքանիսին, և մինքանիսին էլ ետևէն կըգնան :

1 Ծերը (մարդոյն) սաստիկ մի բան ինչպէս հօր[1]. երիտասարդներին՝ ինչպէս եղբայրներին.

(11) Ա Տիմ. գ. 14. 20 : ա Կորնթ. ժ. 25 : Տիտ. ա. 15 : (12) բ Տիմ. գ. 14, 15 : (13) ա Տիմ. ա. 4 : գ. 20 : բ Տիմ. բ. 16. 23 : դ. 4 : Տիտ. ա. 14 : (14) ա Կորնթ. ը. 8 : Կող. բ. 23 : (15) ա Տիմ. գ. 6 : (16) Պտմ. լե. 4 : ձգ. 11 : Ա Պետ. 2, 3 : Հեսու. 19 : Պտմ. գ. 33 : Ժթ. 29 : Պտմ. ժ. 30 : Հռոմ. ը. 28 : (17) ա Տիմ. ա. 15 : (18) ա Կորնթ. գ. 11, 12 : (19) ա Տիմ. գ. 17 : (20) Պտմ. լզ. 6 : Ա Պետ. 2. 6, Նայէ : (21) ա Տիմ. գ. 2 : (22) ա Կորնթ. ժգ. 11 : Տիտ. բ. 15 : (23) Տիտ. բ. 7 : ա Պետր. ե. 3 : (24) բ Տիմ. ա. 6 : (25) ա Տիմ. ա. 18 : (26) Կորնթ. գ. 6 : ը. 17 : Ժգ. 3 : Ժթ. 6 : ա Տիմ. ե. 22 : բ Տիմ. ա. 6 : (27) Կորնթ. ի. 28 : (28) Ղուկ. լգ. 9 : (29) Հռոմ. ժա. 14 : ա Կորնթ. թ. 22 : Յով. ե. 20 : (1) Ղեւ. ժթ. 32 :

2 Պառաւներին՝ ինչպէս մարք · մատղաշ կանանց ինչպէս քրվերք՝ ամէն սրբութեամբ ։

3 Որբևէրիներին պատուիր՝ նա- բանց որ ճշմարիտ որբևէրի են[2] ։

4 Եթէ որ մին որբևէրի որ- դիք և թոռներ ունենայ, թող (նա- բանք) առաջ սովորին իրանց տանն բարի անել՝ և ծնողաց փոխ հատու- ցանել[3] · ինչու որ էն է բարի՝ և Աստուծոյ առաջին ընդունելի[4] ։

5 Եթէ որ՝ որ ճշմարիտ որբև- ւէրի է, և մենակ կացած՝ յոյսը Աստուծոյ վերայ է դնում[5], և գի- շեր և ցերեկ[6] աղօթքին և աղա- չանքին է հետևում[7] ։

6 Եթէ փափկասէր որբևէրին՝ հենց կենդանի մեռած է[8] ։

7 Այս պատուիրիր՝ որ անարատ լինին[9] ։

8 Եթէ որ մին իրանների՝ և մանաւանդ ընտանիքներին հա- մար հոգս չունենայ[10], նա հաւատ- քից ուրացած է[11], և անհաւատնե- րից էլ չար է[12] ։

9 Այն որբևէրին որբևէրիների կարգին մէջ դասվի՝ որ վաթսուն տարուց պակաս չէ՝ և մին մարդոյ կին եղած է[13] ։

10 Եւ բարի գործքերով վկայված է՝ որ երեխաներ մեծացրած լինի, որ օտարներին ընդունած լինի[14], որ սրբերի ոտները լուացած լինի[15], որ նեղացածներին ձեռնտուած լի- նի, որ ամէն բարի գործքերին հե- տևած լինի ։

11 Եթէ մատղաշ որբևէրիներից են յետ կաց · ինչու որ երբոր ուրա- խութենով աւելանում են Քրիստո- սին հակառակ՝ կամենում պսակ- վիլ ։

12 Եւ դատաստան են ընդունում իրանց վերայ՝ որ առաջին հաւատ- քըն դէն ձգեցին ։

13 Որավերայ էլ գործքից դատարկ մնալ են սովորում՝ տանից տուն մանգալով · և էէ թէ մենակ դա- տարկ՝ բայց էլ շատախօս և հետա- քրքիր · և խօսումն՝ ինչ որ պէտք չէ[16] ։

14 Կամենումեմ որ մատղաշ որ- բևէրիներն պսակվին, որդիք ծնին, տրեսաչէն լինին[17] · և հակառակողին իսկի պատճառ չըտան՝ հայհոյանք անելոյ[18] ։

15 Ինչու որ՝ հենց հիմիկ մինքա- նիսն Ճանապարհից դուրս գնացին Սատանային ետևէն ։

16 Թէ որ մին հաւատացեալ՝ որ- բևէրիներ ունենայ՝ նա թող հոգս անէ նորանց համար, և եկեղեցոյն ծանրութիւն չը'տայ · որ ճշմարիտ որբևէրիներին բաւական լինի[19] ։

17 Երէցներն որ լաւ վերակացու- թիւն են անում[20] թող երկուպա- տիկ պատուոյ արժանի լինին · և մանաւանդ նորանք՝ որ խօսքով և վարդապետութենով են աշխատում[21]։

18 Պատճառն որ գիրքն ասում · (թէ) Կալէ մէջն աշխատող եզի դունչըն մի կապիր[22] · և թէ Ար՝ա-

(2) Ա՛ՅՐ · 5 · 16 ։ (3) Ն՛ՆԱՆ՛ · ԽՍ · 10 , 11 ։ ՄԱՐՔ · ԺԸ · 4 ։ ԼՈՒԿ · Գ · 1 , 2 ։ (4) Ա ՏԻՄ · Բ · 3 ։ (5) Ա ԿՈՐՆԹ · Է · 32 ։ (6) ԴՈՐՔ · ԻԳ · 7 ։ (7) Ղ՛ՈՒԿ · Բ · 37 · ԺԸ · 1 ։ (8) ՀԱԿ · Ե · 5 ։ (9) Ա ՏԻՄ · Ա · 3 · Գ · 11 · Զ · 17 ։ (10) ԼՈՒԿ · ԾԸ · 7 · ԴՈՂ · Գ · 10 ։ (11) Բ ՏԻՄ · Գ · 5 · ՏԻՏ · Ա · 16 ։ (12) ՄԱՐՔ · ԺԸ · 17 ։ (13) Ղ՛ՈՒԿ · Բ · 36 ։ Ա ՏԻՄ · Գ · 2 ։ (14) ԴՈՐՔ · ԺԶ · 15 · ԼԵՐ · ԺԳ · 2 · Ա ՊԵՏՐ · Գ · 9 ։ (15) Ն՛ՆԱՆ՛ · ԺԸ · 4 · ԺԹ · 2 · Ղ՛ՈՒԿ · Է · 38 · 44 · ՀՈՎՀ · ԺԳ · 5 · 14 ։ (16) Բ ԹԱԽ · Գ · 11 ։ (17) Ա ԿՈՐՆԹ · Է · 9 ։ (18) Ա ՏԻՄ · Զ · 1 · ՏԻՏ · Բ · 8 ։ (19) Ա ՅՐ · 3 · 5 ։ (20) Է՛ՊԻՍԿ · ԺԸ · 8 ։ Ա ԿՈՐՆԹ · Թ · 10 · 14 ։ ԴԱՏ · Զ · 6 ։ ՓԻԼԻՊ · Բ · 29 ։ Ա ԹԱԽ · Ե · 12 , 13 ։ ԼԵՐ · ԺԳ · 7 · 17 ։ (21) ԴՈՐՔ · ԽԸ · 10 ։ (22) Բ ՕՐԻՆ · ԽԵ · 4 ։ Ա ԿՈՐՆԹ · Թ · 9 ։

կըն արժանի է իրան վարձքին[23] :
19 Չըլիցու վերայ չարախօսութիւն մի ընդուներ • բայց միայն երկու կամ երեք վկայով[24] :
20 Այլ նորանք՝ որ մեղք են գործուած, ամէնի առաջին յանդիմանիր[25], որ ուրիշներն էլ վախենան[26] :
21 Ես կայսութիւն եմ դնում Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի և ընտրված հրեշտակների առաջին, որ էդ պահես առանց քո մտքի հաճոյութեան նայելոյ • իսկի մին բան չանես երեսպաշտութեանով[27] :
22 Ձեռըն շուտով մի դներ մըրնի վերայ[28], և ուրիշների մեղացն մասնակից մի լինիր • քո անձըդ սուրբ պահիր[29] :
23 Այսուհետև մէնակ ջուր չըխմես, բայց մինչիչ գինի էլ խառներ քո ստամոքսի և շուտ շուտ հիւանդութիւնների համար[30] :
24 Կան մարդիք՝ որ նորա՛ց մեղքերն յայտնի են, և առաջ դատաստանի մէջ հասած[31] • և կան էլ՝ որ ետևէն գալիս են (յայտնըվում) :
25 Նոյնպես էլ բարի գործքերն յայտնի են • և ուրիշ կերպ էլ որ լինին՝ չեն կարող ծածուկ կենալ :

ԳԼ • Ը

1 Ծառաներն իրանց տէրերին ծառայութիւն անելոյն սովորցնելոյ համար պատուէր կըտայ Տիմոթէոսին • 3 Ուրիշ կերպով սովորցնողներին ինչպես մարդիք լինելն ցոյց կըտայ • 6 Աստուածապաշտութեան մեծ շահ • 10 Նէ արծաթի աչքն ամէն չարի արմատ լինելն • 11 Տիմոթէոսին պատուէր կըտայ որ նորանցից փախչ, և էն բաներին հետևի որ իրան պատուիրուած • 17 Հարուստներին ինչպես պատուէր տալն ասում • 20 Վորդորում Տիմոթէոսին որ՝ ճշմարիտ գիտութիւնն պահէ և յետ կալ պիղծ և նորահայն խօսքերիցն :

1 Նորանք որ ծառայութեան լծի տակն են՝ ամէն մէկն թող իրանց տէրերին պատուոյ արժանի համարեն[1], որ Աստուծոյ անունն և վարդապետութիւնն չըսպկտվի[2] :
2 Այլ նորանք որ հաւատացեալ տէրեր ունին՝ չըլինի որ անարգեն, նրա համար որ եղբայրք են[3] • բայց էլ աւելի ծառայութիւն անեն, նրա համար՝ որ հաւատացեալ և սիրելի են, որ բարերարութեանն մասնակից են • Էս սովորցրու և յորդորիր[4] :
3 Այլ թէ որ մինն ուրիշ կերպով սովորցնէ[5] և մտիկ չըտայ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողջամիտ խօսքերին[6], և էն վարդապետութեանն՝ որ աստուածապաշտութեանն կըվայելէ[7] :
4 Նոյնպէս մարդն գոռոզացած է, և իսկի բան չի գիտում[8] • բայց այրվումէ վիճաբանութիւններով և հակառակութեան խօսքերով, որ նորանից լինում նախանձութիւն,

(23) Ղևտ • ժթ • 13 : բ Օրին • իդ • 14, 15 : Մաթ • ժ • 10 : Ղևտ • ժ • 7 : (24) բ Օրին • ժթ • 15 : (25) Դտղ • բ • 11 • 14 : Տիտ • ա • 13 : (26) բ Օրին • ժգ • 11 : (27) ա Տիմ • զ • 13 : բ Տիմ • բ • 14 : գ • 1 : (28) Դտղ • զ • 6 : ժգ • 3 : ա Տիմ • գ • 14 : բ Տիմ • ա • 6 : (29) բ Յովհ • 11 : (30) Մաթ • ձգ • 15 : (31) Դտղ • է • 19 : (1) Նէեմ • զ • 5 : Կող • գ • 22 : Տիտ • բ • 9 : ա Պետր • բ • 18 : (2) Նաում • ծբ • 5 : Հռոմ • բ • 24 : Տիտ • բ • 5 • 8 : (3) Կող • գ • 1 : (4) ա Տիմ • գ • 11 : (5) ա Տիմ • ա • 3 : (6) ա Տիմ • ա • 10 : բ Տիմ • ա • 13 • գ • 3 : Տիտ • ա • 9 : (7) Տիտ • ա • 1 : (8) ա Կորնթ • ը • 2 • ա Տիմ • ա • 7 :

կոիւ, հայհոյութիւններ, չար կար-
ծիքներ[9],

5 խարդախութիւններ[10] մարդ-
կանց՝ որ մտքով ապականված և
ճշմարտութենէն օտարացած են[11] ·
որ աստուածապաշտութիւնն շա-
հեկան արհեստ են համարում[12] ·
բայց դու յետ քաշվիր էնպէսիներ-
րից[13] ։

6 Նայց մեծ շահ է աստուածա-
պաշտութիւնն՝ բաւականութեան
հետ[14] ։

7 Պատճառն որ՝ իսկի բան չենք
բերել էս աշխարհքս՝ և էլ չենք
կարենալ մին բան դուրս տանիլ[15] ։

8 Նայց թէ որ կերակուր և շո-
րեր ունինք, էլ նորանով բաւա-
կան լինինք[16] ։

9 Նայց նորանք որ կամենումն
հարստանալ՝ փորձութեան[17] և որո-
գայթի (նալքի) և շատ անմիտ և
վնասակար ցանկութիւնների մէջ են
ընկնում[18] · որ մարդկանց սատա-
կումն և կորուստի մէջ են բցում[19] ։

10 Պատճառն որ՝ ամեն չարի ար-
մատն (հէրմ) արծաթի սէրն է[20] ·
որ մին քանիսն ցանկացաս նորան՝ և
հաւատքից թեքվեցան, և իրանց
անձներըն շատ ցաւի մէջ քցեցին ։

11 Նայց դու[21] ով Աստուծոյ մարդ՝
փախիր նորանցից, և հետևիր ար-
դարութեան, աստուածապաշտու-
թեան, հաւատքին, սիրոյն, համ-
բերութեան, հեզութեան[22] ։

12 Եւ պատերազմիր հաւատքի բա-
րի պատերազմովն[23], և պինդ բըռ-
նիր յաւիտենական կեանքըն՝ որ նո-
րա մէջ կանչվեցար[24], և դաւանե-
ցիր բարի դաւանութիւն շատ վկա-
ների առաջին[25] ։

13 Պատուիրումեմ քեզ Աստուծոյ
առաջին[26], որ ամեն բան կենդանի է
անում[27], և Յիսուսի Քրիստոսի
առաջին՝ որ բարի դաւանութիւն
վկայեց Պոնտացի Պիղատոսի առա-
ջին[28] ·

14 Որ դու պատուիրանքըն մաքուր
և անարատ պահես, մինչև մեր Տէր
Յիսուսի Քրիստոսի յայտնութիւ-
նըն[29] ։

15 Որ նորան իրան ժամանակու-
մըն ցոյց կըտայ էն Երանելին՝ և մե-
նակ Օգոստոսն[30], թագաւորների
թագաւորն և տէրերի Տէրն[31] ։

16 Որ նա մենակ անմահութիւն
ունի՝ անմատեչելի լուսոյ մէջ բը-
նակված[32] · որ մարդկանցից իսկի
մինն չըտեսաւ նորան՝ և ոչ էլ կա-
րող է տեսնել[33] · նորան (լինի) պա-
տիւ և զօրութիւն յաւիտեանս, ա-
մէն[34] ։

17 Հարուստներին՝ որ էս աշխարհ-
քումս են՝ պատուիրիր որ չըգոռո-
զանան՝ և ունայն մեծութեան վե-

(9) ա Տիմ · ա · 4 ։ բ Տիմ · բ · 23 ։ Տիտ · գ · 9 ։ (10) ա Տիմ · ա · 6 ։ (11) բ Տիմ · գ · 8 ։ (12) Տիտ · ա · 11 · բ Պետր · բ · 3 ։ (13) Հռոմ · ժգ · 17 · բ Տիմ · գ · 5 ։ (14) Սաղ · լէ · 16 · Հռոմ · ժե · 16 · ժգ · 8 · Եբր · ժգ · 5 ։ (15) Յոբ · ա · 21 · Սաղ · խթ · 17 · Ղուկ · իէ · 24 · Յովհ · ե · 15 ։ (16) Ծննդ · իը · 20 · Եբր · ժգ · 5 ։ (17) Հռոմ · ժե · 27 · ի · 21 · իը · 20 · Սաղ · ժգ · 22 · Յակ · ե · 1 · (18) ա Տիմ · գ · 7 ։ (19) ա Տիմ · ա · 19 ։ (20) Լուկ · իգ · 8 ։ բ Օրին · ժգ · 19 ։ (21) բ Տիմ · բ · 22 ։ (22) բ Օրին · լգ · 1 · բ Տիմ · գ · 17 ։ (23) ա Կորնթ · թ · 25, 26 · ա Տիմ · ա · 18 ։ բ Տիմ · գ · 7 ։ (24) Փիլիպ · գ · 12, 14 · Ա Պետր · 19 ։ (25) Եբր · ժ · 23 ։ (26) ա Տիմ · ե · 21 ։ (27) բ Օրին · լբ · 39 · ա Թագ · բ · 6 ։ Յովհ · ե · 21 ։ (28) Մատթ · իէ · 11 · Յովհ · ժբ · 37 · Յոպ · ա · 5 · գ · 14 ։ (29) Փիլիպ · ա · 6 · 10 · ա Թես · գ · 13 · ե · 23 ։ (30) ա Տիմ · ա · 11 · 17 ։ (31) Յոպ · ժէ · 14 · ժթ · 16 ։ (32) ա Տիմ · ա · 17 ։ (33) Լուկ · լգ · 20 ։ Յովհ · գ · 46 ։ (34) Եփես · գ · 21 · Փիլիպ · գ · 20 · Յուդ · 25 · Յոպ · ա · 6 · գ · 11 · ե · 21 ։

բայ[35] յոյսըն չըդնեն[36], բայց Աստուծոյ վերայ՝ որ ամէն բան առատ կու տայ մեզ ի մեր վայելքնիս[37]։
18 Որ բարի գործեն, բարի գործքերով հարըստանան[38], առատաձեռք[40], սիրելի, հաղորդող լինին[41]։
19 Իրանց անձերին համար բարի հիմըն դիզեն նոր եկուներուն[42]. որ ճշմարիտ կեանքըն ձեռք բերեն[43]։
20 Ով Տիմոթէէ պահիր (քեզ տրուած) աւանդըն[44]. և չետ կաց պիղծ և նորաձայն խօսքերուն և սուտ անուն ունող գիտութեան հակառակութիւններուն[45]։
21 Որ նորան մինչև անիսն ընդունելին՝ և հաւատքին թէքվեցան[46]. շնորհքն քեզ հետ լինի. ամէն։

Տիմոթէոսի վերայ առաջին նամակն գրուեցաւ Լաոդիկիայ հաղորդին՝ որ Պահապանաց գիւղաքաղաքին է։

ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌՔԵԼԱՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Պօղոս յոյս կըտայ իրան սէրն որ Տիմոթէոսի վերայ ունի. 5 Տիմոթէոսի տատին և մօրն անկեղծ հաւատքն. 7 Առաքելն նորա միտքն է բերում որ զօրեղանայնէ Աստուծոյ ին շնորհքն որ նորանում է, 8 և որ մպանակից լինի Աւետարանի չարչարանքին համար, 13 և իրանից սովորած ողջամիտ խօսքերի օրինակն իրան ունենայ. 15 Փիւգելոսի և Հերմոգինէսի և նորանց պէս մարդկանց ջոկուելն առաքեալներից. Ընեսիփորի տունըն շատ գովուում։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովն[1], կեանքի աւետիքին պէս՝ որ Քրիստոս Յիսուսումն է[2]։
2 Տիմոթէոսի սիրելի որդոյս՝ շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուած Հօրիցն և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցն[3]։

(35) Ա՛ռ • իդ • 5 ։ (36) Յոբ • լա • 24 ։ Սաղմ • ծբ • 7 ։ կբ • 10 ։ Առակ • ժ • 28 ։ Ղ՛ա՛ • ժբ • 21 ։ (37) ա Թես • ա • 9 ։ ա Տիմ • գ • 15 ։ գ • 10 ։ (38) Գործ • ժգ • 18 ։ ժէ • 25 ։ (39) Ղ՛ա՛ • ժբ • 21 ։ ա Տիմ • է • 10 ։ Տիտ • գ • 8 ։ Յակ • բ • 5, (40) Հռոմ • ժբ • 13 ։ (41) Գաղ • զ • 6 ։ Եբր • ժգ • 16 ։ (42) Առակ • գ • 20 ։ ժթ • 21 ։ Ղ՛ա՛ • ժբ • 33 ։ ժզ • 9 ։ (43) Ա՛ր • 12 ։ (44) բ Տիմ • ա • 14 ։ Տիտ • ա • 9 ։ Հայտ • գ • 3 ։ (45) ա Տիմ • ա • 4 • 6 ։ գ • 7 ։ բ Տիմ • բ • 14 • 16 • 23 ։ Տիտ • ա • 14 ։ գ • 9 ։ (46) ա Տիմ • ա • 6 • 19 ։ բ Տիմ • բ • 18 ։ (1) բ Կորնթ • ա • 1 ։ (2) Հռոմ • գ • 6 ։ Տիտ • ա • 2 ։ Եբր • թ • 15 ։ (3) ա Տիմ • ա • 2 ։

3 Հ ընդհակառակ եմ Աստուածա-
նից[4] որ իմ առաջին հարանցիցս
(սկսած) նորան պաշտամունք սուրբ
մտքով[5] · որ անպակաս քեզանից յի-
շատակ եմ անում իմ աղօթքնե-
րումս՝ գիշեր և ցերեկ[6] :

4 Յանկանումիմ քեզ տեսնել յի-
շելով քո արտասուքդն՝ որ ուրա-
խութենով լցվիմ[7] :

5 Ինչու որ իմ միտքս եմ բե-
րում են անկեղծ հաւատքդն՝ որ
քեզանում է[8] · որ առաջ քո Ա-
ւօդիա տատումդ և քո Եւնիկէ մօ-
րումդ բնակվեցաւ[9] · հաստատ գի-
տումիմ որ եղ քեզանում է :

6 Ուրհամար քո միտքդ եմ բե-
րում որ զարթնացնես Աստուծոյ
էն շնորհքդն որ քեզանում է[10] իմ
ձեռնադրութենիցն :

7 Պատճառն որ Աստուած չը-
տուաւ մեզ վախկոտութեան հո-
գի[11], այլ զօրութեան և սիրոյ և
պարկեշտութեան[12] :

8 Երեմն ամօթ մի համարիր[13]
մեր Տէրի վկայութիւնդն[14] և ինձ
ինձ էլ որ նորա կապեալն եմ[15] ·
բայց մասնակից լինիր չարչարանքին՝
աւետարանի համար՝ Աստուծոյ զօ-
րութենովդն[16] :

9 Որ փրկեց մեզ[17], և սուրբ կո-

20 Որ տեղ որ մեր առաջնորդ Յի- սուսն մտաւ մեզ համար[26] , Որ- քիսեդեկի կարգին պէս՝ յաւիտենա- կան քահանայապետ էլաւ[27] :

Ը · Ի :

1 Յիսուս Մելքիսեդեկի կարգին պէս մին քահանայ է , 11 Նա էսպէս Հարօնի կարգի քա- հանաներից աւելի աղնիւ է իրան քահանայութիւնն :

1 Պատճառն որ՝ էս Մելքիսե- դեկս Սաղէմի թագաւոր էր[1] · բար- ձրեալ Աստուծոյ քահանայ · որ դուրս եկաւ Աբրահամի առաջն , երբոր նա թագաւորների կոտորե- լուցն յետ դարձած գալիս էր՝ և օրհնեց նորան :

2 Որ Աբրահամ նորան էլ ամէն բաներից տասանորդ տուաւ · Նա առաջ թարգմանվում արդարու- թեան թագաւոր , և ապա՝ Սաղէ- մի թագաւոր՝ որ է խաղաղութեան թագաւոր :

3 Առանց հօր , առանց մօր , մին ազգի մէջ չըհամարված , որ ոչ օ- րերի սկիզբըն ունի , և ոչ կենաց վերջըն · (բայց) Աստուծոյ Որդոյն նման էլած՝ կենում մենում յաւի- տենական քահանայ :

4 Իմիկ տեսէք թէ քանի մեծ էր սա՝ որ Աբրահամ նահապետն էլ նորան տասանորդ տուաւ էն (ա- ռած) աւարիցն (Խալանիցն)[2] :

5 Եւ Ղևիի որդիքներիցն նորանք որ քահանայութիւնըն առնում են , հրաման ունին տասանորդ առնելոյ ժողովըրդիցն օրէնքին պէս · այսին- քըն՝ իրանց եղբարներիցն · թէ և իրանք էլ Աբրահամի երանքիցն (Ջըջեցն) են առաջ եկած[3] :

6 Այլ նա , որ նորանց ազգի մէջ չըհամարված՝ տասանորդ առաւ Աբրահամիցն · և օրհնեց նորան[4] որ աւետիքներըն ընդունել էր[5] :

(21) Ծննդ · իբ · 16 , 17 : Սաղ · ճե · 9 : Ղևտ · ա · 73 : (22) Նէմ · իբ · 11 : (23) Նբէր · ժա · 9 : (24) Հռովմ · ժա · 29 : (25) Ղևտ · ժզ · 15 : Նբէր · թ · 7 : (26) Նբէր · գ · 14 : ը · 1 : թ · 24 : (27) Նբէր · գ · 1 : ե · 6 · 10 : է · 17 : (1) Ծնը- նդոց · ժգ · 18 : (2) Ծննդ · ժգ · 20 : (3) Թուոց · ժը · 21 · 26 : (4) Ծննդ · ժգ · 19 : (5) Հռովմ · դ · 13 : Գաղ · դ · 16 :

7 Հիմիկ առանց ամէն հակառակութեան է , որ ցածն վերինէն օրհնուի ։
8 Եւ հատեղ մեռնելոյ մարդիկ տասանորդ են առնում · բայց հնտեղ վկայեցաւ թէ նա կենդանի է ։
9 Եւ ինչպէս որ խօսքի կարգն է բերում · ասեմ թէ Լեբրահամին Ղևին էլ որ տասանորդ է առնում՝ տասանորդ տուաւ ։
10 Ինչու որ՝ դեռ նա իրան չօր ելանքումն (Ելջուսն) էր՝ որ երբոր Մելքիսեդեկն նորա առաջն եկաւ ։
11 Ապա ուրեմն թէ որ կատարելութիւնն Ղևտացոց քահանայութեծնովն էր ՝ (ինչու որ ժողովուրդն նորա ներքևն օրէնքն ընդունեց) · էլ ի՞նչ պէտք էր որ Մելքիսեդեկի կարգին պէս մին ուրիշ քահանայ առաջ գայ՝ և Հարօնի կարգին պէս չասվի[6] ։
12 Հայց երբոր քահանայութիւնն փոխվում , պէտք է որ օրէնքն էլ փոխվի ։
13 Պատճառն որ՝ նա որ նորա համար էսպէս է ասվում՝ ուրիշ ցեղի մասնակից է · որ նորանից խսկի մինն սեղանին հաղորդ չէլաւ ։
14 Ինչու որ յայտնի բան է՝ որ մեր Տէրն Յուդայի ցեղիցն ծագեց՝ · որ էն ցեղի վերայ Մովսէսն խսկի բան չըխօսեց քահանայութեան համար ։
15 Եւ էլ աւելի յայտնի է թէ Մելքիսեդեկի նմանութեան պէս մին ուրիշ քահանայ պիտի առաջ գայ ։
16 Որ մարմնաւոր պատուիրանքին պէս չէլաւ , բայց վերջն չըւնող կեանքի զօրութեան պէս ։
17 Ինչու որ՝ վկայվեցաւ , թէ՝ Դու քահանայ ես յաւիտեան Մելքիսեդեկի կարգին պէս՝ ։
18 Նչ դէն է քցվում առաջին պատուիրանքն՝ իրան տկարութեան և անօգուտ լինելոյն համար[9] ։
19 Պատճառն որ՝ օրէնքն խսկի մին կատարելութիւն չըգործեց[10] , և ներս մտաւ (աւելի) աղնիւ յոյս[11] որ նորանով մտնենումենք Աստուծոյ մօտ[12] ։
20 Եւ էնքան որ առանց երդումի չէ · (ինչու որ՝ նորանք առանց երդումի քահանայ են էլած ·)
21 Հայց սա՝ երդումով նորա ձեռնովն՝ որ ասաց նորան · Տէրն երդուաւ՝ և էլ չի զղջանալ , թէ դու քահանայ ես յաւիտեան[13] ։
22 Եւ էնքան աւելի աղնիւ ուխտապայմանի երաշխաւոր (ռէֆիլ) էլաւ Յիսուսն[14] ։
23 Եւ (նորանք) շատ քահանայ են էլել · ինչու որ՝ մահն արգելուում էր նորանց՝ որ միշտ մնան ։
24 Հայց սա որովհետև յաւիտեան է կենում , քահանայութիւնն ունի առանց անցկենալոյ ։
25 Որ նոյնամար էլ բոլորովին կարող է կենդանի անել նորանց՝ որ նորանով մտնենումեն Աստուծոյ մօտ · ինչու որ՝ միշտ կենդանի է՝ որ նորանց համար բարեխօսութիւն անէ[15] ։
26 Պատճառն որ՝ հենց էսպէսի քահանայապետ վայելումէր մեզ , սուրբ , անմեղ , անարատ , մեղա-

(6) Կող · բ · 21 · Ամոս · 18 , 19 · Նբէր · ը · 7 · (7) Նոյ · ժա · 1 · Մատթ · ա · 3 · Գործ · գ · 33 · Հռոմ · ա · 3 · Հայտ · ե · 5 · (8) Սաղ · ճԺ · է · Նբէր · ե · 6 · 10 · ղ · 20 · (9) Հռոմ · ը · 3 · Կող · գ · 9 · (10) Գործ · ժգ · 39 · Հռոմ · գ · 20 , 21 · 28 · ը · 3 · Կող · բ · 16 · Նբէր · թ · 9 · (11) Նբէր · ղ · 18 · ը · 6 · (12) Հռոմ · ե · 2 · Եփես · բ · 18 · գ · 12 · Նբէր · դ · 16 · ժ · 19 · (13) Սաղ · ճԺ · է · (14) Նբէր · ը · 6 · թ · 15 · ժբ · 24 · (15) Հռոմ · ը · 34 · ա Տիմ · բ · 5 · Նբէր · թ · 24 · ա Յովհ · բ · 1 ·

ւորներից ջոկված[16] և երկնքից էլ վեր բարձրացած[17] ։

27 Որ Նորան պէտք չէ ինչպէս ուրիշ քահանայապետներին , որ ա-մէն ժամանակ առաջ իրանց մեղքերին համար պատարագներ մատուցանեն[18], և յետոյ ժողովրդին համար[19] • բայց սա մին անգամ կատարեց էն նրանով՝ որ իրան անձըն պատարագ մատուցց[20] ։

28 Օրէնքն մարդկանց կանգնացնում քահանայապետ՝ որ պատած են տկարութենով[21] • բայց էն երդումի խօսքն՝ որ օրէնքից ետև է՝ (կանգնացնում) Որդուն՝ որ յաւիտեան կատարեալ է[22] ։

Գ Լ · Ը

1 Քրիստոսի առանց անցկենալոյ քահանայութենովն՝ Ա՛հարօնի Ղեւտացոց քահանայութիւնն ազատանվեցաւ • 7 Եւ հայրերին հետ էլած ժամանակաւոր ուխտադպրմանըն՝ Աւետարանի յաւիտենական ուխտադպրմանովն ազատանվեցաւ ։

1 Եւ ասաց խօսքերի գլուխըն էս է • (մենք) էսպէսի քահանայապետ ունինք , որ մեծութեան աթոռի աջ կողմն նստեց երկնքումն[1]։

2 Եւ սրբութեանց պաշտօնեայ է[2] և ճշմարիտ խորանի , որ Նորան Տէրն կանգնացրուց՝ և ո՛չ թէ մարդ[3] ։

3 Պատճառն որ՝ ամէն քահանայապետ մատաղներ և պատարագներ մատուցանելոյ համար կարգված է[4] • ուրեմն Նորան էլ պէտք է որ մին բան ունենայ՝ որ մատուցանէ[5] ։

4 Ինչու որ եթէ երկրիցս էր՝ էլ քահանայ չէր • պատճառն որ Նորանք կային՝ որ օրէնքին պէս պատարագ էին մատուցանում ։

5 Որ Նորանք երկնաւոր բաների առակին և օրինակին ծառայումէին[6], ինչպէս որ Հրաման էլաւ Մ՛օսէսին • երբոր էն ժամի խոյանըն շինելու էր , Մ՛որ տուր ասումէ • որ ա-մէն բան անես էն օրինակին պէս՝ որ ցոյց տըվվաւ քեզ սարումն[7] ։

6 Բայց հիմիկ՝ Յիսուս աւելի ազնիւ պաշտամունքի հասաւ , որքան ինքն աւելի լաւ ուխտադպրմանի միջնորդ է՝ որ աւելի աղնիւ աւետիքների վերայ հաստատվեցաւ[8] ։

7 Ինչու որ՝ եթէ առաջինն առանց պակասութեան լինէր , էլ երկրորդին համար տեղ չէր խընդրըվիլ[9] ։

8 Բայց աչա յանդիմանումէ նորանց և ասում • Ա՛խա օրեր կըգան՝ ասումէ Տէրն[10] • և Նոր ուխտ կըկատարեմ Իսրայէլի տանն և Յուդայի տանն վերայ ։

9 Մ՛է թէ էն ուխտին պէս՝ որ Նորանց հարանց հետ դրի՝ էն օրումն , որ ձեռիցն բռնեցի Նորանց Եգիպտացոց երկրիցն հանելոյ համար • ինչու որ՝ Նորանք հաստատ չըկացան իմ ուխտիս մէջ , և ես երեսից քցեցի Նորանց , ասումէ ա-մէնակարօղ Տէրն ։

10 Բայց էս է ուխտն՝ որ կըդը-

(16) Նէբ · դ · 15 ։ (17) Նէմ · ա · 20 ։ դ · 10 ։ Նէբ · ը · 1 ։ (18) ՂՒա · թ · 7 ։ ԺԶ · 6 · 11 ։ Նէբ · ե · 3 ։ թ · 7 ։ (19) ՂՒա · ԺԶ · 15 ։ (20) Ա՛ռաջ. Զ · 10 ։ Նէբ · թ · 12 · 28 ։ ժ · 12 ։ (21) Նէբ · ե · 1 , 2 ։ (22) Նէբ · բ · 10 ։ ե · 9 ։ (1) Նէմ · ա · 20 ։ Կող. գ · 1 ։ Նէբ · ա · 3 ։ ժ · 12 · ԺԲ · 2 ։ (2) Նէբ · թ · 8 · 12 · 24 ։ (3) Նէբ · թ · 11 ։ (4) Նէբ · ե · 1 ։ (5) Նէմ · ե · 2 ։ Նէբ · թ · 14 ։ (6) Կող. բ · 17 ։ Նէբ · թ · 23 · ժ · 1 ։ (7) Նէմ · իե · 40 ։ իՀ · 30 ։ իե · 8 ։ Ա՛ռա. ը · 5 ։ Դտրն · է · 44 ։ (8) բ Կորնթ. գ · 6 · 8 , 9 · Նէբ · է · 22 ։ (9) Նէբ · է · 11 · 18 ։ (10) Նէրմ · լա · 31—34 ։

նեմ Իսրայելի տանն հետ՝ են օրե-
րին ետև , ասում Տէրն . կըտամ
իմ օրէնքները նորանց մտքին մէջ
և նորանց սրտերի մէջ կըգրեմ նո-
րանց[11] . և նորանց Աստուած կըլի-
նիմ , և նորանք ինձ ժողովուրդ
կըլինին[12] :

11 Եւ էլ նորանց ամէն մէկն չի
սովորցնիլ իրան քաղաքացոյն , և
ոչ էլ ամէն մէկն իրան եղբօրըն՝ և
ասել , Թէ Ճանաչիր Տէրըն . ին-
չու որ՝ ամէնքն էլ կըճանաչին ինձ՝
նորանց փոքրներից մինչև մե-
ծերն[13] :

12 Պատճառն որ՝ նորանց անօրէ-
նութիւններին քաւիչ կըլինիմ . և
նորանց մեղքերըն՝ և անօրէնու-
թիւններըն էլ չեմ յիշիլ[14] :

13 Ասպա նոր ասելովն՝ են առա-
ջինըն վեացրուց . և են որ վեանու-
մ և ծերանում՝ մօտ է ապակա-
նութեան[15] :

ԳԼ · Թ

*1 Տաճարի միջումն էլած սուրբ բաներին և պատարագներին յիշատակութիւն , 11 Ու թէ Քրիստոսի արած պատարագըն՝ որ նա խաչին վերայ էլաւ , նորանցից շատ ազնիւ և կատար-
եալ է :*

1 Առաջին որ առաջին (կտակա-
րանն) էլ էն ժամանակին պաշտա-
մունքի իրաւունք ունէր՝ էն աշ-
խարհական սրբատեղն[1] :

2 Ինչու որ՝ առաջին խորանն էս-
պէս պատրաստվեցաւ[2] . որ նորա-
նում էր[3] ճրագակալն[4] և սեղանն
և նուէրքի հացն[5] , և էն Սրբու-
թիւն էր կոչվում :

3 Եւ երկրորդ վարագուրիցն ե-
տև էն խորանն էր՝ որ Սրբութեանց
սրբութիւն էր կոչվում[6] :

4 Որ նորանում կար ոսկէ բուր-
վառն , և կտակարանների սընտու-
կըն ներսիցն և դրսիցն ոսկով պա-
տած[7] . որ նորանում կար ոսկէ
կուժն մանանայով լիքն[8] , և Ահա-
րոնի գաւազանն՝ որ ծաղկեց[9] , և
կտակարանների տախտակներն[10] :

5 Եւ նորա վերայ փառաց քերո-
բէներն՝ որ շուաք էին անում քա-
ւութեանն վերայ[11] . որ նորա հա-
մար պէտք չէ հիմիկ մին մին ասել :

6 Եւ երբոր էն ամէնն էնպէս
պատրաստված էր , քահանայքն ա-
մէն ժամանակ մտնում էին առաջին
խորանին մէջ՝ որ պաշտամունքնե-
րըն կատարեն[12] :

7 Բայց երկրորդին մէջ քահա-
նայապետն տարին մին անգամ
(մտնում էր)[13] . և էն չէ թէ առանց
արիւնի , որ իրան համար՝ և ժողո-
վրդի տգիտութիւններին համար
մատուցանում էր[14] :

8 Որ Սուրբ Հոգին նորանով էս
ցոյց էր տալիս[15] որ դեռ սրբութիւն-

(11) Ելք . ժ . 16 : (12) Ովս . ը . 8 : (13) Բաց . ծգ . 13 : Յովէլ . գ . 15 : ա Յովէլ . բ . 27 : (14) Հռով . ժա . 27 : Ելք . ժ . 17 : (15) բ Կորնթ . ե . 17 : (1) Ելք . իե . 8 : (2) Ելք . իգ . 1 : (3) Ելք . իգ . 35 : իա . 4 : (4) Ելք . իե . 31 : (5) Ելք . իե . 23 . 30 : Լևտ . իդ . 5 , 6 : (6) Ելք . իգ . 31 . 33 : իա . 3 . 21 : Ելը . գ . 19 : (7) Ելք . իե . 10 : իգ . 33 : իա . 3 . 21 : (8) Ելք . ժգ . 33 , 34 : (9) Թուա . իէ . 10 : (10) Ելք . իե . 16 . 21 : լգ . 29 : իա . 20 : բ Օրէն . ժ . 2 . 5 : գ Թագ . ը . 9 . 21 : բ Պաղ . ե . 10 : (11) Ելք . իե . 18 . 22 : Լևտ . ժգ . 2 : գ Թագ . ը . 6 , 7 : (12) Թուա . իը . 3 : Գաղ . ը . 11 : (13) Ելք . Լ . 10 : Լևտ . ժգ . 2 . 11 , 12 . 15 . 34 : Ղևտ . 25 . (14) Ելը . ե . 3 : է . 27 : (15) Ելը . ժ . 19 , 20 :

Ների Ճանապարհն յայտնըված էր[18]։ Նրահամար որ՝ առաջին խորանն դեռ հաստատ կանգնած էր ։

9 Որ էն մին առակ էր էն ժամանակին համար , որ առաջի կար ։ որ նորանում պատարագներ և մատաղներ էին մատուցանվում , որ խըղճմտանքին մտիկ տալով՝ չէին կարող կատարեալ անել նորանց՝ որ պաշտում էին[17] ։

10 Այլ մէնակ կերակուրներով և խմելիքներով[18] և կերպ կերպ լուացմունքներով[19] մարմնոյ արդարութիւններ ։ որ նորանք մինչև շինտակվելոյ ժամանակն կարգված էին[20] ։

11 Այլ Քրիստոս որ յետոյ լինելու բարիքների[21] Քահանայապետ եկաւ[22]՝ մեծ և կատարեալ՝ և առանց ձեռքի շինած խորանովն , այսինքն՝ որ էս ստեղծվածներիցն չէ[23] ,

12 Եւ ոչ թէ նոխազների (աէնէը նէրէ) և արջառների արիւնովն[24] ։ այլ իրան արիւնովն[25] մին անգամ մտաւ էն սրբատեղն[26]՝ և յաւիտենական փրկութիւն գտաւ[27] ։

13 Ինչու որ՝ եթէ ցուլերի (պոը-պանէրէ) և նոխազների արիւնն[28]՝ և երինջների մոխիրն ցանելով՝ սըրբութիւեր պղծվածներին՝ մարմնաւոր սրբութիւն ստանալոյ համար[29] ։

14 Այլ որքան աւելի Քրիստոսի արիւնն[30]՝ որ յաւիտենական Հոգով ձեռնովն[31]՝ իրան անձըն անարատ պատարագ մատուց Աստուծոյն[32] , ձեր խըղճմտանքըն կըսրբէ[33] էն մեռած գործքերիցն[34]՝ որ կենդանի Աստուծոյն պաշտէք[35] ։

15 Եւ նրահամար[36] նա նոր ուխտի միջնորդ է[37] , որ երբոր մահ էլաւ փրկութեան համար էն առաջին ուխտի ժամանակումն էլած յանցանքների պատճառովն[38] , աւետիքըն առնեն նորանք՝ որ ժառանգութեան մէջ կանչված են[39] ։

16 Պատճառն որ՝ որտեղ որ մին կտակ կայ՝ հարկաւոր է որ էն կրտակ գրողն մեռնիին առաջ բերվի ։

17 Ինչու որ՝ կտակ մեռնելուցն ետև հաստատ է ։ ապա թէ չէ՝ իմչպէս հաստատ կըլինի՝ քանի որ էն կտակ գրողն կենդանի է[40] ։

18 Սրահամար առաջինն էլ առանց արիւնի չըՀաստատվեցաւ[41] ։

19 Պատճառն որ՝ երբոր Մօսէսն օրէնքի ամէն պատուիրանքներըն պատմեց ժողովըրդին , ցուլերի (պոըպանէրէ) և նոխազների (աէնէրէ) արիւնըն առաւ[42]՝ ջրի և կարմիր բըրդի և զոպայի հետ , և հենց էն կտակարաններին և ամէն ժողովըրդին վերայ ցանեց[43] ,

20 Եւ ասաց ։ Այս է կտակի արիւնն՝ որ Աստուած նորան պատուիրեց ձեզ[44] ։

21 Եւ խորանին և պաշտամունքի

(16) Հեվ · ժդ · 6 ։ (17) Գալ · գ · 21 ։ Նէբ · է · 18 , 19 ։ ժ · 1 · 11 ։ (18) Ղևտ · ժա · 2 ։ Կող · բ · 16 ։ (19) Թուոց · ժթ · 7 ։ (20) Նէեմ · բ · 15 ։ Կող · բ · 20 ։ Նէբ · է · 16 ։ (21) Նէբ · ժ · 1 ։ (22) Նէբ · գ · 1 ։ (23) Նէբ · ը · 2 ։ (24) Նէբ · ժ · 4 ։ (25) Գործ · ի · 28։ Նէեմ · ա · 7 ։ Կող · ա · 14։ ա Պետր · ա · 19։ Հայտ · ա · 5 ։ է · 9 ։ (26) Հօսէ · գ · 9 ։ Ալայ · 26 · 28 ։ Նէբ · ժ · 10 ։ (27) Դան · թ · 24։ (28) Ղևտ · ժգ · 14 · 16 ։ (29) Թուոց · ժթ · 2 · 17։ (30) ա Պետր · ա · 19 ։ ա Հեվ · ա · 7 ։ Հայտ · ա · 5 ։ (31) Հռոմ · ա · 4 ։ ա Պետր · գ · 18 ։ (32) Նէեմ · բ · 5 ։ Տիտ · բ · 14 ։ Նէբ · է · 27 ։ (33) Նէբ · ա · 3 ։ ժ · 22 ։ (34) Նէբ · ը · 1 ։ (35) Ղևտ · ա · 7֊ ։ Հռոմ · զ · 13 · 22 ։ ա Պետր · գ · 2 ։ (36) ա Տիմ · բ · 5 ։ (37) Նէբ · է · 22 ։ ը · 6 ։ ժ · 24 ։ (38) Հռոմ · գ · 25 ։ է · 6 ։ ա Պետր · գ · 18։ (39) Նէբ · գ · 1 ։ (40) Գալ · գ · 15 ։ (41) Նէ · իդ · 6 ։ (42) Նէ · իդ · 5 , 6 · 8 ։ Ղևտ · ժգ · 14 , 15 · 18 ։ (43) Ղևտ · ժդ · 4 · 6 , 7 · 49 · 51 , 52 ։ (44) Նէ · իդ · 8 ։ Մատթ · իգ · 28 ։

ամէն ամաններին վերայ էլ հենց էնպէս արիւնըն ցանեց[45] :
22 Եւ համարեա թէ ամէն բան արիւնով էր սրբըվում՝ օրէնքի հրամանին պէս ; և առանց արիւն թափելոյ թողութիւն չէր լինում[46] :
23 Ապա հարկաւոր էր՝ որ երկնաւոր բանների օրինակներն էսպէսի բաներով սրբվին · բայց յաւուկ երկնաւորներն ինքնին նորանից աւելի ազնիւ պատարագներով[47] :
24 Պատճառն որ՝ չէ թէ ձեռքով շինված սրբատեղերին մէջ մտաւ Քրիստոսն[48] որ ճշմարտութեան օրինակները էին[49] , բայց հենց յաւուկ երկնքին մէջ՝ որ Աստուծոյ երեսի առաջին երևի մեզ համար[50] :
25 Չէ որ շատ անգամ իրան անձըն պատարագ մատուցանէ՝ ինչպէս որ քահանայապետն , որ տարուց տարի մտնում սրբութեանց սրբութիւնն օտար արիւնով[51] :
26 Ապա թէ չէ՝ պէտք էր որ նա աշխարհքի սկզբից ետև շատ անգամ չարչարվի · բայց հիմիկ՝ ա-ՀԱ ժամանակների վերջում[52] մին անգամ[53] յայտնվեցաւ , որ մեղքըն դէն քցէ իրան պատարագովն :
27 Եւ ինչպէս որ մարդկանց համար սահմանված է մին անգամ մեռնելն[54] և նրանից ետև դատաստանն[55] ·
28 Ընդ էնպէս էլ Քրիստոս մին անգամ պատարագվեցաւ[56] շատերի[57] մեղքերըն վերառնելոյ համար[58] · բայց երկրորդ անգամն առանց մեղքի կը յայտնվի նորանց՝ որ սպասումն նորան հաւատքով՝ որ փրկվին[59] :

Դ · Ա

1 Օրէնքի պատարագներին տկարութիւնն · 10 Քրիստոսի մարմնոյ մին անգամ պատարագովն սրբվեցանք · 14 Նա միշտ և յաւիտեան մեղքերըն վերառաւ : 19 Համբերութեամբ և գոհութեամբ հաւատքի մէջ հաստատ մնալոյ մին յորդորանք :

1 Պատճառն որ՝ օրէնքն յետոյ գալու բարիքների[1] շուաքըն ունէր[2], ոչ թէ էն բաների յաւուկ կերպարանքըն · տարուց տարի միշտ հենց էն պատարագներըն մատուցանումն[3] որ չեն կարող կատարեալ անել մատուցանողներին[4] :
2 Ապա թէ չէ՝ կըդադարէին էն մատուցանելուցն , նրահամար որ պաշտօն անողներն նրանից ետև էլ մեղքի խըղճմտանք իսկի չէին ունենալ · ինչու որ՝ մինանգամ սրբըվեցան :
3 Նայց էն (պատարագներով) տարուց տարի մեղքերի յիշատակ էր լինում[5] :
4 Ինչու որ նոխազների (աչխէնէրի) և ցուլերի (պուղանէրի) արիւնն

(45) Նէ · թ · 12 · 36 : Ղևտ · ը · 15 · 19 : Ժզ · 14 , 15 , 16 · 18 , 19 : (46) Ղևտ · ժե · 11 : (47) Նբէր · ը · 5 : (48) Նբէր · զ · 20 : (49) Նբէր · ը · 2 : (50) Հռովմ · ը · 34 : Նբէր · է · 25 : ա Յովհ · բ · 1 : (51) Ղևտ · 7 : (52) ա Կորնթ · ժ · 11 : Գաղ · գ · 4 : Նէթէս · ա · 10 : (53) Ղևտ · 12 : Նբէր · է · 27 : ժ · 10 : ա Պետր · գ · 18 : (54) Ննդեղ · գ · 19 · Յովղ · գ · 20 : (55) բ Կորնթ · է · 10 : Հայոց · ի · 12 , 13 : (56) Հռովմ · զ · 10 : ա Պետր · գ · 18 : (57) Մատթ · իզ · 28 : Հռովմ · է · 15 : (58) ա Պետր · բ · 24 : ա Յովհ · գ · 5 : (59) Տիտ · բ · 13 : բ Պետր · գ · 12 : (1) Նբէր · թ · 11 : (2) Կող · բ · 17 : Նբէր · ը · 5 : թ · 23 : (3) Նբէր · թ · 9 : (4) Ղևտ · 14 : (5) Ղևտ · Ժզ · 21 : Նբէր · թ · 7 :

չէր կարօղ մեղքերըն վերառնել[6] ։
5 Նրա համար իրան աշխարհք մնռնելոյ ժամանակումն ասում է · Ա՝տաղներ և պատարագներ (դու) չկամեցար , բայց մարմինըն պատրաստեցիր ինձ[7] ։
6 Ողջակէզներն և մեղաց համար (պատարագներն) հաճոյ չէլան քեզ ։
7 Յն ժամանակն ասացի Թէ՝ Ես կամ եկի · գրքերի խօսքերումն գրված է ինձ համար՝ քո կամքըդ առնելոյ՝ ով Աստուած ։
8 Ի երևումն ասում թէ՝ Ա՝տաղներն և պատարագներն և ողջակէզներն և մեղաց համար (պատարագներն) հաճոյ չէլան քեզ , և չկամեցար նրանց՝ որ օրէնքի հրամանին պէս նրանք էին մատուցանվում ։
9 Ապա ասում · Ես կամ գալիս եմ քո կամքըդ անելոյ՝ ով Աստուած · առաջինն դէն է քցում՝ որ երկրորդըն հաստատէ ։
10 Որ էն կամքովն մենք էլ սրբըվեցանք[8] միանգամ Յիսուսի Քրիստոսի մարմնոյ պատարագովն[9] ։
11 Եւ ամէն քահանայապետ ամէն օր կանգնած պաշտամունք է կատարում · և հենց էն պատարագներըն շատ անգամ մատուցանում[10], որ իսկի չեն կարօղ մեղքերըն վերառնել[11] ։
12 Նայց սա մին պատարագ մատոյց մեղաց համար , և միշտ և յաւիտեան նստեց Աստուծոյ աջ կողմն[12]։
13 Եւ սրանից հետև սպասում՝ մինչև որ իրան ամէն թշնամիներն իրան ոտաց ներքևն դնվին[13] ։
14 Ինչու որ՝ մին պատարագով միշտ և յաւիտեան կատարեց նրանց որ սրբվումեն[14] ։
15 Նայց Սուրբ Հոգին էլ վկայումէ մեզ , երբոր առաջ ասաց ·
16 Ահէ այս է ուխտն՝ որ կրդնեմ նորանց հետ էն օրերիցն հետև · կըտամ իմ օրէնքներըս նորանց սրտքին մէջ , և նորանց խորհուրդներին մէջ կգրեմ նորանց[15] ։
17 Յետոյ ասում՝ Թէ Նորանց մեղքերըն և նորանց անօրէնութիւններըն մինչև չեմ յիշել ։
18 Նայց որտեղ որ (մեղաց) թողութիւն է՝ էնտեղ էլ մեղքի համար պատարագ պէտք չէ ։
19 Ուրեմն ղբարք՝ համարձակութիւն ունինք[16] սրբատեղն մտնելոյ Յիսուսի արիւնովն[17] ։
20 Որ էն պատրաստեց նոր և կենդանի ճանապարհ մեզ համար[18] վարագուրի միջովն , այսինքն՝ իրան մարմնովն[19] ։
21 Եւ (ունինք) մեծ քահանայ[20] Աստուծոյ տան վերայ[21] ։
22 Պէտք մտենանք նորան ճշմարիտ սրտով[22], կատարեալ հաւատքով[23] , սրտերըս լուացած չար խղճմտանքիցն[24] , և մարմիններըս մկրտված սուրբ ջրովն[25] ։
23 Պինդ բռնենք յուսոյ դաւանութիւնն առանց շարժվելոյ[26]· պատճառն որ հաւատարիմ է նա՝ որ խոստացաւ էն[27] ։

(6) Մխէ · ղ · 6 , 7 ։ Եբր · թ · 13 ։ Ա՝յր · 11 ։ (7) Ա՝ղմ · խ · 6 · ծ · 8 ։ Ես՝այ · ա · 11 ։ Երէմ · ղ · 20 ։ Հովհ · է · 21 , 22 ։ (8) Հովհ · ժէ · 19 ։ Եբր · ժգ · 12 ։ (9) Եբր · թ · 12 ։ (10) Թես · իը · 3 ։ Եբր · է · 21 ։ (11) Ա՝յր · 4 ։ (12) Եբր · ա · 3 ։ Ա՝ղ · գ · 1 ։ (13) Ա՝ղմ · ճժ · 1 ։ Գործ · բ · 35 ։ ա Կորնթ · ժե · 25 ։ Եբր · ա · 13 ։ (14) Ա՝յր · 1 ։ (15) Երէմ · լա · 33 , 34 ։ Եբր · ը · 10 · 12 ։ (16) Հռովմ · ե · 2 ։ Եփես · բ · 18 ։ գ · 12 ։ (17) Եբր · թ · 8 · 12 ։ (18) Հովհ · ժ · 9 ։ ժգ · 6 ։ Եբր · թ · 8 ։ (19) Եբր · թ · 3 ։ (20) Եբր · դ · 14 ։ (21) ա Տի՛մ · գ · 15 ։ (22) Եբր · դ · 16 ։ (23) Եփես · գ · 12 ։ Յակ · ա · 6 ։ ա Հովհ · գ · 21 ։ (24) Եբր · թ · 14 ։ (25) Նէհ · լգ · 25 ։ բ Կորնթ · է · 1 ։ (26) Եբր · դ · 14 ։ (27) ա Կորնթ · ա · 9 ։ ժ · 13 ։ ա Թես · ե · 24 ։ բ Թես · գ · 3 ։ Եբր · ժա · 11 ։

24 Եւ հոգս անենք իրար համար՝ դէպի սէր և բարի գործերը յորդորելով ։

25 Եւ չլքենք մեր իրար ժողովքը , ինչպես որ մին քանիսն սովոր են անել[23] · բայց (իրար) յորդորենք , և էնքան էլ աւելի՝ որքան տեսնում էք[23] որ էն օրն մօտենում է[20] ։

26 Պատճառն որ եթէ մենք ճշմարտութեան գիտութիւնը ընդունելուն ետև[31] յօժար մտքով մեղք գործենք[32] , էլ նրանից ետև մինէլ մեղաց համար պատարագ չի մնում ,

27 Այլ դատաստանի ահաւոր ըսպասելն , և կրակի նախանձ՝ որ հակառակողներին կըլափէ[33]

28 Ո՛րինն որ Մովսէսի օրէնքըն առանց ողորմութեան[34] երկու կամ երեք վկայի (խօսքով) մեռնում էր[35] .

29 Ու՞ր չափ աւելի սաստիկ պատժոյ արժանի կըհամարիք Նրան , որ Աստուծոյ Որդոյն ոտի տակ կոխեց[36] · և նոր ուխտի արիւնըն պիղծ համարեց՝ որ նա սրբվեցաւ նորանով[37] . և շնորհաց Հոգոյն նախատինք տըւաւ[38] ։

30 Այլ գիտութիւնք նրան՝ որ ասաց · Ինձ է վրէժ առնելն իմն է , և ես հատուցումըն կրտամ՝ ասում Տէրըն[39] · և մինէլ թէ Տէրն կըդատէ իրան ժողովըրդին[40] ։

31 Սաստիկ վախենալոյ բան է՝ կենդանի Աստուծոյ ձեռքին մէջ ընկնելն[41] ։

32 Ուրեմն յիշեցէք առաջին օրերըն[42] , որ դուք լուսաւորվեցաք[43] և շատ նեղութիւններին և չարչարանքներին համբերեցիք[44] ։

33 Ինչու որ ժամանակ կար՝ որ նախատինքների և նեղութիւնների մէջ խայտառակվեցաք[45] , և ժամանակ կար՝ որ էնպէսի բան քաշողներին հետ մասնակից էյաք[46] ։

34 Պատճառն որ կապվածներին հետ էլ չարչարվեցաք[47] , և ձեր ապրանքների յափշտակութիւնըն էլ ուրախութեամբ ընդունեցիք[48] · ինչու որ գիտութիւնք որ ձեր անձնեբրիդ համար էլ աւելի լաւ ստացուածք ունիք երկնքումն՝ որ կենում է և մնում[49] ։

35 Ուրեմն դէն չըլքէք ձեր վըստահութիւնըն՝ որ նորանում մեծ վարձքի հատուցումն կայ[50] ։

36 Համբերութիւն պէտք է ձեզ[51] · որ Աստուծոյ կամքըն անելով՝ առնեիքին հասնէք[52] ։

37 Ինչու որ՝ մինքիչ ժամանակ էլ[53] և նա որ գալու է կըգայ և չի ուշանալ[54] ։

38 Այլ իմ արդարս հաւատքիցն կապրի[55] · և թէ որ մինն երկմիտ

(28) Կոր · բ · 12 : Ցոյր · 19 : (29) Հոմ · ժգ · 11 : (30) Փիլպ · գ · 5 : բ Պետր · գ · 9 · 11 · 14 : (31) բ Պետր · բ · 20 , 21 : (32) Թես · ժբ · 30 : Նբէր · Ջ · 4 : (33) Նվէի · ԼԶ · 5 : Սոփն · ա · 18 · գ · 8 : բ Թես · ա · 8 : Նբէր · ժբ · 29 : (34) Նբէր · բ · 2 : (35) բ Օրէն · ժբ · 2 · 6 : ժթ · 15 : Մատ · ժը · 16 : Ցովհ · ը · 17 : բ Կորնթ · ժգ · 1 : (36) Նբէր · բ · 3 : ժբ · 25 : (37) ա Կորնթ · ժա · 29 : Նբէր · ժգ · 20 : (38) Մատ · ժբ · 31 , 32 : Նէեմ · գ · 30 : (39) բ Օրէն · լը · 35 : Հռոմ · ժբ · 19 : (40) բ Օրէն · լը · 36 : Սաղ · ծ · 4 : ճղ · 14 : (41) Ղևտ · ժբ · 5 : (42) Գաղ · գ · 4 : բ Ցովհ · 8 : (43) Նբէր · Ջ · 4 : (44) Փիլպ · ա · 29 , 30 : Կող · բ · 1 : (45) ա Կորնթ · գ · 9 : (46) Փիլպ · ա · 7 : գ · 14 : ա Թես · բ · 14 : (47) Փիլպ · ա · 7 : բ Տիմ · ա · 16 : (48) Մատ · ե · 12 : Գործ · ե · 41 : Ցով · ա · 2 : (49) Մատ · Ջ · 20 : ժթ · 21 : Ղևտ · ժբ · 35 : ա Տիմ · Ջ · 19 : (50) Մատ · ե · 12 : ժ · 32 : (51) Ղևտ · խա · 19 : Գաղ · Ջ · 9 : Նբէր · ժբ · 1 : (52) Կող · գ · 24 : Նբէր · թ · 15 : ա Պետր · ա · 9 : (53) Ղևտ · ժը · 8 : բ Պետր · գ · 9 : (54) Ընթ · բ · 3 , 4 : (55) Հռոմ · ա · 17 : Գաղ · գ · 11 :

լինի , նորան իմ անձս չի հաւան կենալ ։
39 Այլ մենք երկմտութենով չենք՝ որ կորչինք[56] · բայց հաւատքով որ հոգիներս փրկվին[57] ։

ԳԼ · ԺԸ

1 Հաւատքն ինչ լինելը , 6 Առանց հաւատքի կարող չենք հաճոյ լինիլ Աստուծոյն , 7 Նո հաւատքի ճշմարիտ պատուղներըն ունեին հին ժամանակումն էլած հարքըն ։

1 Հաւատքն ի՞նչ է , եթէ ոչ յուսացած բաների հաստատութիւն , և են բաների յոյց տալն՝ որ չեն երևում[1] ։
2 Ինչու որ նորանով առաջին մարդիքն վկայութիւն ընդունեցին[2] ։
3 Հաւատքով ենք իմանում որ աշխարհքներն հաստատվեցան Աստուծոյ խօսքովն , որ աներևոյթ բաներից ես երևօղներս էյան[3] ։
4 Հաւատքով Աբէլն պայհիցն աւելի լաւ պատարագ էր մատուցանում Աստուծոյն[4] որ նորանով էլ վկայութիւն ընդունեց որ արդար է · ինչու որ են պատարագներին վերայ վկայութիւն էլաւ նորան Աստուածմէն · որ նա՝ թէ և մեռաւ նորանով , բայց դեռ հիմիկ խօսում[5] ։
5 Հաւատքով Ենօքն փոխվեցաւ՝ որ մահըն չըտեսնէ[6] · և իսկի մինտեղ չէր գտնվում · ինչու որ Աստուած փոխեց նորան · և իրան փոխվելուցն առաջ վկայվեցաւ՝ որ հաճոյ է Աստուծոյն ։
6 Այլ առանց հաւատքի անկարելի է հաճոյ լինիլ (Աստուծոյն) · բայց նորան որ Աստուծոյն մօտենում՝ պէտք է որ հաւատայ՝ թէ կայ Աստուած կայ · և Նորանց որ խընդրումն նորան պարգև կըհատուցանէ ։
7 Հաւատքով Նոյ հրաման առաւ դեռ չերևաած բաների համար[7] և խիստ վախով բանըված շինումէր էն տապանըն իրան տան փրկութեան համար[8] , որ նորանով աշխարհքիս դատեց · և էն արդարութիւնն ժառանգեց՝ որ հաւատքիցըն է[9] ։
8 Հաւատքով Աբրահամն երբոր կանչվեցաւ՝ Քաղանդ էլաւ՝ դուրս գնալոյ էնտեղն , որ նորա ժառանգութեան պէս պիտի առնէր · դուրս եկաւ գնաց և չէր գիտում թէ ուր գնայ[10] ։
9 Հաւատքով պանդուխտ (պանըկ) էլաւ աւետիքի երկրումն իբր մին օտար տեղում · խորաններում (չատրնէրում) բնակվեցաւ Յահակի և Յակոբայ հետ[11] որ նորանք էլ նորա հետ հենց էն աւետիքի ժառանգ էյին[12] ։
10 Պատճառն որ՝ սպասումէր էն հիմունքով հաստատված քաղաքին[13] , որ նորա ճարտարապետն և շինօղն Աստուած է[14] ։
11 Հաւատքով Սառան ինքն էլ՝

(56) բ Պետր · բ · 20 , 21 : (57) Պորձ · ժգ · 30 · 31 : ա Թես · ե · 9 : բ Թես · բ · 14 : (1) Հովվ · ը · 24 , 25 : բ Կորնթ · գ · 18 : ե · 7 : (2) Ղայր · 30 : (3) Ծննդոց · ա · 1 : Սաղմ · կդ · 6 : Հովհ · ա · 3 : Եբր · ա · 2 : բ Պետր · գ · 5 : (4) Ծննդ · դ · 4 : ա Հովհ · գ · 12 : (5) Ծննդ · դ · 10 : Մատթ · իզ · 35 : Եբր · ժբ · 24 : (6) Ծննդ · ե · 22 · 24 : (7) Ծննդ · զ · 13 · 22 : (8) ա Պետր · գ · 20 : (9) Հռովմ · գ · 22 : գ · 13 : փիլիպ · գ · 9 : (10) Ծննդ · ժբ · 1 · 4 : Պորձ · է · 2—4 : (11) Ծննդ · ժբ · 8 : ժգ · 3 · 18 : ժը · 1 · 9 : (12) Եբր · զ · 17 : (13) Եբր · ժբ · 22 : ժգ · 14 : (14) Եբր · գ · 4 : Յայտ · իա · 2 · 10 ։

որ ամուլ (չքնեղ) էր ; սերմըն առ-
նելոյ զօրութիւն ընդունումէր՝ որ-
դի ծնելոյ համար[15] . և ժամանա-
կից դուրս հասակի մէջ ծնումէր որ-
դի[16] . ինչու որ հաւատարիմ հա-
մարեց Նորան՝ որ խոստացաւ էն[17] :
12 Ուրահամայ էն մեկիցն՝ որ էլ
իրան ժամանակով անցկացած էր՝
էնքան շատեր ծնվումէին[18] , ինչպէս
երկնքի աստղներն և ինչպէս ա-
ւազն ծովի եզերին (ղողնին) մօտ՝ ա-
նոնց համարի[19] :
13 Սրանք ամէնքն մեռան հաւատ-
քի մէջ , և դեռ աւետիքներին չըն-
դունեցին[20] . բայց հեռուանց տեսին
նորանց՝ և ուրախացան[21] . և դա-
ւանեցին թէ օտար և պանդուխտ
են երկրումս[22] :
14 Պատճառն որ՝ նորանք որ էն-
պէսի բաներ են խօսում՝ յայտնի
ցոյց են տալիս՝ որ մին գաւառի են
ման գալիս[23] :
15 Եւ թէ որ էն կըմիշէին՝ որ
նորանից դուրս եկին , ժամանակ
կար յետ դառնալոյ (էնտեղ) :
16 Ինչ հիմիկ մին աւելի աշնիւ
(գաւառի) ցանկացած են , այսինքն
երկնաւորին . և նրահամար Աս-
տուած էլ ամօթ չի համարում՝ նո-
րանց Աստուած կոչվիլ[24] . ինչու որ
քաղաք պատրաստեց նորանց համար[25]:
17 Աւետքով Աբրահամին Իսա-
հակին պատարագ մատոյց՝ իրան
փորձվելոյ ժամանակումն[26] . և մա-
ծընունդ որդոյն մատուցանումէր նո-
րան որ աւետիքըն ընդունել էր[27]
18 Նորան որ ասվեցաւ՝ Թէ Իսա-
հակով քո զաւակդ կրկոչվի[28] :
19 Նա միտք արաւ՝ Թէ Աստուած
կարող է մեռելների միջեցն էլ յա-
րուցանել[29] . և էս պատճառովս էլ
օրինակի համար ընդունեց նորան :
20 Աւետքով Իսահակն Յակո-
բին և Եսաւին օրհնեց նոր գալու
բաներին համար[30] :
21 Աւետքով Յակօբն իրան մեռ-
նելոյ ժամանակումն Յոսէփի որդիք-
ներից ամէն մէկին օրհնեց[31] , և ի-
րան գաւազանի ծայրին վերայ ըն-
կած երկրպագութիւն արաւ[32] :
22 Աւետքով Յոսէփն իրան
վախճանվելոյ ժամանակումն յիշեց
Իսրայէլի որդոց դուրս գնալըն , և
իրան ոսկորներին համար հրաման
տուաւ[33] :
23 Աւետքով Մօսէսն երբոր
ծնվաւ՝ երեք ամիս թաքուն պահվե-
ցաւ իրան ծնօղքից . ինչու որ՝
տեսին Թէ մանուկն գեղեցիկ էր[34] ,
և չըվախեցան Թագաւորի հրամա-
նից[35] :
24 Աւետքով Մօսէսն երբոր
մեծացաւ՝ չկամեցաւ փարաւօնի աղջ-
կան որդի կոչվիլ[36] :
25 Աւելի լաւ համարեց Աստու-
ծոյ ժողովրդին հետ չարչարվիլ ,
քան Թէ քիչ ժամանակ մեղքով վա-
յելել[37] :
26 Աւելի աշնիւ համարեց Քրիս-
տոսի նախատինքներըն , քան Թէ
Եգիպտացոց հարուստ գանձերըն
(խոշնանէրըն)[38] . ինչու որ աչք դը-

(15) Հռովմ . ժէ . 19 : ժբ . 11 . 12 : խա . 2 : (16) Հռով . ա . 36 : (17) Հռովմ . գ . 21 : Նէեր . ժ . 23 : (18) Հռովմ . ը . 19 : (19) Հռոմ . իբ . 17 : Հռովմ . ը . 18 : (20) Ա . յոյ . 39 : (21) Ա . յոյ . 27 : Յովհ . ը . 56 : (22) Հռոմ . իգ . 4 : խէ . 9 : ա Պետ . իե . 15 : Սաղմ . լե . 12 : ճժե . 19 : ա Պետր . ա . 17 : բ . 11 , (23) Նէեր . ժգ . 14 : (24) Նէ . գ . 6 . 15 : Սաղմ . իբ . 32 : Փոխ . է . 32 : (25) Փիլիպ . գ . 20 : Նէեր . ժգ . 14 : (26) Հռոմ . իբ . 1 . 9 : (27) Հով . բ . 21 : (28) Հռոմ . իա . 12 : Հռովմ . թ . 7 : (29) Հռովմ . դ . 17 . 19 . 21 : (30) Հռոմ . իէ . 27 . 39 : (31) Հռոմ . իը . 5 . 16 . 20 : (32) Հռոմ . իէ . 31 : (33) Հռոմ . ծ . 24 , 25 : Նէ . ժգ . 19 : (34) Նէ . բ . 2 : Պետր . է . 20 : (35) Նէ . ա . 16 . 22 : (36) Նէ . բ . 10 , 11 : (37) Սաղմ . ձգ . 10 : (38) Նէեր . ժգ . 13 :

րած մեկ էր տալիս վարձքի հա-
տուցմունքին[39] :

27 Հաւատքով Թողեց Եգիպտա-
ցոց երկիրը, և չվախեցաւ թա-
գաւորի բարկութենից[40] . ինչու որ՝
համբերութենով աներևոյթ բանե-
րըն տեսածի պէս համարեց[41] :

28 Հաւատքով արաւ զատիկը և
արիւն ցանելը . որ առաջինները-
ի սատակօղն չդպնէր նորանց[42] :

29 Հաւատքով անցկացան Կար-
միր ծովովն ինչպէս ցամաք երկրի
վերայ . որ Եգիպտացիներն էլ
փորձեցին էն՝ և խեղդվեցան[43] :

30 Հաւատքով Երիքովի պարիսպ-
ներն վէր ընկան, երբոր եօթն օր
նորա չորս կողմովն պտտեցին[44] :

31 Հաւատքով Րահաբ պոռնիկն
չկորաւ անհաւատներին հետ[45], որ
նա լրտեսներին (չաշ-պնէրքն) ըն-
դունել էր խաղաղութենով[46] :

32 Եւ հիմի՝ էլ ի՞նչ ասեմ . ին-
չու որ՝ ժամանակս բաւական չէ
պատմելոյ Գեդէօնի[47], Րարակի[48],
Սամփսոնի[49], Եփթայի[50], Դաւ-
թի[51] և Սամուէլի և ուրիշ մար-
գարէների համար[52] :

33 Որ նորանք հաւատքով թա-
գաւորութիւնների յաղթեցին . ար-
դարութիւն գործեցին . աւետիք-
ներ ստացան[53], առիւծների բերան-
ները խըցկեցին[54] .

34 Կրակի զօրութիւնըն անցրին[55] .
սրբի բերանից պրծան[56] . տկարու-
թենից զօրացան[57] . պատերազմի մէջ
զօրաւոր էլան . օտարների բանակ-
ները (օբռօնները) առին[58] :

35 Կանայքն իրանց մեռելներըն
յետ ընդունեցին յարութենից[59] .
(բայց) կէսերն սատակի չարչարվե-
ցան և չկամեցան ազատվիլ, որ ա-
ւելի լաւ յարութեան հասնեն[60] :

36 Եւ կէսերն տանջանքների և
ծեծերի համբերեցին, կապանքնե-
րի և բանտերի[61] :

37 Վէրկոծվեցան, սըղոցվեցան,
փորձվեցան, սրով սպանված մե-
ռան[62] . ոչխարի մորթերով և այծի
կաշիքներով մանեկին[63] . կարօտու-
թիւն քաշած, նեղացած, չարչար-
ված .

38 Որ աշխարհը նորանց արժանի
չէ . անապատ տեղերի մէջ մոլոր-
վեցան և սարերի և այրերի (տաղա-
բռանէրի)[64] և երկրի փոսերի մէջ :

39 Եւ սորանք ամէնքս հաւատքով
վկայութիւն առին, և աւետիքըն
դեռ չընդունեցին[65] :

40 Ինչու որ՝ Աստուած մեզ հա-
մար աւելի լաւ համարեց[66], որ (նո-
րանք) առանց մեզ չկատարվին[67] :

(39) ՆԷր · ժ · 35 : (40) Ելք · ժ · 28 , 29 : ժբ · 37 : ժգ · 17 , 18 : (41) ՍԷր · 13 : (42) Ելք · ժբ · 21 : (43) Ելք · ժգ · 22 · 29 : (44) Յես · զ · 20 : (45) Յես · զ · 23 : Յակ · բ · 25 : (46) Յես · ա · 1 : (47) Դատ · գ · 11 : (48) Դատ · դ · 6 : (49) Դատ · ժգ · 24 : (50) Դատ · ժա · 1 : ժբ · 7 : (51) ա Թագ · ժզ · 1 · 13 · ժէ · 45 : (52) ա Թագ · ա · 20 : ժբ · 20 : (53) բ Թագ · է · 11 : (54) Դատ · ժգ · 5 , 6 : ա Թագ · ժէ · 34 , 35 : Դան · զ · 22 : (55) Դան · գ · 25 : (56) ա Թագ · ի · 1 : գ Թագ · ժԹ · 3 : դ Թագ · զ · 16 : (57) գ Թագ · ի · 7 : Հոբ · խբ · 10 : Սամ · գ · 8 : (58) Դատ · ժէ · 8 · 15 : ա Թագ · ժգ · 13 · ժէ · 51 , 52 : բ Թագ · ը · 1 : (59) գ Թագ · ժէ · 22 : դ Թագ · դ · 35 : (60) Դտն · իբ · 25 : (61) Նէեմ · լԹ · 20 : Երեմ · ի · 2 : լէ · 15 : (62) գ Թագ · իա · 13 : բ Պետ · իգ · 21 : Դտն · է · 58 : ժգ · 19 : (63) դ Թագ · ա · 8 : Մատ · գ · 4 : Հով · ժգ · 4 : (64) դ Թագ · ժբ · 4 : ժԹ · 9 : (65) ՍԷր · 2 , 13 : (66) ՆԷր · է · 22 : ը · 6 : (67) ՆԷր · ե · 9 : ժբ · 23 : Հեպ · զ · 11 :

ԳԼ · ՀՒ

1 Հաւատքի՝ համբերութեան և Աստուածպաշտութեան մէջ հաստատ ՇԱլոյ մին յորդորանք՝ 22 Նոր Կտակարանի վերայ մին գովասանք , և թէ նա՝ Հին Կտակարանից աւելի լաւ է ։

1 Ուրեմն մենք էլ՝ որ վկաների
էս քան բազմութիւն ունինք մեր
չորս կողմով պատած՝ ամէն գոռո-
զութիւն դէն քցենք[1] , և մեղքըն
էլ որ պաշարում մեզ · համբերու-
թեամբ վազենք էն պատերազմի մէջ
որ մեր առաջին կայ[2] ։

2 Մ՚տիկ տանք Յիսուսին հա-
ւատքի զօրագլխին և կատարօղին ·
որ նա ուրախութեան տեղ՚ որ նո-
րա առաջին կար , խաչըն իրան վե-
րայ առաւ , և ամօթըն ոչ հինչ հա-
մարեց[3] · և Աստուծոյ աթոռի աջ
կողմն նստեց[4] ։

3 Ուրեմն մտածեցէք նորան , որ
համբերութեամբ էսպէսի բաներ
քաշեց էն մեղաւորների հակառա-
կութիւնին[5] · որ դուք վաստակած
չըլինիք ձեր անձներովդ՝ և թու-
լանաք[6] ։

4 Ինչու որ՝ դեռ մինչև արիւն
թափելոյ չափ պատերազմելով՝ հա-
կառակ չէք կացած մեղքին[7] ·

5 Եւ մոռացաք էն մխիթարու-
թիւնըն՝ որ ձեզ հետ ինչպէս որ-
դեակներին հետ խօսում է՝ Իմ որդ-
եակս մի թուլանար Տէրի խրատի-
ցըն · և թող սիրտդ չը՚կոտրվի՝
երբոր յանդիմանվիս նորանից[8] ։

6 Պատճառն որ՝ Տէրն՝ նորան որ
սիրում՝ խրատում՝ տանջում ամէն
որդի՝ որ ընդունում[9] ։

7 Խրատի մէջն թէ որ համբե-
րութեամբ կենաք , Աստուած ձեզ
հետ ինչպէս որդոց հետ կըվարվի[10] ·
ո՞ր որդի կայ՝ որ նորան հայրն չի
խրատում ։

8 Ի՚այց թէ որ առանց խրատի
լինիք՝ որ ամէնքն մասնակից եղան
նորան ·ապա խորթ կըլինիք՝ և չէ
թէ որդիք[11] ։

9 Ինչու որ՝ եթէ մեր մարմնա-
ւոր հարանցիցն՝ որ խրատօղ ունինք՝
վախով ամաչում ենք , էլ որքան ա-
ւելի պիտի ենազանդվինք Հոգիների
Հօրն՝ և ապրինք[12] ։

10 Ինչու որ՝ սորանք մին քիչ ժա-
մանակ իրանց կամաց պէս են խրա-
տում · բայց նա օգտի համար՝ որ
նորա սրբութիւնըն ընդունինք[13] ։

11 Աստն խրատ՝ առնելոյ ժամա-
նակումն ուրախութիւն չի երևում ,
բայց տրտմութիւն · բայց յետոյ
նորանով վարժվածներին խաղաղու-
թեան պտուղ է վճարում արդա-
րութեամբ[14] ։

12 Ա՚ռրա համար հաստատեցէք թու-
լացած ձեռներըն · և տկարացած
ծընկներըն[15] ·

13 Եւ ձեր ոտների գնալոյ ճանա-

(1) Կղ · գ · 8 · ա Պետր · բ · 1 ։ (2) ա Կորնթ · թ · 24 · Փիլպ · գ · 13 , 14 · Հբ-
ռաւ · ժբ · 12 · Լբէր · ժ · 36 ։ (3) Ղևտ · իդ · 26 · Փիլպ · բ · 8 · ա Պետր · ա ·
11 · (4) Մատ · ի · 1 · Լբէր · ա · 3 · 13 · ը · 1 · ա Պետր · գ · 22 · (5) Մատ ·
ժ · 24 , 25 · Յովհ · ժե · 20 · (6) Գաղ · գ · 9 · (7) ա Կորնթ · ժ · 13 · Լբէր · ժ ·
32—34 · (8) Յոբ · ե · 17 · Ընտ · գ · 11 · (9) Սաղ · ղդ · 12 · ռժթ · 75 · Ը-
ռաք · գ · 12 · Յակ · ա · 12 · Յայտ · գ · 19 · (10) բ Օրին · ը · 5 · բ Սամ · է ·
14 · Ընտ · ժգ · 24 · ժթ · 18 · իգ · 13 · (11) Սաղ · հգ · 1 · ա Պետր · ե · 9 ·
(12) Հռոմ · ժշ · 22 · իէ · 16 · Յոբ · ժբ · 10 · Ղևտ · ժբ · 7 · Նեռ · խբ · 5 ·
ծէ · 16 · Օբդ · ժբ · 1 · (13) Ղևտ · ժա · 44 · ժթ · 2 · ա Պետր · ա · 15 , 16 ·
(14) Հակ · գ · 18 · (15) Յոբ · գ · 3 , 4 · Նեռ · լէ · 3 ։

պարհըն չիտակեցէք[16] , որ նա՝ որ կաղ է՝ չըգըլորվի , բայց էլ աւե-
լի բժշկվի[17] :

14 Հետևեցէք խաղաղութեան ա-
մէնին հետ՝ և սրբութեան[18] , որ
առանց նորան ոչ ով Տէրին չի տես-
նիլ[19] :

15 Ջգոյշ կացէք[20] , որ չըլինի թէ
մինն յետ մնայ Աստուծոյ շնորհքի-
ցըն[21] : Որ մին դառն արմատ վեր
չըբուսնէ և նեղութիւն տայ , և նո-
րանով շատ հոգիք պղծվին[22] :

16 Որ մինն պոռնիկ և պիղծ չը-
լինի՝ ինչպես Եսաւ[23] . որ մին կե-
րակուրի համար իրան առաջինեա-
կութիւնըն ծախեց[24] :

17 Ինչուէմք որ թէ և յետոյ կա-
մեցաւ օրհնութիւնն ժառանգել , ան-
պէտք գտաւ[25] . ինչու որ ապաշ-
խարութեան ճար չըգտաւ , թէ և
արտասուներով խնդրեց նորան[26] :

18 Պատճառն որ՝ դուք չէք մո-
տեցած էն սարին՝ որ ձեռք կարօղ
էին դիպչել , որ կրակով վառված
էր՝ և էն մէգին և մշուշին և խա-
ւարին և մըրնկին[27] :

19 Որ էնտեղ փողն փչումէր և
հրամանքների ձայնն , որ նորանից
յետ քաշվեցան նորանք որ լսեցին ,
որ խօսքն մինէլ չասվի նորանց[28] :

20 Ինչու որ՝ չէին դիմանում էն
հրամանին . և թէ որ անասուն մ-
տենումէր սարին՝ քարկոծ էր լի-
նում[29] :

21 Եւ էնպէս ահաւոր էր էն տե-
սիլքն , որ Մովսէսն էլ ասումէր ,
թէ Յէհով բռնըված եմ և դողու-
մեմ[30] :

22 Այլ դուք մօտեցել էք Սի-
օն սարին[31] և կենդանի Աստուծոյ
քաղաքին , երկնաւոր Երուսաղէ-
մին[32] , և հազար հազարաւոր հր-
եշտակների բազմութեանն[33] ,

23 Եւ առաջինեկների եկեղեցին[34]՝
որ երկընքումն գրված են[35] , և Աս-
տուծոյն ամենքի դատաւորին[36] , և
կատարեալ արդարների հոգիներին[37] .

24 Եւ Յիսուսին նոր կտակարանի
միջնորդին[38] . և նորա արիւն թա-
փելուն[39]՝ որ աւելի լաւ է խօսում
քան Աբէլի (արիւնն)[40] :

25 Ջգոյշ կացէք որ չըլինի թէ
երես յետ դարձնէք նորանից՝ որ
խօսեց . պատճառն որ՝ եթէ նորանք
չըկարացին պրծնիլ՝ որ երես դարձ-
րին նորանից՝ որ երկրիս վերայ հր-
ամանն էր տալիս , էլ որքան աւե-
լի մենք , թէ որ երկնաւորիցն երես
դարձնենք[41] :

26 Որ նորա ձայնն էն ժամանա-
կումն երկիրն շարժեց[42] . և հիմիկ
խոստացել է՝ և ասումէ . Թէ Մի-
նէլ կըշարժեմ , չէ թէ մինակ եր-
կիրըն՝ բայց էլ երկինքն[43] :

(16) Նաւ . գ . 26 , 27 : (17) Գաղ . գ . 1 : (18) Առակ . ը . 14 : Հռոմ . ժբ . 18 :
ժգ . 19 : բ Տիմ . բ . 22 : (19) Մատթ . ե . 8 : բ Կորնթ . է . 1 : Եփես . է . 5 : (20)
բ Կորնթ . գ . 1 : (21) Գաղ . է . 4 : (22) բ Օրին . իթ . 18 : Եբր . գ . 12 : (23)
Եփես . է . 3 : Կաղ . գ . 5 : ա Թես . գ . 3 : (24) Ծննդ . իե . 33 : (25) Ծննդ .
իե . 34 . 36 . 38 : (26) Եբր . ղ . 6 : (27) Ելք . ժթ . 12 . 18 , 19 : ի . 18 : բ
Օրին . գ . 11 : է . 22 : Հռոմ . ղ . 14 : ը . 15 : բ Տիմ . ա . 7 : (28) Ելք . ի .
19 : բ Օրին . է . 5 . 25 : ժը . 16 : (29) Ելք . ժթ . 13 : (30) Ելք . ժթ . 16 :
(31) Գաղ . գ . 26 : Հայտ . գ . 12 : իա . 2 . 10 : (32) Փիլիպ . գ . 20 : (33) բ Օ-
րին . լգ . 2 : Առակ . կը . 17 : Հայտ . 14 : (34) Ելք . գ . 22 : Հայ . ա . 18 : Հայտ .
ժգ . 4 : (35) Ղուկ . ժ . 20 : Փիլիպ . գ . 3 : Հայտ . ժգ . 8 : (36) Ծննդ . ժը .
25 : Առակ . ղգ . 2 : (37) Փիլիպ . գ . 12 : Եբր . ժա . 40 : (38) Եբր . ը . 6 . թ .
15 : (39) Ելք . իդ . 8 : Եբր . ժ . 22 : ա Պետր . ա . 2 : (40) Ծննդ . գ . 10 :
Եբր . ժա . 4 : (41) Եբր . բ . 3 , 3 : գ . 17 . ժ . 28 , 29 : (42) Ելք . ժթ . 18 :
(43) Ագգ . բ . 6 :

27 Եւայց ևն մեկնէն ցոյց է տալիս՝ որ շարժվելի բաներն իբր թէ էլածներն պիտի փոխվին , որ հաստատ մնան նորանք որ շարժվելի չեն[44] :

28 Որպէսզի որովհետև չշարժվելի թագաւորութիւն ընդունեցինք , պիտի բռնենք ևնորհքն՝ որ նորանով պաշտումենք Աստուծոյն , ինչպէս որ հաճոյ է նորան՝ ահով և դողալով :

29 Զատճառն որ մեր Աստուած այրող փչացնող կրակ է[45] :

ԺԴ ԺՈ

1 Խրատներ սիրոյ վերայ ; 4 Նէ պարկեշտութեան ; 5 Ագահութենից փախչելոյ ; 7 Նէ Աստուծոյ քարոզչներն պատուելոյ ; 9 Օտար խօսքերից զգուշ լինելոյ ; 10 Խրիստոսի անունն դաւանելոյ ; 16 Ողորմութիւն տալոյ ; 17 Պատասխանների ջազանդվելոյ ; 18 Նաթաքելոց համար աղօթս անելոյ վերայ . 20 Աւրջ անելոյ խօսքերն :

1 Եղբայրասիրութիւնն թող հաստատ լինի ձեր միջումդ[1] :

2 Օտարասիրութիւնըն մի մոռանաք[2] . պատճառն որ՝ նորանով միքանիսն առանց գիտելոյ հրեշտակներին ընդունեցին[3] :

3 Յիշեցէք կապվածներին ինչպէս թէ դուք էլ նորանց հետ կապված լինէիք . և չարչարվածներին՝ ինչպէս թէ դուք էլ (դեռ) մարմնումն էք[4] :

4 Աժանութիւնն ամէն կողմանէ պատուական է՝ և անկողիններն սուրբ . բայց շնացողներին և պոռնիկներին Աստուած կըդատէ[5] :

5 Ա արքերն առանց արծաթասիրութեան լինին , որ բաւական համարէք էն՝ որ ձեռներումն ունիք[6] . ինչու որ հենց ինքն ասաց , թէ Չեմ թողիլ քեզ և երեսից չեմ քցիլ՝ :

6 Ինչպէս որ համարձակ լինինք ասելոյ . Տէրն է իմ օգնականս , և չեմ վախենալ , ի՞նչ կանէ ինձ մարդն[8] :

7 Յիշեցէք ձեր առաջնորդներին՝ որ Աստուծոյ բանըն խօսեցին ձեզ[9] . նայեցէք նորանց վարմունքի վախճանին՝ և նման էլէք (նորանց) հաւատքին[10] :

8 Յիսուս Խրիստոն՝ երեկ և էսօր , և հենց էն էլ յաւիտեան[11] :

9 Ակրպ կերպ ուսմունքներով և օտար խօսքերով մի շարժվիք էս և էն կողմն[12] . ինչու որ՝ լաւ է որ շնորհքով սրտերն հաստատվին՝ և ոչ

(44) Սաղ . ճբ . 26 : Մաթ . իգ . 35 : բ Պետր . գ . 10 : Յայտ . իա . 1 : (45) Նէ . իգ . 17 : բ Օրէն . գ . 24 : թ . 3 : Սաղ . ծ . 3 : ղէ . 3 : Նաում . կգ . 15 : բ Թես . ա . 8 : Նէբ . ժ . 27 : (1) Հռովմ . ժբ . 10 : ա Թես . դ . 9 : ա Պետր . ա . 22 : բ . 17 : գ . 8 : դ . 8 : բ Պետր . ա . 7 : ա Յովհ . գ . 11 : դ . 7 . 20 , 21 : (2) Մաթ . իե . 35 : Հռովմ . ժբ . 13 : ա Տիմ . գ . 2 : ա Պետր . դ . 9 : (3) Ծնեսէնէթ . ժբ . 3 : ժթ . 2 : (4) Մաթ . իե . 36 : Հռովմ . ժբ . 15 : ա Կորնթ . ժբ . 26 : Կող . դ . 18 : ա Պետր . գ . 8 : (5) ա Կորնթ . զ . 9 : Գաղ . ե . 19 . 21 : Նէթես . ի . 5 : Կող . գ . 5 , 6 : Յայտ . իբ . 15 : (6) Մաթ . զ . 25 . 34 : Փիլիպ . դ . 11 , 12 : ա Տիմ . ղ . 6 . 8 : (7) Նումն . իբ . 15 : բ Օրէն . լա . 8 . 8 : Յեհ . ա . 5 : ա Մնաց . իբ . 20 : Սաղ . լէ . 25 : (8) Սաղ . իէ . 7 : ծգ . 4 . 11 , 12 : ճժբ . 6 : (9) Աւրէ . 17 : (10) Նէբ . զ . 12 : (11) Յովհ . ը . 58 . Նէբ . ա . 12 : Յայտ . ա . 4 : (12) Նէթես . գ . 14 . ի . 6 : Կող . ը . 8 : ա Յովհ . գ . 1 :

Թէ կերակուրներով · որ Նորանցով իսկի բան չըշահվեցան Նորանք՝ որ Հնպէս գնացին[13] :

10 Ա՛ինք ունինք սեղան , որ նո-
րանից ուտելոյ իշխանութիւն չու-
նին Նորանք՝ որ խորանի պաշտա-
մունքին ծառայումն[14] :

11 Ինչու որ Հն անասունների ար-
իւնն որ քահանայապետի ձեռովն
սրբատեղին մէջ մատուցանվումէր
մեղաց համար՝ Նորանց մարմիններն
այրվումէին բանակից (օպռոնից) դուր-
սըն[15] :

12 Նրահամար Հիսուս էլ՝ որ ի-
բան արիւնովն ժողովըրդին սրբէ ,
դրան դրըսի կողմն չարչարվեցաւ[16] :

13 Ուրեմն եկէք բանակիցն դուրս
գնանք Նորա մօտ , և Նորա նախա-
տինքն մեզ վերայ առնենք[17] :

14 Պատճառն որ էստեղ հաստատ
մնացօղ քաղաք չունինք · բայց էն
որ պիտի լինի՝ Նորան ենք ուզում[18] :

15 Ուրեմն Նորա ձեռովն ամէն ժա-
մանակ օրհնութեան պատարագ մա-
տուցանենք Աստուծոյ[19] · այսինքն՝
պտօղների պտուղ՝ որ դաւանումն
Նորա անունըն[20] :

16 Խարի անելըն և հաղորդութիւն
անելըն մի մոռանաք[21] · ինչու որ
Հնպէսի պատարագներին Աստուած
է հաւան կենում[22] :

17 Կանչ դրէք ձեր առաջնորդ-
ներին , և հնազանդ կացէք Նորանց[23] ·
ինչու որ Նորանք արթուն են կե-
նում ձեր հոգիների համար՝ ինչ-
պէս թէ համար պիտի տան ձեզ
համար՝ որ ուրախութեամբ անեն էն ,
և չէ թէ յոգոց հանելով , որ էն
ձեզ օգուտ չէ[24] :

18 Աղօթք արէք մեզ համար[25] ·
ինչու որ հաստատ գիտումենք որ
բարի խղճմտանք ունինք · ամէն
բանի մէջ կամենումենք բարի վարք
ցոյց տալ[26] :

19 Եւ էլ աւելի աղաչումեմ՝ որ
էն անէք , որ շուտով կարենամ
դառնալ ձեզ մօտ[27] :

20 Եւ խաղաղութեան Աստուա-
ծըն[28] , որ մեռելների (միջից) վեր
հանեց[29] հօտի (նէ-ըի) մեծ հովիւն[30]
յաւիտենական ուխտի արիւնովն մեր
Տէր Հիսուսին[31] ,

21 Հաստատէ ձեզ (ամէն) բարի
գործքերի մէջ՝ Նորա կամքըն անե-
լոյ[32] · և գործէ մեզանում ինչ որ
հաճոյ է Նորա առաջին Հիսուսի
Քրիստոսի ձեռովն[33] · որ Նորան
(լինի) փառք յաւիտեանս[34] · ամէն :

(13) Հով · ժգ · 17 : Կող · բ · 16 : ա Տիմ · դ · 3 : (14) ա Կորնթ · թ · 13 : ժ · 18 : (15) Լև · իթ · 11 : Գ Թես · դ · 11 , 12 · 21 : գ · 30 · թ · 11 : ժգ · 27 : Հեբ · ժթ · 3 : (16) Հովհ · ժթ · 17 , 18 : Գործ · է · 58 : (17) Լիբ · ժա · 26 : ա Պետ · գ · 14 : (18) Մատթ · բ · 10 : փիլիպ · գ · 20 : Լիբ · ժա · 10 · 16 : ժբ · 22 : (19) Լեվս · է · 20 : ա Պետ · բ · 5 : Գ Թես · է · 12 : Սաղմ · ծ · 14 · 23 : կթ · 30 , 31 : ճէ · 22 : ճժգ · 17 : (20) Հովհ · ժգ · 2 : (21) Հով · ժբ · 13 : (22) բ Կորնթ · թ · 12 : փիլիպ · դ · 18 : Լիբ · գ · 10 : (23) փիլիպ · բ · 29 · ա Թես · է 12 : ա Տիմ · է · 17 : Ա Լիբ · 7 : (24) Լուկ · դ · 17 : ԻԳ · 2 · 7 : Գործ · ի · 28 · 28 : (25) Հով · ժե · 30 : Լեվս · գ · 19 : Կող · դ · 3 : ա Թես · է · 25 : բ Թես · գ · 1 : (26) Գործ · իդ · 1 : իդ · 16 : բ Կորնթ · ա · 12 : (27) փիլիմ · 22 : (28) Հով · ժե · 33 : ա Թես · է · 23 : (29) Գործ · բ · 24 · 32 : Հով · դ · 24 : ը · 11 : ա Կորնթ · գ · 14 : ժե · 15 : բ Կորնթ · դ · 14 : Գաղ · ա · 1 : Կող · բ · 12 : ա Թես · ա · 10 : ա Պետ · ա · 21 : (30) Լաւագ · խ · 11 : Եզեկ · ԼԴ · 23 · ԼԷ · 24 : Հովհ · ժ · 11 · 14 : ա Պետ · բ · 25 · է · 4 : (31) Ածտ · թ · 11 · Լիբ · ժ · 22 : (32) բ Թես · բ · 17 : ա Պետ · է · 10 : (33) փիլիպ · բ · 13 : (34) Գաղ · ա · 5 : բ Տիմ · գ : 18 : Յայտ · ա · 6 :

22 Ընդաչումեմ ձեզ եղբարք, որ
Էս մխիթարութեան խօսքիս ականջ
դնէք. ինչու որ քիչ գրեցի ձեզ[35]։
23 Դ'անդաչումէք մեր Տիմոթէոս
եղբօրըն[36] որ ձեզ մօտ ուղարկված
է[37]. թէ որ նա շուտով գայ՝ նորա
հետ կըտեսնեմ ձեզ։

24 Ողջոյն տուէք ձեր ամէն ա-
ռաջնորդներին[38], և ամէն սրբե-
րին. ողջոյն են տալիս ձեզ նորանք
որ Իտալիայի կողմերումն են։
25 Շնորհքն ձեզ ամենիդ հետ
(լինի). ամէն[39]։

Եբրայեցոց վերայ Իգնէա (Երէքէա) երկեաս Տիմոթէոսէ յետոջ։

ԹՈՒՂԹ ԿԸԹՈՒՂԻԿԵԸՑՑ

ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ ԸՆԴՀԱՆ

2 Պէտք է մեզ որ ուրախանանք՝ երբոր կերպ կերպ փորձանքի մէջ ընկնինք · 5 Աստուածա-
նից իմաստութիւն խնդրենք, 13 Յոմ մեր փորձանքների մէջն պէտք չէ որ ասենք Թէ՝ Աստ-
ուածանից ենք փորձուում · 19 Պէտ աւելի ժիր լինինք խօսքին լսելոյ համար և են (Տերի)
խօսքըն անօդ լինինք և ոչ թէ մենակ լսող, 26 Աստուածապաշտ լինել կամեցողն պէտք է
որ իրան լեզուն սանձահարէ՝ և որբերին և որբևէրիներին տես գայ՝ և իրան անձըն աշխարհ-
քից պահէ։

1 ՅԱԿՈՎԲՈՒ[1] Աստուծոյ
և Տէր Յիսուսի Քրիստոսի ծա-
ռայ[2] · տասներկու ցեղերիդ[3] որ
ցրված էք՝ ողջոյն (լինի)[4]։
2 Ամէն ուրախութեան արժանի
(բան) համարեցէք եղբարք[5], երբոր
կերպ կերպ փորձանքի մէջ ընկնիք[6]։
3 Գիտացէք՝ որ ձեր հաւատքի
փորձն լաւ կարգված համբերութիւն
է գործում[7]։
4 Ձայց համբերութիւնն պէտք է
կատարեալ գործ ունենայ · որ ա-
մենևին ամբողջ և կատարեալ լի-
նիք, և իսկի մին բանով պակա-
սութիւն չունենաք։

5 Ձայց թէ որ մինն ձեզանից
պակասված լինի իմաստութենիցն[8],
թող խնդրէ Աստուածանից · որ ա-

(35) ա Պետր · ե · 12 · (36) ա Գործ · գ · 2 · (37) ա Տիմ · զ · 12 · (38) Ալբ · 7 ·
17 · (39) Տիտ · գ · 15 · (1) Գործ · ժբ · 17 · ժե · 13 · Գործ · ա · 19 · բ · 9 ·
Յոան · 1 · (2) Տիտ · ա · 1 · (3) Գործ · իզ · 7 · (4) բ Օրին · լբ · 26 · Ցուն · 4 ·
35 · Գործ · բ · 5 · բ · 1 · ա Պետր · ա · 1 · (5) Ասաղ · ե · 12 · Գործ · ե · 41 ·
Եբր · ժ · 34 · (6) ա Պետր · գ · 13 · 16 · ա Պետր · ա · 6 · (7) Հռոմ · ե · 3 ·
(8) գ Գործ · գ · 9 · 11, 12 · Աստ · բ · 3 ·

մէնին տալիս է առատութեամբ՝ և չի նախատում[9]. և կրտըվվի նորան[10]։

6 Ա՛յսպէս թէ թող հաւատքով խնդրէ՝ և ոչ թէ երկմտութեամբ[11]. պատճառն որ՝ ով որ երկմիտ է՝ (նա) քամիով ծփված և տատանված ծովու ալիքներին նման է։

7 Ընպէսի մարդն թող յոյս չունենայ որ Աստուածանից մի բան առնէ։

8 Պատճառն որ երկմիտ մարդն՝ առանց հաստատութեան է իրան ամէն ճանապարհներումն[12]։

9 Թող խոնարհ եղբայրն պարծենայ իրան բարձրութեամբ։

10 Եւ նա որ հարուստ է՝ իրան խոնարհութեամբ. ինչու որ խոտի ծաղկի նման անցկըկենայ[13]։

11 Ինչու որ արեգակն ծագեց իրան խիստ տաքութեամբ՝ և խոտրն ցամաքացրուց, և նորա ծաղկին թափվեց, և նորա երեսի գեղեցկութիւնն կորաւ. հնպէս էլ հարուստն իրան շահված բաների հետ կըթոռոմի։

12 Երանելի է էն մարդն՝ որ համբերութեամբ փորձանքների[14]. ինչու որ՝ եթէ ընտիր գտնըվի՝ կենաց պսակն կառնէ[15], էն որ Տէրն խոստացաւ իրան սիրողներին[16]։

13 Ա՛չ ով՝ որ փորձանքի մէջն է, թող չասէ թէ (ես) Աստուածանից եմ փորձվում. ինչու որ՝ Աստուած չար բաների փորձող չէ. նա իսկի մէրին չէ փորձում։

14 Այլ մէկն փորձվում՝ (երբոր) իրան ցանկութիւններից քաշվում և խաբվում։

15 Պա նրանից ետև ցանկութիւնն յղացած՝ մեղք է ծնում[17]. և մեղքն էլ երբոր կատարվի՝ մահ կըծնի[18]։

16 Ա՛ի խաբվիք իմ սիրելի եղբարքս։

17 Պատճառն որ ամէն բարի տուրքերն, և ամէն կատարեալ պարգևներն՝ վերևիցն են վէր եկել լուսոյ Հօրիցն[19]. որ նորանում իսկի փոփոխմունք կամ շուռտուօղ շուաք չըկայ[20]։

18 Իրան կամենալըն պէս ծնաւ մեզ ճշմարտութեան խօսքովն[21], որ մենք նորա ունեցածների (առաջին) պտուղ լինինք[22]։

19 Վ՛իտացէք իմ սիրելի եղբարքս. թող ամէն մարդ ժէր լինի՝ լսելոյ համար[23], և ծանր՝ խօսելոյ համար[24], և ծանր՝ բարկանալոյ համար[25]։

20 Պատճառն որ մարդոյ բարկութիւն Աստուծոյ արդարութիւնըն չի գործում։

21 Սրահամար ամէն պղծութիւն, և չարութեան աւելանալըն դէն քացեցէք, և խոնարհութեամբ ընդունեցէք էն առաջին խօսքըն՝ որ

(9) Մատթ. ե · 7 ։ իա · 22 ։ Մարկ. ժա · 24 ։ Լուկ. ժա · 9 ։ Հովհ. ժգ · 13 ։ ժե · 7 ։ ժզ · 23 ։ (10) Նբէմ. ի · 12 ։ ա Հովհ. և · 14, 15 ։ (11) Մարկ. ժա · 24 ։ ա Տիմ. բ · 8 ։ (12) Հայ. գ · 8 ։ (13) Հոբ. ժգ · 2 ։ Սաղմ. լէ · 2 · 5, 6 ։ ճա · 11 ։ ճգ · 15 ։ Նայ. ի · 6 ։ ա Կորնթ. և · 31 ։ Հայ. գ · 14 ։ ա Պետր. ա · 24 ։ ա Հովհ. բ · 17 ։ (14) Հոբ. և · 17 ։ Աւետ. գ · 11, 12 ։ Նբէր. ժբ · 5 ։ Հայց. գ · 19 ։ (15) ա Կորնթ. թ · 25 ։ բ Տիմ. գ · 8 ։ Հայ. բ · 5 ։ ա Պետր. և · 4 ։ Հայց. բ · 10 ։ (16) Մատթ. ժ · 22 ։ ժբ · 28, 29 ։ Հայ. բ · 5 ։ (17) Հոբ. ժե · 35 ։ Սաղմ. է · 14 ։ (18) Ա՛ռաջ. ղ · 21 · 23 ։ (19) Հովհ. գ · 27 ։ ա Կորնթ. դ · 7 ։ (20) Մաղա. իդ · 19 ։ ա Թագ. ժե · 29 ։ Սաղմ. գ · 6 ։ Ա՛ռաջ. ժա · 29 ։ (21) Հովհ. ա · 13 ։ գ · 3 ։ ա Կորնթ. դ · 15 ։ ա Պետր. ա · 23 ։ (22) Նբէս. ա · 12 ։ Նբէր. բ · 3 ։ Հայց. ժգ · 4 ։ (23) Ա՛ռաջ. և · 1 ։ (24) Աւետ. ժ · 19 ։ ժէ · 27 ։ Ա՛ռաջ. և · 2 ։ (25) Աւետ. ժգ · 17 ։ ժղ · 32 ։ Ա՛ռաջ. է · 9 ։ (26) Պող. գ · 8 ։ ա Պետր. բ · 1 ։

կարօղ է ձեր հոգիները ապրեցնել[27] :

22 Խօսքըն անօղ էլէք , և ոչ թէ մէնակ լսօղ համարէք ձեր անձնները[28] :

23 Ինչու որ եթէ մինն մէնակ խօսքի լսօղ է՝ և ոչ անօղ , նա նման է էն մարդոյն՝ որ պչուցած կընայի իրան երեսին՝ որ հայելոյ միջումն երևումէ[29] :

24 Ու նայելով տեսաւ իրան՝ և անցկացաւ , և էլ շուտով մոռացաւ թէ ինքն ինչպէս էր :

25 Հայց նա՝ որ ազատութեան կատարեալ օրէնքին[30] մէջ աչքը քցած մտիկ կըտայ[31] և նորանումի կըկենայ , նա մոռացօղ լսօղ չէլաւ՝ բայց գործ կատարօղ . նա՝ իրան անեղուվըն երանելի կըլինի[32] :

26 Եթէ որ մինն կամենայ աստուածապաշտ լինել և իրան լեզուն չըսանձահարէ[33] , այլ իրան սիրտըն զգաղմունքի տայ , էնպէսի (մարդոյ) աստուածապաշտութիւնն զուր է :

27 Աստուածապաշտութիւնն Հօր աստուծոյ և Հօր առաջին էս է , որ երկրին և որբևէրիներին տես գալ իրանց նեղութեան մէջն[34] . (և) իրան անձըն աշխարհքիցն անարատ պահել[35] :

ԳԼ · Բ

2 Քրիստոնէութեան մէջ լաւ բան չէ որ հարուստին պատիւ անեն և աղքատին անարգեն . 13 Պէտք է մինչ ողորմութիւն անել , 14 Ու թէ պարծենանք էն հաւատքովըն որ առանց գործքից է , 17 Էն հաւատքըն որ գործք չունի՝ նա մեռած է , 19 Նորան դևերի հաւատք է , 21 Ու թէ Աբրահամի , 25 Ու Բախաբ պոռնիկի հաւատքն է :

1 Ի՛մ եղբարքս՝ չըլինի թէ ևրեսին նայելով ունենաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հաւատքըն[1] , որ նա փառաց Տէրն է[2] :

2 Եթէ որ (մին) մարդ մտնէ ձեր ժողովարանն՝ որ ոսկէ մատանի և պայծառ հագուստ ունենայ . (և) մին աղքատ էլ մտնէ էնտեղ՝ կեղտոտ շորերով ,

3 (Եւ) մտիկ տաք նորան որ պայծառ հագուստ ունի , և ասէք՝ թէ Դու էս տեղս նստիր պատուով . և աղքատին ասէք՝ թէ Կըդ տեղդ ոտտաց վերայ կաց , կամ թէ Եկ իմ ոտներիս մօտն նստիր :

4 Մի՞թէ խղճմտանք չէք անում ձեզանումի , և չէլաք չար խորհուրդների դատաւորներ :

5 Լսեցէք ինձ իմ սիրելի եղբարքս , չէ՞ որ Աստուած ընտրեց էս աշխարհքիս աղքատներին[3] , որ հաւատքով հարուստ են[4] , և (էն) արքայութեան ժառանգ՝ որ Աստուած խոստացաւ իրան սիրօղներին[5] :

(27) Դուդ · ժգ · 26 : Հռովմ · ա · 16 : ա Կորնթ · ժե · 2 : Եփես · ա · 13 : Տիտ · բ · 11 : Եբր · բ · 3 : ա Պետր · ա · 9 : (28) Մատթ · է · 21 : Ղուկ · գ · 46 : ժա · 28 : Հռովմ · բ · 13 : ա Հովհ · գ · 7 : (29) Ղուկ · գ · 47 : Հակ · բ · 14 : (30) Հակ · բ · 12 : (31) բ Կորնթ · գ · 18 : (32) Հովհ · ժգ · 17 : (33) Սաղմ · լգ · 13 : լթ · 1 : ա Պետր · գ · 10 : (34) Ներս · ա · 16 , 17 : ծբ · 6 , 7 : Մատթ · իե · 36 : (35) Հռովմ · ժբ · 2 : Հակ · դ · 4 : ա Հովհ · ե · 18 : (1) Ղուկ · ժթ · 15 : բ Օրինաց · ա · 17 : ժգ · 19 : Ներս · իգ · 23 : իբ · 21 : Մատթ · իբ · 16 : Պաւլ · գ · 26 · 28 : (4) Հռովմ · 16 : (2) ա Կորնթ · բ · 8 : (3) Հովհ · է · 48 : ա Կորնթ · ա · 26 · 28 : (4) Ղուկ · ժբ · 21 : ա Տիմ · գ · 18 : Հակ · բ · 9 : (5) Ներս · թ · 6 : ա Թես · բ · 30 : Ներս · ը · 17 : Մատթ · ե · 3 : Ղուկ · գ · 20 : ժբ · 32 : ա Կորնթ · բ · 9 : բ Տիմ · գ · 8 : Հակ · ա · 12 :

6 Ասայց դուք ոչընչէի տեղ էք դնում աղքատներին[6] · չէ՞ որ հարուստներն զօր են անում ձեզ և նորանք ձեզ դատաստան են քաշում[7] :

7 Չէ՞ որ նորանք հայհոյումեն էն բարի անունն՝ որ ձեզ վերայ կանչված է :

8 Եպա թէ որ թագաւորական օրէնքըն կատարէք Կրքի (ասածին) պէս՝ թէ Սիրիր քո ընկերիդ քո անձիդ պէս , լաւ էք անում[8] :

9 Ասայց եթէ երեսին նայիք՝ մեղք էք գործում , յանդիմանված օրէնքից ինչպէս օրէնքի քանդօղներ[9] :

10 Ով որ ամէն օրէնքըն պահէ , և մընում մեղանչէ , ամէն օրէնքին էլաւ պարտական[10] :

11 Ինչու որ (նա) որ ասաց՝ թէ Մ՚ի սպաներ , ասաց էլ՝ թէ Հ՚ընուխիւն մի՛ աներ[11] · որ եթէ չըսպանես՝ բայց շնուխիւն անես , էլար օրէնքըն քանդօղ :

12 Ինչպէս խօսեցէք՝ և էնպէս արէք , ինչպէս (կըվայելէ ձեզ) որ ազատութեան օրէնքովն պիտի դատվիք[12] :

13 Պատճառն որ՝ անողորմ դատաստան պիտի լինի նորա վերայ , որ ողորմութիւն չի անում[13] · ինչու որ ողորմութիւնն գլուխըն բարձր քանած կըպարծենայ դատաստանի առաջին[14] :

14 Ինչ օգուտ է իմ եղբարքս , թէ որ մինն ասէ որ հաւատք ունի՝ և գործ չունենայ · միթէ հաւատքն կըկարենա՞յ ապրեցնել նորան[15] :

